ՎԱՍԴԻՄԻՐ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԸ

ԵՎ

# ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Գիրքը ձվիրվում է

**Ռուբեն Սեւակի զավակներ՝ Շամիրամին, Լեւոնին եւ Հովհաննես Չիլինկիրյանին**

ՎԼԱԴԻՄԻՐ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԸ ԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԵՐԵՎԱՆ
2003

ՀՏԴ 891.981.Օ
ԳՄԴ 83.3Հ
Ս 411 պ

**Հեղինակը**
**իր երախտագիտությունն է հայտնում**
**«Ռուբեն Սեւակ» հիմնարկի**
**եւ հիշատակի տան տնօրեն**
**մեծարգո**
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ**
**այս գրքի տպագրությունը**
**հովանավորելու համար:**

---

Պետրոսյան Վ.
Ս 411 պ «Ռուբեն Սեւակը եւ մեր ժամանակը»
(Պատմա-փիլիսոփայական քննություն), -Եր., Մեծ Եղեռնի
եւ Հայոց ազատամարտի «Ուխտատուն» բանգարան-
ինստիտուտի հրատարակչություն, 2003թ., 304 էջ:

**Պատմական գիտությունների դոկտոր**
**Վլադիմիր Պետրոսյանի**
**«Ռուբեն Սեւակը եւ մեր ժամանակը» գիրքը**
**նվիրված է Մեծ Եղեռնի զոհ**
**Ռ. Սեւակի պատմափիլիսոփայական հայացքների**
**լուսաբանմանը:**

ԳՄԴ 83.3Հ

ISBN 99930-936-3-7

© Պետրոսյան Վլադիմիր



Հովհաննես
ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ
(Վրեժ
ՌՈՒԲԵՆՅԱՆ)

# ՈՎ Է «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ»Ը

Սիրելի հայրենի ընթերցող

Ցաւալի է մեզի համար ըսելը, որ դուք (մեծամասնութեամբ) արեւմտահայ բանաստեղծ Ռուբէն Սեւակը չէք ճանչնար...

...Եւ միայն գիտէք Պարոյր Սեւակը.

... Բայց յանցանքը ձերը չէ...

Դարերով բաժանուած մնացինք, պարսկական եւ թրքական լուծին տակ:

Եղանք երկու օտարներ իրարու

Արեւելահայեր եւ Արեւմտահայեր:

19–րդ դարուն մէջտեղները. մեր գրական լեզուն ալ բաժնեցին, ստեղծելով երկու լեզուներ

Արեւելահայերէնը եւ Արեւմտահայերէնը.

Լեզուներու տարբերութիւնը մեծ ազդակ մը եղած է հայ ազգին գլխուն եկած դժբախտութիւններուն մէջ:

Մինչդեռ, եվրոպական ազգերը 19–րդ դարուն, իրենց միութիւնը ստեղծեցին նախ եւ առաջ լեզուներու միութեամբ:

1850–ներուն BISMARCK, գերմանական միութիւնը ստեղծեց ամենէն առաջ HANNOVERի բարբառը Գերմանիոյ պաշտօնական լեզուն հռչակելով:

Նոյնպէս, Իտալիոյ միութեան ռահվիրան «GARIBALDI»ն, Ֆլորանսի բարբառը նոր իտալական պետութեան լեզուն հռչակեց:

Բայց հայերը բոլորովին հակառակը ըրին:

19–րդ դարուն մէջտեղները երբ մեր Արեւելահայ մտաւորականները Քանաքեռի բարբառը Արեւելահայերու յատուկ գրական լեզու ըլլալով կ'ընդհանրացնէին, նոյնպէս Արեւմտահայ մտաւորականներն ալ Պոլսոյ բարբառը Արեւմտահայերու գրական լեզուն ըլլալով տարածեցին: Անոնք երբեք չի մտածեցին թէ հեռանալով դասական գրաբարէ պիտի ստեղծուէր երկու տարբեր լեզուներ, որոնց հետեւանքը պիտի ըլլար երկու «հայութիւն» եւ երկու «ազգութիւն»:

Եւ մինչեւ այսօր ալ ոչ մէկ հայ պետական անձնաւորութիւն, այս լեզուի խրամատը մէջտեղէն վերցնելու համար լուրջ աշխատանք տարած է:

Այս է պատճառը, որ Արեւելեան Հայաստանի ժողովուրդը Ռուբէն Սեւակը չի ճանչնար, եւ գիտէ ու կը կարդայ միայն Պարոյր Սեւակը, որ իբր «բանաստեղծ» եւ իբր «լեզու» իրեն շատ աւելի հարազատ է:

***

Ռուբէն Սեւակի եւ Պարոյր Սեւակի անուններուն նմանութիւնն ալ, շատ անգամ բարդութիւններ եւ դժուարութիւններ կը ստեղծէ:

Հայաստանի եւ նոյնիսկ Սփիւռքի մէջ ընդհանրապէս ամենէն գիտակից անձնաւորութիւններն անգամ, Ռուբէն Սեւակը եւ Պարոյր Սեւակը իրարու հետ կը շփոթեն:

Աւելի ճիշտ, իբր հայաստանցի գրող Պարոյր Սեւակը աւելի ծանօթ եւ գիտցուած անուն մը ըլլալուն, նոյնիսկ ծանօթ մտաւորականներ մեր ներկայութեան «Ռուբէն Սեւակ» ըսելու համար, բնազդաբար «Պարոյր Սեւակ» ըսած են շատ անգամ: Այս անունի նմանութիւնը, դժբախտաբար, շատ ատեն ցաւալի, եւ երբեմն ալ զաւեշտական սխալներու տեղի կու տայ:

Քանի մը հատը նշելու ջանանք

1. – Վերջերս շատ ծանօթ գրականագէտ մը բանաստեղծութիւններու հաւաքածոյ մը հրատարակեց:

Ռուբէն Սեւակին յատկացուած բաժնին մէջ բանաստեղծութիւն մը տեսանք – ներքեւը Ռուբէն Սեւակին անունը գրուած, բայց բանաստեղծութիւնը Ռուբէն Սեւակինը չէր, այլ Պարոյր Սեւակին բանաստեղծութիւնն էր:

2. – Ծանօթ հայկական թերթի մը մէջ Ռուբէն Սեւակի մասին լայնածաւալ գրութիւն մը հրատարակուեցաւ եւ նաեւ մեծ նկար մը տակը Ռուբէն Սեւակ գրուած: Բայց նկարը Ռուբէն Սեւակինը չէր: Այլ Պարոյր Սեւակինը:

3. – Հայաստան այցելող սփիւռքահայեր օթոպիւսով Սեւանա լիճ կ'երթան: Վերադարձին Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոց պիտի այցելեն: Դպրոցին մէջ սփիւռքահայերու ի պատիւ հանդիսութիւն պիտի կատարուի:

Դպրոցի վարչութիւնը անհամբեր կը սպասէ օթոպիւսի ժամանման, մէկ ժամ, մէկուկէս ժամ: Օթոպիւսը մէջտեղը չի կայ:

Վերջապէս երկու ժամ յետոյ օթոպիւսը կը ժամանէ սփիւռքահայ հիւրերով Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցը:

Կը հարցնեն իրենց

«Ինչո՞ւ այսքան ուշացաք»:

«Վարորդին պատճառաւ» կը պատասխանեն:

Որովհետեւ վարորդը Ռուբէն Սեւակ անունով մէկը չէր ճանչնար: Ան, Պարոյր Սեւակը գիտէր միայն: Այդ պատճառաւ Սեւանա լիճէն վերադարձին, վարորդը օթոպիւսը կը քշէ կը տանի շիտակ Երեւանի Պարոյր Սեւակի անուան դպրոցը:

4. – Եւ մեր ներկայութեան պատահած զաւեշտ մը

Վերջերս Հայաստանի «Յառաջդիմական» կուսակցութեան պատասխանատուներէն անձնաւորութիւն մը իր կնոջ հետ կ'այցելէր պաշտօնի բերմամբ Ջուիցերիոյ Ժընեւ քաղաքը:

Իրենց հետ տեսակցելու առիթը ունեցանք «Լոզան»ի մէջ:

Մեր խօսակցութեան նիւթը եղաւ ընդհանրապէս Ռուբէն Սեւակը:

Թէեւ այս կուսակցական պատասխանատուն, Ռուբէն Սեւակի մասին շատ բան մը չէր գիտեր, բայց գոնէ անունը իմացած էր:

Խօսակցութիւնը բաւական երկարեցաւ:

Եւ տիկինը լուռ, մեզի մտիկ կ'ընէր, առանց խօսակցութեան մասնակցելու:

Վերջաւորութեան, կինը հարցուց իր ամուսինին

«Այս Ռուբէն Սեւակը, Պարոյր Սեւակին ազգակա՞նն է»:

***

Մեզի շատ ցաւ պատճառեց հայաստանցի տիկնոջ Ռուբէն Սեւակը, Պարոյր Սեւակին ազգականը կարծած ըլլալը:

Բայց իրականութեան մէջ այս կինը յանցանք չունի:

Նոյնիսկ այսօր Հայաստանի տարածքին վրայ Պարոյրին «Սեւակ» գրչանունը իր հարազատ ազգանունը կարծողները մեծամասնութիւն կը կազմեն:

Ի՜նչ խաբկանք, եւ ի՜նչ տգիտութիւն:

Այս վարկածը մեծ սխալ մըն է:

Եւ հայկական գրականութեան պատմութեան մէջ ամենէն ցաւալի եւ անարդար սխալն է:

Իրականութիւնը բացատրելու ջանանք:

Ռուբէն Սեւակ. հայկական գրականութեան մէջ առաջին անգամ ըլլալով 1908 թուականին «Սեւակ» անունը իբր գրչանուն գործածել սկսաւ:

Ռուբէն Սեւակէն առաջ, ոչ մէկ գրող «Սեւակ» անունը իբր գրչանուն գործածած է:

Աւելին, Ռուբէն Սեւակն է «Սեւակ» բառը ստեղծողը:

Նայեցէք բոլոր հայկական բառարաններուն:

Ամենէն հիներէն սկսելով «Երից վարդապետաց Հայկազեան բառարանը», Հր. Աճառեանի «Հայկական արմատական բառարանը» եւ Ստ. Մալխասեանցին «Հայերէն բացատրական բառարանը»: Բոլորին մէջ ալ «Սեւակ»ին իմաստը «թանաք = մելան» գրուած է եւ շատ հազուադէպ գործածուած անուն մը ըլլալով նշուած է:

Եւ միայն Ռուբէն Սեւակին 1908–ին իբր գրչանուն «Սեւակ» անունը սեւաչեայ իմաստով գործածելէն յետոյ է որ ժողովուրդին մէջ Սեւակ անունը տարածուիլ սկսած է:

Եւ նայեցէք արդի բառարաններուն միայն նոր բառարաններուն մէջ է որ «Սեւակ»ին իմաստը «սեւ աչքերով», «սեւաչեայ» ըլլալով տրուած է:

***

Երբեմն Պարոյրին «Սեւակ» անունը գործածած ըլլալը արդարացնելու համար կ'ըսեն թէ

Պարոյրէն առաջ ալ «Սեւակ» անունը գործածողներ եղած են:

Մենք նայեցանք Սովետական Հայաստանի հանրագիտարանը, եւ Պարոյրէն զատ երկու անուն գտանք «Սեւակ» անունով

1. – Գուրգէն Սեւակ (Գրիգորեան), ծնած 1904–ին, լեզուաբան, մահացած 1981–ին:

2. – Մանասէ Սեւակ (Գարակէօզեան), ծնած 1897, մանրէաբան, մահացած 1967–ին:

Ա. Այս երկու Սեւակներէն Գուրգէնը Ռուբէն Սեւակէն 19 տարի յետոյ ծնած է:

Մանասէն ալ 12 տարի յետոյ:

Բ. Այս երկու Սեւակներուն ալ «Սեւակ» անունը իրենց ազգանունը չէ:

Անոնք, Ռուբէն Սեւակէն տարիքի տարբերութեամբ, գոնէ քսան տարիներ յետոյ գործածել սկսած են «Սեւակ» անունը, Ռուբէն Սեւակէն օրինակ առնելով:

Գ. այս երկու Սեւակներէն մէկը լեզուաբան, միւսն ալ մանրէաբան:

Այս տեսակէտով «Ռուբէն Սեւակ–բանաստեղծին» հետ, ոչ մէկ ատեն ոչ մէկ ձեւով շփոթութեան պատճառ եղած են:

Գալով Պարոյր Սեւակին Ռուբէն Սեւակին առանձնաշնորհեալ սեփականութիւնը եղած «Սեւակ» անունը, եթէ Պարոյր Սեւակ, ենթադրենք որ Հայաստանի տեղ Ֆրանսայի մէջ գործածած ըլլար

1. – Պատժական իշխանութիւնները, պաշտպանելու համար Ռուբէն Սեւակին անունի եւ հեղինակի իրաւունքները, արգելք կ'ըլլային այս օրինազանցութեան եւ չէին թոյլատրեր որ Պարոյրը «Սեւակ» անունը գործածէ:

2. – Պատժական իշխանութիւնները Ռուբէն Սեւակին «հեղինակի» ա-

նունը շահագործող Պարոյրը օրէնքին մէջ այս օրինազանցութեան համար սահմանուած տուգանքներով կը դատապարտէին:

***

Երբ մենք առաջին անգամ լսեցինք. որ Հայաստանի մէջ բանաստեղծ մը «Սեւակ» անունը անհրաւաբար գործածել սկսած է, նախ ցնցուեցանք եւ այս յուսախաբ եւ տխուր հոգեվիճակին մէջ շատ ցաւ զգացինք. որ մեր այնքան «պաշտած» հայրենիքը չի պաշտպաներ նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակին յիշատակը եւ անունը: Եւ կը թոյլատրէ, որ Ռուբէն Սեւակին անունը նսեմանայ եւ Ռուբէն Սեւակին անունը, հոգին, այս անգամ հայրենիքի մէջ եւ հայերուն կողմէ կրկին ու կրկին չարչարանքի ենթարկուի:

Եւ այն օրէն ի վեր մեր կեանքին նպատակը ըրինք ի գին ամէն բանի պաշտպանել Ռուբէն Սեւակի սուրբ յիշատակը:

Մինչ այդ. տարիներով մեր միտքը կը չարչարէր այն հարցումը. թէ արդեօք ինչո՞ւ եւ ինչպէ՞ս Պարոյր Ղազարեանը «Սեւակ» անունը գործածել սկսած է:

Եւ վերջապէս, օր մը տեղեկացանք, որ Հայաստանի մէջ մտաւորական անձնաւորութիւն մը Ռուբէն Զարեան կոչուող, տուած է Պարոյր Ղազարեանին «Սեւակ» անունը:

1981–ին դիմեցինք Երեւան Ռուբէն Զարեանին եւ իրեն հարցուցինք. թէ ճի՞շդ է այն վարկածը. թէ ինք տուած է Պարոյրին «Սեւակ» անունը:

11 Փետրուար 1982–ին Երեւանէն Ռուբէն Զարեանը նամակով մը պատասխանեց եւ հաստատեց թէ ինք տուած է Պարոյրին «Սեւակ» անունը: Խոր ցաւով կը հրապարակենք այս նամակը

«Մի փոքր ուշացումով պատասխանում եմ Ձեր նամակին:

Պարույրի ազգանունը, ինչպես գիտեք, Ղազարյան է: Երբ նա ներկայացավ ինձ, ես «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էի: Մեծ տպավորություն թողին նրա բանաստեղծությունները. որոշեցի հրապարակել. ասպարեզ տալով մի շնորհալի երիտասարդի, հավատացած, որ լավ ապագա է սպասում իրեն: Ղազարյանը խիստ տարածված ազգանուն համարելով. մտածում էի գրական մի հարմար անուն գտնել նրա համար:

Այդ օրերին Ավետիք Իսահակյանը իր զրույցներից մեկի ժամանակ արեց Ռուբեն Սեւակի ողբերգական պատմությունը: Ես այդ ամբողջ գիշեր նրա պատմածի տպավորության տակ էի: Կիսատ մնացած կյանք: Եւ մտածեցի. թե լավ կլինի, եթե Պարույրին կոչեմ Սեւակ, որպեսզի ողբերգականորեն կյանքից հեռացած մի Սեւակին շարունակի մի ուրիշ Սեւակ:

Այս է ամբողջ պատմությունը:

Ասեմ նաեւ, որ իր եղեռնական մահից հետո իմացա, որ իր սրտով չի եղել մի ուրիշ ազգանունով հանդես գալը. բայց շատ երիտասարդ լինելով ընդամենը 18 տարեկան, չի համարձակվել հակադրվել եւ համակերպվել է:

Եղածը եղել է եւ այժմ կարելի չէ որեւէ բան շտկել: Սակայն մի բան անհերքելի է: Այսօր Սեւակ անունը այնպես է կապված Պարույրի անվան հետ, որ կարծես իր հորական ազգանունը լինի:

Գոհացրի՞, արդյոք. Չեզ: Գրեցի այն, ինչ եղել է:

Եթե Չեզ կարող եմ որեւէ բանով օգտակար լինել, խնդրում եմ, գրեք ինձ:

**Երեւան, 11 փետրվարի, 1982**
**Հարգանքներով**
**միշտ Չեր Ռուբեն Չարյան»:**

Այստեղ մեկնաբանելու պիտի ջանանք Ռուբէն Չարեանին այս մասին տուած (մեզի համար) շատ ցաւալի տեղեկութիւնները

«Օր մը Երեւանի մէջ Աւետիք Իսահակեանը իրենց կը պատմէ «Ռուբէն Սեւակի ողբերգական պատմութիւնը»:

Ռուբէն Չարեան ամբողջ գիշեր Աւետիք Իսահակեանի պատմածներուն ազդեցութեան տակ կը մնայ:

Եւ հետեւեալ օրը իրեն հանդիպող երիտասարդ բանաստեղծ Պարոյր Ղազարեանին «Սեւակ» անունը կու տայ, որ Պարոյրին մէջ վերածնի Ռուբէն Սեւակը:

Ռուբէն Չարեանին, թերեւս բարեմիտ, բայց շատ միամիտ, անիմաստ եւ անգիտակից այս արարքը մեզի համար շատ մեծ, աններելի եւ անդարմանելի «սխալ» մը եղած է:

Եւ մանաւանդ նկատի առնենք, թէ Պարոյր Ղազարեան իր գրութիւններուն մէջ Ռուբէն Սեւակը յաւերժացնելու համար ոչ մէկ աշխատանք տարած է:

Ընդհակառակը, իր գրութիւններուն մէջ ոչ մէկ տեղ եւ ոչ մէկ ատեն Ռուբէն Սեւակին անունը յիշատակած է:

Այստեղ կը հրապարակենք նաեւ 15 Մարտ 1978 թուակիր Աթենքի «Ազատ օր» օրաթերթին մէջ «Գրչանուն» վերնագրով եւ «Սօսեաց տղան» ծածկանունով հրատարակուած դաշնակցական առաջնորդներէն բայց մեծ հայրենասէր Կարօ Մեհեանին գրութիւնը:

**«Ազատ օր», Աթէնք, 15 Մարտ 1978**
**ԵՐԲ ԳՐԻՉԸ ԿԸ ՉԲՕՍՆՈՒ...**
**ԳՐՉԱՆՈՒՆ**
**ԳՐԵՑ ՍՕՍԵԱՑ ՏՂԱՆ (ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ)**

Ունինք նաեւ ծածկանուն բառը, որ թարգմանութիւնն է յունարէն «պսեւտօնիմ» բառին, – «պսեւտօ» – խաբող, կեղծ, «օնումա» – անուն:

Անշուշտ մեր «գրչանունը» ոչ միայն աւելի արտայայտիչ է, այլեւ... պարկեշտ: Ոչ կեղծել եւ ոչ ալ ծածկուիլ:

Գրչանունը կամաւոր հրաժարումն է գրական մարզէն ներս ընտանեկան անունէն կամ մականունէն, անձնական նախասիրութեամբ մը մէկ կամ մէկէ

աւելի բառերու, որոնք կրնան գոյական կամ ածական ըլլալ:

Ան յատուկ է եւ յատուկ պէտք է մնայ միայն անոր, որ սեփականացուցած է զայն իբրեւ իր գրչանունը:

Այս յստակ եւ անվիճելի մեկնաբանութեամբ ալ գրչանունը, կը խորհիմ, ժառանգական չէ. ինչպէս է ընտանեկան անունը կամ մականունը:

Մեր մէջ, մանաւանդ վերջերս, այս օրինականութենէն շեղումներ եղած են:

Ռուբէն Սեւակ, ընտանեկան անունով Չիլինկիրեան, իր սկզբնական շրջանէն իսկ, մեր գրական անդաստանէն ներս մուտք գործած է այդ գրչանունով: Իր ընտանեկան անունը կը յիշուի միայն կենսագրականներուն մէջ: Նոյնն է պարագան բոլոր գրագէտներուն, որոնք գրչանուն մը ունին:

Այսուհանդերձ Հայաստանի մէջ «Սեւակ» գրչանունը իւրացնողներ եղան, – Գուրգէն Սեւակէն ետք, Պարոյր Սեւակ:

Գրչանունները անձեռնմխելի եւ անվիճելի սեփականութիւններ են, որոնք ո՛չ կ'իւրացուին եւ ո՛չ ալ կը ժառանգուին:

Երբ Պարոյր Սեւակ Փարիզ այցելեց, մեր խօսակցութեան ընթացքին մեղմ ձեւով յիշեցուցի այդ պարագան:

– Ես Ռուբէն Սեւակը կը գնահատեմ իբրեւ բանաստեղծ եւ իբրեւ արձակագիր, իսկ իր գրչանունը շատ հաճելի թուած է ինծի – ըսաւ:

Իր բացատրութիւնը ո՛չ համոզիչ էր եւ ո՛չ ալ արդարանալի:

Ենթադրենք թէ մենք ունենանք գրագէտ կամ բանաստեղծ Սիամանթոներ, Վարուժաններ, Սիպիլներ, Համաստեղներ, Շանպիլներ, Համաստեղծներ, Ինտրաներ, Օշականներ, Նարդունիներ, Շանթեր միայն անձնանուններու տարբերութիւններով...

Գրչանուն մը զինք ընտրող գրագէտինը կամ բանաստեղծինն է նոյնացած անոր հետ: Որակում մը, որով կը բնորոշուի գրո՛ղը,– իր գրականութի՛ւնը. եւ ո՛չ թէ իր անձը:

Գրչանունը գրագէտին կամ բանաստեղծին «պատմուճանը» կամ «շուրջառն» է, որով հանդերձեալ է «պատարագելու» գրական տաճարէն ներս:

Կամ «զարդարեալ ի զգեստ անկողոպտելի». «ի տեղւոջն փառաբանութեան»:

Հետեւաբար գրչանունը նաեւ չի կրնար ըլլալ ժառանգական, որովհետեւ ընտանեկան անուն չէ: Ան իր մէջ խտացուցած ունի արժէքները, արժանիքները ու նաեւ թերութիւնները զայն իւրացնող գրագէտին կամ բանաստեղծին: Հեղինակին ու գրչանունին զուգորդութիւնը պէտք է մնայ իր առանձնութեանը մէջ:

Գրչանունին ժառանգումը ոչինչ կ'ընծայէ ենթականերուն:

Իսկ եթէ անոնք, ընտանեկան գծով, ժառանգած են նաեւ գրողին տաղանդը առաւել կամ նուազ չափով, կարիքը չունին անոր «շուրջառին» մտնելու համար գրական տաճարէն ներս:

Կը խորհիմ թէ՝ ընդունելի չէ նաեւ գրչանուններու գործածութիւնը իբրեւ անձնանուններ:

Ինչո՞ւ, օրինակ, «Վարուժան», մը կամ «Շանթ» մը սովորականացնել եւ վերածել պարզ անունի մը: Նախընտրելի չէ՞ որ այդ անունով յատկանշուած գրագէտին կամ բանաստեղծին գրչանունը եւս մնայ անոր առանձնութեան մէջ եւ բարձրութեանը վրայ, փոխանակ ընդհանրանալու:

Ոմանք գրողին հանդէպ իրենց ջերմ տրամադրութենէն, ուրիշներ բառին գեղահնչիւն ըլլալէն մղուած իրենց ուստրերը կամ դուստրերը, կ'օժտեն բանաստեղծի մը կամ գրագէտի մը գրչանունով:

«Սեդա» անձնանունը եւս նոր է մեր մէջ:

Ժառանգութիւնն է Լ.Շանթի «Հին Աստուածներ»ուն: Բայց գրչանուն մը չէ, թեեւ գեղահնչի՛ւն անշուշտ: Անունն է թատրերկին տիպարներէն մէկուն: Պարսկերէն «սիտա» բառն է = ծայն:

Կը պատմեն թէ Շանթ, Իրանէն անցքին, խանութի մը վերեւ տեսած է այդ բառը եւ իւրացուցած է զայն՝ անով բնորոշելով հայ իշխանին դուստրը, որ, իրապէս. Սեւանայ լճին մռնչող ալիքներուն ընդմէջէն «աբեղային» սիրտը ալեկոծող «ծայնն» է...

Թերեւս քիչ մը տարօրինակ թուող ու նաեւ քիչ մը անախորժ բաներ ըսի:

**«Զբօսանք» մըն ալ այս...**
**ՓԱՐԻԶ**
**Կարօ Մեհեան»:**

Կարօ Մեհեան, այս գրութեան մէջ կը դատապարտէ Պարոյր Ղազարեանը որ անիրաւաբար գործածած է Ռուբէն Սեւակին գրչանունը:

Աւելին. Կարօ Մեհեանի գրութեան մէջ շատ բացայայտօրէն կը յայտնուի Պարոյրին իրականութենէ հեռու անհեթեթ խօսքերը:

Ռուբէն Զարեան իր նամակին մէջ կ'ըսէ «Պարույրի սրտով չի եղել մի ուրիշ ազգանունով հանդես գալը»: Մինչդեռ նոյն Պարոյրը Կարօ Մեհեանին հարցումին պատասխանելով կ'ըսէ թէ «Ես Ռուբէն Սեւակը կը գնահատեմ իբրեւ բանաստեղծ եւ իբրեւ արձակագիր. իսկ իր գրչանունը շատ հաճելի թուած է ինծի»:

***

Սիրելի հայրենի ընթերցող, Ռուբէն Սեւակ դաշնակցականներու կողմէ մոռացութեան ենթարկուեցաւ: Որովհետեւ Ռուբէն Սեւակ դաշնակցական չէր:

Ռուբէն Սեւակ Հայաստանի մէջ այլ բանաստեղծի մը կողմէ անունը անիրաւօրէն շահագործուելով մոռացութեան ենթարկուեցաւ: Հայ ազգը չի կրցաւ տեսնել Ռուբէն Սեւակին «մեծութիւնը»: Հայ ազգը ընդհանուր առմամբ չկրցաւ գնահատել Ռուբէն Սեւակին արժէքը...

Բայց թուրքերը հայերէն շատ աւելի լաւ տեսան եւ հասկցան Ռուբէն Սեւակին «տաղանդը» եւ իրենց համար ներկայացուցած վտանգը:

Այս պատճառաւ Ռուբէն Սեւակը ազատելու համար իր գերմանացի կնոջ կատարած բոլոր դիմումները մերժեցին եւ սպաննեցին Ռուբէն Սեւակը:

Այստեղ կը հրապարակենք փաստաթուղթ մը, որուն մէջ բացայայտօրէն յայտնի կ'ըլլայ Ռուբէն Սեւակին գրութիւններուն թուրքերուն պատճառած մտահոգութիւնները:

Թուրքերը 1917–ին ֆրանսերէն լեզուով գիրք մը կը հրատարակեն Պոլսոյ մէջ: Այս գիրքին բուն նպատակն է ապացուցանել, թէ հայերը տարիներ տեւողութեամբ, մինչեւ 1915, աշխատած եւ պատրաստուած են թրքական պետութիւնը տապալելու համար:

Այս գիրքը գրեթէ 500 էջնոց մեծածաւալ գիրք մըն է: Եւ գիրքին մէջ շատ մը փաստաթուղթեր եւ մեծ թիւով նկարներ կան: Այս նկարներուն մէջ կ'երեւան (իբր թէ) հայերու կողմէ մեռցուած թուրքերուն դիակները:

Բնական է, ամբողջ գիրքը մեր գիտցած «թրքական մասալներ»ով եւ խաբէութիւններով լեցուն է:

Բայց այս գիրքին մէջ մեզի համար ամենէն կարեւոր մասը թուրքերու կողմէ շատ վտանգաւոր նկատուած Ռուբէն Սեւակին «Վերջին օրօր» բանաստեղծութիւնն է. որ թուրքերը ֆրանսերէնի թարգմանելով հրատարակած են իբր ապացոյց հայկական յեղափոխական գաղափարականին: Այս գիրքին մէջ Ռուբէն Սեւակին «Վերջին օրօր» բանաստեղծութիւնը միակ բանաստեղծութիւնն է: Գիրքին մէջ ուրիշ բանաստեղծութիւն չի կայ:

Այստեղ կը հրապարակենք թրքերէն գիրքին առաջին էջին նկարը եւ գիրքին մէջի Ռուբէն Սեւակի բանաստեղծութեան թուրքերուն կողմէ հրատարակուած ֆրանսերէն թարգմանութիւնը «BERCEUSE» անունով եւ թուրքերուն ֆրանսերէն թարգմանութեան քովը կը հրատարակենք նաեւ «Վերջին օրօր» բանաստեղծութեան հայերէն տպագրուած բնագիրը:

**ASPIRATION**
**ET**
**AGISSEMENTS REVOLUTIONNAIRES**
**DES**
**COMITES ARMENIENS**
**avant et apres la proclamation**
**DE LA**
**CONSTITUTION OTTOMANE**

**CONSTANTINOPLE**
**1917**

## BERCEUSE

«Dors mon enfant, dors,
Et n'entends pas ge'mir ton pauvre pere blesse'.
Un de'luge de sang a innonde' ces lieux be'nis,
Mais garde–toi bien de les quitter.
Aime toujours ton pays
Et adore ta patrie
Mais n'y vis jamais en esclave;
Commande, domines!
Si je ne suis pas aussi
Tombe'e inanime'e a cote de ton pere,
C'e'tait, comme la louve de Rome,
Pour e'lever un nouveau Romulus.
Mes bras ont e'te' lie's, mes pieds ont e'te' hache's,
Et a la fin he'las! on me coupa les seins!
Le lait que tu as suce' n'e'tait que du poison,
Suce maintenant le sang de ma plaie, o mon unique enfant!
Je meurs!... que l'Armenie soit ta mere;
Que cette e'pe'e brise'e,
Sentant encore le sang tout chaud de ton pere,
Soit pour toi mon souvenir!».
(Extrait des «Massacres d'Armenie»)

## ՎԵՐՋԻՆ ՕՐՕՐ

Օրօր, օրօ՜ր... Օրօ՜ր ըսեմ քնանաս,
Վիրաւոր հօ՜րդդ ճիչերն ա՛լ չ՛իմանաս:
Ծիծէս ծըծածդդ թոյն է, կաթ չի գիտնաս...
Օրօ՜ր ըսեմ քնանաս:

Արի՜ւն–հեղեղ յորդեց այս սուրբ ծորերէ,
Բայց չի փախիս. վարէ՛ երկրիդ, զայն սիրէ,
Հողիդ վրայ գերի մ՛ըլլար, այլ տիրէ...
Օրօ՜ր ըսեմ քնանաս:

Հօրդ վըրայ եթէ անշո՜ւնչ չինկայ ես,
Ջի ուխտեցի Հռովմի է՛գ գայլին պէս,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...
Օրօ՜ր ըսեմ քնանաս:
Բազուկներուս պարա՜ն, ոտքիս ալ կացի՜ն,
Ստինքիս զո՜յգ պտուկներն, ա՜հ, կտրեցին:
Վէրքէս արիւնս ծծէ, որդեա՛կ միածին...
Օրօ՜ր ըսեմ քնանաս:

Ահա կ՛իյնամ... Հայաստանը մա՜յր քեզի:
Կտակ կու տամ այս կոտրած սուրն երկսայրի
Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ՛այրի...
Օրօ՜ր ըսեմ քնանաս:

**Լօզան, 6 Յուլիս 1919**

***

Մենք կը հաւատանք որ հայերն ալ միջոց մը յետոյ պիտի հասկնան Ռուբէն Սեւակին արժէքը:

Բայց շատ ուշ պիտի ըլլայ: Պրօֆ. Վլադիմիր Պետրոսեանին հրատարակած «Ռուբէն Սեւակը եւ մեր ժամանակը» վերտառութեամբ այս գիրքին նպատակն է շատ ուշ չի մնացած, ծանօթացնել Ռուբէն Սեւակը իր ամբողջական կերպարով, մասնաւորապէս իր գաղափարներով եւ նաեւ իր շրջակայքով:

Այս գիրքը բոլոր հայրենասէր հայերուն համար իսկական ուղեցոյց մըն է հասկնալու համար անցեալը, ներկան եւ մանաւանդ ապագան:

Յուսանք. որ հայրենի ժողովուրդը պիտի հասկնայ արժէքը պրօֆ. Վլադիմիր Պետրոսեանին այս բացառիկ ուսումնասիրութեան:

**Ֆրանսիա, ք. Նիսս**
**7 յունիս 2003**



Ժիրայր
ՆԱՅԻՐԻ

# ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ.
# ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԸ
# ԻՐ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՈՎ

Ռուբէն Սեւակի ամբողջական կերպարը. իբր մտաւորական, գրող, բանաստեղծ, բաւարար ծանօթ չէր դեռ մինչեւ վերջերս: Թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ Հայաստանի գրասէր լայն շրջանակներուն: Ներեցէք ինծի, եթէ կը զարմացնեմ ձեզ: Ռուբէն Սեւակի դէմքին միայն մէկ երեսին տեղեակ էր ժողովուրդը: Ձինք կը ճանչնային աւելի շատ որպէս քնարերգակ բանաստեղծ, սիրոյ, ներանձնական ապրումներու, ծաղկի ու թիթեռի երգիչ: Մինչդեռ ան ունէր ուրիշ երես մըն ալ: Նոյնքան եւ աւելի գրաւիչ, լուսափայլ. ես պիտի ըսէի՝ կարեւոր ու օգտաշատ: Հայ–ազգային յանձնառու եւ առաջնորդ, ուղեցոյց մտաւորականի իր արժանիքը էր այդ:

Ռուբէնի այս մասնայատկութեան բացայայտումը եկաւ ամբողջացնելու իր դիմագծութիւնը: Ամբողջացնելու իր փայլը: Լուսարձակելու իր տաղանդը իր բովանդակ գրաւչութեամբ: Եւ այս պակասի լրացման, թերիի սրբագրման մէջ շնորհակալ մեծ աշխատանք ունի Ռուբէնի եղբօրորդին, մերօրեայ ներհուն հրապարակագիր Յովհաննէս Չիլինկիրեանը:

Ես իմ խօսքը պիտի կեդրոնացնեմ շատերուն անծանօթ, ոմանց կողմէ մոռացութեան տրուած, իսկ ուրիշներէ ալ անգիտացուող Ռուբէն Սեւակի այս արժանիքներուն վրայ:

Ռուբէն Սեւակ իր ժամանակի մեր ազգային գաղափարախօսն էր:

Ան

* Եզակի ԱԶԳԱՍԷՐՆ էր – որ կը հաւատար իր ցեղի քաղաքակրթական բնածին առաքելութեան: Չէր հանդուրժեր որ հինգ հազարամեայ պատմութեան տէր ժողովուրդ մը ապրէր ստրուկ, ցանուցիր ու պանդուխտ: Զրկուէր պետականութենէ: Ենթարկուէր քոչւոր վանտալներու հուրին, սուրին ու աւերումներուն: Չինք պահէին ծնակչոք: Փճացնէին իր հանճարին, մտքին ու ձեռքին ստեղծագործութիւնները: Ինչ որ ինք կերտած էր գեղեցիկ ու բարգաւաճ:

Ահա թէ ինչու, ան միասնութեան ու պայքարի կը կոչէր հայութիւնը: Կը հաւատար հայ ժողովուրդի զարթօնքին ու յաղթանակին բռնակալութեան վրայ: Անքակտելի սիրով կապուած էր իր ազգային ինքնութեան, լեզուին, հաւատքին: Իրեն համար սրբապղծութիւն էր հրաժարիլը ասոնցմէ: Մինչեւ իսկ զանոնք առ երես ուրանալը: Կը նշանակէ որ Ռուբէն, քայլ մըն ալ առաջ էր, քան Վարդանանք ու իրենց նմանները:

Աքսորի ճամբուն վրայ երբ առաջարկեցին իրեն դաւանափոխ ըլլալ ու փրկուիլ, ան մերժեց: Եւ որպէսզի իր բանտակիցներէն թուլացող ու համակերպող չգտնուի, Ս.Գրքի վրայ երդում ընել տուաւ անոնց, որ ո՛չ մէկ ստիպումի տակ պիտի չդրժեն իրենց հայկականութիւնը եւ հաւատքը. «ԹՐՔԱՆԱԼԸ ՆՈՒԱՍՏԱՆԱԼ է» ըսաւ անոնց, ու թոյլերը խրախուսեց:

Ռուբէն Սեւակ եղաւ նաեւ ՏԻՊԱՐԸ ՀԱՅ ՏՂԱՄԱՐԴՈՒ–ԱՄՈՒՍՆԻ բարոյական նկարագրին:

Տարագրութեան ճամբու վրայ ան բուժած էր, որպէս նաեւ բժիշկ, զիրենք փոխադրող թուրք կառապանին աղջկան, որ սիրահարած էր իրեն: Թրքուհիին հայրը կ՛առաջարկէ Սեւակին, որ ամուսնութիւն կնքէ իր դստեր հետ եւ ազատի, դառնալով կրօնափոխ: Այլապէս կ՛ըսէ ան, դուն եւ ընկերներդ դատապարտուած էք մահուան: Բայց Ռուբէն կը մերժէ ըսելով, որ ինք ամուսնացած է, ունի կին եւ երեխայ: Կ՛ուզէ հաւատարիմ մնալ իր ամուսնական ուխտին: Եւ հակառակ իրեն բախտակից կարգ մը հայ գրողներու տուած խորհուրդին, որ ինք բան չի կորսնցներ կրկնամուսնութեամբ ու հաւատքը փոխելով առժամապէս, Ռուբէն կը պատասխանէ անոնց. «Եթէ մենք, մտաւորականներս, դաւաճանենք մեր սրբութիւններուն, Ուխտին, գէշ օրինակ կը դառնանք մեր ժողովուրդին: Մենք բարի օրինակ ըլլալու ենք անոնց, այո, նահատակուելո՛ւ գնով, որ Ազգը ապրի»:

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ**

Եզակի ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆ էր – որ կ՛երազէր հայ հողի ազատագրութիւնը եւ ժողովուրդի վերամիաւորումը անոր վրայ, ազատ, ապահով ու խաղաղ պայմաններու մէջ:

Ան խորհուրդ կու տար հայուն, որ կուրծք տայ բռնակալին եւ ոչ թէ կռնակ դարձնէ անոր: Արիւնի տեսքէն չսարսափի: Չփախչի երկրէն զայն լքելով,

յանձնելով բռնագրաւողին, այլ փարի հողին ու զայն սիրէ: «ՀՈՂԻԴ ՎՐԱՅ ԳԵՐԻ ՄԻ ԸԼԼԱՐ... ԱՅԼ ՏԻՐԷ» կը պատգամէր: Եւ հայ որբեւայրի մօր բերնով սուրը կը յանձնէր օրօրոցի մանկան, որ երբ մեծնայ վրէժն առնէ թուրքէն սպաննուած իր հօր:

Ռուբէն կը յորդորէր հայուն, որ նախ ապաւինի իր միութեան, ապա խելքին, բազուկին ու զէնքին: Գութ ու շնորհ չհայցէ ոչ մէկէն, ո՛չ երկինքէն եւ ոչ ալ տմարդի աշխարհէն: Ելքն ու փրկութիւնը տեսնէ անվեհեր պայքարի մէջ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԱՆՁՆԱԶՈՀՈՒԹԵԱՆ օրինակն էր: Ան չեղաւ միայն խորհուրդ ու խրատ բաժնող, այլ եղաւ անձնազոհ ազգասիրութեան ու հայրենասիրութեան օրինակ: Իսկական սպարապետի, ղեկավարի պէս կանգնեցաւ իր ժողովուրդին առջեւ որ զինք առաջնորդէ: Եւ որպէսզի, եթէ թուրքին եաթաղանը անխուսափելիօրէն պիտի իջնէր հայութեան վրայ, թող սուրը նախ ի՛ր մէջէն անցնէր ու ապա հասնէր իր ժողովուրդին: Իսկ այս նուիրումի ոգին վկայող ապացոյց չէ՞ր Մեծ Եղեռնի նախօրէին Պոլիս վերադառնալը գիտակցաբար, իր ետեւ ձգած չքնաղ Զուիցերիոյ խաղաղ, ապահով ու հեշտ կեանքը: Ան ուզեց կիսել իր ժողովուրդին ճակատագիրը, ցաւն եւ ուրախութիւնը, եւ իր սկզբունքին հաւատարիմ եղաւ առաջին զոհերէն, մեռաւ ոճիրներուն ամենէն քստմնելիովը:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՉԳՕՆ, ՀԵՌԱՏԵՍ ԵՒ ՈՒՂԵՑՈՅՑ ԱԶԳԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԻՊԱՐՆ ԷՐ, որ քաղաքական հոտառութեամբ զգաց, որ երիտթուրքերը կը պատրաստուէին բնաջնջելու արեւմտահայութիւնը: Չգաստութեան հրաւիրեց Պոլսոյ հայ ջոջերը որ հաւատք չընծայեն թուրքերու կեղծ խոստումներուն, անոնց այսպէս կոչուած «եղբայրութեան, հաւասարութեան ու բարեկամութեան» լոզունգին: «Գայլն ու Գառնուկը միատեղ չեն կրնար գոյակցիլ» – պատգամեց, եւ ահազանգ հնչեցնելով զգուշացուց. թէ «ՍՏՈՅԳ Կ'ԸՍԵՄ ՉԵՉԻ, ՎՏԱՆԳԸ ՄԵԾ Է, ՇԱՏ ՄԵԾ, ԱՒԵԼԻ ՄԵԾ ՔԱՆ ԿՐՆԱՆՔ ԵՆԹԱԴՐԵԼ»:

Եւ գրեթէ խնդրական առաջարկեց, որ Հայութիւն–երիտթուրքեր խաղաղ գոյակցութեան հաւատացողները հրաժարին իրենց պատրանքներէն ու մտածեն, ընդհակառակը, ինքնապաշտպանուելու մասին: Ռուբէնի խօսքով. «ԺԱՄԱՆԱԿ Է ՀԱԿԱԶԴԵԼՈՒ, ՀԱԿԱԶԴԵՆՔ»:

Դժբախտաբար, Իմաստուն այս թելադրանքները սակայն, չլսուեցան 1910–ական թուականներու մեր արեւմտահայ մտաւորականութեան մեծ մասին կողմէ: Համազգային դիմադրութիւն կարելի չեղաւ իրականացնել Սարդարապատի տիպի: Անջատ մէկ քանի շարժումներն ալ, անշուշտ, չէին կրնար պէտք եղած արդիւնքը տալ: Եւ ճակատագրի ի՜նչ հեգնանք, պատահեցաւ աղէտը: Եւ առաջին զոհերը եղան թուրքին բարեկամութեան հաւատացող Արեւմտահայ քաղաքական գործիչներն ու մտաւորականները:

* ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՂԱՒ ՆԱԵԻ ԻՐԱՏԵՍ ՈՒ ԱԶԳԻՆ ՃԻՇԴ ԱՐԵՒԵԼՈՒՄ ԹԵ-

ԼԱԴՐՈՂ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԸ – որ երկար չսպասեց համոզուելու համար, որ այսպէս կոչուած քրիստոնեայ ու քաղաքակիրթ Եւրոպան նենգ էր, ստոր ու խաբեբայ երբ հայութեան բարեկամ կը ձեւանար: Այդ պետութիւնները խոստացան մեզի օգնել: Բայց խօսքո՛վ միայն: Մինչդեռ, բանակցութեան սեղաններուն շուրջ, շնականօրէն «ՄԵՐ ԱՐԵԱՆ ԵՒ ԼՌՈՒԹԵԱՆ ԳԻՆԸ ՍԱԿԱՐԿԵՑԻՆ» – կ՚ըսէ Ռուբէն, խորհուրդ տալով հայութեան, որ չվստահի այդ շահամոլ տէրութիւններուն բարոյականութեան: Անոնք, ամէն անգամին ալ, ցեղասպաններուն բարեկամն ու հովանաւորը եղան: Եւ դեռ կը մնան մինչեւ այսօր:

Ուստի, խորհուրդ կու տար որ հայութիւնը, իր Պատմութեան դասերէն իմաստնացած, լա՛ւ ճանչնայ իր բարեկամն ու թշնամին:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՀԱՅ ԻՍԿԱԿԱՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆԻ ՏԻՊԱՐՆ ԷՐ. – Ան կը հաւատար, որ Ազգի ու Հայրենիքի ազատ ու ապահով գոյութեան պաշտպանութեան, ժողովուրդի ճիշդ առաջնորդութեան մէջ, մտաւորականութիւնը առաջնակարգ դեր ունի:

Իր խօսքը իրեն ժամանակակից մտաւորականութեան ուղղելով կ՚ըսէր. «ԴՈՒՔ ՑԵՂԻՆ ՈՒՂԵՂՆ ԷՔ»: Եւ կ՚այպանէր Ազգին սպառնացող վտանգին անտեղեակ, կամ անոր հանդէպ անհոգ գտնուող գրողները, որոնք «ԻՐԵՆՑ ԳՐԻՉՆԵՐԸ ՀԱՅ ԱՐԵԱՆ ՄԷՋ ԹԱԹԽԵԼԷ ՎԵՐՋ ՉԻՆԱՐԷՆ ՏԱՂԵՐ ԿԸ ԳՐԵՆ ՈՐ ՄԱՐԴ ԲԱՆ ՉՀԱՍԿՆԱՅ»: Այն պահուն, երբ իրենց պարտականութիւնը ժողովուրդը արթուն ու գիտակից պահելն է:

«ՄԵՆՔ ԴԵՌ ԱՊՐԻԼ Կ՚ՈՒԶԵՆՔ, ՄԵՋ ՄՏՔԻ, ՀՈԳԻԻ ՈՒ ՄԱՐՄՆԻ ԲԺԻՇԿՆԵՐ ՄԻԱՅՆ ՊԷՏՔ ԵՆ» – կ՚ըսէր Ռուբէն իր գրչեղբայրներուն, որ անոնք սթափին: Իրենց ուղեցոյց մտաւորականի պատմական դերին մեղանչող գրողներուն ալ կը կշտամբէր գոչելով. «ՀԵՌՈՒ ՄԵՋՄԷ ԱԽՏԱԳԻՆ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐ: ԵԹԷ ՁԵՐ ՈՒՂԵՂԸ ՈՒՐԻՇԿԵՐՊ ՉԻ ԿՐՆԱՐ ԽՈՐՀԻԼ ՔԱՆ ՅՈՒՍԱՀԱՏԵՑՆԵԼՈՎ ՄԵՐ ԿԵՆՍՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, ՄԵՆՔ ՊԻՏԻ ՓՐՑՆԵՆՔ ՈՒ ՆԵՏԵՆՔ ԱՅԴ ՈՒՂԵՂԸ»:

Դժբախտաբար, Մեծ Եղեռնի նախօրէին, Արեւմտահայ մտաւորականութեան մեծ մասը եղան անտարբեր ու համակերպող: Մինչեւ իսկ «յոռետես» ու «ծայրայեղական» կոչեցին Ռուբէն Սեւակին: Բայց կեանքը եկաւ վկայելու, որ մարգարէատիպ այս մտաւորական–գրողը ճի՛շդ կանխատեսած ու դատած էր: Ցեղասպանը Գրիգոր Զօհրապներէն ու Ակնունիներէն աւելի ուշիմ եւ խորամանկ եղած էր: Որպէսզի հայութեան կարենայ բնաջնջել, նախ, մտաւորականութիւնը բաժնած էր ժողովուրդէն: Ռուբէնի բնորոշումով «ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԾԱԾ ԷՐ ԱՆՄԱՐՄԻՆ ԳԼՈՒԽԻ, ԻՍԿ ՄԵՌ ՑԵՂԸ, ԱԶԳԸ ԴԱՐՁՈՒՑԱԾ ԱՆԳԼՈՒԽ ՄԱՐՄԻՆ»:

Այսպէ՛ս գործեց թուրքը, հայութեան անմարմին գլուխը ճզմեց զինք նախ մեկուսացնելով, իսկ, անգլուխ մարմինն ալ, այսինքն ժողովուրդը, բնաջնջեց ծորերու մէջ ու անապատներու կիզիչ աւազներու վրայ:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ ԳՆԱՑ ԴԷՊԻ ՄԱՀ ՈՒ ՈՂՋԱԿԻՋՈՒՄ: Կարելի է ըսել որ հինգերորդ դարու Վարդանանց լոզունգը կրկնեց ու գործադրեց քսաներորդ դարու մէջ: Ան կը հաւատար, որ «Իմացեալ մահը անմահութիւն է»:

«ՄԵՆՔ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՍԵՐՄՆ ՈՒՆԻՆՔ ՄԵՐ ՄԷՋ,– գրած է նահատակ բանաստեղծը, աւելցնելով.– ԲՌՆԱԳՐԱՒԻՉՆԵՐԸ ՀԱՅՈՒՆ ՏԱՊԱՆԻՆ ՎՐԱՅ ԳՐԵՐ ԵՆ «ՄԱՀ ՀԱՅՈՒՆ: ԻՍԿ ՀԱՅԵՐԸ, ՆՈՅՆ ԱՅԴ ՏԱՊԱՆԻՆ ՄԻՒՍ ԵՐԵՍԻՆ ՎՐԱՅ ԳՐԵՐ ԵՆ. «ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ»:

Իրականացաւ նաեւ այս մարգարէութիւնը, հոգ չէ թէ կիսով: Իրականացաւ Վերածնութիւնը որուն կը հաւատար ինք: Հայ պետականութեան գոյութիւնը խօսուն ապացոյց է իր այս լաւատեսութեան – ահա, աւելի քան ութսուն տարիներէ ի վեր:

Կ'ըսենք կիսով իրականացաւ, որովհետեւ Արեւմտահայաստանը, Արարատը կը մնայ գերի, գրաւեալ: Ոճիրը կը մնայ անպատիժ: Արդար հատուցում դեռ չէ եղած հայութեան:

Սա պահուս, քանաքեռի բարձունքին դէպի երկինք խոյացող յուշարձանը Ռուբէն Սեւակի, իր մշտայուշ անունը կրող դպրոցի բակին կանգնեցուած, իր խռով աչքերէն մէկը յառած է Արարատին, սգալով գերութիւնը անոր: Իսկ միւսով ալ կը դիտէ Հայաստանի Հանրապետութեան ներկայ վիճակը որ իր սիրտը կը կսկծացնէ:

Այո, խռով է հերոսի սիրտը, ի տես մայր հողէն կատարուող արտագաղթին: Ժողովուրդի կենսամակարդակի անկումին: Հայ մշակոյթի ու արուեստի նահանջին: Հայ մտաւորականութեան դիմադրական ոգիի ու յառաջապահի դերի տկարանալուն, եւ վերջապէս խռով է, քանի որ հոգեբարոյական այլասերումի երեւոյթներ յայտնուած են ժողովուրդի մէջ: Օտար ու ապականիչ բարքեր խուժած են մեր երկիրը եւ կ'այլանդակեն Հայաստանի կուսական դէմքը:

Ռուբէն Սեւակ միշտ եւ միշտ մերժած է հայ ժողովուրդի ազգային նկարագրի, բարքերու եւ հոգեմտաւոր ու բարոյական արժէքներու ամէն այլասերում:

Ահա թէ ինչու անոր կիսանդրիին մարմարեայ շրթները կը վերակենդանանան սա պահուս, լեզու կ'առնեն եւ կը պատգամեն մերօրեայ հայութեան, հայրենաբնակ ժողովուրդիդ առանձնապէս, գոչելով.–

ԱՅԼԱՍԵՐՈՒՄ ՈՉ. ԱՅԼ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ: ՄԵԶԻ ՊԷՏՔ Է ՆՈՐ ԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ, ՈՐ, ՆԵՐԿԱՅԻ ԱՆԲԱՂԱՁԱԼԻ ՎԻՃԱԿԷՆ, ՄԷԿ ԱՆԳԱՄ ԵՒՍ ՈՒ ԱԼ ԸՆԴՄԻՇՏ, ՅԱՂԹԱԿԱՆ ԴՈՒՐՍ ԳԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ԴԻՄԷ ԴԷՊԻ «ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՈՒ ԲԱՐԳԱՒԱԾ ՀԱՅՈՒԹԵԱՄԲ» ԻՏԻԱԼԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՆ, ՈՐՈՒՆ ԿԸ ՀԱՒԱՏԱՆՔ: ՔԱՆԻ ՈՐ, ՄԵՐ ԴԱՏԸ ԱՐԴԱՐ Է: ԻՍԿ ԱՐԴԱՐ ԴԱՏ ՄԸ, ՈՒՇ ԿԱՄ ԿԱՆՈՒԽ, ԱՆՊԱՅՄԱՆ ԿԸ ՅԱՂԹԱՆԱԿԷ:

**Բեյրութ, Լիբանան**



Վլադիմիր
ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

(Առաջաբանի փոխարեն)

«Ես գիտեմ, սիրելի ընթերցող, որ դու ոչ մի կարիք չունես կարդալու իմ առաջաբանը, բայց ինձ շատ է հարկավոր, որ դու կարդաս այն»: Սա Սերվանտեսի դիմումն է իր ընթերցողին:

Հետեւելով Սերվանտեսի օրինակին նույնպես հարկ համարեցի գրել այս առաջաբանը միայն մի նպատակով բացատրել սույն գրքի մտահղացման շարժառիթները:

Ռուբեն Սեւակի կյանքը. նրա ճակատագիրը մշտապես հուզել ու հուզում են հայ մարդուն: Նրա մասին ստեղծվել է ծավալուն գրականություն: Եվ թվում է. թե Ռուբեն Սեւակի մասին ասված է ամեն ինչ: Եվ ամեն ինչ հայտնի է:

Սակայն անցնում է ժամանակը: Կյանքը նոր խնդիրներ է առաջադրում: Ժամանակն ու կյանքը դրել են նաեւ պահանջ վերաիմաստավորել պատմական անցյալը. նորովի գնահատել անցած ժամանակների դեպքերն ու իրադարձությունները. դրանք կերտող գործիչների դերը:

Արժե այստեղ հիշել ռուս հեղափոխական դեմոկրատ Վ.Բելինսկու հետեւյալ զգուշացումը. «Կյանքը խորն է անսպառ եւ բազմակողմանի անսահման: Որքան էլ այն արտացոլեք, միշտ լուսաբանելու բան կմնա: Որքան էլ որ ջանք թափեք, միեւնույն է, կգրեք այդ կյանքի մի քանի էջ եւ երբեք չեք գրի նրա ամբողջական գիրքը»1:

Վ. Բելինսկու զգուշացումը վերաբերում է նաեւ Ռուբեն Սեւակ բանաստեղծին: Իսկապես, թվում է, թե նրա մասին ասված է ամեն ինչ: Բայց ոչ: Ասվածից էլ ելնելով այս գրքով փորձել եմ Ռուբեն Սեւակի մասին գրել ու նրան ներկայացնել որպես մտածող, փիլիսոփա, քաղաքագետ ու ազգային գործիչ: Իմ այսպիսի մոտեցումը գեղարվեստական երկը քննադատողի կամ էլ վերլուծողի մոտեցում չէ: Ես Ռուբեն Սեւակին ձգտել եմ ներկայացնել պատմաբանի հայացքով, պատմականության դիրքերից:

Սրանից էլ ելնելով ընթերցողին հրավիրում եմ նորից կարդալ Ռուբեն Սեւակին: Եվ այդ դեպքում նա կհամոզվի, որ Ռուբեն Սեւակը ինչ որ գրել է 20–րդ դարի սկզբին, ամբողջովին վերաբերում է մեզ, բոլորիս, որ արդեն բացել ենք 21–րդ դարի դուռը:

Ռուբեն Սեւակը ապրեց ընդամենը 30 տարի: Եվ երբ նրա ապրած տարիները վերածում ենք օրերի, ապա ավելի քիչ է ստացվում: Եվ այստեղից էլ շատ կարեւոր է իմանալ նրա ապրած կյանքի յուրաքանչյուր օրվա մասին:

Ելնելով ասվածից՝ իմ առջեւ դրել եմ հետեւյալ խնդիրը. Ռուբեն Սեւակի կյանքի պատմությունը լրացնել թեկուզ եւ մեկ էջով ու դրանով փորձել նոր հայացք ձգել նրա կյանքի ու ճակատագրի վրա:

Ճակատագիր: Այս մեկ հատիկ բառի մէջ ինչքա՜ն հույսեր ու սպասելիքներ, խոհեր, բողոք ու անեծք են միահյուսված: Ճակատագիրը ինչքա՜ն չկատարված երազանքների, չիրականացած ցանկությունների հանգրվան է դարձել: Ճակատագիրը ամեն մարդու ապրելու ժամանակն է, մեռնելու ժամանակն է:

Թող ընթերցողներից ոմանք չզարմանան ճակատագրի մասին իմ թռուցիկ դատողություններից: Դրանց մեջ ես բնավ չեմ դնում ճակատագրի վերաբերյալ կրոնական–միստիկական, առեղծվածային սնոտիապաշտության սուտ առասպելը, միֆը, որով կանխորոշվում է մարդու կյանքը նրա ծննդից մինչեւ մահ:

Խորհելով Ռուբեն Սեւակի ճակատագրի մասին ես առաջին հերթին նկատի ունեմ եւ անչափ կարեւորում եմ նրա կողմից իր կյանքի ուղու ընտրության խնդիրը: Որովհետեւ Ռուբեն Սեւակը գործել է իրական կյանքում եւ չի ղեկավարվել երեւակայությամբ: Որովհետեւ Ռուբեն Սեւակը, թեեւ լինելով լիրիկ բանաստեղծ, իրական կյանքում եղել է լրջախոհ ու շրջահայաց, իր ժամանակի իրադարձություններին վերաբերվել է որպես սթափ մտածող գործիչ:

Թող ոմանց մոտ նաեւ տարակուսանք չառաջացնի, երբ ես կողք կողքի օգտագործում եմ «ճակատագիր» եւ «կյանքի ուղի» հասկացությունները: Այստեղ դրանք իրար նմանեցնելու կամ էլ իրարով փոխարինելու մտադրություն չկա:

Ռուբեն Սեւակն այնպիսի մասշտաբի մտածող է ու գործիչ, որ անհնար է

նրա կյանքն ուսումնասիրել հաշվի չառնելով շրջապատող աշխարհի նկատմամբ նրա ունեցած իրական վերաբերմունքը, օբյեկտիվ պայմանները, որոնց մեջ նա ապրում ու գործում էր: Բացարձակապես անհնար է Ռուբեն Սեւակի կյանքի ուղին, նրա ճակատագիրը, ներաշխարհը քննարկել հասարակական կյանքից դուրս:

Ռուբեն Սեւակի կյանքը յուրատեսակ է: Անկրկնելի է նաեւ նրա կյանքի ուղին: Բայցեւ նրա անկրկնելի կյանքն ու ճակատագիրը ընդհանրական են իր ժողովրդի կյանքին ու ճակատագրին: Դա յուրատեսակ ներդաշնակ միասնություն է:

Ռուբեն Սեւակն իր կյանքով, իր կյանքի ուղիով ու ճակատագրով շատ է տարբերվում իր ժամանակակիցներից, թեեւ մեր գրականության մեջ, նկատի ունենալով նրանցից շատերի միանման ողբերգական վախճանը, նկատվում է նույնացման միտում: Լատինական առածն ասում է. «Երբ երկուսը կատարում են միեւնույն բանը, ապա դա արդեն միեւնույնը չէ»: Այսինքն՝ այդ երկուսի միջեւ կա տարբերություն: Եվ այդ տարբերությունը չի կարող չդրսեւորվել կատարելու եղանակի վրա: Բոլորը նայում են մի ուղղությամբ, բայց բոլորը չէ, որ տեսնում են նույնը:

Ասվածը ամբողջովին վերաբերում է Ռուբեն Սեւակին, որովհետեւ նա «ինքն իր համար» ապրելու ձգտում ունեցող մարդկանցից չէր: Նա խորապես զգում էր այդպիսի ապրելակերպի վնասը թե իր եւ թե իր ժողովրդի համար: Նա պարզապես չէր պատկերացնում իր կյանքը կտրված հարազատ ժողովրդից:

Հանրահայտ է, որ մարդու կյանքի ուղին, նրա անկրկնելի անհատականությունը դարձել են գիտության բազմաթիվ ճյուղերի ուսումնասիրության առարկա: Դրա արդյունքով էլ այսօր արդեն կենսագրությունը դարձել է պատմական ուսումնասիրության լիարժեք ժանր:

Ձեռնարկելով Ռուբեն Սեւակի կյանքի ուղու նկարագրությունը ես հետապնդում եմ նաեւ դա վերլուծելու նպատակ: Պատմության մեջ քիչ չեն հայտնի, տաղանդավոր ու հանճարեղ գործիչներ, որոնց կյանքի ուղին, ծննդից մինչեւ մահ, շատ կարճ է եղել: Նրանց շարքում է նաեւ Ռուբեն Սեւակը: Ռուբեն Սեւակն ապրեց ընդամենը 30 տարի: Միայն կարելի է ենթադրել, թե հայ գրականության միջոցով նա համաշխարհային մշակույթը որքա՜ն կհարստացներ, եթե ապրեր գոնե 75–80 տարի: Բայց այն ամենը, ինչ հասցրեց անել նա նաեւ ազգային–հասարակական ասպարեզում, նույնպես վկայում է, թե ինչքան օգտաշատ կլիներ նրա գործունեությունը: Այն իրողությունը, որ այսօր էլ Ռուբեն Սեւակի պատգամները շարունակում են պահպանել իրենց արդիական հնչեղությունը, ասվածի լիարժեք ապացույցն է:

Իմ համոզմամբ Ռուբեն Սեւակն այն անհատականությունների շարքին է պատկանում, որոնց մոտ հաջողություններն առավելապես կապված են ե-

ղել ոչ թե պրոֆեսիոնալ, այլ ոչ պրոֆեսիոնալ գործունեության ասպարեզի հետ: Ռուբեն Սեւակն էլ, ինչպես ռուսական իրականության մեջ Անտոն Չեխովը, իրեն դրսեւորեց ավելի շատ որպես գրող, ազգային–հասարակական գործիչ, քան որպես բժիշկ: Այսպիսի պնդմամբ ես բնավ էլ նպատակ չեմ հետապնդում նսեմացնել բժիշկ Ռուբեն Սեւակին, այլ ուզում եմ շեշտել նրա քաղաքական աչալրջությունը, որը չունեին նրա ժամանակակից ու երեւելի գործիչներից շատերը:

Ռուբեն Սեւակը զբաղվում էր սոցիալական հիվանդություններով: Նա զբաղվում էր սոցիալական ժանտախտով, նոր ժամանակների բնորոշմամբ հոգեւոր սպիդով: Այստեղից էլ եզրակացնենք, որ անհնար է գեղեցիկ ու բանաստեղծական շնչով գրել ցեղասպանության մասին: Ռուբեն Սեւակի համար անհնարին էր գեղեցիկ գրել, երբ նա բարբրածայն բողոքում էր մարդու համար ստեղծված մահացու վտանգի մասին:

Խոսելով Ռուբեն Սեւակի կյանքի ու ճակատագրի մասին ուզում եմ այստեղ հիշել Գյոթեի հետեւյալ ասույթը. «... Ինձ ավելի սիրելի է իր սեփական ճանապարհին մոլորվող ու որոնող պատանին, քան այն մարդիկ, որոնք վստահ գնում են ուրիշի ճանապարհով»2:

Ռուբեն Սեւակը չընտրեց տրորված ճանապարհ: Նա, ի տարբերություն շատերի, ոչ միայն չկրկնեց ուրիշներին, այլեւ դրսեւորեց իսկական հայրենասերին հատուկ կամք ընդգծելով, որ վաղուց տրորված ճանապարհը արեւմտահայությանը տանում է դեպի երիտթուրքերի խարդախությամբ սարքած փակուղի: Ռուբեն Սեւակն ամբողջովին համոզված էր, որ շատերը չեն հասկանում երիտթուրքերից եկող վտանգը: Նա իր սիրելի գրող Լ.Տոլստոյի նման զգուշացնում էր աշխարհը կարող է կործանվել, եթե ես կանգ առնեմ: Ռուբեն Սեւակը խորաթափանց կերպով զգում էր եւ մատնացույց էր անում երիտթուրքերի կողմից սպառնացող վտանգը:

Հանրահայտ ճշմարտություն է, մարդը միակ կենդանին է, որ գիտե իր մահվան անխուսափելիության մասին: Դրանով հանդերձ մարդը երբեք այդ իրողության հետ չի հաշտվում: Արժե հիշել, թե ինչքան մեծագույն մտահղացումներ չեն իրականացվել մահի պատճառով: Ինչքան փաստեր կարելի է բերել այն մասին, որ ինչը սկսել է հանճարը ու չի ավարտել, ոչ ոք չի կարողացել նրա փոխարեն լիարժեք ավարտին հասցնել: Բայց մահը, դժբախտաբար, միայն բնական չի լինում: Մահն ունի նաեւ սոցիալական պատճառներ: Փիլիսոփա Լ.Ֆոյերբախը բնական մահից տարանջատում էր այն մահը, որը կարիքի, արատի, հանցագործության, տգիտության արդյունք էր: Գերմանացի փիլիսոփայի թվարկմանն ավելացնենք նաեւ ցեղասպանությունը որպես ծանրագույն հանցագործություն ուղղված ամբողջ մարդկության դեմ:

Ռուբեն Սեւակը նույնպես դարձավ անբնական մահվան զոհ, մահ, որ

սփռել էին երիտթուրքական հանցավոր իշխանությունները: Ռուբեն Սեւակը մեկն էր արեւմտահայության մեկ ու կես միլիոն զոհերից: Նրանցից յուրաքանչյուրը ինչքա՜ն հոգեւոր ու նյութական արժեքներ կստեղծեր ու դրանով ինչքա՜ն կհարստացներ մարդկային քաղաքակրթությունը: Ոչ ոք չգիտե: Որովհետեւ ոչ ոքի չի հաջողվել հաշվել այդ մեծագույն ողբերգության վնասները:

***

Հայ քնարերգության անդաստանում կան շատ նշանավոր տարեթվեր: Դրանցից մեկն էլ 1905թ. օգոստոսի 13–ն է: Այդ օրը «Մասիսի» 24–րդ համարում դեռեւս մի անհայտ պատանի Ռուբեն Չիլինկիրյանը, որը հետո պետք է դառնա «Սեւակ» անկրկնելի անվամբ, տպագրեց իր առաջին բանաստեղծությունը: Այդ բանաստեղծության մեջ կան նաեւ հետեւյալ տողերը.

«Տէր, դու մեր մէջ դրիր պապակն ուսմունքին,
Գիտութեան կիրքն անզուսպ մեր մէջ դու ծնար,
Տալու համար մեզ զարգացման սէրն անգին
Գործածեցիր ամէն միջոց, ամէն հնար:
Տէր, դու մեր մէջ դրիր պապակն ուսմունքին:
Այդ պապակին յագուրդ տալու անկարող
Քանիներ կան որք կը մնան անպաշտպան,
Ա՜հ, քանիներ չունենալով միջոց, փող,
Իրենց միտքը մնայ անուս ու խոպան,
Այդ պապակին յագուրդ տալու անկարող...»3:

Աստիճանաբար, քայլ առ քայլ, բանաստեղծությունից բանաստեղծություն հղկվում էր Ռուբեն Սեւակի գրիչը: Արեւի նման բացվում էր մի իսկական պոետ սերված իր ժողովրդից, անմնացորդ նվիրված իր հայրենի հողին: Միաժամանակ որպես պայծառ աստղ հայոց գրական երկնակամարում փայլատակեց մի ինքնատիպ անհատականություն իր բնավորության գծերով, մաքուր ծգտումների ազնվությամբ, որոնք Ռուբեն Սեւակի շատ ժամանակակիցների համար սրտամոտ էին ու հասկանալի:

Բանաստեղծի յուրաքանչյուր գործ կարդալիս ընթերցողը առաջին հերթին ստանում է այն տպավորությունը, թե Ռուբեն Սեւակը գրել է իր ամենամտերիմ բարեկամների ու ընկերների համար, որոնց առջեւ կեղծելը, շինծու պատրանքներ ստեղծելը միանգամայն անհնարին է: Եվ դա այդպես է: Որովհետեւ միայն մտերիմ մարդկանց կարելի է պատմել իր տառապանքների, նվիրական խոհերի մասին: Որովհետեւ միայն մտերիմ բարեկամներին ու ընկերներին կարելի է վստահել իր ապրումները, բաղձանքներն ու հույսերը:

Կարդալով Ռուբեն Սեւակին որոշակիորեն համոզվում ես այն ճշմարտության մեջ, որ իրական արվեստը երեւում է միայն այն ժամանակ, երբ հեղինակի ու ընթերցողի միջեւ ստեղծվում է փոխադարձ վստահություն:

Ռուբեն Սեւակի պոեզիան, արձակ գործերը նրա հոգու կենսագրությունն են, որտեղ արտացոլված ժամանակը իր ամբողջ ընթացքով այդ փոխադարձ վստահության արդյունքն է: Սակայն ասվածը բոլորը չէ: Ընթերցողը ակամա իրեն գտնում է Ռուբեն Սեւակի պոեզիայի հմայքի տակ եւ դրա միջոցով պարզապես գերվում բանաստեղծի անձով:

Մեզ բոլորիս, որ վայելում ենք (համոզված եմ, որ նոր սերունդների մոտ էլ այդ զգացումը շիկացած կմնա) Ռուբեն Սեւակի, այդ համակրելի մարդու եւ բանաստեղծի, հմայքը, կարծես թվում է, թե նրա ու նրա ժամանակի մասին ամեն ինչ գիտենք: Բայց դա այդպես է միայն առաջին հայացքից:Իսկապես, ինչպես նկատել է Սփյուռքի նշանավոր ազգային–հասարակական ու գրական գործիչ Ժիրայր Նայիրին. «Ռուբեն Սեւակի ամբողջական կերպարը. իբր մտաւորական, գրող, բանաստեղծ. բաւարար ծանօթ չէր դեռ մինչեւ վերջերս: Թէ Սփիւռքի եւ թէ Հայաստանի գրասէր լայն շրջանակներուն... Ռուբէն Սեւակի դէմքին միայն մէկ երեսին տեղեակ էր ժողովուրդը: Ձինք կը ճանչնային աւելի շատ որպէս քնարերգակ բանաստեղծ, սիրոյ, ներաձնական ապրումներու, ծաղկի ու թիթեռի երգիչ: Մինչդեռ ան ունէր ուրիշ երես մըն ալ: Նոյնքան եւ աւելի գրաւիչ, լուսափայլ, ես պիտի ըսէի կարեւոր ու օգտաշատ: Հայ–ազգային յանձնառու եւ առաջնորդ, ուղեցոյց մտաւորականի իր արժանիքն էր այդ»4: Իսկ մենք ընթերցողներս, ու Ռուբեն Սեւակով հմայվածներս, ուզում ենք այդ ամենի մասին շատ բան իմանալ: Անչափ հետաքրքիր է, օրինակ, իմանալ, թե Ռուբեն Սեւակն ինչպես էր վերաբերում այս կամ այն իրադարձությանը, որը հասկանալի պատճառով չի լուսաբանվել նրա բանաստեղծությունների մեջ եւ ինչպես են նրան ընկալել ժամանակակիցները:

Իհարկե, այս գործում օգնության են հասնում Ռուբեն Սեւակի ժամանակակիցները, նրա հարազատները, որոնք հետագա սերունդներին են հասցրել շատ արժեքավոր վկայություններ: Անշուշտ, նրանք իրենց վերաբերմունքի մեջ հասկանալի պատճառներով դրսեւորել են նաեւ սուբյեկտիվ մոտեցում, Ռուբեն Սեւակին գնահատել իրենց տեսանկյունից:

Ես հակված եմ դրան վերաբերվել ըմբռնումով նկատի ունենալով հանրահայտ ճշմարտությունն այն մասին, որ ՄԵԾԸ մոտիկ տարածությունից տեսնելու կարողությունն ամենքին չի տրված:

Ռուբեն Սեւակի կյանքի ու գործի մասին գրել են տարբեր հեղինակներ: Տարբեր իրենց ճաշակով, բնավորությամբ, տարիքով, աշխարհայացքով: Նրանց խոսքն իրար նման չէ: Առկա են նաեւ տարածայնությունները, թույլ տրված սխալները: Ես չեմ պատրաստվում դրանց բոլորին անդրադառնալ,

մտնել բանավեճի մեջ, վիճարկել այս կամ այն հեղինակի տեսակետը, մոտեցումը: Դա իմ նպատակի մեջ չի մտնում: Միայն ուզում եմ հատկապես ընդգծել, որ բոլոր հեղինակներին միավորում է մեկ ընդհանուր մոտեցում: Դա նրանց սերն է ու խոր հարգանքը Ռուբեն Սեւակի կյանքի ու գործի նկատմամբ: Իսկ ինչ վերաբերում է տողերիս հեղինակին, ապա ես պարզապես կամենում եմ Ռուբեն Սեւակին ներկայացնել իմ հասկացությամբ, իմ պատկերացմամբ:

Ուզում եմ այստեղ առանձնակի ջերմությամբ հիշել Ռուբեն Սեւակի եղբոր որդի, Ֆրանսիայի Նիս քաղաքում բնակվող Հովհաննես Չիլինկիրյանին, որն ահա քանի տասնամյակ անխոնջ կերպով պահպանում է Ռուբեն Սեւակի ժառանգությունը եւ տարածում իր մեծ ազգականի գաղափարները: Նրա մեծարժեք աշխատություններն ու հոդվածները, գիտական լինելով հանդերձ, հավաստի սկզբնաղբյուր են բոլոր նրանց համար, ովքեր բարձր են գնահատում Ռուբեն Սեւակի կյանքը, նրա գրական ժառանգությունը:

***

Ռուբեն Սեւակը դարձավ նշանավոր ոչ միայն նրա համար, որ վարպետորեն տիրապետում էր բանաստեղծական արվեստին եւ ամբողջովին լուծվում էր լիրիզմի բարձր ու մաքուր ալիքների մեջ, այլեւ նրա համար, որ ամբողջովին բացահայտվում էր իր ամենաթանկ ու ամենասուրբ զգացմունքների ու ձգտումների մեջ, որոնցում ամեն ինչ ներծծված է լույսով ու ներդաշնակությամբ:

Ռուբեն Սեւակին բաժին ընկավ դաժան ողբերգություններով լեցուն ժամանակ: Այդպիսի ժամանակի համար բանաստեղծ չեն պատրաստում ինչպես սովորական այլ մասնագետի: Նա իրեն բաժին ընկած ողբերգական ժամանակի վրա հասնելը շատ շուտ, թերեւս շատերից ավելի շուտ նկատեց:

Ռուբեն Սեւակը չընկրկեց եւ իրեն դրսեւորեց որպես հասուն ազգային ու քաղաքական գործիչ: Եվ այդ զգացողությունը, որը նաեւ պատասխանատվություն էր նշանակում, Ռուբեն Սեւակին բնորոշում է որպես իր ժամանակ ծեւավորվող քաղաքական մթնոլորտը զգացող գործչի: Նա զգում ու տեսնում էր հասունացող ողբերգության հեռանկարը եւ ձգտում էր որքան հնարավոր է շուտ վերադառնալ իր հարազատ ժողովրդի մոտ, լինել նրա կողքին ու օգնել վերահաս վտանգից:

Սա էր Ռուբեն Սեւակի վերադարձի գլխավոր շարժառիթը եւ ոչ թե «գինովցած լինելը», որով շատերն էին տարվել հավատալով 1908թ. երիտթուրքական հեղափոխության ղեկավարների խարդախ ու սին խոստումներին:

Ճիշտ է, որ Ռուբեն Սեւակը «չգինովցավ» ու «գինովցածներին» զգաս-

տության եւ աչալրջության կոչ էր անում: Բայց ավաղ, երիտթուրքական խոստումներից «գինովցած» ու գլխապտույտի մեջ ընկած շատ «խելոք» ու «շրջահայաց» գործիչներ, որոնք իրենց ձեռքն էին գցել հայ ժողովրդի գործերի տնօրինությունը, մնացին խուլ, կորցրին կողմնորոշվելու զգացողությունը:

Եվ ճակատագրի բերումով Ռուբեն Սեւակն այդ «գինովցած» գործիչների հետ միասին արժանացավ նույն ողբերգական վախճանին: Այո, մահը հավասարեցնում է բոլորին: Բայց ավելի լայն առումով մնում են պատասխանատվության չափն ու բաժինը, որոնք ժամանակի ու պատմության կամքով ընկնում են, թեեւ զոհի վիճակում, որոշակի մարդկանց վրա:

Ռուբեն Սեւակը զոհվեց, քանի որ նրա զգուշացումները չէին հասնում «գինովցածների» խլացած ականջներին: Մյուսներն էլ զոհվեցին, քանի որ «գինվոցած» էին եւ շատ ուշ սթափվեցին ու այլեւս անկարող էին որեւէ վճռական քայլ կատարել:

Ահա, ասվածն էլ հաշվի առնելով. աչքի առջեւ ունենալով Ռուբեն Սեւակի մասին ստեղծված գրականությունը. հավակնություն չունենալով ինչ–որ բանով գերազանցել մյուս հեղինակներին ընթերցողին ներկայացնում եմ այս փորձը Ռուբեն Սեւակի ճակատագրին անդրադառնալ վերոհիշյալ դիտարկումների տեսանկյունից, ելակետ ունենալով Պասկալի հանրահայտ բանածեւը «Բոլոր խաղացողներն էլ հարվածում են գնդակին, բայց ոչ միեւնույն դիպուկությամբ»:

Մարդկությունը մտել է գիտատեխնիկական նվաճումների աննախադեպ դարաշրջան: Ներկա սերնդին վիճակված է ապրել մի այնպիսի նշանակալի ժամանակաշրջան, երբ պատմությունը թեւակոխել է 21–րդ դար, բացել է երրորդ հազարամյակի դռները: Ի՞նչ է սպասում մեզ բոլորիս այդ շատ իրական հորիզոնում:

Միաժամանակ նոր դարաշրջանը ծանրաբեռնված է հսկայական հակասություններով սոցիալական ու տնտեսական, քաղաքական ու ազգային, մշակութային ու բարոյական: Տեխնիկայի ասպարեզում ձեռք բերված հաղթանակները. գլոբալ ինֆորմատիզացիան, բնության տարերքների սանձահարումը աշխարհը այդպես էլ չեն դարձրել ավելի անվտանգ, ավելի արդարացի:

Կարո՞ղ է մարդկությունը հաղթահարել այդ հակասություններից առաջացած վտանգները: Կարո՞ղ է մարդկությունը հասնել իր գոյության ապահովման միջոցների ստեղծմանը: Կարո՞ղ է մարդկությունը 21–րդ դարը դարձնել իր հաղթանակի դարը:

Այս եւ շատ այլ համանման հարցեր այսօր դարձել են բոլորի մտահոգության առարկան: Միջազգային մասշտաբով, հիմնականում ՄԱԿ–ի խողովակներով գումարվում են աշխարհի բոլոր երկրների մասնակցությամբ

համաժողովներ, որոնցում քննարկվում են մարդկությանը հուզող կարեւորագույն պրոբլեմները:

20–րդ դարի սկզբին Ռուբեն Սեւակը խորաթափանց կերպով կարողացել է տեսնել այսօրվա պրոբլեմները եւ որոշակի հետեւությունների հանգել, որոնց էլ կփորձեմ անդրադառնալ 21–րդ դարի առաջադրած պայմանների տեսանկյունից:

Թե ինչքանով է ինձ հաջողվել հասնել իմ առջեւ դրված պրոբլեմների բացահայտմանը, թողնում եմ անաչառ ընթերցողի դատին:

ՀԵՂԻՆԱԿ

## Գլուխ 1

# ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ ՃԱՌԱԳՈՂ ԼՈՒՅՍԸ

Սիլիվրի քաղաքը, որը գտնվում էր Կ.Պոլսից 65կմ արեւմուտք, Եվրոպական Թրակիայում, բյուզանդական պատմական բնակավայր է եղել հարուստ հուշարձաններով, որոնց մեծ մասը կանգուն է եղել մինչեւ 1914թ.: Այսօր այդ քաղաքում ամեն ինչ ավերված է, եւ բյուզանդական ժամանակներից ոչ մի հետք չի մնացել:

Ահա, բյուզանդական հինավուրց այս քաղաքում էլ, որի բնակչության ճնշող մասը հայեր էին, մետաղագործ Հովհաննես Չիլինկիրյանի ընտանիքում, 1885թ. փետրվարի 15–ին ծնվել է Ռուբեն Սեւակը: Հովհաննես Չիլինկիրյանը կարեւոր դեր է խաղացել պատանի Ռուբենի աշխարհընբռնողության գործում: Նա հասկանում էր ուսումի դերը եւ ամեն կերպ ձգտում էր հոգալ իր զավակների կրթության գործը: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ մասնավորապես արեւմտահայությունը ոգեւորված էր Բեռլինի կոնգրեսում ընդունված 61–րդ հոդվածով եւ բարենորոգումների հույսով հավատացած էր, թե հայրենիքի համար ինչքան հարկավոր կլինեն գրագետ ու կրթված երիտասարդները:

Կասկած չի կարող լինել, որ մետաղագործ Հովհաննեսը, լինելով առաջադեմ հայացքների տեր, նույնպես մտածում էր իր զավակներին կրթության տալով նրանց նախապատրաստել հայրենիքի բարենորոգվող Արեւմտյան Հայաստանի կերտմանը: Եվ զավակներն արդարացրին իրենց հոր հույսերը: Զավակներից Ռուբենը բարձր առաջադիմությամբ ավարտեց Սիլիվրիի նախակրթարանը: Այնուհետեւ երկու տարի սովորեց Պարտիզակի ամերիկյան վարժարանում:

Ավարտվում էր աղետաբեր 19–րդ դարը, որի 90–ական թվականներին, սպասված բարենորոգումների փոխարեն, Աբդուլ Համիդ 2–րդ սուլթանը իրագործեց հայկական կոտորածները, որոնց զոհ գնաց 300 հազար հայ:

Խորտակվեց բարենորոգումների հույսը: Այլեւս պարզ էր դառնում, որ եվրոպական տերությունները ոչ մի մտադրություն չունեն բռնել սուլթանի արյունոտ ձեռքը եւ ստիպել նրան իրականացնել 61–րդ հոդվածը:

Առհասարակ, 19–րդ դարի 90–ական թվականներին ծավալված իրադարձությունները խոր հետք թողեցին հայոց հասարակական գիտակցության վրա: Առաջադեմ մտածողները, հատկապես նրանք, ովքեր որեւէ քաղաքական թեւի չէին պատկանում, ավելի ազատ ու անկաշկանդ էին

քննարկում թե՛ իրադարձությունները եւ թե՛ դրանց հետեւանքները: Տարբեր կուսակցությունների պատկանող գործիչներից յուրաքանչյուրը հարկ էր համարում խոսել իր կուսակիցների մասին, պանծացնել նրանց գործերը: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր իր կուսակցությանը ներկայացնել որպես հայ հասարակական–քաղաքական մտքի տիրակալ: Այս առումով իրար չէին զիջում հատկապես հնչակյաններն ու դաշնակցականները:

Իսկ ի՞նչ էին մտածում նրանք, ովքեր ոչ մի կուսակցության չէին հարում եւ իրենց տեսակետներն ու հայացքները արտահայտում էին անկաշկանդորեն: Նրանցից մեկն էլ Հովհաննես Չիլինկիրյանն էր, անկուսակցական, բայց առաջադեմ ազգային հայացքներով:

Հայ հասարակական–քաղաքական կյանքում կատարվում էին զարմանք հարուցող երեւույթներ: Առաջադեմ մտածողները համոզված էին, որ սուլթանի հալածանքների դեմ հնարավոր է պայքարել միայն մի դեպքում, երբ կհաջողվի միավորել բոլոր ուժերը, հանդես գալ միասնաբար: Ուրեմն, նախ հարկավոր էր հասնել ազգային միասնության, չջլատել ուժերը:

Բայց ընդամենը հինգ տարում (1885–1890թթ.) հայ իրականության մեջ ձեւավորվեցին երեք ազգային քաղաքական կուսակցություններ. 1885թ. արմենականները, 1887թ. հնչակյանները, 1890թ. դաշնակցությունը: Այս երեք կուսակցություններին ամենից առաջ հետաքրքրում էր Արեւմտյան Հայաստանի ճակատագիրը, բայց ամբողջ խնդիրն էլ այն էր, որ բոլոր կուսակցությունները միեւնույն նպատակի համար առաջադրում էին տարբեր ծրագրեր, գործում տարբեր ուղղություններով: Գնալով խորանում էին նրանց միջեւ եղած հակասությունները, որ հետո պետք է վերածվեին բացահայտ թշնամանքի5:

Ահա, այս իրողությունն էր, որ չէին ընդունում Հովհաննես Չիլինկիրյանի նման մտածողները եւ, բնականաբար, իրենց վերաբերմունքը չէին թաքցնում ու դրա մասին խոսում էին բացահայտորեն: Հովհաննես Չիլինկիրյանի նման մտածող մարդիկ չէին կարող հիանալ Օտոմանյան բանկի գրավման փաստով, որը սուլթանը ճարպկորեն օգտագործեց իր նպատակների համար: Մետաղագործ Հ.Չիլինկիրյանն այն մարդկանց թվում էր, որոնք հասկանում էին, որ ամենուրեք ու միշտ կեղծ հեղափոխականները խաղում են սադրիչ դեր, դրանով իշխանություններին հնարավորություն տալիս գործադրած բռնություններն արդարացնելու համար:

19–րդ դարի 90–ական թվականներից անցել է մեկ դարից ավելի ժամանակաշրջան: Այդ ժամանակ կազմակերպված հայկական կոտորածների պատճառները, դրանց հետեւանքները վերլուծելիս, անպայման համոզվում ես, թե որքան ճիշտ էին Հովհաննես Չիլինկիրյանի նման մտածողները: Բայց, ափսոս, որ այդ ճշմարտությունը չհասկացան կուսակցական պա-

րագլուխները, որոնք իրադարձությունները սթափ գնահատելու, արեւմտահայության ուժերը համախմբելու փոխարեն ավելի խորացրին միմյանց միջեւ եղած անջրպետը եւ սկսեցին արդարացնել իրենց գործողությունները դրանք ներկայացնելով որպես ազգի փրկության համար կատարված ձեռնարկումներ: Այդ նրանց ջանքերով էր, որ Օտոմանյան բանկի գրավումը բարձրացվեց համազգային խնդիրները լուծելու աստիճանի: Այդ մասին նույնիսկ երգ հնարվեց, որտեղ, իմիջիայլոց, կային նաեւ հետեւյալ խոսքերը. «Հոն սարսեցաւ սուլթան Համիդ, եւ իր վատ Իզզեթ փաշան...»: Երգը հնարողներն ու երգողները իրենց նեղություն չէին տալիս գոնե բացատրելու, թե այդ ինչպե՞ս էր սարսափած սուլթանը շարունակում կոտորել հայերին: Նույն կերպ վարվեցին նաեւ 1897թ. հուլիսի 25–ին կազմակերպված Խանասորի արշավանքի կապակցությամբ:

Առաջինը, ըստ երեւույթին, դրան տոն տվեց Մ.Վարանդյանը «Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն» գրքով:

«Աբդուլ Համիդ,– գրել է Մ.Վարանդյանը,– սասանուած հայկական շարժման վերջին դրուագէն (նկատի ունի Օտոմանյան բանկի գրավումը 1896թ. օգոստոսի 14–ին – Վ.Պ.), բայց տակաւին քաջալերուած ռուսական հովանաւորութեամբ, ծգեց հայոց բարենորոգումները նոյն մեռեալ կէտին վրայ: Չհամարձակեցաւ, սակայն, կրկնել 1895ի նախճիրները եւ այնուհետեւ զանգուածային կոտորած մը տեղի չունեցաւ Հայաստանի մէջ, մինչեւ Ատանայի ողբերգութիւնը»(1909թ.)»6:

Մեղմ ասած Մ.Վարանդյանը մեղանչում է ճշմարտության առջեւ: Նախ, Աբդուլ Համիդին քաջալերում էր Գերմանիան, որի կայսր Վիլհելմ Երկրորդը անձամբ հարկ համարեց այցելել Թուրքիա եւ ողջունել սուլթանին: Այս իրողությունն անտեսում է Վարանդյանը, որովհետեւ չի կարողացել հաղթահարել իր հակառուսական դիրքորոշումը:

Ասվածի կապակցությամբ, նկատի ունենալով նաեւ մեր օրերում կրկնվող այդ սխալ տեսակետը, հարկ եմ համարում ասել հետեւյալը. 19–րդ դարի 90–ական թվականների իրադարձությունների գնահատման մեջ առանձնանում է այն տեսակետը, ըստ որի ցարական Ռուսաստանը իբր թե նպատակ է հետապնդել ձեռք բերել «Հայաստանն առանց հայերի»: Այս բացարձակ սուտը տարածվեց անգլիական մամուլի միջոցով 1896թ.: Այդ սուտը լայն արձագանք գտավ այն բոլոր քաղաքական ուժերի մոտ, որոնք պայքարում էին ցարիզմի դեմ: Հետագայում այդ սուտը տեղ գտավ նաեւ հայ պատմագրության մեջ: Այս առումով հատկապես աչքի են ընկնում նաեւ Բ.Բորյանի «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը եւ Սովետական Միությունը» (1928–1929թթ. հրատարակություն, ռուսերեն) եւ Գ.Լազյանի «Հայաստան եւ հայ դատը հայ եւ ռուս յարաբերութիւններուն լոյսին տակ» (Երեւան, 1991թ.) եւ այլ աշխատություններ:

Խնդրի մասին պատկերացում ունենալու նպատակով հարկ է հիշել, թե 1890–ական թվականներին ինչ քաղաքականություն էր վարում Ռուսաստանը Հայկական հարցի կապակցությամբ: Այդ ժամանակաշրջանում Անգլիան, իր շահերից ելնելով, Թուրքիայի նկատմամբ վարում էր ագրեսիվ քաղաքականություն: Նա ձգտում էր տիրանալ Եգիպտոսին եւ հանուն դրա սպառնում էր դնել Օսմանյան կայսրության բաժանման հարցը, իհարկե, մեջտեղ բերելով նաեւ Հայկական հարցը:

Անգլիան միջազգային ասպարեզում Ռուսաստանի ախոյանն էր, եւ բնական էր, որ վերջինս դեմ արտահայտվեց Թուրքիայի բաժանման անգլիական ծրագրին: Մյուս տերությունները (Ֆրանսիա, Ավստրո–Հունգարիա) նույնպես հանդես եկան անգլիական ծրագրի դեմ: Իսկ Ռուսաստանի այդպիսի դիրքորոշումը բոլորովին էլ չէր նշանակում, թե նա պաշտպանում է սուլթանին հայկական կոտորածներ կազմակերպելու գործում:

Անդրադառնալով վերոհիշյալ խնդրին ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը 1994թ. հրապարակեց մի շարք հետաքրքիր ու անառարկելի փաստաթղթեր, որոնք պարունակում են սպառիչ ու համոզիչ պատասխաններ: Մ.Ներսիսյանը վկայակոչում է անգլիացի պատմաբան Ջեյմս Գրինվիլին, որը հանգամանորեն ուսումնասիրելով Անգլիայի արտաքին գործերի նախարարության արխիվում եղած պաշտոնական ու գաղտնի նյութերը, փաստում է, որ հայկական կոտորածների դեմ Կ.Պոլսում եվրոպական դեսպաններից միայն Ռուսաստանի դեսպան Ա.Նելիդովն է վճռականորեն հանդես եկել:

Ջ.Գրինվիլը գրել է. «Հայերի կոտորածները Կ.Պոլսում տեղի ունեցան օգոստոսի 26–27–ին: 30 ժամ հայերին որսում էին անասունների նման: Չէին խնայում ոչ կանանց, ոչ երեխաներին: Այս սարսափները մարտահրավեր էին քաղաքակիրթ Եվրոպային, մարտահրավեր, որ Կ.Պոլսում չանտեսեցին Եվրոպայի ներկայացուցիչները: Դեսպանները գործեցին անսովոր միաբանությամբ եւ եռանդով... Բայց, այնուամենայնիվ, ռուսական դեսպան Նելիդովն էր, որ իր ձեռքը վերցրեց կոտորածը դադարեցնելու նախաձեռնությունը: Նա չբավարարվեց միայն բողոքի անհետեւանք նոտաներ ուղարկելով, որոնք դեսպանները կազմում էին իրենց ամենօրյա հանդիպումների ժամանակ: Նա անձամբ զգուշացրեց սուլթանին, որ եթե սպանդը չդադարեցվի, ինքը կհրամայի ռուսական նավերին ռմբակոծել Բոյուկդարեն... Սուլթանը, վախեցած Նելիդովի զայրույթից, հրաման արձակեց ցրվել մայրաքաղաքի խուժանին»7:

Առիթից օգտվելով պարզաբանենք եւս մեկ հարց: Խոսքը վերաբերում է 1895–1896թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա.Լոբանով–Ռոստովսկուն վերագրվող այն հայտարարությանը, թե «Ռուսաստանին Արեւմտյան Հայաստանը պետք է առանց հայերի»: Հայ պատմաբաններից

շատերը (նաեւ տողերիս հեղինակը) ուսումնասիրել են Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության արխիվը, նրա արտաքին քաղաքականության առնչվող նյութերը, եւ նրանցից ոչ մեկը չի հայտնաբերել ռուսական նախարարին վերագրվող հայտարարությունը: Իրականում, ինչպես փաստում է ակադեմիկոս Մ.Ներսիսյանը, Լոբանով–Ռոստովսկին «մի քանի անգամ առիթներ է ունեցել հայտարարելու, թե Ռուսաստանը դեմ է, որ իր հարավային սահմաններում ստեղծվի հայերի թագավորություն նոր Բուլղարիա»:

Ինչպես երեւաց, կա տարբերություն նախարարի խոսքերի եւ նրան վերագրվող հայտարարության միջեւ: Իսկ ինչ վերաբերում է հայկական կոտորածների նկատմամբ Լոբանով–Ռոստովսկու ունեցած դիրքին, բավական է հիշել, որ անգլիական դեսպանին նա ասել է, թե «Ռուսաստանը բախտավոր կլինի, եթե ապահովվեն սուլթանին ենթակա հպատակ քրիստոնյաների կյանքն ու գույքը»8:

Այնուհետեւ անգլիական գաղտնի ծառայությունների ջանքերով հնարվեց ու տարածվեց այն սուտը, ըստ որի դեսպան Նելիդովը Աբդուլ Համիդին ասել է. «Կոտորեցեք, ծերդ մեծություն, կոտորեցեք հայերին»: Այս սուտն ընդունեցին որպես ճշմարտություն եւ Թուրքիայում կազմակերպված հայկական կոտորածների մեղքը դրեցին Ռուսաստանի վրա: Մինչդեռ իրականում, Նելիդովը այդպիսի խոսքեր չի ասել եւ չէր էլ կարող ասել, որովհետեւ նա էր, որ ինչպես տեսանք, վճռական դիրք էր գրավել հայկական կոտորածները դադարեցնելու գործում:

Իրականությունն այն է, որ ոչ թե Ռուսաստանն է ուզեցել «Հայաստանն առանց հայերի», այլ դա եղել է Թուրքիայի նպատակը: Ապացույց արեւելահայության ապահով գոյությունը Ռուսաստանի կազմում եւ արեւմտահայության ոչնչացումն ու բռնի տեղահանումը Թուրքիայի կողմից:

Իհարկե, Ռուսաստանի կառավարությանը կարելի է շատ հարցերում մեղադրել: Կարելի է մեղադրել ռուսական շովինիստական քաղաքականությունն իրականացնող շատ գործիչների, որոնց մեջ առանձնապես աչքի էր ընկնում տխրահռչակ Գոլիցինը, որը ոչ միայն փակեց հայկական դպրոցներն ու բռնագրավեց հայ եկեղեցու ունեցվածքը, այլ քայլեր էր ձեռնարկում կովկասահայերին Սիբիր վերաբնակեցնելու համար: Սակայն հայ ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի պետության պաշտոնական քաղաքականությունը, որը միշտ եղել է հովանավորողական, մենք պարզապես իրավունք չունենք շփոթել հետադիմության դիրքերում կանգնած առանձին մեծ ու փոքր չինովնիկների հետ:

Բայց վերադառնանք Օտոմանյան բանկի գրավմանը, ինչպես նաեւ Խանասորի արշավանքին: Օտոմանյան բանկի գրավումը առիթ տվեց, որպեսզի թուրքական իշխանությունները խուժանի միջոցով երեք օր շարունակ կոտորեին անզեն ու անպաշտպան հայ բնակչությանը: Կ. Պոլսից հայերի

ջարդերը տեղափոխվեցին գավառներ: Մ.Վարանդյանը, մեծարելով դաշնակցությանը, ասում է, թե բանկի գրավումից հետո զանգվածային կոտորած չի եղել մինչեւ Ադանայի դեպքերը: Իհարկե, նա ճիշտ չէ: Որովհետեւ կոտորածները շարունակվել են: Շարունակվել են ոչ այն ծավալով, ինչ նախկինում, բայց կարեւորն այն էր, որ հայկական բնակչության ոչնչացումը երբեք չդադարեցվեց:

Ի՞նչ օգուտ տվեց Օտոմանյան բանկի գրավումը:

1897թ. օգոստոսին դաշնակցությունը ծեռնարկեց Խանասորի արշավանքը: Այդ արշավանքի մասնակիցները (նրանցից զոհվեց 19 մարդ) պատժեցին քրդական ցեղերից մեկին, որը հարձակումներ էր կատարում հայկական բնակավայրերի վրա: Ցեղախմբի առաջնորդ բեյը կարողացավ փախչել: Բայց քիչ անց, կառավարության աջակցությամբ նոր ուժեր հավաքեց եւ հիմնահատակ ավերեց հայկական յոթ գյուղ: Շրջակայքի հայկական գյուղերը մնացին անպաշտպան: Նոր թափ առավ պանդխտությունը: Թուրքական կառավարությունն ավելի սաստկացրեց բռնությունները:

Ամեն տարի ամռանը դաշնակցությունը հպարտությամբ նշում է Խանասորի արշավանքի հաղթանակը, բայց ինչ օգուտ տվեց այն, որ Մ.Վարանդյանը փորձում է նմանեցնել Ավարայրի ճակատամարտին: Դաշնակցության անդամ Մալխասը իր «Խանասորի արշավանքը եւ անոր արժէքը» հոդվածում գրում է. «Խանասորի արշաւանքը իբր ծեռնարկ, դաշնակցութեան պատմութեան մէջ կարեւոր տեղ կը բռնէ»9:

Մենք, իհարկե, չենք կարող չհիանալ Օտոմանյան բանկը գրաված եւ Խանասորի արշավանքին մասնակցած երիտասարդների սխրանքով: Բայց արդարությունը պահանջում է դաշնակցության տեսաբաններին հարցնել, թե ինչ հետեւանքներ ունեցան վերոհիշյալ գործողությունները: Իհարկե, նրանց համար հաճելի չէ այդ մասին խոսել, որովհետեւ հարկադրված կլինեն պարզ աչքերով չնայել ճշմարտությանը:

Հովհաննես Չիլինկիրյանի նման մտածող մարդիկ հիացած էին ֆիդայիների սխրանքով, որովհետեւ համոզված էին, որ հայդուկային–ֆիդայական շարժումը ոգեւորում էր հուսալքության մեջ հայտնված արեւմտահայությանը, նրան ոգեշնչում ազատագրության վառ ապագայով: Հայդուկային–ֆիդայական շարժումը հայ մարդուն օգնում էր հայ մնալ:

19–րդ դարի 90–ական թվականներին արեւմտահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում ժողովրդական մեծ համբավ էին ձեռք բերել Աղբյուր Սերոբը, Հրայրը, Անդրանիկը, Գեւորգ Չաուշը եւ ուրիշներ, որոնք դուրս էին եկել ժողովրդի ծոցից եւ իրենց պարտքը որդիական սիրով էին կատարում:

Ովքե՞ր էին հայ հայդուկ–ֆիդայիները: Նրանք իսկական ժողովրդական հերոսներ էին օժտված բարոյական վեհ զգացումներով: Պաշտպանել թույ-

լին, ընչազուրկին, հալածվածին ահա հայ հայդուկ–ֆիդայիների բարոյական վսեմ կոչումը: Եվ հատկապես հենց 19–րդ դարի 90–ական թվականներին առաջադիմական հայացքների տեր մարդիկ, որոնք, իմիջիայլոց, ոչ մի կուսակցության չէին հարում, հասկանում էին, որ սխալվում էին կուսակցությունները, երբ, ժողովրդական հերոսներին կտրելով ժողովրդից, նրանց ներկայացնում են իրենց անդամ այդ միջոցով փորձելով արեւմտահայության մոտ բարձրացնել իրենց վարկը:

Անդրանիկ Օզանյանը, որը նույնպես քաջ գիտակցում էր այդպիսի մոտեցման վնասակարությունը, պատասխանում էր դաշնակցության ներկայացուցչին ասելով. «Հլա կուսակցություն չկար, պարոն, մենք հեղափոխական էինք»: Այդպես էին մտածում ու գնահատում բոլորը, բացի «փրկարար» կուսակցությունից:

Հովհաննես Չիլինկիրյանի մասին մեր ունեցած պատկերացումը ամբողջացնելու նպատակով համառոտակի անդրադառնանք նաեւ արեւմտահայ կյանքում 19–րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցած իրադարձություններին, դրանց ազդեցությամբ հասարակական գիտակցության ձեւավորմանը, ինչպես նաեւ հասարակական հոսանքների գործունեությանը:

19–րդ դարի 50–60–ական թվականներից արեւմտահայության կյանքում Կ.Պոլիսը գրավեց առաջնակարգ դիրք դառնալով նրա համար տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոն: Կ.Պոլսի հայ բնակչությունն աճում էր պանդուխտների հաշվին: 1860 թվականից հետո Կ.Պոլսում հայ բնակչության թիվը հասավ մինչեւ 300 հազարի:

Բնականաբար Կ.Պոլսի հայ գաղութը միատարր չէր: Այստեղ երկար ժամանակ թելադրող դեր ուներ ամիրաների դասը: Ամիրաների մասին «Բիւզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչյանը դեռեւս 1888թ. գրել է. «Ամիրա բառը, թէեւ ոչ հայկական միայն հայազգիներու տրուած տիտղոս մըն էր եւ անպատճառ կը ենթադրէր կառավարութեան քով դիրք ունեցող անձ մը»: Բ.Քեչյանը այնուհետեւ ընդգծում էր, որ «ամիրա» տիտղոսը իբրեւ պատվավոր անուն բացառապես տրվում էր նաեւ հարուստ եւ երեւելի անձանց10:

Իրենց շահերից ելնելով ամիրաները կանգնած էին սուլթանական Թուրքիայի պետական կարգի պաշտպանության դիրքերում, նրանցից ոմանց հաջողվել էր սուլթանի պալատում բարձր դիրքի հասնել: Տնտեսական հզորությունը, սուլթանի պալատում ունեցած դիրքը հասցրին նրան, որ հայ ամիրաները մեծ ազդեցություն ձեռք բերեցին հայոց պատրիարքարանի եւ դրա միջոցով նաեւ ամբողջ արեւմտահայության վրա:

Կ.Պոլսի հայ բնակչության մեջ մեծ թիվ էր կազմում աշխատավորական դասը, որն աճում էր հատկապես պանդուխտների հաշվին, որոնց զգալի մասը վերջնականապես հաստատվում էր մայրաքաղաքում:

Կ.Պոլիսը դարձավ արեւմտահայության կարեւոր մշակութային կենտ-

րոն: Այստեղ հիմնվել էին կրթական հաստատություններ, տպարաններ, հրատարակվում պարբերականներ:

Աստիճանաբար սրվում էին ամիրաների եւ հայ արհեստավորների հարաբերությունները: Դրանք այն աստիճանի հասան, որ ամիրաները չէին համաձայնվում, որպեսզի իրենց երեխաները սովորեին հասարակ մարդկանց՝ արհեստավորների զավակների հետ միասին: Այս վեճում ամիրաներին պաշտպանում էր սուլթանի կառավարությունը:

Հայ ամիրաների եւ արհեստավորների հակամարտության արդյունքն այն եղավ, որ մի խումբ առաջադեմ գործիչներ, որոնց մեջ էին Գր.Օտյանը, Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Գ.Պալյանը, Ն.Ռուսինյանը, դրեցին ամիրաների իրավունքները սահմանափակող կանոնադրություն ունենալու անհրաժեշտության հարցը: Այդպիսի կանոնադրության ընդունումը, իհարկե, ամիրաները կարողացան ձախողել: Կազմվում էին նոր հանձնաժողովներ, որոնք զբաղվում էին կանոնադրության մշակմամբ: Ի վերջո 1854թ. սկսած աշխատանքն ավարտվեց հաջողությամբ 1860 թվականին, երբ ձախողվում են ամիրաների եւ նրանց հետ դաշնակցած պատրիարքի փորձերը: 1860թ. մայիսի 24–ին նոր պատրիարք Սարգիս Գույումճյանը ընդունում է կանոնադրությունը եւ ներկայացնում ընդհանուր ժողովի հաստատմանը: Հենց այդ ժամանակ էլ Ն.Ռուսինյանի առաջարկով կանոնադրությունն ստանում է Ազգային սահմանադրություն անվանումը:

Կարծում եմ, որ հարկ չկա հանգամանորեն խոսել Ազգային սահմանադրության մասին, միայն նշեմ, որ դա վերաբերում էր հայկական համայնքի ներքին գործերին եւ իրականում անկարող էր արեւմտահայությանը պաշտպանել թուրքական բռնակալությունից: Չնայած դրան, Ազգային սահմանադրության ընդունումը պետք է դիտել առաջադիմական քայլ, ինչը կարեւոր դեր խաղաց արեւմտահայության կյանքում հասարակական, քաղաքական հոսանքների ձեւավորման գործում: Ազգային սահմանադրությունը նպաստեց արեւմտահայության պայքարի գաղափարախոսության զարգացմանը:

Ազգային սահմանադրության համար մղվող պայքարը վերջնականապես հստակեցրեց պահպանողական–հետադիմական եւ դեմոկրատական թեւերի դիրքորոշումը: Ազգային սահմանադրության հետ լուրջ հույսեր էին կապում Մ.Նալբանդյանի զինակից Հ.Սվաճյանի հետ միասին Կ.Փանոսյանը, Գր.Չիլինկիրյանը, Մ.Մամուրյանը: Բայց շուտով դեմոկրատական թեւը ձերբազատվեց սահմանադրության հետ կապված հույսերից: Նրանք հասկանում էին, որ այդ սահմանադրությամբ անհնար է հասնել արեւմտահայության ազատագրմանը եւ համոզվեցին, որ դրան հասնելու համար կա մի ուղի՝ զինված պայքար:

Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ հենց այդ ժամանակ էլ տեղի ու-

նեցավ Զեյթունի հայ բնակչության հերոսական ինքնապաշտպանությունը: Զեյթունի ապստամբությունը եղավ արեւմտահայ (եւ ոչ միայն) հասարակական հոսանքների համար լուրջ քննություն: Դեմոկրատական թեւը անվերապահ կանգնեց Զեյթունի ապստամբ հայերի պաշտպանության դիրքերում: Հ.Սվաճյանն այնքան ակտիվ էր գործում, որ իշխանությունները փակեցին նրա «Մեղու» հանդեսը: Ար. Հայկունին ու Գր. Չիլինկիրյանը զեյթունցիների պաշտպանությանը տրամադրեցին «Ծաղիկ» հանդեսը: «Ծաղիկը» նաեւ նշավակում էր այն հայերին, որոնք դեմ էին արտահայտվում ազատագրական պայքարին, արեւմտահայության մոտ սերմանում պառակտման միտումներ: Թուրքական իշխանությունները «Ծաղիկը» նույնպես փակեցին: Հ.Սվաճյանը, Գր.Չիլինկիրյանը, Ար. Հայկունին ձերբակալումից խուսափելու համար անցան ընդհատակ:

Զեյթունի ապստամբությունը լայն արձագանք ստացավ: Մկրտիչ Պեշիկթաշլյանը ստեղծեց հերոս զեյթունցու բանաստեղծական կերպարը: Դեմոկրատական թեւի գործիչները Զեյթունի ապստամբությունը դիտում էին նաեւ կարեւոր միջոց արեւմտահայության ազգային–ազատագրական շարժումը համախմբելու համար:

Արեւմտահայության սոցիալ–տնտեսական եւ հասարակական–քաղաքական կյանքում տեղի ունեցած լուրջ փոփոխություններն իրենց արտահայտությունը գտան ձեւավորված հասարակական հոսանքների գործունեության մեջ: Դա նաեւ դրսեւորվեց գրաբարի եւ աշխարհաբարի շուրջ ծավալված պայքարով: Աշխարհաբարի դեմ հանդես էր գալիս կղերա–ամիրայական, պահպանողական հոսանքը: Այս հոսանքը Հովհաննես Չամուռճյան–Տերոյենցի գլխավորությամբ բացասաբար է վերաբերում նաեւ Զեյթունի ապստամբությանը եւ, առհասարակ, ազգային–ազատագրական պայքարին:

Արեւմտահայության կյանքում որոշակի դեր էին խաղում նաեւ լիբերալները, որոնք ավելի շատ պաշտպանում էին չափավոր հայացքներ, դրանցից բխող բոլոր հետեւանքներով:

Կյանքն առաջ քաշեց նոր սերունդ, որն աչքի էր ընկնում իր առաջադիմական հայացքներով: Հ.Սվաճյանը, Գր. Չիլինկիրյանը, Կ.Փանոսյանը, Ս.Ոսկանյանը, Ա.Հայկունին, Ս.Թագվորյանը, Մ. Մամուրյանը եւ նրանց համախոհ մյուս գրողներն ու հրապարակախոսները ամբողջ ուժով պաշտպանեցին ու զարգացրին արեւմտահայության ազգային–ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Այդ նրանք էին, որոնք դարձան արեւմտահայ իրականության մեջ ձեւավորված ազգային–դեմոկրատական հոսանքի առաջամարտիկները:

Կարծում եմ հարկ կա նրանցից մի քանիսի գործունեությանը համառոտակի անդրադառնալ:

Հարություն Սվաճյանը (1831–1874) պոլսահայ գործիչներից առաջինն էր, որ կանգնեց Մ.Նալբանդյանի դիրքերում եւ այդ հանգամանքն էլ նպաստեց, որպեսզի նա դառնա արեւմտահայ իրականության մեջ ազգային–դեմոկրատական հոսանքի առաջնորդ եւ իր շուրջը համախմբի առաջադեմ գործիչներին: Հ.Սվաճյանը հանդես էր գալիս հասարակ մարդկանց պաշտպանությամբ, իր «Մեղուի» միջոցով քարոզում էր արեւմտահայության ազատագրության, օտար բռնակալական լծի տապալման գաղափարը: Շրջելով գավառներում Հ.Սվաճյանը եկավ այն եզրակացության, որ միայն ապստամբությամբ է հնարավոր հասնել քաղաքական ազատության, որի կարեւոր նվաճումներից պետք է լիներ հողը մշակող գյուղացուն հանձնելը:

Ստեփան Ոսկանյանը (1825–1901) սովորել է Սորբոնի համալսարանում: 1855թ. Փարիզում ձեռնարկեց «Արեւելք» հանդեսի հրատարակումը, իսկ 1859թ. «Արեւմուտք» հանդեսը: Իր ստեղծած հանդեսների միջոցով Ս.Ոսկանյանը նպատակ էր հետապնդում բացահայտել պոլսահայ ամիրաների ու հոգեւորականների ազգադավ գործերը: Նա մասնակցել է 1848թ. ֆրանսիական հեղափոխությանը, պաշտպանում էր ազգային–ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Ս.Ոսկանյանը հանդես էր գալիս աշխարհաբարի օգտին: Նա մեծ տեղ էր հատկացնում գեղարվեստական գրականությանը արեւմտահայության ազգային զարթոնքի գործում: Ս.Ոսկանյանին բարձր էր գնահատում Մ.Նալբանյանը՝ նրան անվանելով «մեծ հայ ու ազատախոհ»:

Մաթեոս Մամուրյանը (1820–1901) իր հրապարակախոսությամբ հանդես էր գալիս ազգային դեմոկրատիայի դիրքերից, քննադատում էր ֆեոդալական հետամնացությունը, սուլթանի դաժան քաղաքականությունը: Մ. Մամուրյանը պանդխտության կրքոտ հակառակորդն էր, կոչ էր անում վերադառնալ հայրենիք, տեր կանգնել իրենց երկրին:

Մ.Մամուրյանը չէր հավատում եվրոպական տերություններին եւ քննադատում էր նրանց օգնության հետ հույս կապողներին: Այդպիսի մտածելակերպը նա ցնորք էր համարում: Հիմարություն է, ասում էր նա, «սպասել, որ արտաքին փրկիչները գան եւ հայ ժողովրդեան սեւ պատանքը քակեն»11: Մ.Մամուրյանը համակրանքով էր վերաբերում 1871թ. Փարիզի կոմունային:

Գրիգոր Չիլինկիրյանը (1833–1923) խմբագրում էր «Ծաղիկ» հանդեսը: Նամակագրություն ուներ Վիկտոր Հյուգոյի հետ: Մ.Նալբանդյանի միջոցով ծանոթ էր ռուս հեղափոխական դեմոկրատ Ա.Գերցենին եւ նրա գաղափարների տարածողը դարձավ:

Գր. Չիլինկիրյանի հրապարակախոսությունն ընդգրկում էր արեւմտահայության լուսավորության, ազատագրական պայքարի հարցեր: Նա քննադատում էր սուլթանի հայահալած քաղաքականությունը եւ զինված ապստամբության կոչ էր անում: Գր. Չիլինկիրյանն անհաշտ վերաբերմունք

ուներ ամիրա–հոգեւորական հետադիմական ուժերի նկատմամբ: Նա իր նպատակն էր համարում «հայուն ապագայ աղքատութեան դէմ հանրական դարմանը նշանակել եւ անկէ անցնիլ մասնաւոր դարմանին, որ ներկային կը վերաբերի»12:

Կարապետ Փանոսյանը (1826–1905) կրքոտորեն հանդես էր գալիս ամիրա–հոգեւորական պահպանողական թեւի դեմ, մերկացնում կաթոլիկ քարոզիչների խարդավանքները: Նա կանգնած էր Հ.Սվաճյանի կողքին, պաշտպանում էր Մ.Նալբանդյանի գաղափարները, մեծ հույսեր կապում ազգային–ազատագրական պայքարի հետ: Կ.Փանոսյանը պաշտպանում էր աղքատ մարդկանց շահերը եւ վայելում էր մեծ համակրանք:

19–րդ դարի երկրորդ կեսին հայ գրականությունն իր վրա վերցրեց արտասովոր առաքելություն: Այդ ժամանակաշրջանի հայ գրողները միայն վիպագիր ու բանաստեղծ չէին: Նրանք մարգարեներ էին եւ զարմանալի հարաբերություններ ստեղծեցին իրենց ու ընթերցողների միջեւ: Այդ հարաբերություններն ամենից առաջ մարդկանց մտածելակերպը փոխելու հնարավորություն տվեցին: Ահա, այստեղ էլ տեղի ունեցավ մեկ այլ զարմանալի երեւույթ: Այդ հնարավորությունը մի ընդհանուր կետում իրար խաչաձեւեց մեծ գաղափարների ու մեծ մտահղացումների իրագործման երազանքը:

Սա դարձավ հայ գրողների առաքելությունը, որի իրագործման համար նրանք չխնայեցին իրենց ժամանակն ու կյանքը:

Եվ 19–րդ դարի երկրորդ կեսի գրականությունը, ի դեմս Րաֆֆու, Ռ.Պատկանյանի, Մ.Նալբանդյանի, Մ.Պեշիկթաշլյանի, Հ.Պարոնյանի ու շատ ուրիշների, դարձավ հայ ազգային–ազատագրական շարժման ջահակիրը:

Ազատագրական պայքարի գաղափարը հայ գրականությունը հասցրեց նաեւ 20–րդ դար: Հիմնական պահանջը նույնն էր մնացել: Միայն մեծ տեղաշարժը կատարվել էր նույն խնդիրների շեշտադրման մեջ: Իրենց այս մեծ առաքելությամբ հայ գրողները ծեռք բերեցին ընթերցողի սերն ու հարգանքը: Ընթերցողը հայ գրողներին վերաբերում էր որպես փրկարար խոսք բերողի: Այդ ընթերցողների մեջ էր նաեւ Հովհաննես Չիլինկիրյանը, որը չթուլացող ուշադրությամբ ոչ միայն հետեւում էր գրական աշխարհի անցուդարձին, այլեւ ձգտում էր իր զավակներին նույնպես հաղորդակից դարձնել հայ գրողների փրկարար խոսքին:

Արեւմտահայության նկատմամբ Օսմանյան կայսրության քաղաքականությունը 19–րդ դարի երկրորդ կեսին ավելի սաստկացավ: «Թանզիմաթի» տարիները պատմության մեջ մնացին որպես «զուլումի տարիներ»:

Արշակ Ալպոյաճյանը, իր «Պատմութիւն հայ Կեսարիո» աշխատության մեջ խոսելով հայերին ծուլելու թուրքական ձգտումների մասին, հիշատակում է «Թուրքիան թուրքերի համար» քաղաքականության կրողներից մեկի «Իթթիհադի» մոլի առաջնորդ մեծ վեզիր Ֆաուդ փաշայի 1869թ. հռչա-

կած պատգամը. «Ներքին գործերուն մէջ մեր բոլոր ջանքերը միմիայն մէկ նպատակի մը ծգտելու է. որ է զանազան ցեղերի ի մի ծուլումը... Ասկէ յետոյ այդ մեծ կայսրութիւնը ոչ յոյներուն, ոչ ալ սլավներուն կրնայ վերաբերիլ, ոչ մի կրօնքի. ոչ ալ մէկ ցեղի... Գարատաղ մը. սերպ իշխանութիւն մը, Հայաստանի թագաւորութիւն մը, իրենց եւ աշխարհի ամենափոքր օգուտ մը չընծայելէ զատ. առաւել կամ ցնորական երազներ են»13:

Չնայած Օսմանյան կայսրության գործադրած բռնություններին, հայերին տեղահանելու, նրանց ծուլելու քաղաքականությանը, արեւմտահայությունն իր ունեցած հնարավոր միջոցներով ծգտում էր դիմակայել, հաճախ նաեւ ապստամբվել՝ այդ կերպ փորձելով սանձել իր տունը մտած, իր ունեցվածքին բռնությամբ տիրացած ավազակախմբերի ախորժակը:

Թուրք զավթիչների դեմ հայության պայքարը նկատի ունենալով՝ դեռեւս 18–րդ դարի առաջին կեսին ռուս գեներալ Դոլգորուկովը գրել է. «Պետք է զարմանալ, թե հայերն ինչպես են դիմանում ստեղծված դրության մեջ, երբ նրանք հարկադրված են միայնակ պատերազմել թուրքական բանակի դեմ: ...Միայն Աստված է պահպանում հայերին, այլապես մարդկային բանականությունից վեր է հասկանալ, թե դեռ ինչպես են նրանք դիմանում այդքան զորեղ թշնամու դեմ»14:

Արեւմտյան Հայաստանում եւ, առհասարակ, Թուրքիայի մյուս տարածքներում բնակվող հայերի վիճակը պատկերացնելու համար միայն ընդհանուր գծերով կարելի է ասել հետեւյալը: Արդեն նշվել է, թե սուլթանական Թուրքիան ինչպիսի դաժան միջոցներով էր իրականացնում իր հայահալած քաղաքականությունը: Բայց դա մեծապես կիրառվում էր հատկապես Արեւմտյան Հայաստանում, որտեղ կար հոծ հայկական բնակչություն:

Հայության հալածանքը ուղեկցվում էր հայկական մշակութային արժեքների ոչնչացմամբ: Այդ մասին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Իգնատեւը 1869թ. իր կառավարությանն ուղղած զեկուցագրում հաղորդում էր նաեւ այն մասին, որ «Բարձր դուռը գաղտնի հրահանգ է տվել տեղական իշխանություններին, որպեսզի ոչնչացնեն հայկական պատմական հուշարձանները. այնպես անեն. որ այդ կոթողները չհիշեցնեն Հայաստանի անցյալը եւ ազգային անկախության գաղափար չարթնացնեն հայ ժողովրդի մեջ»15:

Թուրքական իշխանությունները միայն չնչին արտոնություններ էին տվել Կ.Պոլսում եւ մերձծովյան վայրերում ապրող հայ բնակչությանն ու նրանց նկատմամբ որոշ չափով մեղմ քաղաքականություն էին իրականացնում:

Սուլթանի այսպիսի մոտեցումը չպետք է բացատրել միայն այն հանգամանքով, որ Կ.Պոլիսն ու մերձծովյան բնակավայրերը Եվրոպայի աչքի առջեւ էին: Կար մեկ այլ, նույնպես կարեւոր պատճառ: Սուլթանի այդ քաղաքականության նպատակն էր այդպիսի տարբեր մոտեցմամբ խոչընդոտել հայոց ազգային ուժերի միավորմանը: Եվ դա շատ հաճախ հաջողվում էր: Այդպիսի

քաղաքականությամբ սուլթանը ձգտում էր հայաթափել Արեւմտյան Հայաստանը, նրան զրկել բնիկ ժողովրդից պայմաններ ստեղծելով պանդխտության ծավալման համար: Վերջապես Կ.Պոլսում եւ մերձծովյա բնակավայրերում ապրող հայ բնակչությունը սուլթանի ծեռքին դառնում էր պատանդ:

Սուլթանի քաղաքականության իրականացման գործում, իհարկե, չի կարելի ժխտել հոգեւորականության դերը, որի ծեռքին էր գտնվում հայ ազգային կյանքի ղեկավարությունը եւ ինքն էլ իր հերթին ամբողջովին ենթարկվում էր ամիրայական դասին: Կ.Պոլսի հայոց պատրիարքարանն իր գլխավոր նպատակն էր համարում իրականացնել կրոնական ու բարեգործական գործունեություն եւ ցանկություն չուներ քաղաքական խնդիրներով զբաղվել, որովհետեւ վայելում էր իշխանությունների շնորհած արտոնություններ եւ դրանցից զրկվելու մտադրություն չուներ:

Ասվածի կապակցությամբ արժե հիշել Միդհատ փաշայի հետեւյալ գնահատականը: 1876թ. Թուրքիայի մեծ վեզիրը հարկ համարեց անձամբ այցելել հայոց պատրիարքարան: Ի՞նչ առիթով: Ընդունվել էր օսմանյան սահմանադրությունը, եւ այդ կարեւոր իրադարձության առիթով մեծ վեզիրը, ջերմորեն շնորհավորելով պատրիարքարանում հավաքված Կ.Պոլսի հայ վերնախավի ներկայացուցիչներին, ասաց հետեւյալը. «Հայ ազգը օսմանեան կայսրութիւնը ծեւավորած բնական տարրերու թուումն է եւ օսմանեան դրօշակի յարգն ու պատիւը պաշտպանելու գործը պէտք է գերադաս համարի իր ազգային ու քաղաքական բոլոր իրաւունքներէն»16:

Մեծ վեզիրը բառեր չէր խնայում, որպեսզի գովերգեր այն դրական դերը, որ դարերի ընթացքում օսմանցիներն ունեցել են հայոց կյանքում: Մթնոլորտն այնքան բուռն էր ու երջանկաբեր, որ պատրիարք Ն.Վարժապետյանը իր պատասխան խոսքում ընդգծեց նաեւ հետեւյալը. «Օսմանեան մեծ ազգը ի բնէ ասիական է եւ մենք իրաւունք ունենք ասելու, որ նորա ամենամերձաւոր հարեւան եղբայրը հայ ազգն է»17:

Հասարակական–ազգային կյանքի վրա հոգեւորականության այսպիսի թելադրող դիրքը մեծապես խոչընդոտում էր ազգային ուժերի համախմբմանը: Սակայն այդպիսի վիճակը չէր կարող հարատեւել: Զարգանում էին հասարակական հարաբերությունները, մեծանում էին շփումները եվրոպական երկրների հետ: Եվ այս ամենը դարձավ խթան, որպեսզի հայ հասարակական կյանքում հանդես գային փոփոխության ձգտող ուժեր: Այս առումով, իմ կարծիքով ակնառու փաստ է Լ.Չորմիսյանի աշխատության մեջ բերված Ստեփան Փափազյանի հետեւյալ խոսքը, որ նա արտահայտել է 1876թ. սեպտեմբերին Ազգային ժողովում: «Ի՞նչ պատճառով,– զայրույթով հարցրել է Ստ. Փափազյանը,– հայը տուրք վճարէ պետութեանը, իսկ զինեալ քուրդը տուրք չվճարէ եւ, ընդհակառակը, կեղեքէ հային ու անգամ նրանից տուրք գանձէ: Ինչո՞ւ քուրդ, աւշար, չերքէզ եւ ուրիշներ համարձակ կողոպ-

տեն հային եւ վերջինս չկարողանայ ընդդիմանալ անոնց: Եթէ կառավարութիւնը հայերին նոյնպէս հրաման տայ, ի՞նչ է, նրանք չեն կարող զինուել եւ իրենց պաշտպանել»18:

Թուրքական իշխանութիւններն աչալուրջ հետեւում էին հայ հասարակական կյանքում կատարվող փոփոխութիւններին եւ, իհարկե, գործադրում էին բոլոր միջոցները դրանք թուլացնելու եւ, ի վերջո, ոչնչացնելու համար: Այդ միջոցները դաժան էին, խորամանկ ու նենգ: Սուլթանը նախ հարկ համարեց հայերին նետել դիվանագիտական որոգայթ խորամանկորեն պատրիարք Ն.Վարժապետյանին ուղղելով դեպի Անգլիա նրա աջակցութիւնն ստանալու համար: Հայերի համար շատ զարմանալի էր ու անսպասելի, որ սուլթանը խորհուրդ էր տալիս դիմել Անգլիային, որպեսզի վերջինիս աջակցութեամբ հայերը նուիրնպես ստանան այն արտոնութիւնները, ինչ նախատեսվում էր Բալկանյան ժողովուրդների համար:

Այս խայծն այնքան քաղցր էր, որ հայերը չկարողացան հասկանալ, թե իրենց արտոնութիւններ կարող էր տալ միայն սուլթանը առանց եվրոպական տերութիւնների միջամտութեան, եւ բոլորովին էլ նրանց դիմելու կարիքը չկար: Չհասկացան ու գործի անցան:

Սկսվեց դիմումների հեղեղ Անգլիայի աջակցութիւնն ստանալու համար: Պատրիարքը ջանք ու եռանդ չէր խնայում Բարձր դռան հանձնարարութիւնը կատարելու համար:

Ինչպես հայտնի է, հայերը համակրանքով էին վերաբերվում Ռոսաստանին Թուրքիայի դեմ մղած պատերազմների համար: Ռուս–թուրքական բոլոր պատերազմների ժամանակ հայերի աջակցութիւնն ու ջերմ վերաբերմունքը Ռուսաստանի համար շատ կարեւոր էին, մանավանդ որ նա դեռ չէր հասել իր վերջնական նպատակին: Ռուսաստանը չէր հաշտվում Ղրիմի պատերազմում կրած պարտութեան հետ եւ ձգտում էր վերականգնել իր դիրքերը Մերձավոր Արեւելքում: Եվ դա Ռուսաստանն անում էր բացարձակորեն պատրաստվելով նոր պատերազմի: Այդ պատերազմը դարձյալ Թուրքիայի դեմ էր, եւ Ռուսաստանը համոզված էր, որ կստանա հայերի օգնութիւնն ու աջակցութիւնը:

Եվ ահա, այսպիսի պայմաններում հայերի ցուցադրական դիմումները Անգլիային, այն էլ սուլթանի թելադրանքով, բնականաբար, պետք է առաջ բերեր Ռուսաստանի մեծ դժգոհութիւնը:

Պատրիարք Ն.Վարժապետյանն ու նրա շրջապատը պարզապես ի զորու չեղան հասկանալ այդ ամենը եւ սուլթանի ձեռքին դառնալով գործիք ամեն ինչ արեցին, որպեսզի Անգլիային դիմելու միջոցով Ռուսաստանին հեռացնեն հայերից: Ահա, այս կերպ սուլթանը ձգտում էր նրան, որպեսզի ապագա պատերազմում Ռուսաստանը զրկվի հայերի օգնութիւնից:

Պատրիարք Ն.Վարժապետյանն իր գործելակերպով ավելի առաջ գնաց: Այդ նա էր, որ 1877–1878թթ, ռուս–թուրքական պատերազմի նախօրյակին

Անգլիայի դեսպանին ասել էր հետեւյալը. «Հայ ազգը օսմանեան վարչութեան տակ ապրելը կը գերադասէ ռուսականից, քանի որ վայելում է կրօնական ազատութիւն, մինչդեռ ռուսները կը ձգտին օրթոդոքս դարձնել հայերին: Պոլսի եւ մերձակայ նահանգներու հայերը պատճառ չունին բողոքելու կարեւոր պաշտօններ են ստացեր եւ մեծ ազդեցութիւն ունին կառավարութեան ու վարչակազմին մէջ... Ռուսներն իրենց մտադրութիւններն իրականացնելու գործում յաջողութիւն ունենալ չեն կարող, եթէ թուրքերը պաշտպանեն հայերի կեանքն ու գոյքը եւ, եթէ զէնքեր բաժնելով, նրանցից քաղաքապահ խումբեր կազմեն մահմեդականներու հետ միասին հայրենիքը պաշտպանելու թշնամիներից»:

Ն.Վարժապետյանը թուրքական լուծն ավելի էր գերադասում, քան Ռուսաստանին միանալը:

Սա պոլսահայ վերնախավի տեսակետն էր: Կարծում եմ, հարկ չկա ավելի հանգամանորեն խոսել այդ մասին, միայն անհրաժեշտ է ընդգծել, որ պատրիարք Ն.Վարժապետյանն ու նրա շրջապատը բոլորովին էլ չէին արտահայտում ամբողջ արեւմտահայության կարծիքը: Հայ ժողովուրդն իր երկու հատվածներով մնում էր կառչած ռուսական կողմնորոշումից եւ չէր սխալվում:

Թե Արեւմտյան Հայաստանի հայ բնակչության վիճակին ինչպես էր վերաբերում պատրիարք Ն.Վարժապետյանը, բերեմ միայն մեկ փաստ: Հայտնի են 1880–ական թվականների սկզբին Կարինում ծավալված դեպքերը, թուրքական իշխանությունների բռնությունները, անմեղ մարդկանց ծերբակալությունները: Կարինի հոգեւոր առաջնորդ Մաղաքիա Օրմանյանը համարյա ամեն օր նամակով պատրիարքին տեղեկացնում էր կատարվող անցուդարձի մասին եւ խնդրում օգնություն: Մ.Օրմանյանի մի քանի տասնյակ նամակներ մնացին անպատասխան19:

Իմիջիայլոց ասենք, որ Պոլսի հայկական շրջաններում Ռուսաստանի նկատմամբ Ն.Վարժապետյանի ստեղծած կարծիքը պահպանվում էր նաեւ հետագայում: Ահա, օրինակ, ինչ է գրել իշխան Բորիս Երկայնաբազուկ Արղությանը 1913թ. սեպտեմբերի 16–ին Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում. «...Ապագայում Ռուսիայ, որ անկասկած ուզում է գրաւել Տաճկահայաստանը, պիտի պաշտպանողական դրութիւն գրաւի դէպի հայերը, նոյն դրութիւնը, ինչ որ նա գրաւեց իրա ժամանակին դէպի սլավոնական ազգերը Բալկանեան թերակղզում, որը միջոց ու կարողութիւն տւեց սլավոններին ազատուիլ տաճկաց լուծից»: Այնուհետեւ իշխանը հիշատակում է եվրոպական թերթերից մեկի վկայությունը, որ «կրթուած առաջաւոր հայերը չեն ուզում, որ Ռուսաստանը գրաւի իրենց երկիրը, լաւ տեղեակ լինելով, ինչպէս է վերաբերում Ռուսաստանը իրա երկրում բնակուող օտար հպատակների հետ, որոնց ազգութիւնից ոչինչ չըպիտի մնայ ապագայում» եւ իր կողմից ավելացնում. «Դա երեւի տաճկահայի կարծիք է եւ անհիմն կարծիք... Բայց մարդիկ, որոնք դեռ կարող են դէմ լինել, որ Ռուսաստանը

գրաւի Տաճկահայաստանը. մոռանում են, որ շուտով Տաճկաստանում չի մնայ հայ, որ բոլորը կը գաղթեն այնտեղից. որ նրանց կ'ոչնչացնի կոտորածը, թալանը եւ գաղթերը, իսկ Ռուսաստանում մենք ազատ ենք ապրում եւ վայելում ենք բոլոր բարիքները, որ ունի այդ մեծ պետութիւնը եւ պիտի աւելի վայելենք բարիքներ, որովհետեւ Ռուսաստանին սպասում է այնպիսի ապագայ, որին չի սպասում ոչ մի ուրիշ պետութիւն»20:

Բայց վերադառնանք պոլսահայ կյանքին: Երբ սկսվեց 1877–1878թթ. ռուս–թուրքական պատերազմը, պատրիարք Ն.Վարժապետյանը հրապարակեց իր շրջաբերականը, որտեղ հայ ժողովրդի անունից հայտարարվում էր հետեւյալը. «Հինգ դարէ ի վեր օսմանեան հզօր պետութիւնը մեծամեծ շնորհներ է պարգեւել հայութեանը: Եթէ այսօր հայ ազգը կը պահէ իր կրօնքը. եկեղեցին, լեզուն, պատմութիւնը եւ աւանդութիւնները, եւ, վերջապէս, եթէ կը զգայ իւր էութիւնը, բարեխնամ տէրութեան շնորհին արդիւնքն է: Այս շնորհներուն փոխարէն հայ ազգն ալ հաւատարիմ հպատակութիւն ցոյց տուած է եւ հարատեւ երախտագիտութիւն սնուցած սրտին մէջ որդւոց որդիս... Հայ ազգը չի կրնար անտարբեր մնալ տէրութեան արդի ծանրակշիռ պարագաներուն մէջ եւ պատրաստ է անկեղծ օժանդակութիւն մատուցանել: Վասնզի օսմանեան երկիրը պաշտպանել, Հայաստան պաշտպանել ըսել է, նոյնիսկ հայուն կրօնքը, դպրոցը, ինչքը, տունը, ընտանիքը, պատիւն ու կեանքը պաշտպանել ըսել է»21:

Պոլսահայ վերնախավը այս ոգով էր գործում: Բայց կարեւորն այն էր, որ բուն Հայաստանում, արեւմտահայության մոտ պատրիարքի շրջաբերական հորդորին լսողներ համարյա չեղան: Հայերը, ինչպես միշտ, այս անգամ էլ ռուսական զորքերին ցույց տվեցին ամեն տեսակի օգնություն չխնայելով ոչինչ: Ռուս զինվորը համոզվում էր, որ Փոքր Ասիայում իր միակ հավատարիմ դաշնակիցը հայ ժողովուրդն է:

Որքան Կովկասյան ռազմաճակատում թուրքերը պարտվում էին եւ ռուսական զորքերը շարժվում էին դեպի Արեւմտյան Հայաստանի խորքը, այնքանով էլ փոխվում էր պոլսահայերի դիրքորոշումը: Նույնիսկ պատրիարք Ն.Վարժապետյանը հակվեց դեպի Ռուսաստան: Իհարկե, դա կատարվեց այն առաջադեմ ուժերի ճնշմամբ, որոնք Պոլսի հայերից բացի տեսնում էին նաեւ Արեւմտյան Հայաստանի հայության գոյությունը, նրա վիճակը փրկելու անհրաժեշտությունը:

Օսմանյան դաժան լծի տակ տառապող հայ ժողովուրդը, առհասարակ, համակրանքով էր վերաբերում Թուրքիայի դեմ պատերազմող երկրներին: 19–րդ դարի ընթացքում Ռուսաստանին վիճակվեց չորս անգամ պատերազմ մղել Թուրքիայի դեմ եւ, այս կապակցությամբ, միանգամայն հասկանալի էր հայ ժողովրդի համակրանքը Ռուսաստանի նկատմամբ: Այդ համակրանքը դարձյալ վառ դրսեւորվեց նաեւ 1877–1878թթ. ռուս–թուրքա-

կան պատերազմի ժամանակ: Այդ պատերազմին հայ ժողովուրդը մասնակցեց որպես իր հայրենիքն ազատագրելու պատերազմի: Դա, ըստ էության, հայրենական պատերազմ դարձավ հայության համար:

Սան Ստեֆանոյի պայմանագրով Արեւմտյան Հայաստանից Ռուսաստանին անցավ 35.650 քառ. կմ տարածք. այդ թվում Կարսը, Արդահանը. Բայազետը: Արեւմտյան Հայաստանի մյուս տարածքների վերաբերյալ, որոնք մնում էին Թուրքիայի գերիշխանության տակ, ընդունվեց 16–րդ հոդվածը: Այդ հոդվածում ասվում էր. «Նկատի ունենալով, որ Հայաստանում գրաված, բայց Թուրքիային վերադարձվելիք վայրերից ռուսական զորքերի հեռանալը կարող է ընդհարումների տեղիք տալ եւ բացասաբար անդրադառնալ երկու տերությունների բարի հարաբերությունների վրա, Բարձր դուռը պատրաստվում է հայաբնակ մարզերում անհապաղ իրագործել տեղական պահանջներից բխող բարեփոխումներ ու ռեֆորմներ եւ պաշտպանել հայերի ապահովությունը քրդերից ու չերքեզներից»22:

Այս 16–րդ հոդվածը, անշուշտ, չէր բավարարում արեւմտահայությանը: Արեւմտյան Հայաստանը նույնիսկ ինքնավարության իրավունք չստացավ: Ամեն ինչ ավարտվում էր բարեփոխումներ ու ռեֆորմներ իրագործելու պահանջով: 16–րդ հոդվածով Հայկական հարցն առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա: Այդ հոդվածում Ռուսաստանի ճնշման շնորհիվ Օսմանյան Թուրքիան հարկադրված էր բացահայտորեն ընդունել Հայաստանի ու հայ ժողովրդի գոյությունը կայսրության արեւելյան տարածքում: Միջազգային փաստաթղթում առաջին անգամ հիշատակվեց Հայաստան անունը:

Եվրոպական տերությունները Անգլիայի գլխավորությամբ չէին համակերպվում Ռուսաստանի տարած հաղթանակի հետ եւ սկսեցին նրա վրա ուժեղ ճնշում գործադրել: Սան Ստեֆանոյում Ռուսաստանի պատվիրակության ղեկավար դեսպան Ս.Իգնատեւը, ելնելով ստեղծված իրավիճակից, ասաց. «Հայերը մեզնից չպետք է պահանջեն ավելին, քան այն, որ այժմ իրականում մենք կարող ենք ձեռք բերել: Համենայնդեպս, եթե մեզ հաջողվի Դռան հետ համաձայնության գալ պայմանագրում առաջարկված հոդվածի իմաստով, ապա Ռուսաստանի պաշտոնական հովանավորությունը նրանց (հայերի – Վ.Պ.) նկատմամբ կապահովվի, եւ դա կլինի կարեւոր քայլ նրանց ապագայի բարելավման ճանապարհին»23:

Անգլիայի եւ մյուս տերությունների գործունեության արդյունքով հրավիրվեց Բեռլինի կոնգրեսը: Պոլսի հայկական շրջանակները ոչ միայն անպատրաստ դիմավորեցին Բեռլինի վեհաժողովը, այլեւ դա համարեցին որպես Ռուսաստանի դիվանագիտության պարտություն եւ իրենց հայացքն ուղղեցին առաջին հերթին դեպի Անգլիա: Նորից աշխուժացան արեւմտյան կողմնորոշման դիրքերում գտնվողները, որոնք կարծում էին, թե որքան ա-

րագ հեռանան Ռուսաստանից եւ ապավինվեն հատկապես Անգլիային, այնքան հաստատապես կհասնեն Հայկական հարցի լուծմանը:

Բարեբախտաբար բոլոր չէ, որ այդպես էին մտածում: Կային նաեւ իրերին սթափ վերաբերվող գործիչներ, որոնց տեսակետը Ազգային ժողովում արտահայտեց Կ.Փանոսյանը: «Ի՞նչ էք անում, ո՞ւր էք տանում ազգը,– ասաց Կ.Փանոսյանը,– սեւագլուխ եւ ինքնակոչ դիվանագէտներ... ո՞վ կը տայ մեզ ինքնավարութիւն, որի՞ վրայ էք դնում ձեր յոյսը: Այն շահամոլ եւ նենգ Եւրոպայի վրա՞յ, որ ուզում է պահպանել Թուրքիայի գոյութիւնը իր շահադիտական նպատակների համար»24:

Սուլթանին ձեռնտու էր, որ հայերն ավելի շատ հակվեին դեպի Անգլիա, քան Ռուսաստան: Եվ դա հասկանալի էր: Այս հողի վրա կարծես թե համընկնում էին պոլսահայ վերնախավի ու սուլթանի շահերը: Թող զարմանալի չթվա այսպիսի հետեւությունը, որովհետեւ հենց սուլթանի գիտությամբ ու հավանությամբ պատրիարքարանը Բեռլինի կոնգրես ուղարկեց իր պատվիրակությունը: Այդ պատվիրակությունը Բեռլին տարավ սուլթանի հավանության արժանացած առաջարկները:

Պոլսահայ ամիրաները նորից հայտնվեցին Աբդուլ Համիդ սուլթանի ծուղակի մեջ: Նրանք սուլթանի կամքով Բեռլինում պետք է դներին կայսրության կազմում Արեւմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը, որն, իհարկե, ձեռնտու չէր Ռուսաստանին, քանի որ նա ձգտում էր պահպանել 16–րդ հոդվածը:

Պատրիարք Ն.Վարժապետյանն ու նրա համախոհները իրենց հաշիվ չէին տալիս, թե ինչ կնշանակեր արեւմտահայության համար սուլթանի հովանավորությամբ ստանալիք ինքնավարությունը: Նրանք նույնիսկ հաշվի չէին առնում այդ դեպքում ռուսական զորքերի հեռանալու հետեւանքները:

Բեռլինի կոնգրես մեկնած հայոց պատվիրակության մասին շատ է գրվել, ուստի այժմ հարկ չկա դրան հանգամանորեն անդրադառնալ: Հարկ է միայն նշել հետեւյալը. նախ, պատվիրակության կազմը միասնական չէր: Նրա ղեկավար Մ.Խրիմյանը այն տեսակետին էր, թե պետք է լինել այն տերության կողմը, ով կօգնի լուծել Հայկական հարցը եւ դեմ էր Արեւմտյան Հայաստանը կայսրության կազմից հանելուն: Պատվիրակության անդամներից Մ.Չերազն ուներ անգլիական կողմնորոշում, իսկ Նար–Պեյը (Խորեն Գալֆայան) ռուսական կողմնորոշում: Մյուս անդամը Ստեփան Փափազյանը, ինչպես երեւում է նրա հուշերից, զբաղված էր պատվիրակության անդամներին հաշտեցնելով: Պատվիրակության անդամներն իրար չէին վստահում: Մ.Խրիմյանը, օրինակ, ջանում էր հեռացնել Նար–Պեյին նրան վնասակար նկատելով. «մեր խորհուրդները ռուսաց կիմացնէ»25:

Այնուամենայնիվ, Բեռլինում հայոց պատվիրակությունը գործում էր Ն.Վարժապետյանի ցուցումով, որը նա արտահայտել է հետեւյալ կերպ.

«Մեր քաղաքականութիւնն է Ռուսիոյ երախտագէտ ըլլալով յուսալ յԱնգղիա եւ յԱնգղիոյ շնորհիւ ապահովել մեր բարոյական եւ նիւթական բարեկեցութիւնը: Այս բարեկեցութիւնն ուրիշ կերպով ձեռք չենք կրնար բերել. այլ միայն ազգային ինքնօրինութեամբ Հայաստանի մէջ»26:

Եվ որպես ապացույց դրա, հայոց պատվիրակությունը որոշեց. «1 Անգլիոյ հետ լաւ վարուիլ եւ անոր համակրութիւնը շահիլ անկէ խնդրելով որ զմեզ գոհ ընէ: 2. Գրել, որ Տ.Մ. եւ Գար. Սրուանձտեանց անգլերէն սորվին: 3. Ցաւերնիս նախ Անգլիոյ եւ ապա Եւրոպայի յայտնել: 4. Գաւառներու մէջ կրօնքի խնդիր չհանել: 5. Դաստիարակութեան հոգ տանիլ ու անգլերէն լեզուն մտցնել բոլոր վարժարաններու մէջ»27:

Այսպես, ուրեմն, շնորհակալ լինել Ռուսաստանին, բայց ապավինել Անգլիային: Սա արդյո՞ք չի հիշեցնում այսօրվա Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ որդեգրված «կոմպլեմենտարությունը»:

Հայոց պատվիրակությունը ոչ մի արդյունքի չհասավ: Բայց սուլթանը հասավ իր նպատակին:

Հարկ չկա հանգամանորեն քննարկել կոնգրեսում եւ նրա շուրջ կատարված իրադարձությունները, միայն հիշեցնեմ, որ առանց այն էլ արեւմտահայության իղձերը չբավարարող վերոհիշյալ 16–րդ հոդվածը Անգլիայի ներկայացմամբ վերախմբագրվեց ու դարձավ 61–րդ հոդված, որտեղ ասվում էր. «Բարձրագույն դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ շրջաններում իրագործել տեղական անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների մասին Բ. դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերություններին, որոնք կհետեւեն դրանց իրագործմանը»28:

Չխորանալով Բեռլինի կոնգրեսի նյութերի մեջ հարկ եմ համարում միայն փաստել հետեւյալը.

1. Անգլիան ու եվրոպական մյուս տերություններն իրենց շահերից ելնելով, վճռականորեն պաշտպանեցին Թուրքիայի ամբողջականությունը: Նրանք մոռացան հայերին տված խոստումները:

2. Կոնգրեսից հետո Անգլիան հայտարարեց, որ Թուրքիային պաշտպանելը իր պարտքն է: Նա կտրականապես դեմ էր հայկական ինքնավարությանը, որն ի վերջո միանալու էր Ռուսատանին: Անգլիան չէր ցանկանում, որ հայերը վերականգնեին իրենց պետականությունը29: Անգլիան այլեւս հաշվի չէր առնում հասարակական կարծիքը եւ բացահայտ հայտարարեց. «Սուլթանի թշնամիները մեր թշնամիներն են, նրա բարեկամները մեր բարեկամները»30: Ավելորդ չէ այստեղ հիշել Լլոյդ Ջորջի ցինիզմով լեցուն վկայությունը. «Անգլիական պատվիրակությունը Հայկական հարցն օգտագործեց սոսկ Ռուսաստանի դեմ պայքարելու եւ Թուրքիայում իր դիրքերն ամրապնդելու համար, եւ եթե չլիներ այդ միջամտությունը, ապա հայերի

մեծամասնությունը դեռ 1878թ. Սան Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական դրոշի տակ»31:

3. Բեռլինի կոնգրեսը ծայրահեղորեն վատացրեց Հայկական հարցի լուծման հնարավորությունը եւ բացառեց արեւմտահայության վիճակի նույնիսկ աննշան բարելավումը:

4. Բեռլինի կոնգրեսը Արեւմտյան Հայաստանի ազատագրման հարցին տվեց միջազգային գունավորում եւ դրանով Հայկական հարցը խճճեց միջազգային դիվանագիտության որոգայթում:

5. Բեռլինի կոնգրեսով Անգլիան իր դաշնակիցների հետ միասին Թուրքիայի համար ստեղծեցին նպաստավոր պայմաններ իրագործելու արեւմտահայության ոչնչացման ծրագիրը:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսում արեւմտահայության ազատագրության գործին անուղղելի վնաս հասցրին Անգլիան ու նրա դաշնակիցները, որոնք իրենց քաղաքականությամբ փաստորեն ազատ արձակեցին սուլթանի ձեռքերը, օսմանյան բռնակալությանը հնարավորություն տվեցին ավելի ուժեղացնել հայերի հալածանքը: Բեռլինի կոնգրեսում Թուրքիային պաշտպանելով Անգլիան եւ իր դաշնակիցները պատասխանատու են արեւմտահայության ոչնչացումը իրագործելուն նպաստելու այս քայլով եւս: Բեռլինի կոնգրեսը Թուրքիային հնարավորություն տվեց քայլ առ քայլ հասնել հայոց ցեղասպանության իրագործմանը, Հայկական հարցի յուրովի լուծմանը, արեւմտահայության ոչնչացմանը եւ Արեւմտյան Հայաստանն իր բնիկ ժողովրդից զրկելուն:

16–րդ հոդվածը 61–րդ հոդվածով փոխարինելը վերջապես բացեց հայոց պատվիրակության աչքերը: Բեռլինի կոնգրեսի ընթացքում պատվիրակության անդամները, որ աչքի էին ընկնում միմյանց հակասելով, ժխտելով ու անմիաբանությամբ, հարկ համարեցին կոնգրեսին ներկայացնել իրենց հուշագիրը: «Հայկական պատվիրակությունը,– ընդգծվում էր հուշագրում,– ստիպված է իր ափսոսանքն արտահայտել այն բանի համար, որ կոնգրեսը չընդունեց իր որքան օրինական, նույնքան էլ չափավոր պահանջները: Մենք կարծում էինք, որ մի քանի միլիոն մարդուց կազմված մի ժողովրդի, որը մինչեւ օրս թույլ չի տվել, որ իրեն օգտագործեն որպես արտասահմանյան քաղաքականության գործիք, չնայած շատ ավելի է շահագործվել, քան Թուրքիայի մնացած քրիստոնյա ժողովուրդները, մի ժողովրդի, որը ոչ մի դժվարություն չի պատճառել թուրքական կառավարությանը... մի ժողովրդի, որը հակված չէ քաղաքական որեւէ հավակնության, կընձեռվի իր սեփական կյանքով ապրելու եւ հայկական հողում հայ պաշտոնյաների կողմից ղեկավարվելու իրավունքը: Հայերը հասկացան, որ խաբվել են, որ իրենց իրավունքների ճանաչման չեն արժանացել, որովհետեւ եղել են խաղաղասեր, եւ որ, անկախ պահելով իրենց հին եկեղեցական կազմակերպությունը եւ ազգային ոգին՝ ըստ էության ոչնչի չեն հասել:

Հայկական պատվիրակությունը տունդարձի ճանապարհին դեպի Արեւելք իր հետ կտանի այդ դասը: Բայց սրանով նա արտահայտում է այն կարծիքը, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի ծայն բարձրացնել, քանի դեռ եվրոպան չի բավարարել նրա պահանջները»32:

Բեռլինի կոնգրեսում Անգլիան հասավ իր նպատակին: Նա լիովին պաշտպանելով Թուրքիային գրեթե ոչնչի հավասարեցրեց Ռուսաստանի տարած ռազմական հաղթանակը: «Թուրքիան,– գրել է անգլիական դեսպան Հ.Լեյարդը իր զեկուցագրերից մեկում,– պատնեշ է Ռուսաստանի փառասիրական ձգտումների դեմ, հետեւաբար պետք է նրան պաշտպանել, մանավանդ որ խալիֆն օգտակար դաշնակից է միլիոնավոր մահմեդական հպատակ ունեցող Անգլիայի համար»33:

Անգլիային միաժամանակ հարկավոր էր որքան հնարավոր էր նսեմացնել Ռուսաստանի դերն ու հեղինակությունը հայոց աչքում: Այս ասպարեզում առանձնակի եռանդով էր գործում դեսպան Լեյարդը: Ահա թե ինչ է նա գրել 1880թ. ապրիլի 27–ին վարչապետ Գլադստոնին. «Հայերը, խրախուսուած այն համակրութենէն, որ ընդունեցին Անգլիոյ մէջ եւ վստահելով այն փոփոխութեանը, որ կը հաւատան տեղի ունենալու մօտ է Անգլիոյ քաղաքականութեան մէջ Թուրքիոյ նկատմամբ, կը նային մի ինքնօրէն, եթէ ոչ անկախ, Հայաստանի ստեղծմանը»: Այնուհետեւ դեսպանը եզրակացնում է. «Ռուսիա հաւանօրէն երբեք պիտի չթոյլատրէ մի հայկական ինքնօրէն կամ անկախ պետութիւն եւ ոեւէ փորձ կազմելու այդպիսի մի բան պիտի վերջանայ հայոց կլանումովն ռուս կայսրութեան մէջ, եւ այս հին ազգի եւ նորա լեզուի եւ հաւատքի վերջին շրջումովն»34:

Այսպիսով, Անգլիան, որն իբր թե ուզում էր հայերին օգնել, գերադասում էր նրանց թողնել Օսմանյան կայսրության տիրապետության տակ, քանի որ, ըստ նրա, Ռուսաստանին ենթարկվելը կնշանակեր հայոց ոչնչացում: Ռուսաստանի նկատմամբ այսպիսի վերաբերմունքը պոլսահայերի մոտ ուներ համակիրներ, եւ աստիճանաբար դա ամրապնդվեց հայ հասարակական գիտակցության մի թեւի մոտ: Բայց հետագա ամբողջ պատմությունը եկավ ապացուցելու, որ հայերն իսկապես իրենց ապահով կարող էին զգալ միայն Ռուսաստանի կազմում գտնվելով: Ռուսաստանը ոչ թե կլանեց հայությանը, այլ նրա արեւելյան հատվածին փրկեց ֆիզիկական բնաջնջումից եւ նրա համար ստեղծեց գոյության տանելի պայմաններ:

Բեռլինի կոնգրեսը հիմնավորապես ապացուցեց, թե որքան սխալ քաղաքականություն էր որդեգրել պատրիարք Ն.Վարժապետյանն իր համախոհ պոլսահայերի հետ միասին: Այստեղ խնդիրը միայն Ն.Վարժապետյանի տարիքի (նա 1878թ. 41 տարեկան էր) ու փորձի պակասի մեջ չէր: Բեռլինի կոնգրեսից հետո խոր հիասթափության մեջ ընկած Ն.Վարժապետյանին նույնիսկ չօգնեց սուլթանը իր պարգեւներով ու ընծաներով: Ամբողջ խնդիրն այն էր,

որ Ն.Վարժապետյանը ղեկավարվում էր պոլսահայերի այն ուժերի քաղաքականությամբ. որոնք մի կողմից սուլթանի դեմ հանդես գալու մտադրություն չունեին եւ մյուս կողմից Ռուսաստանի նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքով նպատակ ունեին շահել Անգլիայի բարեկամությունը: Իսկ պոլսահայերի հակառուսական դիրքորոշումը շահեկան էր թե՛ սուլթանի եւ թե Անգլիայի համար: Բայց ոչ արեւմտահայության համար:

Ն.Վարժապետյանի մահից հետո (1884թ.) նրա որդեգրած քաղաքականության կողմնակիցները չընկճվեցին: Ավելին. նոր ընտրված պատրիարք Վեհապետյանն ավելի որոշակի դարձրեց այդ գիծը: Նա մի կողմ թողեց եվրոպական տերությունների օգնությամբ բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ Ն.Վարժապետյանի քաղաքական գիծը: Վեհապետյանն ավելի ուժգին կերպով առաջ տարավ հայերի դրությունը լավացնելու գործում սուլթանի հետ համագործակցելու Ն.Վարժապետյանի քաղաքականության մյուս գիծը: Նույն կերպ էր վարվում նաեւ հաջորդ պատրիարք Խորեն Աշըգյանը: Որքան պատրիարքարանն ավելի շատ էր առաջ տանում հարմարվելու քաղաքականությունը, այնքան սուլթանն ուժեղացնում էր ճնշումը:

Դրությունը փոխելու փորձ արեց 1894թ. պատրիարք ընտրված Մաթեոս Իզմիրլյանը: Նա որոշակիորեն համոզված էր. որ բարենորոգումների իրականացման գործում սուլթանի հետ հույսեր կապելը հիմնազուրկ է: Ի վերջո. 1895թ. սուլթանի ճնշմամբ Մ.Իզմիրլյանը հրաժարական տվեց:

Բեռլինի կոնգրեսը միայն բացասական հետեւանքներ չունեցավ: Այն խթանեց օսմանյան բռնակալության տակ գտնվող արեւմտահայության ազգային զարթոնքը. որոշակի թափ հաղորդեց ազգային–ազատագրական շարժմանը: Ստեղծվեցին գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ: Սկիզբ առավ հայդուկային–ֆիդայական շարժումը: Զեյթունի. Սասունի եւ մի շարք այլ վայրերում հայերի ապստամբությունը. ինքնապաշտպանական կռիվները ապացույց էին այն բանի. որ հայ մարդն իր կյանքը. պատիվը եւ ունեցվածքը պահպանելու համար եւ թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների դեմ պատրաստ է զենքի դիմել:

19–րդ դարի երկրորդ կեսին ազգային–ազատագրական պայքարի գլխավոր շարժիչ ուժը դարձավ արեւմտահայ գյուղացիությունը: Նրա հետ էին քաղաքների արհեստավորները. առաջադեմ մտավորականները: Ազգային–ազատագրական պայքարն ստացավ դեմոկրատական բովանդակություն: Այս հանգամանքը. առհասարակ. խաղաց վճռական դեր: Հենց. օրինակ. 1881թ. Կարինում ստեղծված «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության մեջ գերազանցապես ընդգրկվել էին աշխատավոր դասի ներկայացուցիչներ գյուղացիներ. արհեստավորներ. ուսուցիչներ: Այդ ժամանակ Կարինի առաջնորդն էր Մաղաքիա Օրմանյանը. որը. դատելով պատրիարքարան ուղարկած իր զեկույց–նամակներից. տեղյակ է եղել այդ

կազմակերպությունից եւ նաեւ աջակցել ու ոգեւորել է նրա անդամներին:

Հակառակ նրան, որ ազգային–ազատագրական պայքարի գլխավոր շարժիչ ուժը աշխատավոր դասն էր, արեւմտահայ բուրժուազիան, որը գլխավորապես կենտրոնացած էր Կ.Պոլսում, բոլորովին այլ դիրք էր գրավել: Պոլսահայ ամիրաները բռնել էին «բարեխնամ» սուլթանին պաշտպանելու դիրք: Նրանք պոլսահայ ամիրաները, միանգամայն դեմ էին ազգային–ազատագրական պայքարին: Ոչ միայն դեմ էին, այլեւ իրենց գործունեությամբ այդ պայքարին հասցրին անուղղելի վնաս: Ազգային դեմքը կորցրած պոլսահայ էֆենդիները բացարձակապես անտարբեր էին արեւմտահայության սաստկացող կեղեքումների նկատմամբ, չէին ուզում նկատել սուլթանի գործադրած բռնությունները եւ մեղադրում էին դրանց դեմ ոտքի ելածներին հայտարարելով, թե «մեր ազգը երբեք ապստամբութիւն ըրած չէ եւ չըներ. մեր բոլոր ըրածը խնդիր է. խնդիր գրով ու բերանացի»:

Ազգային–ազատագրական պայքարի նկատմամբ բացասական վերաբերմունք ունեին նաեւ այն ուժերը, որոնք ազատագրության հույսը կապում էին եվրոպական տերությունների հետ, նրանց միջոցով բարենորոգումներ կատարելու հետ: Ոչ թե ապստամբվել, այլ զբաղվել լուսավորություն տարածելով ու սպասել համբերատար կերպով, մինչեւ Եվրոպան հասնի օգնության: Հասկանալի է, որ պոլսահայ ամիրաների ու բուրժուական խավերի այսպիսի գաղափարախոսությունը, որը չէր արտահայտում արեւմտահայ զանգվածների շահերը, պետք է մերժվեր դեմոկրատական ուժերի կողմից:

Պոլսահայ ամիրաները, որոնք իրենց խոսափողն էին դարձրել պատրիարքարանը, ելնում էին իրենց շահերից եւ գլխավորը համարում էին սուլթանի բռնություններին համակերպվելը, ինչ–որ բարեփոխումների հասնելը: Սա ոչ միայն պահպանողական ու հետադիմական գաղափարախոսություն էր, այլեւ ժխտում էր արեւմտահայության ազատագրումը զենքի, հեղափոխական պայքարի միջոցով:

Ստեղծված իրավիճակը նկատի ունենալով Ս.Թոխմախյանը 1882թ. գրել է. «Չկա մի դասակարգ, որ 61–րդ յօդուածի իրականացումը չցանկանար, բայց ամեն մի դասակարգ իւր ցանկութեան բոլորովին տարբեր տեսակէտովն է նայում դորա վերայ: Տաճկաստանի էֆէնդիների երես առած խմբերը նայում էին նորա վերայ, ինչպէս մի միջոցի վերայ, որ նրանց կը մատակարարի իշխանական ազդեցութիւն կամ վարչական բարձր պաշտօններ, դրա համար լինի թերեւս, որ այդ խմբերից մի քանիսը արդէն ձգտում են հասնելու ազնուութեան, վաճառական, կալուածատէր, չարչի քաղաքացիները երազում են իւրեանց լայնածաւալ օպերացիայի վերայ: Գիւղացու ակնկալութիւնը բոլորովին տարբեր է: Նա սպասում է թշուառութեան արտասուքները սրբելու, կեանքի անդորրութեան, ազատ շունչ քաշել, ապահովութիւն իւր կեանքին, իւր ստացուածքին, իւր գործին»35:

Այսպիսով. 19–րդ դարի երկրորդ կեսին հայ ազգային–ազատագրական շարժման նկատմամբ ձեւավորվեց երկու ուղղություն: Դեմոկրատական ուղղության վրա կանգնած ուժերը վճռականորեն դատապարտում էին սուլթանին «հավատարիմ հպատակ» լինելու գաղափարախոսությունը եւ ազատագրության գլխավոր միջոցը համարում էին զինված պայքարը: «Թղթե շերեփի» գաղափարախոսությունից դաս առած Մ.Խրիմյանը դատապարտում էր անտրտունջ ենթարկվողներին ու գրում. թե «... դեռ պիտի կոտորուիք, դեռ պիտի մորթուիք՝ քանի որ անզէն. անեղջիւր. անսպար կ'ապրիք»36:

Ավելի որոշակի էր արտահայտվում Մ.Մամուրյանը: 1881թ. «Արեւելեան մամուլի» հոկտեմբերյան համարում նա ասում էր. «Այն ժողովուրդները, որոնք իրենց ամբողջ պայքարը սահմանափակում են պատրիարքի կատարած գործողութեամբ, ազատագրութենէ զուրկ են եւ իրենց հաշմութիւնները փիլոնին ներքեւ վարագուրելու տրամադիր»: Մ.Մամուրյանը վառոդի հոտը գերադասում էր խունկի բուրմունքից, որովհետեւ առաջինը ազատության համար պայքարի նշանաբանն է. իսկ երկրորդը ստրկության թմբիրը:

Ինչպես հայտնի է, թուրքական իշխանությունները վարում էին Արեւմտյան Հայաստանը հայաթափելու քաղաքականություն: Այդ նպատակով կատարվում էին միտումնավոր վարչական բաժանումներ. կազմակերպվում էր մահմեդական բնակչության ներմուծում: Հայ բնակչությունը զրկվում էր հողից: Սովը. կամայականությունները. բռնությունները հասցրին պանդխտության աճին: Հազարավոր պանդուխտներ հանգրվան գտան նաեւ Կ.Պոլսում: Նրանք իրենց թշվառ ու ողորմելի վիճակի հետ միասին Պոլիս բերեցին Արեւմտյան Հայաստանի հայ բնակչության ազգային ձգտումները. դարձան դրանց արտահայտիչը: Այս հանգամանքը կարեւոր նշանակություն ունեցավ: Խնդիրն այն էր. որ մինչեւ Զեյթունի ապստամբությունը (1862թ.) եւ դրանից էլ առաջ. Կ.Պոլսի հայ գաղութը. չնայած պատրիարքարանի գոյությանը. սերտորեն կապված չէր Արեւմտյան Հայաստանի հետ: Նրան այնքան էլ չէր հետաքրքրում արեւմտահայության կյանքը. որից նա մեծապես մեկուսացված էր: Հայ պանդուխտները նպաստեցին, որպեսզի Պոլսի հայ գաղութը երեսով շուռ գար դեպի Արեւմտյան Հայաստան: Այս շրջադարձին մեծապես նպաստեց նաեւ դեռեւս 1869թ. պատրիարք ընտրված Մ.Խրիմյանը. որը քաջատեղյակ էր Արեւմտյան Հայաստանում տիրող իրավիճակին: Մ.Խրիմյանը պատրիարք էր ընտրվել սուլթանի կամքին հակառակ. եւ դա դեմոկրատական ուժերի հաջողությունն էր:

Կարճ ժամանակ անց Մ.Խրիմյանը համոզվեց, որ Պոլսում անհնար է հասնել արեւմտահայության հարցի լուծման, հեռացավ մայրաքաղաքից եւ վերադարձավ Վան այն համոզմունքով. որ միայն զենքով հնարավոր կլինի պաշտպանել հայ կյանքն ու կայքը:

Դեմոկրատական շարժման աչքի ընկնող գործիչներ Մ.Մամուրյանը. Ա.Արփիարյանը. Հ.Սվաճյանը. Ստ. Ոսկանը. Գր. Չիլինկիրյանը եւ ուրիշներ

խնդիր էին դնում կանխել պանդխտությունը, ուշադրություն դարձնել Արեւմտյան Հայաստանի տնտեսական զարգացմանը. պանդուխտներին կոչ անում վերադառնալ երկիր, տեր կանգնել իր հողին: Ռամիկը պետք է զգա, ազդարարում էր «Արեւմուտք» լրագիրը. որ շատ բանի կարող է հասնել եւ ուրիշ «ժողովուրդներէ վար չը մնար թէ ազգային եւ թէ օտարազգի բռնակալներու դէմ զինուելու ատեն»37:

Ա.Արփիարյանը խնդիր էր դնում ցնցել ժողովրդին. «անոր իմացնել. թէ թուրքէն բարենորոգութեան պահանջուած պահուն. մենք ալ մեր ձեռքով գործադրէինք շատ մը բարեկարգութիւններ կրնայինք ունենալ»: «Պէտք էր.– ասում էր Ա.Արփիարյանը.– հանրային սիրտը թունդ հանել, հոգիները խռովել եւ մեր ներքին վիճակը մեր ձեռքով բարելաւելու մտածողութիւնը զարգացնել»38:

Առարկելով Ն.Ռուսինյանի, Մ.Չերազի «բարեխնամ պետութեան վստահութիւնը» շահելու տեսակետին Ստ. Ոսկանն ասում էր. որ հարկավոր է վառոդի աման պատրաստել եւ ոչ թե խնկաման:

Ազգային–դեմոկրատական ուժերը միաժամանակ քաջ գիտակցում էին, որ արեւմտահայությանը ոտքի հանելու, նրա մեջ պայքարի ոգին հաստատելու համար հարկավոր է հայությանը դուրս հանել տգետ ու սահմանափակ հոգեւորականության ազդեցությունից: Եվ այդ գործի համար նրանք կարեւորում էին ժողովրդին կրթելը, լուսավորության տարածումը, որոնց միջոցով հնարավոր կլիներ նաեւ հայությանը հանել քաղաքական պայքարի: Այս գործում հատկապես աչքի ընկավ ժամանակի առաջադեմ մտածող ու մանկավարժ Ռեթեոս Պերպերյանը, որը 1876թ. նախաձեռնեց վարժարանի ստեղծումը: Այս վարժարանի մասին ստորեւ ավելի հանգամանորեն կխոսվի, բայց այժմ միայն հարկ է նշել, որ Ռ.Պերպերյանի վարժարանը պատվով կատարեց ստանձնած ազգային խնդիրը:

Հովհաննես Չիլինկիրյանին, այդ ազնիվ մետաղագործին հոգեհարազատ էին ազգային–դեմոկրատական ուժերի գաղափարները, եւ նա իր ուժերի չափով նպաստում էր դրանց տարածմանը: Նրա մոտ էին հավաքվում գավառներից պանդխտության եկած շատ արհեստավորներ, որոնք ոչ միայն օթեւան էին գտնում, այլեւ Հովհաննես Չիլինկիրյանի միջոցով հաղորդակից էին լինում ազգային առաջադիմական գործիչների մտքերին: Հետագայում այդ պանդուխտներից շատերը վերադարձան հայրենիք իրենց հետ տանելով Հովհաննես Չիլինկիրյանի խոսքերը տունն ու հողը անտեր չպետք է թողնել ու պետք է պայքարել: Հայրենիք վերադարձած պանդուխտները համալրեցին արեւմտահայության իրավունքների համար պայքարող մարտիկների շարքերը:

# Գլուխ 2

# ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Առաջադիմական հայացքների տեր Հովհաննես Չիլինկիրյանի ընտանիքում էր ծեւավորվում պատանի Ռուբենը. որն աչքի էր ընկնում ուշիմությամբ. երեւույթներն ընկալելու կարողությամբ:

Պատանի Ռուբենի համար 20–րդ դարը սկսվեց 1901թ. Կ.Պոլսի Պերպերյան վարժարանն ընդունվելով:

Նոր դար: Նոր հույսեր ու երազանքներ: Ի՞նչ կբերեր այդ դարը տառապյալ արեւմտահայությանը: Շատերն էին լավատեսորեն տրամադրված. ինչպես միշտ լինում է նման դեպքերում: Ամեն սերնդի չի վիճակված տեսնել նոր դարի սկիզբը: Այդպես լինում է 100 տարին մեկ անգամ: Մեր սերունդը նույնպես այն հազվադեպ սերունդներից է, որ տեսավ նոր 21–րդ դարի գալուստը: Ավելին. տեսանք նաեւ նոր 3–րդ հազարամյակի գալուստը:

Այնպես որ. մենք լավ պետք է հասկանանք այն սերնդին. որին բախտ վիճակվեց տեսնել 20–րդ դարի սկիզբը: Այստեղից էլ ավելորդ չեմ համարում. գոնե ընդհանուր գծերով. շատ համառոտ էքսկուրս կատարել դեպի 20–րդ դարի սկիզբը:

Թուրքիան 20–րդ դար մտավ շարունակելով մնալ հետամնաց ու բարբարոսական կարգեր ունեցող երկիր: Կյանքի տարբեր ասպարեզներում նշմարվող թույլ տեղաշարժերը փշրվում էին հանդիպելով հետամնացությանը. շարիաթի չգրված օրենքներին. սուլթանական տիրապետության կամայականություններին:

Գնալով ավելի էր ծանրանում արեւմտահայության վիճակը: Զգալիորեն շատացավ հողազուրկ գյուղացիների թիվը: Բազմապիսի ու բազմաթիվ հարկերը խեղդում էին գյուղացիական տնտեսություններին: Եթե այդ բոլորին ավելացնենք սուլթանի հայահալած քաղաքականության սաստկացումը. ապա իրավիճակը պարզ կլինի:

61–րդ հոդվածը մնացել էր թղթի վրա: 19–րդ դարի 90–ական թվականներին սուլթանի կազմակերպած հայկական կոտորածները իշխանության մոտ տպավորություն էին ստեղծել. որ արեւմտահայությունը ոչ ուժ եւ ոչ էլ համարձակություն կունենա նորից գլուխ բարձրացնել:

Սուլթանն ունե՞ր հիմքեր այդպես մտածելու համար: Իհարկե. ուներ: Հիշենք պատճառներից մի քանիսը: Նախ. հայ ազգային–ազատագրական շարժումը չուներ միասնական ղեկավարություն: 1885–1890թթ.. ընդամենը

հինգ տարում. միեւնույն նպատակի համար ստեղծված երեք ազգային քաղաքական կուսակցություններն այդպես էլ չկարողացան միավորել իրենց ուժերը եւ իրենց անմիաբանությամբ ջլատել էին արեւմտահայության միասնությունը: Շարունակվում էր «հավատարիմ հպատակ» մնալու քաղաքականությունը դրանից բխող բոլոր հետեւանքներով:

Սակայն, չնայած այս ամենին, սուլթանը սխալվում էր: Արեւմտահայությունը, որը երբեք չէր համակերպվում իր ստրկական վիճակին, նորից զենքի դիմեց: Առաջինը եղավ Անդրանիկ Օզանյանի գլխավորությամբ Առաքելոց վանքի կռիվը 1901թ. նոյեմբերին: Այս կռիվը վճռական նշանակություն ունեցավ արեւմտահայության մոտ պայքարի ոգին վերականգնելու համար:

Առաքելոց վանքի կռիվը գրավեց Եվրոպայի ուշադրությունը: Նորից մամուլն անդրադարձավ Արեւմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, հրապարակեց բազմաթիվ փաստեր թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների մասին: Տարբեր երկրների հասարակական–քաղաքական գործիչները դնում էին Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացման անհրաժեշտությունը:

Սակայն այս ամբողջ աղմուկի մեջ տարօրինակ կերպով լռում էին այն տերությունները, որոնք ստորագրել էին Բեռլինի պայմանագիրը եւ ստանձնել 61–րդ հոդվածի իրականացման պատասխանատվությունը:

Եվրոպական տերությունների անտարբերությունը ոգեւորում էր սուլթանին իր հայահալած քաղաքականությունն առաջ տանելու համար: Գավառներում չէին դադարում հայկական բնակավայրերի վրա հարձակումները, թալանը: Չերքակալություններն ու սպանությունները կրում էին զանգվածային բնույթ: Մեծ ծավալ ստացավ պանդխտությունը: Գավառներում կատարվող խժդժություններից երեւում էր, որ թուրքական իշխանությունները պատրաստվում են հայերի նոր կոտորած կազմակերպել: Ամեն ինչ արվում էր մահմեդական բնակչությանը հայերի դեմ գրգռելու համար:

Արեւմտահայության ազատագրական պայքարի կարեւոր կենտրոն էին մնում Սասունն ու Զեյթունը: Եվ սուլթանը վճռեց սկսել հենց այդ վայրերի հայ բնակչության ոչնչացումից: Դեռեւս 1902թ. թուրքական իշխանություններն սկսեցին զորքեր կուտակել Սասունում, բնակչությանն ավազակախմբերի հարձակումներից պաշտպանելու պատրվակով: Սասունը կանգնեց բնաջնջման վտանգի առջեւ: Միակ ելքը մնում էր զինվելը: Ուրիշ կերպ հնարավոր չէր կանխել թուրքական իշխանությունների մտադրությունները: Թուրքական 40 հազարանոց բանակն անցավ հարձակման: 1904թ. ծմռան վերջին սկսվեց սասունցիների անհավասար գոտեմարտը թուրքական կանոնավոր զորքի դեմ: Սասունցիների ինքնապաշտպանական կռիվները հաջողությամբ չավարտվեցին: Թուրք ջարդարարները սպանեցին մոտ 8 հազար սասունցի, այդ թվում 2809 տղամարդ, 2193 կին եւ 2771 երեխա39:

Սասունի ինքնապաշտպանական կռիվները լայն արձագանք ունեցան: Առաջադեմ Եվրոպայի համակրանքը հայերի կողմն էր: Իսկ պաշտոնական Եվրոպան լռում էր: Անուշադրության մատնվեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Մ.Խրիմյանի դիմումներն ուղղված ԱՄՆ–ի, Ֆրանսիայի, Անգլիայի կառավարություններին:

Այսպիսով արեւմտահայությունը 20–րդ դար մտավ միայնակ մնալով սուլթանական Թուրքիայի լծի դեմ պայքարում: Եվրոպական տերությունները չհրաժարվեցին Հայկական հարցը իրենց շահերին ծառայեցնելու քաղաքականությունից: Հայ ազգային–ազատագրական շարժման գործիչները, իհարկե, հասկանում էին այս իրողությունը, բայց դժվարությամբ էին հրաժարվում եվրոպական տերություններին ապավինվելու, նրանց դիմելու մտադրությունից:

Բայց 20–րդ դարի սկզբին ծավալված ազատագրական պայքարը եւ հատկապես Սասունի ինքնապաշտպանությունը դարձան կարեւոր հանգրվան արեւմտահայության բոլոր խավերին համախմբելու գործում: Եթե 19–րդ դարի 90–ական թվականներին հայ ունեւոր խավը, որը պոլսահայ



Պերպերյան վարժարանի շրջանավարտները Կ.Պոլիս, 1905թ.:
**Առաջին շարքում, աջից երրորդը՝ Ռուբեն Չիլինկիրյան:**

ամիրաների ազդեցության տակ էր եւ չէր համակրում ազատագրական պայքարին իր նեղ շահերից ելնելով. ապա 20–րդ դարի սկզբին դրությունը փոխվեց: Հայ հարուստ խավն արդեն իր վրա զգում էր թուրքական իշխանությունների ճնշման ծանրությունը: Նա աստիճանաբար դուրս էր մղվում առեւտրատնտեսական կյանքից: Ահա. այս ամենի հետեւանքով էլ հայ հարուստ խավը առեւտրականները. արդյունաբերողները. փոխեցին իրենց վերաբերմունքը: Նրանց մեծ մասը հասկացավ. որ այլեւս իրեն չի արդարացնում նախկին կեցվածքը. որ այժմ դրված է ֆիզիկական գոյության ապահովման խնդիրը: Այստեղից էլ նրա համակրանքը ազատագրական պայքարի նկատմամբ: Այդ խավի շատ ներկայացուցիչներ դարձան ազատագրական պայքարի ակտիվ մասնակիցներ...

Եվ այսպես. Ռուբեն Չիլինկիրյանի համար 20–րդ դարը սկսվեց Պերպերյան վարժարան ընդունվելով: 1901թ. լրանում էր այդ վարժարանի 25–ամյակը: Դա նշանավոր իրադարձություն էր արեւմտահայության կյանքում:

Ռեթեոս Պերպերյանի հիմնադրած վարժարանի 25–ամյակի կապակցությամբ «Բիւզանդիոն» թերթը գրել է. «Կ՛ուրախացնինք Պէրպէրեան էֆէնտիին. որովհետեւ իր հիմնած մասնավոր վարժարանն աւելի երկարակեաց կրցաւ ըլլալ. քան ազգային–հանրային միջնակարգ վարժարաններն. որք 1838 թուականէն արդէն հիմնուեցան Կ.Պոլսոյ մէջ: Ոչ այն համբաւաւոր ճեմարանն Սկիւտարի. ոչ Ազգ. Հիւանդանոցի ճեմարանը. ոչ Շահնազարեան վարժարանը. թէեւ հանրային միջոցներով. նպաստներով հաստատուած. չունեցան Պէրպէրեան հաստատութեան յարատեւութիւնը: Չենք խօսիր կեդրոնական վարժարանին վրայ. որ համեմատաբար նոր է եւ արդէն իր երկրորդ շրջանին մէջ կը գտնուի»40:

Պերպերյան վարժարանն իր ուշադրության կենտրոնում էր պահում պատրիարք Մ.Օրմանյանը այն համարելով ազգին ազնվորեն ծառայող մտավորականների դաստիարակության օրրան: Այդ էր պատճառը. որ պատրիարքը անձամբ հետեւում էր հոբելյանի կազմակերպմանը եւ հանդիսություններն էլ ինքը ղեկավարեց:

Այդ մասին է վկայում. օրինակ. 1901թ. սեպտեմբերի 25–ին Մոսկվայում բնակվող Սմբատ Շահազիզին ուղարկած պատրիարքի նամակը. որով շնորհակալություն հայտնելով Պերպերյան վարժարանի 25–ամյակի առթիվ ուղարկած շնորհավորանքի եւ 100 ֆրանկի համար նա գրում էր. «յանուն յոբելեանի պատ. յանձնաժողովոյ եւ յանուն բազմարդիւն յոբելեարին մեր շնորհակալութիւնն կը յայտնիմք Ձեզ այն թանկագին համակրանց ու սիրոյ համար. զոր կը տածէք առ Պէրպէրեան հաստատութիւնն եւ առ նորին հիմնադիր–դաստիարակն ազն. Ռ.Պէրպէրեան էֆէնտի. որոնք իրաւամբ արժանի են հանրային գնահատման ու մեծարանց ազգին ընծայած իրենց մեծամեծ արդիւնքներովն»41:

Ավելորդ չեմ համարում նաեւ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1902թ. փետրվարի 15–ին վարժարանի տնօրեն Ռ.Պերպերյանի բացիկը ուղղված Սմբատ Շահազիզին. «Քերթող–ուսուցչիդ համակրական ցոյցն ու նուէրն թանկագին քաջալեր մ'են ինծ ու վարձք մեծարժէք. եւ ի հեռաւոր Ձեր փութացումն ի մասնակցութիւն յոբելենի վարժարանիս ապացոյց է միանգամայն Ձեր վեհ ու ազգասէր ոգոյն»42:

Հանդիսության ժամանակ պատրիարքը, շնորհակալություն հայտնելով Ռ.Պերպերյանին, «գովեց, դրուատեց Պէրպէրեան վարժարանը, ի վեր հանեց անոր արդիւնքները»: Այնուհետեւ վարժարանը համեմատելով օտար վարժարանների հետ պատրիարքն ասել է. «Պէրպէրեան վարժարան ոչ իւիք նուազ է անոնցմէ, եւ մասամբ իւիք առաւել է անոնցմէ»43:

Հենց վարժարանում ուսանելու տարիներին Ռուբենը աչքի ընկավ իր ունակությամբ, ինչպես ուսման մեջ, այնպես էլ վարժարանի կյանքին ակտիվ մասնակցելով: Ռուբենի աշակերտական տարիների դասընկեր Գ.Ամատյանը վկայում է, որ Ռուբենը համարձակ էր, ուներ կազմակերպչական ջիղ: Նա ստեղծել էր աշակերտական խմբակ, որտեղ կարդում էր նաեւ իր գրած բանաստեղծությունները44:

Առաջին հայտնի բանաստեղծությունը «Բաժանման խօսքեր», որը Ռուբեն Չիլինկիրյանը նվիրել էր սիրելի տնօրեն Ռ.Պերպերյանին, տպագրվել է «Մասիս» հանդեսի 1905թ. օգոստոսյան համարում: Ռուբենը այդ բանաստեղծությունն արտասանել է վարժարանն ավարտելու հանդեսին: Ահա թե ինչ է գրել այդ մասին «Մասիսը». «Պէրպէրեան վարժարանի այս տարուան վկայականներու բաշխման հանդէսին շրջանաւարտներէն պ. Ռուբէն Չիլինկիրեան կարդացած էր իր հեղինակած գողտրիկ մէկ ոտանաւորը, «Բաժանման խօսքեր», որ ընդհանուր գնահատման արժանացաւ, եւ հանդէսին ներկայ գտնուող գրագէտ ու գրասէր անձնաւորութեանց կողմէ փափակ յայտնուեցաւ որ հրատարակուի «Մասիսի» մէջ, իբրեւ երախայրիքը ապագայ խոստացող երիտասարդի մը: Այդ փափակին գոհացում կու տանք հրատարակելով սոյն ոտանաւորը, որ կրնայ լաւ տեղ մը գրաւել «Նորերու բաժին»ին մէջ»45:

Եվ այսպես, մենք Ռուբեն Սեւակի ստեղծագործության ակունքների մոտ ենք: Համաշխարհային գրականության պատմության մեջ շատ քիչ պոետների կարելի է գտնել, որ նրանց ուղին որոշվեր հենց առաջին քայլերից: Ավելի շատ մենք հանդիպում ենք այս կամ այն պոետի պատանեկան բանաստեղծություններում միայն սեփական ուղի դուրս գալու գիտակցորեն, թե անգիտակցաբար ուրիշին նմանվելու փորձերի, երբ պոետը իր մեջ է ներառել ուրիշի մտքեր, զգացումներ ու ոճ դրանցում որոնելով իր սեփական խոհերի ու ապրումների նմանություն:

Առաջին այս բանաստեղծությամբ Ռուբենն արդեն ազգային էր: Նա այդ-

պես էլ մինչեւ վերջ հավատարիմ մնաց ազգայինին. որովհետեւ իսկական ազգայինը չուխայի նկարագրության մեջ չէ. այլ ժողովրդի ոգու մեջ է. այդ ոգին ըմբռնելու մեջ է: Ռուբեն Սեւակն իր ստեղծագործական կյանքով հաստատեց այն ճշմարտությունը. որ բանաստեղծը կարող է ազգային լինել այն ժամանակ. երբ նկարագրում է բոլորովին այլ աշխարհ. բայց այդ աշխարհին նայում է իր ժողովրդի աչքերով. վերաբերում ազգային տարերքով:

Դատելով Հովհաննես Չիլինկիրյանի առաջադիմական հայացքներից դժվար չէ կռահել. թե որդին ինչ մտքեր պետք է արտահայտած լիներ իր ստեղծած այդ խմբակում: Ամենից առաջ ասենք. որ Ռուբենը արտահայտում էր հեղափոխական տրամադրություններ. որոնց մեջ զգացվում էր իրադարձությունները սթափ գնահատելու միտում: Այս հանգամանքը ես առավելապես եմ կարեւորում. քանի որ այդ ժամանակ վարժարանում տարբեր առարկաներ էին դասավանդում նաեւ դաշնակցության որոշ անդամներ: Ահա թե ինչ է վկայում Պերպերյան վարժարանի նախկին սան Զ.Սուրենյանը: Հիշելով. որ Ռուբենին ճանաչում էր Պերպերյան վարժարանից. նա գրել է. «Ան կանուխէն արտայայտուեցաւ իբրեւ ապագայ բանաստեղծ իր շարադրութիւններով. եւ իբրեւ գործիչ իր սարքած ուսանողական եւ յեղափոխական միութիւններով. որոնց անկիւնաքարն էր եւ որ անոր կը գործակցէին Եզնիկ Քաջունի. Շահան Ռ.Պէրպէրեան. Ա.Գարակէօզեան (Զաւէն). Տիգրան Չէօկիւրեան. Յակոբ Չպուքեան»46:

Եթե նկատի ունենաք. որ Արմենակ Կարակոզյանը. Եզնիկ Քաջունին. Շնորհք Տեյմիրենճեանը դաշնակցության անդամներ էին. ապա պարզ կլինի. թե վերոհիշյալ խմբակում ինչ աստիճանի էին կրքերը բորբոքվում: Մենք միայն կարող ենք դրանց մասին ենթադրել. քանի որ առայսօր Պերպերյան վարժարանում ծավալված հեղափոխական աշխատանքի մասին քիչ տեղեկություններ են մեզ հասել:

Ռուբեն Սեւակը որքան կրքոտ ու սկզբունքային էր բանավեճերի ժամանակ. այնքան մարդկային վսեմ հատկություններ էր դրսեւորում իր հայացքները չկիսող ընկերների նկատմամբ: Այս առումով ուզում եմ հիշել դաշնակցության անդամ Արմենակ Կարակոզյանին. որը երիտթուրքական բանտի դաժան պայմաններին չդիմանալով. գուցե նաեւ որպես բողոք երիտթուրքերի հետ դաշնակցության սիրախաղի դեմ. նավթ լցրեց իր վրա եւ այրվելով վերջ տվեց կյանքին:

Դրանից այնքան ցնցված Ռուբեն Սեւակը 1909թ. մայիսի 27–ին գրեց «Ողջակէզ» բանաստեղծությունը. որտեղ կան նաեւ հետեւյալ տողերը.

«Ա՜ՉԳԸ: Ինչո՞ւ հազարներու. բիւրերու.
Դիակներուն վրայ ապրիլ այս հլու.
Այս գետնաքարշ կեանքը ստրուկ պոռնիկի...
Կեանք մուրալէն լաւ չէ՞ր մեռնիլ ուղղակի...»:

Այս ակնարկը բավականաչափ թափանցիկ է. որպեսզի հասկանալ. թե ինչ էր նշանակում երիտթուրքերի հետ համագործակցելը:

Այնուհետեւ. Ռուբեն Սեւակն իր խոսքն ուղղում է ողջակիզված ընկերոջը.

«Ո՛չ: Բանտերու աղջամուղջին մէջ անշուք.
Դիւցազնօրէն. ժայռօրէն լուռ. անշշուկ.
ԳԱՂԱՓԱՐԻ խորանին վրայ սիրակէզ
Քու պարմանի մարմինդ ըրիր ողջակէզ...
Ու քու աչքերդ հրծուանքէդ խելագար.
Կը տեսնէին թէ բոցը ինչպէ՛ս կու գար.
Կարմի՛ր. ուրա՛խ. սրբազա՛ն բոցը ահեղ.
Պարանոցէդ. մարմինէդ վեր. դէպ ուղեղ...»47:

Պերպերյան վարժարանի տնօրեն Ռեթեոս Պերպերյանը (1848–1907) ժամանակի առաջադիմական հայացքների տեր. մանկավարժության մեջ դեմոկրատական ուղղության կողմնակից էր. որը շատ էր կարեւորում անհատի բարոյական դաստիարակությունը:

Ռեթեոս Պերպերյանը ծնվել է 1848թ. հոկտեմբերի վերջերին Կ.Պոլսի Խասգյուղ թաղամասում. չքավոր արհեստավորի ընտանիքում: Վեց տարեկան հասակում զրկվում է հորից: Սովորել է Խասգյուղի Ներսեսյան վարժարանում. որն ավարտելուց հետո դառնում է այդ վարժարանի ուսուցիչներից մեկը: 1870 թվականից Պերպերյանի անունը երեւում է գրական հանդեսների եւ թերթերի էջերում: Հեղինակել է հետեւյալ աշխատությունները. «Բանք հաւատացելոց ուրուք» (1871թ.). «Առաջին տերեւք» (1880թ.). «Քաղաքական տնտեսութիւն» (1883թ.). «Մարդիք եւ իրք» (1885թ.). «Ժողովրդական զբոսանքներ» եւ «Դրամը» (1886թ.) եւ այլն48: 1907թ., մահից քիչ առաջ. Պերպերյանը հրատարակեց «Դպրոց եւ դպրութիւն» աշխատութիւնը49:

Ինչպես նշում էր «Բիւզանդիոնը». Պերպերյանն իր աշխատությունների մեջ գրել է «կեանքին դժուարութեանց յաղթելու սկզբունքների. տոկունութեան ու չարքաշութեան» մասին: Պերպերյանն «իր աշակերտներուն ուսուցած է միշտ իրենց աշխատութեանց վրայ միայն դնել յոյս. միշտ աշխատիլ եւ տքնիլ. ճակտի քրտինքով օրապահիկ հայթայթելու եւ կեանքի մրցութեան կամ պայքարին մէջ չդժուարիլ. չվհատիլ. այլ ամէն գործի միջամուխ ըլլալ. ամէն ասպարէզ ընդգրկել. խորհելով. թէ անպատիւ չէ բնաւ ոեւէ աշխատութիւն եւ թէ գործողն է. որ պատուաւոր կը հանդիսացնէ ամէն գործ»50:

Ռ.Պերպերյանը հարգանքով էր վերաբերում իր աշակերտների կարծիքներին. չէր դժգոհում. եթե լսում էր տարբեր տեսակետ. «ինք կը լուսաւորէ միայն եւ կը պարզաբանէ ամէն դրութիւն. ամէն վարդապետութիւն. օգտակար կը բացատրէ. բայց առանց սահմանափակելու կամ սեղմելու աշակեր-

տաց բնական հետաքրքրութիւնը. կամ ինքնածին տարակոյսի ամպերը, զորս սակայն կը ջանայ փարատել ճշմարտութեան լուսով»:

Ռ.Պերպերյանը հասարակական կյանքի զարգացման տարբեր հարցերին մոտենում է իր ժամանակի առաջավոր դիրքերից: Անդրադարձել է սոցիալական խնդիրներին, պաշտպանել է իրավազրկվածներին: «Ընկերական նիւթերու վրայ,– գրում էր «Բիւզանդիոնը».– իր խորհրդածութիւնք եւ գրական համով արձակը կը մրցին իր քերթողական խանդին եւ չափաւ լեզուին հետ»51:

«Մարդիք եւ իրք» աշխատության մեջ անդրադառնալով հասարակական կյանքում կնոջ ունեցած դերին Ռ.Պերպերյանը գրել է. «Կինը միմիայն թշուառացուցիչ եւ անիծաբեր էակ համարիլ, մինչդեռ երբ մանուկ է մարդ իր մօր քով միայն երջանիկ է նա. երբ երիտասարդ իր սիրեկանին քով, երբ հասուն այր իր ամուսնոյն քով. մինչդեռ կնոջ անոյշ ծայնը մեր կրքերը կը խաղաղէ, անոր ժպիտը մեր վիշտերը կ'ամոքէ. անոր համբոյրը մեր ճակտու կնճիռը կը փարատէ. անոր գգուանքը կը թեթեւէ մեր բեռն ու կը սրտապնդէ զմեզ կենաց կռուոյն մէջ: Կա՞յ արդեօք աւելի անոյշ բառ մը քան մայր. քոյր. ամուսին. դուստր բառերը եւ կանայք են որ այդ քաղցր եւ նուիրական անուանց տակ կը ծառայեն երջանկացնելու մեր օրերը»52:

19–րդ դարի 70–80–ական թվականներին շարունակվում էր բուռն բանավեճը գրաբարի եւ աշխարհաբարի կողմնակիցների միջեւ: Ռ.Պերպերյանը պաշտպանում էր աշխարհաբարը: Նա «հին հայերէնի յատկութիւնը փոխադրեց նոր հայերէնին մէջ»: «Եւ երբ,– շարունակում է «Բիւզանդիոնը».– այսօր նոր գրողներ աւելի կատարեալ աշխարհաբարի մը կը հետեւին. բան մը որ տարակոյս չի վերցներ. ոչ նուազ անտարակուսելի է թէ շարադրութեան կոկիկ ու պայծառ այս ձեւին գլխաւոր պատճառներէն մին եղած է նաեւ Պէրպէրեան»53:

Ռ.Պերպերյանը մեծ ուշադրություն էր դարձնում իր աշակերտների համակողմանի կրթությանն ու դաստիարակությանը: Լավատեղյակ լինելով մանկավարժության առաջավոր սկզբունքներին ու մեթոդներին Պերպերյանը շատ էր կարեւորում հայոց պատմության ու գրականության դասավանդումը. այն համարելով հայրենասիրությամբ դաստիարակելու կարեւոր միջոց: Վարժարանում կազմակերպված միջոցառումները նվիրված Վիկտոր Հյուգոյին. Լ.Տոլստոյին. Մ.Գորկուն եւ այլ նշանավոր մարդկանց կյանքին ու գործին. մեծապես նպաստում էին աշակերտների մտահորիզոնը ընդլայնելուն:

Ռ.Պերպերյանն այն եզակի մանկավարժներից էր. որ վարժարանն ավարտելուց հետո էլ իր նախկին սաներին պահում էր ուշադրության կենտրոնում. օգնում նրանց. օգտակար խորհուրդներ տալիս կյանքի շատ հարցերում: Սերն ու հարգանքը փոխադարձ էին: Եվ աշակերտները ձգտում էին

կյանքում ու գործի մեջ նմանվել իրենց սիրելի ուսուցչապետին, ինչպես սիրով նրանք անվանում էին Ռ.Պերպերյանին:

Ռեթեոս Պերպերյանը մահացավ 1907թ.: Պերպերյան վարժարանը գոյատեւեց մինչեւ 20–րդ դարի քսանական թվականների սկիզբը:

Ռ.Պերպերյանի մահը մեծ կորուստ էր Ռուբեն Սեւակի համար: Նա զրկվեց ազնիվ խորհրդատուից. հավատարիմ հենարանից: Սիրելի ուսուցչի նկատմամբ իր վիշտը եւ խոր զգացումները Ռուբեն Սեւակը արտահայտել է «Ռ.Պէրպէրեանի հիւանդութիւնը եւ մահը» հոդվածում54:

Ռուբենը հենց առաջին տարուց գրավեց վարժարանի տնօրենի ուշադրությունը: Պերպերյանը Ռուբենին վերաբերում էր հայրական ջերմությամբ: Նա հետեւում էր նրա ուսման ընթացքին եւ կարեւոր դեր խաղաց Ռուբենի հետագա ճակատագրում: Այդ նրա եռանդուն խորհրդով էր. որ Ռուբենն ընտրեց բժիշկ դառնալու ճանապարհը:

Ինչո՞ւ հատկապես բժիշկ դառնալ: 20–րդ դարի սկզբին արեւմտահայ իրականության մեջ զգալի թիվ էին կազմում ուսուցիչները. փաստաբանները. վաճառականները. լրագրողները. գրողները: Եվ նրանց մեծ մասն իր պարտքն էր համարում զբաղվել ազգային հասարակական–քաղաքական գործերով հաճախ նաեւ հաշվի չառնելով այդ ասպարեզում իրենց կարողությունները:

Ռ.Պերպերյանը. որը քաջատեղյակ էր գավառներում տիրող թշվառությանը. մտահոգված էր նպաստել այնպիսի մասնագետներ ունենալուն. ինչպիսին բժշկությունն էր: Իսկ բժշկի մասնագիտությունը շատ էր անհրաժեշտ գավառների հայ բնակչությանը: Այսպիսի մոտեցումը, անշուշտ. հայրենասիրական էր: Եվ դրա արդյունքն այն եղավ. որ Հովհաննես Չիլինկիրյանի ջերմ հավանությամբ Ռուբենը. 1905թ. ավարտելով վարժարանը. մեկնեց Շվեյցարիա եւ հաջողությամբ ընդունվեց Լոզանի հռչակավոր համալսարանի բժշկական ֆակուլտետ: Հայրը. որ անհուն սիրով փայփայում էր Ռուբենին բժիշկ դարձած տեսնելու երազանքը. հոգում էր նրա բոլոր ծախսերը:

Ռուբեն Չիլինկիրյանը Լոզան մեկնելիս ստացավ նաեւ պատրիարք Մ.Օրմանյանի օրհնությունը: Պատրիարքը մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում Եվրոպա մեկնած հայ ուսանողներին. հոգ տանում. որ ուսումն ավարտելուց հետո նրանք ապայման վերադառնան հայրենիք: Իսկ ինչ վերաբերում էր Հովհաննես Չիլինկիրյանին, ապա նա համոզված էր, որ իր որդին համալսարանն ավարտելուց հետո կվերադառնա ու ազնվորեն կծառայի իր ժողովրդին:

Կարծում եմ արժե մի թռուցիկ հայացք ձգել 20–րդ դարի սկզբի Շվեյցարիայի ու Լոզան քաղաքի վրա. որպեսզի հնարավոր լինի պատկերացում կազմել Ռուբեն Սեւակի ապրած երկրի ու քաղաքի միջավայրի մասին:

Շվեյցարիան տասնամյակներ շարունակ դարձել էր տարբեր երկրներից եւ

հատկապես Ռուսաստանից վտարանդի հեղափոխականների կենտրոն: Իհարկե. քիչ չէին նաեւ սովորելու նպատակով այստեղ եկած երիտասարդներ Ռուսաստանից. որոնց մեջ կային նաեւ կովկասահայ տղաներ ու աղջիկներ:

Կարո՞ղ էր բնավորությամբ ակտիվ ու շատ մարդամոտ Ռուբենը կտրված մնալ այդ միջավայրից: Իհարկե. ոչ: Այդ վտարանդի հեղափոխականների հետ շփումները մեծապես նպաստեցին Ռուբեն Սեւակի քաղաքական հայացքների բյուրեղացմանը: Լոզանում սովորելու տարիներին Ռուբեն Սեւակը հնարավորություն ունեցավ նաեւ շփվել այստեղ գտնվող տարբեր երկրներից. հատկապես Ռուսաստանից եկած ուսանողների հետ. որոնց մեջ քիչ չէին կովկասահայերը:

1906թ. մայիսի 22–ին ընկերներից մեկին ուղարկած նամակում Ռուբեն Սեւակը. պատմելով ռուս ուսանողների հետ շփումների մասին. հայտնում է. թե «ես հիմա քիչ շատ կը հասկնամ իրենց լեզուն» եւ նրան խորհուրդ տալիս նույնպես սովորել ռուսաց լեզուն ընդգծելով. որ «գալ տարի պէտք պիտի ըլլայ քեզի»55:

Լոզանը դարձել էր ռուս վտարանդի հեղափոխականների բնակավայրերից մեկը: Նրանց հետ Ռուբեն Սեւակը հանդիպում էր ռուս ուսանողների միջոցով: Նա բուռն հետաքրքրվում էր Ռուսաստանում ստեղծված դրությամբ: Հենց նրանց միջոցով էլ Ռուբեն Սեւակը ավելի մոտիկից ծանոթացավ ռուս նշանավոր գրողներ Լ.Տոլստոյի. Ա.Չեխովի. Մ.Գորկու. հասարակական գործիչ Ա.Սկիտալեցի. մյուսների ստեղծագործություններին: Այդ գրողները Ռուբեն Սեւակի համար այնքան հոգեհարազատ էին. որ նա ձեռք էր բերել նրանց լուսանկարները եւ պահում էր իր գրքերի մեջ:

Իսկ ինչո՞վ էին ռուս գրողները գրավել Ռուբեն Սեւակին: Այս հարցին պատասխանելու համար համառոտակի ծանոթանանք նրանց հայացքներին:

Ռուս մեծ գրող Լ.Տոլստոյը ազնիվ ու օրինավոր մարդկանց կոչ էր անում միավորվել հանուն արդարության ու բարության. հանուն իրենց ժողովրդին ծառայելու: Նա ամենից առաջ դիմեց ժողովրդի կրթված մասին մտավորականությանը: Բայց որպեսզի միավորվել արդարության համար մղվող պայքարում. հարկավոր է պատասխանել երկու գլխավոր հարցի ո՞վ է պատասխանատու տեղի ունեցող այլասերվածության համար եւ ի՞նչ է հարկավոր փրկության համար:

Լ.Տոլստոյը բոլոր ազնիվ մարդկանց խնդիրն էր համարում նախ հասկանալ. հետո ժողովրդին բացատրել այդ անհրաժեշտ հարցերի պատասխանը: Նկատի ունենալով Լ.Տոլստոյի ունեցած դերը Ավետիք Իսահակյանը հարցնում էր. «Ո՞ւր են այն մարդիկ. Տոլստոյի պես. որ ապրում են միայն ոգով ու ճշմարտությամբ»56: Ռուբեն Սեւակն այդ մարդկանցից մեկն էր. որը ոչ միայն կիսում էր Լ.Տոլստոյի գաղափարները. այլեւ մտերիմներին երաշխավորում կարդալ ռուս մեծ գրողի գլուխգործոցը57:

Մ.Գորկին ռուս իրականության այն խոշոր դեմքերից մեկն է, որը խոր ազդեցություն է թողել իր ժամանակակիցների մտածողության վրա ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Մ.Գորկին վճռակամորեն հանդես էր գալիս բռնության դեմ եւ պայքարում էր աշխատավոր մարդու երջանկության համար: Մ.Գորկին համակրանքով էր վերաբերում հայ ժողովրդի ազգային–ազատագրական պայքարին եւ 1905թ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ պաշտպանեց հայ ժողովրդի շահերը:

«Մաքսիմ Գորկի.– գրել է Ավետիք Իսահակյանը.– ըմբոստություն հասարակության դեմ, բողոք, կռիվ վերափոխելու կյանքը, իրականությունը, մարդու փառաբանումը, պաշտամունքը, իրականությունը դասավորել նրան երջանկացնելու, ուժեղացնելու համար»58: Ռուբեն Սեւակին Մ.Գորկու հենց այդ դիրքորոշումն էր գրավել:

Ա.Չեխովը թեեւ կրթությամբ բժիշկ էր, բայց նա չէր կարող անտարբեր մնալ Ռուսաստանի, ռուս հասարակ մարդու ճակատագրի նկատմամբ եւ իրեն նվիրեց հասարակական օգտակար աշխատանքի: Ճիշտ է, Ա.Չեխովը հայտնի բժիշկ էր, նույնիսկ իր կյանքը վտանգի տակ դրեց խոլերայով հիվանդներին փրկելու համար, բայց նրա տարերքը գրականությունն էր, այդ գրականության միջոցով իր ժողովրդին ծառայելն էր:

«Չեխովը,– գրել է Ավ. Իսահակյանը.– գալիք ժամանակների մարդն է, անդասակարգ իրավակարգի քաղաքացին, գիտության, աշխատանքի ու պրոգրեսի խանդավառ մունետիկը»59: Հայ իրականության մեջ Ռուբեն Սեւակն այդ խանդավառ մունետիկներից մեկն էր:

Ռուս նշանավոր հասարակական գործիչ, գրող, ժուռնալիստ Ա.Սկիտալեցը համակրանքով էր վերաբերում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում նաեւ արեւմտահայության ազատագրական պայքարին: Նա մի շարք հոդվածներ նվիրեց երիտթուրքական հեղափոխությանը, ճիշտ դիրքերից գնահատեց թուրքական ազգային բուրժուազիայի շահերն արտահայտող կուսակցության ռեակցիոն էությունը:

1910թ. Ա.Սկիտալեցը հրատարակեց «Թուրքական սահմանադրության երկու տարին» աշխատանքը, որով մերկացնում էր այդ սահմանադրությունը որպես օսմանյան նացիոնալիզմի դրոշ: Իրականում, գրում էր նա, այդ սահմանադրությունը պարունակում էր վերացական գաղափարներ, խաբեություն էր եւ ուղղված էր Թուրքիայում ապրող քրիստոնյա ժողովուրդների իրավունքների սահմանափակմանը60:

Ռուբեն Սեւակին հոգեհարազատ էին նաեւ եվրոպական գրողներից հատկապես Վիկտոր Հյուգոն եւ Հայնրիխ Հայնեն: Ռուբեն Սեւակը թարգմանել է Հ.Հայնեի մի շարք բանաստեղծություններ: Նրան շատ սրտամոտ էր գերմանական մեծ բանաստեղծի գաղափարախոսությունը: Որպեսզի ասվածը հասկանալի լինի, համառոտակի ծանոթանանք Հայնրիխ Հայնե-

ի կյանքին ու գործին: Իր ստեղծագործական կյանքի հենց արշալույսին Հայնեն խզեց կապերը գերմանական ռեակցիոն ռոմանտիկներից, որոնք չէին տարբերում հասարակական դասակարգերն ու նրանց միջեւ եղած հակասությունները:

1815–1825թթ. ուսանողական տարիները կարեւոր փուլ էին Հայնեի մտավոր եւ ստեղծագործական զարգացման համար: Այս ժամանակ նա դրսեւորեց համակրանք Գերմանիայի դեմոկրատական վերածննդի նկատմամբ: Բեռլինում Հայնեն մեծ մտածող, փիլիսոփա Հեգելի ուսանողն էր: Ֆ.Էնգելսը գրել է. «Ոչ հետադիմականները, ոչ էլ լիբերալները չեն հասկացել Հեգելին, միայն մեկն է հասկացել, դա Հայնրիխ Հայնեն է»61:

Եվ իսկապես, Հայնեն խորապես ըմբռնեց Հեգելի հայտնի «Ամբողջ իրականը բնական է» թեզի իսկական հեղափոխական նշանակությունը: «Գերմանիայում կրոնի եւ փիլիսոփայության պատմության շուրջ» գրքում Հայնեն Հեգելին անվանում է ոչ միայն փիլիսոփաներից մեծագույնը, ոչ միայն նրան բարձր է դասում Կանտից ու Ֆիխտեից, այլեւ համոզմունք հայտնում, որ գերմանական դասական փիլիսոփայությունը նախապատրաստում է հեղափոխական հզոր պայթյուն:

1830թ. հուլիսին Ֆրանսիայում սկսվեց հեղափոխություն, եւ Հայնեն որոշեց մեկնել «ազատության երկիր»: Բուրբոնների դինաստիայի տապալումը Հայնեն ընդունեց որպես բռնատիրության դեմ ժողովրդի հաղթանակ: Սակայն Ֆրանսիայում Հայնեն համոզվեց, որ հեղափոխությունից, որի համար բարիկադների վրա կռվում էին Փարիզի աշխատավորները, օգտվեց ֆինանսական բուրժուազիայի փոքրաթիվ խումբը: Բանկիր Լաֆֆիտը հայտարարեց, թե «այժմվանից կտիրապետեն բանկիրները», որով էլ «մատնեց հեղափոխության գաղտնիքը»62:

Հուլիսյան հեղափոխության դասերից Հայնեն եզրակացրեց, որ ոչ թե գաղափարները, այլ շահերն են կառավարում աշխարհը:

1832թ. պառլամենտական ընդդիմության լիդեր, գեներալ Լամարկի թաղման ժամանակ պայթած հանրապետականների ապստամբության ականատես Հայնեն հանգեց այն մտքին, որ «իր հաղթանակով ժողովուրդը ոչինչ ձեռք չբերեց, բացի զղջումից ու մեծ կարիքից»: Ահա այս ժամանակ էլ Հայնեն մերձեցավ ֆրանսիական ուտոպիստ–սոցիալիստներին, դարձավ Սեն Սիմոնի հիմնած «Գլոբ» թերթի մշտական հյուրը: 1831թ. մայիսի 22–ին «Գլոբ» թերթը գրում էր. «Գերմանական նշանավոր գրող դ–ր Հայնեն նախորդ օրվանից գտնվում է Փարիզում: Նա երիտասարդ ու համարձակ այն մարդկանցից մեկն է, որոնք պաշտպանում են առաջընթացի գործը չվախենալով, որ իրենց վրա կբեւեռեն պալատականների ու արիստոկրատների ատելությունը: Պարոն Հայնեն, լրջությամբ ու բարեսրտությամբ լցված իր գրիչը նվիրել է Գերմանիայի ժողովրդական շահերի պաշտպանությանը»:

Հայնեն բարձր էր գնահատում Սեն Սիմոնի ուսմունքը, հատկապես նրա բարոյահոգեբանական կողմը: Սենսիմոնականների ազդեցությամբ Հայնեն վերջնականապես համոզվեց, որ արտոնյալ դասերը միմյանց միջեւ վիճում են կառավարման ձեւի շուրջ միայն նրա համար, որպեսզի բացառեն կյանքի հիմնական հարցերը եւ որպեսզի տարբեր ձեւերով ու անուններով շահագործեն ժողովրդին:

Հայնեն ընդունում էր, որ հեղափոխության խոր հարցերը կապված են ոչ թե կառավարման ձեւերի ու անհատների հետ, այլ բացառապես «ժողովրդի նյութական բարեկեցության հետ»: Նա Գերմանիայում հեղափոխության իմաստը տեսնում էր ոչ միայն նրանում, որ տապալվեր ֆեոդալ–իշխանների տիրապետությունը, այլեւ նրանում, որ հասարակության մեջ կատարվեն խոշոր սոցիալ–տնտեսական տեղաշարժեր: Նա համոզվեց, որ Գերմանիայի քաղաքական հետամնացությունը կապված է նրա տնտեսական հետամնացության հետ:

Իր հայացքներում Հայնեն առաջ անցավ սենսիմոնականներից եւ պարզ տեսնում էր, որ առանց ակտիվ պայքարի չի հաջողվի հաղթանակ տանել պորտաբույծների ու շահագործողների դեմ: Խորապես ուսումնասիրելով Ֆրանսիայի բանվորական շրջանների հեղափոխական տրամադրությունները Հայնեն հանգեց այն եզրակացության, որ բանվորների հաղթանակը անխուսափելի է:

Սոցիալիզմի գաղափարին Հայնեի մոտենալը վերաբերում է Կ.Մարքսի հետ բարեկամության շրջանին (1843–1844թթ.): Մարքսի անմիջական ազդեցությամբ Հայնեն գրեց իր լավագույն «Ժամանակակից բանաստեղծությունները» եւ երգիծական պոեմը «Գերմանիա, ձմեռային հեքիաթը»:

Այդ տարիներին Հայնեն ձեւավորվեց որպես քաղաքական լիրիկ բանաստեղծ: Պոետը ոչ միայն տվեց հեղափոխական մարտական պոեզիայի փայլուն օրինակներ, այլեւ դարձավ իր ժամանակաշրջանի առաջադեմ բանաստեղծների ուսուցիչը: Նա հեղափոխական քաղաքական պոետից պահանջում էր կոնկրետություն, մարտական ուղղվածություն, գաղափարական հագեցվածություն: Հայնեն դարձավ քաղաքական սատիրայի հիմնադիրը:

Հայնեի կյանքի վերջին 10 տարիները (1846–1856թթ.) եղան բանվոր դասակարգի քաղաքական արագ հասունացման տարիներ: Բայց այդ տարիները պոետի համար եղան «ներքնակային գերեզմանում» տանջանքով մեռնելու տարիներ, որտեղ նա անշարժ պառկած էր ողնուղեղի դաժան հիվանդությամբ: Նա տարավ ծանր ցավեր, բայց մինչեւ մահ չկորցրեց ստեղծագործելու ուժը: Հայնեն հետեւում էր 1848թ. Գերմանիայում սկսված հեղափոխության զարգացմանը եւ ուշադրությամբ կարդում էր Մարքսի «Նոր հռենոսյան լրագիրը»:

Իր ստեղծագործություններից «Լյուտեցիա»–ի ֆրանսիական հրատարակության առաջաբանում Հայնեն գրում էր, թե իրեն դժվար է եղել գրաքննության պայմաններում, «Ընդհանուր լրագրի» էջերում տպագրված հոդվածներում հիշատակել կոմունիստների մասին: Սակայն, նշում է նա, այնուամենայնիվ, հաջողվել է նրանց մասին խոսել: «Ես,– գրել է Հայնեն,– շատ զգուշորեն ընդունել եմ, որ ապագան պատկանում է կոմունիստներին... ինձ մեծ տխրություն է համակում, երբ մտածում եմ կործանման մասին, որով հաղթական պրոլետարիատը սպառնում է իմ բանաստեղծություններին, որոնք գերեզման կիջնեն հին ռոմանտիկ աշխարհի հետ միասին: Եվ չնայած դրան, անկեղծորեն գիտակցում եմ այդ կոմունիզմը այնպիսի աստիճանի թշնամական իմ հակումներին ու շահերին, իմ հոգու վրա թողնում է հմայիչ տպավորություն, որից չեմ կարողանում ազատվել»:

Չնայած այս ամենին, Հայնեն կոմունիզմի հաղթանակի մեջ տեսնում էր տրամաբանական ելք բռնության ու անարդարության թագավորութունից: «Մեղադրական վճիռը,– գրում էր Հայնեն,– վաղուց հնչել է այդ հին հասարակության վրա: Թող իրականանա արդարությունը: Թող կործանվի այդ հին աշխարհը, որտեղ անմեղությունը պղծվել է, եսասիրությունը բարեկեցության մեջ է, մարդը շահագործում է մարդուն»:

Իր ամբողջ կյանքում Հայնեն պայքարում էր գերմանական քրիստոնյա նացիոնալիստների, մտավոր սահմանափակությամբ հետադեմների դեմ, որոնց մասին գրել է. «Ես ամբողջ կյանքումս ատել եմ ու պայքարել նրանց դեմ եւ այժմ, երբ սուրը ընկնում է մեռնողի ծեռքից, ես սփոփված եմ այն համոզմունքով, որ կոմունիզմը, որի ճանապարհին նրանք առաջինը կհայտնվեն, նրանց կհասցնի վերջին հարվածը եւ, իհարկե... ոտքով կճզմի նրանց, ինչպես ճզմում են սողունին»:

1848թ. հեղափոխության պարտությունից հետո Հայնեն չփախավ ռեակցիայի ճամբար:

Հայնրիխ Հայնեն մեռավ 1856թ. փետրվարի 17–ին: Այդ ժամանակից մինչեւ այժմ վեճ է գնում պոետի ժառանգության շուրջ, նրա ստեղծագործությունը ճիշտ մեկնաբանելու շուրջ: Պաշտոնական բուրժուական գրականության պատմությունը Հայնեին ընդունում է որպես «մաքուր լիրիկ» մի կողմ նետելով նրան որպես քաղաքական մտածող ու սուր սատիրիկ:

Սակայն անհնար է հասկանալ Հայնեի բարդ ստեղծագործությունը. եթե չես գիտակցում, որ Հայնե–մտածողը եւ Հայնե–բանաստեղծը իրարից անբաժան են:

Ավարտելով Հայնեի մասին խոսքս առայժմ ուզում եմ փաստել, որ հայ իրականության մեջ, ըստ երեւույթին, Ռուբեն Սեւակն առաջինն էր, որ, մոտիկից ծանոթանալով գերմանական մեծ բանաստեղծի կյանքին ու գաղափարներին, այն ոչ թե ընդօրինակեց, այլ զարգացնելով հայ գրականութ-

յան մեջ մի նոր էջ բացեց քաղաքական լիրիկայի ասպարեզում:

Ինչպես ասվեց վերեւում. Ռուբեն Սեւակը առանձնակի ջերմությամբ ու հետաքրքրությամբ էր շփվում Կովկասից եկած հայ ուսանողների հետ. նրանց հետ քննարկում հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող խնդիրները:

Լոզանում գտնվելու տարիներին Ռուբեն Սեւակը մասնակցում էր «Արմենիա» հայ ուսանողական միության հավաքներին: Այդ միությունը ղեկավարում էր Հայ հեղափոխական դաշնակցությունը: Ռուբենը կրքոտ ելույթներ էր ունենում այն ժամանակվա հասարակական գիտակցությունը հուզող բազմաթիվ հարցերի շուրջ. որոնց մեջ առանձնապես կարեւորվում էին Թուրքիայում գործող հակասուլթանական կազմակերպությունների համախմբման խնդիրները:

Ռուբեն Սեւակին ու նրա համախոհներին, անշուշտ. պետք է որ անհանգստացներ հատկապես երիտթուրքերի հետ դաշնակցության համագործակցության պարագան: Նա չէր կարող մոռանալ իր հոր իմաստուն խոսքերն այն մասին. որ հարկավոր է հասնել ամենից առաջ հայկական ուժերի համախմբմանը:

Իհարկե. դժվար պետք է լիներ Ռուբեն Սեւակի համար հանդես գալ մի լսարանում, որտեղ ներկաների մեծամասնությունը չէր կիսում նրա հայացքները: Ռուբեն Սեւակն. անշուշտ, զգում էր երիտթուրքերի հետ համագործակցության ամբողջովին վնասակար լինելը: Նա համոզված էր, որ այդ համագործակցությունը հեռանկար չի ունենա եւ միայն վնաս կբերի հայ ժողովրդին: «Կարելի՞ է երեւակայել կամուրջ մը. որու մէկ ծայրը անդունդին յենուած ըլլայ» – ահա թե Ռուբեն Սեւակը ինչպես էր արտահայտում իր համոզմունքը:

Հնչակյան կուսակցության ղեկավարներից Ստեփան Սապահ–Գուլյանը իր կուսակցության վերաբերմունքը շատ որոշակի արտահայտեց. «Մենք նրանց հետ որեւէ գործ ունենալ չենք կարող. ժամանակն այլեւս անցած է հասկացողութեան գալու: Մեր ճակատագիրը. մեր բախտը նրանցից պիտի բաժանենք. վճռականապէս. առանց տատանուելու»63:

Երիտթուրքերի հետ համագործակցության անհեռանկար ու վնասակար լինելու մեջ շատ գործիչներ էին համոզված. որոնց տեսակետը կարծես ընդհանրացած ձեւակերպեց Արշակ Չոպանյանը. «Փարիզի վերջին կոնգրեսին մէջ սպանուեցաւ... Հայկական հարցը»64:

Բոլորն էին զգում այդ համագործակցության վտանգավորությունը: Բոլորն էին զգում, որ երիտթուրքերը նույն երիտօսմաններն են, միայն դիմակը փոխած. որ նրանցից հայությունը որեւէ օգուտ չի ունենա: Բոլորն էին զգում. թե ինչ է բերում այդ վտանգավոր խաղը: Բոլորն էին զգում. բացի դաշնակցության լիդերներից. որոնք կորցրել էին իրավիճակը սթափ գնահատելու ունակությունը:

Եվ դաշնակցությունն իր 4–րդ ընդհանուր ժողովում (1907թ. գարուն) հաշվի չառավ բուն իրողությունը, հրապուրվելով երիտթուրքերի մեղրածոր քաղաքական խոստումներին ընդունեց հետեւյալ որոշումը. «Միեւնոյն ատեն թուրքերու մէջ տարածուած անհիմն թիւրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտ կը համարի յայտարարել, որ դաշնակցութիւնը Թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատական ոչ մի ծգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարեալ հաւասարութիւն եւ տեղական լայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն հայկական վեց վիլայէթներուն մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը. ինչ որ չի հակասեր միւս ազգերու իրաւունքին»65:

Այս դիրքորոշումը ավելի հստակեցվեց 1908թ. սեպտեմբերի 1–ին դաշնակցության ներկայացուցիչների խորհրդի հատուկ շրջաբերականի մեջ, որտեղ ասվում էր. «Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը եւ կը վարէ իր տեղական գործերը, հիմնուած ապակեդրոնացման սիստեմի վրայ, որմէ հաւասար կերպով պիտի օգտուին երկրի մէջ ապրող բոլոր ազգերը:»66:

Ի վերջո, 1908թ. հուլիսի 24–ին հաղթեց անարյուն հեղափոխությունը: Դա անարյուն հեղաշրջում էր, որ կատարեց թուրքական բանակը: Իշխանությունն անցավ երիտթուրքական կուսակցության ձեռքը: Վերականգնվեց 1876թ. սահմանադրությունը: Մ.Վարանդյանը գրում էր. «Ողջ Պոլիսը կը ծփար անօրինակ խանդավառութեան մէջ, Հայոց ազգային ժողովը հրաժարեցուց Օրմանեան պատրիարքը եւ Երուսաղէմէն ետ բերուեցաւ աքսորական Իզմիրլեանը, որուն մուտքը Կ.Պոլիս կատարուեցաւ արտակարգ շուքով, ժողովրդական խելահեղ ցոյցերու մէջ...»67:

Մ.Վարանդյանը իր աշխատության մեջ բերում է Ակնունու 1908թ. օգոստոսի 8–ի նամակը, որն ուղարկվել էր «Դրօշակի» խմբագրություն: Երիտթուրքերի հետ համագործակցության ջատագով եւ թուրքական հեղափոխությամբ ոգեւորված Ակնունին գրում էր. «Չէք կարող երեւակայել, թէ որքան ուրախ եմ ձեզ գրել այս քաղաքից, առանց երկիւղ կրելու երեկուան ամենազօր լրտեսութիւնից, մի քաղաքում, ուր 32 տարի փակուած բերաններ ը մի գլուխ «ազատութիւն» են գոչում... Ամբոխը գինովցած է: Թող այդպես լինի: 30 տարի լռելուց յետոյ, 30 օր կարելի է գոռալ ու գինովնալ... Երբ կը վերադառնան ռեակսիոնի սեւ օրերը, նորից կարող կը լինենք մտնել «լռութեան ակումբը»68:

Երիտթուրքական հեղափոխությամբ ոգեւորված Դաշնակցությունը հրապարակավ հրաժարվեց ազգային–ազատագրական պայքարից եւ առանց այլեւայլության հայտարարեց. «Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը»69:

«Գինովցած» Ակնունին էր (Խաչատուր Մալումյան), որ ասում էր. թե

«Դաշնակցութեան գերագոյն նպատակներից մէկն էլ պիտի լինի օսմանեան սահմանադրութեան պաշտպանութիւնը... իթթիհադի հետ համերաշխ գործակցութիւնը»70: Ակնունին այնքան էր ոգեւորվել, որ իր կողմնակիցներին հորդորում էր առանց այլեւայլության վստահել երիտթուրքերի ղեկավարներին, հավատալ նրանց խոստումներին: Դաշնակցության ղեկավարները, նույնիսկ խախտելով ամեն մի կուսակցության համար պարտադիր կանոնները. երիտթուրքերին տեղյակ էին պահում իրենց ծրագրերի մասին, հայտնում շարքերում եղած տրամադրությունները: Ի՞նչ էր սա. կույր ինքնամատնություն. թե՞ կույր ինքնախաբեություն:

Այսպիսի իրավիճակը մեղմելու նպատակով դաշնակցության անդամ Ա.Աստվածատրյանը հետագայում գրել է, թե «դեռ հաւատ ու յոյս կար դրական գործ կատարելու մասին, դեռեւս ակնկալութիւններ կային օսմանեան սահմանադրութիւնից»71:

Դաշնակցությունն այնքան էր ոգեւորվել. որ նրա ղեկավարները հայտարարում էին. թե ով իթթիհադի դեմ է հանդես գալիս, օգնում է Աբդուլ Համիդին եւ երիտթուրքերին պաշտպանելն ու զորացնելը, ըստ նրանց, պետք է լիներ «մեր ազգային եւ քաղաքական պարտականութիւնը»72:

Պակաս «գինովցած» չէր նաեւ Կարո Սասունին, որը թուրքական սահմանադրության հռչակումը «մեծ բարիք» համարեց հայության համար եւ գրեց, թե «սահմանադրութեան շնորհիվ հայութիւնը սկսաւ կազդուրւել»73:

Դաշնակցությունն իր քարոզչությունն այնքան ուժեղ էր տանում, որ դրա հետեւանքով մեծացավ երիտթուրքերից փրկություն սպասողների թիվը: Դաշնակցության անդամ. քահանա Հովհաննես Հաճյանը գրում էր, թե «Դաշնակցութեան նպատակն էր պահել սահմանադրութիւնը եւ որի միջոցով էլ ապահովել ու հարթել հայ ժողովրդի ազգային զարգացման ու քաղաքական ձգտումների ճամբան: Դաշնակցութիւնն այդ մղումն ստացաւ հայ ժողովրդի ընդհանուր մտայնութիւնից եւ ինքն էլ այդ յոյսով իթթիհադականների հետ անկեղծութեամբ լծուեց գործի: Այդպես էր այն օրուայ հայ մտաւորականութեան եւ ազգային–քաղաքական մտքի հոգեբանութիւնը»74:

Հետագայում գրած այս խոսքերով դաշնակցական քահանան իր կուսակցությանը պատասխանատվությունից փրկելու նուրբ խաղ է անում երիտթուրքերի հետ համագործակցությունը վերագրելով հայ ժողովրդի ընդհանուր մտայնությանը:

Իրականությունը կեղծելու մեջ դաշնակցական քահանայից շատ առաջ է անցնում այդ կուսակցության ղեկավարներից Կարո Սասունին: Իրերի ընթացքը նա այնպես է ներկայացնում, թե իբր արդեն 1911թ. աշնանից Դաշնակցությունը խզել էր իր կապերը երիտթուրքերի հետ: «Այդ թուականէն յետոյ.– գրում էր նա.– ոչ միայն գործակցութիւն մը գոյութիւն չուներ պետական տիրող կուսակցութիւններու միջեւ. այլեւ ընդհակառակը, բալկանեան

պատերազմի բերումով Հայկական հարցի հետապնդումն ու յաջողութեամբ լուծումը թշնամական դարձուցած էր անոնց յարաբերութիւնները»75:

«Գինովցած» գործիչներն այնքան էին տարված թուրքական սահմանադրությամբ, որ հնարավոր համարեցին անարդար կարգերի դեմ պայքարել պառլամենտական միջոցներով եւ ժամանակավորապես դադարեցնել նախկին տակտիկան զինված պայքարը76:

Ավելորդ չեմ համարում հիշել ոգեւորված գործիչներ Ս.Վրացյանին, Ռ.Զարդարյանին, Ռ.Դարբինյանին, որոնք ամբողջապես մոռանալով անցյալը ամբողջ էությամբ մտել էին թուրքական նոր պետության վերափոխման, վերաշինման պղտոր ջրերը: Ս.Վրացյանը քարոզում էր վերափոխել թուրքական դպրոցական համակարգը, Ռ.Դարբինյանը գրած հոդվածներով առաջարկում էր բարեփոխումներ կատարել Թուրքիայի տնտեսական կյանքում...

Դաշնակցության ղեկավարները լցված էին կույր հավատով, այնքան էին ոգեւորվել, որ հիվանդ Ակնունուն Թալեաթի եւ երիտթուրքական մյուս պարագլուխների այցելությունը գնահատեցին որպես սերտ հարաբերության արդյունք: Իմիջիայլոց, հիշենք, որ իր ծերբակալության օրը, երեկոյան Պոլսի շքեղ հյուրանոցներից մեկում Գր. Զոհրապը Թալեաթի եւ Հալիլի հետ թուղթ էր խաղում: Գիշերը, երբ խաղն ավարտվում է ու Զոհրապը պատրաստվում է հեռանալ, Թալեաթը մոտենում է նրան ու համբուրում. «Ի՞նչ է նշանակում այս համբույրը» Զոհրապի հարցին Թալեաթը պատասխանում է «Ի սրտե»: Զոհրապը հենց հասնում է տուն, նրան հետապնդող ոստիկանները ծերբակալում են ու տանում: Ինչպես Ակնունին, այնպես էլ Զոհրապը գազանաբար սպանվեցին Թալեաթի հրամանով:

«Գինովցածները» դեռ ուշքի չէին եկել, երբ երիտթուրքական կուսակցության պարագլուխներից Մահմեդ Ռիզան հայտարարեց. «Ինչի ձգտում էինք, հասանք, ստացանք սահմանադրութիւն: Սրանից հետո սուլթան Համիդը մեզ շատ պետք է: Նա կարող է մեզ մի շարք ծառայութիւններ մատուցել ներքին եւ արտաքին քաղաքականութեան խնդիրները լուծելու, քանի որ անգերազանցելի դիւանագէտ է եւ ունի բազում անձնական բարեկամներ Եւրոպայի բոլոր ղեկավար շրջաններում: Մենք պէտք է օգտուենք նրա հեղինակութիւնից ու հնարաւորութիւններից: Նա մեզ պէտք է»77:

1908թ. հեղափոխությամբ ի դեմս «Իթթիհադ վե թերաքքի» երիտթուրքական կուսակցության, իշխանության եկավ թուրքական ազգային բուրժուազիան: Այդ բուրժուազիայի շահերն արտահայտող կուսակցությունն իշխանության գալով անարգել գործելու հնարավորություն տվեց գողերին, պոռնիկներին, թալանչիներին, ավազակներին, սպեկուլյանտներին, ստահակներին, կավատներին, ծախու գրչակներին: Նրանց բոլորի համար երիտթուրքերը գիտակցաբար ստեղծում էին ամենաթողության նպաստավոր պայմաններ: Հենց թուրքական հասարակության այդ տականքն էլ դարձավ երիտ-

թուրքերի սոցիալական ու քաղաքական հենարանը: Այդ տականքը հեղափոխության առաջին օրից դարձավ իշխանության տեր. թալանում ու սպանում էր պետության անունից, ստում ու կեղծում էր հանուն այդ պետության:

Այսպիսին էր Թուրքիայում վաղուց սպասված հեղափոխության արդյունքը հենց նրա առաջին օրերից սկսած: Եվ այս ամենը չէր տեսնում դաշնակցությունը, որի պարագլուխները ուշքի չէին գալիս «գինովցած» վիճակից: Ջեմալ փաշան վկայում է, որ «ՀՅԴ–ն ցանկանալով պաշտպանել օսմանեան սահմանադրութիւնը, գործում էր Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան հետ համերաշխ»78:

Դաշնակցության ղեկավարներն այնքան էին «գինովցած» ու այնքան էին տարվել թուրքական հեղափոխության մեջ իրենց դերով ու մասնակցությամբ, որ կորցրել էին զգոնությունը եւ ուշադրություն չէին դարձնում իրենց սթափեցնող կոչերին:

Սթափեցնող կոչ անողների մեջ էր ամենից առաջ Անդրանիկ Օզանյանը, որը դաշնակցության ղեկավարներին զգուշացնում էր. «Մեզի բոլորիս համար թուրքերը մեծ ու խոշոր թակարդ մը լարած են եւ մեզ ամէնքիս ալ մէջը պիտի ձգեն»: Անդրանիկի այս զգուշացումը հիշող Արմեն Գարոն պատմում է, որ 1909թ. սկզբին Պոլսում լինելու ժամանակ Անդրանիկը դաշնակցության ղեկավարներին ասել է. «Մեծ թակարդ մը կայ, զգոյշ եղէք, եւ այն երիտասարդներն ալ, որ զինուոր տուիք, այդ պատրուակին տակ պիտի կոտորուին ամէնքն ալ»: Անդրանիկի այս խոսքերին ի պատասխան, Ակնունին ասում է. «Անդրանիկ ջան, ինչ յոռետես ես, քիչ մըն ալ լաւատես եղիր, այլեւս ոչ մէկ հայու քիթը պիտի արիւնի»: Եվ իր վրդովմունքը արտահայտելով Անդրանիկը պատասխանում է Ակնունուն. «Այսքան երկար խօսելէ ետք. երբ տակաւին համոզուած չէք խօսքերնուս, խերը տեսէք ձեր էնվէրին ալ, ձեր Թալեաթին ալ»: Այս ամենը հիշելով Արմեն Գարոն գրում է. «Այս խօսքերէն (այսինքն Անդրանիկի – Վ.Պ.) 140 օր անցած էր, երբ երիտթուրքերն Ատանան կոտորեցին: Ատանայի կոտորածին Անդրանիկը Եգիպտոսէն այսպէս գրած էր Ակնունիին. «Ահա իմ յոռետեսութիւնս եւ ձեր լաւատեսութիւնը. երբ ժամանակը գա. ձեր Թալեաթն ու էնվէրը ձեզ ալ պիտի կոտորեն»79:

Իմիջիայլոց, դաշնակցության ղեկավարները հետագայում էլ չէին հրաժարվում Անդրանիկին իրենց կողմը գրավելու, երիտթուրքերի հետ նրան հաշտեցնելու փորձերից: Ահա թե այդ մասին 1981թ. ինչ է վկայել «Ազատամարտի» խմբագիր Ռ.Զարդարյանի որդի Հրաչ Զարդարյանը. «1910թ. ներուն օր մը, զօրավար Անդրանիկ, գաղտնաբար, Պոլիս մեր տուն եկաւ: Այդ օրը մեր տան մէջ, ներկայ էին հայրս, դաշնակ կուսակցութեան պետ Ակնունին եւ ուրիշ քանի մը կուսակցական երեւելիներ: Եվ Ակնունի, իբր կուսակցականապետ, զօրավար Անդրանիկին աս առաջարկը ըրաւ. «Զօրավար, Պոլիս մնացէք, եւ ձեզ օսմանեան ժողովին ե-

րեսփոխան կը նշանակենք»: Զօրավար Անդրանիկի այդ օրուան զայրոյթը բնաւ պիտի չմոռնամ: Զօրավարը, Ակնունիին երեսին գոռալու պէս, սապէս պատասխանեց. «Դուք բոլորդ ալ, երազ կը տեսնէք, դուք թուրքին ով ըլլալը չէք հասկցած: Օր մը պիտի հասկնաք: Բայց այն ատեն, շատ ուշ պիտի ըլլայ»: Այս խօսքերը ըսելէ ետք, զօրավար Անդրանիկ անմիջապէս մեկնեցաւ մեր տունէն»80:

Երիտթուրքերի քաղաքականությունն այնքան թափանցիկ էր, որ բոլորը տեսնում ու հասկանում էին, բացի դաշնակցության «գինովցած» ղեկավարներից: Այդ մասին է վկայում, օրինակ, 1909թ. հունվարի 19–ին Կարինում գտնվող ռուսական հյուպատոսը. «Հռչակված ազատություններով հայերի հրապուրվելը ավելի է գրգռում իրենց դեմ մահմեդականների ատելությունը: Նույնիսկ ամենից առաջադեմ երիտթուրքերի մեջ, որոնք դեռ ոչ վաղ անցյալում բացահայտ հայտնեցին իրենց երախտագիտությունը Թուրքիայում ազատագրական շարժման մեջ ցուցաբերած նախաձեռնության համար, նրանց նկատմամբ անվստահությունն աճում է ոչ թե օրերով, այլ ժամերով»: Այնուհետեւ, հյուպատոսը ընդգծում էր, որ իթթիհադի «ենթակոմիտեն հայ գործիչների նկատմամբ սահմանել է գաղտնի հսկողություն եւ գավառներում իր գործակալներին հանձնարարել է ոչ մի դեպքում չկանգնել եռանդուն միջոցների առջեւ»81:

«Բերկրանքով ողջունեցինք օսմանեան սահմանադրութիւնը,– գրում է դաշնակցության պատմության հեղինակը,– ոչ մի անջատական ծգտում, ոչ մի խօսք այլեւս եւրոպական միջամտութեան, 61–րդ յօդուածի մասին. դադարեցուցինք «Պրօ Արմենիան» ու եւրոպական պրոպագանդը, լծուելով մեր իսլամ դրացիներուն հետ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրութեան յառաջադիմութեան եւ բարօրութեան»82:

Դժբախտաբար, տաղանդավոր գրող, փորձված իրավաբան Գրիգոր Զոհրապը նույնպես հավատաց երիտթուրքական հեղափոխությանը: Այդ հեղափոխությունից անմիջապես հետո, Գր. Զոհրապը Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում գրում էր. «Օսմանեան սահմանադրութիւնը անխախտ կերպով վերահաստատուած է հոս ամենակատարեալ ազատական regime–ի հետ: Սուլթան քուրջի վերածուած է բոլորովին: Կառավարութիւնը ժեօն թուրքերու քոմիտեներու ձեռքն է: Ես այս մարդիկը մօտէն քննելով համոզում գոյացուցի, որ ճշմարտապէս ազատամիտ եւ մասնաւորապէս հայերուն հանդէպ ամէն առիթով ազնուութեան եւ բարեկամութեան հազար տեսակ ապացոյցներ տալու վրայ են»:

Այնուհետեւ Գր.Զոհրապն իր համոզմունքն էր հայտնում, թե երիտթուրքերը ջանքեր են գործադրում «մոռցնելու մեզի եւ ջնջելու արիւնալի անցեալը, որ զմեզ իրենցմէ կը բաժնէր»: Գր. Զոհրապը ընդգծում էր, թե մեր ազգի շահը պահանջում է, որպեսզի օգտվենք առիթից եւ չմերժենք այն ձեռ-

քը, որ ուժ է ներկայացնում: Գր. Զոհրապը այնուհետեւ հաստատում էր. թե «իմ տեսածս յուսացածէս շատ աւելի է»:

Ոգեւորված Զոհրապը գրում էր նաեւ, թե «մենք մեր իրաւունքներու տէրը ըլլալու ենք եւ զայն ակնկալելու հարկադրուած ըլլալու չենք ուրիշի մը», ու տեղեկացնում, թե «հոս մամլոյ կատարեալ ազատութիւն կայ» ու «Նոր օր» անունով օրաթերթ պէտք է հրատարակի եւ այն դարձնի «մեր ազգային իրաւունքին պաշտպանութեան հզօր գործիք մը»83:

Հանրահայտ է հնչակյան կուսակցության բացասական վերաբերմունքը թե երիտթուրքերի հետ համագործակցության եւ թե երիտթուրքական հեղափոխության հետ հույսեր կապելու նկատմամբ: Հնչակյանները հրաժարվեցին բանակցել երիտթուրքերի հետ, որովհետեւ պահանջում էին Հայաստանի ինքնավարություն, այն էլ Ռուսաստանի հովանավորության ներքո84: Հնչակյաններն ուղղակի չէին հավատում ու չէին վստահում երիտթուրքերին: Եվ դրա համար ունեին զորավոր հիմքեր, որոնք դաշնակցության աչքին չէին երեւում:

1909թ. հուլիսին հնչակյան կուսակցության 6–րդ համագումարն ուղղակի հայտարարեց. «Նկատի ունենալով, որ թուրք նացիոնալիստները եւ այդ նացիոնալիզմի արտայայտիչ քաղաքական գործիչները գիտակցաբար ձգտում են ապազգայնացնել Թուրքիոյ ազգութիւնները եւ ծուլել զանոնք թուրք ազգութեան մէջ՝ ՕՍՄԱՆՑԻ ընդհանուր անուան տակ, ժողովը ժխտելով կը ժխտէ ապազգայնացման այդ գաղափարը եւ կը վճռէ պայքարել այդ ուղղութեան դէմ, ընդունելով ազգերու անկաշկանդ ու ազատ զարգացման եւ ինքնորոշման իրաւունքը»85:

Ս.Սապահ–Գուլյանը շատ որոշակի արձանագրում էր, որ երիտթուրքերը հույս չեն ներշնչում, թե կարող են «նորագոյն Թուրքիա ստեղծել»86:

Հեղափոխությամբ ոգեւորված Գր. Զոհրապը, իհարկե, հասկանում էր, թե ինչ վնաս կարող է բերել դաշնակցականների եւ հնչակյանների խորացող հակամարտությունը ու փորձեց իր հեղինակությամբ նպաստել նրանց մերձեցմանը: «Դաշնակցականներու եւ հնչակեաններու միացումը,– գրում էր նա 1908թ. սեպտեմբերի 11–ին Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում,– իմ ամենէն անկեղծ փափագներէս մէկն է» եւ համոզված ընդգծում էր, թե նրանց միջեւ «անհամաձայնութեան պատճառ չկայ»87: Իհարկե, սխալվում էր Գր. Զոհրապը, որը, հետեւելով դաշնակցությանը, երիտթուրքերի հետ համագործակցության կողմնակից էր եւ հիացած էր նրանց հեղափոխությամբ:

Ճիշտ է, Գր. Զոհրապը դաշնակցության անդամ չէր, բայց նրա ակտիվ համակիրներից էր ու երկար ժամանակ համագործակցում էր այդ կուսակցության հետ: Դեպքերի հետագա զարգացումը համոզեց Գր. Զոհրապին, որ սխալվել է, բայց, ափսոս, արդեն շատ ուշ էր:

Թուրքիայում արդեն հաղթանակած երիտթուրքական հեղափոխությունը վաղուց դեն էր նետել իր դիմակը, որի տակ թաքնված հրեշը ցույց էր տվել իր ժանիքները կոտորելով Ադանայում ապրող 30 հազար հայի: Այլ խոսքով Թուրքիայում սկսվել էր ահավոր ռեակցիա, որից հարկավոր էր ոչ միայն զգուշանալ, այլեւ ուժերը համախմբել ահագնացող սպառնալիքը կասեցնելու համար: Բայց, դժբախտաբար, այդպես չեղավ: «Գինովցածները» չէին ազատվում նախորդ օրվա «խմածությունից»:

# Գլուխ 3

# ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ

Ռուսաստանում պարտվեց 1905–1907թթ. հեղափոխությունը: Սկսվեց անսանձ ռեակցիա: Հեղափոխական ուժերի նկատմամբ ցարիզմը գործադրում էր ահավոր բռնություններ: Բանտերը լցվեցին դեռ երեկ բարիկադների վրա կարմիր դրոշ պարզած տասնյակ հազարավոր հեղափոխական բանվորներով: Ռուսաստանում կախաղանը դարձել էր հեղափոխականներին պատժելու սովորական միջոց: Այդ կախաղանները պատմության մեջ հիշվում են «ստոլիպինյան փողկապներ» անունով:

Ռուսաստանում հեղափոխության պարտությունը խոր ազդեցություն ունեցավ հասարակական գիտակցության վրա: Մի կողմից հեղափոխության պարտությունը Ռուսաստանում. մյուս կողմից երիտթուրքական հեղափոխության հաղթանակը Օսմանյան կայսրությունում իսկական քննություն եղան նաեւ հայ հասարակական–քաղաքական ուժերի ու կուսակցությունների. դասակարգերի ու հասարակության մյուս շերտերի համար: Մեծ էր դրանց ազդեցությունը գեղարվեստական գրականության. արվեստի վրա:

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո ուժեղացավ մեծապետական շովինիզմը. ցարիզմի հետադիմական. հակաժողովրդական ազգային քաղաքականությունը: Եվ դա հասկանալի էր. որովհետեւ ցարիզմին իր դիրքերն ամրապնդելու. ապագա հեղափոխությունից խուսափելու համար հարկավոր էր էլ ավելի ուժեղացնել իր հետադիմական ազգային քաղաքականությունը:

Հեղափոխությունից հետո Թուրքիայում կատարվեց հետեւյալը: Սուլթանիզմի մեծապետական շովինիստական ու հետադիմական քաղաքականությանը վերջ տալու կարգախոսներով հաղթած հեղափոխությունը հաջորդ օրն իսկ որդեգրեց այդ քաղաքականությունը. միայն ավելի նենգ ու ավելի ստոր միջոցներով իրականացնելու ճանապարհը:

Ռուսաստանում հեղափոխության պարտությունը լուրջ փոփոխություններ մտցրեց հասարակական–քաղաքական ուժերի գործելակերպում: Կուսակցությունները չկարողացան հաղթահարել պառակտումը. հիասթափությունը: Այդ գործընթացն առանձնակի խորությամբ ընդգրկեց Ռուսաստանի ամենախոշոր մանրբուրժուական կուսակցությանը սոցիալիստ հեղափոխականներին (էսէռներ):

Հեղափոխության պարտությունը նաեւ մեծ շփոթմունք. քայքայում առաջացրեց մտավորականության մեջ:

Հեղափոխության դեմ գաղափարական արշավը ղեկավարում էր Ռուսաստանի Սահմանադրական դեմոկրատների կուսակցությունը (կադետներ). որը 1909թ. հրատարակեց «Վեխի» (Դարաշրջան) ժողովածուն: Այստեղ կատաղի հարձակում ծեռնարկվեց Վ.Բելինսկու. Ն.Չեռնիշեւսկու. Ն.Դոբրոլյուբովի հեղափոխական–դեմոկրատական ավանդույթների դեմ: Կադետները քարոզում էին թունդ նացիոնալիզմ. շովինիզմ. քրիստոնեական հնազանդություն:

Հեղափոխության պարտությունը ծնեց նաեւ «աստվածաշինարարներին»: Այս գրական. կրոնափիլիսոփայական հոսանքը հանդես էր գալիս «առանց աստծո» նոր կրոնի. «աշխատանքի կրոնի» ստեղծման օգտին. որն իբր թե հիմնված է պատմության մատերիալիստական ըմբռնման վրա: «Աստվածաշինարարները» փորձում էին գիտական սոցիալիզմը միացնել կրոնին. որը վերջին հաշվով ծեռնտու էր լիբերալ բուրժուազիային:

Հեղափոխության պարտությունն իր արտահայտությունը գտավ նաեւ գրականության ու արվեստի ասպարեզում: Ուժեղացան անկումային դեկադենտական տրամադրություն արտահայտող հոսանքները սիմվոլիզմը եւ այլն: Դեկադենտները հրաժարվեցին ռեալիստական գրականության ավանդույթներից. քարոզում էին «մաքուր արվեստի» տեսությունը. ծայրահեղ անհատապաշտություն ու միստիցիզմ. խոնարհվում Արեւմուտքի արվեստի առջեւ: Դեկադենտ գրողները սեւացնում էին հեղափոխությունը. գովերգում էին դավաճանությունը. եսասիրությունը. այլասերվածությունը եւ այս բոլորը ներկայացնում «անհատի ազատության» անվան տակ:

Դեկադենտ գրողներից Արցիբաշեւը հրապարակ նետեց «Մարդը բնությունից սրիկա է» նշանաբանը դրանով հակադրվելով առաջադեմ գրականության տեսակետին. որը ծեւակերպել էր Մ.Գորկին «Մարդ դա բարձր է հնչում»:

Դեկադենտական գրականությունը թունավորում էր մարդկանց գիտակցությունն իր անգաղափարայնությամբ. վերացականությամբ. հոռետեսությամբ: Այսպիսի գրականության կործանարար ազդեցության վկայություն էին ինքնասպանությունները. որոնց թիվը այդ ժամանակ զգալիորեն աճեց:

Դեռեւս 19–րդ դարի 90–ական թվականներից սկիզբ առած սիմվոլիզմը իր զարգացմանը հասավ հեղափոխության պարտությունից հետո: Սիմվոլիստները հրապուրված էին «մաքուր» եւ «ազատ» արվեստով. փառաբանում էին մինչեւ ինքնասիրահարվածության հասած անհատապաշտությունը. խորհրդավոր աշխարհը: Այս ամենը սիմվոլիստներին հեռացնում էր իրական կյանքից: Հանդես եկած ֆուտուրիստ գրողները հռչակում էին բանաստեղծական խոսքի բացարձակ ազատություն. հրաժարվեցին գրական ավանդույթներից:

1905–1907թթ. ռուսական հեղափոխության պարտությունը մեծ հետք թողեց հայ հասարակական–քաղաքական կյանքի, մշակույթի վրա: Դաշնակցությունը, որը դարձել էր ժամանակի հայ իրականության ազդեցիկ ուժերից մեկը, հեղափոխության պարտությունից հետո նույնպես հայտնվեց պառակտման մեջ: Նրանից սկսեցին հեռանալ հատկապես աշխատավոր մարդիկ: Դաշնակցության պառակտման գործում կարեւոր դեր խաղաց այսպես կոչված «միհրանական» շարժումը: «Անոնք,– գրել է Մ.Վարանդյանը.– միհրանականները, կ՚ըմբոստանային ոչ միայն ձախ անջատականներուն, այլ գրեթէ ամբողջ դաշնակցական մտաւորականութեան դէմ, որ կը կազմէր կուսակցութեան ողնաշարն իսկ: Կը տրտնջէին, կը բողոքէին... կը պահանջէին, որ կուսակցութենէն դուրս նետուին բոլոր ընկերվարականները, որ դաշնակցութեան կովկասեան հատուածը ըստ առաջնւոյն նուիրուի միայն թրքահայ ազատութեան պայքարին»88: Ինքը, Միհրանը, համոզված էր, որ դաշնակցությունը հիմնվել է ոչ թե սոցիալիզմի, այլ արեւմտահայերին պաշտպանելու համար: «Եթէ ես,– ասում էր Միհրանը,– նրա շարքերի մէջ եմ, այս պարզապէս այն պատճառով, որ ուխտել եմ վրէժ հանել թուրքերից, որոնք սպանել են իմ քոյրերին ու եղբայրներին: Այսպէս է եւ ամէն մի ուրիշ թուրքահայ»89:

Միհրանականներն իրենց գործողություններով լուրջ վտանգ ստեղծեցին դաշնակցության համար: 1907թ. սկզբին դաշնակցության 4–րդ ընդհանուր ժողովը ընդունված որոշմամբ Միհրանի (Գաբրիել Քեշիշյան) եւ նրա կողմնակիցների վարմունքը համարեց «ծանր յանցանք կազմակերպութեան եւ նրա պաշտպանած թրքահայ դատի դէմ» ու նրանց հեռացրեց դաշնակցությունից90: Ընդհանուր ժողովը որոշեց նաեւ «կազմակերպական կանոններով նախատեսուած պատժին ենթարկելու Միհրանը եւ իր գործակիցները»: Մ.Վարանդյանը հայտնում է նաեւ, թե «շուտով մահուան պատիժը գործադրուեցաւ»91:

Մինչ այդ, դաշնակցականները գնդակով վիրավորեցին Միհրանին: Դրանից վրդովված Միհրանը ցարական ոստիկաններին տեղեկություններ հաղորդեց իր նախկին կուսակիցների մասին92: Ի պատասխան Միհրանի վիրավորվելուն, նրա եղբայր Հաբեթը սպանեց դաշնակցության ղեկավարներից Ս.Թոփչյանին: 1910թ. դաշնակցականներն իրականացրին Միհրանի սպանությունը:

Միհրանին շարքից հանելն ուներ նաեւ մեկ այլ, նույնպես կարեւոր պատճառ: Խնդիրն այն էր, որ 1907թ. ընթացքում տեղի էին ունենում դաշնակցության եւ երիտթուրքերի բանակցությունները, որոնք ավարտվեցին 1907թ. դեկտեմբերի 31–ին Փարիզում ձեռք բերված համաձայնությամբ: Միհրանի բարձրացրած աղմուկը միայն արեւմտահայության համար պայքարելու մասին, իհարկե, այլեւս չէր համապատասխանում դաշնակցութ-

յան խնդիրներին ու նպատակներին: Դրան խանգարողները պետք է լռեին ու հեռանային կամ ոչնչացվեին: Միհրանի հարցում դաշնակցությունը դիմեց երկրորդ միջոցին:

Դաշնակցությունից հեռացան նաեւ ծախերը, որոնք չէին հավատում կուսակցության սոցիալիստական լինելուն: Ձախերը Արսեն Ամիրյանի եւ Լեւոն Աթաբեկյանի գլխավորությամբ դուրս եկան դաշնակցությունից եւ ծեւավորեցին «երիտասարդ դաշնակցականների» խումբ: 1907թ. Ա.Ամիրյանը «Դաշնակցության կրիզիսը» գրքույկում նշում էր, որ դաշնակցությունը սոցիալիզի անվան տակ գունազարդվել է, որ նրա «պսպղուն գործիչների լեքսիկոնի մեջ ամեն բան կարելի է գտնել եւ ազգ. եւ դասակարգ. եւ լիբերալիզմ. եւ կրոն, եւ անաստվածություն, եւ համազգային համերաշխություն, եւ դասակարգային պայքար»: Ա.Ամիրյանն ընդգծում էր նաեւ, որ «տեղը եկավ նրանք ազգային են. տեղը եկավ նույնիսկ կղերական»93:

Այսպիսով, ի դեմս Միհրանի, դաշնակցությունը քննադատվում էր, որ նա հեռացել է իր հիմնական նպատակից արեւմտահայության դատի պաշտպանությունից եւ նվիրվել է սոցիալիզմին (Կովկասյան նախագծին): Մյուս կողմից «երիտասարդ դաշնակցականները» քննադատում էին կուսակցությանն այն բանի համար, որ նա հեռացել էր սոցիալիզմից եւ կապվել էր «դավաճան բուրժուազիայի» հետ:

Մ.Վարանդյանը դաշնակցության շարքերի քայքայման բուն պատճառները նշելու փոխարեն մեղադրում էր «Մուրճին», «Մշակին» եւ հայ սոցիալ–դեմոկրատ օրգաններին, որոնք «սրտաշարժ բլօք էին կազմեր դաշնակցութիւնը անուանարկելու, տապալելու համար»94:

Երկու դեմք ունենալուց, երկու քաղաքականություն վարելուց դաշնակցությունը երբեք չհրաժարվեց եւ դրանց հետեւանքով առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդին կանգնեցրեց եղբայրասպան պատերազմի սարսափելի իրողության առջեւ: Այդ մասին անդրադարձ կլինի քիչ հետո, իսկ այժմ նշեմ, որ այդպիսի քաղաքականության վնասները մեծ չափերի հասան նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ չէին երեւացել երիտթուրքական հեղափոխության դառը պտուղները: Ահա թե ինչ էր գրում իշխան Բ.Երկայնաբազուկ Արղությանը Արշակ Չոպանյանին 1907թ. հոկտեմբերի 16–ին. «...դաշնակցականների սոցիալիստական եւ հեղափոխական գործունեութիւնն անմտութիւն է Կովկասում: ...Տաճկաստանի մասին չգիտեմ, չեմ կարող դատել, բայց ինձ թւում է, որ եւ այնտեղ վնասակար պիտի լինի»95:

Ինչպես նշել ենք, երիտթուրքական հեղափոխությունից հետո, դաշնակցության լիդերների դրդմամբ Մ.Օրմանյանը հեռացվեց պատրիարքությունից: Կ.Պոլսի պատրիարքարանը իր նոր ղեկավար Իզմիրլյանի հետ միասին ամբողջապես ենթարկվեց դաշնակցությանը: Բայց դեռ մնում էր էջմիածնի կաթողիկոսությունը, որին հնազանդեցնելու ու ենթարկելու ցանկութ-

յունը հանգիստ չէր տալիս դաշնակցության ղեկավարներին:

Էջմիածնի առաջադեմ հոգեւորականները հասկանում էին եկեղեցուն սպառնացող վտանգը եւ փորձեցին դիմակայել դրան: Էջմիածնում գտնվող Կոմիտասը բոլորովին չէր հաշտվում այն ամենի հետ, ինչ որ դաշնակցությունը գործադրում էր Ամենայն Հայոց կաթողիկոսությունը զավթելու համար: Սկզբում դաշնակցությունը Էջմիածին ուղարկեց «Հորիզոնի» խմբագիր Սիրական Տիգրանյանին, որին մտցրին եկեղեցական բոլոր հանճնաժողովների մեջ: Ս.Տիգրանյանն ակտիվ դեր էր խաղում ուսումնական հանճնաժողովի մեջ նպատակ ունենալով, ինչպես նշել է Կոմիտասը 1909թ. այդ օրերին Արշակ Չոպանյանին գրած նամակում, «ճեմարանի եւ ուսուցչութեան միջոցաւ նոր սերունդ պատրաստէ հակաեկեղեցական ոգով տոգորուած, ուսումնական յանճնաժողովի միջոցաւ էլ դպրոցներն իր ձեռքն առնել, տեղավորել ուսուցիչներ, որոնք իրանց կուսակցութեան են պատկանում»:

Կոմիտասը նշում էր նաեւ, որ դաշնակցութիւնը «լիակատար տիրում է վեհին», նրան «իր բռան մէջ է առել, ինչ կամենում է, անել է տալիս»: Կոմիտասը դժգոհում էր, որ դաշնակցականներին հաջողվել է ճեմարանից հեռացնել բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին, որ Երեւանի փոխառնորդ է նշանակվել դաշնակցական Մուրադբեգյան վարդապետը: Կոմիտասը գրում էր նաեւ, որ «նորից կազմակերպել են սկսում դաշնակցական հին միջոցներով եւ ոչնչի չեն խնայում»:

Իհարկե, Կոմիտասի ընդգծված հակադաշնակցական կեցվածքը դուր չէր գալիս այդ կուսակցության ղեկավարներին, եւ նրանք սկսեցին Կոմիտասին հալածել: «Բառի բուն նշանակութեամբ,– գրում էր Կոմիտասը,– մեզ հալածում են: Այդ տեսնում է Վեհը եւ համակերպւում է նորան եւ ընդառաջ է գնում նորա ցանկութեանը»96:

Ադանայի ողբերգությունից հետո, 1909թ. հուլիսի 14–ին Ս.Էջմիածնից Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում Կոմիտասը, մասնավորապես, գրում էր. «Դաշնակցական խմբակը, որ ատամները թափած է, խիստ դժգոհ է Վեհից, բայց չեն համարձակւում հրապարակ իջնելու: էլ բաւ է որքան քանդեցին մեր ներքին ու արտաքին կեանքը անմիտ հպարտութեամբ եւ փուջ ուժով: Մի բան մեզ խիստ ուրախացնում է, որ մեր հայերը Տաճկաստանում արդէն լաւ եւ շուտ ըմբռնեցին այդ խօսակցութիւնների կործանիչ եւ աւերիչ ուղղութիւնները եւ թոթափեցին կամ թոթափելու ջանքեր են անում, որ մի ապիրատ խնամակալութիւն չաւելանայ...»97:

Իհարկե, սխալվում էր Կոմիտասը, կարծելով, որ Ադանայի հայության ջարդից հետո, Տաճկաստանում ուշքի են եկել եւ հրաժարվել են «մեր ներքին ու արտաքին կեանքը» քանդող կուսակցությունից: Ինչպես տեսանք, դաշնակցությունը չհրաժարվեց սիրախաղից: Իսկ էջմիածնի հայոց եկեղեցու միասնության համար պայքարող Կոմիտասի դեմ նյութած դավերը ա-

վելի քստմնելի դարձան, եւ կաթողիկոսը դաշնակցության կամքով նրան ուղարկեց Սեւանա վանք: Այստեղ էլ Կոմիտասին հանգիստ չտվեցին, եւ նա հարկադրված հեռացավ Կ.Պոլիս: Ո՞վ իմանա, եթե Կոմիտասը այդքան վայրենի մեթոդներով չհալածվեր ու մնար էջմիածնում, գուցե եւ փրկվեր...

Նկատի ունենալով Կոմիտասի եւ Ռուբեն Սեւակի մտերմությունը, ընդհանուր հայացքները առիթն ուզում եմ օգտագործել համառոտ անդրադառնալու Կոմիտասի պատմագիտական հայացքներին: Կոմիտասի մասին հետաքրքիր հուշերի հեղինակ Հակոբ Անագէյանը նշել է, որ Կոմիտասը հետաքրքրվում էր պատմությամբ նրան անվանելով «լուրջ պատմագետ»: Հ.Անագէյանը հիմքեր ուներ այդպիսի գնահատականի համար:

Կոմիտասին շատ էին հուզում պանդխտության ու գաղթականության բերած վնասները, որոնց մեջ նա կարեւորում էր մեր կենսունակության ջղի խաթարումը: «Գաղթականութիւնը չէ,– գրում էր Կոմիտասը,– որ սնունդ պիտի տայ գրականութեան, գեղարուեստին, այլ բուն իսկ հայրենի հողը, ուրկէ հեռացած են եւ որուն վերադառնալու կոչ եղաւ այստեղ»: Նա հայ ժողովրդի զավակներին կոչ էր անում. «Կարդացէք Մովսէս Խորենացի, Եղիշէ, Նարեկացի, Խաչատուր Աբովեան, Րաֆֆի, Ալիշան, Պէշիկթաշլեան եւ տեսէք, թէ ով ենք մենք»: Կոմիտասը խորաթափանցությամբ կարծես հայացք է գցել մեր օրերին եւ նրա տագնապն ու խորհուրդը արդիական հնչեղություն ունեն:

Կոմիտասի ազնիվ սիրտն անտարբեր չէր կարող մնալ հայ իրականության մեջ եղած հոռի բարքերի նկատմամբ եւ կրքոտությամբ պայքարում դրանց վերացման համար: Ահա թե ինչ է գրել նա. «... Հոտն անհովիւ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներ հախուռն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովում: Անմիտ որսորդներ բոլորած միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չկայ: Ավերուած, սարսափ ու կեղեքում մէկ կողմէն, անտարբերութիւն, օտարամոլութիւն ու ցեխոտ սրտեր միւս կողմէն: Փառասիրութիւն, փութկոտութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն, միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտօնն զգացած է իբր հանդերձ, իւր մերկութիւն մտած ծածկի ի միամիտ աչաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականուած, մեր կեանքը դիակնացած... Ո՞ւր է մեր խոհական Խորենացին, թող ելլէ արիւնաքամ հողու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց պաշտօնին փարած էին անձնահեղծութեամբ, իսկ մենք կը յափշտակենք գործն ընչաքաղցութեամբ: Սիրտս փլած է»98:

Կոմիտասը խորապես ուսումնասիրել էր եվրոպական տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում, ամբողջովին համոզվել էր դրանում թաքնված ցինիզմի ու եսասիրության մեջ եւ զգուշացնում էր. «Չպէտք է բաժանուինք, չպէտք է խաբուինք Եւրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներին» եւ հետո ավելացնում. «Եւրոպայում մարդկային գաղա-

փարները որքան որ ընտիր են ու փափագելի, բայց մեզ անպէտք են. պաղ երկրի բոյսերը մեր ջերմ արեւի տակ կը կիզուեն»99:

Այս մտքերը, որ մեջբերվեցին, Կոմիտասն արտահայտել է 1912թ. դեկտեմբերի 25–ին Արշակ Չոպանյանին հղած նամակում: Մեր առջեւ հառնում է Մեծն Կոմիտասը՝ անհանգստացած իր ժողովրդի ապագա ճակատագրով: Նա մտորում է այդ ճակատագրի շուրջ եւ գտնվելով Կ.Պոլսում ավելի հաճախակի շփվում եվրոպական շրջանակների հետ եւ հանգում է այնպիսի հետեւությունների, որոնք այսօր նույնպես հույժ այժմեական են եւ կարեւոր դաս մեր ներկա սերնդի համար: Կոմիտասը մերժում է եվրոպական տերություններին ապավինելու քաղաքականությունը եւ հանճարեղ խորաթափանցությամբ դնում է հայ–ռուսական հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունը: «Մենք այժմ,– գրում է Կոմիտասը,– իսկապէս ռուսաց շահի առարկան ենք, մեր երկիրն արդէն որոշած է այսօր կամ վաղը ռուս պետութեան բաժին դառնալու: Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ, թէպէտ երկուքի վերջակէտն էլ նոյնն է, տարբեր ուղիով միայն: Առաջինն է առաւելագոյնը ինքնուրոյն ու անկախ լինելով, իբր պատուար ցցուել ռուս դիւանագիտութեան առաջ եւ երկրորդը՝ նուազագոյնը՝ ապաւինել Քեռի Ռուսիո եւ միածոյլ հայութիւն սահմանել»: Կոմիտասը գտնում էր, որ այս երկու ուղիներն էլ միեւնույնն են, բայց երկրորդը համարում էր «իրագործելի՝ շահերի նոյնութեան վերայ հենուելով...»100:

Այնուհետեւ արտահայտելով իր անհանգստությունը տաճկահայերի վերաբերյալ՝ Կոմիտասը շեշտում էր հետեւյալը. «... Մեր փրկութիւնը կռել եւ կոփել ենք Փերպուկի (Պետերբուրգի) պարիսպներու դռներուն առջեւ. այս էր պնդել ժամանակին Լոռիս Մելիքով Գեւորգ Դ կաթողիկոսին զգուշացնելով (երբ սա ռուս–տաճկական պատերազմի ժամանակ, փրկութիւնը տեսնելով ու յուսալով տաճիկներէն, գրեթէ բացարձակապէս սպասելիս է եղել տաճիկներին էջմիածնի մէջ)»:

Նկատի ունենալով, որ Հայկական հարցում եվրոպական տերությունները որեւէ շահագրգռություն չունեն եւ անտարբեր են հայության ճակատագրի նկատմամբ, Կոմիտասը հանգում է հետեւյալ եզրակացության. «Ուրեմն չիք փրկութիւն արտաքոյ Ռուսիոյ»: Այո, չկա փրկություն առանց Ռուսաստանի: Սա լավ էր ըմբռնել թվում է թե քաղաքականությունից շատ հեռու կանգնած, բայց իր ժողովրդի ճակատագրով ապրող Մեծն Կոմիտասը: Եվ նա զգուշացնում էր. «Պէտք է նախ բոլոր հայերը խմբուեն մէկ տէրութեան. մէկ օրէնքի տակ, աճեն ու զարգանան բարոյապէս ու նիւթապէս, եւ ապա ժամանակն ինքն է, որ պիտի բերէ մեզ մեծ ազատութիւնը. շտապելով առաջինը չառած, երկրորդ քայլի դիմելով, բոլորովին պիտի կորչինք, տաճիկէն ոչ մի յոյս մի ունենաք, մի սպասէք...»101:

Իսկ ո՞ր տերության մեջ պետք է խմբվեն հայերը: Ո՞ւմ նկատի ուներ Կոմիտասը: Ահա եւ Կոմիտասի պատասխանը. «... Ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայութիւնն ամփոփել ռուսի իշխանութեան տակ, երկրորդ քայլն է տնտեսապէս ու բարոյապէս, զուտ ազգային, առանց օտարին ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդուելու զարգանալ, երրորդ քայլն արդէն ռուս յեղափոխութիւնն է, որ պիտի անէ, ոչ թէ մենք, իսկ մենք օգտուելու ենք այդ քայլէն, սակայն պատրաստուելով, լեհերու պէս զուտ ազգային շաւիղը բռնելով»102:

Հանճարեղ Կոմիտասն ամբողջ խորությամբ ըմբռնել էր Ռուսաստանի դերը հայոց ճակատագրում: Կարեւորագույն հանգամանք, որը նորօրյա շատ գործիչներ այդպես էլ չուզեցան հասկանալ եւ ասպարեզ նետեցին «երրորդ ուժի բացառման մասին» տխրահռչակ կարգախոսը:

Այսօր էլ, որպես պատգամ, հնչում են Ռուբեն Սեւակի մեծ ընկեր ու համախոհ Կոմիտասի հետեւյալ խոսքերը.«Ես վախ չունիմ, թէ ռուս կառավարութեան մէջ կը հալինք, որքան էլ որ հալինք, այնուամենայնիվ, մեր ինքնագիտակցութիւնը զարթնած է, եւ եթէ խելոք շարժուինք, կը վաստակենք, ես այս կարծիքն ունիմ»103:

Կոմիտասի քաղաքական հայացքներին այս համառոտ ծանոթությունն էլ բավական է, որպեսզի պարզ լինի, թե ինչու էր դաշնակցության ղեկավարությունը հալածում մեծ հայրենասերին:

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո, ռեակցիայի գրոհին չդիմացավ նաեւ «Հնչակ» կուսակցությունը, որը նույնպես ճաշակեց քայքայման դառնությունը: Հեղափոխության պարտությունից հետո հայ իրականության մեջ հանդես եկան այսպես կոչված «սպեցիֆիկները» Դավիթ Անանունի գլխավորությամբ: Բոլշեւիկյան «Կայծ» թերթը «սպեցիֆիկներին» գնահատեց նրանց անվանելով գեներալներ առանց բանակի104: Սպեցիֆիկները գտնում էին, որ հայ իրականության մեջ հայ բանվորների համար գոյություն չունի հեղափոխական շարժում: Հեղափոխության պարտությունը ծանր հարված հասցրեց նաեւ սոցիալ–դեմոկրատներին:

Հակահեղափոխության հարձակումը յուրատեսակ քննություն եղավ հայ գրականության, մշակույթի համար: Հեղափոխության ժամանակ գրած «Ազատության զանգ» բանաստեղծության հեղինակ Ավետիք Իսահակյանը հակահեղափոխության հալածանքների պայմաններում կերտեց «Աբու–Լալա Մահարի» պոեմը, որը ոչ թե հոռետեսության ու հուսահատության արտահայտություն էր, այլ բուռն բողոք ու դժգոհություն ստեղծված իրականության դեմ:

Այսօր հանիրավի մոռացության է տրվում, նույնիսկ դպրոցական դասագրքերից հանված է նշանավոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանը, որը հակահեղափոխության հարձակման ծանր պայմաններում չկորցրեց հավատը

գալիքի նկատմամբ եւ 1909թ. գրեց «Նոր առավոտ» պոեմը, որտեղ դատապարտվում են անհատապաշտությունն ու հոռետեսությունը:

Բայց բոլորը չէ, որ ընկան հուսահատության մեջ: Բոլորը չէ, որ դարձան հոռետես, սուզվեցին անկումային տրամադրությունների մեջ: Ի պատիվ Ռուբեն Սեւակի ասենք, որ նա արեւմտահայ գրական, հասարակական ու ազգային գործիչների մեջ եղավ այն եզակի դեմքերից մեկը, որ հավասարակշռված ու սթափ վերաբերմունք դրսեւորեց արդարության հաղթանակը կապելով կարմիր դրոշի, զինված պայքարի հետ: Լինելով համոզված աթեիստ Ռուբեն Սեւակը բարձրաձայն բողոքում էր, թե ինչու են այդքան տաճարներ շինվում, երբ որբերը նույնիսկ գիշերելու տեղ չունեն105:

Ռուսական հեղափոխության պարտությունը եւ երիտթուրքական հեղափոխության հաղթանակը Ռուբեն Սեւակի համար դարձան խթան սոցիալական խնդիրներին անդրադառնալու համար: Իմիջիայլոց, մենք եզակի երեւույթի հետ գործ ունենք, երբ հայ գեղարվեստի ասպարեզում ազգայինն ու սոցիալականն այդպես ներդաշնակորեն են դրսեւորվում: Եզակի երեւույթ է, որովհետեւ Ռուբեն Սեւակի ստեղծագործական տարիներին տիրում էր այն մտայնությունը, ըստ որի արեւմտահայությունը պետք է մղեր միայն ազգային–ազատագրական պայքար, որ սոցիալական պայքարը հայ իրականության մեջ տեղ չունի:

Ռուբեն Սեւակի համար արեւմտահայության ազատագրումը ավելի լայն, ավելի ընդգրկուն խնդիր էր եւ ուներ շեշտված արտահայտություն: Հենց այդ է ապացուցում Ռուբեն Սեւակի հաստատուն համոզմունքը «ճառով, խօսքով, ինքն իրեն, արդարութիւնը չի գար: Արդարութիւնը պիտի գայ կարմիր դրօշակով, ի զէն, ի պայքար»: Այս խոսքերը Ռուբեն Սեւակը գրել է 1909թ. մայիսի 28–ին: Ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում այդ ամսաթվի վրա: Դա Ադանայի կոտորածներից հետո էր: Երբ Ռուբեն Սեւակը զենքի էր կոչում, այդ նույն ժամանակ դաշնակցությունը, ինչպես տեսանք վերեւում, ուրիշ խաղ էր առաջ տանում:

Սուլթանական եւ երիտթուրքական դաժան տեռորի, ինչպես նաեւ լիբերալ–բուրժուական մտավորականության դավաճանության աստիճանի հասած վախկոտության պայմաններում Ռուբեն Սեւակը հստակորեն որոշեց իր հասարակական–գրական դիրքը եւ արեւմտահայ աշխատավորի մեջ տեսավ պատմական ճակատագիրը կերտողին: Ռուբեն Սեւակն իր այս դիրքից երբեք չնահանջեց:

Մինչեւ Ադանայի ողբերգությունը եւ դրանից հետո էլ Ռուբեն Սեւակը տեսնում էր ոչ միայն ստրկության մեջ գտնվող հլու զոհերին, այլեւ նոր մարդկանց, որոնք պատմության ասպարեզ են բարձրանում ներքնահարկի խավարից: Ռուբեն Սեւակը զայրույթով էր վերաբերում նրանց, ովքեր շարունակում էին կույր մնալ ու չտեսնել իրական կյանքի պահանջները: Նրա

ստեղծագործության մեջ ներկա է ժողովրդի ոգին, շունչը: Եվ դա Ռուբեն Սեւակի համար գլխավորն էր: Իմ կարծիքով Ռուբեն Սեւակը հայտնվեց այն շատ քչերի շարքում, որոնք ընդհուպ մոտեցան 20–րդ դարի կենտրոնական գաղափարական–գեղարվեստական պրոբլեմի լուծմանը՝ անհատի եւ ընդհանուրի, անձնականի եւ հանրայինի, սուբյեկտիվ լիրիկականի եւ օբյեկտիվ պատմականության պրոբլեմների լուծմանը:

Ռուբեն Սեւակն անսովոր սրությամբ զգում էր հին աշխարհի պետական, հասարակական հիմքերի, նրա բարոյականության, մշակույթի ու արվեստի ճգնաժամը: Նրա պատկերած վատ աշխարհը ներկված է բոսոր–կարմրագույն, որն ընդունում էր որպես աշխատավոր մարդու ըմբոստության խորհրդանիշ: Իմ համոզմամբ հենց Ռուբեն Սեւակի այս ծգտումը խոր անջրպետ ստեղծեց նրա արվեստի ու իր ժամանակի դեկադենտական էսթետիկայի միջեւ, որի ամբողջ էությունը հանգում էր ամբողջականության ոգու կորստին եւ աշխարհի միասնության մասին պատկերացում կազմելու անընդունակությանը, մասի եւ ամբողջի դիալեկտիկան չըմբռնելուն:

Ռուբեն Սեւակն իր ստեղծագործության մեջ ելնում էր աշխարհի, հասարակության ու մարդու միասնության մասին ճշմարիտ պատկերացումներից: Աշխարհը նրա համար ամբողջական էր ու անբաժան, իսկ մարդն օրգանապես մտած այդ միասնության մեջ: Անհատն ընդունակ է իրեն դրսեւորել միայն հասարակության, ժողովրդի, պատմության ընթացքի հետ ամբողջական կապով: Արվեստը, ինչպես հասկանում էր Ռուբեն Սեւակը, կոչված է արտահայտել իր, միայն իրեն հատուկ ու մատչելի միջոցներով աշխարհի միասնությունը եւ նրան առնչվող մարդու զգացողությունը:

Ես խորապես համոզված եմ, որ Ռուբեն Սեւակը բանաստեղծի գործը հասկանում էր որպես սրտի փորձություն: Սրտի փորձություն՝ ահա Ռուբեն Սեւակի պոեզիայի գլխավոր, նշանակալի կողմերից մեկը: Մեր ապրած աշխարհը այսօր ավելի է տագնապալի դարձել, ավելի է բարդացել: Ոչ մի պահ չի թուլանում դաժան ու անզիջում պայքարը բարի ու չար ուժերի միջեւ, հետադիմության ու դեմոկրատիայի միջեւ, աշխատանքի ու կապիտալի միջեւ:

Այսպիսի պայմաններում պոեզիան կոչված է մարդկությանը հիշեցնել բարոյական արժեքների մասին: Այդ խնդիրը կատարելու համար պոեզիան ունի հսկայական հնարավորություններ՝ հարուստ անցյալ, ուսանելի ավանդույթներ ու օրինակներ:

Իմ պատկերացմամբ այդպիսի բարձր, ուսանելի եւ ոգեւորող օրինակ կարող է ծառայել մեզ համար Ռուբեն Սեւակը, նրա անձը, նրա ստեղծագործությունը, նրա ճակատագիրը:

Գրականության պատմությունից հայտնի է 19–րդ դարի սկզբին տեղի ունեցած մի կարեւոր իրադարձություն: Արվեստը հանդիպեց քաղաքականությանը: Խոսքը վերաբերում է Ֆրանսիայի կայսր Նապոլեոնի նկատմամբ

Բեթհովենի եւ Գյոթեի վերաբերմունքին: Հանրահայտ է, որ ֆրանսիական հեղափոխությամբ ոգեւորված Բեթհովենն իր «Հերոսական սիմֆոնիա«նվիրեց հեղափոխության անվեհեր կոնսուլ Նապոլեոն Բոնապարտին: Նապոլեոնը իր նվաճումներով ու իշխանությամբ այնքան հրապուրվեց, որ իրեն հռչակեց կայսր: Սա վեր էր Բեթհովենի պատկերացումներից եւ Նապոլեոնի կայրսի տիտղոս ընդունելու լուրն առնելուն պես հանեց «Հերոսական սիմֆոնիայի«նվիրումը:

Իհարկե. Բեթհովենի քայլն աննկատ չմնաց, եւ Նապոլեոնն իր վերաբերմունքը հայտնեց Գյոթեի հետ հանդիպման ժամանակ արտասանելով հետեւյալ խոսքերը. «Քաղաքականություն՝ ահա ճակատագիրը»: Նապոլեոնն այս մտքով նկատի ուներ իր քաղաքականությունը եւ նրանում զբաղեցրած իր տեղը ցույց տալ ը:

Ասվածի առնչությամբ ուզում եմ հիշել դարերով մշակված այն համոզմունքը. ավելի ճիշտ. այն ստոր օրենքը, թե «նպատակը արդարացնում է միջոցները», քաղաքականությունն անհնար է իրագործել մաքուր ձեռքերով: Ոչ մի ասպարեզում այդ ստոր օրենքը տիրապետող չէ, ինչպես քաղաքականության մեջ: Այսպիսի քաղաքականության համար ատելի են մարդկային ազնիվ զգացմունքները, խիղճը, դրանք համարավում են անհարկի թուլություն: Այլ խոսքով՝ քաղաքականության անամոթությունը, անխղճությունը հայտարարվում են բարձրագույն բարոյականության չափանիշ: Հենց դա էլ նկատի ուներ Շեքսպիրը, երբ ընդգծում էր, թե քաղաքականությունն ունի անմարդկային ապակե աչքեր:

Ռուբեն Սեւակն ըմբոստանում էր այդ ստոր օրենքի դեմ եւ որպես հումանիստ մտածող, համոզված էր, որ լավ նպատակին հնարավոր չէ հասնել վատ միջոցներով, որ վատ միջոցները միայն ձեւախեղում են նպատակը: Այս առնչությամբ հիշենք Ջորդանո Բրունոյին: Ճիզվիտները նրան այրեցին խարույկի վրա եւ քանի դար շարունակ հպարտանում էին իրենց նպատակին հասնելու այդ անմարդկային միջոցով: Միայն հետո նրանց հաջորդները դա համարեցին «սխալ»:

Ռուբեն Սեւակի գրառումների մեջ կա մի կարճ, բայց շատ տարողունակ միտք. «Ըսէ ինծ, թէ ինչ կ'ուզես, ըսեմ քեզ, թէ ով ես»106:

Փիլիսոփայությունը, սոցիոլոգիան,հոգեբանությունը գիտականորեն ապացուցել են այն. ինչ մեծ մտածողների շարքում Ռուբեն Սեւակը նույնպես բացահայտել է գեղարվեստական խոսքի միջոցով: Ռուբեն Սեւակին հավասարապես հետաքրքրում էին սոցիալական ախտերը. հոգու հիվանդությունը: Նա զբաղվում էր ոչ միայն սոցիալական ախտերով, այլ նաեւ, ինչպես հիմա են սովորաբար անվանում, հոգեւոր սիֆիլիսով (կամ նրա խոսքերով ֆրանկացավով) ու սպիդով:

Դժվար է, նույնիսկ անընդունելի. պահանջել, որ, օրինակ, մարդկության



Ռուբեն Սեւակ: Լոզաննն, 1908թ.:

մեծ ողբերգությունները նկարագրվեն գեղեցիկ գույներով, երբ. առհասարակ. մարդկության գոյությանն է վտանգ սպառնում: Ռուբեն Սեւակը նույնպես այս սկզբունքով էր առաջնորդվում եւ նրա մոտ ընթերցողը չի հանդիպի ողբերգության պատկերների գեղեցիկ նկարագրության: Սակայն դրա փոխարեն Ռուբեն Սեւակը հնչեցնում է մեծ տագնապ ու զգաստության կոչ է անում:

Այստեղ ուզում են ասել. թե փույթ չէ. որ Ռուբեն Սեւակը ծանոթ չէ ֆաշիզմ բառին: Բայց նա ի դեմս երիտթուրքիզմի. կանխատեսեց ֆաշիզմի անգութ էությունը: Ինչպես երիտթուրքիզմը, այնպես էլ ֆաշիզմը մարդկանց դրել էին միայն մեկ՝ կյանքի ու մահվան միջեւ ընտրության առջեւ: Երիտթուրքիզմը իբրեւ շովինիստական գաղափարախոսություն հանդիսանում էր քաղաքական ժանտախտ, գաղափարախոսական սիֆիլիս: Եվ Ռուբեն Սեւակն այն համարձակ գործիչներից մեկը եղավ. որ ոչ միայն զգուշացնում էր մահացու վտանգի մասին. այլեւ ցույց էր տալիս դա հաղթահարելու ուղին. փակուղուց դուրս գալու ելքը: Եվ նա հավատում էր այդ ելքին:

Յուրաքանչյուր գրողի. արվեստագետի. մշակույթի այլ ասպարեզի ցանկացած ներկայացուցչի համար կարեւոր նշանակություն ունի. թե նա սոցիալական ինչ հայացքներ ունի կամ ավելի ճիշտ բարիկադի որ կողմում է կանգնած: Ո՞վ ինչ դիրքերից է ստեղծագործում. ո՞վ ում շահերն է արտահայտում ու պաշտպանում: Վերջապես. ո՞վ ում դեմ է պայքարում եւ ինչի՞ համար: Այս եւ համանման շատ այլ հարցեր. իհարկե. չունեն միատեսակ պատասխան կամ գնահատական. քանի որ բոլոր դեպքերում առկա է սուբյեկտիվ վերաբերմունքը: Սակայն. այնուամենայնիվ. պետք է նշել. որ հատկապես 19–րդ դարի ընթացքում եւ նաեւ 20–րդ դարի սկզբին այդ հանգամանքը մեծապես վերաբերում է գեղարվեստական գրականությանը. գրական խոսքին: Գրական ասպարեզում տիրապետող էր սալոնային գրականությունը. բայց նրանից դուրս գոյություն ուներ ուրիշ գրականություն. որն ամենայն ուշադրությամբ արձագանքում էր իր միջավայրի իրադարձություններին եւ դրսեւորում հոգատարություն ու պաշտպանություն այդ միջավայրի կենտրոնական դեմքի աշխատավոր մարդու նկատմամբ:

Ռուբեն Սեւակը հենց այդ գրող–մտածողների շարքում էր. որոնք համակրանքով էին լցված դեպի աշխատանքի մարդը եւ նրան էին դարձրել իրենց գլխավոր հերոսը արտահայտելով ոչ միայն վերջինիս չարքաշ կյանքը. այլեւ ապրումները. հայացքները եւ նրանց զարթոնքի հետ էին կապում վաղվա հույսը. որի գալստյանը երբեք չէին կասկածում:

Հարկ եմ համարում այստեղ հիշել 1908թ. մայիսի 27–ին ժանի Ապելին ուղարկած Ռուբեն Սեւակի նամակի հետեւյալ տողերը. «Միշտ խորհէ անոնց մասին. որ աւելի դժբախտ են. քան դու. որ ծնողք անգամ չունին. որ չոր հացի կտորի մը կարօտը կը քաշեն. որ երբեք չսիրուեցան (խեղճերը). որ նշանուած են բռնի դրամի համար. որ ապրելու դատապարտուած

դժբախտներ են»107:

Ավելորդ չեմ համարում այստեղ հիշել, թե ինչպես բոլորովին վերջերս (2002թ. օգոստոսի առաջին օրերին) «Ամերիկայի ձայն» տխրահռչակ ռադիոկայանի հայկական հաղորդաժամին հանդես եկած Երեւանի պետական համալսարանի արվեստագետ պրոֆեսորը երկար ու բարակ խոսում էր հայ ազնվականության մասին եւ նրա կերպարը պանծացնելու, լուսաբանելու ցանկություն արտահայտում: Միաժամանակ պրոֆեսորը քծնելով ամերիկյան ապրելակերպը կրողներին ու քարոզիչներին, փաստորեն պահանջում էր վերադարձ դեպի սալոնային գրականություն, որի գլխավոր հերոսը «անհայտ» միջոցներով ու թալանով հարստություն դիզած, իրենց գռեհիկ էությամբ ու վարքով նորօրյա հայ «ազնվականները» պետք է լինեն:

Բոլոր դեպքերում, իմ կարծիքով, ակնառու փաստ է, որ Ռուբեն Սեւակն աչքի էր ընկնում այն կրակոտ ոգեւորությամբ, որն առանձնացնում էր նրան որպես մարդկության ազատագրական պայքարի մարտիկ: Ռուբեն Սեւակի ստեղծագործությունը, որպես քաղաքական լիրիկ, ձեւավորվեց 1908թ. սկսած: Նա գտնվում էր հասարակական ու քաղաքական կյանքի հորձանուտում, շատ բանաստեղծներից ավելի խորությամբ էր ընկալում պատմական տեղաշարժերը, որոնք կատարվում էին Արեւմտյան Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս: Ահա թե ինչու նա չէր կարող բավարարվել լիբերալների լիրիկայի անբովանդակ պաթոսով: Նա ուզում էր, որպեսզի այդպիսի լիրիկան իր սուր ծայրով ուղղված լինի կոնկրետ փաստերի եւ իրադարձությունների կողմը:

Պատմականորեն դեպի վերելք ընթացող դասակարգերը, որոնք հեղափոխական պայքարի մեջ էին մտնում հին կարգերի դեմ, սովորաբար անմիջապես սնունդ են տալիս քաղաքական պոեզիային: Թե ինչքանով Ռուբեն Սեւակը գիտակցաբար դիմեց այդ ոճի բանաստեղծական զենքին, ցույց է տալիս թեկուզ հետեւյալ փաստը: Ոճի ձեւավորման ժամանակ հսկայական նշանակություն ունի գրական անցյալի այս կամ այն երեւույթի հետ ունեցած կապի հարցը: Հրաժարվելով ռոմանտիզմի ծույլ, թույլ եւ հետադիմական միտումներից Ռուբեն Սեւակը կողմնորոշվեց դեպի հրապարակախոսական գրականության հին ներկայացուցիչները, քաղաքական պամֆլետի հին վարպետների կողմը: Նրա համար այդպիսի կողմնորոշիչներ էին Մ.Նալբանդյանը, Հակոբ Պարոնյանը, Րաֆֆին եւ մյուսները:

Ռուբեն Սեւակի բանաստեղծությունների մեջ ուղղակի հնչում են իրական պայքարի մոտիվները եւ ոչ թե աղքատների ճակատագրի համար վիշտը, ինչը յուրահատուկ էր ժամանակի ռադիկալ պոետներին: Ռուբեն Սեւակը կոչ էր անում քաղաքականապես լուսավորել աղքատներին:

Այն ժամանակ, երբ մանրբուրժուական պոետների քաղաքական լիրիկան հնչում էր որպես «անվնաս դուդուկ», Ռուբեն Սեւակի պոեզիան միշտ

ելնում էր երեւույթի էությունից եւ մշտապես գործուն էր:

Ռուբեն Սեւակի քաղաքական լիրիկային հատուկ է ծեւի ու բովանդակության դիալեկտիկական միասնությունը: Ինչի մասին էլ որ նա գրել է, նրանցում առկա է միտումի միասնությունը, արտահայտվում է ժամանակաշրջանի հասարակական կյանքի ու բանաստեղծի անձնական կյանքի ամբողջության սերտ ներդաշնակությունը:

Ռուբեն Սեւակն իր շատ ժամանակակիցներից ավելի սրատեսորեն ընկալում էր, թե ինչ դժբախտություններ է բերում զարգացող կապիտալիզմը իր ընչաքաղցությամբ, եսասիրությամբ, շահագործմամբ: Այս սուր զգացողության արդյունքով էր, որ նա խստորեն քննադատում էր կապիտալիստական աշխարհի մշակույթն ու բարոյականությունը:

Իր «Կարմիր գրքի» առիթով 1910թ. օգոստոսի 10–ին Ռուբեն Սեւակը որոշակիորեն շեշտում էր, որ «հացը աշխատողին չէ, հացը գողցողին է, ու մեռնողին իրաւունքը մեռցնողին հարցնելը եղերական անմտութիւն մըն է»108: Այստեղից էլ Ռուբեն Սեւակի մտահոգությունը, առհասարակ, մարդկության ճակատագրի վերաբերյալ, որն արդեն անցել էր զարգացման կապիտալիստական ուղի: Գիտության ու տեխնիկայի առաջընթացը, նոր մեքենաների ու մեխանիզմների ներդրումը ոչ միայն պայմաններ էին ստեղծել արդյունաբերական ու ֆինանսական բուրժուազիայի հարստացման համար, այլեւ ավելի էին ծանրացնում հասարակության շահագործվող խավերի վիճակը:

Այս ամենը Ռուբեն Սեւակի մոտ առաջ էր բերում երկակի վերաբերմունք կապիտալիստական քաղաքակրթության նկատմամբ: Բնական է, որ Ռուբեն Սեւակը պետք է ուրախանար, որ մարդկային միտքը թափանցում է գիտության ու տեխնիկայի դեռեւս չուսումնասիրված ասպարեզ, որ դրանց արդյունքը կարող է հեշտացնել նյութական բարիք ստեղծող մարդկանց աշխատանքն ու լավացնել նրանց կենսապայմանները:

Բայց որպես մարդու ազատության համար պայքարող մարտիկ, Ռուբեն Սեւակն ամբողջ հոգով ըմբոստանում էր, որ կապիտալիստական քաղաքակրթությունը բերում է այլասերում, բարոյական արժեքների ծեւախեղում, որ ամեն ինչի տեր է դարձնում դրամը: Չպետք է մոռանալ, ընդգծում էր Ռուբեն Սեւակը, որ «մենք դեռ կ'ապրինք քսաներորդ դարուն մէջ, ուր միահեծան կ'իշխեն նիւթապաշտութիւնը, առուտուրը, արդիւնաբերութիւնը, դրամն ու գարշանքը»109:

Ինչպես նշվել է վերեւում, Ռուբեն Սեւակը Լոզանում շփվում էր շատ հեղափոխական վտարանդիների հետ, կարդացել էր Կարլ Մարքսին, Վիկտոր Հյուգոյին, Լեւ Տոլստոյին, Հայնրիխ Հայնեին, Մաքսիմ Գորկուն եւ շատ ուրիշների: Ծանոթ էր եվրոպական սոցիալիստական գրականությանը, հետեւում էր քաղաքական անցուդարձին: Ռուբեն Սեւակը տեղյակ էր տարբեր



Ժաննի Աբել: Լոզաննն, 1908թ.:

երկրներում ընթացող հեղափոխական, ազգային–ազատագրական շարժումներին եւ այս առումով նրա վրա որոշակի ազդեցություն ունեցավ 1905–1907 թվականների ռուսական հեղափոխությունը, որի ընթացքը լայնորեն լուսաբանվում էր ժամանակի եվրոպական մամուլի էջերում:

Լինելով բնավորությամբ ակտիվ Ռուբեն Սեւակը չէր կարող անտարբեր մնալ Եվրոպան տագնապի մեջ գցած հեղափոխության նկատմամբ եւ յուրովի բանաստեղծական խոսքի միջոցով արտահայտեց իր վերաբերմունքը հեղափոխության գլխավոր ուժի նկատմամբ: Ահա, օրինակ, 1909թ. մայիսի մեկին գրած «Կարմիր տօնը» բանաստեղծությունը: Հեղափոխությունը պարտվել էր: Հաղթանակը տոնում էր եվրոպական հետադիմությունը, որը շատ էր վախեցել ռուսական հեղափոխության ազդեցությունից: Գրականության, արվեստի մեջ տիրապետող էին անկումային տրամադրությունը, հիասթափությունը: Շատերին, նույնիսկ փորձված, բանտ ու աքսոր տեսած հեղափոխականներին թվում էր, թե հեղափոխության պարտությամբ ամեն ինչ վերջացած է: Իսկ ահա Ռուբեն Սեւակը «Կարմիր տօնը» բանաստեղծության մեջ վրեժի կոչ է անում.

«Թափորներով դուք դեգերուն
Դրօշակներու ներքեւ բոսոր.
Վրէժն երգեցէք ձեր վէրքերուն,
Վրէժի ահեղ տօնն է այսօր...»110:

Ուզում եմ նկատել զարմանք պատճառող մի զուգադիպություն: Հեղափոխության պարտությունից հետո բոլոր հիասթափվածները կարծես մի անտեսանելի ու կախարդական գավազանի հարվածով փախան հեղափոխության դիրքերից, փախան առանց ետ նայելու: Իսկ նրանք, ովքեր հավատում էին հաղթանակին, անվարան մնացին իրենց դիրքերում եւ համոզված էին, որ հեղափոխության պարտությունը ժամանակավոր է:

Պայքարի գաղափարը ավելի է զարգացնում Ռուբեն Սեւակը դարձյալ 1909թ. գրած «Կարմիր դրօշակը» բանաստեղծության մեջ: Այս բանաստեղծությունը «ինչուների» մի ամբողջ շարք է, որը սոցիալական անարդարության մի համապարփակ նկարագրություն է: Այստեղ տրված հարցն ու դրա պատասխանը առարկայական են եւ ընթերցողին հրավիրում ու կանգնեցնում են ինքնուրույն պատասխանի անհրաժեշտության առջեւ:

Ահա մի երկու հատված «Կարմիր դրօշակը» բանաստեղծությունից.

«Ինչո՞ւ մէկը ծեղուններու տակ ոսկի.
Միւսը խոնաւ խշտեակի մէջ սողոսկի...
Մէկուն դիակին վրայ դամբան, վարդ, մարմար,
Ողջը չունի բարձ մը ուր հանգչիլ կարենար...»111:

Սա նախանձի պոռթկում չէ, ինչպես սովորաբար նման դեպքերում ուզում են ներկայացնել սալոնային պնակալեզները: Դա անարդարության

դեմ բողոքի հուժկու պոռթկում է, որից այնպես վախենում են սալոնային պնակալեզների տերերը:

Ռուբեն Սեւակն իր բանաստեղծությունն ավարտում է ուևեզրկվածների երթի նկարագրությամբ, որոնք արդեն գիտեն իրենց նպատակը եւ որ ամենակարեւորն է՝ նպատակին հասնելու միջոցը: Ահա եւ բանաստեղծության ավարտը.

«Ու ինձ այնպէս թուեցաւ, թէ լռելեան
Ճակատագրին թելը կ'իշխէր իրենց վրան...
Բայց կ'երթային անոնք, Ի ՋԷՆ, Ի ՊԱՅՔԱՐ,
Արդարութեան կը դիմէին խոնջ տկար,
Արդարութիւն, որ այս կերպով պիտի գար...»112:

Ռուբեն Սեւակը հպարտանում էր, որ ինքը աղքատասեր սիրտ ունի: Եվ նրա աղքատասիրությունը աղքատին, թույլին, իրավազուրկին օգնելու եւ պաշտպանելու ազնիվ պարտականությունն է: «Սիրեցի տառապակոծ մարդկութիւնը», հռչակում էր Ռուբեն Սեւակը113: Ոմանք այդպիսի պարտականությունը շփոթում են հղփացած բուրժուաների հետ, որոնք պարապությունից մի կտոր չոր հաց են նետում աղքատին եւ պահանջում հրապարակավ մեծարել ու պատվել իրենց այդ «մեծ» բարեգործության համար:

Ռուբեն Սեւակը պայքարի համար կարեւորում էր ատելության գաղափարը, ատելության զգացումը: Ահա թե ինչու 1911թ. գրած «Փողոց աւլողը» բանաստեղծության մեջ կոչ էր անում.

«Ու սորվէ ատել նողկանքով անհուն
Անոնք, որ «փրկչի» կը կրեն անուն
Ու ծոխ խօսքերով տունըդ կը քանդեն,
Սորվեցուր տղոցդ ատել արգանդէն
Քաղաքագէտները ամէն գոյնի,
Որոնք կը սպաննեն քեզ առանց թոյնի:
Սորվեցուր իրենց խօսքը հետագայ
«Աղքատին համար բարեկամ չի կայ»
Փոքրերն անվրէպ մեծերուն կեր են,
Մարդերը կատղած կենդանիներ են»114:

Ռուբեն Սեւակի սոցիալական թեմատիկայի մեջ աչքի է ընկնում նաեւ «Այս դանակը» պոեմը: «Ռուբեն Սեւակ,– գրում է Հ.Չիլինկիրյանը.– «Այս դանակը» բանաստեղծութեան մէջ, իբր բժիշկ եւ գիտութեան մարդ, այս «ցաւ»ին ախտաճանաչումը կատարելէ ետք, զգայականութիւնէ հեռու լուծում մը փնտռելու կը ջանայ»115: «Այս դանակը» հուժկու բողոք է սոցիա-

լական անարդարությունների դեմ: «Ինչո՞ւ ոմանք տէր են, ոմանք գերի: Ինչո՞ւ ոմանք կուշտ են, ոմանք կարօտ մի կտոր հացի»:

Պոեմը նվիրված է գործազուրկ բանվորին ու նրա սովի մատնված ընտանիքին: Ահա մի քանի պատկեր. «Գործարաններու դուռները փակ են... բանուորներն ամբողջ նետեր են փողոց... Կ'ըսեն ապրանքով լեցուեր է շուկան... Թէ բանուորն այնքան արտադրեր է շատ, ինչու հաց չունի բանուորն անաշխատ...»116: Նկատենք, որ այս պոեմը նույնպես գրվել է 1909թ., բայց մեր այսօրվա համար ինչքա՜ն ծանոթ պատկեր է: Այնպես չէ՞:

Պոեմի հերոս աղքատ բանվորն իր հացի խնդիրը ի վերջո լուծում է դանակի, այսինքն զենքի միջոցով: Սա է միակ միջոցը: Սա է միակ ելքը: Ուրիշ այլ կերպ բանվորը չի կարողանա հասնել իր արդար քրտինքով վաստակին:

Սրանով Ռուբեն Սեւակը վճռականորեն առանձնացավ իր ժամանակակից շատ նշանավոր գրողներից ու ազգային–հասարակական գործիչներից, որոնք նույնպես հանդես էին գալիս կապիտալիստական դաժան հարաբերությունների քննադատությամբ, պատկերում հասարակ մարդկանց չարքաշ կյանքը: Դրանով էլ նրանք բավարարվեցին՝ վախենալով ավելի հեռուն նայել:

Իսկ Ռուբեն Սեւակը չբավարարվեց կապիտալիստական հարաբերությունները քննադատելով: Նա որոշակիորեն ցույց տվեց այդ հարաբերությունների կապանքներից ազատագրվելու ելքը՝ իր հերոսներին մղելով դեպի պայքար, մատնացույց անելով սոցիալական հեռանկարը:

Ահա շատ համառոտ իմ պատկերացմամբ Ռուբեն Սեւակի սոցիալական թեմատիկայի գլխավոր բովանդակությունը:

Ռուբեն Սեւակն իր «Դրամին աղօթքը» բանաստեղծությունը նվիրել է «խեղճերուն»: Այդ բանաստեղծությունը հզոր բողոք է սոցիալական անարդարության, դրամի վրա հիմնված անբարոյական հասարակության դեմ: Ովքե՞ր են դրամի զոհերը: «Աղքատ մայր մը», «սովալլուկ բիւր թշուառներ», «մայրազուրկ փոքրեր անօթի»: Եվ նրանց բոլորի անունից Ռուբեն Սեւակը դիմում է դրամին՝ պահանջելով.

«Ըսէ. քու կամքդ պիտի իշխէ՞ յաւիտեան»:

Բայց այս պահանջը կրավորական չէ: Այն իր մեջ ունի զսպված պոռթկում, որը կարող է մի գեղեցիկ օր պայթել ու ստիպել դրամին, այսինքն դրամատիրոջը.

«Իջիր, իջիր, խոնարհօրէն, մեղմօրէն,
Իջիր ոսկի սանդուխներուդ մատներէն...»117:

«Դրամին աղօթքը» բանաստեղծութիւնը, ինչպես նշում է Հ.Չիլինկիրյանը, իսկական մարգարեություն է դրամի մասին իր ախտաճանաչմամբ, «ուր Ռուբէն Սեւակ իր վախը եւ մտահոգութիւնը կը յայտնէ»118:

Հնարավոր եմ համարում, որ ընթերցողներից ոմանք կարող են ինձ մեղադրել, թե Ռուբեն Սեւակին ձգտում եմ ներկայացնել որպես հեղափոխա-



Ռուբեն Սեւակ եւ ժաննի Աբել: Լոզաննի, 1909թ.:

կան եւ համարյա կոմունիստ, որպեսզի ավելի ընդգծեմ նրա կերպարը: Ինձ հարկավոր էլ չէ Ռուբեն Սեւակի ստեղծագործության մեջ փնտրել կոմունիստական բովանդակություն, նրա գրվածքներում եւ ասույթներում որոնել այդ հայացքների ու հասկացությունների հետ գաղափարաիմացական համընկնումներ: Ես պարզապես Ռուբեն Սեւակին ընդունում եմ այնպես, ինչպես որ եղել է ու կա:

Ես նաեւ չեմ գունազարդում Ռուբեն Սեւակին: Իհարկե, անիմաստ է Ռուբեն Սեւակին ներկայացնել որպես «կոմունիստ»: Բայց որ նրա հասարակական–քաղաքական հայացքները, ինչպես պատահի, այնպես էլ հասուն ժամանակ, եղել են հեղափոխական, դրանում համոզված եմ վճռականորեն: Ընդորում Ռուբեն Սեւակը հեղափոխական էր գիտակցորեն, որն արտացոլվում է նրա տրամաբանված ու մտածված դատողություններում: Հեղափոխական Ռուբեն Սեւակը պատմական փաստ է եւ բացարձակ ճշմարտություն:

Իհարկե, գիտեմ, որ իմ այս տեսակետը ոմանք չեն կիսում եւ Ռուբեն Սեւակին լավագույն դեպքում պատկերացնում որպես եղերական վախճան ունեցող բանաստեղծ: Ուստի հարկավոր է շարունակաբար ու անխոնջ քարոզել եւ ապացուցել իմ տեսակետի ճշմարտացիությունը: Այս խնդիրը ես համարում եմ կարեւոր եւ սկզբունքային նշանակություն ունեցող: Եվ ես համոզված ընդգծում եմ, որ Ռուբեն Սեւակի նման մտածող բանաստեղծը չէր կարող հեղափոխական չլինել:

1910թ. Ռուբեն Սեւակը հրատարակեց իր միակ գործը «Կարմիր գիրք» անվամբ: Գրականագետները եւ առաջին հերթին հատկապես բանասիրության դոկտոր Վլադիմիր Կիրակոսյանը, պատշաճորեն վերլուծել են ու գնահատել այդ գիրքը՝ նշելով նրա գեղարվեստական արժանիքները:

Ռուբեն Սեւակը «Կարմիր գրքի» մեջ ամփոփված պոեմները գրել է Ադանայի հայ բնակչության կոտորածների անմիջական ազդեցությամբ: Հարազատ ժողովրդի ողբերգության երիտթուրքական կազմակերպիչներին դատապարտող Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքը» ունի այժմեական հնչեղություն, նրանում արծարծված խնդիրներն իր ժամանակի սահմաններից դուրս գալու իմաստով: Փորձեմ այս առումով շարադրել իմ պատկերացումը դեպի ապագա միտված «Կարմիր գրքի» առնչությամբ:

Ընդհանրապես մարդու աշխարհզգացողությունը, նրա աշխարհայացքը հիմնված են հետեւյալ կանխադրույթի վրա. մարդը մահկանացու է, բայց ամբողջ մարդկությունն անմահ է: Մարդը մեռնում է, բայց մնում են մարդու աշխատանքի պտուղները: Կապրեն ուրիշ մարդիկ, ժողովուրդներ: Կապրի մարդկությունը: Չմոռանանք նաեւ, որ կա վերջապես պատմական հիշողություն, որը փաստում է, նույնիսկ որեւէ ցեղի, ժողովրդի, պետության, ամբողջ հասարակության ու քաղաքակրթության ոչնչացումից հետո էլ պատմությունը լրացվելու է այլ ցեղերի, ժողովուրդների, պետությունների, քա-

ղաքակրթությունների կյանքով:

Դարերով եւ հազարամյակներով ձեւավորված այսպիսի ընկալումը այսօր լրացվել է նոր բովանդակությամբ: Այդ բովանդակությունն այժմ վերաբերում է ամբողջ մարդկության ֆիզիկական գոյության վտանգին: Այսօր արդեն մարդկության ինքնապաշտպանության բնազդը վերածվել է ինքնախաբեության:

Մարդկությունը կանգնած է ռազմական եւ էկոլոգիական ինքնասպանության շեմին, որից փրկվելու որեւէ մեխանիզմ չի ստեղծվել: Ու, առհասարակ, չի եղել, որովհետեւ անցյալում այդ վտանգը գոյություն չուներ: Ուստի չկար եւ դրա վերացման մեխանիզմը:

Աշխարհի շատ ժողովուրդների բանահյուսությունը հարուստ նյութ է մատուցում գոյության համար մղված պայքարի, օտար նվաճողների դեմ մղված պատերազմների, ինչպես նաեւ սոցիալական ու բնական աղետների դեմ կռվի մասին: Այդպիսին է նաեւ մեր ժողովրդական էպոսը՝ «Սասնա ծռերը»:

Սակայն մարդկությունը մտել է նոր ժամանակաշրջան: Նա, ինչպես ասում են, արդեն շեմել է 21–րդ դարը: Եվ այդ ժամանակաշրջանը շատ է համապատասխանում Ռուբեն Սեւակի դիպուկ գնահատականին. «Այլասերում»:

Նախկին ժամանակներում մարդը ծնվում էր աշխարհը, կյանքը լավացնելու կամ վատացնելու համար: Այսօր արդեն մարդը ծնվում է աշխարհը, կյանքը փրկելու կամ կործանելու համար: Եվ այսօրվա մարդն ունի իր գլխավոր խնդիրը՝ գտնել աշխարհը, կյանքը փրկելու հաստատուն միջոց: Ահա այստեղ է, որ խոսքը միայն գիտությանը չի պատկանում: Հատկապես գրականությունը պետք է ասի իր վճռական խոսքը: Գրականությունը պետք է համամարդկային ինքնագիտակցության փրկարար հոգեւոր պայթյունը նախապատրաստի:

Դա արել է գրականությունը անցյալում: Այս գործում հայ իրականության մեջ Ռուբեն Սեւակը նույնպես նպաստել է հոգեւոր պայթյունի առաջացմանը: Այստեղ ես նկատի ունեմ Ռուբեն Սեւակի «Մարդերգություն» պոեմում արծարծված խնդիրներն ու հարցադրումները, որոնք նա խորհրդաստ կերպով արտահայտել է «եկեղեցէին մինչեւ գերեզման տանող ճամբուն վրայ»:

Մարդկային ցեղի անմահությունը, նախկին ժամանակազգացողությունը առօրյա, անհրաժեշտ, բայցեւ շատ հաճախ հոգսերով տարված մարդկանց մոտ ակամա, արհեստականորեն ստեղծել են «վերջին», «հավերժ» հարցերը հետաձգելու միտում: Հիշեցնեմ այս առումով արդեն բոլորիս համար համընդհանուր դատողությունը՝ «կսպասեն այս հարցերը, որովհետեւ հավերժ են դրանք»: Այսինքն՝ «հավերժականը» զոհաբերվում է «ժամանակավորին», ապագան՝ այսօրվան, համընդհանուրը՝ մասնավորին: Փաստորեն գործ ունենք այն պատկերացման հետ, ըստ որի «հավերժականը» չի ոչնչանում:

Ռուբեն Սեւակը զարմանալիորեն տեսնում էր, թե այսպիսի մտայնությունը ինչ վտանգ կարող է բերել մարդկությանը «սուգը երեկին, երկիւղը վաղուան»:

Այսօր արդեն մարդկային ցեղի կործանման վտանգը ծնել է մի անվերապահ գերակայություն, որը պահանջում է «վերջին» խնդիրները դարձնել ամենից առաջինը: Դրանք այն սոցիալական ու քաղաքական անհետաձգելի հարցերն են, որոնք դասվել են «հավերժական» հարցերի շարքում: Իր ժամանակին Ռուբեն Սեւակն էլ էր շեշտում դրանք նկարագրելով մուրացող աշխատավոր մշակի սովամահ վիճակը:

Պատմությունից հայտնի է, թե մարդու, ժողովուրդների, մարդկության կյանքի բարոյական նորմերը կարգավորելու, պահպանելու նպատակով ինչքան կանխադրույթներ են ստեղծվել: Այսօր արդեն հրատապ է դարձել «Մի սպանիր մարդկությունը» կանխադրույթը: Թող տարօրինակ չթվա, եթե ասեմ, որ այսօր արդեն իրար շատ են մոտեցել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «սպանել մարդուն» եւ «սպանել մարդկությունը»:

Բոլոր ժողովուրդների պատմությունը, առավելապես հայ ժողովրդի պատմությունը փաստում է, որ մարդիկ միշտ ապրել են հետեւյալ, արդեն օրինաչափ դարձած սկզբունքով, մինչեւ պատերազմը, պատերազմի ժամանակ, պատերազմից հետո եւ ապա նոր պատերազմից առաջ եւ այդպես շարունակ: Այսինքն մարդիկ, ժողովուրդները ապրել են պատերազմի թանձրացող մթնոլորտում, ապրել են պատերազմի համար, պատերազմով: Մարդկության մշտական ուղեկիցն են եղել պատերազմական անցյալը, պատերազմական ներկան, պատերազմական ապագան:

Ռուբեն Սեւակը պատերազմը անվանում էր «մեծագոյն անիրաւութիւն», որովհետեւ շատ լավ գիտեր, թե հայ ժողովուրդը այդ պատերազմներից որքան էր վնասվել ու կանխատեսում էր, թե հայ ժողովուրդը ապագա պատերազմում ավելի ծանր կորուստներ կունենա, ուստի պահանջում էր. «պատերազմները պետք է վերացվեն»:

Դարերի ընթացքում մարդկանց փոխհարաբերությունների մեջ հաստատվել ու յուրացվել են իրար չլսելն ու չլսվելը, չհասկանալն ու չհասկացվելը: Կարելի է պատմությունից շատ փաստեր բերել դրանց պատճառած վնասների մասին: Սակայն սահմանափակվենք ասվածով եւ որպես դրանց ընդհանրացում հիշել, որ մարդիկ բազում դարերով սովորել ու յուրացրել են իրենց վեճի լուծման վճռական, գլխավոր փաստարկը համարել կրակը, դաշույնը, մահապատիժը, պատերազմը: Այսինքն սպանությունը: Սպանությունը եղել է իրավացիության ու ճշմարտության չափանիշ: Այլ խոսքով այսօր արդեն ռեալ վտանգ ներկայացնող «սպանիր մարդկությունը» կարգախոսին ծնունդ է տվել «սպանիր մարդուն» կարգախոսը:

Այնուամենայնիվ, ուզում եմ այստեղ հիշել ոչ վաղ անցյալից մի հետաքրքիր փաստ: 1959թ. ծավալվեց բանավեճ «Երկու մշակույթ եւ գիտա-

կան հեղափոխություն» թեմայի շուրջ: Մասնակցում էին տարբեր երկրներից եկած գիտնականներ, արվեստագետներ, հասարակական ու քաղաքական գործիչներ: Բանավեճի ընթացքում նրա մասնակիցներն իրար էին մեղադրում տգիտության, իրենց չհասկանալու եւ իրենց առարկայի նկատմամբ արհամարհանքի մեջ: Գիտնականներն ու գրողները քաղաքականության պատճառով իրար չէին լսում, ուշադրություն չէին դարձնում հնչած զգուշացումներին: Այդ քաղաքականությունը նույնիսկ անտեսեց դեռեւս 1950թ. նշանավոր գիտնական Նիլս Բորի ՄԱԿ–ին ուղղած նամակը, որով միջուկային զենքի ստեղծողներից մեկը տագնապ էր հնչեցնում մարդկությանը սպառնացող մահացու վտանգի մասին:

Մեզանից մոտ 100 տարի առաջ բանաստեղծ փիլիսոփա Ռուբեն Սեւակին հարկ չեղավ սպասել մինչեւ միջուկային զենքի երեւալուն, որպեսզի բարձրացներ նոր մտածողության անհրաժեշտության հարցը: Որովհետեւ Ռուբեն Սեւակի համար մարդկության ինքնասպանության, նրա ոչնչացման վտանգը սկսվել էր իրական մեկ մարդու սպանությամբ: Որովհետեւ Ռուբեն Սեւակը չէր կարեւորում սպանության տեխնիկան եւ ընդգծում էր գլխավորը սպանության համար նպաստավոր պայմանների ստեղծումը եւ մատնացույց անում դրանք ստեղծողներին:

Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքը» այս առումով, միայն չէր վերաբերում Ադանայի հայ բնակչության կոտորածին: Իհարկե, ինքնին այդ ողբերգությունը մեծ է ու շատ ընդգրկուն: Բայց Ռուբեն Սեւակը որպես փիլիսոփա, չէր կարող սահմանափակվել այդ ողբերգությամբ եւ, առհասարակ, տագնապ չհնչեցնել, չհասկացնել, որ Ադանայի ողբերգությունը կարող է տարածվել, ավելի մեծ չափերի հասնել բովանդակ մարդկության իմաստով:

Ռուբեն Սեւակը խորաթափանցորեն կանխատեսում էր ավելի հեռու ապագան լի փորձանքներով ու ողբերգություններով: Ճիշտ է, նրան չէր կարող հայտնի լինել միջուկային զենքի մասին: Բայց «Ստինքը» բանաստեղծության հետեւյալ տողերով մի՞թե միջուկային ռումբի պայթեցումից առաջացած պատկերը չի ուրվագծում.

«Գետինէն վեր ծառացող ծանըր մի ծուխ գալարուն
Արիւն ու կիրք կը բուրէր: Կապարի շունչ մը անկենդան:
.....
Արդ կապարի օդին մէջ, հսկայավառ, ահագին,
Կրանիթէ բուրգ–ստինք մը կը տիրէր երկնամբարձ,
Սուգի սեւ խաչ մը ցցած իր գագաթի պտուկին»119:

Եվ որքան ճիշտ էր ու սթափեցնող Ռուբեն Սեւակի եզրակացությունը, որ անհնար է վերացնել մարդկությունը սպանելու վտանգը, եթե չվերացվի մարդուն սպանելու իրավունքը: Ռուբեն Սեւակը լավ գիտեր, որ ամեն ինչ սկսվել է «Սպանիր մարդուն» սկզբունքից:

Ես վերոհիշյալ բանավեճը հիշեցի նրա համար, որպեսզի ընդգծեմ, որ դրա մասնակիցները բանավիճում էին միայն բանավիճելու համար: Նրանց չէր հետաքրքրում մարդկության ճակատագիրը: Իսկ ահա Ռուբեն Սեւակը շուրջ հարյուր տարի առաջ համարձակություն ունեցավ թափանցել ավելի հեռուն, ավելի խորն ու հնչեցրեց տագնապ ուշանալու վտանգի մասին, որը միայն ուղղված չէր իր հայրենի ժողովրդին, այլ նրա միջոցով հասցեագրված էր ամբողջ մարդկությանը իր ժամանակի ու ապագա սերունդներին «Ու այսպէս պիտի կորչի ամէն բան...»:

Այժմ արդեն մարդիկ հայտնվել են ընտրության առջեւ կամ սովորել իրար լսել ու հասկանալ, ցանկանալ դա որպես փրկություն ու երջանկություն, յուրաքանչյուր անհատի, ժողովրդի վերաբերվել որպես մարդկության անգնահատելի արժեք, կամ էլ այդ ամենը ոչնչացնելու միջոցով ինքնասպանություն կատարել:

Պետք է նկատել, որ, դժբախտաբար, պատմությունից քիչ փաստեր են հայտնի, երբ մարդիկ, ժողովուրդներ ու պետություններ կարողացել են հասնել իրական խաղաղասիրության, փոխըմբռնման, փրկարար ու իմաստուն համաձայնության:

Իսկ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով: Այս հարցերը, բնականաբար, հուզել են նաեւ Ռուբեն Սեւակին: Մերկացնելով երիտթուրքական պարագլուխներին, որոնք կազմակերպել էին Ադանայի հայ բնակչության կոտորածը, Ռուբեն Սեւակը «Կարմիր գրքի» մեջ հստակորեն այն գիծն է զարգացնում, որ մարդկությունը, ժողովուրդները դեռ շատ չարիքների կհանդիպեն, եթե վճռականություն չունենան մարդասպան հանցագործի ձեռքը բռնելու:

Ո՞վ գիտե, գուցե մի օր, ապագա սերունդները որոշեն կազմել մարդկությանը ինքնասպանությունից, ամբողջ կյանքը սպանելու վտանգից զգուշացնելու համաշխարհային անթոլոգիա, ապա համոզված եմ, որ այնտեղ իր արժանի տեղը կունենա նաեւ Ռուբեն Սեւակը: Եվ այդ անթոլոգիան անպայման կդառնա քաղաքական գործիչների, գիտնականների, գրողների սեղանի գիրքը:

«Կարմիր գրքի» հրապարակումը երեւան բերեց մի զարմանալի երեւույթ: Դա ժամանակակիցների հսկայական ուշադրությունն էր թե հեղինակի եւ թե գրքի նկատմամբ: Իմ միտքը պարզելու համար հիշեցնեմ, թե այդ ժամանակաշրջանում, հատկապես արեւմտահայ գրական աշխարհում ովքեր էին ստեղծագործում: Ովքեր էին տիրապետում մարդկանց մտքերին ու թելադրում:

20–րդ դարի սկզբին արեւմտահայ գրականությունն իրենց ուսերի վրա առաջ էին տանում այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք էին Արփիար Արփիարյանը (1862–1908թթ.)., Տիգրան Կամսարականը (1866–1941թթ.). Հովհաննես Հարությունյան–Թլկատինցին (1863–1915թթ.). Ռուբեն Զարդար-

յանը (1874–1915թթ.), Գրիգոր Զոհրապը (1861–1915թթ.), Երվանդ Օտյանը (1869–1926թթ.), Սիամանթոն (Ատոմ Յարճանյան, 1884–1915թթ.), Դանիել Վարուժանը (Դանիել Չպուքքարյան, 1884–1915թթ.):

Իհարկե, վերոհիշյալ գրողներից շատերի փառքը, համբավը բազմապատկվում էր կուսակցական լինելու հանգամանքով: Նրանցից շատերը դաշնակցության անդամ էին, եւ կուսակցությունն իր հեղինակության համար (այնպես, ինչպես միշտ) շատ էր կարեւորում իր անդամների փառքը տարածելու խնդիրը:

Իսկ ահա Ռուբեն Սեւակը, որը ոչ մի կուսակցության չէր պատկանում, իր հրապարակած միակ գրքով գրավեց հանրության ուշադրությունը: Ինչո՞ւ, ի՞նչն էր դրա պատճառը: Իմ համոզմամբ պատճառը հասարակական պահանջմունքի մեջ էր, նոր խոսք լսելու տրամադրությունն էր:

Այս տեսակետը փաստելու համար նախ ուզում եմ բերել Ռուբեն Սեւակի ժամանակակիցներից Մկրտիչ Պոտուրյանի գնահատականը: 1911թ. հունվարի 12–ին Վենետիկի Մխիթարյան մայրավանքից Ռուբեն Սեւակին ուղարկած նամակում «Կարմիր գրքի» մասին նա գրել է. «Ես կը սիրեմ այն երգիչները, որոնք մարդկային կեանքը, աւելի թշուառներուն կեանքը բարելաւելու, երջանկացնելու նպատակ ունին, եւ դուն, համոզուած եմ, մէկն ես այդ իմ սիրուած բանաստեղծներէն, եւ շատերը պիտի դիտեն զգացուած կեանքը թշուառ մարդկութեան զոր կրցած ես եւ կրնաս պատկերել կարմիր կամ սեւ մելանով»120:

19–րդ դարի 90–ական թվականների ահավոր ջարդերից հետո արեւմտահայ գրական–հասարակական կյանքում նկատվեց շեշտակի անկում: Ստեղծված պայմաններում միակ «անվնաս» թեման սիրո թեման էր: Այդ ժամանակի մամուլը լեցուն է սիրո թեմայով գրական ստեղծագործություններով: Սիրո թեման դարձել էր մի տեսակ միջոց գոյությունը փաստելու համար: Եթե 19–րդ դարի 90–ական թվականներին ինչ–որ կերպ կարելի էր հասկանալ ազատագրական պայքարի թեմայից դեպի սիրո թեման կատարված վայրէջքը, որը տեւեց շատ երկար, 1908թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո էլ, ապա հասկանալի չէր, որ այդ հեղափոխության ընթացքում եւ դրանից հետո էլ հրապարակից չէր իջնում սիրո թեման:

Այս անգամ սիրո թեման դարձել էր հայության զգոնությունը բթացնելու միջոցներից մեկը: Երիտթուրքերի հետ սկսված սիրախաղը տեղափոխվեց գրականություն, որտեղ իշխողը սիրո թեման էր: Շատերն էին գիտակցաբար արմատավորում սիրո թեման դրանով փորձելով հանրության ուշադրությունը շեղել երիտթուրքերի հետ սիրախաղից: Գտնվեցին նաեւ այնպիսիները, որոնք սիրո թեմայով էին գրում ելնելով իրենց տարիքին համապատասխանող ռոմանտիզմից: Ռուբեն Սեւակն էլ վերջիններիս թվում էր, որ սկսեց գրել սիրո թեմայով: Բայցեւ Ռուբեն Սեւակն

առաջիններից մեկն էր. որ հասկացավ այդ սիրո թեմայով հյուսված ծուղակը: Եվ նա էր. որ իր «Կարմիր գրքով» առաջինը բարձրաձայն խոսեց տվյալ պահին սիրո թեմայով հրապուրվելու վնասի մասին: Նա առաջինն է արեւմտահայ գրականության մեջ. որ դրեց գեղարվեստական խոսքի մինչ այդ եղած արատավոր կողմերից (թեեւ ինքն էլ էր դրան տուրք տվել) հրաժարվելու անհրաժեշտության հարցը:

***

Պահպանվել են 1907թ. Ռուբեն Սեւակի նամակներից երեքը ուղղված ընկերներին: Նկատի ունենալով. որ այդ նամակները որոշակի լույս են սփռում Ռուբեն Սեւակի սկզբունքների. պատկերացումների վրա. հարկ եմ համարում դրանք այստեղ մեջբերել աննշան կրճատումներով:

1. 1907թ. փետրվարի 12–ին Մ.Պ.–ին գրած նամակը. «Հոգիս. ԴԺԲԱԽՏԱԲԱՐ. շատ ճիշտ են ըսածներդ ու հակառակ անոր. որ ամէն մարդ միաբերան կը գոչէ. թէ «ժամանակը ոսկի է». թէ «կեանքը կարճատեւ է». թէ «բանաստեղծութիւնը յիմարութիւն է». հակառակ այս բոլորին կ'ըսեմ. ԴԺԲԱԽՏԱԲԱՐ. բանաստեղծը բանաստեղծ կը մնայ միշտ...

Ու չես զարմանար. երբ գիտութիւններու թոհուբոհին մէջէն ու հացի կռուին մէջէն ժամանակ գտնեմ հոգիս գինովցնելու քանի մը. քանի մը ումպ... տաղերու մէջ:

Մարդեր կան. որոնց համար գրիչը քրտնիլ է. անոնք կը գրեն ճակատնին կնճռելով ու գրիչնին կճրտեցնելով. ու որքան յամառին յանգերը. ու որքան անտանելի ոտանաւորին կշռութիւնը:

Ինծ համար գրիչը երգել է. բոլոր մխիթարութիւնս սա երկաթի փոքրիկ գրիչիս մէջն է ու մենաւոր ապաստանիս մէջ ծմրան գիշերներ ինծմէ երջանիկ մարդ չէ կարելի երեւակայել ոտանաւորի մը աւարտումէն վերջ...

Չէ՞ որ մարդկութեան բոլոր հերոսները առանց բացառութեան թշուառութեան ծոցէն ծնուան... Ան (խոսքը Պարսամյանի մասին է. որն իր բանաստեղծություններն ուղարկել էր Ռուբեն Սեւակին – Վ.Պ.) իր որոշ ուղղութիւնը ունի. ես իմ որոշ ճամբաս ունիմ գրականութեան մէջ: Անիկա յաւէտ պիտի մնայ բանաստեղծը «անոր զոր պիտի սիրէ». անիկա յաւէտ պիտի ըլլայ երեւակայող ու օդային բանաստեղծը:

Ես ուրիշ իրապաշտ եմ. ամէն բանէ առաջ իրականութիւնը զիս կը գրաւէ.– ամէն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը ճանչնամ ես. ապրուած. զգացուած կեանքը. եւ ոչ թէ երեւակայացած կեանքը»121:

Այս նամակում խոսելով Մ.Մեծարենցի նոր լույս տեսած հատորի մասին Ռուբեն Սեւակը ցանկություն է հայտնում. «պիտի ուզէի ճանչցած ըլլալ զինքը եւ ըսել իրեն. որ քիչ գրէ. մանաւանդ բանաստեղծութիւնը քանակին մէջ չէ. որակին մէջն է»:

2. 1907թ. մայիսի 29–ին Շահան Պերպերյանին գրած նամակը. «Մոռցա՞ր ուրեմն, թէ մենք բանաւոր եւ կամաւոր մարտիկ ենք: Կամքը. Շահան, կեանքին գերագոյն գործիքը. բարոյական մեծագոյն ուժը. այն որ կարող է ամէն բան խորտակել եւ ամէն բան վերականգնել, կամքը. յուսահատութեան դէմ մաքառելու միակ միջոցը. գերմարդկային կամքը. ի՞նչ ըրիր զայն, Շահան»122:

Իմիջիայլոց, այս նույն միտքը Ռուբեն Սեւակը հայտնել է նաեւ 1906թ. ապրիլի 16–ին վերոհիշյալ Մ.Պ.–ին ուղարկած նամակում գրելով. «Որոշէ. պայքարէ. կամքով եւ հաւատքով յառաջ մղէ նպատակդ ու յաջողութիւնը պիտի հասնի քեզի: Կամք ու պայքար: Ասոնք են յաջողութեան ծնողները»123:

3. 1907թ. հոկտեմբերի 7–ին Մ.Պ.–ին գրած նամակը. «Սրամիտ ոճով մը (որուն համար կը շնորհաւորեմ քեզ) կը գծես մեր պոլսահայ գրականութեան ծաղրանկարը:

Իրաւ որ խղճալիք ճգնաժամ մը կ'անցնինք կոր.– Պէրպէրեան մեռաւ. Եղիա հիւանդ է, Զոհրապ լռեց. Սիպիլ պառաւցաւ. հրապարակը Պարսամեան եւ ընկերութեան մնաց (խեղճ հրապարակ):

Պէտք է զօրաւոր ցնցում մը առաջ բերել. նոր գրականութիւն մը ծնելու համար: Պէտք է նոր ուժեր հրապարակ նետուին, արուեստին սիրովը վառուած, աշխատած, զարգացած, պէտք է որ արուեստին անունովը հրապարակ նետուած եղերապատիր զգացումները դադրեցուին իսպառ. պէտք է որ արուեստին դրոշմը ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ ըլլայ միայն (գրել միայն ինչ որ կը զգայ մարդ եւ գրել ամէն ինչ որ կը զգայ... առանց կեղծ ամօթխածութեան քօղին), պէտք է որ իրենց ոյժին գիտակցութիւնը ունեցող գրիչներ (նոր ու թարմ գրիչներ) սկսին վերածննդեան այս մեծ գործը: Որովհետեւ առանց այս վերածննդեան մեր պոլսահայ գրականութիւնը է եւ պիտի մնայ «ծպուռի մը անիմաստ երգը» քո երջանիկ բացատրութեանդ համեմատ»124:

Ընթերցողը, անշուշտ, նկատեց, թե Ռուբեն Սեւակի հայացքներն ու պատկերացումները ինչպիսի արագությամբ ու հստակորեն են ամբողջանում: Դժբախտաբար ինձ չհաջողվեց հայտնաբերել Ռուբեն Սեւակի այլ նամակներ ու գրություններ վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ: Բայց բերված նամակներում եղած հարցադրումներից ու գնահատականներից կարող եմ որոշակի ասել, որ Ռուբեն Սեւակի մոտ սիրո թեմաներից վճռական շրջադարձը սկսվել է հենց 1907 թվականին եւ դրանից հետո: Մինչեւ 1910 թվականը, մինչեւ «Կարմիր գրքի» հրատարակումը, Ռուբեն Սեւակն ադեն ավարտին էր հասցրել իր աշխարհաճանաչողական փիլիսոփայությունը եւ ճշտել իր տեղը հայ գրականության մեջ:

Ինչպես արդեն նշել եմ, Լոզանը յուրատեսակ հետաքրքրություն ներկայացնող քաղաք էր եւ շատ ափսոս, որ մեզ քիչ բան է հայտնի Ռուբեն Սեւա-

կի այնտեղ ապրած տարիների մասին: Բայց եղած, այն էլ շատ կցկտուր տեղեկությունները բավականաչափ խոսուն են: Ճիշտ է. իր ընկերներից մեկին գրել է բազմաթիվ նամակներ եւ դրանցում հաղորդել առօրյա իր զբաղմունքների մասին. բայց երբեմն–երբեմն հարկ է համարել որոշակի հետաքրքրություն ունեցող մանրամասներ նշել: Ահա, օրինակ, 1907թ. մարտի 26–ին ուղարկած նամակից մի հատված. «Ես չեմ սիրեր մութ ու անորոշ գործերը. ես կը սիրեմ պարզութիւնը եւ անկեղծութիւնը... ճաշարանիս մէջ ծեր կին մը կայ գերմանացի. որ ամէն օր իր հիացումը կը յայտնէ գերմանացիներուն վրայ. Վիլհելմին վրայ ու գերմանական լեզուին վրայ... զոր շատ քաղցրահնչիւն կը գտնէ: Կը գուշակես. որ երբ մէկը իմ առջեւ այս տեսակ խօսքեր ընէ ես չեմ կրնար հանգիստ ճաշ ուտել, հետեւապէս ամէն օր վէճ կայ. իրարանցում. յուզում...»125:

Ահա այս փոքրիկ տեղեկությունից մեզ համար որոշ տպավորություն է ստեղծվում Ռուբեն Սեւակի ուսանողական օրերի մասին: Իհարկե, Ռուբեն Սեւակին հայտնի էր 19–րդ դարի 90–ական թվականներին սուլթանի կազմակերպած հայկական կոտորածներին գերմանական իմպերիալիզմի քաղաքականությունն իրականացնող Վիլհելմ Երկրորդ կայսրի հակահայկական գործողությունները: Բոլորի հիշողության մեջ դեռեւս թարմ էր 1898թ. Կ.Պոլիս այցելած Վիլհելմ կայսրի քստմնելի վարմունքը: Դա կայսրի երկրորդ պաշտոնական այցն էր Կ.Պոլիս: Աբդուլ Համիդի համար այս այցը կրկնակի ցանկալի էր. քանի որ Գերմանիան տերությունների մեջ միակն էր. որ ձեռնպահ մնաց հայկական կոտորածների դեմ բողոքելուց: Ավելին, գերմանական կառավարությունը հայկական ջարդերը համարեց «սուլթանի իրավունքն ու սուվերեն պարտականությունը»126:

Թուրքիա կատարած վերոհիշյալ այցի ընթացքում գերմանական կայսրը հարկ համարեց նորից հավանություն տալ Աբդուլ Համիդի ջարդարար քաղաքականությանը. այն էլ այն ժամանակ, երբ. ինչպես վկայում է Վիլհելմ 2–րդի շքախմբի անդամներից մեկը. «ողջ քաղաքը դեռ շնչում էր մորթված հայերի թարմ արյան հոտով» եւ նույնիսկ կայսրին ուղեկցող անձանցից ոմանք իրենց վատ էին զգում»127:

Եվ գերմանական միապետի բռնած հակահայկական դիրքից օգտվելով Աբդուլ Համիդը հայտարարեց. թե «ես ավելի շուտ կնախընտրեմ մեռնել. քան թե Անատոլիայի արեւելքում ինքնավարության բարեփոխումներ անցկացնել»128:

Ահա այստեղից էլ Ռուբեն Սեւակի արդարացի վրդովմունքը գերմանացի ծեր կնոջ արտահայտած հիացմունքի նկատմամբ:

Գերմանացիների մասին Ռուբեն Սեւակի վերաբերմունքն այստեղ հիշեցի. որպեսզի ընդգծեմ մեկ այլ կարեւոր իրողություն: Ռուբեն Սեւակի կյանքով ու ստեղծագործությամբ զբաղված հետազոտողները ուշադրությունից

դուրս չեն թողել նրա բուռն սերը հարուստ գերմանացու դստեր նկատմամբ, որի հետ ի վերջո նա ամուսնանում է:

Հանրահայտ փաստ է, թե գերմանուհի Ժաննի Աբելը ինչպիսի անաղարտ ու հավատարիմ սիրով էր կապված Ռուբեն Սեւակի հետ: Այդ զգացումներն այնքան խորն էին, այնքան նվիրական, որ Ժաննին թողեց ազատ ու լուսավոր Եվրոպան ու ամուսնու հետ, անդրանիկ որդին Լեւոնը գրկին, եկավ Կ.Պոլիս: Դա 1914թ. հունիսն էր, Առաջին համաշխարհային պատերազմից երկու ամիս առաջ: Ժամանակակիցները պատմում են, թե երբ Կ.Պոլսի կայարանում իջել են վագոնից, Ժաննին ասել է ամուսնուն. «Ռուբեն, ետ դառնանք, ես շատ չի հաւնեցայ այս երկիրին սոսկում եկաւ վրաս, չե՞ս տեսներ, ոչ մէկուն դէմքը կը ժպտի»129:

Թեեւ այս նախազգացումին, Ժաննին մնաց սիրելի ամուսնու կողքին նույն տարում Ռուբենին պարգեւելով մի չքնաղ դստրիկ Շամիրամին:

Իսկ Ռուբեն Սեւակն ինչո՞ւ թողեց խաղաղ ու ապահով Շվեյցարիան ու ընտանիքի հետ վերադարձավ Կ.Պոլիս: Մինչ այդ Ռուբեն Սեւակը, որ ի սկզբանե հավատ չուներ երիտթուրքերի նկատմամբ եւ մերժում էր նրանց հետ որեւէ համագործակցություն ու վճռականորեն փորձում էր «գինովցածներին» ուշքի բերել, ինչո՞ւ 1914թ. հունիսին, երբ արդեն զգացվում էր համաշխարհային պատերազմի մահաբեր շունչը (սերբ ուսանող Գավրիլ Պրինցիպը արդեն կրակել էր ավստրիական թագաժառանգի վրա, որը միջազգային կոնֆլիկտի ծավալման առիթ էր տվել), որոշեց վերադառնալ Կ.Պոլիս, այն էլ ընտանիքի հետ միասին: Չէ՞ որ շատերի նման Ռուբեն Սեւակն էլ հնարավորություն ուներ մնալու Եվրոպայում, շարունակելու աշխատել ու գործել եւ կենդանի մնալով ավելի համբավավոր դառնալ:

Իհարկե, կենսագրական լիարժեք տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ սպառիչ պատասխան տալ վերեւում արդեն հնչած հարցին: Բայց դատելով Ռուբեն Սեւակի որդեգրած սկզբունքներից նա չէր կարող հեռու մնալ իր ժողովրդից: Եվ գրողի, քաղաքացու, հայրենասերի պարտքի զգացումն էր, որ նրան Կ.Պոլիս բերեց: Նա ամեն միջոցով ձգտում էր որքան հնարավոր է օգտակար լինել իր ժողովրդին, վտանգի պահին լինել նրա կողքին:

Իմիջիայլոց նկատեմ, որ Ռուբեն Սեւակի այս վճռական մտադրությունը չէր կարող հարգանք ու համակրանք չառաջացնել նրա գերմանուհի կնոջ մոտ, որը Ռուբեն Սեւակի հաստատակամությունը բարձր էր գնահատում:

Կ.Պոլսում Ռուբեն Սեւակը բնակություն հաստատեց Բանկալթիի շրջանում: Նրա բնակարանը դարձել էր մտավորականների հանդիպման վայր: Այդ հանդիպումների կենտրոնական դեմքը Ռուբեն Սեւակն էր, ոչ թե նրա համար, որ իր բնակարանն էր, այլ կարեւոր դեր էին խաղում Ռուբեն Սեւակի բանավեճ վարելու կարողությունը, տրամաբանությունը եւ սկզբունքային հարցերում վճռականությունը:

Այդ օրերի մասին հիշելով Թեոդիկը. Ռուբեն Սեւակի ունակությունները նկատի ունենալով, գրել է. «Աթէնա իմաստութեան շիթը դրած է անոր ուղեղին մէջ. էսկիւլապ բժշկութեան խորհուրդը. Հերմես ալ կայծը պերճախօսութեան»130:

Հայտնի է. որ Ռուբեն Սեւակը որպես բժիշկ աշխատանքի անցավ Կ.Պոլսի Ազգային հիվանդանոցում: Նա հարգանք էր վայելում հիվանդների նկատմամբ ունեցած մարդկային պարզ վերաբերմունքով ու հոգատարությամբ: Այդ մասին են վկայում պահպանված նամակները, որոնց հեղինակները սրտանց երախտագիտություն են հայտնում բժիշկ Ռուբեն Չիլինկիրյանին իրենց բուժելու եւ մարդկային ջերմ վերաբերմունքի համար:

Ռուբեն Սեւակը «Ազատամարտ» թերթում տպագրում էր բժշկական թեմաներով հոդվածներ, որոնք գրականությանը հայտնի են «Բժիշկին գիրքէն փրցուած էջեր» վերտառությամբ: Այդ հոդվածների առաջացրած հետաքրքրության մասին է վկայում հետեւյալ փաստը. 1914թ. փետրվարի 26–ին «Եփրատ» գործակալության տնօրեն Արամ Հակոբյանը նամակով դիմում է Ռուբեն Սեւակին, որտեղ գրում էր. «Յարգելի տոքթոր, «Ազատամարտի» մէջ Ձեր յօդուածները շատ սիրով կը կարդանք եւ կը կարծենք. որ մօրէն կամ հիւսկն այդ ցաւերու հետ որեւէ առնչութիւն ունեցողներ. առանձին յուզումով կը լափեն իրենց ցաւերը քրքրող «էջ»երը: Ի նկատի ունենալով այդ տրամադրութիւնը, մեր մէջ միտք ծագեց այդ յօդուածները (եւ եթէ կան ուրիշ անտիպներ) գրքի ձեւով տպագրել եւ հրապարակ հանել: Արդեօք դուք ի՞նչ կը մտածէք այդ մասին. եւ եթէ համաձայն էք մեր առաջարկին, ի՞նչ պայմանով թոյլ կու տայիք մեզ ձեռնարկել հրատարակութեան:

Կը խնդրենք բարի գտնուիք այդ մասին Ձեր պատասխանը մեզ հասցնելու»131:

Ինչպես հայտնի է. այս մտադրությունը չիրագործվեց: «Բժիշկին գիրքէն փրցուած էջերը» առաջին անգամ հաջողվեց տպագրել միայն 1925թ. «Գողթան» գրատան հրատարակությամբ (Սալոնիկ):

Ռուբեն Սեւակը ստանձնեց նաեւ Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում ուսուցչի պաշտոնը: Ահա թե ինչ է հիշում այդ մասին Վրույր Մազմանյանը. «Տոքթէոր Ռուբէն Չիլինկիրեանը, որ միեւնոյն ժամանակ նրբազգաց բանաստեղծ Ռուբէն Սեւակն էր մեզի կը դասաւանդէր կենդանաբանութիւն: Առինքնող երիտասարդ մըն էր ան. սաթի նման սեփ–սեւ ու կարճ ու կլոր մօրուքով սեփ–սեւ ալ արտայայտիչ աչքեր ունէր: Հաճելի ու ձեւաւոր մարմինով, հագուած եւրոպական ճաշակով, իր ՊՕՆԺՈՒՌՆ ՈՒ ՌԵՅՏ տապաքը, կօշիկներուն վրայ բաց մոխրագոյն կէս կէթըռներ կատարեալ էլեկան մըն էր: Դասաւանդութիւնն ու խօսակցութիւնը շատ հաճելի ու կատակներով համեմուած»132:

Ահա եւ մեկ այլ վկայություն. որ տպագրվել է «Երջանիկ տարեգրքի» էջերում: Հեղինակը հիշում է, որ թեեւ Ռուբեն Սեւակը «խիստ ըլլալու չափ լուրջ էր դասարանին մէջ, բայց ունէր միեւնոյն ատեն այնպիսի զօրաւոր հաղորդականութիւն մը, որ զինքը գրեթէ մտերիմ կը դարձնէր բոլորիս»133:

«Անգամ մը,– պատմում է Վ.Մազմանյանը,– երբ մարդկային սիրտը կը բացատրէր, աշակերտ մը գրատախտակին առջեւ հրաւիրեց եւ խնդրեց, որ սիրտ մը գծէ: Աշակերտը կաւիճով շատ սրածայր սիրտ մը գծեց:

– Ատիկա սիրահարի սիրտ եղաւ, ըսաւ, քահ, քահ մը փրցնելով դասարանին մէջ:

Քիչ յետոյ ուրիշ աշակերտ մը հրաւիրեց եւ խնդրեց, որ սիրտի մասին բացատրութիւններ տայ:

Աշակերտը երբ սիրտի մասին կը խօսէր ձեռքը աւելի փորին կողմը կը տանէր:

– Ծօ, դուն ալ ճէվահիրճեան սրբազանին պէս սիրտ ըսելով փորդ ցոյց մի տար...»134:

Ռուբեն Սեւակը նկատի ուներ Կեդրոնական վարժարանի կրոնի դասատու սրբազանին, որը քարոզների ժամանակ միշտ իր փորն էր ցույց տալիս:

Ռուբեն Սեւակը իր աշակերտներին ներարկում էր հարազատ ժողովրդին անկեղծորեն ծառայելու գաղափարը եւ նրանց ասում էր. «Ձեզի կը մնայ վաղուան մտաւորականը ըլլալու պարտականութիւնը»135:

Թե ինչքան սեր ու համակրանք էին տածում վարժարանի աշակերտները իրենց շատ համակրելի ուսուցչի նկատմամբ, վկայում է հետեւյալ փաստը: Ռուբեն Չիլինկիրյանը նույնպես զորակոչվեց թուրքական բանակ: Նա բժիշկ սպայի համազգեստով, բանակ մեկնելուց առաջ հրաժեշտի համար վերջին անգամ եկավ վարժարան: Աննկարագրելի էր սիրելի ուսուցչի հետ հրաժեշտի սրտառուչ տեսարանը:

Ռուբեն Սեւակը նույն առարկան դասավանդում էր նաեւ Սկյուտարի հայ օրիորդաց ճեմարանում: Այստեղ աշակերտուհիները նրա նկատմամբ տածում էին սեր ու համակրանք: Աշակերտուհիների ջերմ վերաբերմունքը արտահայտել է ճեմարանի տնօրինուհի Նվարդ Խարբութլյանը 1915թ. հունվարի 23–ին Ռուբեն Սեւակին ուղարկելով հետեւյալ ուղերձը. «Յարգելի տր. Չիլինկիրեան. Ձեր մեկնումի լուրը մեզ այնքան յուզեց, որ չկրցանք բառով մը իսկ մեր ցաւը յայտնել: Պիտի ուզէինք ձեզի ըսել, որ Ձեր առողջ եւ երջանիկ վերադարձին համար մեր աղօթքները եւ ամենէն սրտագին մաղթանքները Ձեզի պիտի ընկերանան: Ձեր տաժանելի պարտականութիւնը զուարթութեամբ կատարեցէք. Ձեր շուրջ զգալով Աստուծոյ պաշտպանող բազուկները, որոնք Ձեզ շուտ կը վերադարձնեն ձեր սիրելի պզտիկներուն քով, ինչպէս նաեւ Ձեզ շատ յարգող աշակերտուհիներու քով»136:

Ռուբեն Սեւակը հաճախ հանդես էր գալիս նաեւ բժշկական թեմաներով: Վ.Մազմանյանը վկայում է, որ Ռուբեն Սեւակը «հոյակապ խօսող մըն էր: Իր նշանաբանն էր մաքուր օդ ծծել ու կամք ունենալ առողջ ապրելու»: Թոքախտ հիվանդությանը նվիրված դասախոսություններից մեկի ժամանակ, ինչպես հիշում է Վ.Մազմանյանը, Ռուբեն Սեւակը պատմում է ներկաներին հետեւյալը. «Երբ Լոզան ուսանող էի, երիտասարդ մը մօտս եկաւ դարմանուելու: Ան թոքախտի վերջին աստիճանին մէջն էր ու արիւն կը թքնէր: Բայց անիկա զօրաւոր կամքի տէր մէկն էր: Ոտքը գետինը զարկաւ ու «ես վճռած եմ ապրիլ» ըսաւ: Ահա այդ երիտասարդը իր զօրաւոր կամքով յաղթահարեց հիւանդութեան եւ ան ներկայիս այս սրահին մէջ գտնուողներուն էն առողջն է մարմնով ու միտքով»:

«Այս ըսելով,– շարունակում է Վ.Մազմանյանը,– գնաց Սիամանթօյին թեւէն քաշեց ու բերաւ բեմ: Սիամանթօն իսկապէս ուժ ներշնչող կաշմբուռն տեսք մը ունէր: Սրահը թնդած խանդավառ ծափերու տակ»137:

Այս կցկտուր տեղեկությունները փաստում են, թե ինչքան ընդունելի, ինչքան համակրելի անձնավորություն է եղել Ռուբեն Սեւակը: Եվ նրա հասցեին ասված ջերմ խոսքերը չեն ասվել միայն ասվելու համար: Դրանք մեր առջեւ պարզում են իր ժողովրդին անկեղծորեն նվիրված բանաստեղծ մարտիկի, բանաստեղծ հայրենասերի անզուգական կերպարը:

Վերադառնալով Կ.Պոլիս Ռուբեն Սեւակը հիվանդանոցում եւ վարժարաններում ստանձնած աշխատանքի հետ միասին ակտիվ մասնակցում էր հասարակական–քաղաքական կյանքին: Նրա ուշադրությունից ոչինչ չէր վրիպում: Նա գործում էր այն սկզբունքով, ինչպես դեռեւս 1906թ. ապրիլի 16–ին խորհուրդ էր տվել իր ընկերներից մեկին. «Որոշէ. պայքարէ. կամքով եւ հաւատքով յառաջ մղէ նպատակդ ու յաջողութիւնը պիտի հասնի քեզի: Կամք ու պայքար: Ասոնք են յաջողութեան ծնողները»139:

Ռուբեն Սեւակը անզիջում կրքոտությամբ քննադատում էր դաշնակցությանը թույլ տված սխալների համար կոչ անելով, քանի ուշ չէ. անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ուժերը համախմբելու, արեւմտահայության անվտանգությունն ապահովելու համար: Բայց, ինչպես տեսանք, դաշնակցության ղեկավարությունը այլ քաղաքականություն էր որդեգրել:

Եվ պարզ էր, որ այդպիսի քաղաքականություն որդեգրածների համար միանգամայն անընդունելի էր Ռուբեն Սեւակի նման մտածողների գործունեությունը: Անընդունելի էին նաեւ անձնապես:

Ռուբեն Սեւակը նույնիսկ նամակներ էր ստանում, որոնց հեղինակները, չհասկանալով իրավիճակի ամբողջ ծանրությունն ու լրջությունը, շփոթում էին երեւույթները: Ահա, օրինակ, 1914թ. մարտի 15–ին Հ.Ալփիարը Ռուբեն Սեւակին ուղարկած նամակում, ըստ երեւույթին, մինչ այդ եղած դեպքի կապակցությամբ, գրում է, թե «Դաշնակցութիւնը չեմ սիրեր – ծեռքս չէ – բայց

իմ նախընտրած թերթս է «Ազատամարտը»: Ռուբէն Զարդարեանը իբրեւ գրող նմանը չունի եւ մասնաւոր գորովով մը կը կարդամ իր բոլոր այն գրածները, որ կուսակցութեան չեն...»139: Ալփիարը գրում էր նաեւ, թե հակադաշնակցական լինելը «պատճառ մը չէ, որ քաշուիմ հիանալէ այն ճշմարիտ գրագէտներուն վրայ, որ կրնան ըլլալ դաշնակցական»:

Ինչո՞ւ է բուլվարային երգիծաբան Ալփիարը այսպիսի նամակ ուղղել Ռուբեն Սեւակին: Չունեմ կոնկրետ փաստ առայժմ դրան պատասխանելու համար: Բայց դատելով իրողության ընթացքից կարելի է ենթադրել հետեւյալը. Ռուբեն Սեւակը, ըստ երեւոյթին, դաշնակցության գործիչներին քննադատելիս, նկատի չի ունեցել, որ նրանք հայտնի գրողներ ու բանաստեղծներ են: Ռուբեն Սեւակին հետաքրքրել է այդ գործիչների որդեգրած քաղաքականությունը, որի վտանգավոր հետեւանքները նա խորաթափանցությամբ կանխատեսում էր ու զգուշացնում:

Ռուբեն Սեւակը միայն չէր կանխատեսում ու չէր զգուշացնում, այլ եռանդով գործում էր, պայքարում, ծգտում որքան հնարավոր է ուշքի բերել նրանց, ովքեր, նույնիսկ 1914թ. մեծ արհավիրքի նախօրեին շարունակում էին մնալ «գինովցած»:

Այսպիսով պարզ էր դառնում, որ Ռուբեն Սեւակն իր բռնած դիրքով խանգարում էր արեւմտահայության ճակատագիրը տնօրինելու գործը սեփականաշնորհած ուժերին: Եվ շուտով դրա արդյունքը երեւաց: Երիտթուրքական իշխանությունները Ռուբեն Սեւակին դիտում էին այն մտավորականների շարքում, որոնք արեւմտահայության մոտ ունեին մեծ ազդեցություն եւ վախենում էին նրանցից:

Կ.Պոլսում ծավալած գործունեությամբ Ռուբեն Սեւակը Գ.Ամատյանի վկայությամբ դարձավ «պոլսահայ մտաւորականութեան զարդերէն մէկը»140:

Պոլսի Բերա թաղամասում գտնվող Սուրբ Երրորդություն կոչվող վերնատանը, որին տվել էին «Արհեստանոց» անունը, կազմակերպվում էին գրական–մշակութային ասուլիսներ, որտեղ հանդես էին գալիս Ռուբեն Զարդարյանը, Խաժակը, Ակնունին եւ դաշնակցական այլ մտավորական գործիչներ: Բայց «Արհեստանոցը», որը նման էր Հովհաննես Թումանյանի «Վերնատանը», առանձնակի աշխուժանում էր, երբ հանդես էր գալիս Ռուբեն Սեւակը: Բախվում էին հայացքները, տեսակետները, որոնք գլխավորապես վերաբերում էին ընթացիկ միջազգային քաղաքական խնդիրներին եւ առնչվում էին արեւմտահայության ճակատագրին:

Այդ բանավեճերում Ռուբեն Սեւակը աչքի էր ընկնում մտքի կուռ շարադրանքով, տեսակետի հստակ արտահայտությամբ եւ անխնա ծաղկում էր նրանց, ովքեր դեռ չէին կարողանում ձերբազատվել պատրանքներից եւ շարունակում էին հավատալ երիտթուրքերին: Ռուբեն Սեւակի հարցադրումներին նշանավոր դաշնակցականներից շատերը պատասխանում էին

ինչ–որ խորհրդավոր ակնարկներով. հասկացնելով. թե այդպիսի հարցերի մասին հրապարակավ խոսելու հարկ չկա. որ դրանք ներկուսակցական խնդիրներ են եւ այլն:

Խոսքը վերաբերում է մեր ազգի գոյությանը. նրա անվտանգության ապահովմանը. պատասխանում էր Ռուբեն Սեւակը եւ ավելացնում. սրանք են կարեւորը եւ ոչ թե ներկուսակցական խնդիրները: «Սակայն.– ընդգծում էր Ռուբեն Սեւակը.– ստոյգ. ստոյգ կ'ըսեմ ձեզի. վտանգը մեծ է. շատ մեծ. աւելի մեծ. քան կրնաք ենթադրել»141:

Երբեմն Ռուբեն Սեւակին հորդորում էին եթե ուզում ես ծանոթ լինել ներկուսակցական խնդիրներին. ապա պետք է մտնել դաշնակցության շարքերը: Այսպիսի առաջարկների դեպքում Ռուբեն Սեւակն անվարան պատասխանում էր. որ չի ուզում իր խղճի վրա ծանրացնել երիտթուրքերի հետ սիրախաղի պատասխանատվությունը: Ահա թե ինչու Ռուբեն Սեւակը չմտավ դաշնակցության շարքերը: Բայց դա նրան չի խանգարում. որպեսզի դաշնակցական ընկերների հետ պահեր ազնիվ ու շիտակ փոխհարաբերություններ:

Ռուբեն Սեւակի ելույթները. որոնք վերաբերում էին ազգային հրատապ խնդիրներին. ընդունվում էին հետաքրքրությամբ ու համակրանքով: Մեր ձեռքին է այդպիսի ելույթներից մեկի կապակցությամբ ունկնդիրներից Մելքոն Յովակիմյանի նամակը. որը նա ուղարկել է Ռուբեն Սեւակին 1915թ. փետրվարի 4–ին: Ստորեւ այդ նամակը բերվում է ամբողջությամբ.

«Ազնիւ տոքթէոր Ռ.Չիլինկիրեան.

Քաղցր պարտականութիւն մը կը համարիմ Ձեզ ուղղելու իմ խորին հիացումս ու անկեղծ շնորհաւորութիւններս երեկ գիշերուան Ձեր խիստ նշանակալի. ազդու եւ օգտակար բանախօսութեան համար. որ առաջինն է վեց տարիէ ի վեր Գատլո գիւղի «Հայ ակումբին» մէջ մեր լսածներէն: Անխախտ կերպով համոզուած եմ. որ բոլոր ներկաներն ալ ճիշտ իմ տպաւորութեանս տակ մեկնեցան. ինչպէս որ Ձեզ ցոյց տրուած ընդհանուր համակրանքն ու այսօրուան իմ հանդիպած մի քանի ընկերներուս կատարելապէս անկեղծ արտայայտութիւնները զայդ կը հաստատեն»142:

Ափսոս որ Ռուբեն Սեւակի այդ բանախոսության տեքստը առայժմ հայտնի չէ: Գուցե մի օր դա գտնվի: Բայց կարեւորն այն է. որ նամակի հեղինակը Ռուբեն Սեւակի բանախոսությունը համարում է առաջինը իր նշանակությամբ վերջին վեց տարիների ընթացքում:

# Գլուխ 4

## «ՄԱՐԴԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼՈՒ» ԵՐԱԳԻՐԸ

1908 թ. երիտթուրքական հեղափոխությամբ Ռուբեն Սեւակը նույնպես չհիացավ, ավելի ճիշտ «չգինովցավ» եւ ճշմարիտ դիրքերից էր գնահատում տեղի ունեցածը: Իր միտքը պարզելու համար Ռուբեն Սեւակը հիշեցնում էր հետեւյալ հին ավանդավեպը. «... դատաւոր մը կար որ կոյր էր իր աջ աչքէն եւ խուլ իր ձախ ականջէն: Ու այդ դատաւորը ժողովուրդին վէրքերը կը տեսնէր իր աջ աչքով, ու տառապողներուն ողբը կը լսէր իր ձախ ականջով»: Եվ Ռուբեն Սեւակը հարցնում էր., «Ո՞ւր է կառավարութեան մշտաբաց աչքը... ո՞ւր է այն մշտարթուն ականջը... Բողոքի ահռելի աղաղակներ կը գոռան հիմա. որոնք են լսողները. ի՞նչ եղաւ հսկողութիւնը. կա՞յ յատուկ պաշտօնէութիւն մը որ մեր բողոքները փոխանցէր...»:

Ռուբեն Սեւակը համոզված էր, որ երիտթուրքական հեղափոխությամբ սկսվել են անիշխանության օրերը եւ բերում էր «հին օրինակը»: «Պոլսոյ մէջ,– գրում էր նա,– մեր դրացիները օրերով ու գիշերներով Ստամպոլի վախկոտ օդը կը գոռացնեն հրազէնի անօգուտ պայթիւններով. անոնք չեն լսուիր: Գում–Գափուի մէջ խեղճ կապար մը կը սուրայ, ու ահաւասիկ քառասուններու գունդ մըն է, որ սուիններով կը յարձակի միամիտ հայերու վրայ: Լրագիրները կը բողոքեն. մելանը կը հոսի, գրիչները չի հաւատալիք գործունէութիւն մը ցոյց կու տան, բայց որո՞ւ դէմ, ո՞վ է լսողը. ահա խնդիր մը որուն վրայ կ'արժէր որ մտածէինք»:

Ռուբեն Սեւակը գտնում էր, որ երիտթուրքական հեղափոխությամբ հայերի վիճակը ոչնչով չի փոխվի: Նրանց հալածանքը կշարունակվի. ինչպես որ եղել է սուլթանի ժամանակ: Ուստի հարկավոր չէ բթացնել զգոնությունը.. որովհետեւ երիտթուրքական հեղափոխությունը ոչինչ չի տալու Թուրքիայի լծի տակ գտնվող արեւմտահայությանը: Եվ իր տագնապը հիմնավորելու համար Ռուբեն Սեւակը հիշեցնում էր, որ գավառներում ոչինչ չի փոխվել. այնտեղից բռնությունների դեմ եկող բողոքներին լսող չկա. որ նույնիսկ արգելված է սահմանադրություն բառն արտասանել: «Գործի գլուխ դեռ տխուր պէյեր կան հայ արիւնովը կարմիր ու աստուածների պէս անսասան»:

Ռուբեն Սեւակը զգուշացնում էր. «Ներսի գաւառներու մէջ կոտորածի վախ կայ. կը լսէ՞ք. ԿՈՏՈՐԱԾԻ ՎԱԽԸ... Ամէն ժամ թերթերու մէջ յեղափոխական կոմիթէներու հասցէին պաղատանքի. բողոքի անհամար նամակներ կը տեղան. հին ստրկական. շողոքորթական բանաձեւեր գլուխնին կը ցցեն»:

Անդրադառնալով մամուլի ազատությանը Ռուբեն Սեւակը մատնանշում էր. որ գրելու ազատությունը «այն ատեն միայն օգտակար կրնայ ըլլալ երբ մեզի ԼՍՈՂ կառավարութիւն մը ըլլայ»143:

1908թ. ամռանը ուսանողական արձակուրդի առիթն օգտագործելով Ռուբեն Սեւակը կարճ ժամանակով եկավ Կ.Պոլիս: Այստեղ հանդիպեց մի շարք նշանավոր գործիչների, նրանց հետ քննարկեց հայ հասարակայնությանը հուզող շատ հարցեր. որոնց մեջ ամենից կարեւորը երիտթուրքական հեղափոխության նկատմամբ վերաբերմունքն էր: Ռուբեն Սեւակն իր բնավորության համաձայն շիտակությամբ զգուշացնում էր, որ հարկավոր չէ ժամանակից շուտ ուրախանալ եւ այդ հեղափոխության հետ հույսեր կապել: Այդ հեղափոխությունը. ասում էր նա. մեզ հայերիս համար չէ: Այդ հեղափոխությունը մեր դեմ է ուղղված: Իրեն առարկողներին Ռուբեն Սեւակը պատասխանում էր մի շտապեք, համբերեք եւ շուտով ձեր ընկեր իթթիհադականները ոչ միայն իրենց դեմքը ցույց կտան. այլեւ ժանիքները:

Իսկ հրապարակային ելույթներում Ռուբեն Սեւակը հասկանալի պատճառներով հաճախ դիմում էր այլաբանության: Հայտնի է Ռուբեն Սեւակի այդպիսի ելույթներից մեկը 1908թ. օգոստոսի 22–ին. որը նվիրված էր Վահրամ Փափազյանի թատերական ներկայացումներին:

«Ամբողջ Եվրոպայի մէջ,– ասաց այդ ելույթում Ռուբեն Սեւակը.– աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ, որ գտնուի տակաւին ՄԷԿ ՈՒՐԻՇԱՉԳ որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը եղաւ, մեր ստրկացած թրքահայերուս կեանքը... Տառապիլ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուիլ, բռնաբարուիլ, գետնաքարշ տապալիլ, ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... ժպտիլ այնպիսի մէկ վայրկեանիդ, որ արիւն արցունք պիտի պոռթկար աչերէդ... մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ... մեռնիլ ու հոգեպէս մեռնիլ ու ապրիլ ձեւացնել... ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մերը եղաւ այնքան երկար տարիներ... Արդ ինչպէ՞ս կ՛ուզէք, որ այսպիսի պայմաններու մէջ, ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չըլլար, ու մեր բնական յարմարութիւնը դերասանութիւնը...»144:

Ահա Ռուբեն Սեւակի դիրքորոշումը, որ նա արտահայտեց երիտթուրքական հեղափոխության հենց առաջին օրերին: Ո՞վ էր ճիշտ: «Գինովցածնե՞րը», թե՞ սթափ մտածող բանաստեղծ ազգային գործիչը:

Պատմությունը տվել է այս հարցի պատասխանը: Հետագայում էլ կտեսնեք. թե հայոց համար կարեւորություն ներկայացնող հարցերում որքան ճիշտ է եղել Ռուբեն Սեւակի դիրքորոշումը:

Ասվածի կապակցությամբ էլ ուզում եմ ընդգծել հետեւյալը: Մեր գրականության պատմության մեջ Ռուբեն Սեւակը եթե հիշատակվել է, ապա որպես լիրիկ բանաստեղծ: Ի՞նչ պատճառով է ուշադրությունից դուրս մնացել այդ մեծ հայրենասեր մարդու ազգային, հասարակական–քաղաքական գործունեությունը: Այս հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ եմ համարում ասել հետեւյալը. եթե մեկ այլ կուսակցության պատկանողը խոսում է մյուս կուսակցության սխալների, թերությունների մասին, ապա հասկանալի է դա կուսակցական պայքար է, որին հատուկ է սուբյեկտիվ մոտեցումը: Այսպիսի դեպքում միշտ հնարավոր է արդարանալ կամ փոխադարձաբար մեղադրանք ներկայացնել այդ կուսակցության հասցեին:

Բայց բոլորովին այլ է, երբ որեւէ կուսակցության գործունեությունը կամ նրա ընդունած քաղաքական որոշումները քննադատում է անկուսակցականը, այն էլ այնպիսին, որն ունի հեղինակություն, անկախ մտածողություն եւ համակիրների մեծ բանակ: Այդպիսի դեպքում քննադատվող կուսակցությունը սովորաբար ձգտում է այդ հեղինակավոր անձին զանազան միջոցներով ներգրավել իր ճամբար եւ այդ կերպ լռեցնել նրան: Իսկ եթե չի հաջողվում, ապա գործի է դրվում մեկ այլ փորձված միջոց: Ամեն ինչ արվում է այդ հեղինակավոր գործչին պահել ստվերի տակ եւ ի վերջո մատնել մոռացության: Այս մեթոդը առանձնապես արդյունավետ է, երբ տվյալ գործիչը այլեւս կենդանի չէ ու չկան նաեւ նրան պաշտպանող շահագրգիռ ուժեր:

Ահա, մոտավորապես, իմ պատկերացմամբ, այդպես են վարվել Ռուբեն Սեւակի հետ «գինովցածներն» ու նրանց հետագա գաղափարակիրները: Ճիշտ է, նրանց չհաջողվեց Ռուբեն Սեւակին մոռացության տալ, բայց հասան նրան, որ Ռուբեն Սեւակը համարվեց միայն լիրիկ բանաստեղծ եւ կեղծ բարեպաշտությամբ ափսոսանք հայտնվեց, թե երիտասարդ հասակում դարձավ ցեղասպանության զոհ ու այդ պատճառով չհասցրեց ձեւավորվել որպես լիարժեք բանաստեղծ:

Ինչո՞ւ, այնուամենայնիվ, Ռուբեն Սեւակի նկատմամբ այդպիսի վերաբերմունք էր ստեղծվել: Անդրանիկ Ծառուկյանը դա բացատրում է նրանով, որ Ռուբեն Սեւակը կուսակցական չէր: «Եթէ,– գրել է նա,– Դանիէլ Վարուժանին պէս. Սիամանթոյին պէս դաշնակցական գործիչ մ'ըլլար, անոնց պէս կը փառաբանուէր»145: Բայց սա, իմ կարծիքով, գլխավոր պատճառը չէր: Գլխավորն այն էր, որ լինելով անկուսակցական Ռուբեն Սեւակը խստորեն ու սկզբունքային դիրքերից քննադատում էր «անսխալական» դաշնակցությանը, մատնացույց անում ոչ միայն նրա գործած սխալները, այլեւ կանխատեսում երիտթուրքերի հետ համագործակցության ողբերգական հետեւանքները: Գլխավորը Ռուբեն Սեւակի անհամաձայնությունն էր դաշնակցության որդեգրած սկզբունքների ու գործելակերպի հետ:

Կարեւոր եմ համարում ընդգծել մի հանգամանք եւս: Ռուբեն Սեւակի քա-

ղաքական հայացքները. որոնք ձեւավորվեցին նրա շատ կարճ կյանքի ընթացքում. մինչեւ օրս բավարար չափով չեն ուսումնասիրվել: Առհասարակ, տիրում է այն սխալ կարծիքը. թե Ռուբեն Սեւակը լիարժեք ձեւավորված քաղաքական հայացքներ չի ունեցել: Այդպես մտածում են նրանք. որոնք շարունակում են ընդհանրապես կարեւոր տեղ չհատկացնել դրան: Իհարկե. այդպես մտածողները սխալվում են:

Ոմանք էլ գտնում են. թե Ռուբեն Սեւակը. գիտակցելով. որ իբրեւ բանաստեղծ ավելի շատ օգտակար կլինի իր ժողովրդին. քան քաղաքականությամբ զբաղվելը եւ նրա մեջ գերակշռողը եղել է առաջինը: Այսպիսի մոտեցումը նույնպես թերի է արտացոլում բանաստեղծ ու մտածող Ռուբեն Սեւակի գործունեությունը:

Բոլոր դեպքերում վերոհիշյալ տեսակետների հեղինակները ելնում են նրանից. որ Ռուբեն Սեւակը չի պատկանել ժամանակին գործող կուսակցություններից եւ ոչ մեկին: Ուստի. ըստ նրանց. եթե կուսակցական չի եղել. ուրեմն չէր կարող զբաղվել քաղաքականությամբ:

Այսպիսի մտածելակերպի ամբողջ արատավորությունը երեւում է հենց մեր օրերում. երբ լրատվության բոլոր միջոցները զբաղված են այս կամ այն քաղաքական գործչին գովաբանելով կամ էլ քարկոծելով: Ընդ որում այնպիսի տպավորություն է ստեղծվել. որ այսօր Հայաստանում ուրիշ այլ գործիչ չկա. բացի քաղաքականությամբ զբաղվողներից: Իսկ եթե հանկարծ որեւէ հեռուստաընկերություն էկրանը տրամադրում է ինչ–որ «անհայտ» մեկի. հաճելիորեն զարմանում ես. որ փառք Աստծո. բացի քաղաքականությամբ զբաղվողներից. Հայաստանում ուրիշ. ավելի հաճելի ու ընդունելի մարդիկ էլ կան:

Վերեւում արդեն հիշատակել եմ. թե ինչպես Հայոց ազգային ժողովը. որն արդեն լիակատար կերպով գտնվում էր դաշնակցության ձեռքին. Մաղաքիա Օրմանյանին հեռացրեց պատրիարքությունից. եւ Երուսաղեմից վերադարձվեց Իզմիրլյանը: Նկատի ունենալով. որ պատրիարք Մ.Օրմանյանն առնչվել է Ռուբեն Սեւակին. օգնել նրան. պահել իր ուշադրության կենտրոնում. կամենում եմ ընթերցողին ներկայացնել այդ նշանավոր ազգային ու հոգեւորական գործչին:

Մաղաքիա Օրմանյանը ծնվել է 1841թ. փետրվարի 11–ին Կ.Պոլսի Բերա թաղամասում. կաթոլիկ ծնողների ընտանիքում: Երբ լրացավ նրա 10 տարին. 1851թ. ծնողների կամքով ընդունվեց Հռոմի Անտոնյանց վանքի վարժարանը: Ավարտելուց հետո ուսումը շարունակում է սուրբ Ապողինարի բարձրագույն սեմինարիայում: Օրմանյանն աչքի էր ընկնում ուսման մեջ: Հայերենի եւ թուրքերենի հետ տիրապետեց լատիներեն. իտալերեն. ֆրանսերեն. հունարեն եւ գերմաներեն լեզուներին: 1860թ. Օրմանյանը ստացավ փիլիսոփայության. 1865թ. աստվածաբանության. 1868թ. օրենսգիտության դոկտորի գիտական աստիճան:

Դրանք այն տարիներն էին, երբ Կ.Պոլսում ընթանում էր հասունյանների եւ հակահասունյանների պայքարը: Անտոն Հասունյանը Թուրքիայի հայ կաթոլիկների առաջնորդն էր: Հասունյանն իր կողմնակիցների հետ միասին ոչ մի միջոցից չէր խորշում հայ բնակչության մեջ կաթոլիկությունն արմատավորելու եւ այդ միջոցով արեւմտյան տերությունների եւ առաջին հերթին Ֆրանսիայի շահերին ծառայելու համար: Հասունյանների գլխավոր նպատակներից մեկն էլ այն էր, որ արեւմտահայությանը հեռացնեն Ռուսաստանի նկատմամբ ունեցած կողմնորոշումից: Էջմիածնի Ներսես Աշտարակեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով կոչ էր անում չխաբվել եվրոպացի ու ամերիկացի քարոզիչների մեղրածոր լեզվին:

Թուրքական իշխանությունները հասկանում էին, որ հասունյանների շարժումը ջլատում է հայերին, խոչընդոտում նրանց միասնությանը եւ իր նենգ քաղաքականությամբ նպաստում արեւմտահայության պառակտմանը:

Հասունյանների դեմ պայքարն ավելի ուժեղացավ Զեյթունի 1862թ. ապստամբությունից հետո: Հասունյանը Զեյթունի ապստամբներին խոստանում էր Ֆրանսիայի հովանավորությունը, պայմանով, եթե նրանք ընդունեն կաթոլիկություն:

Հակահասունյան պայքարը ղեկավարում էին Կ.Փանոսյանը, Ա.Հայկունին: Հ.Սվաճյանն իր «Մեղու» հանդեսը վերածեց հասունյանների դեմ պայքարի գլխավոր միջոցներից մեկի: Րաֆֆին Հասունյանի գործունեությունը գնահատեց որպես հայակործան:

Հասունյան–հակահասունյան պայքարը իր մեջ էր ներառել հայ հասարակական բազմաթիվ շերտերի:

Ի՞նչ դիրք գրավեց այդ ամենի նկատմամբ կաթոլիկ կրթություն ստացած, կաթոլիկ քահանա օծված Մաղաքիա Օրմանյանը: Նա անվերապահորեն միացավ հակահասունյան թեւին հասկանալով, որ Հասունյանն ու նրա կողմնակիցները խոչընդոտ են դառնում արեւմտահայության համախմբմանը եւ վնասում են նրա ազատագրական պայքարին:

1877թ. Կ.Պոլսում Օրմանյանը հրաժարվեց կաթոլիկությունից եւ իրեն նվիրեց Հայ Առաքելական եկեղեցուն: 1879թ. Օրմանյանն օծվեց որպես ծայրագույն վարդապետ:

Մաղաքիա Օրմանյանը խորությամբ հետաքրքրվում էր արեւմտահայության ազատագրման գործով: 1875թ. նա հանդիպել է Իտալիայի ազգային հերոս Գարիբալդիին եւ նրա հետ քննարկել ազատագրական պայքարի մի շարք հարցեր:

Շուտով Օրմանյանը դարձավ Կարինի հոգեւոր թեմի առաջնորդ: Այստեղ էլ գործուն մասնակցություն է ունեցել «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծմանը: Երբ «Պաշտպան հայրենյացը» բացահայտվեց, ու նրա անդամները ձերբակալվեցին, Օրմանյանը միջոցներ էր ձեռնարկում

նրանց ազատելու համար: Համարյա ամեն օր Օրմանյանը Կարինում զարգացող իրադարձությունների մասին նամակով հայտնում էր պատրիարք Ներսես Վարժապետյանին նրանից խնդրելով օգնություն146:

Օրմանյանի հանդուգն գործունեությունը, նրա ներկայությունը Կարինում թուրքական իշխանությունները համարեցին վտանգավոր, եւ նրանց պահանջով էլ նա հեռացվեց Կարինից: Հետագա տարիներին Օրմանյանն աստվածաբանության դասեր է տվել տարբեր հոգեւոր դպրոցներում:

1896թ. նոյեմբերի 6–ին Մաղաքիա Օրմանյանն ընտրվեց Կ.Պոլսի պատրիարք: Այդ ժամանակ, թեեւ դադարել էին հայկական կոտորածները, բայց դեռեւս հայոց վերքից արյունը ծորում էր, ժողովուրդը ուժասպառ էր եղել: Այսպիսի պայմաններում ի՞նչ քաղաքականություն պետք է վարեր նորընտիր պատրիարքը: Շարունակե՞լ թուրքական իշխանությունների հետ առճակատումը, թե՞ մշակել նոր քաղաքականություն: Ո՞վ կարող էր երաշխավորել, որ նոր ըմբոստության դեպքում սուլթանը չէր վերսկսելու հայկական կոտորածները:

Եվ ստեղծված պայմաններում Մ.Օրմանյանը ընտրեց խոհեմ ու զգույշ քաղաքականության ուղի, որը հաճախ ոմանք շփոթում են եւ համարում վախի կամ էլ սուլթանի հետ համագործակցության քաղաքականություն: Մինչդեռ ազգային–ազատագրական պայքարի փորձից ելնելով Օրմանյանի քաղաքականության նպատակն էր կոտորածներ տեսած ժողովրդին ուշքի գալու, ծանր վերքերը բուժելու հնարավորություն տալ եւ հիմնովին նախապատրաստվել գալիք պայքարին:

Մ.Օրմանյանը սերտ կապեր էր պահպանում մտավորական գործիչների հետ, նրանց նամակներով հորդորում «հաշտուիլ ձեր հին բարեկամին, ձեր գրչին հետ»147: Մ.Օրմանյանը 1892թ. մարտի 3–ին Սրբուհի Տյուսաբին գրած նամակում հետեւյալ միտքն է հայտնում. «Մարդ կը սխալի, երբ կը կարծէ լինիլ ինչ որ չէ, բայց կը սխալի եւս, երբ կը կարծէ չլինել ինչ որ է»148:

Շատ տարիներ անց, 1915թ. մարտի 8–ին Մ.Օրմանյանի հովանավորությունն ու ջերմ համակրանքը վայելած Ռուբեն Սեւակն իր օրագրում նշել է. «Վաղուընէ սկսեալ պիտի ջանամ ըլլալ այն, ինչ որ եմ, որովհետեւ ԱՅՆ. ԻՆՉ ՈՐ ԵՄ ինձ կը թուի թէ աւելի բարձր է, ՔԱՆ ԱՅՆ. ԻՆՉ ՈՐ Կ'ԵՐԵՒԱՄ»149:

Իր գործունեության մասին Մ.Օրմանյանը գրել է հետեւյալը. «Ինծի կը մնար յարմար կերպով ճարտար դարձուածքներով, հնարաւոր միջոցներով Համիտի հայերու դէմ ունեցած ատելութիւնը մեղմացնել, ազգային կացութիւնը բարվոքել, ներքին կազմակերպութիւնը պահպանել, մի խօսքով քիչ ու շատ տանելի վիճակ մը պատրաստել: Այդ ծրագիրը Համիտին ուզածը չէր եւ երբ ես անոր կը հետեւէի, Համիտին հետեւող եղած չէի ըլլար»150:

«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ստեղծման եւ հետո նրա հետ սերտ կապեր ունեցող ու Գարիբալդիի հետ ազատագրական պայքա-

րի վերաբերյալ հարցեր քննարկող Մ.Օրմանյանն այնքան շրջահայաց էր. որ չէր կարող հավանություն տալ անպատրաստ ու անհեռանկար ելույթների: Նա անչափ վնասակար էր համարում արկածախնդրությունը եւ նշավակում դրանց հեղինակներին: Այդպիսի վերաբերմունք ուներ նա Օտոմանյան բանկի գրավման, Խանասորի արշավանքի վերաբերյալ: «Պաշտպան հայրենյացի» ղեկավար Խաչատուր Կերեքցյանը (1846–1891թթ.) Օրմանյանի ազդեցությամբ էր. որ 1886թ. թուրքական բանտից ազատվելուց հետո արտահայտվեց անպատրաստ ու անժամանակ ելույթների դեմ. որով էլ հակադրվեց դաշնակցության Կարինի կոմիտեին: Այդ հակադրության համար էլ 1891թ. դաշնակցությունը ահաբեկչության ենթարկեց հայ ազգային–ազատագրական պայքարի անձնուրաց գործիչ Խ.Կերեքցյանին151:

Մ.Օրմանյանի գործունեությունը առաջ էր բերել դաշնակցության դժգոհությունը եւ նրան այդ կուսակցության ղեկավարները չէին կարող ներել: Մ.Օրմանյանին նրանք մեղադրեցին սուլթանի հետ համագործակցելու մեջ: 1908թ. հուլիսի 18–ին դաշնակցության կազմակերպած ցույցի մասնակիցները մտան պատրիարքարան եւ ստիպեցին Օրմանյանին հրաժարական տալ: Նորից պատրիրաք ընտրվեց Իզմիրլյանը: Դրության տեր դարձավ դաշնակցությունը. որը ոչ միայն համագործակցեց երիտթուրքերի հետ. այլեւ իր որդեգրած կեցվածքով անկարող եղավ զգալ ու հասկանալ երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության ամբողջ էությունը:

Մ.Օրմանյանը հեռացավ Երուսաղեմ. որտեղ էլ մահացավ 1918թ.: Իր ամբողջ գործունեության ընթացքում գրած «Ազգապատում», «Համապատում». «Աթոռ Հայաստանեաց». «Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը». «Խոհք եւ խօսք» եւ այլ աշխատություններում Մ.Օրմանյանը խոհեմ հաստատակամությամբ տանում էր այն գիծը. որ պահպանվի ազգային միասնությունը. որպեսզի հայ ազատագրական միտքը լինի զգաստ. չտրվի զգացմունքներին եւ անխոհեմ գործողություններով չվնասի այդ միասնությանը:

Երիտթուրքերի հետ համագործակցության մասին համաձայնությունը ստորագրելուց անցել է 95 տարի: Բավական երկար ժամանակաշրջան. մոտ մեկ դար: Այդ ընթացքում հայ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող շատ իրադարձություններ են եղել: Հայ ժողովուրդը ապրեց ահավոր ողբերգություն: Արեւմտյան Հայաստանը բռնությամբ հայաթափվեց. կազմակերպված ցեղասպանությանը զոհ գնաց մեկ ու կես միլիոն հայ:

Նկատի ունենալով անցած ժամանակաշրջանը. տեղի ունեցած իրադարձությունների տրամաբանական ընթացքը կարելի է հստակորեն ասել. որ Ռուբեն Սեւակի նման մտածող գործիչները միանգամայն ճիշտ էին. որ դեմ էին երիտթուրքերի հետ համագործակցությանը:

Այո. դաշնակցությունը սխալվեց համաձայնության գալով երիտթուրքերի հետ: Այդ սխալի հետեւանքները մինչեւ օրս չի հաջողվել վերացնել: Աս-

պարեզ են իջել դաշնակցության անդամ շատ սերունդներ, բայց ամբողջ խնդիրն էլ այն է, որ մինչեւ հիմա դաշնակցության ղեկավարները պնդում են, թե երիտթուրքերի հետ համագործակցելը հարկադրական քայլ էր: Բայց ո՞վ էր նրանց հարկադրել կատարել այդ քայլը: Պարկեշտությունը պահանջում է, որպեսզի դաշնակցությունը ոչ թե արդարանա, այլ ընդունի իր սխալը եւ ներողություն խնդրի իր ժողովրդից այդ անմիտ համագործակցության ողբերգական հետեւանքների համար: Բայց պարկեշտությունն այդ կուսակցության համար չէ: Երեւի թե աշխարհում այն միակ կուսակցությունն է, որ իրեն համարում է անսխալական...

Ռուբեն Սեւակի ուսանելու տարիներին Լոզան էին գալիս կամ այնտեղով անցնում բազմաթիվ հայ գրողներ, ազգային, հասարակական ու քաղաքական հայտնի գործիչներ: Ռուբեն Սեւակը հանդիպում էր նրանց, զրուցում հետները: Նրանցից Ռուբեն Սեւակը ոչ միայն տեղեկություններ էր ստանում Ռուսաստանում, Անդրկովկասում եւ Թուրքիայում ընթացող իրադարձությունների մասին, այլեւ այդ գործիչների հետ զրույցների ընթացքում նաեւ ստուգում իր հայացքների հիմնավոր ու ճշմարիտ լինելը:

Այդպիսի հանդիպումներից մեկի մասին մեզ լուր է հասցրել Ավետիք Իսահակյանը, որը 1913թ. եղել է Լոզանում: Ավետիք Իսահակյանն այդ ժամանակ արդեն շատ հայտնի բանաստեղծ էր եւ ուներ մեծ հեղինակություն: Ավ. Իսահակյանի հետ հանդիպման ժամանակ Ռուբենը նրա ծոցատետրի մեջ գրել է իր բանաստեղծություններից մեկը «Հայաստանը»:

1918թ. դեկտեմբերի 13–ին Ժնեւից Ավ. Իսահակյանը Ա.Չոպանյանին ուղարկած նամակում հայտնում էր նաեւ հետեւյալը. «Սիրելի բարեկամ Ար.Չոպանեան, այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանաւոր, որ 1913թ. Լոզանում մեր եղերաբախտ բանաստեղծ Ռուբէն Չիլինկիրեան–Սեւակը գրեց իմ ծոցատետրիս մէջ. այս ծոցատետրս միայն վերջերս հնարաւոր եղաւ ստանալու (մօտս չէր ուրիշ ձեռագիրներիս հետ), ուստի եւ պարտք եմ համարում տպագրութեան յանձնելու, միգուցէ չկորչի այս գեղեցիկ բանաստեղծութիւնը: Որքան յիշում եմ ոչ մի տեղ չի տպուած դա»152:

Արշակ Չոպանյանը, անշուշտ, լավ էր հիշում Ռուբեն Սեւակին: Այդ նա էր, որ ստանալով «Կարմիր գիրքը» Ռուբեն Սեւակին ուղարկած բացիկում շնորհակալություն հայտնելով գրում էր. «Կրակ ունիք եւ ծիրք,– ու խորհուրդ էր տալիս,– բայց դեռ պատաստ չէք, շատ կարդալու, ոճը յղկելու գրական զարգացումների պէտք ունիք, մի աճապարէք»153:

Արշակ Չոպանյանն իր խմբագրած «Վերածնունդ» հանդեսի 1919թ. թիվ 1–2–ում տպագրեց «Հայաստան» բանաստեղծությունը: Ահա այն.

«Ո՞վ կու լայ այսպէս խշտեակիս շէմքին.
– Քոյր, ղարիպն է, բաց:
Կմա՞խք մը կ'անցնի դուրսէն լալագին.

– Սովն է, դուռըդ բաց:

Տապա՞ռն է ջախջախ դըրանս կուրծքին.

– Ջարդն է, դուռըդ բաց»154:

Կարիք չկա, ըստ երեւույթին, ենթադրությունների մեջ ընկնել: Բայց մի բան կարող ենք հաստատապես ասել, որ խոսքի արտահայտության նկատմամբ շատ պահանջկոտ Ավետիք Իսահակյանին ոչ միայն դուր էր եկել «այս գեղեցիկ բանաստեղծութիւնը», այլեւ անպայման նա համակարծիք է եղել Ռուբեն Սեւակի փիլիսոփայությանը, որ նա արտահայտել է ընդամենը վեց տողում: Այո, վեց տող: Բայց ինչպիսի՜ խորություն, ինչպիսի՜ ընդգրկում եւ Հայաստանի պատմական ճակատագրի ըմբռնում:

Դժբախտաբար, Ռուբեն Սեւակի ուսանողական հետագա կյանքը շուտով ծանրացավ: Հայրը՝ Հովհաննես Չիլինկիրյանը, հայտնվել էր նյութական ծանր վիճակի մեջ եւ հնարավորություն չուներ որդուն օգնել155: Ռ.Պերպերյանի մահով էլ Ռուբենը զրկվեց նրա աջակցությունից: Մնում էր պատրիարք Մ.Օրմանյանը: 1908թ. փետրվարի 16–ին Ռուբեն Սեւակը համարձակվում է դիմել պատրիարք Մ.Օրմանյանին խնդրելով դրամական օգնություն որպես բժիշկ ուսումը շարունակելու համար: Պատրիարքը հիշում էր Ռուբեն Չիլինկիրյանին եւ գիտեր, թե իր օգնությունն ինչքան անհրաժեշտ է եւ կարգադրում է Ռուբեն Սեւակին ուղարկել 200 ֆրանկ, այն ժամանակվա համար պատկառելի գումար: 1908թ. մայիսի 16–ին Ռուբեն Սեւակը նամակով պատրիարքին ջերմ շնորհակալություն է հայտնում օգնության համար եւ տեղեկացնում, թե ստացված գումարը ինչ նպատակով է ծախսել156:

Այս փաստը հիշեցի ոչ միայն ասելու, որ Ռուբեն Սեւակը հայտնվել էր նյութական ծանր վիճակի մեջ եւ ոչ էլ նրա համար, որ մեկ անգամ եւս ընդգծվի պատրիարք Մ.Օրմանյանի հոգատար վերաբերմունքը: Այլ նրա համար, որ փաստեմ, վերոհիշյալ ուսանողական միության ժողովներում Ռուբեն Սեւակի կրքոտ ու սկզբունքային ելույթները հանգիստ չէին տալիս նրա հակառակորդներին, որոնք ամեն կերպ ձգտում էին Կ.Պոլսում անվաճարկել Ռուբենին, նրա մասին ստապատիր լուրեր տարածելով հասնել նրան, որ պատրիարքը հրաժարվի օգնել նրան: Բայց ի պատիվ պատրիարք Մ.Օրմանյանի, ասենք, որ նա դրանց ուշադրություն չդարձրեց եւ Ռուբեն Սեւակին ցոյց տվեց անհրաժեշտ օգնություն: Շուտով Մ.Օրմանյանը հեռացվեց պատրիարքությունից եւ թվում էր, թե Ռուբեն Սեւակը կզրկվի այնքան անհրաժեշտ նյութական օգնությունից:

Սակայն կարճ ժամանակ անց պատրիարք դարձավ Եղիշե Դուրյանը (1860–1930), որը նշանավոր բանաստեղծ Պետրոս Դուրյանի կրտսեր եղբայրն էր: Ե.Դուրյանը պատրիարք մնաց 1909–1910թթ., բայց նա հասցրեց օգնության ձեռք մեկնել Ռուբեն Սեւակին նրան միանվագ ուղարկելով 200 ֆրանկ եւ նշանակեց ամսական 50 ֆրանկ թոշակ: Այդ ամենի համար պատրիարք Ե.Դուրյա-

նին երախտագիտություն հայտնելով Ռուբեն Սեւակը գրում էր. «Հաւատացէք. որ այդ սերմերը ապերախտ հողի մը վրայ չի պիտի իյնան»157:

...Վրա հասավ 1909 թվականը: Ռուբեն Սեւակը Կ.Պոլսից ստանում էր բազմաթիվ նամակներ. հաճախ 8–10 էջի վրա. որոնց հեղինակները հայտնում էին տեղի ունեցած իրադարձությունների մասին: Գնալով ընկերներից ստացված նամակները դառնում էին տագնապալի: 1909թ. ապրիլի 14–ին Հրանտ Նազարյանը նամակով հայտնում է Ադանայի հայ բնակչության կոտորածի մասին: Միաժամանակ նա գրում էր. «Ժողովուրդը չահաբեկելու համար թերթերը ոչինչ կը գրեն ճշմարտութեան տեսակէտէն: Բայց սա բացայայտ ու անուրանալի է թէ դէպի լաւ չէ որ կ'երթանք: Ռէաքսիոնը ծայր տուած է... Վտանգը ծայր տուած է»: Հ.Նազարյանը միաժամանակ հայտնում էր հետեւյալը. «... այսօր վայրկեան մը Աբլանտիտ գացի: Հոն դաշնակցական ընկերներ տեսայ. Աթոմ. Շահէնը. Ֆնդքլեանը. ինչպէս Զաւէնը եւ ուրիշներ: Մարդիկը յոռետես են. ծայրահեղօրէն յոռետես ու ամէն կերպով կը հաւատան ռէաքսիոնին ու փախչիլ կը մտածին, մէկը Պուլկարիա (Աթոմ կ'ըսէ). միւսը Եգիպտոս. միւսը չեմ գիտեր ուր...»158:

1909թ. ապրիլի 15–ի նամակում Հ.Նազարյանը գրում էր. «Գաւառներում սարսափելի ջարդ. Ադանա. Սիս. Մերսին... բոլորը ջարդուած ու հրկիզուած: Բռնապետական դահիճը իր պիղծ շունչը... կ'ուզէ անգամ մը եւս հայու արիւնով իր հոգեվարքի ծարաւը յագեցնել»159:

Երիտթուրքերի ազգային (եթե կարելի է այս բառն օգտագործել) քաղաքականության համար ամենադժվար խնդիրը Հայկական հարցն էր: Պանթուրքիզմի գլխավոր թիրախը հայտարարվեց Հայկական հարցը այստեղից բխող իր բոլոր հետեւանքներով: Վերեւում արդեն հիշատակվել են երիտթուրքական պարագլուխներից Մահմեդ Ռիզայի խոսքերն այն մասին. թե սուլթան Աբդուլ Համիդն իրենց շատ ծառայություններ կարող է մատուցել նաեւ ներքին քաղաքականության խնդիրները լուծելու գործում: Եվ. իսկապես. երիտթուրքերը չուշացրին դրանից օգտվելն ու իրագործեցին իրենց ոճրագործ ծրագիրը Ադանայի հայ բնակչության նկատմամբ: Նրանք նախօրոք բորբոքեցին. ազգային ու կրոնական թշնամանք հայերի նկատմամբ: Հայ բնակչության դեմ ուղղվեց խուժանը երիտթուրքական զորամասերի հետ միասին: Կոտորածը սկսվեց 1909թ. ապրիլի 1–ին եւ շարունակվեց 15 օր: Սպանվեց 30–35 հազար անզեն հայ: Անմեղ հայերի արյունը հոսում էր ամբողջ 15 օր շարունակ. որովհետեւ երիտթուրքերը որեւէ մտադրություն չունեին անզեն մարդկանց կոտորածը կանխել: Նրանց հարկավոր էր հայերի կոտորածը հասցնել ավարտին:

Թե այդ 15 օրվա ընթացքում ինչ էր կատարվում Ադանայում. կան շատ վկայություններ. որոնցից բերենք միայն օտար երկրների ներկայացուցիչներից մի քանիսի վկայությունը:

1. Ռուսական հյուպատոս Մավրոմատեն իր զեկուցագրում նշում էր. «Մահմեդականների մոլագարությունը Ադանայի վիլայեթում հասել է հրեշավոր չափերի»160:

2. Դեպքերի ականատես ֆրանսիական ժուռնալիստ Ա.Ադոսիդեսը 1909թ. մայիս–հուլիս ամիսներին «Ֆրանկֆուրտեր Ցայտունգ». «Լը ժուռնալ դը ժենեւա». «Տեմպ» եւ այլ թերթերում հրապարակած հոդվածներում. ինչպես նաեւ 1910թ. հրատարակած գրքում բերել է հետեւյալ փաստերը: «Նրանց (հայերին) սպանում էին հրացանների կրակոցով. դանակների. մահակների. կացինների. քարերի հարվածներով... Զորամասերը գործում էին խուժանի հետ համատեղ: Սպանում էին պետերի աչքերի առջեւ. ոստիկանների աջակցությամբ. որոնք. ինչպես որսահալածներ. մարդասպաններին ցույց էին տալիս որսը. եթե հանկարծ նրանք չնկատեին: Եվ ամենուրեք սպանություններից հետո սկսվում էր կողոպուտ. կողոպուտից հետո հրդեհ: Դա կոտորածների. սարսափների. վավաշոտության հրեշավոր պատկեր էր. որը մարդ չի կարող երեւակայել: Քաղաքին տիրում էին այնպիսի անծինք. որոնք մարդկային ոչինչ չունեին: Նրանք հեւիհեւ վազվզում էին. սպանում. սվինահարում. քառատում եւ գնում քրտնաթոր ու արյունաշաղախ. ոստնում վայրի գազանների նման: Ադանայում եւ գավառում հնչում է մի կոչ սպանել միայն հայերին:

Թուրքերը միանգամից չէին սպանում տղամարդկանց, եւ քանի դեռ նրանք լողում էին իրենց արյան մեջ. նրանց աչքի առջեւ բռնաբարում էին կանանց: Հայերին երկու ոտքից կախում էին գլխի վրա եւ կտրատում կացինով. ինչպես սպանդանոցում: Մյուսներին կապում էին փայտե մահճակալներին եւ հրդեհում. շատերին կենդանի–կենդանի մեխում էին հատակին. դռներին. սեղաններին: Անում էին հրեշավոր կատակներ: Բռնում էին հային. կապկապում եւ նրա անշարժ ծնկների վրա ջորթում նրա երեխաներին: Դահիճները աճպարարություն էին անում նոր կտրված գլուխներով եւ նույնիսկ ծնողների աչքի առջեւ վերեւ էին նետում նրանց փոքրիկ երեխաներին ու որսում նրանց իրենց կացինների ծայրերին:

Զոհերին ենթարկում էին երկարատեւ տանջանքի: Եվ դա արվում էր այնպիսի վարպետությամբ. որ տանջահարի կյանքը երկարացնելով երկարացնեին իրենց հաճույքը: Սկզբից հանում էին զոհի եղունգները. ջարդում մատները. մարմինը խարանում շիկացած մետաղով. գանգը մաշկազերծում եւ ի վերջո նրան դարձնում խյուս ու նետում շների առջեւ որպես կերակուր: Շատերին այրում էին որպես ջահ. որի շուրջ հավաքված ամբոխը զվարճանում էր այդ տեսարանով:

Խեղդում էին կանանց նրանց բերանը խցկելով իրենց մորթված երեխաների մսակտորով: Շատերի որովայնն էին ճեղքում եւ այնտեղ խցկում քառատված երեխայի մարմինը. որին մինչ այդ ծեռքերի վրա էին կրում:

Աբգարյան վարժարանի շենքը. որտեղ պատսպարվել էին 2000 հայ. զինվորները շրջապատեցին ու այրեցին: Շենքը դարձավ խարույկ, եւ եթե որեւէ մեկը փորձում էր դուրս պրծնել այնտեղից. նրան գնդակահարում էին զինվորները:

Կապված ձեռքերով հային նետում էին գետը եւ զվարճանում կրակելով այդ դժբախտների գլխներին: Հայերից մեկի բերանը լցրին վառոդ ու լուցկիով այրեցին: Շատ աղջիկների կենդանի–կենդանի այրեցին: Շատերն իրենց կյանքին վերջ տվեցին ինքնասպանությամբ»161:

3. «Նյու Յորք Հերալդ» թերթի թղթակից Հ.Գիբբոնսը. որը 1909թ. ապրիլին անձամբ եղել էր Ադանայում. գրում էր. որ երիտթուրքական նոր վարչակարգին նվիրվածությունը հատուցվեց 30 հազար հայերի կոտորածով: «Ադանայի ջարդերը.– գրել է նա.– ավելի սարսափելի էին, քան Աբդուլ Համիդի ժամանակներում... Ադանան դժոխք է դարձել: Ադանայի կոտորածը հայերի ոչնչացման առաջին փորձն էր նրանց կողմից, ովքեր զավթելով իշխանությունն Աբդուլ Համիդից ժառանգեցին նաեւ նրա գործելակերպը»162:

Ադանայի հայ բնակչության կոտորածի կազմակերպիչներից ոչ մեկը չպատժվեց: Նրանք վայելում էին երիտթուրքական պարագլուխների հովանավորությունը:

Ադանայի ջարդերն ուղեկցվում էին հայերի նյութական ու մշակութային արժեքների ոչնչացմամբ:

Ադանայի կոտորածից հետո ռուսական հյուպատոս Մավրոմատեն դեսպան Գիրսին ուղարկած զեկուցագրում նորից անդրադառնալով կոտորածների կազմակերպիչներին արդարացնելու թուրքական դատարանի գործողություններին գրում էր. «Այսպես է հավանաբար հասկանում իրավունքի. ազատության եւ արդարության սկզբունքները «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն. կազմակերպություն. որը պետք է փոխեր բռնության. աքսորի ու սպանությունների տիրապետությունը: Եվ զարմանալի չէ. որ վիլայեթի մեկը մյուսին փոխարինող վալիներն ու քաղաքացիական չինովնիկները այդ իրադարձությունները դարձրին իրենց ընչաքաղցությունը հագեցնելու աղբյուր. ոչնչի հավասարեցրին արդարադատության վերջին խղճուկ մնացորդները»:

«Եթե.– շարունակում է հյուպատոսը.– մենք վերականգնենք փաստերը ժամանակագրական կարգով. ապա կարող ենք հավաստել. որ այդ էլ է «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեի ձեռքի գործը եւ ոչ թե նախկին կառավարության... Այն բանից հետո. երբ «Միություն եւ առաջադիմություն» կոմիտեն իր ձեռքը վերցրեց իշխանությունը, եւ նրա մարգարեները սկսեցին քարոզել բոլոր մզկիթներում ...արթնացան այս տգետ. բայց մինչեւ այդ խաղաղ բնակչության արյունախում բնազդները. որոնց արդյունքը եղան 1909թ. ողբերգական դեպքերը»163:

Թվում էր, թե այս ահավոր ոճրագործությունների դեմ թուրքական պառլամենտի հայ պատգամավորները պետք է բուռն բողոք բարձրացնեին. պահանջեին պատասխանատվութան ենթարկել հայերի կոտորածը կազմակերպողներին: Կարծես թե պահը եկել էր, որպեսզի դաշնակցությունը ցույց տար, որ իսկապես ինքն է այն միակ ուժը, որ ի վիճակի է պաշտպանել հայության շահերը: Բայց դաշնակցությունը լռեց: Պառլամենտի հայ պատգամավորները, որոնց մեծ մասը դաշնակցական էր, լռեց: Նրանց լռությունը առաջ բերեց խոր վրդովմունք, որն առավելապես արտահայտեց «Բիւզանդիոն» թերթը, գրելով, թե հայ պատգամավորները լռեցին, որովհետեւ գիտեն, որ խոսելն արծաթ է, լռելը ոսկի, որն ամեն ամիս նրանց տրվում է որպես ռոճիկ: «Բիւզանդիոնի» այս խոսքերն այնքան էին վիրավորել դաշնակցականներին, որ Պոլսի պատրիարքարանի բակում դաժանորեն ծեծեցին «Բիւզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանին:

Ռուբեն Սեւակին ուղարկած նամակներից արդեն տեսանք, թե ինչպես էին դաշնակցության լիդերները սարսափած մտածում փախուստի մասին, բայց ահա, հայ խմբագրին ահաբեկելու եւ ծեծելու համար խրոխտացել էին: Ինչպե՞ս կարելի էր ինչ–որ մի 30 հազար հայ կոտորելու համար փչացնել հարաբերությունները երիտթուրքերի հետ: Դաշնակցության լիդերները հլու–հնազանդ ենթարկվեցին երիտթուրքերի պահանջ–հրամանին «մոռացեք Ադանայի արյունահեղությունը»:

Բայց դա երիտթուրքերի միակ պահանջը չէր: «ՀՅ Դաշնակցութեան պատմութիւն» գրքի 2–րդ հատորի 19–րդ էջից տեղեկանում ենք, որ 1909թ. հուլիսի 15–ին էնվերը եկավ հայոց պատրիարքարան ու հայության գործերը տնօրինող դաշնակցական երեւելիների երեսին շպրտեց հետեւյալը. «... Եթէ հայ ազգն օսմանեան նոր եւ ազատ վարչակարգի դէմ ալ գլուխ բարձրացնէ անջատողական նպատակով... ապա համարձակօրէն կ՚ըսեմ, թէ մենք իթթիհադականներս, այնպիսի խստութեամբ պիտի պայքարենք այդպիսի ազգային դաւաճանութեան դէմ, որ պիտի փնտռէք սուլթան Համիտի բռնակալութեան ամենասեւ օրերը»164:

Եվ դաշնակցության գործիչները, ենթարկվելով էնվերի պահանջին, գլուխ չբարձրացրին ու շարունակեցին ավելի եռանդով առաջ տանել սիրախաղը:

Ոչ մի քննադատության չի դիմանում թուրքական պառլամենտում դաշնակցության պատգամավորների կեցվածքը: Նրանք միայն չէին լռում, այլ եռանդով պաշտպանում էին երիտթուրքական կառավարությանը: Ավելին, բոլոր միջոցներով վարկաբեկում այն հայ գործիչներին, որոնք համոզված էին, որ Ադանայի հայ բնակչության կոտորածով երիտթուրքերը չեն բավարարվելու եւ զգուշացնում էին մոտ ապագայում ավելի սարսափելի աղետի հնարավորության մասին: Այսպիսով, դաշնակցության պարագլուխներն իրենց տեսակետին հակառակվող գործիչներին ոչ միայն վարկաբեկում էին, այլեւ

նրանց մատնում թուրքական իշխանություններին: Ասվածը փաստում է դաշնակցության ղեկավարներից Վռամյանը, որը 1910թ. գրած «Մեր հավատամքը» գրքում Ադանայի կոտորածը համարում էր հին վարչակարգի մնացուկ, որի դեմ, ըստ նրա, «վրդովված էր» իթթիհադը: Վռամյանը եռանդով պաշտպանում էր երիտթուրքերի հետ համագործակցության շարունակելը165:

Ադանայի ողբերգությունից հետո դաշնակցությունը միայն իր մտքի մեջ էր փայփայում երիտթուրքերի հետ հարաբերությունները խզելու մտադրությունը: Իսկ գործնականում նրա լիդերներն ամեն ինչ արեցին, որպեսզի արեւմտահայությունը չզինվի: Ավելին աջակցեցին ժողովրդի զինաթափմանը: Եվ այս դավաճանական քայլը, որ որոշ հետազոտողներ մեղմացնելու համար կոչում են «սխալ», դաշնակցության լիդերներն արդարացնում են նրանով, թե դա արվում էր արեւմտահայության անվտանգությունն ապահովելու շահերից ելնելով:

Եվ այդ շահերը «ապահովելու» առաքելությունն իրենց վրա վերցրին Օտոմանյան բանկի հերոս Գ.Բաստրմաջյանը (Արմեն Գարո) եւ ոչ անհայտ Վ.Փափազյանը (Կոմս): Նրանք մի քանի անգամ հանդիպեցին երիտթուրքերի պարագլուխներից Մ.Շուքրիի եւ դոկտոր Նազըմի հետ: Ի վերջո, այդ հանդիպումների արդյունքով ծնվեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր. «Հայրենիքի ազատութիւնն ապահովելու, անոր ամուր հողային եւ քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը անձերու մէջ գոյացած թիւրիմացութիւնները փարատելու եւ օսմանեան տարրերու միջեւ լաւագոյն յարաբերութիւններ հաստատելու նպատակով իթթիհադ վե թերաքքը եւ ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնները կատարեալ համաձայնութեան եկան»: Այնուհետեւ Մ.Վարանդյանը հիշատակում է այդ համաձայնության սկզբունքները, որոնցից հարկ եմ համարում առանձնացնել այն կետը, որտեղ նշվում էր, թե «Իթթիհադ վե թերաքքը» եւ դաշնակցութիւն կուսակցութիւնը մարտի 31–ին Ադանայի ողբերգական իրադարձութիւնները համարելով դաս քաղելու նախազգուշացում, որոշեցին գործել համատեղ հիմնական կէտերն իրականացնելու համար»166:

Կարճ ժամանակ անց, դաշնակցության 5–րդ համագումարը վերոհիշյալ հայտարարությանը համապատասխան ընդունեց հետեւյալ որոշումը. «Դաշնակցութիւնը պիտի շարունակէ նոր թափով... համագործակցիլ երիտասարդ թուրք կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ»: Բայց սա երեւի դաշնակցության ղեկավարության համար շատ քիչ էր, ուստի նաեւ արձանագրվեց, որ «Դաշնակցութիւնը վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական եւ տնտեսական կարգերն օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններուն տեղական լայն ինքնավարութեան վրայ»167:

Այս առնչությամբ չի կարելի չհամաձայնել Ս.Սապահ–Գուլյանի հետեւ-

յալ գնահատականին. «Պատմական ամենամեծ սխալը, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը գործեց, դա այն պայմանադրութիւնն էր, որ Ադանայի կոտորածից անմիջապէս յետոյ նա կնքեց իթթիհադի հետ, նրա հետ համաձայնելով, համագործակցելով: Դրանով իթթիհադը հայերի մէջ ոչ միայն մշտական մի նեցուկ ունեցաւ, այլեւ ծանրացաւ հայութեան վրայ եւ իր ուղղակի անել չկարողացածը դաշնակցութեան ձեռքով, նրա միջոցով արեց»168:

Անկախ նրանից, որ դաշնակցության շատ գործիչներ համաձայն չէին այս ամենին եւ շատերն էլ դրա համար հեռացան կուսակցությունից, պետք է ընդգծել, որ 1907թ. դեկտեմբերին երիտթուրքերի հետ կնքած համագործակցությունը մեծ ճեղք տվեց Ադանայի հայ բնակչության կոտորածի ժամանակ, եւ դրանով հանդերձ դաշնակցությունը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ: Լուրջ մտածողները դա դիտեցին ոչ միայն որպես դաշնակցության կրախ, այլեւ որոշակիորեն համոզվեցին, որ դաշնակցությունն այլեւս անելիք չունի եւ հանուն հայ ժողովրդի շահերի այդ կուսակցությունը պետք է հեռանար քաղաքական ասպարեզից եւ ինքնալուծարվեր:

Սա կլիներ արդարացի, եւ հայ ժողովուրդը հետագայում կփրկվեր շատ դժբախտություններից:

Բայց դաշնակցությունը չլուծարվեց, մնաց ասպարեզում, որովհետեւ նրա գոյությունը տվյալ ժամանակաշրջանում շատ էր հարկավոր երիտթուրքերին:

Իհարկե, այս ամբողջ անցուդարձին ուշադրությամբ հետեւում էին Թուրքիայից դուրս գտնվող հայկական ուժերն ու շարժումները: Բոլորն էլ զգում էին վերոհիշյալ գործարքի աննպաստ ուղղվածությունն ու բովանդակությունը:

Դաշնակցությունը զգում էր, որ կորցնում էր ոտքերի տակի հողը, վտանգում հեղինակությունը: Եվ 1911թ. Կ.Պոլսում գումարված դաշնակցության 6–րդ համագումարն աղմուկով քննարկեց երիտթուրքական կուսակցության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցը: Համագումարը ցուցադրության համար, ըստ Վ.Մինախորյանի, ընդունեց հետեւյալ որոշումը. «... Հայ ժողովուրդի վերաբերեալ կենսական պէտքերու մասին համաձայնութիւններն անհետեւանք մնացած են, իթթիհադը չէ խորհրդակցած երկրի կացութեան վերաբերեալ հարցերու մէջ դաշնակցութեան հետ եւ անպատիժ կը թողու չարագործները...»169:

Դաշնակցության լիդերներից մեկի Ատոմի հետեւյալ խոսքերը, որ մեջբերել է Վ.Մինախորյանը, ավելի քան պերճախոս են. «Շատ ջանք թափեցինք յանուն համերաշխութեան, մէկ կողմ դրինք մեր բուն հայեցակէտերը, մեր հաւատոյ հանգանակը ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը»170: Ուրեմն, ո՞րն էր դաշնակցության համար գլխավորը պաշտպանել իր «հավատո հանգանակը» հանդիսացող ժողովրդի ինքնապաշտպանությո՞ւնը, թե՞ համերաշխությունը երիտթուրքերի հետ: Եվ դաշնակցությունը գերադասեց

երիտթուրքերի հետ համերաշխության պահպանումը: Դաշնակցությունն իր քաղաքականությամբ իրեն հեռացրել էր ազգի գործերի իսկական տնօրինումից եւ անվերադարձ հրաժարվեց իր ստեղծման գլխավոր նպատակից: Բայց պահանջվեց երկար ժամանակ, որպեսզի ամբողջովին երեւար այդպիսի քաղաքականության սնանկությունը:

Ադանայի ջարդերի լուրն ստանալուց հետո Ռուբեն Սեւակը շտապեց դրսեւորել իր վերաբերմունքը: 1909թ. մայիսի 27–ին նա գրում էր. «Սեւ օրեր կ'ապրինք նորէն, սարսափի օրեր: Հեռագիրները ամէն ժամ նոր գոյժ մը կը բերեն: Ջարդ. ու եթէ ջարդ չէ, հրդեհ. ու եթէ հրդեհ չէ, սով. ու ինչ որ ամենէն սարսափելին է, համաճարակ»:

«Ինչո՞ւ են հայերին կոտորում,– հարցնում էր Ռուբեն Սեւակը եւ տալիս իր գնահատականը,– որովհետեւ... «տարեց»ները, «շնորհքով» մարդերը, ազգին «խելոք»ները, տակաւին չեն մտածած այդ նախնական հարցումին վրայ... Որովհետեւ այդ ԻՆՉՈՒՆ հսկայ անկիւնաքարն է Յեղափոխութեան, եւ որովհետեւ այդ բառին տակէն կրնան անհաճոյ բաներ դուրս գալ իրենց շահուն համար, ինչպէս կարիճներ քարի մը տակէն...»:

Իր նամակում Ռուբեն Սեւակը մեջբերում է օտար մամուլից հետեւյալը. «Աստուած էշերը ստեղծեց անարգուելու համար, հայերը ջարդելու... Թուրքիոյ մէջ ՐԵԺԻ՞Մ պիտի փոխուի, հայերու ջարդ: Սուլթա՞նը պիտի գահակալէ, հայերու ջարդ: Բայց այս բոլորը այնքան տարօրինակ չէ մեզի համար, որքան այն յուսահատեցուցիչ «խելօքութիւնը», որով հայերը կ'ողջունեն այդ ջարդերը: Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի ՄԱՐԴԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼ...»:

Եվ նկատի ունենալով դաշնակցության կեցվածքը Ռուբեն Սեւակը ափսոսանքով նշում էր, որ դրա հետեւանքով «հայուն սրտէն» իսպառ հեռացել է «մարդկօրէն կատղիլը»: «Ու այս,– ընդգծում էր Ռուբեն Սեւակը,– ոչ միայն աստուածավախ եկեղեցականութեան, խնկամոլ ռամկութեան, տգէտ արհեստաւորութեան մէջ, այլ նոյնիսկ ու մանաւանդ մեր մտաւորականութեան մէջ»: Եվ իբրեւ իր գնահատականի փաստարկում Ռուբեն Սեւակը արդարացի զայրույթով նշում էր, որ վերջին ամիսներին կատարված դեպքերին, այսինքն Ադանայի կոտորածներին եվրոպական մամուլը «շատ աւելի մօտէն շօշափեց հայուն վէրքը, քան պոլսահայ մամուլը»:

Ռուբեն Սեւակի վերաբերմունքը լիակատար ըմբռնելու համար հիշենք նաեւ նրա հետեւյալ գնահատականը. «Սարսափահար, քարացած, Պոլսոյ հայ թերթերուն կը սպասենք, աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար, կամ գոնէ յուժկու բողոքի մը ընթերցումով ամոքելու համար... Թերթերը կուգան, յաւիտենական ոսկեզօծ ունայնութիւնը որ կը յատկանշէ պոլսահայ մտաւորականութիւնը... Մեր թերթերը դեռ կը շարունակեն իրենց անդամալոյծ կեանքը: Նոյնիսկ հանդէսներ կարդացինք, ուր Կիլիկիոյ ջարդերէն անմիջապէս առաջ սիրային յայրատ ոտանաւորներ յանգուած կային, «նշա-

նածի» պատմութիւններ ու դեռ ինչեր... Մինչդեռ հայ ընդհանուր մամուլը սուգին սեւովը պէտք էր պատուէր. կամ արիւնի կարմիրովը պոռթկալ. եւ կամ – եթէ չէր կրնար ամէն բան ըսել. լռեր... Գոնէ սա յուսահատեցուցիչ, ծայրահեղօրէն յոռետես. ջլատ տրտում դամբանականներ չգրէին: Անոնք. որ մեռան. գիտակցօրէն. դիւցազնօրէն. անոնք ոչ արցունքի պէտք ունին. ոչ վարձու կեղծ լալկաններու. ոչ խրատի: Դամբանականները պէտք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն: Ժողովուրդները ինքնապահպանութեան. ցեղին շարունակութեան. ՊԱՅՔԱՐԻՆ բնազդը ունին: Մամուլը այսպիսի արհաւրալի շրջաններու մէջ պէտք չէ որ յոռետեսութեան. սուգի. **անդարմանելի** ցաւի մշուշի մը մէջ խաւարէ ժողովուրդին այս բնազդը: Fatalisme–ը չէ որ պիտի փրկէ ընկճուած ցեղերը. ահա թէ ինչ բան կը մոռնայ մեր մամուլը»171:

Մինչ Ռուբեն Սեւակը հրապարակավ մատնացույց էր անում հայության «թշուառական ու անզայրոյթ. անիմաստ ու անվրէժխնդիր» դառնալու եւ «հազարներով ջարդուելու»172 պատճառներն ու դրանց հեղինակներին. դաշնակցության պարագլուխներն ու նրանց հետ նաեւ Գր.Զոհրապը շարունակում էին համագործակցությունը երիտթուրքերի հետ:

Ադանայի հայ բնակչության կոտորածի կազմակերպիչներից ոմանց նկատմամբ թուրքական դատարանի կիսատ–պռատ վճիռը այնպիսի բավականություն էր առաջացրել. որ Գր. Զոհրապը 1910թ. Սկյուտարի հայ բնակչության ու իթթիհադականների ներկայությամբ երիտթուրքերի պարագլուխներին պաշտպանելով ասաց. «Ե՞րբ տեսնուած է. որ քրիստոնէական ջարդի մը առթիւ. 100–ի մօտ մահմետականներ կախաղան հանուին եւ 1000–ի մօտ մահմետական եղեռնագործներ շղթայակից բանտարկութեան դատապարտուին»: Եվ սրա համար գոհունակություն հայտնելով Գր. Զոհրապը հայությանը կոչ արեց. «Սահմանադրական կառավարութիւնը այս արիութիւնը ցոյց տուաւ. եւ ամէն արդարասէր հայու պարտքն է ճանչնալ զայն եւ ըստ այնմ վերաբերիլ իթթիհադական կառավարութեան հանդէպ»173:

Այսպիսով. արեւմտահայ իրականության մեջ հստակ հանդես էին գալիս երկու տարբեր գաղափարական ու քաղաքական թեւեր: Նրանց միջեւ գլխավոր հակադրությունը ընդգծված արտահայտվում էր երիտթուրքական իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի մեջ:

Մի թեւը շարունակում էր կույր քաղաքականությունը եւ իր գլխավոր խնդիրը, ինչպես տեսանք. համարում էր երիտթուրքական կառավարության հետ համագործակցելը:

Մյուս թեւը. ի դեմս Ռուբեն Սեւակի. ոչ միայն չէր վստահում երիտթուրքական կառավարությանը. այլեւ արեւմտահայության ազատագրության ելքը տեսնում էր զինված ու վճռական պայքարի մեջ:

Դժբախտաբար, հենց երիտթուրքական իշխանության աջակցությամբ առաջին թելը դարձավ դրության տերը եւ իր քաղաքականությամբ արեւմտահայությանը կանգնեցրեց մեծ ողբերգության առջեւ:

Համոզված ընդգծում եմ, որ եթե արեւմտահայ բոլոր քաղաքական ուժերը համախմբվեին, ասպարեզից հեռացնեին երիտթուրքերի կամակատար դաշնակցության ղեկավարներին, ապա ռեալ հիմքեր կստեղծվեին Ռուբեն Սեւակի նկատի ունեցած «մարդկօրէն կատղիլը» իրական դարձնելու համար:

Ասվածը նկատի ունենալով ընթերցողին նորից հրավիրում եմ ուշադրությամբ կարդալ Ռուբեն Սեւակի վերոհիշյալ մտքերը: Դրանք մեծ հաշվով օտար բռնակալական լծի տակ գտնվող ժողովրդին պայքարի հանելու ծրագրի որոշակի տարրեր են:

Ռուբեն Սեւակի հարցը «Ինչո՞ւ են հայերին կոտորում» եւ տված պատասխանը այդ ծրագրի առաջին եւ կարեւոր պահանջներից մեկն են: Ժողովրդի պայքարը կազմակերպելու, նրան հեղափոխության նախապատրաստելու համար ամենից առաջ հարկավոր է ունենալ այնպիսի գործիչներ, որոնք անմնացորդ նվիրված են ժողովրդի ազատագրման գաղափարին եւ հավատով են լցված նրա հեղափոխական ուժի նկատմամբ:

Այսպիսի պահանջը նաեւ նշանակում էր, որ քաղաքական այն ուժը, որն իր մենաշնորհն էր համարում հայության գործերի տնօրինումը, չուներ Ռուբեն Սեւակի մատնանշած հատկանիշներն ունեցող գործիչներ, որոնք ոչ միայն չէին կարողանում, այլեւ չէին ուզում հասկանալ «յեղափոխութեան հսկայ անկիւնաքարը»:

«Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկօրէն կատղիլ» հարցով Ռուբեն Սեւակն առաջ էր քաշում հաջորդ կարեւոր խնդիրը: «Մարդկօրէն կատղիլ» ասելով Ռուբեն Սեւակը դնում էր ընդդեմ բռնակալության, հանուն ազատության համաժողովրդական պայքարի անհրաժեշտության հարցը: Իսկ Ռուբեն Սեւակը ինչպե՞ս էր տեսնում այդ անհրաժեշտության իրականացումը: Դա հնարավոր կլիներ միայն այն ժամանակ, երբ ասպարեզ կգային այնպիսի ուժեր, որոնք զերծ կլինեին աստվածավախ եկեղեցականության, խնկամոլ ռամկության ու տգետ մտավորականության մեջ տիրապետող ախտերից, որոնց պատճառով «հայուն սրտէն» հեռացել է «մարդկօրէն կատղիլը»: Սրանով Ռուբեն Սեւակը դնում էր արեւմտահայության ազգային–ազատագրական պայքարը ղեկավարող իսկական հեղափոխական կազմակերպություն ունենալու խնդիրը:

«Մարդկօրէն կատղիլ» ասելով Ռուբեն Սեւակը հասկանում էր համաժողովրդական պայքար եւ համոզված էր, որ ժողովուրդը պատրաստ է դրան, քանի որ ունի ինքնապաշտպանության, ցեղի շարունակության, պայքարի բնազդը: Այսինքն նա այդ պայքարը համարում էր բնական եւ օրինաչափ:

Ուրեմն, առկա էր իր իրավունքների համար պայքարող եւ «մարդկօրէն

կատղիլուն» պատրաստ ժողովուրդ. որին հարկավոր էր իսկական հեղափոխական կուսակցություն. որը ոչ թե վախենալու էր ժողովրդի հզոր պոռթկումից. այլ ստանձնելու էր դրա կազմակերպումն ու ղեկավարումը:

Բնականաբար. Ռուբեն Սեւակի այս ծրագիրը հակասում էր երիտթուրքերի հետ համագործակցող. նրա հետ սիրախաղով զբաղված դաշնակցության թե՛ ծրագրին եւ թե՛ գործելակերպին: Որովհետեւ դաշնակցությունը գերադասում էր պայքարի անհատական միջոցները. որոնց իրականացումը նախ դժվարություն չէր ներկայացնում. եւ երկրորդ. նպաստում էր «նոր հերոսների» ծնվելուն. որոնց փառաբանումը կպանծացներ կուսակցությունը: Այս առումով դաշնակցությունը որդեգրել էր ռուս սոցիալիստ–հեղափոխականների (էսէռներ) տակտիկան ու ստրատեգիան եւ իր ամբողջ գործունեության ընթացքում մնաց դրանց հավատարիմ: Այս է պատճառը. որ երբ մեկ–երկու անգամ փորձել է համաժողովրդական պայքար կազմակերպել. մատնվել է ձախողման... Ինչպես հայտնի է. դաշնակցության պայքարի անհատական մեթոդը նույնպես մատնվել է ձախողման: Այստեղ էլ պատմությունը չի արձանագրել որեւէ հաջողություն:

Այսպիսով. դաշնակցությունն իր բնույթով. պայքարի միջոցներով անկարող էր ղեկավարել արեւմտահայության պայքարը: Հենց այս առումով էլ Ռուբեն Սեւակը դնում էր համաժողովրդական պայքարը կազմակերպող ու ղեկավարող կուսակցություն ունենալու անհրաժեշտության հարցը:

Ռուբեն Սեւակը. որը խորապես ծանոթացել էր եվրոպական ժողովուրդների ազատագրական. հեղափոխական պայքարի ընթացքին. լավագույնս գիտեր իր ժողովրդի մղած ազգային–ազատագրական պայքարի պատմությունը. համոզված էր. որ Օտոմանյան բանկի գրավմամբ. Խանասորի արշավանքով հնարավոր չէ հաղթանակի հասնել. որ եվրոպական տերությունների հետ էլ հույսեր կապելը հեռանկար չունի: Ուստի. ելնելով նախորդ ժամանակաշրջանի փորձի ընդհանրացումից արեւմտահայության բոլոր ուժերի համախմբման միջոցով դնում էր համաժողովրդական պայքարի անհրաժեշտության հարցը: Միայն այդ դեպքում «ժողովուրդի մարդկօրէն կատղիլը» կդառնար իրական: Միայն այդ դեպքում հնարավոր կլիներ թուրքական բռնակալությունից ազատագրվելը:

Ռուբեն Սեւակի առաջ քաշած պահանջը հեղափոխական էր եւ իրագործելի: Դրա համար կային բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմանները: Բայց նրա պահանջը չէր համապատասխանում. ինչպես ասվեց. «միակ փրկիչ» ուժի գործելակերպին եւ պատահական չէր. որ Ռուբեն Սեւակը հայտնվեց երիտթուրքերի կազմած «սեւ ցուցակի» մեջ:

Ոմանք. որ դեռ շարունակում են գերի մնալ դաշնակցության ստեղծած գաղափարախոսությանը. կարող են Ռուբեն Սեւակի ծրագիրը համարել անիրագործելի. ուտոպիական եւ հիմնազուրկ: Սակայն Թուրքիայում այդ

ժամանակ տիրող ներքին եւ արտաքին քաղաքական իրավիճակի անկայունությունը. մի խոսքով առկա բոլոր իրողություններն ապացուցում են. թե Ռուբեն Սեւակն իր ծրագիրը ինչքան ռեալ հիմքերի վրա էր կառուցել: Դրանցից կարելի է հիշել համառոտակի կերպով մի քանիսը.

Առաջին. Թուրքիայում կատարված երիտթուրքական հեղափոխությամբ երկրի ներքին քաղաքական իրավիճակը բավականաչափ անկայուն էր: Իշխանության եկած երիտթուրքական կուսակցությունը դեռեւս իրեն լրիվ չէր զգում դրության տեր եւ շարունակում էր դաշնակիցներին կերակրել խոստումներով. ինչն ավելի շատ նշանակում էր իր ուժերի նկատմամբ անվստահություն:

Երիտթուրքական հեղափոխության «գարունը» շատ կարճատեւ եղավ: Խորանում էր հիասթափությունը: Երիտթուրքերի մեծապետական շովինիստական քաղաքականության գլխավոր նպատակի պանթուրքիզմի արմատավորման հենց առաջին քայլերը սթափեցրին նաեւ արեւմտահայությանը, որն իր դժգոհությունն ավելի բացահայտ էր արտահայտում: Ահա, օրինակ, բազմաթիվ փաստերից մեկը, որի մասին ռուսական գլխավոր շտաբին հաղորդելով Կովկասի զինվորական օկրուգի հրամանատարությունը նշում էր. թե կառավարությանն իր դժգոհությունը հայտնելու համար Արեւմտյան Հայաստանում հավաքվել են մեծ թվով ստորագրություններ174: Սա արդեն չէր համապատասխանում «հավատարիմ հպատակ» լինելու սկզբունքին. եւ դրա ջատագովները հավաքված ստորագրությունները ոչնչացրին: Դրանից օգտվելով իշխանությունները հալածեցին ստորագրահավաքի կազմակերպիչներին:

Երկրորդ. Ադանայի հայ բնակչության կոտորածը ավելի սրեց արեւմտահայության եւ երիտթուրքերի միջեւ հարաբերությունները: Արեւմտահայության մոտ ոչ թե կասեցվեց. այլ ավելի ամրապնդվեց թուրքական բռնակալությունից ազատագրվելու կամքը: Ամենուրեք դրսեւորվում էին անհնազանդություն եւ պատրաստակամություն վճռական պայքարի համար: Այս մասին է. օրինակ, վկայում Պետերբուրգ ուղարկված զեկուցագրերից մեկը: 1909թ. սեպտեմբերի 15–ին Կարին է գալիս երիտթուրքական կուսակցության կոմիտեի լիազոր ներկայացուցիչ մայոր Վահաբ բեյը «հայ բնակչությունից իթթիհադի կոմիտեի բաժանմունք ստեղծելու առաջադրանքով: Կարինի հայերը վճռականորեն մերժեցին այդ մտադրությունը: Վահաբ բեյին մերժեցին նաեւ Մուշի. Վանի. Բիթլիսի. Դիարբեքիրի եւ մի շարք այլ վայրերի հայ բնակիչները»: Երիտթուրքական լիազորը հարկադրված էր իր առաքելության ձախողման մասին հաղորդել մայրաքաղաք. նշելով. որ հայ բնաչկությունը պատրաստ չէ ընդունելու նոր քաղաքական կարգը175:

Երրորդ. Ադանայի հայ բնակչության կոտորածը ցույց տվեց. որ երիտթուրքերը չեն հրաժարվել սուլթանի քաղաքականությունից. եւ նրանց խոս-

տացած ազատությունը լոկ դատարկ խոստում է: Հայ բնակչության կոտորածը վկայում էր նաեւ երիտթուրքական իշխանության պետական ապարատի թուլության մասին:

Չորրորդ. սկսված հեղափոխության ժամանակ եւ դրանից անմիջապես հետո եվրոպական տերությունների հակասություններն ավելի էին սրվել Թուրքիայի նկատմամբ քաղաքականության իրականացման հարցում:

Հինգերորդ. Տրիպոլիտանական եւ Բալկանյան պատերազմները բացահայտեցին ոչ միայն Թուրքիայի ռազմական անկարողությունը, այլեւ միջազգային ասպարեզում նրա դիրքերի թուլացման խորությունը:

Վեցերորդ. Արեւմտյան Հայաստանում առկա էր հոծ հայկական բնակչություն, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում ուժերի համախմբման համար: Վերջապես արեւմտահայությունն իր պայքարը մղելու էր կառչած հայրենի հողին, ապավինելու էր իրեն քաջածանոթ բնական պայմաններին:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո ստեղծված նպաստավոր պայմաններից, որոնց մի մասը միայն թվարկվեց վերեւում, արեւմտահայության ազգային–ազատագրական պայքարի ղեկավարումը ստանձնած ուժերը չշտապեցին օգտվել, մնացին փարված «հավատարիմ հպատակ» լինելու գաղափարին եւ այդպես էլ չծերբազատվեցին երիտթուրքական հեղափոխության անուրջներից:

Բայց, ահա, ալբանական ժողովրդի ազգային–ազատագրական շարժումը կարողացավ օգտվել ստեղծված պայմաններից եւ հասավ վճռական հաջողության: Թեեւ ալբան ժողովուրդը մահմեդական էր, բայց դա նրան չխանգարեց դեն նետել «հավատարիմ հպատակի» պարտականությունը:

Ասվածը նկատի ունենալով ուզում եմ, գոնե համառոտ կերպով, ծանոթացնել ալբանական ժողովրդի պայքարին, որը, կարծում եմ, հնարավորություն կտա հասկանալու նաեւ, թե ինչու չհաջողվեց հասնել արեւմտահայության ազատագրմանը:

Ալբանական ժողովուրդն էլ ցնծությամբ ընդունեց երիտթուրքական հեղափոխության հաղթանակը: Սակայն, կարճ ժամանակ անց, հստակորեն երեւաց, որ ալբանական ազգային շարժման խնդիրները չեն համապատասխանում երիտթուրքական հեղափոխության նպատակներին:

Ղեկավարվելով իրենց ազգային գերագույն շահերով երիտթուրքական հեղափոխությունից կարճ ժամանակ անց, ալբանական ժողովրդի ազգային–ազատագրական շարժման ղեկավարներին հաջողվեց մշակել ընդհանուր քաղաքական ծրագիր:

Այդ ծրագիրը դրեց հետեւյալ խնդիրները.

1. Պաշտոնապես ճանաչել ալբանական լեզուն եւ ազգությունը:

2. Ամբողջ Ալբանիայում պետության հաշվին բացել տարրական եւ միջնակարգ դպրոցներ, որոնցում բոլոր առարկաների դասավանդումը պետք

է տարվեր ալբաներենով: Առանձին դասավանդվելու էր թուրքերենը. որպես համապետական լեզու:

3. Ալբանիայում բոլոր վարչական պաշտոններում նշանակվելու են Ալբանիայում ծնված ալբանացիներ:

4. Ալբանիայի եւ թուրքական պետության միջեւ եկամուտները բաշխվելու են հետեւյալ կերպ 20 տոկոսը համապետական, 80 տոկոսը տեղական կարիքների համար:

5. Ալբանական վակուֆներից ստացված եկամուտները բացառապես պետք է բաշխվեն տեղական լուսավորչական հիմնարկների վրա176:

Սա ազատագրական պայքարի նվազագույն ծրագիրն էր. որի իրականացման համար թուրքական պառլամենտում ալբանացի պատգամավորները եռանդուն ջանքեր էին գործադրում:

Ալբանիայի ազգային–ազատագրական շարժման ղեկավարները գիտակցում էին նաեւ աշխարհի տարբեր երկրներում գործող ալբանական կազմակերպությունների դերը եւ հասան դրանց համախմբմանը: «Ռուսական միտք» հանդեսը հաղորդում էր. որ. օրինակ. Բոստոնում գտնվող ալբանացի քաղաքական վտարանդիները առաջ են քաշել «Ալբանիա» անունով միասնական ինքնավար մարզ ձեւավորելու հարցը:

Հետեւողականորեն առաջ տանելով ժողովրդի բոլոր խավերի համախմբումը ալբանական ազգային–ազատագրական պայքարի ղեկավարները 1909թ. ապրիլին սկսեցին առաջին ապստամբությունը: Ժողովուրդը հրաժարվեց հարկ վճարելուց եւ վճռականորեն մերժեց զորակոչը: Ապստամբության համար առիթ ծառայեց երիտթուրքական իշխանությունների կողմից ալբանական դպրոցների եւ լրագրերի փակումը: Ալբանացիների մոտ մեծ վրդովմունք առաջացրեց նաեւ թուրքական պառլամենտում հնչած այն հայտարարությունը. թե ալբանական ազգ գոյություն չունի:

Ալբանական ժողովրդի բոլոր խավերն ընդգրկվեցին ազատագրական պայքարի մեջ: Ալբանացիների ապստամբությունը տեւեց երեք տարի (1909թ. ապրիլից մինչեւ 1912թ. սկիզբը): Ալբանացիների ապստամբությանը ուշադրությամբ հետեւում էր նաեւ ռուսական մամուլը: «Ժամանակակից աշխարհը» հանդեսը 1912թ. հաղորդում էր. որ ապստամբների դեմ 1909թ. գարնանը ուղարկվել է 40 հազարանոց զորք: Հաղորդվում էր նաեւ. որ երիտթուրքական բանակին հաջողվել է ալբանացիներից առգրավել 80 հազար հրացան: Բայց ալբանացիները հանձնել էին միայն հնացած զենքերը իրենց մոտ պահելով նոր ու ժամանակակից հրացանները177:

Ալբանիայի բնակավայրերում տեղավորվեցին թուրքական զորամասեր եւ պատժիչ ջոկատներ: Երիտթուրքական իշխանությունները համոզված էին. որ ծեռնարկած միջոցներով կկարողանան ճզմել ալբանական ապստամբների կամքը: Բայց նրանց սպասելիքները չարդարացան:

Ստեղծված ծանր պայմաններն ավելի ամրապնդեցին ալբանացիների կամքը: Դրա արդյունքով հաջողվեց 1909թ. հուլիսի վերջին հրավիրել ալբանական ազգային բոլոր կազմակերպությունների կոնգրես, որը հաստատեց երկրում առաջադիմական բարեփոխումների ծրագիր: Հատկանշականն այն էր, որ կոնգրեսում թուրքական սահմանադրությանը հավատարիմ լինելու մասին ոչ մի խոսք չեղավ:

Կոնգրեսից հետո ալբանական ժողովրդի ազգային–ազատագրական պայքարը դարձավ ավելի կազմակերպված: Երիտթուրքերը դիմեցին խորամանկության: Նրանք Ալբանիա ուղարկեցին Մեհմեդ 5–րդին, որը պետք է ներում շնորհեր «մոլորված» ալբանացիներին: Սուլթանի այցելությունն իր նպատակին չծառայեց: Ապստամբությունն ավելի ուժգին թափ ստացավ:

1912թ. նոյեմբերի վերջին նորից հրավիրվեց ազգային կոնգրես, որը հռչակեց Ալբանիայի անկախությունը, ընտրեց ժամանակավոր կառավարություն թուրքական պառլամենտում ալբանական խմբակցության նախկին ղեկավարի նախագահությամբ:

Ալբանիայի անկախության հռչակումից հետո, Լոնդոնում գումարված մեծ տերությունների դեսպանների եւ պատերազմող երկրների կոնֆերանսում, որտեղ քննարկվում էր հաշտության մասին Թուրքիայի խնդրանքը (նկատի ունեմ Բալկանյան երկրորդ պատերազմը), որոշվեց ստեղծել Ալբանիայի ինքնավարություն սուլթանի գերագույն իշխանության հովանավորությամբ:

Սակայն, իրադարձությունների ընթացքը փաստում էր, որ այլեւս հնարավոր չէ կոտրել ալբանական ժողովրդի կամքը, որը վերջնականապես նվաճել էր իր անկախությունը: 1913թ. մայիսի 30–ին Թուրքիայի հետ ստորագրված հաշտության պայմանագրով Ալբանիան անջատվեց նրանից: 1913թ. հուլիսի 29–ին մեծ տերությունները ճանաչեցին Ալբանիայի անկախությունը:

Ահա, շատ համառոտ թուրքական բռնակալության դեմ ալբանական ժողովրդի մղած ազգային–ազատագրական պայքարի պատմությունը:

Իմիջիայլոց, ալբանացիները թուրքական բռնակալության դեմ պայքարում կուտակել էին բավականաչափ փորձ եւ կարողացել էին դա իմաստավորել ու անհրաժեշտ հետեւությունների հանգել: Թուրքական բռնակալության դեմ տեւական պայքարի փորձ կուտակել էր նաեւ հայ ժողովուրդը: Այդ փորձը լրացվել էր 19–րդ դարի երկրորդ կեսից սկսած ազգային–ազատագրական պայքարով: Իսկ երիտթուրքական հեղափոխությունից հետո կայի՞ն պայմաններ, որպեսզի արեւմտահայությունը հասներ իր նպատակին: Իհարկե, այդպիսի պայմաններ կային: Միայն հարկավոր էր, որպեսզի հայ քաղաքական ուժերը համախմբվեին, իրենց միավորմամբ ապահովեին նաեւ արեւմտահայության բոլոր խավերի միասնությունը,

դրսեւորեին կամք ազգային–ազատագրական տեւական պայքարի փորձը իմաստավորելու. անհրաժեշտ հետեւություններ կատարելու համար: Հարկավոր էր. որ նրանք դիմեին վճռական քայլերի նպաստավոր պայմաններից օգտվելու համար:

Այս ամենի փոխարեն չստեղծվեց պայքարի միասնական ճակատ: Հայ քաղաքական ուժերը ավելի շատ իրար դեմ էին պայքարում: Դրա հետ միասին դաշնակցությունն էլ շարունակում էր երիտթուրքերի հետ սիրախաղը կարեւորելով «հավատարիմ հպատակ» լինելու գաղափարը: Ազատագրական պայքարի ուժերի ջլատման պատասխանատվությունը առավելապես ընկնում է դաշնակցության վրա. որովհետեւ նա էր. որ երիտթուրքերի հետ համագործակցելու իր քաղաքականությամբ վիժեցնում էր միասնության հասնելու ամեն մի փորձ: Դաշնակցության դիրքորոշումը շատ հստակ արտահայտել է նրա երեւելի գործիչներից մեկը նշանավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը: Նա Տրիպոլիտանական եւ Բալկանյան պատերազմների ժամանակ վճռականորեն դեմ էր արտահայտվում Թուրքիայի հնարավոր մասնատմանը եւ 1912թ. հունիսի 17–ին համոզված գրում էր. թե «... մենք հիմա համերաշխ կ՛ապրինք թուրքերուն հետ: Իսկ Թուրքիոյ մասնատումը աղետաւոր կ՛ըլլայ Հայաստանի ապագային համար: Մենք համոզուած ենք անոր»178:

Ասվածը ամփոփելով մեկ անգամ էլ հարկ եմ համարում ընդգծել. որ հայ քաղաքական ուժերը չմիավորվեցին. իրենց անմիաբանությամբ պառակտեցին ու ջլատեցին արեւմտահայությանը եւ ալբանացիների նման վարվելու փոխարեն մնացին կառչած իր սնանկությունը վաղուց ապացուցած տխրահռչակ 61–րդ հոդվածից եւ առաջ քաշեցին բարենորոգումների խնդիրը շարունակելով երիտթուրքերի հետ սիրախաղը:

Ընդգծենք նաեւ. որ Ռուբեն Սեւակի առաջարկած «մարդկօրէն կատղիլու» բանաձեւը ռեալ հիմքեր ուներ իրողություն դառնալու համար: Իսկ ո՞վ ձախողեց: Հասցեատերը. կարծեմ. պարզ է բոլորին:

Առաջին հայացքից թվում է. թե 1909թ. Ռուբեն Սեւակի դրած «մարդկօրէն կատղիլու» պահանջը վերաբերում է միայն իր ժամանակին: Բայց այդպես է միայն առաջին հայացքից: Մինչդեռ «մարդկօրէն կատղիլ» Ռուբեն Սեւակի ձեւակերպած հստակ բանաձեւը բխում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունից. նրա մղած ազգային եւ ազգային–ազատագրական պայքարի ընթացքից:

Իսկապես. ե՞րբ է հայ ժողովուրդը իր նպատակին հասել: Որոշակիորեն կարելի է ասել այն ժամանակ. երբ «մարդկօրէն կատղիլ» է: «Մարդկօրէն կատղիլու» միջոցով էր. որ Արտաշես Առաջին թագավորն ուժ առավ եւ վերականգնեց հայոց պետականությունը: Դրա շնորհիվ էր. որ Տիգրան Մեծի օրոք հայոց պետությունը դարձավ հին աշխարհի երրորդ

հզոր պետությունը, որը Հռոմի ու Պարսկաստանի հետ հավասար իրավունքով մասնակցում էր այն ժամանակվա միջազգային բոլոր խոշոր խնդիրների լուծմանը:

«Մարդկօրէն կատղիլու» շնորհիվ էր, որ հայ ժողովուրդը Ավարայրի ճակատամարտում հաստատեց իր գոյության ու ապրելու կամքը: «Մարդկօրէն կատղիլն» էր, որ կերտեց Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հաղթանակը...

Կարելի է բերել նաեւ բազմաթիվ փաստեր, երբ «մարդկօրէն կատղիլը» հեռացել է «հայու սրտէն» եւ դրա հետեւանքով ժողովուրդը զրկվել է պետականությունից, կորցրել պայքարի ունակությունն ու բռնել արտագաղթի դաժան ճանապարհը:

Ռուբեն Սեւակի բանածեւը՝ «մարդկօրէն կատղիլը», չի վերաբերում միայն անցյալին ու նրա ժամանակին: Հենց Ռուբեն Սեւակի խորաթափանց մտածողությունը միտված է նաեւ հայ ժողովրդի ապագային: Նա կարողացավ նայել հեռուն, տեսավ ապագա ընթացքի կեռմանները եւ զգուշացնելով ցույց տվեց ելքը: Իսկապես, ի՞նչ է կատարվում այսօր: Այդ ինչպես պատահեց, որ Ղարաբաղյան շարժման ժամանակ միասնական կամք դրսեւորած ժողովուրդը իր մեծամասնությամբ համակերպվում է աղքատության մեջ հայտնվելուն, հաշտվում է գործազրկության հետ: Անտարբեր է դարձել ահագնացող արտագաղթի նկատմամբ: Չի մտահոգվում, որ երկրի ամբողջ հարստությունն ու ունեցվածքը թալանվում է, որ ժողովրդական տնտեսության բարիքները հայտնվում են օտարների ձեռքին: Ինչո՞ւ է ժողովուրդը դարձել կամազուրկ եւ թույլ է տալիս իր հետ վարվել ինչպես գերու, ստրուկի:

Ինչո՞ւ է այս ամենը տեղի ունենում: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ այս հարցի պատասխանը տվել է Ռուբեն Սեւակը: Որովհետեւ այսօրվա «հայու սրտէն» հեռացել է «մարդկօրէն կատղիլը»:

1909թ. հուլիսին Ռուբեն Սեւակը եկավ Կ.Պոլիս նպատակ ունենալով մոտիկից զգալ, թե ինչ է կատարվում Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում: Տպավորությունը սարսափելի էր: 1909թ. հուլիսի 18–ին գրեց «Պոլսոյ որովայնին մէջ» բանաստեղծությունը, որտեղ թուրքական մայրաքաղաքը անվանեց «հավիտենական մեղքի քաղաք»: Կոստանդնուպոլիսը Ռուբեն Սեւակի այս բանաստեղծության մեջ երեւում է իր այլանդակ ու այլասերված էությամբ: Ահա, էլի Կ.Պոլսին տված մի քանի դիպուկ բնորոշում. «մարդկութեան փքած թոքէն նետուած թուք», «արեան ծաղիկ աւերակներուն վրայ բիւզանդական», «մշտնջեա մեղքի, մշտնջեա ական», «խաւարակուռ մսեղէն գաւաթ» եւ այլն: Խոր իմաստ են պարունակում նաեւ հետեւյալ երեք տողերը.

«Սոդոմէն բերուած ընծայ մահագին
Որ բոզ Արեւմուտքը Արեւելքին
Կ'երկարէ ժպտուն. Վոսֆորի ափին»179:

Ավելորդ չեմ համարում նկատել, որ Ռուբեն Սեւակը հետագայում ավելի որոշակի է արտահայտել իր վերաբերմունքը թուրքական մայրաքաղաքի նկատմամբ: Նա կարծես կանխազգում էր, թե իրեն ինչ է սպասում Կ.Պոլիս վերադառնալուց հետո:

«Ու այս բոլորին վրայ,– գրում էր Ռուբեն Սեւակը 1912թ. ապրիլի 29–ին Հ.Նազարյանին ուղարկած նամակում,– ավելցուր նաեւ Պոլսո մղձավանջը, այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, եւ որ հեռուէն կը տեսնեմ արդէն Սոդոմի մուխն ու Գոմորին մեղքին բոցը: Եւ ըսել, թէ այս մենակեաց փիլիսոփայութեան հասնելէս յետոյ, դեռ պէտք պիտի ըլլայ ինձ այդ զարհուրելի ոստանին մէջ ապրիլ, ամէնուն հետ ամէնուն պէս...»180:

Այստեղ հարկ եմ համարում հիշել թուրք բանաստեղծ Թեւֆիկ Ֆիքրեթին, որն Առաջին աշխարհամարտի նախօրյակին գրած «Մառախուղ» պոեմում կրկնելով Ռուբեն Սեւակին. Ստամբուլը համարել է «մառախուղով պատուած ու խաւարի մէջ մխրճուած բռնակալների ասպարէզ», որտեղ «անխղճօրէն տիրում են կառավարողների կեղծիքը, երկերեսանիութիւնը եւ նրանց բութ լրտեսներն ու քսու անկուշտները, որտեղ մոռացուած է արդարութիւնը»:

Թուրք բանաստեղծը իր պոեմն ուղեկցում է հետեւյալ կրկնատողերով. «ծածկվիր մառախուղով հանցագործությունների ու վշտի տանջավայր մայրաքաղաք: Ծածկվիր ու ընդմիշտ մնա քնած, պառաւած պոռնիկ»181:

Ասվածից ելնելով ուզում եմ պարզել հետեւյալ հարցը: Վերջիվերջո Կ.Պոլիսը արեւմտահայության քաղաքական, տնտեսական, մշակութային եւ հոգեւոր կենտրոնն էր: Բայց ինչո՞ւ էր Ռուբեն Սեւակը Կ.Պոլսին այդպիսի անվանումներ տալիս: Այս հարցին յուրօրինակ ու դիպուկ պատասխան է տվել բանաստեղծի եղբոր որդի Հովհաննես Չիլինկիրյանը, որի գործունեությանը կանդրադառնամ հետո:

Հ.Չիլինկիրյանը, որը տարիներ շարունակ ապրել էր Կ.Պոլսում, զգացել էր այդ քաղաքի հրեշավոր, ծանր ու գաղջ մթնոլորտը, իրավացի նշում է այն հանգամանքները, որոնք նպաստեցին այդ քաղաքում մեծ թվով հայերի բնակվելուն: Առաջինը նա հիշատակում է Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին, որը սուլթան Մեհմեդի հրամանով 1453թ. Կ.Պոլսում ստեղծեց հայկական պատրիարքությունը, որով «հայ ազգին ճակատագիրը ծեւով մը թուրքերուն ձեռքը յանձնած եղաւ»182:

«Հայը,– գրում է Հ.Չիլինկիրյանը,– օսմանեան գրաւման շրջանին, Արեւմտեան Հայաստանի հողերուն վրայ, իսկական իմաստով մէկ հատ

հայ քաղաք չկրցաւ հիմնել. Անի քաղաք մը չկրցաւ վերստեղծել»: Եվ ասվածից ելնելով. Հ.Չիլինկիրյանը եզրակացնում է. «Որովհետեւ հաւաքաբար ապրելու. իրարու զօրավիգ ըլլալու եւ թշնամիի դէմ պայքարեու կարողութիւնը չունէր: Այս է պատճառը. որ Արեւմտեան Հայաստանը 500 տարի իսկական իմաստով ոչ հայկական կառոյց ունեցաւ. ոչ գրականութիւն. ոչ ալ գրող»183:

Հ.Չիլինկիրյանի գնահատականը խիստ է ու արդարացի: Մի կարեւոր իրողություն էլ է նա նշում: «Երբ.– գրում է նա.– օսմանեան կայսրութիւնը քայքայուիլ սկսաւ եւ բոլոր գերի ազգերը ապստամբելով թուրքին դէմ. ազատութեան ճամբան ընտրեցին. Պոլսոյ մէջ ապրող կրօնական եւ համայնքային պետերը իրենց անձնական շահերուն պատճառաւ. նախընտրեցին օսմանեան տիրապետութեան տակ մնալ»:

Շարունակելով իր միտքը Հ.Չիլինկիրյանն ընդգծում է. «Եւ այս այլասերուած կեդրոնին մէջ Պոլսոյ առաջնորդները. հայկական պատմութեան ամենամեծ սխալը գործեցին»:

Իսկ ո՞րն էր այդ սխալը: Ահա եւ Հ.Չիլինկիրյանի պատասխանը. «Օսմանեան կայսրութեան հպատակ քրիստոնեայ ազգերուն ոչ մէկը իրենց վարչական կեդրոնը Պոլիս փոխադրել մտածեց: Անոնք իրենց հողին վրայ մնացին եւ ազատութեան տիրացան: Բայց հայերը հակառակը ըրին: Այս ծեւով Արեւմտեան Հայաստանի ճակատագիրը Պոլսոյ մէջ կապուեցաւ Օսմանեան կայսրութեան»:

Հ.Չիլինկիրյանը Կ.Պոլիսը համարում է հայության սուտ դրախտ. որը «իրականութեան մէջ մեր բոլոր դժբախտութիւններուն աղբիւրը եղաւ»184:

Դժվար է չհամաձայնվել Հ.Չիլինկիրյանի գնահատականին ու եզրակացություններին: Կ.Պոլսի հայ գաղութը. իսկապես. բացասական դեր խաղաց արեւմտահայության ազգային–ազատագրական պայքարի գործում եւ դարձավ անհաջողությունների. հետագա բոլոր դժբախտությունների պատճառ: Կ.Պոլսի ամիրայական դասն էր ու կղերը. որ եռանդագին կերպով 1863թ. Ազգային սահմանադրության 9–րդ հոդվածով սահմանեցին. թե «Ազգային վարչութեան առաջին պարտականութիւնն է հայ ազգը Օսմանեան կայսերական պետութեան հաւատարիմ հպատակութեան մէջ պահել»185:

Ազգային սահմանադրությունն իր այդ եւ մյուս հոդվածներով Հ.Չիլինկիրյանի դիպուկ գնահատմամբ «Տրոյական ծի էր հայութեան համար»:

Կարծում եմ. որ Ռուբեն Սեւակն անպայման այս ամենը գիտեր եւ Կ.Պոլիսը իր այլասերվածությամբ ներկայացնում էր ոչ միայն նրա համար. որ այնտեղ էր նստում արյունարբու սուլթանը. այլ նաեւ այն պատճառով. որ Պոլսի ամիրա–կղերական հատվածը ծախու եւ նույնքան այլասերված

«մտավորականների» հետ միասին անդադար ամրացնում էին արեւմտահայությանը կաշկանդող շղթաները:

Երիտթուրքերի հետ դաշնակցության շարունակվող սիրախաղի, այդ ազգակործան քաղաքականության հետեւանքով արեւմտահայության գլխին կախված սպառնալիքը ավելի մոտեցնող եւ իրողություն դարձնող անձանց գնահատականը, որ տվել է Ռուբեն Սեւակը, հնչում է իբրեւ դատավճիռ: Ահա այդ գնահատականը, որը նա տվել է 1911 թվականին. «Գառնուկի պէս անզէն ցեղ մը ամէն օր, ամէն օր կը յոշոտուի: Իսկ մեր գամբռները խելօքցեր. փիլիսոփայացեր. քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի ու կ'երազեն այն հեռաւոր օրուան ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին»186:

## Գլուխ 5

# ԱՅԼԱՍԵՐՈՒՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարդալով Ռուբեն Սեւակի արձակ ու չափածո գործերը, խորամուխ լինելով դրանցում արտահայտված մտքերի ու կանխատեսումների մեջ համոզվում ես, որ նա այդ ամենը թղթին է հանձնել ոչ միայն հասցեագրելով իր ժամանակակիցներին, այլեւ ուղղել է մեզ ու հաջորդ ապագա սերունդներին: Հենց մեծ մտածողները, գիտնականները, փիլիսոփաները, գրողները մնայուն են դարձել դրանով, իրենց իմաստուն ու զգաստացնող խոսքով ուղղված գալիքին: Նրանք ժամանակի հեռվից խոսում են գալիք սերունդների հետ, մատնանշում ճիշտ ճանապարհը եւ նաեւ զգուշացնում, թե ինչ հետեւանքներ կլինեն, եթե դրանից թույլ տրվի շեղում:

Ասվածից էլ ելնելով փորձեմ ներկայացնել իմ մտորումները Ռուբեն Սեւակի մտքերի, խոհերի, անհանգստության ու կանխազգացումների վերաբերյալ, որոնք նա արտահայտել է «Այլասերում» շատ տարողունակ հոդվածում: Ես նույնիսկ դա հոդված չէի համարի, այլ կվերնագրեի «Պատգամ ու զգուշացում», որտեղ ոչ միայն ազգային, այլեւ ամբողջ մարդկության վերաբերյալ է խնդիրներ շոշափվում:

Մինչ «Այլասերում» պատգամ–զգուշացումին անդրադառնալը, ուզում եմ նախապես ասել հետեւյալը. նկատի ունենալով, որ իմ մտորումները ոմանց մոտ կհարուցեն չհամաձայնվելու, իմ եզրակացությունները ժխտելու ու մերժելու միտում:

Անշուշտ, արվեստի, գեղարվեստական գործի, առհասարակ, որեւէ ստեղծագործության ընկալումը սուբյեկտիվ երեւույթ է: Սակայն այստեղ ամբողջ խնդիրն այն է, թե այդ սուբյեկտիվ ընկալումն ինչպես եւ ինչ չափով է կատարվում:

Ինչպես երաժշտության մեջ նոտաները տարբեր երաժիշտներ տարբեր կերպ են ընկալում, այդպես էլ գրական ստեղծագործությունն ունի իր նոտաները ու դրանց տարբեր ընկալումները: Սակայն, բոլոր դեպքերում, չնայած գոյություն ունեցող ինչ–որ նմանությունների, համաձայնվենք, որ ընթերցողի համար ավելի դժվար է ընկալումը, քան ունկնդրի համար երաժշտությունը լսելու ժամանակ: Ընթերցողն ուղղակի համոզված է, որ գրական ստեղծագործությունն իր ընկալման համապատասխան ունի իր բովանդակությունը: Սա պարզ է միայն առաջին հայացքից: Մինչդեռ խնդիրն ավելի բարդ է: Միտքս պարզաբանելու համար ասեմ, որ, օրինակ, ընթերցողին

կարող է թվալ, թե լրիվ ընկալում է կարդալով Ռուբեն Սեւակի գործերը: Սակայն բավական է փոքր–ինչ ուշադիր լինել, եւ անպայման պարզ կդառնա, որ ինչ–որ բան այնպես չի ընկալվել, որովհետեւ վատ է կարդացել. խորամուխ չի եղել տվյալ գործը գրելու ժամանակի, շարժառիթների մեջ, քիչ է ծանոթ շրջակա, բոլոր առումներով միջավայրում գործող անձանց եւ ուժերի փոխհարաբերություններին եւ այս ամենի հետեւանքով ընկալումն էլ եղել է մակերեսային:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ այստեղ հիշել Գյոթեի հետեւյալ խոսքերը. «Մարդիկ չգիտեն, թե որքան ժամանակ ու աշխատանք է անհրաժեշտ, որպեսզի կարդալ սովորեն (խոսքը, իհարկե, գրաճանաչությանը չի վերաբերում – Վ.Պ.): Ես դրա վրա ծախսել եմ իմ կյանքի ութսուն տարին եւ դեռեւս չեմ կարող ասել, թե հասել եմ նպատակիս»: Գյոթեն այս խոսքերն ասել է մահից քիչ առաջ:

Գյոթեի խոսքերը ես վերագրում եմ նաեւ ինձ ու մյուսներին, որոնք զբաղվել են կամ էլ ապագայում կզբաղվեն Ռուբեն Սեւակի գործերով: Որովհետեւ մենք դեռեւս չենք սովորել նրան կարդալ ու հասկանալ: Բարեբախտաբար, կարծես թե իր ժամանակին Ռուբեն Սեւակը կռահել է այս մասին եւ ինքն է մեզ սովորեցնում ինչպես կարդալ ու հասկանալ իրեն:

Այստեղից էլ ելնելով ուզում եմ իմ ապագա ընդդիմախոսներին հրավիրել բանավեճի, որի գլխավոր պայմանը պետք է լինի Ռուբեն Սեւակին ճիշտ կարդալն ու ընկալելը:

Ասվածի կապակցությամբ մի դիտողություն եւս: Ամբողջ 20–րդ դարն իր վերելքներով ու վայրէջքներով ապացուցեց, թե որքան ճիշտ էր Ռուբեն Սեւակը կատարած բացահայտումների խորությամբ: Այդ բացահայտումներն այնքան կենսական են ու արդիական, որ տպավորություն է ստեղծվում, թե Ռուբեն Սեւակն ապրում է մեր օրերում, տեսնում ու զգում է ամբողջ կատարվածը: Ավելին, դրանք այնքան արդիական են, որ համոզված կերպով կարող եմ փաստել, դրանք նույն հնչեղությունը կունենան նաեւ 21–րդ դարում:

Ռուբեն Սեւակի բացահայտումները շատ բան կարող են տալ մեր այսօրվա իրականության մեջ գործող քաղաքագետին ու սոցիոլոգին, հոգեբանին ու գրաքննադատին, միայն մի վերապահումով, այն է բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն մտահոգված են Հայաստանում եւ Սփյուռքում ապրող հայության ճակատագրով:

Ռուբեն Սեւակն իր բացահայտումները կատարեց այնպիսի կուրացուցիչ ուժով, այնպիսի ցավով ու վրդովմունքով, որ առաջին պլան է մղում հետեւյալ հարցը, թե համընդհանուր չարիքի դեմն առնելու համար ինչ է արվել ու ո՞վ կարող է արդարանալ, որ ամեն ինչ արել է այդ չարիքը կանխելու համար:

Ահա այստեղից էլ Ռուբեն Սեւակի անխոնջ ծգտումը բացել մարդկանց աչքերը այդ վտանգի ու այլասերումի առջեւ, համոզված լինելով,

որ աշխարհի ու մարդկության. նաեւ հայ ժողովրդի փրկությունը վերածննդի մեջ է:

Եվ այսպես՝ վերածնունդ եւ ոչ թե այլասերում:

Ռուբեն Սեւակը մատնացույց է անում, թե որտեղ պետք է փնտրել ու գտնել անձնասպանության քարոզիչներին, հոռետեսության առաքյալներին եւ ապականության մարգարեներին: Նրանց պետք է փնտրել «այլասերուած մանուկներու օրօրոցներու մէջ»: Սա բժշկի սովորական մասնագիտական բացատրություն չէ, եւ Ռուբեն Սեւակը երբեք նկատի չի ունեցել սիֆիլիսը, որ նրա ժամանակներում կոչվում էր «ֆրանկախտ»:

Ովքե՞ր են Ռուբեն Սեւակի մատնանշած անձնասպանության քարոզիչները եւ մյուս այլասերվածները: Նա ճշտորեն ցույց է տալիս նրանց տեղը, բացահայտում նրանց այլասերված բնույթը: Դրանք անտարբեր մարդիկ են: 20–րդ դարի սկզբին Ռուբեն Սեւակին հոգեհարազատ ռուս մեծ գրող Մ.Գորկին իր նշանավոր «Մրրկահավի երգը» արձակ պոեմում տվել է անտաբեր քաղքենու ավարտուն բնութագիրը, բացահայտել է նրա կեղծ բնույթը, համեմատել սողալու համար ծնվածների հետ:

Անտարբերները վտանգավոր են բացահայտ թշնամուց: Նրանց գործողությունները անկանխատեսելի են շրջապատի համար: Թշնամին տեսանելի է, նրան կարելի է դիմակայել, տալ հակահարված: Անտարբերները թաքնված են ու խորամանկ: Դրանք ֆիլիստերներ, փարիսեցիներ են բարեպաշտների դիմակի տակ, ու նրանցից ամեն ինչ կարելի է սպասել:

Անտարբերները բազմադեմ են, հասարակության մեջ ունեն սոցիալական տարբեր կարգավիճակ: Դրանք գիտնականներ ու ինժեներներ են, բժիշկներ ու արվեստի գործիչներ, զինվորականներ ու մանկավարժներ: Նրանց մեջ կան նույնիսկ գյուղացիներ ու բանվորներ: Նրանց բոլորին միավորում է «իմ գործը չէ» կարգախոսը: Իսկ նրանց հայտարարությունը, թե «քաղաքականությունից դուրս են» ուղղակի անամոթ երկերեսանիություն է: Այս ծանր օրերին «քաղաքականությունից դուրս է» կարող է ասել միայն սահմանափակ մարդը:

Դեռեւս հին աշխարհի փիլիսոփա Արիստոտելն է ասել, թե քաղաքականությունից դուրս կարող են միայն լինել Օլիմպոսի աստվածները եւ ոչ բանական կենդանիները: Դրա համար էլ անտարբերների հայտարարությունը քաղաքականությունից դուրս գտնվելու մասին կամ խորամանկ սուտ է, կամ էլ իրենց նմանեցնում են անասուններին:

Անտարբերներին չի հուզում, որ քայքայվում է երբեմնի ծաղկուն ժողովրդական տնտեսությունը, գործարանները չեն աշխատում, տիրում է գործազրկություն: Երկրում շատացել են թափառաշրջիկ ու ծնողական խնամքից զրկված երեխաները:

Անտարբերներին բոլորովին չի մտահոգում, որ Հովհաննես Թումանյա-

նի. Հակոբ Պարոնյանի. Ավետիք Իսահակյանի. Վահան Տերյանի. Եղիշե Չարենցի. Ռուբեն Սեւակի ու շատ ուրիշների կողմից փառաբանված հայոց լեզուն աղտոտվում է անգլերեն. գերմաներեն. թուրքերեն եւ այլ լեզուների տերմիններով ու անուններով: Նրանց պետքը չէ. որ Հայաստանի բնակավայրերի փողոցներն ու հրապարակները լցված են հայ մարդու ազգային արժանապատվությունը վիրավորող ցածրաճաշակ գովազդներով:

Անտարբերների համար ոչինչ չի նշանակում. որ Հայաստանը վաղուց դարձել է Միջազգային արժութային հիմնադրամի գերին. որից վերցրած վարկերի մարումը ընկնելու է մեր օրեցօր պակասող թոռների ու ծոռների ուսերին: Անտարբերների համար հայրենիք հասկացությունը ոչինչ չի նշանակում:

Անտարբերներն այս ամենը համարում են քաղաքականություն եւ քանի որ «քաղաքականությունից դուրս են». ապա իրենց այդ ամենը չի վերաբերում:

Տեղին եմ համարում հիշել նշանավոր հակաֆաշիստ գրող Բրունո Յասենսկու (1901–1941) կողմից իր «Անտարբերների դավադրությունը» անավարտ վեպի բնաբան դարձրած Ռոբերտ էբերխարդի հետեւյալ խոսքերը. «Մի վախեցիր թշնամիներից, վատագույն դեպքում նրանք կարող են քեզ սպանել: Մի վախեցիր բարեկամներից. վատագույն դեպքում քեզ կարող են դավաճանել: Վախեցիր անտարբերներից. նրանք չեն սպանում եւ չեն դավաճանում. բայց միայն նրանց լուռ համաձայնությամբ երկրի վրա գոյություն ունեն դավաճանություն եւ սպանություն»185:

Ռուբեն Սեւակը մատնացույց է անում անտարբեր մարդկանց ճիշտ հասցեն. «Անոնք կը ջլատեն գործունէութեան ամէն տեսակ. երջանկութեան ամէն յոյս. սրբութեան ամէն հաւատք:

Անոնք չեն առաջադիմեր. այլ կ'ոստնուն. չեն երազեր. այլ կը զառանցեն. չեն օրհներ. այլ կը նզովեն. չեն սիրեր. այլ կը տռփան:

Իրենց երգը հայհոյանքի մը պէս ամբարտաւան է. իրենց ժպիտը հեգնութեան մը պէս վիրաւորիչ»186:

Կարծում եմ. հիմքեր ունեմ ասելու. որ Բ.Յասինսկու ու նրա վկայած գրող Ռ.էբերխարդին կարելի է խմբագրել եւ նրանց զգուշացումը փոխարինել Ռուբեն Սեւակի պահանջով հակազդել անտարբերներին. պայքարել նրանց դեմ եւ ոչ թե նրանցից զգուշանալ. որովհետեւ անտարբերությունը ամեն ինչ կործանող վարակ է:

Մեծ հումանիստ Ռուբեն Սեւակը «սիրտ բզկտող իրականութիւն» էր համարում. երբ «տղու մը պարզ ու վճիտ հոգին» տխուր է ու հուսահատ: Նա մոտավորապես 100 տարի առաջ զգուշացնում էր երիտասարդությանը հեռու պահել քաղաքակրթության մեծագույն ախտից. վաղվա հիվանդությունից այլասերումից: Յոթ տարի Եվրոպայում ապրելով, տեսնելով կապիտալիստական քաղաքակրթության գործած ավերածությունները. դրանց տխուր հետեւանքները Ռուբեն Սեւակը համոզված զգուշացնում էր եվրո-

պական փայլով հրապուրված երիտասարդությանը, որ այնտեղ «զարգացած կեանքը, ամէն բան սուտ է ու կեղծիք, շպար ու ամօթ»186՝:

Անցել է մոտ 100 տարի: Սովետական Հայաստանում շատ բան արվեց Ռուբեն Սեւակի զգուշացրած այլասերումից երիտասարդությանը հեռու պահելու, նրան ճիշտ դաստիարակելու եւ սեփական անձի նկատմամբ արժանապատվություն ներարկելու գործում: Երիտասարդ մարդը ստանում էր բազմակողմանի կրթություն ու մասնագիտություն եւ իրավացի հպարտանում էր, որ իր գոյությունը, իր մասնագիտությունը, իր ունակությունները պետք են երկրին, հասարակությանը, ժողովրդին:

Սակայն վերջին տարիներին կատարված սոցիալ–տնտեսական ու քաղաքական փոփոխություններն առաջին հերթին մեծ վնաս հասցրին երեխաներին, երիտասարդությանը: Աշխատանք ու զբաղմունք չունեցող երիտասարդը իրեն զգում է սոցիալապես ավելորդ: Եվ հենց այս է պատճառը, որ երիտասարդության մոտ զգալի տեղ է զբաղեցնում հակումը ալկոհոլի նկատմամբ: Նա ձեռք է բերում կործանարար հատկություններ եսասիրություն, անտարբեր վերաբերմունք շրջապատի նկատմամբ, օրինազանցություն, թմրամոլություն եւ այլն:

Այսօրվա երիտասարդները 20–րդ դարի 80–ական թվականներին ծնվածներն են: Այդ նրանց էր ուղղված կեղծ դեմոկրատների շաղակրատանքն այն մասին, թե ամբողջատիրության ծանր ժառանգությունից հրաժարվելով ապագա սերունդները կլինեն ազատ, կունենան այնպիսի լուսավոր ու երջանիկ կյանք, որը չէին կարող երազել նրանց հայրերը: Այսօր այդ ազատություն ստացած սերունդը «վայելում» է կեղծ դեմոկրատների ստեղծած արատավոր իրականության դառն պտուղները:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ հիշել ռուս երգիծաբան Մ.Սալտիկով–Շչեդրինին, որը 19–րդ դարի կեսերին նկատի ունենալով Ռուսաստանում կապիտալիզմի առաջին քայլերը, կանխագուշակեց, թե այդ «բարեփոխիչը» կգա, հին տաճարը կավերի, նորը չի բարձրացնի եւ ամեն ինչ ապականելով կանհայտանա: Ահա, այդ «բարեփոխիչը», ի դեմս կեղծ դեմոկրատների, եկել է Հայաստան, անխղճաբար ամեն ինչ ավերել ու ապականել է եւ պետք է անհետանա: Բայց նա կամավոր չի հեռանա: Դա պետք է անի ժողովուրդը, երբ Ռուբեն Սեւակի ասածով կսկսի «մարդկօրէն կատղիլ»:

Թե այդ «բարեփոխիչը» ինչ ավերածություններ է գործում Հայաստանում, հաստատում է «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը: Անհնար է առանց սրտի կսկիծի կարդալ հետեւյալը. «Փոքրիկի պարզած ձեռքը սարսուռ է հարուցում. «Հացի փող կտա՞ս...»: Արժանապատվության, վիրավորանքի զգացումից գրեթե զրկված եւ մուրացիկության վարժված այդ երեխաների համար կյանքն ուրիշ երանգներ ունի: Ամեն գնով քաղցը հագեցնելու սեւեռուն միտքը նրանց փողոց է հրում: Մանկական անհոգ

խաղերը, մանկապարտեզն ու դպրոցը նրանց համար չեն: Նրանց դառը, գորշ եւ տխուր մանկությունը կանխորոշված է: Եվ մենք ստիպված ենք խոստովանել, որ հայտնվել ենք այդ մերկ ու ցնցոտիավոր փաստն արձանագրողի տխուր կարգավիճակում: Եվ եթե «Երեխաները մեր ապագան են» որեւէ առարկություն չընդունող կարգախոսն իսկապես ճիշտ է, ապա այս պարագայում մեր ապագան ուրվագծվում է ամենամռայլ գույներով»187:

Նկարագրվածը համատարած երեւույթ է դարձել Հայաստանում: Բայց, իհարկե, խնդիրը միայն փաստի արձանագրության մեջ չէ, որը Հայաստանում տիրող «լավատեսական» պայմաններում, թերթի համարձակ քայլը պետք է համարել, այլ նաեւ այն, որ պաշտոնաթերթը, Ռուբեն Սեւակի խոսքերով ասած, դեռեւս չի հասկանում, որ «կեղծ լալկաններու» դերակատարումով հնարավոր չէ որեւէ դրական քայլ կատարել այդ համազգային ողբերգության խորացումը գոնե կասեցնելու համար:

Հայաստանն առաջին անգամ մեծ մասշտաբով կանգնել է մի այնպիսի երեւույթի առջեւ, որ ես համարձակվում եմ անվանել «սոցիալական դարվինիզմ», այսինքն, երբ կյանքի նպատակը մնում է գոյատեւելը, այն էլ ցանկացած գնով: Չեմ չափազանցնի, եթե ասեմ, որ նոր ընտանիք կազմածների մեծ մասը հրաժարվում է երկու երեխա ունենալուց նյութական միջոցների պակասի պատճառով: Քիչ չեն նաեւ այն երիտասարդները, որոնք այդ պատճառով հրաժարվում են ամուսնանալ: Սա, իհարկե, մեր նման թվաքանակ ունեցող ժողովրդի համար մեծ պրոբլեմ է, եթե չասեմ՝ ազգային աղետ:

Այս չարիքի տարածման գործում իր սեւ դերն է խաղում ամերիկացիների կողմից ներդրված «Ընտանիքի պլանավորման» շարժումը: Ամերիկյան գործակալների ու նրանց հայ օգնականների նպատակը «ավելորդ» մարդկանց ոչնչացումն է հղիությունն ընդհատելու, հակաբեղմնավորման, ամլացնելու միջոցներով:

Ո՞վ է շահագրգռված Հայաստանում «ընտանիքի պլանավորմամբ»: Այս հարցը թող հռետորական չթվա: Որովհետեւ Հայաստանից արտագաղթը չի թուլանում, որի հետեւանքով կրճատվում է երկրի բնակչության թիվը: Սրան ավելացնենք, որ այդ «պլանավորման» միջոցով կրճատվում է ծնելիությունը:

Թուրքիային հաջողվեց Արեւմտյան Հայաստանում ոչնչացնել նրա բնիկ ժողովրդին: Ի՞նչ է, հերթը հասել է Արեւելյան Հայաստանի՞ն: Եթե հնարավոր է արտագաղթի ու «ընտանիքի պլանավորման» միջոցով պակասեցնել Հայաստանում ապրող հայերի թիվը, ապա այս «քաղաքակիրթ» միջոցն ավելի գերադասելի է, քան պատերազմը: Չպետք է մոռանալ, որ դրանում մեծապես շահագրգռված է Թուրքիան, որին զորավիգ է ԱՄՆ–ը՝ իր դռները արտագաղթող հայերի առջեւ լայն բացելով: Այսպիսով, մի կողմից արտագաղթի խրախուսում, մյուս կողմից՝ «ընտանիքի պլանավորում»:

Ո՞ւմ է ծեռնտու այսպիսի վիճակը: Ինչո՞ւ պետականորեն չի կասեցվում «ըն-

տանիքի պլանավորումը», որը կատարվում է մեր այն հայրենակիցների ձեռքով, որոնց Ռուբեն Սեւակը բնորոշել է «ախտագին մտավորական» կոչելով:

Ծայրահեղ տագնապալի է նաեւ այն, որ օգտվելով նպաստավոր պայմաններից քրեական աշխարհը սկսել է ակտիվ զբաղվել երիտասարդությամբ, նույնիսկ լրատվության միջոցներով ու հեռուստատեսությամբ քարոզելով գողական աշխարհի բարքերը: Մեծ տագնապ են հարուցում երեխաների առողջության, դաստիարակության գործում երեւան եկած բազմաթիվ բացասական երեւույթները:

Իհարկե, պրոբլեմները շատ են, եւ դրանք միանգամից հնարավոր չէ լուծել, կորցրած արժեքները վերականգնել: Բայց նաեւ չի կարելի ոչինչ չանել ու անգործության մատնվել: Տեղին եմ համարում հիշել Կոնֆուցիի խորհուրդը. «Ավելի լավ է մի փոքրիկ մոմ վառել, քան մշտապես անիծել խավարը»:

Մեր ժամանակներում այդ մոմը կարող են վառել միայն Ռուբեն Սեւակի երազած «երկաթե ուղեղ» ունեցող մարդիկ, որոնք ունեն խղճի ու պարտքի զգացում:

Ռուբեն Սեւակի երազած մարդկանց մեջ են անպայման ուսուցիչը, դաստիարակը, մանկավարժը: Եվ քանի նրանք չեն դարձել հասարակության աչքում հերոսներ, Հայաստանը չի ունենա ապագա:

Ռուբեն Սեւակին ընկալելու համար ուզում եմ մի ընդարձակ մեջբերում կատարել ֆրանսիացի փիլիսոփա Ժան–Բատիստ Լամարկից (1774–1829թթ.): 1820թ. Լամարկն իր «Մարդու դրական գիտելիքների անալիտիկ համակարգը» գրքում գրել է. «Մարդը կուրացած եսասիրությունից, դառնում է ոչ լիարժեք հեռատես նույնիսկ նրանում, ինչ վերաբերում է նրա սեփական շահերին: Եվ դրա արդյունքով նա ձգտում է վայելք կորզել այն ամենից, ինչ գտնվում է նրա տրամադրության տակ: Մի խոսքով, ապագայի նկատմամբ անհոգ վերաբերմունքի եւ իր նմանների նկատմամբ անտարբերության հետեւանքով նա նպաստում է ինքնապահպանման միջոցների ոչնչացմանը եւ դրանով նաեւ իր տեսակի կործանմանը: Հանուն րոպեական քմահաճույքի նա ոչնչացնում է հողը պաշտպանող օգտակար բույսերը, ինչն առաջ է բերում հողի անբերրիություն ու ցամաքեցնում աղբյուրները: Դուրս է մղում այստեղ գոյության միջոցներ գտած եւ իր հարեւանությամբ ապրող կենդանիներին: Այսպիսով, երբեմնի պտղաբեր եւ տարբեր տեսակի կենդանիներով հարուստ երկրի ընդարձակ տարածքներ վերածվում են մերկ, անպտուղ եւ անբնակելի անապատի: Ենթարկվելով իր կրքերին, ոչ մի ուշադրություն չդարձնելով ձեռք բերած փորձին նա մշտապես գտնվում է իր նմանների հետ պատերազմի մեջ, ամենուրեք եւ ամեն առիթով ոչնչացնում նրանց, ինչի հետեւանքով իրենց անցյալով մեծաթիվ ժողովուրդներ կամաց–կամաց անհետանում են երկրի երեսից: Կարելի է, իհարկե, ասել, որ մարդու նշանակությունը կարծես թե հանգում է նրան, որ-

պեսզի ոչնչացնի իր ցեղը. նախապես երկրագունդը բնակության համար դարձնելով անպիտանի»188:

Լամարկը այսպես է գնահատել 19–րդ դարի սկզբի իր ժամանակակցին եւ զգուշացրել է ապագայի համար. իհարկե. նկատի ունենալով Նապոլեոնի պատերազմները:

Լամարկից ուղիղ 91 տարի անց. արդեն 20–րդ դարի սկզբին Ռուբեն Սեւակը կարծես թե ավելի է ամբողջացրել երկրագունդն ավերակույտի վերածելու մոլուցքով տարվածների կերպարը ուրվագծելով նրանց ապագա ավերածությունների մասշտաբները:

Եթե Լամարկը այդպիսի հետեւության էր եկել նապոլեոնյան պատերազմները նկատի ունենալով. ապա Ռուբեն Սեւակի համար նման կանխագուշակումը հիմնված էր 1909թ. Ադանայի հայ բնակչության կոտորածի ահավոր իրողության վրա: Ռուբեն Սեւակը կանխազգում էր մեծ ողբերգությունը. երբ գրում էր. «Սակայն ստոյգ. ստոյգ կ՚ըսեմ ձեզի. վտանգը մեծ է. շատ մեծ. ավելի մեծ. քան կրնանք ենթադրել»189:

Կամենում եմ անպայման ընդգծել. որ Ռուբեն Սեւակի այս զգուշացումը միայն հայությանը չէր վերաբերում: Ինքնին Ադանայի հայ բնակչության կոտորածը անասելի ողբերգություն էր: Բայց. ըստ երեւույթին, նկատի ունենալով «քաղաքակիրթ» Եվրոպայի բացարձակ անտարբերությունը հազարավոր մարդկանց ոչնչացման նկատմամբ Ռուբեն Սեւակը չէր կարող սահմանափակվել «տեղական» նշանակության փաստը դատապարտելով:

20–րդ դարը արդեն մեզ համար դարձել է պատմություն. եւ մենք հնարավորություն ունենք հետեւելու, թե Ռուբեն Սեւակի մատնանշած անձինք ինչ գործողությունների դիմեցին իրենց չարաղետ նպատակին հասնելու համար:

Նախ. մինչ 20–րդ դարի սկիզբը մարդկության պատմությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի: Անցյալում մնաց մարդկության երկարատեւ ճանապարհը. որը եւ թեկուզ որոշ վերապահումով. կարելի է. այնուամենայնիվ. համարել գործնականորեն եւ հոգեբանորեն առանց մահի ժամանակաշրջան: Վերապահումով ասացի. որովհետեւ 19–րդ դարի վերջին տասնամյակը մթագնեց սուլթանական Թուրքիայում 300 հազարից ավելի հայ բնակչության կոտորածով:

20–րդ դարի սկիզբը եւ. առհասարակ. ամբողջ դարը. չնչին բացառությամբ. ընթացավ մարդկության ինքնասպանության սպառնալիքի ուղեկցությամբ: 20–րդ դարի հենց սկզբին գերմանական իմպերիալիզմը իր թալանչիական նպատակների համար Հարավային Աֆրիկայում իրականացրեց բուրերի ոչնչացումը: Գերմանական իմպերիալիզմը մնաց անպատիժ (փակագծում նշեմ. որ բուրերի ոչնչացումից 100 տարի անց պաշտոնական Գերմանիան ներողություն խնդրեց Հարավաֆրիկյան Հանրապետությունից):

Անպատիժ մնալու հնարավորությունը ոգեւորեց Թուրքիայում իշխանության եկած երիտթուրքերին, որոնք կոտորելով Ադանայի հայ բնակչությանը իրենց գործադրած դաժանություններով գերազանցեցին բուրերին ոչնչացնող գերմանացիներին:

Ադանայի ողբերգության համար երիտթուրքական իշխանությունը չպատժվեց: Արդեն 1914թ. սկսված Առաջին համաշխարհային պատերազմում միացան բուրերին ոչնչացնող գերմանացիներն ու Ադանայի ջարդերի կազմակերպիչ երիտթուրքերը: Այս հրեշավոր միասնության արդյունքում իրականացվեց Հայոց ցեղասպանությունը, որին զոհ դարձավ 1.5 միլիոն հայ: Այս աննախադեպ ոճրագործության կազմակերպիչները մնացին անպատիժ: Նրանց պատժելու փոխարեն եվրոպական տերությունները 1923թ. Լոզանի կոնֆերանսում թուրքական իշխանությունների առջեւ լայն ճանապարհ բացեցին հայ ժողովրդից բռնությամբ խլված պատմական հայրենիքը Արեւմտյան Հայաստանը հափշտակելու համար:

20–րդ դարի սկզբին մարդկությունը հայտնվեց Առաջին համաշխարհային պատերազմի իրողության մեջ: Դրա մասշտաբները պատկերացնելու համար հիշեցնեմ միայն մի քանի տվյալ: Պատերազմը տեւեց 1914–1918թթ.: Կռվի մեջ ընդգրկվեց երկրագնդի 38 պետություն 1,5 միլիարդ բնակչությամբ: Զոհվեց 9.5 միլիոն մարդ, հաշմանդամ դարձավ 3,5 միլիոն մարդ, վիրավորվեց 20 միլիոն մարդ:

Դեռ ժողովուրդները չէին բուժել պատերազմի հասցրած վերքերը, երբ դարձյալ Գերմանիան, այս անգամ հիտլերյան ֆաշիզմի գլխավորությամբ, սկսեց նոր համաշխարհային պատերազմ:

Երկրորդ համաշխարհային պատերազմին, որը տեւեց 1939–1945թթ., զորակոչի ենթարկվեց 110 միլիոն մարդ, որից զոհվեց 50 միլիոնը: Միայն եվրոպական երկրները կորցրին 40 միլիոն մարդ: Գերմանական համակենտրոնացման ճամբարներում զոհվեց 11 միլիոն մարդ190:

Այսպիսով, 20–րդ դարի ընթացքում մարդկությունը երկու անգամ կանգնեց ինքնասպանության վտանգի առջեւ եւ միայն հսկայական զոհողությունների գնով կարողացավ այդ վտանգը հեռացնել:

Մարդկության կրած կորուստները բավական էին, որպեսզի պետությունները դաս առնեին եւ խնամքով ու փայփայանքով վերաբերվեին մարդկային ցեղի նկատմամբ: Բայց դժբախտաբար, այդպես չեղավ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մինչեւ 2000 թվականը աշխարհում տեղի է ունեցել մոտավորապես 400 զինված կոնֆլիկտ, որոնց ընթացքում զոհվել է 30 միլիոն մարդ191: Այսպիսով վտանգն ավելի է ուժեղացել:

Կարծում եմ, արժե այստեղ հիշել հետեւյալ փաստը, որը ինչքան հետաքրքիր է, այնքան էլ դուրս է գալիս մեկ առանձին փաստի սահմաններից: Բոլորն էին զգում, որ հիտլերյան ֆաշիզմը սպառնում էր մարդկությանը:

Հարկավոր էր դրա դեմն առնել: Եվ ֆաշիզմի սպառնալիքը կանխելու համար հարկավոր եղավ ստեղծել զենքի նոր տեսակ: Սկսվեց սպառազինության մրցավազք: Դրան թափ հաղորդեց ԱՄՆ–ի նախագահ Ռուզվելտը. որը 1939թ. հոկտեմբերի 11–ին հավանություն տվեց Հիտլերին կանխելու համար ատոմային ռումբի շուտափույթ ստեղծման մասին դրանից մի երեք ամիս առաջ էյնշտեյնի գրած նամակին:

1941թ. դեկտեմբերի 6–ին Ռուզվելտի հաստատած նախագիծը դրվեց գործողության մեջ: Արդյունքում ստեղծվեց ատոմային ռումբ: Այդ ռումբի ռեալ վտանգը ամենից առաջ զգում էին գիտնականները: 1945թ. հունիսին մի խումբ ամերիկյան գիտնականներ դիմեցին ԱՄՆ–ի պաշտպանության նախարարությանը ընդգծելով հետեյալը. «Միջազգային համաձայնության հասնելու համար լավագույն մթնոլորտ կստեղծվի. եթե ԱՄՆ–ը կարողանա աշխարհին ասել. դուք տեսնում եք. թե մենք ինչ զենք ունենք. բայց դրանից չենք օգտվում: Մենք պատրաստ ենք դրա գործադրումից հրաժարվել նաեւ ապագայում. եթե մյուս ազգերը միանան մեզ եւ համաձայնվեն արդյունավետ միջազգային վերահսկողության հաստատմանը»:

Բայց. դժբախտաբար. ամերիկյան գիտնականների այս խոր անհանգստությունն ու զգուշացումը մնացին անհետեւանք. որովհետեւ իրավիճակը իրենց ձեռքում էին պահում «ռեալիստ» զինվորականները: Եվ դրանով էլ ձեռքից բաց թողնվեց պատմական մեծ շանսը: Ֆաշիզմի դեմ ստեղծված զենքը ատոմային ռումբը, դարձավ մարդկության գոյությանն սպառնացող միջոց:

Բոլորովին վերջերս առիթ ունեցա կարդալ «Այժմ այդ մասին կարելի է պատմել» վերնագրով գիրքը: Դրա հեղինակ Լ.Գրովսը պատմում է մի հետաքրքիր փաստի մասին: Ատոմային առաջին ռումբի ստեղծողներից Ֆերմիին հարցնում են. թե ինչպես է համատեղում ռումբի ստեղծման վրա աշխատանքը խղճի հետ: Եվ գիտնականը ծայրահեղ անտարբերությամբ պատասխանում է. թե «Ի՞նչ կապ ունի այստեղ խիղճը: Դա ուղղակի լավ ֆիզիկա է»: Այդ նույն Ֆերմին ատոմային ռումբի փորձարկման նախօրյակին նաեւ ասել է հետեյալը. «Այնքան էլ կարեւոր չէ կհաջողվի պայթյունը. թե ոչ: Բոլոր դեպքերում դա հետաքրքիր գիտական էքսպերիմենտ է. քանի որ անհաջողության դեպքում կհաստատվի. թե անհնարին է ատոմային պայթյունը»192:

Ատոմային ռումբը ստեղծողներից մեկի վերոհիշյալ խոսքերը կարելի է հասկանալ հետեյալ կերպ եթե ռումբի պայթյունը հաջողվի. ապա դա մահ է. անհաջողության դեպքում կհաղթանակի կյանքը:

Դժբախտաբար, այս դեպքում հաղթողը մահը եղավ: Առաջին ատոմային ռումբից հետո ստեղծվել են զենքի շատ այլ տեսակներ: Կարծում եմ. իմ առջեւ դրված նպատակից շատ չեմ շեղվի. եթե ընդհանուր. այն էլ բավականաչափ համառոտ բերեմ տվյալներ կյանքը ոչնչացնելու համար ստեղծված զենքերի մասին:

Մասնագետների հաշվարկով մարդկության ամբողջ պատմության մեջ եղել է մոտավորապես 15 հազար պատերազմ. որը տարել է 3.5 միլիարդ մարդու կյանք: Այդ ընթացքում պատմության մեջ եղել է միայն 292 խաղաղ տարի:

Բոլորից ավելի արյունալի է եղել 20–րդ դարը. որի ընթացքում պատերազմները տարել են 140–150 միլիոն մարդու կյանք: Ավերվել ու ոչնչացվել է հսկայական հարստություն. որով կարելի կլիներ բոլոր ժողովուրդներին բավարարել անհրաժեշտ ունեցվածքով:

Նախորդ ամբողջ պատմական ժամանակաշրջանի համեմատությամբ 20–րդ դարում լրիվ փոխվեց պատերազմների նյութատեխնիկական բազան: Եթե ամբողջ նախորդ պատմության մեջ կատարվել է զենքի երեք սերնդի փոփոխություն (սառը զենք. հրազեն). ապա 20–րդ դարում ռազմական գործի մեջ կատարվեց երեք հեղափոխություն (մեխանիզացիա եւ շարժիչների օգտագործում. միջուկային զենքի ստեղծում եւ կոմպյուտերիզացիա):

Այժմ աշխարհը սպառազինության ասպարեզում մտնում է նոր հեղափոխության շրջան: Օրինակ ԱՄՆ–ը եւ ՆԱՏՕ–ն ակտիվ անցնում են զենքի 6–րդ սերնդին բարձր ճշգրտություն ունեցող զենքի: Զենքի նոր տեսակների օգտագործման պատկերը հետեւյալն է. Կորեական պատերազմում (1950–1953թթ.) օգտագործվել է զենքի նոր 9 տեսակ. Վիետնամական պատերազմում (1964–1975թթ.) 25 տեսակ, Մերձավոր Արեւելքում ռազմական ընդհարումների ժամանակ (1960–1980–ական թթ.) 30 տեսակ. Պարսից ծոցի պատերազմում (1991թ.) 100 տեսակ. Հարավսլավիայի դեմ պատերազմի ժամանակ (1999թ.) զենքի նոր 300 տեսակ193:

21–րդ դարի սերունդների վրա ընկնում է այնպիսի պատասխանատվություն. որպիսին նախորդ սերունդներից ոչ մեկին չի վիճակվել կրել: Այժմ մարդկության համար հասել է այն ժամանակը. որպեսզի նա վախ զգա իր իսկ ապագա ճակատագրի համար: Եվ այդ վախը կարող է մարդկության մոտ առաջացնել փրկությունը գիտակցելու պահը:

Հասել է պատասխանատու պահը մտածել մարդկության փրկության մասին: Նոր սերունդը անպայման կհասկանա. որ 21–րդ դարը կլինի առաջին դարը. որը ոչ թե ընծայվել է մարդկությանը. այլ ստեղծվել է հենց նրա կողմից: 21–րդ դարն առաջին դարն է. որ մարդկությունը նվաճել է մահից: Դա մահի դեմ կյանքի հաղթանակի առաջին դարը կլինի: Այլ խոսքով 21–րդ դարը Ռուբեն Սեւակի երազած ոսկեդարն է լինելու:

Հանրահայտ է. թե ինչպիսի ճշգրիտ հաշվարկներով է տիեզերանավը դուրս բերվում ուղեծիր. որպեսզի իր անձնակազմով անհետ չկորչի տիեզերքի անհունության մեջ: Դրանից ավելի մեծ ճշգրտություն է հարկավոր. որպեսզի իր եզակի մարդկային կյանքով. իր անցյալով ու նաեւ ապագայով մեր ընդհանուր տիեզերանավը Երկիր մոլորակը. «արծակվի» դեպի նոր

փրկարար սոցիալական ու հոգեւոր ուղեծիր: Դա լինելու է Ռուբեն Սեւակի երազած ոսկեդարի հաղթանակը:

Իհարկե, ողբերգություն է, երբ չլսեցին Լամարկին, էյնշտեյնին, Բորին, նաեւ Ռուբեն Սեւակին: Չլսեցին, եւ դա արդարացվում է արդեն սովորական դարձած «ամեն ինչ այնպես հասարակ չէ» արտահայտությամբ: Անհնար է այսպիսի մոտեցման հետ հաշտվել կամ ավելի ճիշտ համաձայնել: Որովհետեւ ամեն ինչ ծայրահեղորեն պարզվում է վճռական պահին: Հուսահատված մարդը չի կարող փրկել ջրում խեղդվող երեխային, որովհետեւ նա արդեն վախի ճնշմանն է ենթարկվել: Բայց մարդն ունի ներքին այնպիսի ահռելի ուժ, որի մասին սովորական պայմաններում նույնիսկ չի էլ կասկածում: Այդ ուժն է, որ անհնարինը դարձնում է հնարավոր: Բոլորովին վերջերս «Սովետսկայա Բելոռուսիա» թերթում ուշադրությունս գրավեց մի արտասովոր փաստ: Թերթի ակնարկում պատմվում էր այն մասին, թե ինչպես մայրը բարձրացնում է ավտոմեքենան եւ փրկում նրա տակ ընկած իր երեխային: Հետո այդ ավտոմեքենան փորձում են բարձրացնել մի քանի տղամարդ, բայց չեն կարողանում:

Կարծես թե մենք հայտնվել ենք այդ մոր վիճակում: Ելքը, միակ ելքը դրա մեջ է: Թող ոչ ոք չփորձի իր համար ալիբի ստեղծել, թե իրեն ոչինչ հայտնի չէ կամ տեղում չի գտնվել: Խոսքը մեր փրկության անկրկնելի պատասխանատվությանն է վերաբերում, այն պատասխանատվության, որն այլընտրանք չունի:

Ռուբեն Սեւակն այլասերման գլխավոր պատճառներից մեկն էլ համարում է այն, որ «ղեկին գլուխը կը նստեցնենք մեր են ախտագին, են այլասերած, են անպէտ ծնունդները»194:

Շարունակելով վերեւում արդեն արտահայտած միտքը ուզում եմ Ռուբեն Սեւակի գնահատականով քննել նաեւ հետեւյալ խնդիրը: Հանրահայտ է, որ նոր աշխարհզգացողության, նոր աշխարհայացքի մշակումը կատարվում է պատմականորեն ձեւավորված եւ գոյություն ունեցող սոցիալական, դասակարգային, ազգային, քաղաքական հակասությունների պայմաններում: Դա ոչ հնարավոր է մոռանալ եւ ոչ էլ դեն նետել:

Ահա, 10 տարուց ավելի է, ինչ չկա Խորհրդային Միությունը: Վերացել են խորհրդային կարգերը: Գերիշխում են շուկայական հարաբերությունները, ինչպես մեզանում ամոթխածորեն անվանում են կապիտալիզմը: Չպետք է մոռանալ, եթե կա կապիտալիզմ, կան շուկայական հարաբերություններ, ապա օբյեկտիվ անհրաժեշտության օրենքով նրանց կողքին միշտ լինելու է կոմունիզմը տիրապետող կամ էլ պարտված վիճակում:

Ինչո՞ւ եմ հիշում այս ամենը: Հաճախ դրանք հիշողներին պախարակում են կարոտախտի համար չհասկանալով, որ կարոտախտը անչափ դրական երեւույթ է, որովհետեւ մարդը, օրինավոր մարդը միշտ կարոտով է լցվում

այն ամենի նկատմամբ, ինչը լավն է. ցանկալի է: Սա իմիջիայլոց:

Այսօր կոմունիզմի հակառակորդները, որոնք չգիտես ինչու իրենց դեմոկրատ են անվանում, սիրում են պնդել, թե «ավելի լավ է մեռնել, քան կարմիր լինել»: Սա հանրահայտ սոփեստությունների շարքից է ավելի լավ է մեռած լինել, քան հավատացյալ, քան անհավատ, քան քրիստոնյա, քան մահմեդական, քան սեւամորթ, քան սպիտակամորթ եւ այլն, եւ այլն:

«Ավելի լավ է մեռնել, քան...» կարգախոսի հեղինակները հանրահայտ են, գործում են մեր աչքի առջեւ, մեր միջավայրում: Նրանց մեջ գերակշռում են զազրախոսները, կարիերիստները, ցինիկները, գռփողները, «ցիլինդրով ու փողկապով» գողերը, որոնք սարսափելի վախկոտ են, սիրով համաձայն են ուրիշի մեռնելուն, իրենց արդեն ոչ մի դեպքում: Նրանք, այդ ցինիկները հույս ունեն կենդանի մնալ, իրենց գոյությունը շարունակելով հուսալի թաքստարաններում:

Հենց այս ցինիկներն էլ, «էն ախտագին, էն այլասերած, էն անպետ ծնունդները» մեր նորօրյա պայմաններում հիմք դրեցին նոր հոգեբանության, նոր աշխարհայացքի, որոնց կարելի է տալ միայն մեկ անվանում թաքստարանային հոգեբանություն եւ աշխարհայացք:

Ես հատկապես եմ սրում դրա վրա ուշադրությունը, որովհետեւ այն երկրներում, որտեղ այդպիսի գիտակցության համար պայմաններ են ծեւավորվել, տեղի է ունեցել սեփական ցեղի սպանություն:

Թաքստարանային աշխարհայացքը վախկոտության ու ագահության, ցինիզմի ու բթամտության, գաղտնի ինքնաբավարարվածության ու գաղտնի անվստահության խառնուրդ է: Այդ աշխարհայացքը հրաժարվում է սեփական ժողովրդի նկատմամբ պարտքի գիտակցումից, ստեղծված ծանր ճգնաժամային ժամանակաշրջանում առնետների փախուստը ներկայացնում է որպես բարձրագույն պետական եւ ազգային պարտք, որպես բարձրագույն սխրանք եւ որպես գնահատական բարձրագույն պարգեւ:

Այս գիտակցությունը ծնել է գաղտնի գաղափարախոսներ ու ճարտարապետներ, թաքստարանային տնտեսագետներ եւ ծեւավորողներ, թաքստարանային ինժեներներ ու բժիշկներ: Ստեղծվում են նաեւ թաքստարանային բանաստեղծներ, արվեստագետներ: Ու դժվար չէ պատկերացնել, թե նրանք ինչպես են զբաղվում իրենց գլխավոր առաջադրանքով մարդկանց հիմարացնելով:

Ըստ Աստվածաշնչի ամենամեծ դեմոկրատ Նոյ նահապետը երբեք չէր մտածում դրախտում առանձին մարդկանց տեղավորելու մասին: Եվ նրա ժամանակներից մինչեւ օրս տարբեր ժողովուրդների ստեղծած առասպելների համաձայն մեր նախահայրերը եղել են արդարադատ ու բարեպաշտ եւ ունեցել են մի նպատակ նպաստել մարդու բարօրությանը, փրկել նրան:

Իսկ հիմա ի՞նչ են ուզում թաքստարանային աշխարհայացք քարոզողներն ու դրա կրողները: Արդյո՞ք նրանք իրենց հոգեբանությամբ չեն ձգտում մարդկության ոչնչացման նախահայրը դառնալ:

Թաքստարանային աշխարհայացքն ունի մեկ այլ. ավելի ստոր ու ցինիկ կողմ: Դա ժողովրդից նրա միջոցների անզուսպ թալանն է հանուն իրենց գայլային պահանջմունքների բավարարման: Նայենք մեր շուրջը: «Պետական գաղտնիքի» անվան տակ այդ միջոցով ծաղկում են անամոթ կարիերիզմը. շահամոլությունն ու եսասիրությունը: Վախի. սարսափի մթնոլորտ ստեղծելով. նաեւ «փրկության» խոստումներով իրենց ծեռքերն են տաքացնում պետական աստիճանի հասած ցինիկները:

Այս ամենը նրանց հաջողվում է, եւ մնում են անպատիժ: Ու այլեւս զարմանալու բան չէ. որ նրանց ոչինչ չի խանգարում բացահայտելու իրենց «ազգընտիր» թեկնածուներին եւ մարդկանց համոզեն. որ այդ թեկնածուները լավագույնների միջից են ընտրվել:

Վերջերս մամուլում երեւաց հաղորդում այն մասին. որ մի քանի տարի առաջ Հունգարիայի վարչապետ Դյուլա Խորնը Բուդապեշտում կառուցել է երկհարկանի առանձնատուն: Տեղի մամուլը վարչապետին հարցրեց ի՞նչ միջոցներով է կառուցել: Վարչապետն արդարանում է ասելով, թե վաճառել է աղջկա բնակարանը: Ստուգեցին: Պարզվեց. որ այդ գումարը շատ քիչ է այդպիսի առանձնատուն կառուցելու համար: Վարչապետին ուրիշ բան չէր մնում, քան հեռանալ իր զբաղեցրած պաշտոնից:

Պատկերացրեք. թե ինչ կպատահի. մեր հանրապետության ցինիկների մեջ ինչ խառնաշփոթություն կառաջանա, եթե հանկարծ հետեւենք հունգարների օրինակին:

Վոլտերին նվիրված «Ապրելու կամքը» հոդվածում Ռուբեն Սեւակն այսպիսի մի դիտողություն է կատարել. «Երբ նախարարէ մը շնորհ մը ունիք խնդրելու. նախ տեղեկացէք. թէ իր փորն ազա՞տ է: Մեր նկարագիրն ու հոգին մեր աղբամանէն կախում ունին...»195:

Մի՞թե սա մեր օրերի համար չի ասված:

Այս ցինիկների համար Ռուբեն Սեւակը մոտ մեկ դար առաջ առաջարկել է նաեւ իր դեղատոմսը «ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ. ՄԱՔՐՈՒԹԻՒՆ. ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ. ահա այն պարզ ու հաստատուն եռոտանին. որուն վրայ ամէն մարդ ամրօրէն կրնայ նստիլ»196:

Որքան ազնիվ է ու բնական. երբ մարդն իր կյանքը զոհում է հանուն երեխայի. մոր. ընկերոջ. սիրած էակի. հանուն մարդկանց. հայրենիքի. ժողովրդի. հանուն ճշմարիտ գործի. պատվի. մարդկային արժանապատվության ու խղճի. հանուն մարդկության ու կյանքի: Ռուբեն Սեւակն իր կյանքով ու գործով այդ ազնիվ ու բնական հատկությունների կրողն է եղել: Այդպիսի զոհողությունը դարեր շարունակ երգվել ու երգվում է որպես սխրանք: Անհնար է

մարդկանց պատկերացնել առանց այդ սխրանքի: Այս համեստ աշխատասիրությամբ էլ ուզում եմ միանալ նրանց. ովքեր իրենց պարտքն են համարել երախտահատույց լինել Ռուբեն Սեւակին. իր երիտասարդ կյանքը հանուն ժողովրդի ու արժանապատվության զոհելու համար:

Բայց միաժամանակ հանցավոր անմտություն ու անբնական է մարդկանց կյանքի հաշվին սեփական ոչնչությունը պանծացնելու աղետաբեր զբաղմունքը: Թաքստարանային գաղափարախոսության կարգախոսներից է նաեւ «մեր դեմ խաղ չկա...» ցինիզմով լեցուն բարբաջանքը: Քիչ է. եթե ասեմ. որ դա ահավոր բթամտության արտահայտությունն է: Իսկապես. ում դեմ է ուղղված այդ ցինիզմը: Եվ ո՞ւմ շահերն է դա արտահայտում: Պատասխանը պարզ է: Մարդիկ պարզապես չեն պատկերացնում եւ մոռանում են, որ բոլորս էլ կանգնելու ենք պատմության դատաստանի առջեւ: Պատմության օրենքները մարդկության կողմն են: Ուստի գլխավորն այդ օրենքների պաշտպանությունն է: Որովհետեւ այդ օրենքներն ամենից առաջ պահպանում են պատմությունը: Եվ որպեսզի պատմության օրենքները զերծ պահվեն ոտնահարումից. պետք է հետեւել Ռուբեն Սեւակի պատգամին եկել է հակազդելու ժամանակը: Եվ այդ ժամանակը չի սպասում: Նա գործողության. հակազդելու կոչ է անում:

20–րդ դարի սկզբին Ավետիք Իսահակյանը կանխագուշակեց. որ կգա ոգու սովը... Իսկ Ռուբեն Սեւակն այդ կանխագուշակումն ավելի առարկայական դարձրեց: 1911թ. «Այլասերումի» մեջ նա գրեց. «Ու կը պատահի մեզ այն, ինչ որ ոչ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած: Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը. աւելի մտացի է. քան այն. որ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ կը կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է, քան գրողը. առաջնորդուողը աւելի հեռատես է, քան առաջնորդողը. ուրիշ խօսքով մարմինը աւելի խելացի է, քան ուղեղը... Զարմանալի չէ. ուրեմն. որ ընթերցողները մեր մէջ հետզհետէ կը քիչնան: Այսօր արդէն աւելի գրող կայ, քան կարդացող»197:

Տարիներ շարունակ Ավետիք Իսահակյանի խոսքերը կրկնվում էին. ու այդպես էլ չէր գալիս ոգու սովը: Ու հանկարծ. անսպասելի կերպով այդ ոգու սովը վրա հասավ եւ ամեն ինչ կլանեց: Ստեղծված իրավիճակը հասկանալու. Ռուբեն Սեւակի կանխատեսումը գնահատելու համար նախ ուզում եմ այստեղ հիշել ԱՄՆ–ի Կենտրոնական հետախուզության վարչության պետ Ալեն Դալեսին. որը դեռեւս 1945թ. մշակել էր «սառը պատերազմում» ԱՄՆ–ի քաղաքականության խնդիրները: Ահա մի քանի հատված Դալեսի մշակած ծրագրից. «Կավարտվի պատերազմը, եւ ամեն ինչ իր տեղը կընկնի. կկարգավորվի: Եվ մենք, ինչ որ ունենք. ամբողջ ոսկին. ամբողջ նյութական հզորությունը կնետենք ռուս մարդկանց ապուշացնելու եւ հիմարացնելու համար: Ցանելով այնտեղ քաոս մենք աննկատ կփոխենք նրանց արժեքները կեղծով եւ կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին:

Ինչպե՞ս: Մենք կգտնենք մեր համախոհներին. մեր դաշնակիցներին ու օգնականներին հենց Ռուսաստանում: Դեպք դեպքի ետեւից կխաղացվի աշխարհում ամենից անհնազանդ ժողովրդի կործանման, նրա գիտակցությունը վերջնականապես ու անդառնալի մարելու իր մասշտաբներով հսկայական ողբերգությունը...

Գրականությունից ու արվեստից... մենք դուրս կմղենք նրանց սոցիալական էությունը. արվեստագետներին ետ կսովորեցնենք, նրանցից կփախցնենք ցանկությունը հետազոտելու այն պրոցեսները. որոնք տեղի են ունենում ժողովրդական մասսաների խորքում...

Գրականությունը. թատրոնը, կինոն բոլորը կպատկերեն ու կփառաբանեն ամենաստոր մարդկային զգացումները: Մենք ամեն կերպ կաջակցենք ու կբարձրացնենք այսպես կոչված արվեստագետներին. որոնք մարդկային գիտակցության մեջ կարմատավորեն ու կմտցնեն սեքսի, բռնության, սադիզմի. դավաճանության պաշտամունքը, մի խոսքով ամեն մի անբարոյականություն... Պետության կառավարման գործում մենք կստեղծենք քաոս ու խառնաշփոթություն: Մենք աննկատ կերպով. բայց ակտիվորեն ու մշտապես կնպաստենք չինովնիկների քմահաճությանը, կաշառակերությանը. անսկզբունքայնությանը... Ազնվությունն ու օրինավորությունը կծաղրվեն եւ ոչ մեկի պետք չեն լինի: Բռիությունն ու լկտիությունը, սուտն ու խաբեությունը. հարբեցողությունն ու թմրամոլությունը. իրարից անասնական վախն ու անամոթությունը, դավաճանությունը. ազգայնամոլությունն ու ժողովուրդների թշնամանքը, ամենից առաջ թշնամանքն ու ատելությունը ռուս ժողովրդի նկատմամբ այս ամենը ճարպկորեն եւ աննկատ կտարածենք. եւ այս բոլորը կծաղկի կծու գույներով...

Եվ միայն քչերը. շատ քչերը կհասկանան, թե ինչ է կատարվում: Բայց այդպիսի մարդկանց մենք կդնենք անօգնական վիճակում, նրանց ծաղրի կենթարկենք. կգտնենք միջոցներ նրանց վրա սուտ մեղադրանքներ բարդելու եւ կհայտարարենք հասարակության թափթփուկներ:

Մենք արմատախիլ կանենք բոլշեւիզմի հոգեւոր արմատները. կծաղրենք ու կոչնչացնենք ժողովրդական բարոյականության հիմքերը... Այս կերպ մենք կխարխլենք սերունդ առ սերունդ, մենք մարդկանցով կզբաղվենք սկսած մանկական, պատանեկան տարիքից, միշտ գլխավոր հաշվարկը կանենք երիտասարդության վրա, կքայքայենք, կայլասերենք նրան: Մենք երիտասարդությանը կդարձնենք տափակամիտ ու ցինիկ, լրտես ու կոսմոպոլիտ: Ահա այսպես էլ մենք կանենք»198:

Սա ԱՄՆ–ի եւ նրա ղեկավարած Արեւմուտքի ծրագիրն էր ուղղված ԽՍՀՄ–ի դեմ, որի իրականացման համար ծախսվեց տասնյակ միլիարդավոր դոլար:

Ասվածի առնչությամբ ուզում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել այդ տարիների ԽՍՀՄ–ի ղեկավար Ի.Վ.Ստալինի շատ քիչ հայտնի մի ելույթ. որը նա ունեցել է 1946թ. ստեղծագործական մտավորականության հետ հանդիպման ժամանակ:

Որպեսզի այսօրվա ընթերցողի համար հասկանալի լինի այն ժամանակվա տիրող ոգին, պատկերացումները, հարկ եմ համարում մեջբերել այդ ելույթն ըստ սղագրության:

«Պյոտր Առաջինը,– ասել է Ստալինը.– բացեց պատուհան դեպի Եվրոպա: Բայց 1917թ. հետո իմպերիալիստները հիմնովին փակեցին այն եւ երկար ժամանակ, վախենալով իրենց երկրներում սոցիալիզմի տարածումից Հայրենական մեծ պատերազմից առաջ մեզ աշխարհին ներկայացնում էին իրենց ռադիոյի, կինոյի, թերթերի ու ամսագրերի միջոցով ինչ–որ հյուսիսային բարբարոսների ատամների մեջ բռնած արյունոտ դանակով մարդասպանների: Այսպես էին նրանք նկարագրում պրոլետարիատի դիկտատուրան: Մեր մարդկանց պատկերում էին տկլոր, տրեխներով, մեջքներին կապած պարանով եւ ինքնաեռից օղի խմելով: Եվ հանկարծ հետամնաց «տրեխավոր» Ռուսաստանը, այդ քարանձավային կիսամարդիկ, ինչպես մեզ պատկերել էր համաշխարհային բուրժուազիան, գլխովին ջախջախեց աշխարհում երկու հզոր ուժի ֆաշիստական Գերմանիային եւ իմպերիալիստական Ճապոնիային, որոնց առջեւ ամբողջ աշխարհը սարսափահար դողում էր:

Այսօր աշխարհն ուզում է իմանալ, թե այդ ինչ մարդիկ են, որ կատարեցին այդպիսի մեծ սխրանք փրկելով մարդկությանը:

Իսկ մարդկությանը փրկեցին սովետական հասարակ մարդիկ, որոնք առանց աղմուկ–աղաղակի, դժվարագույն պայմաններում իրականացրին ինդուստրացում, անցկացրին կոլեկտիվացում, արմատապես ամրապնդեցին երկրի պաշտպանունակությունը եւ իրենց կյանքի գնով, կոմունիստների գլխավորությամբ ջախջախեցին թշնամուն: Պատերազմի միայն առաջին վեց ամիսներին ռազմաճակատների մարտերում զոհվեց 500 հազարից ավելի կոմունիստ, իսկ ամբողջ պատերազմի ժամանակ 3 միլիոնից ավելի: Նրանք մեզնից լավագույնն էին, հանուն սոցիալիզմի, հանուն ժողովրդի երջանկության ազնիվ ու բյուրեղյա մաքրությամբ ինքնազոհ եւ անշահախնդիր մարտիկներ: Մենք նրանց պակասը շատ ենք զգում: Եթե նրանք կենդանի մնային, մեր այսօրվա շատ դժվարություններ արդեն ետեւում կլինեին: Ահա մեր սովետական ստեղծագործական մտավորականության այսօրվա խնդիրն այն է, որ իրենց ստեղծագործություններում բազմակողմանի ցույց տան պարզ, գեղեցիկ սովետական մարդուն, բացահայտեն ու ցույց տան նրա բնավորության լավագույն գծերը: Այս է գրականության ու արվեստի զարգացման մեջ գլխավոր գիծը:

Ինչո՞ւ է մեզ թանկ իր ժամանակին ստեղծված Նիկոլայ Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը» գրքի հերոս Պավել Կորչագինը:

Նա մեզ թանկ է ամենից առաջ հեղափոխությանը, ժողովրդին, սոցիալիզմի գործին իր անսահման նվիրվածությամբ. իր անշահախնդրությամբ:

Կինոյում մեր ժամանակի մեծ օդաչու Վալերի Չկալովի գեղարվեստական կերպարը նպաստեց տասնյակ հազարավոր անվախ սովետական բազեների Հայրենական պատերազմի տարիներին իրենց փառքով պսակած օդաչուների դաստիարակմանը. իսկ «Երիտասարդը մեր քաղաքից» կինոնկարի փառավոր հերոս, գնդապետ–տանկիստ Սերգեյ Լուկոնինը հարյուր հազարավոր հերոս տանկիստների:

Այս ձեւավորված ավանդույթը պետք է շարունակել հանուն կոմունիզմի ստեղծել այնպիսի գրական հերոս–մարտիկներ. որոնց սովետական մարդիկ ուզենային հավասարվել, ուզենային նմանվել»:

Այնուհետեւ Ստալինը պատասխանում է հետեւյալ հարցերին.

ՀԱՐՑ.– Ձեր հայացքով որո՞նք են ժամանակակից սովետական գրողների, դրամատուրգների եւ կինոռեժիսորների աշխատանքում եղած գլխավոր թերությունները:

ՍՏԱԼԻՆ.– Դժբախտաբար, շատ էական: Վերջին ժամանակում գրական շատ երկերում հստակորեն նկատվում են վտանգավոր միտումներ, որոնք ներշնչվել են քայքայվող Արեւմուտքի ապականիչ ազդեցությամբ, ինչպես նաեւ կյանքի են կոչվել օտարերկրյա հետախուզությունների քայքայիչ գործունեությամբ: Ավելի հաճախ են սովետական գրական ամսագրերի էջերում երեւում ստեղծագործություններ, որոնցում սովետական մարդիկ կոմունիզմ կառուցողները, պատկերվում են խղճուկ, ծաղրանկարային կերպով: Ծաղրվում է դրական հերոսը, քարոզվում է ստորաքարշություն օտարամոլության առջեւ, գովերգվում է հասարակության քաղաքական թափթփուկներին հատուկ կոսմոպոլիտիզմը:

Թատրոնների խաղացանկում սովետական պիեսները դուրս են մղվում արտասահմանյան բուրժուական հեղինակների արատավոր պիեսներով:

Կինոֆիլմերում երեւում է մանր թեմայնությունը, ռուս ժողովրդի հերոսական անցյալի խեղաթյուրումը:

ՀԱՐՑ.– Գաղափարախոսության տեսանկյունից ինչքանո՞վ են վտանգավոր երաժշտության մեջ ավանգարդիստական ուղղությունը եւ աբստրակցիոնիզմը նկարիչների եւ քանդակագործների ստեղծագործություններում:

ՍՏԱԼԻՆ.– Այսօր նորարարության անվան տակ երաժշտական արվեստում փորձում են սովետական երաժշտության մեջ ներարկել ֆորմալիստական ուղղություն, իսկ գեղարվեստական ստեղծագործության մեջ աբստրակտ գեղանկարչություն: Երբեմն կարելի է հարց լսել «Հարկավո՞ր է, որ այնպիսի մեծ մարդիկ, ինչպիսիք են բոլշեւիկ–լենինյանները, զբաղվեն

մանրուքով ժամանակ կորցնեն աբստրատկ գեղանկարչությունը եւ ֆորմալիստական երաժշտությունը քննադատելու համար: Թող դրանով զբաղվեն հոգեբույժները»:

Այսպիսի հարցերում հնչում է մեր երկրի եւ հատկապես երիտասարդության դեմ գաղափարախոսական դիվերսիայի դերի չըմբռնում: Չէ՞ որ դրանց օգնությամբ փորձում են հանդես գալ գրականության ու արվետի մեջ ընդդեմ սոցիալիստական ռեալիզմի: Բացահայտորեն դա կատարել հնարավոր չէ, դրա համար հանդես են գալիս քողարկված: Այսպես կոչված աբստրակտ նկարներում չկան մարդկանց ռեալ կերպարներ, որոնց կուզենայինք նմանվեին ժողովրդի երջանկության, կոմունիզմի համար մղվող պայքարում, որի ճանապարհով ուզում ենք գնալ:

Այդ պատկերացումը փոխարինված է կապիտալիզմի ընդդեմ սոցիալիզմի դասակարգային պայքարը սքողելու աբստրակտ միստիկայով: Պատերազմի ժամանակ ինչքան մարդիկ եկան Կարմիր հրապարակում գտնվող Մինինի եւ Պոժարսկու հուշարձանի մոտ, ոգեւորվեցին նրանց սխրանքով: Իսկ ինչի՞ համար կարող է ոգեւորել ժանգոտ երկաթի կույտը, որը ներկայացվում է քանդակագործ «նորարարների» կողմից որպես արվեստի ստեղծագործություն: Ի՞նչ կարող են ոգեւորել նկարիչների աբստրակտ նկարները:

Հենց սա է պատճառն այն բանի, որ ժամանակակից ամերիկյան ֆինանսական մագնատները, քարոզելով մոդեռնիզմ, այդ կարգի «ստեղծագործությունների» համար վճարում են առասպելական հոնորարներ, որոնք չէին կարող երազել ռեալիստական արվեստի մեծ վարպետները:

Դասակարգային աստառ ունի նաեւ այսպես կոչված արեւմտյան մասսայական երաժշտությունը, այսպես կոչված ֆորմալիստական ուղղությունը: Այդ կարգի, թույլ տվեք ասել, երաժշտությունը ստեղծվում է «ցնցվողների» աղանդից փոխ առած «պարերի» ռիթմերի վրա, որոնք մարդկանց հասցնում են էքստազի, նրանց դարձնում ամենավայրենի արարքներ կատարող ու չկառավարվող կենդանիների: Այդ տեսակի ռիթմերը ստեղծվում են հոգեբույժների մասնակցությամբ, կառուցվում են այն ձեւով, որպեսզի ներգործեն ուղեղի ենթակեղեւի վրա, մարդու հոգեկան կառուցվածքի վրա: Դա յուրատեսակ երաժշտական նարկոմանիա է, որի ազդեցության տակ ընկնելով մարդն այլեւս որեւէ լուսավոր իդեալի մասին մտածել չի կարող, դառնում է անասուն, անօգուտ է նրան կոչել հեղափոխության, կոմունիզմի կառուցման: Ինչպես տեսնում եք, երաժշտությունը նույնպես մարտնչում է:

1944թ. ինձ վիճակվեց կարդալ անգլիական հետախուզության սպաներից մեկի գրած հրահանգը, որը վերնագրված էր «Ինչպես օգտագործել ֆորմալիստական երաժշտությունը հակառակորդի զորքերին բարոյալքելու համար»:

ՀԱՐՑ.– Կոնկրետ ինչի՞ է հանգում օտարերկրյա հետախուզական գործակալության քայքայիչ գործունեությունը գրականության ու արվեստի ասպարեզում:

ՍՏԱԼԻՆ.– Խոսելով սովետական գրականության ու արվեստի հետագա զարգացման մասին չի կարելի հաշվի չառնել. որ նրանք զարգանում են պատմության մեջ դեռևս չտեսնված գաղտնի պատերազմի հզոր թափի պայմաններում. որն այսօր համաշխարհային իմպերիալիստական շրջանները ծավալել են մեր երկրի դեմ. այդ թվում գրականության եւ արվեստի ասպարեզում: Մեր երկրում օտարերկրյա գործակալության առջեւ խնդիր է դրված ներթափանցել մշակույթի գործերը վարող սովետական մարմիններ ի մեջ. իրենց ձեռքը գցել թերթերի ու ամսագրերի խմբագրությունները, վճռական ազդեցություն գործել թատրոնի եւ կինոյի խաղացանկային քաղաքականության վրա. գեղարվեստական գրականության հրատարակության վրա: Ամեն կերպ արգելակել հայրենասիրություն դաստիարակող եւ սովետական ժողովրդին կոմունիստական շինարարության բարձրացնող հեղափոխական ստեղծագործությունների լույսընծայումը. պաշտպանել ու տպագրել այն ստեղծագործությունները. որոնցում քարոզվում է կոմունիստական շինարարության հաղթանակի նկատմամբ անվստահությունը. քարոզվում են ու գովերգվում արտադրության կապիտալիստական եղանակը եւ բուրժուական ապրելակերպը:

Միաժամանակ օտարերկրյա գործակալության առջեւ խնդիր է դրված հասնել գրականության եւ արվեստի ստեղծագործությունների մեջ հոռետեսության. ամեն տեսակի անկումային ու բարոյական այլասերվածության քարոզչության:

Մի ամերիկյան եռանդուն սենատոր ասել է. «Եթե մեզ հաջողվի բոլշեւիկյան Ռուսաստանում ցուցադրել մեր սարսափի կինոֆիլմերը. մենք հավանաբար կկարողանանք ձախողել նրանց կոմունիստական շինարարությունը»: Իզուր չէր Լեւ Տոլստոյն ասում. թե գրականությունն ու արվեստը ներշնչման ամենաուժեղ ձեւերն են:

Հարկավոր է լուրջ մտածել ով եւ ինչն է այսօր ներշնչում գրականության ու արվեստի օգնությամբ. վերջ տալ այդ ասպարեզում գաղափարախոսական դիվերսիաներին. ի վերջո, ժամանակն է իմ կարծիքով հասկանալ ու յուրացնել. որ մշակույթը. հանդիսանալով հասարակության մեջ տիրապետող գաղափարախոսության կարեւոր բաղկացուցիչ մասը. միշտ դասակարգային է եւ օգտագործվում է տիրապետող դասակարգի շահերի պաշտպանության համար. մեզնում աշխատավորների շահերի պրոլետարիատի դիկտատուրայի պետության պաշտպանության համար:

Չկա արվեստ հանուն արվեստի. չկան ու չեն կարող լինել ինչ–որ «ազատ». անկախ հասարակությունից. այդ հասարակությունից վեր կանգնած

նկարիչներ. գրողներ. պոետներ. դրամատուրգներ. ռեժիսորներ. ժուռնալիստներ: Նրանք ուղղակի ոչ մեկի հարկավոր չեն: Այդպիսի մարդիկ էլ գոյություն չունեն. չեն կարող գոյություն ունենալ:

Նրանց, ով չի կարողանում կամ չի ուզում հին, հակահեղափոխական բուրժուական մտավորականության վերապրուկների, ավանդույթների ուժով, բանվոր դասակարգի իշխանութունը չընդունելու եւ նույնիսկ թշնամական վերաբերմունքի ուժով եւ չի ցանկանում նվիրված ծառայել սովետական ժողովրդին. թույլտվություն կտրվի մեկնել արտասահման մշտական բնակության: Թող նրանք այնտեղ անծամբ համոզվեն, թե իրականում ինչ է նշանակում անփառունակ բուրժուական «ստեղծագործելու ազատության» մասին հիմնավորումը այն հասարակության մեջ, որտեղ ամեն ինչ վաճառվում է ու գնվում, իսկ ստեղծագործական մտավորականության ներկայացուցչիներն իրենց ստեղծագործությունների մեջ ամբողջովին կախված են ֆինանսական մագնատների փողի պարկից»199:

Ստալինի այս ելույթից անցել է 56 տարի: 1990 թվականից գոյություն չունի ԽՍՀՄ–ը: Հայաստանում նույնպես վերացան խորհրդային կարգերը: Որքանո՞վ էր ճիշտ Ստալինը, որքանո՞վ են նրա հայացքները իրական թողնում եմ առանց մեկնաբանության: Թող օբյեկտիվ ընթերցողը որոշի իր համար այդ հարցերի պատասխանը: Բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ եմ համարում նկատել, թե ինչ էր հետապնդում Ա.Դալեսը իր ծրագրով, եւ ինչից էր զգուշացնում Ի.Ստալինը:

Ավետիք Իսահակյանի ու Ռուբեն Սեւակի կանխատեսած ոգու սովը Հայաստանում իրական դարձավ վերջին 10 տարիներին, երբ հռչակվեց անկախ հանրապետություն: Ովքե՞ր էին Դալեսի հանճնակատարները: Այս հարցին պատասխանելուց առաջ ուզում են հիշել հին հունական բանաստեղծ Սիմոնիդես Քիոսցուն, որը մեր թվարկությունից 500 տարի առաջ ասել էր, որ «լիակատար երջանկության համար մարդուն անհրաժեշտ է ունենալ փառահեղ հայրենիք»:

Արդեն 19–րդ դարի առաջին կեսին ռուս հեղափոխական–դեմոկրատ Վ.Բելինսկին ընդգծում էր. «Կենդանի մարդը իր հոգում, իր սրտի մեջ, իր արյան մեջ կրում է հասարակության կյանքը նա հիվանդանում է նրա ցավերով, տանջվում է նրա տառապանքներով, ծաղկում է նրա առաջադիմությամբ, երջանիկ է նրա երջանկությամբ իր սեփական, անձնական հանգամանքներից դուրս»:

Իսկ ահա Դալեսի ծրագրի իրագործողները, զավթելով իշխանությունը, հենց առաջին օրից իրենց պահեցին ինչպես ավարառու հրոսակը նվաճած երկրում: Նրանք ոչ սիրում են հայրենիքը եւ ոչ էլ ափսոսանքով վերաբերում Հայաստանին: Ինչի՞ հասցրին նրանց ավերիչ գործողությունները: Այն, որ մեր իրականության մեջ գիրքը շպրտվեց փողոցի փոշիների մեջ, որ գիրք

կարդացող չկա. միայն այսբերգի երեւացող մասն է: Խորքում ավելի լուրջ եւ ավելի վտանգավոր սպառնալիքներ կան: Ես դրանց մեջ հատկապես կառանձնացնեի երիտասարդության խնդիրը:

Ստեղծված իրավիճակի պայմաններում երիտասարդությունը զրկվել է աշխատելու, սիրած մասնագիտությունն ընտրելու իրավունքից: Հայաստանում հո բոլորը չպետք է զբաղվեն բիզնեսով, որն ավելի շատ մաքրավաճառություն է: Երիտասարդությունը կորցնում է կողմնորոշումը, հստակ չէ նրա ապագան: Անցեք Երեւանի փողոցներով. խմբված երիտասարդները կամ զազրախոսում են, կամ էլ խոսում են բիզնեսից ու դոլարից: Եվ ցավալին այն է, որ այդպես է նաեւ Հայաստանի բոլոր բնակավայրերում:

Հաճախ մամուլում, հեռուստատեսությամբ հանդես են գալիս նրանք, ովքեր Ռուբեն Սեւակի խոսքերով ասած «մտաւորական կը կուչուին» եւ սկսում են քծնել, շողոքորթել երիտասարդներին նրանց հասցեին շռայլելով գովեստի խոսքեր: Բայց մի՞թե այդ «մտավորականները» չեն տեսնում, թե ինչ է կատարվում շուրջբոլոր: Մի՞թե չեն տեսնում, թե ինչով է զբաղված, եթե ոչ մեծ, ապա ոչ քիչ թվով երիտասարդությունը: Թմրամոլություն, սեքս, հանցագործություն՝ ահա այդ երիտասարդության հիմնական զբաղմունքը:

Մինչդեռ երիտասարդությանը շողոքորթելով «ախտագին մտաւորականները» նրանց դարձնում են Ռուբեն Սեւակի պատկերավոր խոսքով ասած «այլասերուած մանուկներ», «պատանի ծերունիներ», որոնք «արեւէն ու պայքարէն խուսափելով... կը լեցնեն հարուստի նախասենեակները ու վաճառական գրասենեակները. հիւանդանոցի խշտեակները կը լեցնեն...»200:

Եվ այսպես, խաբված ժողովուրդը հավատաց ցինիկներին, նրանց ամպագոռգոռ խոստումներին եւ իր քվեն տվեց նրանց: Այսօր Հայաստանի բնակչությունն ապրում է շուկայի օրենքներով: Իշխող դեմոկրատիան ժողովրդին չի վերաբերում: Դեմոկրատիան ծառայում է հատուկ խավերին, բավարարում է միայն նրանց պահանջները: Բոլոր արտոնությունները բաժին են ընկել «հրաշքով» հարստացածներին: Նրանց են պատկանում գործարանները, բանկերը, եկամտաբեր բազկաթոռները: Բոլորը ձգտում են ամեն միջոցով բազմապատկել իրենց ունեցվածքը: Նրանցից ոչ ոք համեստությամբ չի տառապում:

Հիշենք, թե ցինիկներն իրենց պարագլխի հետ միասին ինչ էին խոստանում ժողովրդին: Ինչ բարձրագոչ սկզբունքներ էին դրել Հայաստանի անկախության հռչակագրի մեջ: Ի՞նչ ստացվեց արդյունքում: Շատերը հայտնվել են ծայրահեղ աղքատության մեջ: Նույնիսկ պոռնկությունն է դարձել ապրուստի միջոց:

Ի՞նչ է պատահել իմ հայրենակիցներին: Ի՞նչ է կատարվում բոլորիս հետ թե հավատացյալ ու անհավատ, թե գյուղացի, թե քաղաքացի... Այդ ո՞ւր անհետացան մեր հպարտությունը, գիտելիքները, խիղճն ու պատիվը: Ինչպե՞ս

մեր երկիրը առանց ափսոսանքի նետեցինք ինչ–որ «բարեփոխիչների» ձեռքը: Հայաստանը գալարվում է «անզեն» նվաճողների որոգայթում:

Խոստումներով ու խաբեությամբ իշխանության եկած ցինիկները դեռ այսօր էլ շարունակում են համարձակվել խոսել իրենց ինչ–որ «մեծագույն» ծառայության մասին, որ մատուցել են ժողովրդին:

Այժմ վերհիշելով նրանց տված բոլոր խոստումները խաբելու եւ ստելու ճարպկությունը, կասկածում եմ, որ ժողովուրդը, տեսնելով այսօրվա վիճակը, այնպես միամտաբար չէր հավատա ու չէր վստահի նրանց, այդ ստախոսներին ու հուդաներին: Եթե այն ժամանակ ցինկիներն ու նրանց պարագլուխը հռչակեին իրենց իսկական նպատակները, ապա ժողովուրդը նրանց հենց սկզբից կնետեր պատմության աղբանոցը: Փորձեմ շարադրել, թե ինչպիսին կլիներ նրանց խոստումը. «Մենք, սիրելի հայ ժողովուրդ, խոստանում ենք քեզ կործանել Խորհրդային Միությունը: Ձեզնից շատերին կդարձնենք արտագաղթող ու կշպրտենք արտասահման: Սատանայի գիրկը կուղարկենք սովետներին իրենց կարմիր դրոշով: Մի հարվածով կոչնչացնենք ձեր խնայողությունները եւ խնայդրամարկղի ձեր գրքույկները կթողնենք որպես հիշատակ: Կմտցնենք գների «ազատականացում»: Ազատություն կտանք, ու թող «նոր հայերը» անկաշկանդ կեղեքեն «հին հայերին»: Կմաշեք ձեր վերջին հագուստը եւ յոլա կգնաք ձեր կարկատած շորերով: Մենք ձեզ կդնենք այնպիսի վիճակի մեջ, որ չհամարձակվեք գլուխ բարձրացնել ամերիկյան ցածրաճաշակ մշակույթի ու ապրելակերպի դեմ: Գործարաններից դուրս կշպրտենք հազարավոր բանվորների, ինժեներների ու վարպետների: Առանց հացի կթողնենք բանվորներին, մտավորականներին, որոնք օգնեցին մեզ իշխանության գալ: Կդադարեցնենք աշխատավարձի, թոշակների, նպաստների կանոնավոր վճարումները: Աշխատավորական կոլեկտիվներից կխլենք գործարանները, ֆաբրիկաները, ձեռնարկությունները եւ էժան գներով կնվիրենք մեր բարեկամներին: Կփակենք մանկապարտեզների մեծ մասը, պիոներական ճամբարները, գրադարաններն ու մշակույթի պալատները: Բոլոր քաղաքներում կբացենք գիշերային ակումբներ ու կազինոներ, բանկեր ու արտարժույթի փոխանակման կետեր: Մեր դրամը կդարձնենք զերո, դոլարը կդարձնենք մեր գլխավոր կուռքը, ու նրա առջեւ ծնկաչոք կաղոթեն մեր հայրենակիցները: Ամեն ինչ կանենք, որպեսզի Հայաստանի բնակչությունը պակասի: Կպակասեցնենք ծնելիությունը, կավելացնենք մահացությունը: Կփակենք հիվանդանոցները, բուժումը կդարձնենք վճարովի: Պայմաններ կստեղծենք, որպեսզի ամեն մեկը իր հնարավորության չափով իր գլխի ճարը տեսնի: Կվերացնենք բնակարանային հերթերը սոցիալիզմի այդ խայտառակությունը, ով կարող է թող իր համար բնակարան ստեղծի որքան կամենա: Կվերացնենք անվճար կրթությունը: Մեզ ավելի շատ պետք են անգրագետները, քան գրագետ քաղաքացիները: Կցրենք կոլտնտեսություններն ու սովխոզնե-

րը: Ազատություն կտանք գյուղացիներին. թող վարեն ու ցանեն. ինչքան կարող են: Հայաստանի մեծ մասը կդարձնենք խոպան: Սննդամթերք կներմուծենք արտասահմանից: Խանութները կվերածենք ցուցահանդեսի: Թող տիրի ապրանքների առատություն. բայց գներն այնպես կբարձրացնենք, որ շատերը չկարողանան նույնիսկ մոտ գալ: Գյուղացուն կթողնենք իր հոգսերի հետ, եւ թող ազատ լինի, ապրի առանց դրամի ու մեքենայի եւ վերադառնա հողի մշակման պապենական մեթոդին: Պայմաններ կստեղծենք, որպեսզի անկախ Հայաստանի կարեւորագույն օբյեկտները հայտնվեն օտարերկրացիների ձեռքում, ամեն կերպ կնպաստենք, որ օտարերկրյա կապիտալը աճարգել շահագործի մեր երկրի բարիքները եւ մեր ժողովրդի հաշվին կուտակի մեծամեծ հարստություն: Այնպես կանենք, որ օղին հոսի անսպառ գետի նման, թող ամենուրեք ծաղկի հարբեցողությունը. թող մեր երիտասարդության մշտական ուղեկիցը լինի թմրամոլությունը: Պայմաններ կստեղծենք, որպեսզի մեր աղջիկներն ու կանայք բավարարեն մեր երկիր եկած օտարերկրացիների հաճույքները: Նրանց կդնենք այնպիսի վիճակի մեջ, որ հարկադրված հին արվեստով զբաղվելու համար կմեկնեն հարեւան երկրներ: Նոր սեփականատերերին չենք նեղացնի, ամեն մի օֆիսի առջեւ կկանգնեցնենք «հրացանավոր մարու», հարուստների պաշտպանության համար կստեղծենք մասնավոր թիկնապահների հսկայական բանակ...»:

Ահա շատ համառոտ այսօրվա Հայաստանի վիճակը: Ամեն ինչ կատարվել է տրված խոստումների հակառակ: Ցինիկները նշան էին բռնել սովետական իշխանությանը, բայց կրակեցին Հայաստանի վրա:

Եվ բնական է, որ ժողովուրդը երբեք այս ամենը ստեղծողներին չէր աջակցի, թույլ չէր տա, որ այդ ցինիկներն ու խարդախները իշխանության գային եւ երկիրը վերածեին ավերակույտի: Եթե ժողովուրդը լսեր այս ահավոր ծրագիրը, ապա կմտածեր, թե ի՞նչ է մեր «ազգային փրկիչները» խելքները թռցրե՞լ են, որ այդպես ուզում են ծաղրել ու ստորացնել բոլորիս: Ժողովուրդը նաեւ կմտածեր, թե արդյոք այդ «փրկիչները» հոգեկան խանգարում չունե՞ն, ժամանակը չէ՞, որ նրանց առողջությամբ զբաղվեն...

Բայց դժբախտաբար այն ժամանակ այդ հնարավորությունը չկար... Հայաստանում գնում է պայքար բարու ու չարի միջեւ: Ո՞վ կհաղթի այդպես էլ կլինի մեր ապագան լուսավոր կամ էլ խավար: Անկախության հռչակումից ի վեր Հայաստանում իշխանության եկածները չեն մտածում ոչ պետության, ոչ ժողովրդի, ոչ բարության, ոչ խղճի, ոչ արդարության մասին: Ինչպես հոգեւորականներն են ասում այդ անձինք ծառայում են սատանային: Իշխանությունը գրավել են, Ռուբեն Սեւակի դիպուկ գնահատմամբ, այն «ախտածին, այլասերուած մարդիկ», որոնց «երգը հայհոյանքի մը պէս ամբարտաւան է, իրենց ժպիտը հեգնութեան մը պէս վիրաւորիչ»:

Բավական է ամեն ինչում մեղադրել Արեւմուտքին, եկեք ձեռք չտանք Ա-

րեւմուտքին: Այն չի փոխվի. ինչպես եղել է կա ու այդպես էլ կմնա: Տեսանելի ապագայում նրան սպասում են նոր պրոբլեմներ ու նոր ցնցումներ: Բայց եւ միաժամանակ ուզում եմ նշել. որ հավանաբար ոչ մի երկրում այնպես հախուռն հարձակման ու ստորացման չի ենթարկվել այն ամենը. ինչ ազգային է. ինչպես Հայաստանում: Բոլոր երկրները պահպանում են ազգային սովորույթները. ազգային խոհանոցը. ազգային երգերն ու առասպելները: Եվրոպայում ազգերը պահպանում են իրենց սեփականը. չնայած ամերիկանացման ուժեղացող ալիքին: Համաշխարհային մշակույթի գործիչները հենվում են իրենց պատմության. ազգային ավանդույթների վրա: Նրանք հայտնի են իրենց ժողովրդի պատմության, կրոնի. հինավուրց սովորույթների ու ավանդույթների իմացությամբ:

Հրաժարվելով իրենց ազգային մշակույթից մեր բոլոր լիբերալ արվեստագետները հայտնվել են դատարկության մեջ. որը հնարավոր չէ ծածկել այսպես կոչված հետմոդեռնիզմի թզենու տերեւով: Նրանք համաշխարհային մշակույթի համեմատությամբ հայտնվեցին վերջին տեղերում: Նրանք հետաքրքրություն չեն ներկայացնում ոչ Հայաստանում եւ ոչ էլ Արեւմուտքում: Արվեստի, մշակույթի ցանկացած ասպարեզում համեմատությունը սովետական տարիների հետ. դրա ապացույցն է:

Դրա հետ միասին մեր ազգային մշակույթը դուրս է մղվել հայաստանյան հեռուստատեսությունից: Չի պաշտպանվում նաեւ պետության կողմից: Առանց ազգային մշակույթի ժողովուրդը դատապարտված է մահվան նույնիսկ տնտեսական կայունացման պայմաններում. էլ չենք խոսում ներկա ծգնաժամի մասին: Չի կարող լինել ոչ ազգային կապիտալ. ոչ ազգային բիզնես առանց քեզ որպես ազգ զգալու գիտակցության: Այս ամենը գիտակցելու համար հարկավոր է ժողովրդին վերադարձնել նրա ազգային մշակույթը:

Մինչեւ ե՞րբ Հայաստանում պետք է շարունակվի այն ահավոր պարադոքսը. երբ արվեստագետները. ստեղծագործողները. պետականամետ մտածողները մերժվում են եւ դուրս շպրտվում հենց պետության կողմից. իսկ անցյալը ժխտող. ազգայինը մերժող արվեստագետները. գրողները. որոնք ատում են ազգային մշակույթը եւ մերժում պետականությունը որպես այդպիսին. մեծապես աջակցություն են գտնում: Փայփայվում են. կերակրվում են հենց այն պետության ու այն ժողովրդի կողմից. հենց այն ժողովրդի փողերով. որոնց վրա ծաղրանքով ծիծաղում են:

Ուզում եմ. որ ընթերցողն ինձ ճիշտ հասկանա: Ես իմ ձեռքին չունեմ փաստաթղթեր. որոնք ապացուցեն վերոհիշյալ ցինիկների դավաճանությունը որեւէ արտասահմանյան երկրի. ասենք ԱՄՆ–ի օգտին մտածված գործողությունների մասին: Բայց միաժամանակ դժվար չէ համոզվել. որ եթե ցինիկները դեռեւս չեն հարկադրվել համագործակցել օտարերկրյա. ասենք ԱՄՆ–ի ԿՀՎ–ի հետ. միայն նրա համար. որ օտարերկրյա հատուկ ծա-

ռայությունները դրա կարիքը չեն զգում. քանի որ կա պատրաստակամությունը: Փորձը ցույց է տալիս. որ իրեն հարգող լուրջ հետախուզությունը, փորձառու շախմատիստի նման երբեք իրեն թույլ չի տա անտարբեր անցնել այնպիսի բացբերանի կողքով. ինչպիսին այդ ցինիկներն են եւ իրենց չենթարկեն որպես արդեն պատրաստի դավաճանների:

Միտքս հիմնավորելու համար ասեմ. որ գաղափարական դավաճանները. նրանք. ովքեր գնում են ծառայելու իրենց հայրենիքի թշնամիներին հանուն գաղափարի. հանուն բարձր նպատակի. հանուն պայքարի. ասենք ընդդեմ կոմունիզմի կամ էլ հակառակը հանուն կոմունիստական գաղափարների. քիչ են: Ցինիկների մեծ մասը ծախում է իր ժողովրդին հանուն շահի: Նրանք հայրենիքին միայն չեն դավաճանում. այլ ծախում են այն: Կարիերա. դրամ. իշխանություն ահա դավաճանության հիմնական շարժառիթը: Դրա համար էլ կարիերան. դրամը. իշխանությունը միշտ եղել ու մնում են հավաքագրման հիմնական շարժիչ ուժը:

Ոմանք դավաճանում են. որովհետեւ լավ վարձատրվում են, մյուսները (հենց ցինիկների այս խումբն է ինձ հետաքրքրում) նրանք են. որոնց հարկավոր չէ վարձատրել. նրանք դրա կարիքը չունեն. իրենց ունեցածն էլ է բավական: Նրանց հարկավոր է միայն շանս տալ իրենց ունեցածը պահպանելու համար: Սա այն հաջողակ խայծն է. որով հնարավոր է որսալ ցինիկներին եւ այնպես ամուր պահել. որ երբեք չկարողանան դուրս պրծնել:

Ցինիկներին հավաքագրելու համար կարեւոր է միայն մեկ հանգամանք. որ նրանք իրենց ունեցվածքը հափշտակել են. կուտակել անօրինական միջոցներով: Ահա հենց այստեղ է. որ մեր իրականության մեջ գործող ցինիկները անչափ մատչելի են ցանկացած օտարերկրյա հետախուզության:

Այդ ցինիկները հիմար են. թե թշնամի. չարժե խորանալ դրա մեջ. որովհետեւ նրանց գործողությունները միեւնույն արդյունքն ունեն:

Շատ կարեւոր է տարբերել իսկական հաջողությունը շինծու քաղաքականությունից: Իսկական հաջողությունը հրապարակավ է եւ ժողովրդական կյանքի ծաղկում է բերում: Եվ եթե որեւէ մեկը բավարարվում է իր անձնական կարիերան կազմակերպելով եւ անտեսում է ժողովրդի բարեկեցությունն ու նրա ազգային կյանքի ծաղկումը. ապա հանդիսանում է իր ժողովրդի դավաճան ու պետական հանցագործ: Ուրիշ գնահատական չունի ցինիկի գործելակերպը:

Դավաճանությունն անհավատարմություն է իր երկրի ու ժողովրդի շահերին եւ կարեւոր չէ. թե ցինիկը ինչ է անում թալանած բարիքը մսխում է անմիտ զվարճանքներում եւ խաղատներո՞ւմ. թե՞ հանում է երկրից դուրս. այն էլ այն ժամանակ. երբ ժողովրդի մեծամասնությունը հայտնվել է աղքատության մեջ: Սա արդեն դավաճանության կատարված փաստ է. երբ ցինիկը իր անձնական շահը վեր է դասում ազգի. պետության շահերից: Միեւ-

նույն է. նա մնում է դավաճան. թեկուզ տակտիկական նկատառումներով փոխում է գործունեության ձեւը: Ահա հենց սրանով է ահավոր կոռուպցիան հանցավոր միջոցներով իշխանությունն իր շահերին ծառայեցնելով: Սա ազգային շահերի դավաճանություն է:

Տեղին եմ համարում այստեղ հիշել 19–րդ դարի երկրորդ կեսի ռուս նշանավոր պատմաբան Վ.Կլյուչեւսկու հետեւյալ դիտողությունը. «Իշխանությունը որպես ընդհանուրի բարեկեցության միջոց բարոյապես պարտավորեցնում է. իշխանությունը որ հակառակ է ընդհանուրի բարեկեցությանը ուղղակի զավթում է»:

«Թռչունի պէս վիրաւոր ցեղ մը,– ցավով գրել է Ռուբեն Սեւակը,– փոքրիկ վիրակապի մըն է կարօտ իր թեւերը նորէն բանալու միջոցին մէջ արծիւի պէս սաւառնելու համար: Իսկ մեր ընկերաբանները թոյն կը փչեն բոյներէն ներս. ու մեզ կը խօսին այն տարտամ ապագաներուն վրայ՝ ուր ազգ ու հայրենիք ու ընտանիք կը լուծուին համաշխարհային միջազգայնութեան մը մէջ...»201:

Ռուբեն Սեւակի մտահոգությունը հայապահպանմանը վնասող երեւույթների խորացման վերաբերյալ, այսօր առավել քան այժմեական են հնչում:

Առաջին հերթին ես նկատի ունեմ արտագաղթը, որը ծավալվում է աղետալի չափերով: Դժբախտաբար, Հայաստան–հայրենիքից հեռանալը մեր պատմության մեջ սկսվել է դարեր առաջ եւ ստացել է «որտեղ հաց, այնտեղ կաց» թունավոր ձեւակերպումը: Այսօր վտանգված է կաթիլ առ կաթիլ հավաքված հայոց ազգային գենոֆոնդը: Մենք կորցնում ենք այդ գենոֆոնդը: Հայաստանը զրկվում է ստեղծագործ աշխատուժից:

Հիշենք. որ Սփյուռքը առաջացավ օտար նվաճողների գործադրած բռնությունների հետեւանքով: Իսկ այսօր կատարվում է հակաբնական մի երեւույթ: Պետականություն ունեցող Հայաստանի իշխանություններն իրենց քաղաքականությամբ նպաստում են Սփյուռքի արհեստական մեծացմանը: Սա արդեն մեր առջեւ բացել է համազգային աղետի դռները: Ո՞վ պետք է փակի այդ դռները: Միայն Հայաստանի պետությունը:

Իհարկե, չի կարելի ժխտել, որ Հայաստանի պետության առջեւ ծառացած են բազմաթիվ բարդ ու դժվարին խնդիրներ: Բայց ո՞վ ասաց, որ ազգային գենոֆոնդի պահպանումն ամեն մի պետության գլխավոր խնդիրը չէ:

Ինչո՞ւ եմ այստեղ այսպես սրում այս հարցը: Որովհետեւ արտագաղթի հետեւանքներն ավելի են ծանրանալու եւ մեր համազգային խնդիրների լուծումը դարձնելու են անհնար: Միտքս բացատրեմ միայն երկու պրոբլեմ նշելով:

Առաջին. 20–րդ դարի 80–90–ական թթ. սկսած աշխարհի մասշտաբով առաջացել է հայության երկու կենտրոն Ամերիկայում եւ Ռուսաստանում: Ցավը միայն այն չէ, որ այդ կենտրոններն առաջացել են Հայաստանից հեռացածների, արտագաղթի հետեւանքով: Նաեւ այն է, որ այդ երկու հատվածները, անկախ իրենց մեծ քանակությունից, դատապարտված են դան-

դաղ մարման: Նրանք աստիճանաբար կորցնելու են կապերը մայր հայրենիքի հետ. մեկուսանալու են նրանից եւ դադարելու են որպես այդպիսին գոյություն ունենալուց: Այսպիսով. մի կողմից պակասում է Հայաստանի բնակչությունը. մյուս կողմից նրա հաշվին ավելանում է Սփյուռքը. որի ապագան աշխարհի այսօրվա պայմաններում որպես ազգային հավաքույթ շատ փխրուն ու անհեռանկար է դարձել:

Բնական հարց է առաջանում. ո՞ւմ է ձեռնտու Հայաստանից հայերի հեռանալը եւ Սփյուռքի մեծանալը: Ահա այս հարցին էլ պատասխանելով փորձեմ անդրադառնալ վերեւում նշված երկրորդ պրոբլեմին:

Ժամանակակից Սփյուռքը հիմնականում ձեւավորվեց 1914–1922 թվականներին Թուրքիայի վարած հայաջինջ քաղաքականության հետեւանքով. երբ Արեւմտյան Հայաստանում ցեղասպանության զոհ դարձավ 1.5 միլիոն հայ. իսկ մնացածը բռնությամբ տեղահանվեց ու քշվեց իր պապենական հայրենիքից: Աշխարհի տարբեր երկրներում ապաստան գտած արեւմտահայերը երբեք չեն կորցրել հայրենիք վերադառնալու հույսը եւ դրա համար մղում են համառ պայքար իրենց հասանելի բոլոր միջոցներով:

Սակայն անցնում են տարիները: Այսօր համարյա չկան ցեղասպանության հետեւանքով բռնի տեղահանվածները: Բայց նրանց գործը շարունակում են հաջորդ սերունդները: Եվ չնայած ուծացման ուժգնացող վտանգին. նրանք պահանջում են վերականգնել պատմական արդարությունը:

Եվ ահա Հայաստանից զանգվածաբար հեռանում են հայերը ու համալրում Սփյուռքը: Երեւի «համալրել» բառը տեղին չեմ օգտագործում: Ճիշտն այն կլինի. որ ասեմ՝ Հայաստանից արտագաղթողները ջլատում են Սփյուռքի ուժերը տարրալուծվելով նրա մեջ: Սա. իհարկե. ունի անչափելի վտանգ:

Իսկ ովքե՞ր են հեռանում Հայաստանից եւ ինչի՞ համար: Չխորանալով մանրամասների մեջ ասեմ. հեռանում են կամավոր. արտերկրում լավ ապրելու հույսով: Նրանց ոչ ոք չի ստիպել. որեւէ մեկի նկատմամբ բռնություն. հալածանք չի կիրառվել: Պարզապես կամավոր լքում են իրենց հայրենիքը եւ խառնվում արեւմտահայության ժառանգների հետ. որոնք բռնության հետեւանքով եւ ոչ թե կամավոր զրկվել են իրենց մայր հողից Արեւմտյան Հայաստանից:

Ներկա Հայաստանից կամավոր հեռացածը բարոյական իրավունք ունի՞ միանալ Սփյուռքի հայերին եւ պահանջել Արեւմտյան Հայաստան: Իմ կարծիքով չունի: Մարդը լքել է իր հայրենիքը. լավ կյանքի հույսով հեռացել օվկիանոսից այն կողմ. երբեք չի միանա արեւմտահայության պայքարին: Ոչ միայն չի միանա երեսատեղ չունենալու. այլեւ իր թվացյալ բարեկեցիկ վիճակը չվնասելու ծգտումով:

Աստիճանաբար Սփյուռքում քանակով կգերակշռեն Հայաստանից կամավոր արտագաղթածները եւ իրենց ներկայությամբ կթուլացնեն ու ոչ հե-

ռու ապագայում վերջ կտան Արեւմտյան Հայաստան. իրենց պապենական հայրենիք վերադառնալու արեւմտահայության պահանջին:

Ո՞ւմ է ձեռնտու այս վիճակը: Իհարկե. նրան. ով բռնությամբ զավթել է Արեւմտյան Հայաստանը ու արեւմտահային զրկել հայրենիք ունենալու իրավունքից: Այո. Թուրքիային է այս ամենը ձեռնտու: Եվ դատելով իրերի ընթացքից պետք է ասել. որ Հայաստանից արտագաղթով մեծապես շահագրգռված է Թուրքիան հասկանալի պատճառներով: Իսկ մեր պայմաններում. եթե առաջ հպարտանում էին «ծովից ծով Հայաստան» ասելով. այսօր առավելապես են հրճվում «օվկիանոսից օվկիանոս Հայաստան» տարփողելով:

Կա՞ ելք ստեղծված իրավիճակը փոխելու համար: Ելքն այդ առաջարկել է Ռուբեն Սեւակը: Ահա այն. «Հեռու մեզմէ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք. բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ. քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը. մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր. նոր սիրտեր. նոր հոգիներ պիտի դարբնենք:

Մեզի կարմիր ու մսուտ շուրթներով. ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են»202:

Ուրիշ ելք չկա: Ուրիշ միջոց չկա: Այլապես մենք կշարունակենք իրական վտանգները թողած «հովերուն դէմ ու մենք մեր դէմ կը պայքարինք»:

Այլապես, ինչպես Ռուբեն Սեւակն էր զգուշացնում. «վտանգը շատ մեծ է...»:

«Եթէ Եւրոպան է. կը հնչեցնէ այլասերումի ահազանգը.– ընդգծում էր Ռուբեն Սեւակը.– մի մոռնաք. որ այդ սարսափելի ախտը ամենէն առաջ մեր ցեղին կը սպառնայ իբրեւ հին ցեղի մը»203: Եվ հետո Ռուբեն Սեւակը զգուշացնում էր. «Ու մենք փոխանակ արմատախիլ ընելու. տգիտօրէն կ՚ընտրենք էն ախտավարակ ծիլերը ու զիրենք միայն կը մշակենք»204: Այժմ Ռուբեն Սեւակի զգուշացումն ավելի ակտուալ է. քան 1911թ.:

Անցան տասնամյակներ: Աշխարհում շատ բան փոխվեց: Եվ ահա. 1977թ. հնչեց մեկ այլ զգուշացում: Այս անգամ դա իր վրա էր վերցրել «Հռոմի ակումբի» հիմնադիր Աուրելիո Պեչեին հրապարակելով «Մարդկային որակներ» աշխատությունը:

Իհարկե. կարելի էր ուրիշ հեղինակների մատնացույց անել. վկայակոչել. բայց ես նախընտրեցի Ա.Պեչեիին նկատի ունենալով նրա աչքի ընկնող գործունեությունը: Ա.Պեչեին եւ նրա գաղափարակից նշանավոր գիտնականներն ու հասարակական գործիչները. միավորվելով եւ հիմնելով «Հռոմի ակումբը». իրենց գլխավոր խնդիրն էին տեսնում իմաստավորել այն իրավիճակը. որի մեջ հայտնվել էր մարդկությունը եւ գտնել նրա հետագա զարգացման օպտիմալ ուղիները:

Պեչեիի աշխատությունը պարունակում է ոչ միայն հեղինակի դատո-

ղությունները. այլեւ «Հռոմի ակումբի» հանձնարարությամբ կատարված մի շարք հետազոտությունների հիմնական արդյունքները: Այսօր դրանք ավելի ակտուալ են դարձել. քան 1977թ.: Պեչեին «վերացական» տեսաբան չէ. այլ կապիտալիստական արտադրության համակարգում շատ տարիներ աշխատած փորձառու մասնագետ է: Նա գրում է. «Արեւմտյան քաղաքականության հաղթարշավը անշեղորեն մոտենում է ճգնաժամային սահմանագծին»: Արեւմտյան տիպի հասարակության դժբախտությունների արմատը նա տեսնում է կեղծ կողմնորոշումների մեջ («նյութական» բնույթի նպատակներ. կապիտալի արագ շրջապտույտ եւ այլն): Սոցիալ–տնտեսական համակարգի այսպիսի կողմնորոշումը տանում է դեպի մարդկանց գիտակցության մեջ կեղծ դիրքորոշումների արմատավորում: Դրանք են եսասիրությունը. ընչաքաղցությունը. տիրելու սնապարծությունը եւ այլն. որոնք արգելակում են մարդու մոտ իսկական մարդկային հոգեւոր հնարավորությունների զարգացմանը:

Այս ամենը եւ զարգացած երկրներում նյութական բարեկեցության բարձրացումը միասին հասցրին նրան. որ տարածվեց ամեն ինչ կլանող սպառողականությունը, որը Պեչեին համարում է հասարակության այլասերման նշան:

Ստեղծված փակուղային իրավիճակից դուրս գալու ելքը Պեչեին տեսնում է մարդկային հեղափոխության մեջ. որով «հնարավոր կլինի փոխել հասարակական գիտակցության արժեքային կողմնորոշիչները, յուրաքանչյուր մարդու մոտ զարգացնել իսկական մարդկային հատկություններ: Հարկավոր է բարձրացնել մարդու ոգին. նրան անհրաժեշտ իդեալները. որոնց նա իսկապես հավատում է. հանուն ինչի նա կարողանա ապրել ու պայքարել»:

Պեչեին լավ հասկանում է. որ «մարդկային հեղափոխությունը» հնարավոր է միայն գոյություն ունեցող սոցիալ–տնտեսական համակարգի փոփոխությամբ: Ամենից առաջ նա անհրաժեշտ էր գտնում իրավական իրավահավասար հասարակության ստեղծումը. որի մեջ բարիքները պետք է հավասար բաժանվեն հասարակության բոլոր անդամներին, ընդ որում յուրաքանչյուրը պետք է ունենա հավասար հնարավորություն իր ընդունակությունները բացահայտելու համար205:

Երբեք չպետք է մոռանալ. որ հին Հռոմը կործանվեց ոչ թե նյութական պրոբլեմների. այլ հոգեւոր այլասերվածության պատճառով: Հռոմի կործանման. նրա քայքայման նշանները շատ են հիշեցնում այն ամենը. ինչ տեղի է ունենում արեւմտյան տիպի հասարակության մեջ: Եվ հարցն այն չէ. թե դատապարտված է նա կործանման. եթե շարունակի շարժվել այժմյան ճանապարհով. այլ այն. որ կկործանվի ոչ միայն արեւմտյան քաղաքակրթությունը. այլեւ ամբողջ մարդկությունը:

Եվրոպական (արեւմտյան) այլասերումը. որի վտանգի մասին Ռուբեն Սեւակը զգուշացնում էր. այսօր հայկական իրականության մեջ ևնկաշ-

կանդ ավերում է մեր դարերով ստեղծած ազգային մշակույթի հիմքերը: Այդ այլասերումը արմատավորելու գործում բավականաչափ զգալի է Հայաստանում գործող հեռուստաընկերությունների եւ հատկապես հանրային հեռուստատեսության (հատկապես որովհետեւ ֆինանսավորվում է պետական բյուջեից), մեղմ ասած, բացասական դերը: Դրանք համատարած կերպով քարոզում են այսպես կոչված «մասսայական մշակույթ», որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Արեւմուտքի «Տրոյական ձին»: Ահա թե ինչ է ասել ԱՄՆ–ի տեղեկատվական գործակալության տնօրեն Կ.Ռոենը. «Տարածելով ԱՄՆ–ի մշակույթը մենք օգնում ենք Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականության իրականացմանը: Մենք այլ խնդիր չունենք»206:

Կարեւոր չէ խմում ենք կոկա–կոլա, ծխում ենք Մալբորո, նայում ենք Ռեմբո: Կարեւորն այն է, որ մենք ուզում ենք աճեցնել նոր Ռուբեն Սեւակների, Հովհաննես Թումանյանների, Կոմիտասների, Վիկտոր Համբարձումյանների, Մարտիրոս Սարյանների, Արամ Խաչատրյանների, պահպանել մեր ինքնատիպ ազգային քաղաքակրթությունը:

Մինչդեռ ամերիկյան վայրենի բարքեր ցուցադրող տեսաֆիլմերը անում են իրենց սեւ գործը: Ամերիկյան կինոֆիլմերը, ամերիկյան հեռուստածրագրերին կապկելը, ահա, արդեն անկախության հռչակումից ի վեր պարտադրում են որոշակի պրոպագանդիստական կերպարներ եւ բռնության պաշտամունքի, աշխատանքի մարդու նկատմամբ բացասական վերաբերմունքի, կապիտալիզմի, ամերիկյան ապրելակերպի գաղափարախոսություն:

Ասվածից ելնելով ուզում եմ հարցնել, ո՞ւր են մեր տաղանդավոր ռեժիսորները, դերասանները: Ինչո՞ւ են նրանք մնացել ուշադրությունից դուրս: Ո՞ւմ է դա ծեռնտու: Այս եւ այլ համանման հարցերի պատասխանը պարզ է:

Հայտնի գրող Հ.Ուելսը մի առիթով գրել է. «Գովազդը դա օրենքով արտոնված սուտ է»: Իսկ անգլիացի մեկ այլ գրող Ջ.Փրիսթլին գրել է. «Ամեն մի գովազդ մարդուն իր դրամից զրկելու միջոց է»: Հիշեցնեմ, որ անգլիացի գրողներն իրենց տեսակետը հայտնել են շատ վաղուց եւ կարողացել են հեռուն նայել:

Մեր իրականության մեջ հեռուստատեսային գովազդը արդյունավետ չէ: Բայց դա չի խանգարում, որ մարդկանց մոտ առաջացվի զզվանք, գրգռվածություն, քանի որ նրանք առանց գովազդի էլ վաղուց զրկվել են իրենց դրամից: Միայն գովազդի հովանավորողները իշխանություններից մինչեւ բիզնեսի ու լոտոյի տերերը, կարծում են, թե միշտ կարելի է մարդկանց հիմարացնել ու անպատիժ մնալ:

# Գլուխ 6

# ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Անդրադառնալով Ռուբեն Սեւակի սոցիոլոգիական–փիլիսոփայական հայացքներին նախ, ուզում եմ նշել, որ առհասարակ, ապագայի կանխագուշակումը, նախագուշակումը վերջին հաշվով մարդկանց ստեղծագործական հնարավորությունների նախագուշակումն է հասարակական կյանքի բոլոր ասպարեզներում: Մարդուց դուրս հասարակության ապագա գոյություն չունի եւ այդ պատճառով էլ մարդկային գործոնը նրա իրականացման գլխավոր միջոցն է:

Ապագան այն ուղին է, որ մենք ընտրում ենք: Իհարկե, կյանքի յուրաքանչյուր շրջադարձ անհնար է ծրագրավորել: Ծրագիրը չի բացառում պատահականությունը, հնարավոր սխալները:

Գիտնականները հաշվարկել են, որ եթե մարդու կյանքի միջին տեւողությունը 70 տարի է կամ 600 հազար ժամ եւ եթե դրանից հանվի քնելու եւ ֆիզիոլոգիական այլ պահանջմունքներին հատկացված 400 հազար ժամը, ապա ակտիվ կենսագործունեության համար մնում է 200 հազար ժամ: Այստեղից էլ գլխավոր հարցը. ինչպե՞ս ծրագրավորել. որպեսզի ոչ մի ժամ անտեղի չվատնվի: Անտիկ առասպելների մեջ աստվածները մարդուն պատժում էին այն բանով, որ հայտնում էին նրա ապագան: Սակայն բոլոր դեպքերում ապագայի գաղտնիքը մշտապես հրապուրում է մարդուն: Ի՞նչ կլինի վաղը, մեկ ամիս հետո, մեկ տարի հետո:

Նախագուշական. կանխատեսման պարադոքսն այն է, որ մարդը ձգտում է իմանալ այն, ինչը որ դեռեւս չկա: Բայց, այնուամենայնիվ, հիմնական գծերով, իր էությամբ ապագան կարելի է կանխատեսել, քանի որ հայտնի է ներկան, հայտնի են նրա փոփոխման օրենքներն ու միտումները: Պետք է ընդգծել նաեւ, որ գիտական կանխատեսման մեջ չկա միստիկա: Այն ներկայացնում է արժանահավատ գիտելիքներ, եթե, իհարկե, հենվում է բնության ու հասարակության օրենքների իմացության վրա, եթե նրա օգնությամբ չեն փորձում ամբողջապես ստեղծել ապագայի նկարագիրը...

Մարդու ապագան կախված է մի շարք օբյեկտիվ, անհրաժեշտ ու նաեւ պատահական գործոններից: Կանխատեսել, թե ինչ կպատահի մարդու հետ ապագայում, առավելապես նաեւ համեմատաբար հեռու ժամանակաշրջանում, հնարավոր է միայն երկու դեպքում: Այստեղ խոսքը գիտական եւ հավանական, ավելի շատ պատահական կանխատեսությանն է վերաբերում:

Իմ խորին համոզմամբ գիտական կանխատեսության բնորոշ փաստ է Ռուբեն Սեւակի «Մարդը» ավարտական շարադրությունը. որը նա գրել է 1905 թվականին: «Մարդը» շարադրությունը. ինչպես նշում է դրա առաջին հրատարակիչ. գրականագետ Ալեքսանդր Թոփչյանը. աչքի է ընկնում նյութի ինքնուրույն ստեղծագործական ընկալմամբ. ներքին. մտածված կառուցիկությամբ207:

«Մարդը» շարադրության մեջ ուժգին կերպով դրսեւորվում է Ռուբեն Սեւակի սոցիալական հասունությունը: Այս «սոցիալական հասունությունը» չպետք է նույնացնել «հասուն տարիքի» հետ: Սոցիալական հասունությունն անհատի զարգացման ընդհանրացված բնութագիրն է: Հասուն տարիքը վերաբերում է կյանքի որոշակի փուլին: Եվ ամեն մի հասուն մարդ չի կարող լինել հասուն սոցիալական իմաստով:

Սոցիալական հասունությունը բնորոշում է անհատի զարգացման աստիճանը. նրա կենսափորձը: Սոցիալական հասունությունն ինքն իրեն չի գալիս. այլ ձեւավորվում է վաղ տարիքից: Ինչպես ասում են. պատանեկությունը վճռական ավանդ ունի այդ գործում: Իսկ Ռուբեն Սեւակի դեպքում այդ ավանդը կախված է եղել ընտանիքից. դպրոցից եւ ամենից առաջ հենց իրենից:

Սոցիալական հասունությունը Ռուբեն Սեւակի կայացման գործում կարեւոր փուլ է: Ընդ որում դա կապված չի եղել տարիքի հետ: Ռուբեն Սեւակը այն հանճարեղ անհատականություններից է. որ սոցիալական հասունության բարձրագույն աստիճանին հասավ շատ երիտասարդ տարիքում: Եվ ասվածի վառ ապացույցն է «Մարդը» ավարտական շարադրությունը:

Իր համառոտ. բայց շատ տարողունակ շարադրանքի մեջ Ռուբեն Սեւակը մարդ արարածին քննում է երեք ժամանակաշրջաններում անցյալում. ներկայում եւ ապագայում: Դիմելով իր ժամանակակցին Ռուբեն Սեւակը գրում է. «Դուք. մարդեր. քսաներորդ դարու լուսափառ սեմին վրայ բարձրացած. մտածա՞ծ էք երբեք ձեր նախահոր վրայ. դողդոջ ու բիրտ. տկար ու վայրագ միանգամայն այն էակին վրայ. որ սերունդէ ի սերունդ. դարէ ի դար զքեզ կազմեց. զքեզ. լոյսի երկնաբաղձ զաւակներ»208:

Եվ հետեւելով նախահոր. նախամարդու տառապանքներով անցնող ճանապարհին. խավարի մեջ նրա խարխափումներին Ռուբեն Սեւակը ի վերջո փաստում է. որ նա հաղթեց. ոտքի կանգնեց «մեծ անկորնչելի զօրութիւն մը **մտածումով ու լեզուով**»: «Այսպէս.– եզրակացնում է Ռուբեն Սեւակը.– մտածումը եւ լեզուն իրարու միացած առաջնորդեցին մարդը ամէն դժուարութիւններուն մէջէն եւ դանդաղ. այլ վստահ յառաջացումով մը բերին հասցուցին իր ներկա վիճակին»209:

Գնալով դեպի պատմության ծալքերը Ռուբեն Սեւակը զգուշացնում է. որ յուրաքանչյուր նոր սերունդ պետք է շարունակի կյանքը եւ ոչ թե նորից սկսի: Այս պարզ ճշմարտությունից ելնելով Ռուբեն Սեւակը զգուշացնում է

պատմության քաղքենիական հասկացության վտանգից, որի կրողները քարոզում են «հաճոյքի. շահու բարոյականը. որ ժողովուրդներ ամբողջ անասնական կիրքերու տիղմին մէջ ընկղմելէ վերջ մահախրատ վարդապետներ պիտի հարուցանէր իր ետեւէն»210:

Իհարկե. այսպիսի ընդհանրացում կատարելով Ռուբեն Սեւակը, իմ համոզմամբ. նախ նկատի է ունեցել օսմանյան բռնատիրությունը, որին ուղղակի չի կոչել. ելնելով գրաքննության պահանջից: Նաեւ նկատի է ունեցել կապիտալիստական հասարակությունը. որտեղ ամեն ինչ վերածվել է առեւտրի առարկայի: Իսկապես. կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանից մինչեւ մեր օրերը բուրժուական հասարակության գրականության «հավերժական» սյուժեն դարձած երեխաների կողմից հորը թալանելու. ունեցվածքին տիրելու նպատակով ծնողներին սպանելու պատմություններն անվիճելիորեն փաստում են Ռուբեն Սեւակի եզրակացության ճշմարտացիությունը:

«Ի՞նչ է արդի մարդը» հարցով Ռուբեն Սեւակը շարադրում է իր վերաբերմունքը մարդու նկատմամբ ընկերության. կրոնի. գիտության. արվեստի եւ բարոյականության տեսանկյունից: Պատշաճ գնահատելով կրոնի դերը մարդկային քաղաքակրթության զարգացման գործում Ռուբեն Սեւակը հատուկ ուշադրություն է դարձնում գիտությանը: «Մարդը.– գրում է նա,– կրօնքի սիրոյն հետ ուրիշ սէր մըն ալ ունի. եղբայր մը առջի սիրոյն. որ սակայն տարբեր ճամբաներէ պիտի քալէր ու մերթ թշնամի պիտի ըլլար իր եղբօր»211: Սակայն վրա հասավ այն ժամանակը. երբ երեւույթների կրոնական բացատրությունը. դիցաբանական վեպերը չէին կարող այլեւս հագեցնել «մարդուն հետաքրքիր միտքը»: Ուստի «լոյսին ծարաւը ունեցող մարդը ուզեց վերցնել բնութեան քողը ու քիչ–քիչ ճանչցաւ զայն իր այլազան երեւոյթներուն մէջ. ասկէց յառաջացան գիտութեանց այնքան բազմապիսի ճիւղերը»212:

Ռուբեն Սեւակը հակիրճ. բայց շատ տարողունակ կերպով մեկնաբանում է ճարտարապետությունը. արձանագործությունը. նկարչությունը. երաժշտությունը. բանաստեղծությունը եւ այդ միջոցով հանգում հետեւյալ մտքին. «Գեղեցիկը բնութեան մէջ աղոտ է ու խառնակ միանգամայն. մարդ զուտ մաքուր գեղեցիկը ըմբռնեց. իտեալ գեղեցիկը»: «Ինքը.– շարունակում է փիլիսոփա բանաստեղծը.– հիւլէ մը տիեզերքին մէջ. երկրորդ տիեզերք մը զգաց իր մէջ. կեանքով ու գեղեցկութիւնով լեցուն զգացումների տիեզերքը սիրտը»213: Ահա այս մի քանի տողի մեջ ամփոփած է Ռուբեն Սեւակի էսթետիկան: Դա կյանքի փրկության. մարդկության փրկության էսթետիկան է: Ռուբեն Սեւակի մոտ Գեղեցիկի ըմբռնումը համահունչ է Դոստոեւսկու հանրահայտ ձեւակերպմանը «Գեղեցկությունը կփրկի աշխարհը»:

Բայց դա ամբողջը չէ: Ռուբեն Սեւակը մարդու մեջ տեսնում է մեկ այլ. ավելի վսեմ զորություն պարտքը: Եվ նա ազդարարում է. «Պա՛րտքը իր ան-

ձին հանդէպ, պա՛րտքը այլոց անձին հանդէպ, պա՛րտքը Աստծոյ հանդէպ: Պա՛րտքը օրօրոցէն մինչեւ գերեզման, ու պա՛րտքը գերեզմանէն ալ անդին... Յաւիտենական, անմա՛հ. վսե՛մ Պարտքը...»214:

Ռուբեն Սեւակն ապագա մարդու գլխավոր խնդիրը համարում է մարդկային ցեղի փրկությունը: Ապագա մարդը կունենա՞ այդ ուժն ու կամքը սեփական փրկության համար: Իմ պատկերացմամբ այսպիսի հարցադրմամբ Ռուբեն Սեւակը կանգնում է մարդկության պատմության մեջ եղած անելանելի իրավիճակ չընդունող ամենահամարձակ մարդկանց շարքում: Նա իր շարադրության մեջ երեւում է ոչ միայն մահացու վտանգի մասին հանճարեղ զգուշացնող, այլեւ այդ վտանգը հաղթահարելու ճանապարհը ցույց տվող հանճարեղ մտածող:

Ռուբեն Սեւակը խնդիր է դնում թափանցել «ապագայի մթութիւններուն մէջ ու հոն մարդը տեսնել իր բոլոր կարելիութիւններովը»215: Եվ այդ կարելիությունների մեջ Ռուբեն Սեւակն առաջին հերթին կարեւորում է առաջադիմությունը, որպես տիեզերքի օրենք, մարդկության օրենք: Իսկ առաջադիմության համար պետք է գիտությունը հասնի զարգացման այնպիսի աստիճանի, որպեսզի իրենով բարձրացնի մարդուն, ճանաչելով բնությունը կառավարել նրան եւ դարձնել մարդու սպասավորը:

Ռուբեն Սեւակը մարդկության ապագա առաջադիմության գործում գիտության դերը կապում է բնության եւ հասարակության օրենքների իմացության հետ: Միայն այդ օրենքներին տիրապետող մարդը կարող է գիտությունը ծառայեցնել մարդկության շահերին: Այսօր գիտությունը դարձել է անմիջականորեն արտադրական ուժ: Եվ ոչ միայն այն պատճառով, որ կարող է հայտնվել չարագործի ձեռքին: Գիտությունն այդպիսին կարող է դառնալ այսպես կոչված բարի դիտավորություն ունեցողների ձեռքին, որոնք հանուն փորձարկումների Երկրագունդը վերածել են փորձարարական լաբորատորիայի:

Իսկապես. Երկրագնդի վրա ամեն ինչ կա, որպեսզի մարդիկ ապրեն երջանիկ ու խաղաղ. չկռվեն իրար դեմ, չոչնչացնեն բնության հարստությունը: Բայց. այնուամենայնիվ, մեր օրերում աշխարհը գտնվում է աղետի եզրին: Այս ողբերգական հակասությունը կանխատեսելով Ռուբեն Սեւակն առաջ է քաշում «տիեզերական եղբայրության մեծ պատվերը»: Այդ մեծ պատվերը Ռուբեն Սեւակը համարում է այն ներդաշնակ միությունը, որը կոչվում է **Մարդկություն**216: Ահա թե ինչու Ռուբեն Սեւակը տարիների հեռվից դնում է մարդու պաշտամունքի անհրաժեշտությունը: Ռուբեն Սեւակի մոտ մտածող, իմաստավորող մարդը տարբերվում է նրանից, ով պատրաստ է կատարել ցանկացած կառավարության ցանկացած առաջադրանք:

Ճիշտ է ասված «Մարդը պատմության արդյունքն է»: Չի խանգարի, եթե ավելացնեմ, որ մարդը նաեւ իր ճակատագրի տերն է: Այս հասկացությու-

ներն այսօր արդեն դարձել են արդիական, որովհետեւ խոսքը վերաբերում է ամբողջ մարդկության ճակատագրին: Ապագա մարդու, ապագա մարդկության ճակատագրի մասին խորհելով Ռուբեն Սեւակը կարեւորում բարոյականության դերը: «Ապագան,– ընդգծում է նա,– բարոյականին յաղթանակը պիտի ըլլայ մանաւանդ»217:

Մարդկությունը կարող է իր նպատակին հասնել, երբ, ինչպես գրում է Ռուբեն Սեւակը, «ազգերը այս մեծ ընտանիքին անդամները պիտի լինեն սիրակցորդ: Հայրենիքները ջերմին, ճլվլուն բոյներու պէս պիտի ըլլան»218:

Ինչպիսի՞ մարդը կարող է իրականացնել Ռուբեն Սեւակի կանխատեսումը: Խորհելով այս հարցի շուրջ նախ ուզում եմ հետեւյալն ասել: Հաւրահայտ է, որ շատ վտանգավոր են այն մարդիկ, որոնց գլխավոր նպատակն է ինքնահաստատումը: Նրանք վտանգավոր են բոլոր ասպարեզներում, իսկ արվեստի մեջ նաեւ զզվելի:

Բյուրոկրատիզմը միշտ տանում է դեպի կոնֆորմիզմ, հրաժարում ինքնուրույն լուծումներ գտնելուց, հետեւաբար նաեւ պատասխանատվությունից: Այդպիսի կենսակերպ ունեցող մարդը ոչ միայն կորցնում է կամքը, այլեւ բարոյական սկզբունքները: Հակառակ դեպքում հաստատուն համոզմունքներ ունեցող մարդը համարձակ ու վստահ ընտրում է իր համոզմունքներին համապատասխանող վարքագիծ: Իհարկե, այլ հարց է, թե ինչպիսի բարոյական հատկանիշներ ու համոզմունքներ է սահմանում այդ ընտրությունը:

Հանուն հայրենիքի ազատագրության պայքարի արդարացիության մեջ բարոյական հավատը բնորոշ է եղել բոլոր ազնիվ մարդկանց: Միտքս փաստելու համար ընթերցողին հիշեցնեմ ռուսաց ազատագրական պայքարի պատմությունից մի հանրահայտ եւ շատ ուսանելի իրողություն: Դեկաբրիստ Միխայիլ Լունինին հարցաքննում էր նրա համագնդեցի գեներալ Չերնիշովը: Լունինը 10 տարով աքսորվեց տաժանակրության: Հինգ տարի անց, նա խորհրդավոր պայմաններում զոհվեց Սիբիրում: Իսկ Չերնիշովը Լունինին հարցաքննելուց չորս ամիս անց ստացավ կոմսի տիտղոս, մեկ տարի հետո դարձավ ռազմական նախարար, արժանացավ պայծառափայլ իշխանի տիտղոսի: 30 տարի անց, այդ ապաշնորհ գեներալը Ղրիմի պատերազմում Ռուսաստանին հասցրեց խայտառակ պարտության եւ պաշտոնաթող եղավ:

Ահա կյանքի ուղու երկու ընտրություն, երկու ճակատագիր: Մեկը ողբերգական եւ անմահություն, մյուսը արտաքուստ փայլուն, բայց խայտառակ ավարտ:

Եթե դեկաբրիստների կյանքի ուղուն նայենք քաղքենու աչքով, նեղ սպառողական հոգեբանության դիրքերից, ապա կարող է հարց առաջանալ, թե ինչն էր նրանց կյանքում պակասում: Դեկաբրիստ Մ.Օռլովը 26 տարեկանում դարձել է գեներալ, Պ.Պեստելը Սիբիրի գեներալ–նահանգապետի որդին էր, Ա.Վոլկոնսկին, Ս.Տրուբեցկոյը եւ Ա.Օդոեւսկին իշխաններ էին:

Ի.Անենկովի տանը կար 150 սպասավոր. 14 խոհարար: Բայց նրանց մոտ մեծ էր բարոյական հավատը. բարոյական համոզմունքը. որպեսզի սպայական փայլուն կարիերայից գերադասեին կախաղանը. շղթաները. տաժանակրության զրկանքները:

Դեկաբրիստների օրինակը հիշեցի նրա համար. որպեսզի փաստեմ նաեւ հետեւյալը: Ցարը Կովկաս է աքսորել մոտ 3000 շնորհազրկված դեկաբրիստ սպաների. որոնք որպես շարքային զինվորներ. մասնակցեցին 1826–1828թթ. ռուս–պարսկական երկրորդ պատերազմին: Աքսորված դեկաբրիստներ Ե.Լաչինովը. Մ.Պուշչինը. Պ.Կոնովիցինը. Ն.Օրժիցկին. Պ.Բեստուժեւը. Ա.Գանգլեբովը եւ շատ ուրիշներ. ինչպես նաեւ նրանց համակիրներ. գեներալներ Պ.Երմոլովը. Ա.Կրասովսկին. բանաստեղծ Դ.Դավիդովը. նշանավոր գրող ու դիվանագետ Ա.Գրիբոյեդովը դարձան Արեւելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու ակտիվ մասնակիցներ. չդավաճանեցին իրենց բարոյական սկզբունքներին եւ հավատարիմ մնացին ազատության գաղափարին:

Ռուբեն Սեւակն իր «Մարդը» ավարտական շարադրությունը գրել է 1905 թվականին: Տասը տարի անց Ռուբեն Սեւակը կանգնեց այդ շարադրության մեջ մարդուն ներկայացրած բարոյական սկզբունքների իրագործման դաժան փորձության առջեւ: Ես նկատի ունեմ աքսորավայրում թուրք ազդեցիկ պաշտոնյայի աղջկան բուժելը եւ վերջինիս սիրահարվելը Ռուբեն Սեւակին: Թուրք պաշտոնյան փորձում է համոզել Ռուբեն Սեւակին ամուսնանալ իր աղջկա հետ. ընդունել մահմեդականություն եւ այդ միջոցով փրկվել մահից: Ռուբեն Սեւակի հետ աքսորավայրում էին գտնվում շատ երեւելի կուսակցական ու հասարակական գործիչներ. որոնք նրան խորհուրդ էին տալիս. համոզում թուրքի առաջարկը ընդունել եւ փրկել իր կյանքը: Բայց Ռուբեն Սեւակը մերժեց. որովհետեւ հավատարիմ էր իր բարոյական սկզբունքներին. իր բարոյական պարտքին եւ շատ լավ էր գիտակցում. թե ինչ հետեւանք կունենար դրանցից հրաժարվելը: Եվ Ռուբեն Սեւակը գերադասեց նահատակվել. քան դավաճանել իր համար սրբություն դարձած սկզբունքներին:

Այս փաստին անդրադարձա. որպեսզի ընթերցողի հետ միասին խորհենք. թե ինչպես կվարվեին Ռուբեն Սեւակին խորհուրդ տվող ու համոզող երեւելի ու համբավավոր գործիչները. եթե իրենց կյանքը փրկելու համար այդպիսի երջանիկ առիթ ստեղծվեր: Իհարկե. նրանք կգերադասեին ընդունել թուրքի առաջարկը. որովհետեւ չունեին Ռուբեն Սեւակի համար կյանքի օրենք դարձած բարոյական սկզբունքները. ազգի գոյատեւման համար պատասխանատվության գիտակցումը: Նրանք չունեին գիտակցված մահն ընդունելու ոչ անձնական եւ ոչ էլ բարոյական քաջություն:

Մեծ է. շատ մեծ Ռուբեն Սեւակի եւ այդ գործիչների միջեւ եղած բարոյական անջրպետը, թեեւ նրանք բոլորը հավասարապես են հիշատակվում որպես նահատակներ:

Ռուբեն Սեւակը «Մարդը» ավարտական շարադրության մեջ հանդես չի գալիս որպես ուտոպիստ երազող: Նա ըմբռնել էր պատմության զարգացման ընթացքը եւ լավ էր հասկանում, թե ինչի կհասցնի դրանից շեղվելը: Մարդկությունը 20–րդ դար էր հասել նաեւ արյունահեղ ու ավերիչ պատերազմների միջով: Առաջադեմ մտածողները ամբողջ խորությամբ զգում էին մարդկային քաղաքակրթության գլխին կախված վտանգը: Նրանց շարքում էր նաեւ Ռուբեն Սեւակը, որն այդ վտանգի վերացման մեջ ամենից առաջ կարեւոր էր համարում «թշնամութեան, ատելութեան վրիժառու ժանտ փուշերը արմատախիլ» անելը «ժողովուրդներու սրտերուն մէջէն»219:

Ռուբեն Սեւակը որպես մարդկության հետագա անվտանգ գոյության երաշխիք ազդարարում էր. «Ա՛լ թնդանոթը քարուքանդ չպիտի աւերէ լուսողող քաղաքները, ա՛լ բոցերը չպիտի լափլիզեն կեանքով լեցուն երկիրները. ա՛լ գնդակը չպիտի շաչէ կուրծքերէ ներս»220:

Ռուբեն Սեւակը հանդես էր գալիս ժողովուրդների բարեկամության հաստատման օգտին, համոզված լինելով, որ դա է միակ ու ճիշտ ուղին դեպի խաղաղություն, դեպի առաջընթաց, դեպի, ի վերջո, մարդկության փրկություն: «Խաղաղութեան կենսաւէտ ստուերին մէջ ու ազատութեան ջերմին երկնքին տակ ազգերը բոլոր պիտի երթան իրենց ոյժերուն պատարագը մատուցանելու միշտ իրականացող գաղափարին նուիրական խորանին վրայ»221: Սիա այս խոսքերով է ավարտում «Մարդը» ավարտական շարադրությունը փիլիսոփա Ռուբեն Սեւակը:

Ես այսպես հանգամանորեն անդրադարձա «Մարդը» շարադրությանը նկատի ունենալով. որ դրան ընթերցողները քիչ են ծանոթ: Ինչպես այս շարադրությունը. այնպես էլ Ռուբեն Սեւակի հետագայում գրած ստեղծագործություններն աչքի են ընկնում փիլիսոփայական լայն ընդհանրացումներով: Ռուբեն Սեւակը շեշտը դնում է մարդու եւ բնության հավերժ միասնության վրա: Նա այդ միասնության ներդաշնակության մեջ է տեսնում անմահության գաղափարը:

Ուզում եմ ասվածի կապակցությամբ հիշել Պոլ Լաֆարգի դիպուկ գնահատականը. «Եթե բանաստեղծը փիլիսոփա չէ. ապա արհեստավոր է» եւ փաստել. որ Ռուբեն Սեւակն իր գաղափարներով հաստատուն տեղ է զբաղեցնում փիլիսոփա բանաստեղծների շարքում:

Ունենալով առաջադեմ ազգային մտածողություն. կանգնած լինելով ազգային գաղափարախոսության դիրքերում Ռուբեն Սեւակը, ինչպես «Մարդը» շարադրության. այնպես էլ մյուս գործերի մեջ ընթերցողի առջեւ երեւում է որպես ինտերնացիոնալիզմի գաղափարախոս: Կար ժամանակ. ոչ

շատ հեռու անցյալում, մեզնում «ինտերնացիոնալիզմ» բառն օգտագործվում էր առանց որեւէ պատճառի: Այժմ էլ այդ բառը մոռացության է տրվել, նույնիսկ հիշելը համարվում է անվայելուչ եւ ծաղրի է ենթարկվում: Մինչդեռ այդ ամենի փոխարեն հարկավոր է պահպանել այդ բառի նվիրական ու սուրբ նշանակությունը. այնպես. ինչպես հասկանում էր մեծ հումանիստ փիլիսոփա Ռուբեն Սեւակը:

***

Ռուբեն Սեւակ բանաստեղծի կերպարը եւ Ռուբեն Սեւակ մարդու կերպարը միահյուսված են ներդաշնակությամբ եւ մեզնից յուրաքանչյուրի համար մնում է որպես հարազատ ժողովրդի համար կյանքը զոհած բարության ու ճշմարտության բոցավառվող աստղ: Նա զոհվեց հանուն իր ժողովրդի արժանապատվության: Եվ դրա համար էլ միշտ հիշում ենք Ռուբեն Սեւակին եւ սրտի մորմոքով ողբում նրա եղեռնական մահը:

Ռուբեն Սեւակն ընկավ երիտթուրքական բարբարոսների ձեռքով: Ընկավ իր ուժերի ծաղկման տարիքում: Նա չհասցրեց ասել այն ամենը, ինչ կարող էր ասել իր ժողովրդին: Այդ չասվածը նա եզրափակեց իր մահով:

Ռուբեն Սեւակի կյանքն ու ճակատագիրը, նրա ողբերգական մահը չընկճվելու, համարձակության տիպար է եւ հաստատում է մարդկային անհատականության բարձրագույն արժանապատվությունը:

Ուզում եմ նորից ու նորից կրկնել, որ Ռուբեն Սեւակի մահից կանցնեն շատ տարիներ, բայց. այնուամենայնիվ. նա չի ծերանա: Չի ծերանա ոչ թե այն պատճառով. որ կյանքից զրկվեց 30 տարեկան հասակում, այլ այն բանի համար. որ այսօր էլ, 21–րդ դարի սկզբին. նրա մտքերը շարունակում են հնչել նույն ուժով: Ռուբեն Սեւակը մեզ հետ է. քայլում է մեր ժամանակի հետ: Հենց դրա շնորհիվ է. որ մենք երբեք չենք զգա Ռուբեն Սեւակի ֆիզիկական բացակայությունը:

Ես այս ամենը չեմ ասում հավուր պատշաճի. այլ խորապես համոզված եմ դրանում: Որովհետեւ Ռուբեն Սեւակը պատկանում է հավերժ ապրող ու շարժվող երեւույթներին եւ Վ.Բելինսկու խոսքերով ասած կանգնած չի մնացել այն կետին. որտեղ վրա է հասել մահը եւ շարունակում է զարգանալ հասարակական գիտակցության մեջ:

Ռուբեն Սեւակի դարը 20–ր դարն էր. որն սկսվեց ահավոր դաժանությամբ: Մենք նոր ենք դուրս եկել այդ «դաժան դարից» եւ արդեն շեմել ենք 21–րդ դար: Սակայն 21–րդ դարը կարող է լինել ավելի ահավոր ու սարսափելի: Չմոռանանք. որ 21–րդ դարը հագեցած է ոչնչացման ավելի հզոր ու հրեշավոր միջոցներով: Գերիշխող են եսասիրությունը. անասնական կրքերը. դաժանությունը. բարբարոսությունը. մարդատյացությունը:

Այս բոլոր չարիքները մշտապես ձգտում են պճնվել ինչ–որ «ռոմանտիկ

արժանապատվությամբ»: Դրանց կրողները հանդես են գալիս արվեստի ու պոեզիայի գույներով, ձայնով ու խոսքով: Նրանք իրենց հոգեւոր աղքատությունը, շահամոլությունը, անասնականությունն աշխարհին ներկայացնում են արվեստի ձեւով, առանձնահատուկ բարդացվածությամբ, տպավորություն ստեղծելով, թե դա բոլորին հասու չէ եւ որ միայն իրենց է վիճակված լինել իրերի գաղտնի ու նվիրական տերը:

Ռուբեն Սեւակի պոեզիան ներծծված է այդ ամենի ուղղակի հակադրությամբ: Ուշադիր կարդանք Ռուբեն Սեւակի գործերը: Դրանք հզոր հակաթույն են ժամանակակից մարդատյաց, այսպես կոչված գերռեալիստական արվեստի քայքայիչ հովերի դեմ:

Ռուբեն Սեւակի պոեզիային հատուկ է ձգտումը դեպի ճշմարիտ կյանքը, որն արտահայտվում էր Արեւմտյան Հայաստանում կատարվող բռնությունների, թուրքական սարսափելի աշխարհում տիրող վայրենի կամայականությունների մերկացմամբ:

Ինձ թվում է, որ Ռուբեն Սեւակը շուտ ըմբռնեց, որ իր պատկերացրած լիրիզմը չի համապատասխանում «մեծ արվեստի» էությանն ու խնդիրներին: Նա գիտակցում էր, անշուշտ, լիրիզմի «թունավոր» հրապուրանքը եւ ձգտում էր դուրս գալ դրա կապանքներից, գնալ դեպի կյանք, ուր գերիշխող էր ողբերգությունը: Լիրիկան, որպես աշխարհայացքի արտահայտման ձեւ, գրողին, առհասարակ, կյանքից հեռացնում է դեպի սեփական ոգու ներաշխարհ: Այս իրողությունը, իհարկե, զգում էր Ռուբեն Սեւակը եւ դա հաղթահարելու համար դիմեց արձակին: Ես նկատի ունեմ նրա «Բժիշկին գիրքէն փրցուած էջերը»:

Ռուբեն Սեւակի արձակ գործերը երեւան եկան այն ժամանակ, երբ նա արդեն իր վրա էր բեւեռել հանրության ուշադրությունը որպես լիրիկ բանաստեղծ: Նրա արձակի հիմնական բովանդակությունը դարձավ իրականության պատկերումը: Ռուբեն Սեւակն անխոնջ կերպով ցույց էր տալիս իրականության ստվերոտ կողմերը առանձնակի ուշադրություն դարձնելով այն հիվանդություններին, որոնք սոցիալական պայմանների հետեւանք էին:

Իհարկե, այսպիսի տարողունակ հասարակական–քաղաքական բովանդակության համար հարկավոր էր արձակում գտնել նոր ոճ: Այդ ոճը Ռուբեն Սեւակը, անշուշտ, հեշտ չի գտել: Բայց նրա գտած ոճը այնպիսի սահունությամբ, կոնկրետությամբ, օբյեկտիվությամբ, ներդաշնակ ավարտունությամբ է աչքի ընկնում, որ համարձակորեն կարելի է դասել համաշխարհային գրական ստեղծագործությունների շարքում:

«Փրցուած էջերում» Ռուբեն Սեւակը շոշափում է այնպիսի թեմաներ, մատնացույց անում այնպիսի պրոբլեմներ ու հասարակական ախտեր, որոնց մասին բուրժուական սալոններում գերադասում էին երեսպաշտությամբ չխոսել: Մինչդեռ այդ սալոնների մշտական բնակիչներն էին իրենց

վարք ու բարքով պայմաններ ստեղծում հասարակական ախտը տարածելու եւ ուրիշներին դժբախտացնելու համար:

Ահա այս առումով էլ Ռուբեն Սեւակի «Փրցուած էջերը» շառաչուն ապտակ են բուրժուական հասարակարգի ոսկեզօծ պատերից այն կողմ պատսպարված հասարակության պորտաբույծների երեսին, որոնք ուրիշի դժբախտության մեջ տեսնում են միայն սեփական բարեկեցության ծաղկումը:

«Փրցուած էջերի» մեջ նկարագրված մարդկային դժբախտությունների միջոցով Ռուբեն Սեւակը մատնացույց է անում դրանք առաջացնող սոցիալական պայմանները: Հենց այստեղ էլ երեւում է Ռուբեն Սեւակի հեղափոխական լինելը: Նա շեշտում է. որ սոցիալական հիվանդությունները կվերացվեն միայն դրանք առաջացնող պայմանները ոչնչացնելով: «Փրցուած էջերում» Ռուբեն Սեւակը մեծ հաշվով դնում է ապականված հասարակության վերացման անհրաժեշտությունը:

«Փրցուած էջերում» նկարագրված սոցիալական հիվանդություններն այսօր լայնորեն տարածվում են նաեւ Հայաստանում. որոնք շուկայական. կապիտալիստական հարաբերությունների արդյունք են, դրանց ստեղծած սոցիալական անապահով պայմանների հետեւանք: Սա էլ է վերոհիշյալ ցինիկների հաստատած հարաբերությունների արդյունքը: Սրա համար էլ են նրանք պատասխանատու ժամանակի ու պատմության առջեւ:

Մեզ համար թանկ է Ռուբեն Սեւակի ժառանգությունը: Դա մեծագույն էսթետիկական ու էթիկական արժեք ունի: Եվ իր այդպիսի ժառանգությամբ Ռուբեն Սեւակը հանդիսանում է հայ գրականությանը հատուկ հիմնարար սկզբունքների կերտողներից մեկը, սկզբունքներ. որոնք անմիջական ու բարերար ազդեցություն են ունեցել հայ հասարակական մտքի ու հեղափոխական գաղափարների ձեւավորման վրա:

Ռուբեն Սեւակի լիրիկան, իմ պատկերացմամբ. մարդկային ազնիվ զգացումների. առինքնող բարեկամության ու սիրո արտահայտությունն է. կյանքի անվերջանալի արժեքի հասկացությունն է: Ռուբեն Սեւակի համար աշխարհը չի վերջանում առանձին անհատի հեռանալով:

Ռուբեն Սեւակի գրառումների մեջ հանդիպել եմ այսպիսի դատողության. «... Տղաքները մեռնել ինչ է չեն հասկնար. խելքերնին մէջ չը մտնիր եւ մեծերուն մէջ ալ շարք կայ. որ դեռ մեռնելը չեն հասկնար. ես ասոնցմէ եմ...»222: Մեկ այլ տեղ նա գրել է. թե «կեանքը մահով չի կրնար սահմանուիլ»223: «Սուգը.– գրել է Ռուբեն Սեւակը.– ապուշ բան մըն է. յետամնաց սովորոյթ մը եւ աւելի կը ծանրացնէ մահուան գաղափարը»: Եվ պահանջում էր «Պէտք է ջնջել սուգը»224:

Ռուբեն Սեւակի գաղափարական–ստեղծագործական սրընթաց աճը տեղի ունեցավ Ադանայի հայ բնակչության կոտորածի ազդեցությամբ: 1907–1910թթ. արդեն ամբողջովին ձեւավորվել էին նրա բանաստեղծա-

կան աշխարհը. փիլիսոփայությունը: Ռուբեն Սեւակի աշխարհըմբռնումը. փիլիսոփայությունը նուրբ լիրիզմի հետ միասին բոցավառ քաղաքացիությունն է, նրա խոհերը մարդու եւ ժամանակի. անհատի ու հասարակության փոխհարաբերությունների մասին են: Դա արեւմտահայությանն սպառնացող վտանգի զգացողությունն է:

Ռուբեն Սեւակը Ադանայի ողբերգությունը շատ ծանր տարավ: Բայց եւ կարողացավ այդ ողբերգությունը ճիշտ դիրքերից գնահատել որպես սուլթանի ու երիտթուրքերի ժամանակավոր հաղթանակ. որը չի կարող ի վերջո կասեցնել պատմության ընթացքը:

Ռուբեն Սեւակի պոեզիան. իմ համոզմամբ. բացատրելի է թե՛ պատմականորեն եւ թե՛ հոգեբանորեն: Ստեղծագործական կյանքը սկսելով որպես ռոմանտիկ երազող Ռուբեն Սեւակը կարողացավ ժամանակի ընթացքում իր ստեղծագործությունները հագեցնել կոնկրետ պատմական բովանդակությամբ եւ իրականության ռեալ զգացումով: Դա սուլթանական Թուրքիայում տիրող անթափանց խավարն է ու գերեզմանոցային սառնությունը: Դա Արեւմտյան Հայաստանի ողբերգությունն է. արեւմտահայության տառապանքն է. շղթայված ու ստորացված սուլթանիզմի կողմից: Դա նաեւ ժողովրդի անսպառ ստեղծագործական ուժն է:

Ռուբեն Սեւակի պոեզիայի մի այլ կարեւոր առանձնահատկություն է աչքի ընկնում: Դա. իմ համոզմամբ, հետեւյալն է: Ազատ կերպով տիրապետելով ազգային. առանձնապես արեւմտահայ բանաստեղծական հարուստ ժառանգությանը. ստեղծագործաբար յուրացնելով նրա մեծ ավանդույթները (Մ.Պեշիկթաշլյան.Պ.Դուրյան). սիրով դիմելով համաշխարհային ժառանգությանը (Հ.Հայնե եւ ուրիշներ). իր ժամանակի պոեզիայի առավել արժեքավոր կողմերը նրբորեն ըմբռնելով, մի միասնության մեջ ծուլելով բանաստեղծական տարբեր հոսանքներ. արմատապես նորացնելով ու վերաիմաստավորելով համաշխարհային պոեզիայի որոշ «հավերժական» թեմաներ Ռուբեն Սեւակը հայ բանաստեղծական խոսքին հաղորդեց նոր էներգիա. նոր արտահայտչություն: Ինձ այսպիսի հետեւության է բերում նրա «Թրուպատուրներ» պոեմը. որը տպագրվել է 1911 թվականին:

Ռուբեն Սեւակն իր ընթերցողի համար նրբանկատորեն պայմաններ է ստեղծում խորհելու այն հարցի շուրջ. թե. առհասարակ. բարոյականության օրենքներ կա՞ն. գործո՞ւմ են. թե՞ ոչ: Հենց այստեղ էլ. իմ համոզմամբ. Ռուբեն Սեւակի արվեստը ամբողջովին մոտենում է գիտությանը: Որովհետեւ նա շատ լավ գիտեր. որ օրենքների օբյեկտիվությունը կախված չէ մարդուց. այլ մարդն է կախված այդ օրենքներից:

Ռուբեն Սեւակը նաեւ լավ էր հասկանում. որ օրենքների օբյեկտիվությունը հենց այն է. որ եթե դրանք հաշվի չառնվեն. ապա ուղղակի. թե անուղղակի. վաղ. թե ուշ պատժելու է խախտողին եւ ստիպելու է ընդունել իրեն. թե-

կուզ կրախի միջոցով: Սրանից էլ ելնելով Ռուբեն Սեւակն իր ստեղծագործություններով բողոքում էր այն բանի դեմ, որ մարդուն ենթարկում են մեռած օրենքներին, մարդուն զրկում ազատ մտածելուց ու գործելուց:

Ռուբեն Սեւակին լավ հասկանալու համար ուզում եմ հիշել մարդկային բնավորության բացասական ու դրական զգացմունքների. կրքերի ամբողջությունը: Խելք եւ հիմարություն: Գիտելիք եւ տգիտություն: Անշահասիրություն եւ շահամոլություն: Արիություն եւ վախկոտություն: Բարություն եւ նախանձ: Պատվասիրություն եւ անհոգ փառասիրություն: Ազնվություն եւ անամոթություն: Խիղճ եւ անխղճություն: Գեղեցկություն եւ տգեղություն:

Այս բոլոր որակներն անմիջականորեն դրսեւորվում են մարդու, նրա հարազատների ու մտերիմների ճակատագրի, ազգության եւ մարդկության ամբողջ ցեղի ճակատագրի վրա: Այս բոլորը օբյեկտիվ օրենքներ են, որոնք ոչ միայն կախված են մարդուց, այլեւ մարդն էլ է կախված դրանցից:

Այս միասնությունը համաշխարհային գեղարվեստական գրականությունն արտացոլել է հին հունական ողբերգություններից մինչեւ Ռուբեն Սեւակի «Կարմիր գիրքն» ու մինչեւ մեր օրերը: Դարեր շարունակ միեւնույն ստեղծագործությունները կարդացվում են չթուլացող հետաքրքրությամբ: Ինչո՞ւ: Պատասխանը, կարծում եմ, պարզ է: Որովհետեւ ամենից առաջ այդ ստեղծագործությունները շոշափում են մարդու մեջ գոյություն ունեցող մաքուր խղճի ամենախոր, ամենանվիրական ու նուրբ լարերը: Եվ մի՞թե այս ամենը օբյեկտիվություն չէ:

Բոլոր մեծերը, նրանց թվում նաեւ Ռուբեն Սեւակը, իրենց կյանքով ու գործով հաստատում են, որ կան բարոյականության օբյեկտիվ օրենքներ: Կան դրանք եւ իրագործվում են այնպիսի անհրաժեշտությամբ, ինչպես, ասենք, ֆիզիկայի օրենքները: Եվ բարոյականության օրենքների խախտումը պատժվում է նույնպիսի անխուսափելիությամբ, ինչպես պատժվում է մարդը, երբ երկրի ձգողականության մասին օրենքը ժխտելու նպատակով որոշում է թռչել բազմահարկ շենքի տանիքից:

Բարոյականության օբյեկտիվ օրենքների խախտումը դարձել է մահացու վտանգ ամբողջ մարդկության համար: Անամոթությունը հասցնում է կործանման, իսկ խիղճը փրկում է: Ընդ որում ներկա պայմաններում այդ կործանումն ու փրկումը ոչ թե կլինեն բարոյապես կամ հոգեպես, այլ ֆիզիկապես: Այսօր արդեն սովորական աչքի համար դարերով անտեսանելի մնացած բարոյական օրենքները հանկարծակի դարձել են ֆիզիկապես շոշափելի:

Կարծում եմ, տեղին է մի երկարաշունչ մեջբերում կատարել Ֆ.Դոստոեւսկուց: «Միայն թվում է,– գրել է ռուս հանճարեղ հոգեբան գրողը.– թե մարդկությունը զբաղված է առեւտրով, պայմանագրեր կնքելով, պատերազմներով, գիտություններով, արվեստներով: Նրա համար միայն մի գործն է կարեւոր եւ այդ գործն է նա կատարում իր համար պարզում է այն բարոյական օ-

րենքները. որնցով ապրում է: Բարոյական օրենքներն արդեն գոյություն ունեն. մարդկությունը միայն իր համար պարզում է դրանք եւ այն անկարեւոր ու աննկատ է թվում նրանց համար, ում հարկավոր չէ բարոյական օրենքը, ով չի ուզում դրանով ապրել: Բայց բարոյական օրենքի այդ պարզումը ոչ միայն գլխավորն է, այլեւ ամբողջ մարդկության միակ գործը»:

Դոստոեւսկու այս միտքը յուրովի է արտահայտել Ռուբեն Սեւակը բարոյականության օրենքների խախտումը բնորոշելով «այլասերում» շատ բան ասող այս մի հատիկ բառով: Ռուբեն Սեւակը գտնում էր, որ Եվրոպային տագնապող այլասերման վտանգը առավել սարսափելի չափերով սպառնում է մեր հին ցեղին եւ վճռականորեն դնում էր դա արմատախիլ անելու խնդիրը225:

Իհարկե. չեմ բացառում. որ կարող են լինել մարդիկ. որոնք չեն համաձայնվի վերոհիշյալ տեսակետին: Ինչ բարոյական օրենքների մասին է խոսքը. երբ կյանքն ու ժամանակը հրամայական են դարձրել դրանցից ավելի բարձր հասկացություններ,– ահա այսպես են մտածում այդ մարդիկ եւ առաջին պլան մղում մարդկությունը ոչնչացնելու միջոցների ստեղծումը, այսինքն ինքնասպանությունը:

Նրանք. այդպես մտածողներն ու գործողները մարդկային մտքի ստեղծած առաջավոր միջոցները ոչ թե ծառայեցնում են մարդկության պահպանմանը, այլ նրա ոչնչացմանը:

Ահա հենց այս է, իմ կարծիքով, գլխավոր տարբերությունը: Եվ կարեւորն այն է, որ Ֆ.Դոստոեւսկու, Ռուբեն Սեւակի եւ մյուս հումանիստ գործիչների հռչակած կրեդոն ամենից առաջ նշանակում է աշխարհի եւ իրենց համար լիակատար պատասխանատվության ստանձնում: Որովհետեւ եթե բարոյականության օրենքների վրա հիմնված այդ կրեդոն խախտվել կամ էլ ոտնահարվել է. առեւտուրը, պայմանագրերը, գիտությունները, արվեստները հակադրվել են դրան, ապա մարդկությունը կրել է շատ վնասներ, որոնց վերացման համար պահանջվել են տասնյակ ու տասնյակ սերունդների ջանքեր:

Սակայն չմոռանանք, որ այդպես եղել է անցյալում: Իսկ այժմ, 21–րդ դարի սկզբին, երբ միջուկային կործանման վտանգը մնում է կախված մարդկության գլխին, որքան կարեւոր է բարոյականության օրենքների պապանումը:

Բարոյականության օրենքների մասին խոսելիս արժե հիշել նաեւ Կ.Մարքսի հետեւյալ խոսքերը. «... Նպատակը, որի համար պահանջվում են անարդար միջոցներ, չի կարող լինել արդար նպատակ»227: Սա, իսկապես, բարոյականության գլխավոր օրենքներից է եւ ունի օբյեկտիվ բնույթ: Պատմությունից հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են, որ եթե կա միջոցների անարդարություն, նշանակում է հենց նպատակի մեջ ամեն ինչ կարգին չէ ու արդար չէ: Անարդար միջոցները հենց անարդար նպատակի արտահայտությունն են: Ուստի նպատակը չի արդարացնում

միջոցները. այլ դրանք ծեւավորում է: Ահա այս դեպքում է, որ նպատակը դառնում է միջոց, իսկ միջոցը ինքնանպատակ:

Ռուբեն Սեւակը համոզված էր, որ «անարդարութիւնը ուրիշ մէկ անարդարութեամբ չեն լուծեր»: Նա գիտեր ինչ է պատերազմը, ինչ է անմեղ արյուն թափելը եւ որպես հումանիստ մտածող պահանջում էր. «արդարութիւնը թող գայ խաղաղութեամբ»:

«Նպատակը արդարացնում է միջոցները...»: Այս մասին այնքան է խոսվել ու գրվել, այնքան է մնացել քաղաքական, պետական ու ռազմական գործիչների գիտակցության մեջ, որ այսօր վերածվել է բացահայտ աբսուրդի: Միտքս պարզելու համար ուզում եմ նշել, որ հենց դրա արդյունքում է խաղաղությունն ամրապնդելու նպատակը արդարացվում սպառազինության մրցավազքով ու գերզինվածությամբ: Այսինքն ստացվում է, որ ոչնչացման հրեշավոր ուժի զենքը պետք է տեղադրել աշխարհի բոլոր երկրներում, որպեսզի դրա միջոցով պահպանվի խաղաղությունը: Հարկավոր է, որ ամեն ինչ ոչնչացնող միջուկային զենքը մշտապես կախված լինի մեր գլխին, որպեսզի մենք մեզ անվտանգ զգանք:

Եվ այս բացահայտ աբսուրդը ամեն ժամ կրկնում են պետական ու քաղաքական գործիչները իրենց կամքը պարտադրելով մարդկությանը: Այլ խոսքով ասած, ըստ նրանց «խաղաղությունից ավելի կարեւոր բաներ կան»:

Ռուբեն Սեւակի ամբողջ գրական ժառանգության մեջ նրա լիրիկան մեծապես առնչվում է մեր օրերի հետ, այսօրվա մարդու բարոյական ու էսթետիկական պահանջմունքների հետ: Ես այս խնդրի վրա ընթերցողի ուշադրությունը հրավիրում եմ այն տխուր իրողության կապակցությամբ, որ կարծես թե Ռուբեն Սեւակի (եւ ոչ միայն նրա) լիրիկայի մեջ արտահայտված զգացմունքների հարստությունն ու տրամադրությունը որեւէ ազդեցություն չեն թողել մեր առանձին երիտասարդ բանաստեղծների վրա: Այս ասելով ընդգծեմ, որ մտադրություն չունեմ անդրադառնալ այսօրվա երիտասարդ բանաստեղծներին: Դա ավելի շատ գրաքննադատության գործն է: Ես միայն հարկ համարեցի դրա վրա բեւեռել ուշադրությունը, որպեսզի փաստեմ, որ այսօրվա պոեզիան գաղափարապես աղքատ է, ժլատ պոետական բովանդակությամբ ու մտքով: Ավելացնեմ նաեւ, որ մեր նորօրյա բանաստեղծների զգալի մասը չի կարդում մեր մեծերին, նրանց պարզապես վատ գիտե: Այն տպավորությունն են թողնում, որ բավարարվել են նրանով, ինչը «անցել» են դպրոցում կամ համալսարանում:

Այստեղից էլ մեր մտահոգությունը դպրոցում հայոց լեզվի ու գրականության դասավանդման ներկա վիճակի վերաբերյալ: Իհարկե, շատ է խոսվել դասավանդման գործում քարացածության ու ծեւականության մասին: Նպատակ չունեմ կշտամբել մայրենի լեզվի ու գրականության ուսուցիչնե-

րին. որոնց աշխատանքը շատ ծանր է ու հաճախ անշնորհակալ: Նրանց մեջ քիչ չեն իրենց գործի իսկական գիտակներ, որ կարող են աշակերտներին մոտ խոր զգացումներ առաջացնել մայրենի լեզվի ու գրականության նկատմամբ: Ուզում եմ պարզապես ուշադրություն դարձնել, որ այսօրվա դպրոցում Համաշխարհային բանկի պատվերով գրված գրականության դասագրքերի մեծ մասն ուղղակի չի համապատասխանում իր գլխավոր նպատակին: Այն նպատակին, ինչպես բազմաթիվ սերունդներ են հասկացել ու ձեւավորվել դրանով:

Ասվածի կապակցությամբ մի հարց էլ եմ կամենում շոշափել: Ռուբեն Սեւակի անձի նկատմամբ հետաքրքրությունը տանում է դեպի մեր մշակույթի այն ժամանակաշրջանը, որտեղ տիրապետող դարձավ մեր ազգային կենսական պահանջմունքը: Խոսքս վերաբերում է 19–րդ դարի վերջին եւ հատկապես 20–րդ դարին:

Իմ այս համոզմունքը այն բանի արդյունք է, որ այժմ կատարվում է վերոհիշյալ ժամանակաշրջանի մեր դասականների իսկական վերածնունդ: Մենք նրանց նորից ու նորովի ենք բացահայտում. կարդում ենք, ինչպես առաջին անգամ եւ. իսկապես. չենք դադարում զարմանալ, թե ինչպիսի հարստություն ունենք եւ որքան քիչ ջանք ենք գործադրում այդ ազգային հարստությունը յուրացնելու համար: Ուզում եմ առանձնակի շեշտել կարեւորությունն այն իրողության, որ մեր մեծ գործիչները մեզ վրա առավելապես ներազդում են ոչ միայն գրականությամբ, իրենց գրքերով, ստեղծած կերպարներով ու հերոսներով, այլեւ իրենցով, իրենց կենդանի կերպարով, իրենց ամբողջ կյանքով:

Այդ մեծերի շարքում է Ռուբեն Սեւակը իր կյանքով ու ճակատագրով:

Իմ պատկերացմամբ Ռուբեն Սեւակի ժառանգությունը մի հսկայական լեռնաշղթա է իր բազում բարձունքներով: Այդ ժառանգությունը մեզ հետ է, եւ կարծում եմ, որ ամեն մի ուսուցիչ շատ ուրախ կլինի, եթե իր աշակերտներին հասցնի այդ բարձունքներին եւ նրանց աչքերում տեսնի Ռուբեն Սեւակի պոեզիայի, նրա գաղափարների արձակած լույսի փայլը:

Ռուբեն Սեւակի ժառանգությունը նաեւ պարտավորեցնող դեր ունի հայերիս համար շատ հարազատ մայրենի լեզվի անաղարտությունը պահպանելու գործում:

Ռուբեն Սեւակի գործերը հավաքող եւ հոգատարությամբ պահպանող Հովհաննես Չիլինկիրյանը պատմում է հետեւյալ փաստի մասին: Ռուբեն Սեւակի քրոջ դուստրը Ատրինե Յակոբովիչը, ընդունվում է Սիլիվրիի հուշական վարժարան: Նա այնքան է հմտանում հուշարենի մեջ, որ 1910թ. այդ լեզվով նամակ է գրում Ռուբեն Սեւակին: Ահա այդ առիթով էլ Ռուբեն Սեւակը Ատրինեին պատասխանում է հետեւյալ նամակ–բանաստեղծությամբ.

«Իմ սիրելի փոքր Ատրինէ.
Ինձմէ բարձր ես յուսարէնէ.
Բայց հօրդ, մօրդ քնքուշ լեզուն
Մի մոռնար, որ հայերէն է:
Եթէ միջոցդ ներէ
Մեծ դպրոցներ գնաս, Ատրինէ,
Բայց մայրենի անուշ լեզուդ
Մի մոռնար. որ հայերէն է:
Ծոյլ մի ըլլար. ծոյլը անօրէն է.
Դուն շատ գիտուն եղիր մեզմէ.
Բայց մայրենի եւ Սուրբ լեզուդ
Մի մոռնար. որ հայերէն է»228:

Ռուբեն Սեւակն այս պատգամը գրել է 1910թ.: Դրանից մի քանի տասնամյակ հետո նույն վտանգը դարձյալ իրական էր դառնում. որի համար էլ ամենայն հայոց բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գրեց իր «Խոսք որդուս» պատգամ–բանաստեղծությունը:

Այստեղ տեղին եմ համարում հիշեցնել Ռուբեն Սեւակի այն զգուշացումը. թե նոր սերնդի դաստիարակության գործում հարկավոր է ամենից առաջ արմատախիլ անել «ախտավարակ ծիլերը» եւ նոր սերնդին փրկել այլասերումից. «անգիտորեն» չհետեւել «փչացած Եվրոպայի» օրինակին: Ռուբեն Սեւակն. իհարկե. այստեղ շատ էր կարեւորում դպրոցի դերը. նրա ազգային դիմագծի պահպանումը:

Վերջին տարիներին ավելի ու ավելի է զգացվում Ռուբեն Սեւակի զգուշացման կարեւորությունը: Դա ըմբռնելու համար ուզում եմ անդրադառնալ այն հարցին. թե այժմ՝ թողած մեր ազգայինը. ո՞ւմ ենք ընդօրինակում եւ ովքե՞ր են դա մեզ պարտադրում:

Հանրահայտ է. որ դասակարգային հասարակության մեջ կյանքի բոլոր ասպարեզները կազմակերպվում են տիրող դասակարգի շահերին համապատասխան: Եվ կրթության համակարգը. որպես կարեւորագույն բնագավառ. տիրապետող դասակարգը կառուցում է իր համար եւ խստորեն վերահսկում այն:

Ցարական Ռուսաստանում տիրապետող դասակարգերի երեխաների համար ստեղծվել էին գիմնազիաներ: Իսկ ռեալական ուսումնարանները հասարակ ժողովրդի երեխաների համար:

Հայաստանի պատմությունից նույնպես հայտնի են երեխաների սոցիալական բաժանման տխուր փաստեր ու հետեւանքներ: Դրանք Ռուբեն Սեւակի համար այնքան ատելի էին. որ իր խոր զայրույթը հայտնեց հենց առաջին բանաստեղծության մեջ. որը գրել է իր վարժարանն ավարտելու կապակցությամբ:

Խորհրդային իշխանության տարիներին վերացվեց երեխաների սոցիալական բաժանումը. եւ բոլոր երեխաները սկսեցին սովորել միասնական դպրոցում:

Այսօր, երբ Հայաստանում այնպես հախուռն արմատավորվում են շուկայական հարաբերությունները. երբ կապիտալիզմն իր ամբողջ այլանդակություններով պարտադրվում է ժողովրդին. կրթության համակարգը նույնպես հայտնվել է որոգայթի մեջ:

Դպրոցների շքամուտքերին սկսել են երեւալ «գիմնազիա», «քոլեջ» անվանումները: Ոմանք կարող են տարակուսել՝ մի՞թե կա տարբերություն: Պատասխանեմ՝ կա, այն էլ շատ մեծ ու վտանգավոր:

Իշխանության է վերադարձել ունեւորների դասակարգը. որի ներկայացուցիչները աստիճանաբար իրենց ձեռքն են վերցնում մարդկանց կյանքի բոլոր բնագավառների կառավարումը. թելադրում իրենց կամքը: Եվ այդ պարոններն անչափ մտահոգված են, որ իրենց զավակները չսովորեն աղքատների հետ միասին: Ընդ որում՝ նախատեսվում է. որ նրանց ուսուցումն էլ պետք է տարբեր լինի: Ապագա պարոններին՝ հեղինակավոր գիտություններ, իսկ վաղվա ստրուկներին՝ գրել–կարդալ. այնքան. որ բավականացնի ապագա տերերին ծառայելու համար:

Շատ սերունդներ գիտեն խորհրդային դպրոցական համակարգի մասին: Այդ դպրոցը տվել է փառաբանված գիտնականներ, արտադրության ղեկավարներ. մշակույթի գործիչներ, բարձր որակավորում ունեցող միլիոնավոր բանվորներ ու մասնագետներ:

Խորհրդային կրթական համակարգը, որը ներծծված էր մեր ազգային լավագույն ավանդույթներով. կոչված էր իրականացնելու հասարակության յուրաքանչյուր անդամի ազատ զարգացումը: Յուրաքանչյուրին անկախ հասարակական դրությունից, նրա ունեցվածքից: Այսօր մեր շատ ու շատ նշանավոր գիտնականներից ու մշակույթի գործիչներից կարելի է լսել միեւնույն խոսքը՝ ով կարող էր մտածել. որ հովվի կամ բանվորի որդին կդառնա գիտնական. արվեստի գործիչ եւ այլն:

Խորհրդային Հայաստանի պետությունը հոգ էր տանում. որ բոլորի համար լինեն դասագրքեր. անվճար սնունդ. յուրաքանչյուրի համար մատչելի լիներ հանգիստը պիոներական ճամբարներում:

Եվ ճիշտ չէին նրանք. ովքեր պնդում էին. թե այդ միատեսակ ապահովումը անարդարացիորեն ավելին էր տալիս ապահովվածներին: Բայց ոչ: Դպրոցը բոլորին հավասար էր դարձնում:

Թե ինչ էր դա նշանակում. հիշեցնեմ այսօրվա ստորացուցիչ իրողությունը. երբ հարկադրված են ապացուցել. որ իրենք (ավելի շուտ ծնողները) աղքատ են. որպեսզի անվճար սնունդ կամ դասագիրք ստանան: Դրանով դպրոցական կյանքում ներդրվում է անհավասարություն. իսկ երեխայի գի-

տակցության մեջ մտցվում է անձի ինքնասիրությունը ոտնահարող ու խաթարող իրողությունը. դու աղքատ ես. դու երկրորդ կարգի մարդ ես. իսկ քո ծնողները անհաջողակներ են:

Իսկ դպրոցական համազգե՞ստը: Հիշենք. թե «անհատական ազատության» կողմնակիցներն ինչպես էին ծաղրում դա անվանելով «զորանոցային», «անհատի համահարթեցում» եւ այլն: Ճիշտ է. դպրոցական համազգեստը հավասարեցնում էր բոլորին: Բայց դպրոցական համազգեստը ստեղծում էր պատնեշ «հագուստով դատելու» քաղքենիական սկզբունքի դեմ. թանկարժեք իրերի օգնությամբ շրջապատից տարբերվելու մանր փառասիրության դեմ:

Միասնական համազգեստի վերացումը դպրոց բերեց սոցիալական շերտավորում. ոմանց մոտ գերազանցության զգացում. մյուսների մոտ խղճահարության ու ստորացման բարդույթներ:

Ուզում եմ հիշել խորհրդային մարդու առաջին թռիչքը դեպի տիեզերք. որի հաջողության մեջ քիչ չէր նաեւ Խորհրդային Հայաստանի դպրոցից դուրս եկած շատ գիտնականների ու ինժեներների մասնակցությունը: Յուրի Գագարինի թռիչքը ցնցեց ԱՄՆ–ին. որտեղ սկսեցին անհանգստանալ. թե այդ ի՞նչ առավելություններ ունի խորհրդային դպրոցը ամերիկյանից: Եվ դա հասկանալու համար «դեմոկրատիայի միջնաբերդում» առաջին անգամ կազմակերպվեց ցուցահանդես նվիրված խորհրդային դպրոցին: Այդ ցուցահանդեսը ժամանակին ԱՄՆ–ում մեծ աղմուկ բարձրացրեց: Ամերիկացիներին շատ էր զարմացրել. որ խորհրդային դպրոցում ուսումը կատարվում է միասնական ծրագրով. որովհետեւ ամերիկյան դպրոցում կան հարյուրավոր առարկաներ. եւ աշակերտն է կազմում իր ծարգիրը:

Այո. խորհրդային դպրոցում աշակերտը սովորում էր պետության կողմից հաստատված միասնական ծրագրով: Այդ ծրագիրն ուղղված էր անհատի ներդաշնակ զարգացմանը. եւ նրանում բավականաչափ տեղ էր հատկացվում հումանիտար առարկաներին: Նաեւ հաշվի էր առնվում. որ ներդաշնակ զարգացած անձը պետք է աշխատի ժողովրդական տնտեսության մեջ: Դրա համար էլ ծրագիրը նախատեսում էր անհրաժեշտ հիմք ճշգրիտ եւ բնական գիտությունների համար. այնպես որ հնարավորություն էր ստեղծվում ընտրություն կատարել ինչի՞ն նվիրվել գիտությա՞նը. արվեստի՞ն. դառնալ մասնագե՞տ կամ որակյալ բանվո՞ր: Այսպիսի ընտրություն ուներ խորհրդային դպրոցի աշակերտը:

Վերոհիշյալ ցուցահանդեսի կապակցությամբ հիշում եմ մամուլի էջերից. թե ինչպես էին ամերիկացի ուսուցիչները զարմացած հետաքրքրվում. թե խորհրդային դպրոցում ինչո՞ւ ուժեղներին չեն անջատում թույլերից: Դա նրանք համարում էին ժամանակի ու միջոցների անտեղի վատնում:

Ամերիկայի դպրոցական համակարգն իրականացնում է ուժեղներին

թույլերից անջատելու ընտրասերում: Մինչեւ դպրոց մտնելը վեցամյա ամերիկացի երեխան անցնում է դաժան փորձություն. որը կոչվում է մտավոր ունակությունների գործակիցը (ՄՈՒԳ) որոշելու թեստավորում: Այդ «ցուցանիշի» համաձայն երեխաներին բաժանում են ըստ հոսքերի. եւ դրանով նրանց ճանապարհները հավետ բաժանվում են: Ավելի քիչ «ընդունակները» սովորում են թեթեւացրած ծրագրերով եւ երբեք չեն գերազանցի իրենց հասակակիցներին, որոնք արդեն դարձել են ՄՈՒԳ կրողներ:

Ճիշտ է. ուսուցման 12 տարվա ընթացքում մի քանի անգամ անցկացվում է «վերաորակավորում». եւ տպավորություն է ստեղծվում. թե աշակերտին հնարավորություն է տրվում իր ՄՈՒԳ–ը բարելավելու համար: Բայց իրականում դա արվում է աշակերտին թույլերի խումբ տեղափոխելու համար:

Ամերիկյան սոցիոլոգ Պատրիցա Սեքստոնը ամփոփել է ԱՄՆ–ի մի քանի խոշոր քաղաքներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները եւ պարզել. որ մինչեւ 5 հազար դոլար եկամուտ ունեցող ընտանիքների երեխաների մտավոր ունակությունների գործակիցը 70 է. 5–7 հազար դոլար եկամուտ ունեցողների մոտ 83. իսկ 7–8 հազար դոլար եկամուտ ունեցողների մոտ 114: 9 հազար դոլարից ավելի եկամուտ ունեցող ընտանիքների երեխաները կարծես թե ծնվել են բացառիկ ունակությամբ. նրանց մոտ գործակիցը հասնում է 127–ի: Ինչպես պարզվում է. տխրահռչակ ՄՈՒԳ–ի թվերը վկայում են ոչ թե երեխայի ունակությունը. այլ նրա ընտանիքի հասարակական դիրքի աստիճանը: Այդ պատճառով էլ չունեւորի երեխան երբեք չի ստանա լիարժեք կրթություն229:

Կրթության ամերիկյան համակարգը դասակարգային «ընտրասերման» գործիք է. միջոց վերնախավի երեխաներին բանվորների ու գործազուրկների երեխաներից անջատելու համար: Փոքրիկ ամերիկացուն մանկուց. ամբողջ կյանքի համար խոստանում են կնիք նրա ՄՈՒԳ–ը կազմում է 70. հետեւապես նա մտավոր թույլ զարգացած է: Եվ նա պետք է հեզորեն հաշտվի իր ճակատագրի հետ. չմեղադրի իշխանություններին. պետությանը: Եվ աստված չտա. որ նա հանկարծ կռահի. թե հարուստները. որոնք իրենց երեխաների համար ապահովել են անհրաժեշտ զարգացում. թալանում են իրենց ծնողներին. ինչի արդյունքում ինքը չի ստացել հարկավոր «զարգացումը» լավ ՄՈՒԳ–ի համար:

Բուրժուազիայի համար դա լավ միջոց է իր նպատակներին օգտագործելու հաշտվիր. երբեք մի դիմադրիր. մի դժգոհիր. եւ ոչ մի հեղափոխություն. որովհետեւ ամեն ինչ արդարացի որոշվել է ՄՈՒԳ–ի միջոցով:

Եվ որպեսզի մարդիկ չմիավորվեն դպրոցական տարիքից. ներարկվում է անհատապաշտություն: ՄՈՒԳ–ի թվերն անջատում են հարուստներին աղքատներից. սպիտակամորթներին սեւամորթներից. անջատում են տարբեր ազգությունների երեխաներին: Միայն թե նրանք չմիավորվեն. ոչ մի համե-

րաշխություն. յուրաքանչյուրն իր համար. ահա թե ի վերջո ինչ է նշանակում այդ անփառունակ ունակությունների գործակիցը:

Եվ «միջին ամերիկացին» անկեղծորեն հավատում է. թե իր դեմոկրատական երկրում ինքը «ազատ անհատականություն» է, «ազատ» ընտրություն է կատարում, այդ թվում նաեւ կրթության ասպարեզում: Ու դժբախտաբար. նա չի հասկանում, որ «ազատ ընտրությունը» միայն ՄՈՒԳ–ի սահմաններում է եւ իր եկամուտների մակարդակից է կախված:

Այսօր մեր իրականության մեջ բարեբախտաբար քիչ չեն այն դպրոցները. ուսումնական հաստատությունները. որոնց տնօրենները. գիտամանկավարժական կոլեկտիվները փորձում են պահպանել մեր կրթական համակարգի լավագույն ավանդույթները՝ մարդասիրությունը, հայրենասիրությունը. պարկեշտությունը. բարությունը:

Բայց. ցավոք սրտի, այլեւս չկա համընդհանուր. պարտադիր. լիարժեք ժողովրդական կրթություն: Նրա «բարեփոխումը» պարտադրվում է ԱՄՆ–ի կրթական համակարգի կողմից: Եվ այդ հրեշը տիրոջ իրավունքով արդեն հայտնվել է մեր ազգային դպրոցում:

Առայժմ. որպեսզի ծնողներին չխրտնեցնեն. առաջին դասարանցիների թեստավորումը անվանում են «զրույց». բայց ապագայում. աստիճանաբար կմտցվի շերտավորման համակարգ փոխադրական քննությունների. գիմնազիական. տնտեսական, հումանիտար եւ սովորական դասարանների միջոցով:

Այսպիսով, կրթության «բարեփոխումն» ընթանում է արդեն դաշնակցական նախարարի ղեկավարությամբ եւ այն կոչված է օրինականացնելու նրա դասակարգային բնույթը: Բայց հարկավոր է մտածել. թե ո՞ւմ ենք ընդօրինակում եւ ո՞ւմ ենք հետեւում:

Այս հարցերն այսօր մեզ համար առավել հրատապ են ու արդիական: Որովհետեւ ընդօրինակել մի երկրի կրթական համակարգը, որի դաստիարակության ընդերքից դուրս են եկել աշխարհին իրենց ենթարկելու, իրենց կամքը թելադրելու գերհզոր երկրի քաղաքացիներ, մեզ ոչ մի օգուտ չի տա. բացի ազգային դպրոցը. կրթական համակարգն ավերելուց: Եվ միամտություն է կարծել. թե Հայաստանում ՄՈՒԳ–ի արմատավորումը կբերի բարիք: Որովհետեւ ամերիկացիները միայն հանդուրժում են. որպեսզի իրենց ենթարկված ժողովուրդների մեջ ստեղծվի այնպիսի շերտավորում. որի անդամները միայն մրցակցեն միմյանց միջեւ. բայց երբեք չհամարձակվեն բարձրանալ զարգացած ամերիկացիների մակարդակին: Այնպես որ հարկավոր է լրջորեն մտածել. թե ում ենք ընդօրինակում:

Այստեղ ուզում եմ հիշել Ռուբեն Սեւակի գնահատմամբ այն «ախտագին մտաւորականներին». որոնք 1980–ական թվականների վերջերին անասելի գրոհ կազմակերպեցին Խորհրդային Հայաստանի կրթական համակարգի դեմ ամպագոռգոռ պահանջներ ներկայացնելով «հայեցի դպրոցն ու

հայեցի կրթությունը վերականգնելու» մասին: «Ախտագին մտաւորականները» հասան իրենց նպատակին: Խորհրդային Հայաստանի կրթական համակարգը ավերված է: Փոխարինելու է եկել կրթության ամերիկյան համակարգը: Իսկ ո՞ւր մնաց հայեցի դպրոցի ու հայեցի կրթության պահանջը: Ինչո՞ւ են լռում դրա հեղինակները: Պատասխանը պարզ է: Լռում են, որովհետեւ հայեցի կրթության պահանջը միայն շղարշ էր, ծխածածկույթ իրենց չար ու ավերիչ դիտավորությունները ժողովրդից թաքցնելու համար:

Վերջին տարիներին լրատվության միջոցներն ավելի հաճախ են անդրադառնում լեզվի մաքրության. նրա մեջ այլանդակ օֆիսային (ուրիշ հարմար բառ չգտա ասել միտքս ընդգծելու նպատակով) խոսքաշինության եւ խոսքի դարձվածքների ներխուժման, առօրյա գործածության մեջ մեր լեզվի շատ արժանիքների կորստի հարցերին: Տագնապ է հնչում հայոց լեզվի մեջ օտարաբանության. նրան ոչ հարազատ տարրերի ներխուժման կապակցությամբ:

Իսկապես, երբեք մեր ոսկեղենիկ ու մեծ լեզուն չի ենթարկվել այսպիսի անգլոլեզվական թունավոր մոլախոտերով պղծման. ինչպես այժմ: Անգլոմանիայի եւ ամերիկամանիայի մասշտաբները այնքան մեծ են. որ կան բոլոր հիմքերը խոսելու հայոց լեզվի հետագա գոյությանն սպառնացող վտանգի մասին: Եվ առնվազն տարօրինակ է. երբ ոմանք այդ վտանգը չեն տեսնում: Ընդ որում նրանք մատնացույց են անում անցյալի փորձը, երբ շատ բառեր փոխառնվեցին ռուսաց լեզվից կամ նրա միջոցով, թե ժամանակն ամեն ինչ իր տեղը կդնի. լեզուն ինքը կկարգավորի՝ ինչն է իրեն պետք եւ ինչը ոչ: Բայց կարծես թե նրանք մոռանում են, որ այն ժամանակ չկար ռադիո. հեռուստատեսություն. ոչ էլ այսօրվա ահռելի քանակությամբ տպագիր հրատարակությունները: Լեզվի վրա լրատվության միջոցների ազդեցությունը շատ մեծ է. ինչը դրսեւորվում է ոչ միայն լեզվային նորմի մակարդակի վրա, այլ նաեւ լեզվային համակարգի տարբեր մակարդակների վրա՝ հնչյունակազմությունից մինչեւ բառապաշար: Այո. ինչ–որ մի ժամանակ լեզուն պահպանում է ինքնամաքրման ունակություն:

Բայց այսօր հայոց լեզվի վրա աներեւակայելի ուժով հարձակվել է անգլոամերիկանիզմի կեղտոտ հեղեղը եթերից. գրքերի ու թերթերի էջերից անդադար. շուրջօրյա թունավորելով մեր գիտակցությունը:

Ուղեղները հիմարացնելու հզոր զենք է գովազդը իր ներկա տեսքով: Ես հանդես չեմ գալիս առհասարակ գովազդի դեմ: Բայց գովազդը պետք է լինի խելացի, գրագետ. ճշմարիտ, եւ որ գլխավորն է հայոց լեզվով: Եթե ամերիկացին այնքան հիմար է. որ գովազդով պետք է «հավատա. որ ծարավ է». ապա մեզ պետք չէ. որ զօր ու գիշեր հանրային հեռուստատեսությամբ կրկնվի այդ հիմարությունը «հավատա ծարավիդ»:

Մամուլի բարձրացրած տագնապը. անհանգստությունը հասկանալի են եւ արժանի լայնամասշտաբ պաշտպանության: Բայց, միաժամանակ, ար-

դարությունը պահանջում է ասել. որ լրատվության առանձին միջոցներ հաճախ անհոգի վերաբերմունք են դրսեւորում լեզվի նկատմամբ եւ փաստորեն օրինականացնում նրա նորմերի ու կանոնների կոպիտ խախտումները: Ավելին. լեզվի մասին խոսում են նրանք, ովքեր նույնիսկ համալսարանական լիարժեք կրթություն չունեն. բայց հանդգնում են հրապարակավ հանդես գալ. մարտական տեսք ընդունելով հարձակվում են լեզվամտածողության ու լեզվաշինարարության դեմ: Եվ Հայաստանի լրատվամիջոցները այդ «լեզվագետ» քաղաքական կաչաղակների լեզվի մեջ ավերածություններ մտցնելու գռեհիկ փորձերը տարածում. նույնիսկ պաշտպանում են:

Առավել զավեշտականն այն է. որ մեր հանրապետության գիտության. մշակույթի նշանավոր գործիչներ. անվանի լեզվաբաններ ու գրողներ ժողովներ են գումարում. դիմումներ. բանաձեւեր ու կոլեկտիվ հայտարարություններ են ընդունում եւ... դրանով ավելի հանրության ուշադրությունը բեւեռում այդ «լեզվագետ» քաղաքական կաչաղակների վրա. որոնց նպատակն էլ հենց այդ է մնալ ուշադրության կենտրոնում. թեկուզ երեսին թքեն:

Սա այդ կաչաղակների մտադրության երեւացող կողմն է: Իսկ խորքում թաքնված է նրանց իսկական նպատակը. բարձրացրած աղմուկով շեղել հանրության ուշադրությունը անգլոամերիկյան կեղտոտ հեղեղի վտանգից:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ հիշեցնել հետեւյալ փաստը: Ինչպես նշվել է այս աշխատանքի սկզբում. Ռեթեոս Պերպերյանն աշխարհաբարի եռանդուն կողմնակիցներից էր: Նրան գրաբարի կողմնակիցները չէին ներում, եւ վարժարանի 25–ամյա հոբելյանի հանդեսին. նրանցից մեկը շատ ընդգծված կերպով, Պերպերյանին խայթելու նպատակով ողջույնի խոսքն արտասանեց գրաբար այդ կերպ հասկացնելով. թե աշխարհաբարը ապագա չունի: Հանդեսին ներկա գտնվող պատրիարք Մ.Օրմանյանը մեղմորեն քննիծաղ տալով նկատում է. թե գրաբարի պաշտպանները դեռ իրենց զգում են 19–րդ դարում:

Հայոց լեզվի մաքրության. նրա օրինաչափ զարգացման խնդիրները միշտ էլ գտնվել են մեր մեծերի ուշադրության կենտրոնում. եղել նրանց հոգածության առարկան: Ռուբեն Սեւակն էլ տեսնում էր վերոհիշյալ կաչաղակների հասցրած վնասները եւ իր սիրելի ուսուցչի օրինակով վճռակամորեն պայքարում էր հայոց լեզվի արեւմտահայ հատվածի մաքրության համար: Նա ծաղկում էր նրանց. ովքեր լեզվի հարցում զբաղվում էին ճամարտակությամբ. քարոզում գաղափարազրկություն եւ իրենց ապաշնորհությունը կոծկում «արվեստը արվեստի համար» հետադիմական սկզբունքով:

«Չէ՞ք տեսներ արդեն.– գրում էր Ռուբեն Սեւակը.– թէ ինչպէս շատ մը գրագետներ լիրբ քաջութիւնը ունին յայտարարելու. թէ ժողովուրդին համար չէ որ կը գրեն: ...Հեռու մենք ախտագին մտաւորականներ ... ովքեր

սրտաբուխ. յուժկու բարբառի փոխարէն չինարէն տաղեր կը գրեն. որպէսզի մարդ մը չը հասկնայ»:

Այսպիսի պահանջկոտությամբ հանդես եկող Ռուբեն Սեւակը չափազանց ուշադիր է եղել իր բանաստեղծական ամեն խոսքի. արտահայտության նկատմամբ: Այդ են վկայում բանաստեղծությունների տեքստերի վրա նրա կատարած բազմաթիվ խմբագրումները եւ ուղղումները: Ռուբեն Սեւակը. որ իր լեզվի հարստությամբ ու ճոխությամբ դարձել էր օրինակ, պահանջում էր մաքուր պահել մայրենի լեզուն:

Ռուբեն Սեւակն ապրում էր իր ժամանակի մեջ. իր ժամանակակիցների հետ. իր միջավայրում: Բայց նրա ոգին պատկանում է ապագային: Նա քայլում է ներկա ու գալիք սերունդների հետ:

Թող այնպիսի տպավորություն չստեղծվի. թե ինձ պատմաբանիս թվում է. որ Ռուբեն Սեւակի ստեղծագործական ուղին պարզ ու հեշտ է եղել: Ընդհակառակը: Ռուբեն Սեւակն անցել է դժվար ուղի: Եվ այդ ուղին է. որ նրան ստեղծագործական առաջին տարիներին ունեցած լիրիկական միայնությունից ու երազանքներից հասցրեց ժողովրդին ու հայրենիքին:

Բոլոր բանաստեղծները չէ. որ կարողանում են հաղթահարել այդ ճանապարհին եղած դավադիր հրապուրանքները: Իսկ իմ պատկերացմամբ դա Ռուբեն Սեւակին հաջողվեց. որովհետեւ ստացել էր Հովհաննես Չիլինկիրյանի նման լայնախոհ հոր դաստիարակությունը. վայելել էր վարժարանի տնօրեն Ռ.Պերպերյանի համակրանքը. առնչվել էր առաջադեմ մտածողներին. ծանոթ էր եվրոպական կյանքին: Ավելացնենք նաեւ Ռուբեն Սեւակի անձնական հատկությունները՝ ազնվությունը. քաղաքացիական պարտքի զգացումը. սկզբունքայնությունը. համարձակությունը. շրջահայացությունը:

Ահա այս ամենի շնորհիվ էր. որ Ռուբեն Սեւակը կարողացավ հոգեւոր ուժերի մեծ լարումով վեր բարձրանալ իր շրջապատի գրական–հասարակական միջավայրից:

Ռուբեն Սեւակին վիճակվեց դառնալ 20–րդ դարի սկզբի խոշոր իրադարձությունների վկան. մասնակիցը. նաեւ դրանց անմեղ զոհը: Ազգային–ազատագրական պայքար. Առաջին համաշխարհային պատերազմ. հայ ժողովրդի մեծ ողբերգություն՝ սրանք են այդ խոշոր իրադարձությունների եւ տեղաշարժերի գլխավոր հանգրվանները: Եվ պատմական այդ կարեւոր սահմանագլխին հայտնված Ռուբեն Սեւակը չէր կարող իր գործերում չարտահայտել այդ բեկումնային ու շրջադարձային ժամանակաշրջանի էական. բնորոշ գծերը: Ռուբեն Սեւակի ժամանակը հագեցած էր բացառիկ բուռն ու ողբերգական իրադարձություններով: Չգիտեմ. գուցե խաղաղ ու միապաղաղ պայմաններում Ռուբեն Սեւակի ստեղծագործական կյանքն ընթանար հանգիստ վիճակում: Բայց նրան բաժին էր հասել ուրիշ ճակատագիր: Նրա ապրած տարիների ողբերգական իրա-

դարձություններն էլ ծեւավորեցին տագնապով լեցուն Ռուբեն Սեւակի կյանքն ու գործը, նրա պոեզիան:

Ռուբեն Սեւակի պոեզիայում վեր է հառնում տանջվող ու տառապող, բայց եւ գեղեցիկ հայրենիքի վեհ պատկերը:

Ուշադիր կարդանք Հայրենիք–Հայաստանին նվիրված Ռուբեն Սեւակի չափածո եւ արձակ գործերը: Այնտեղ կգտնենք վիշտ ու ափսոսանք, բայց հուսահատության ոչ մի նշույլ: Հայաստան հայրենիքի թեման ներծծված է խոր լավատեսությամբ: Այստեղ միայն ուզում եմ հիշել, որ 1910թ. դեկտեմբերի 10–ին գրած «Առջի հայերը» բանաստեղծության մեջ Ռուբեն Սեւակը, նկատի ունենալով Ախուրյան գետի ափին գտնվող Անիի ավերակները, գրել է, ավելի ճիշտ՝ քանդակել է հետեւյալ տողերը. «Ազգերը կնքեր են վրան «Մահ հայուն», բայց միւս երեսին վրայ «Անմահութիւն» գրեր են հայերը...»230:

Կարդում ես Ռուբեն Սեւակին եւ համոզվում, որ իսկապես հայրենիքը միայն այն հողը չէ, որի վրա ծնվել եւ ապրում ենք, որը մեզ շնորհվել է որպես կյանք: Մեր ժամանակը նույնպես մեր ընդհանուր հայրենիքն է, որին նույնպես չի կարելի դավաճանել, որին հարկավոր է փրկել, որպեսզի մեզնից հետո էլ մնա կենդանի ու պտղաբեր: Հայրենիքը նաեւ մեր պատմությունն է, որի նկատմամբ պետք է ունենալ հարգալից վերաբերմունք, որից պետք է սովորել:

Ռուբեն Սեւակը պահանջում էր ճանաչել «ազգային պատմութեան այբը»321: Նա չի գրել հատուկ պատմագիտական աշխատանք: Բայց նրա գործերում զանազան առիթներով շոշափվում են ազգային պատմության պրոբլեմներ: Դրանից էլ կարելի է որոշակիորեն ասել, որ եթե Ռուբեն Սեւակին վիճակվեր երկար ապրել, ապա նա անպայման կստեղծեր պատմագիտական աշխատություն: Ափսոս, շատ ափսոս, որ այդպես չեղավ:

Ինչեւէ, փորձեմ, գոնե ընդհանուր գծերով անդրադառնալ Ռուբեն Սեւակի պատմագիտական մտորումներին եւ դրանից էլ ելնելով կատարել մի քանի ընդհանրացում: 1908թ. հուլիսի 18–ին գրած «Լալիք զաւեշտը» անչափ կարեւոր ու հրատապ հարցադրումներով հոդվածում նա ընդգծել է. «Անին ռուս Մառ մըն էր, որ կը պեղէ: Մեր լեզո՞ւն գերմանացի բանասէրները կը զբաղուին անով: Մեր ազգային հնութիւննե՞րը Ս.Բեթրսպուրկի եւ Մոսկուայի արքայական թանգարանները գացէք փնտռել զանոնք: Մեր ծեռագիր ամենարէժք մագաղաթնե՞րը. Լոնտրայի միւզէն: Մեր պատմութի՞ւնը. Եւրոպայի պատմաբաններու գրչին տակ...»232:

Ուշադիր կարդանք Ռուբեն Սեւակի այս կշտամբանքը: Արդյո՞ք չի չափազանցնում, գույները չի՞ խտացնում: Համոզված կարող եմ ասել՝ ոչ: Ամեն ինչ ճիշտ է ասված: Ասված է սպառիչ դիպուկությամբ:

Ռուբեն Սեւակի վրդովմունքն արդարացի է ոչ միայն նրա համար, որ մեր

ազգային պատմամշակութային արժեքները գտնվում են Հայաստանից դուրս. այլ նաեւ նրա համար. որ Եվրոպայի բանասերներն ու պատմաբանները. զբաղվելով մեր լեզվով ու պատմությամբ. թույլ են տալիս սխալներ. անտեղյակության պատճառով ու կամայականորեն կեղծում ու աղավաղում մեր պատմությունը. մեր ժողովրդի ծագումնաբանությունը:

Որ Ռուբեն Սեւակի զայրույթը ճիշտ էր ու տեղին. հիշեցնեմ միայն մի փաստ: Հանգամանքների բերումով. մինչեւ 19–րդ դարի առաջին կեսերը. հայոց պատմությամբ հիմնականում զբաղվում էին այն գործիչները. որոնց գրվածքների վրա իրենց ամբողջ դոգմատիկ ծանրությամբ ընկած էին կրոնական կանխադրույթները: Մեր հոգեւորական պատմիչներն ու պատմագիրները անասելի հրճվանքով էին նշում. որ Արարադ երկիրը հիշատակվում է Աստվածաշնչի մեջ եւ մեր ժողովրդի պատմությունն էլ սկսվում է Նոյի տապանից ու ջրհեղեղից: Նրանց բոլորովին չէր հետաքրքրում. թե այդ Հայաստան կոչված երկիրն ինչ էր եղել աստվածաշնչյան ջրհեղեղից առաջ. եւ կուրորեն մեր պատմությունը կապեցին մի օտար ժողովրդի կրոնական առասպելների հետ:

Մինչ մեր կրոնական պատմիչ–պատմագիրները երանության մեջ էին. եվրոպացի ճանապարհորդները հայտնաբերեցին Միջագետքում. Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ ավերակներ ու սեպագիր արձանագրություններ: Այդ ամենով սկսեցին զբաղվել եվրոպացի հետազոտողները: Նրանց ջանքերով էլ աշխարհին հայտնի դարձան Աքեմենյան Պարսկաստանի մայրաքաղաք Պերսեպոլիսը. Բաբելոնը. Տուշպան եւ այլն:

Հայտնաբերեցին նաեւ դրանք կերտող ժողովուրդներին: Նրանք հայտնաբերեցին նաեւ Վանա լճի շրջակայքում եղած հռչակավոր կառույցների ու հուշարձանների հեղինակ ժողովրդին նրան կնքելով «ուրարտացիներ» անունով...

Այսպիսով. Հայաստանի բուն տարածքում հայտնաբերվեցին հարուստ ու անկրկնելի մշակութային արժեքներ: Եվ քանի որ դրանք ոչ մի առնչություն չունեին Աստվածաշնչի առասպելի հետ. մեր հոգեւորական պատմիչները դրանց ոչ մի ուշադրություն չդարձրին. տեր չկանգնեցին: Ո՞վ գիտե. գուցե նաեւ վախենում էին. որ եթե դրանց տեր կանգնեին եւ ընդունեին որպես հայոց պատմության անքակտելի մաս. ապա կրոնական առասպելը հօդս էր ցնդելու...

Ճիշտ է. երկու հայ գիտնականներ Քերովբե Պատկանյանն ու Հովսեփ Սանտալճյանը. փորձեցին ուրարտական սեպագիր արձանագրությունները վերծանել հայերենի միջոցով. բայց նրանք մնացին մենակ եվրոպացի դիրք ու հեղինակություն ունեցող հետազոտողների դեմ դիմաց: Եվրոպական գիտությունն արդեն քմահաճորեն որոշել էր ուրարտական քաղաքակրթություն ստեղծող ժողովրդի հասցեն...

Ահա այս ամենի արդյունքում գիտության մեջ ստեղծվեց այն կեղծ տեսությունը. թե հայերը Ուրարտուի հետ որեւէ առնչություն չունեն. եւ հայ ժողովրդի կազմավորումը դիտվեց որպես Ուրարտուի անկումից հետո կատարված իրողություն:

Պահանջվեցին տասնյակ տարիներ ու բազմաթիվ հայ եւ օտար գիտնականների հսկայական ջանքեր. որպեսզի ուղղվեր այդ թյուրիմացությունը եւ վերականգնվեր պատմական ճշմարտությունն այն մասին. որ Ուրարտուն ու Հայաստանը նույն երկիրն են. որ այդ նույն երկիրը կերտել է նրա բնիկ ժողովուրդը հայ ժողովուրդը: Վերոհիշյալ պրոբլեմը միայն պատմագիտական նշանակություն չունի: Այն ունի նաեւ քաղաքական նշանակություն: Որովհետեւ մինչ օրս էլ լսվում են ձայներ թե մեր իրականության մեջ եւ թե դրսում. որոնք դարձյալ հին երգն են երգում Ուրարտուն անջատելով Հայաստանի ու նրա ժողովրդի պատմությունից: Առանձնակի ուժով են աղմկում ժամանակակից թուրքական պատմահեները. որոնք ճգնում են ապացուցել, թե թուրքերը եկվոր չեն. այլ հայերի կողմից ոչնչացված ուրարտացիների ժառանգներն են: Այս թուրքական պատմահեներն իրենց կեղծիքների մեջ այնքան են առաջ անցել. որ նույնիսկ հայտարարեցին. թե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կոտորել են հայերին. որպեսզի վրեժ լուծեն թուրքերի նախնի ուրարտացիների համար...

Սակայն թուրքական պատմահենների եւ մյուսների ջանքերն այլեւս ոչինչ չեն կարող անել. որովհետեւ վերջնականապես պատմագիտությունը փաստել է, որ Ուրարտուն նույն Հայաստանն է: Այս ֆոնի վրա զավեշտական է, որ մեր եկեղեցական գործիչները շարունակում են կառչած մնալ օտար ժողովրդի առասպելին եւ միշտ առաջին պլան են մղում ջրհեղեղի պատմությունը: Ժամանակը չէ՞. որպեսզի մեր եկեղեցին պատմական ճշմարտությունը հաշվի առնի եւ աստիճանաբար հրաժարվի վերոհիշյալ դոգմայից. մի դոգմա, որի կրկնությունը որեւէ օգուտ չի տալիս մեր ժողովրդին:

Իր ժամանակին Ռուբեն Սեւակը ծաղկում էր նրանց. ովքեր չգիտեին ու չէին պաշտպանում սեփական երկրի պատմությունը: Այդ նրանց նկատի ուներ նա. երբ գրում էր. «... առանց իսկ մեր Ազգային պատմութեան ԱՅԲԸ ճանչնալու. կ'ելլենք ու Ազգային երեսփոխան կ'ընտրուինք»233:

Ռուբեն Սեւակն այս գնահատականը տվել է 1908թ.: Հիմա. երբ գրում եմ այս տողերը. 2002 թվականն է (հուլիսի 12–ը). ուշադիր նայենք մեր չորս կողմը, մինչեւ Ազգային ժողով եւ ավելի հեռու... Մի՞թե Ռուբեն Սեւակի գնահատականը այժմեական չէ:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ հիշել Հեգելին: Գերմանացի փիլիսոփան ասում էր. թե ամբողջ պատմությունը սովորեցնում է միայն մի բան. այն. որ նրա դասերի վրա ոչ ոք չի սովորում: Այսօր արդեն Հեգելի կարծիքը կարելի է լրացնել ասելով. եթե այժմ էլ պատմության դասերից

չսովորենք ու չճանաչենք նրա «ԱՅԲԸ». ապա հենց այդ պատմությունն էլ կդադարի գոյություն ունենալուց. եւ ընդհանրապես կվերջանան ամեն ինչ. ամեն դաս:

Նույն հոդվածում Ռուբեն Սեւակը գրել է նաեւ հետեւյալը. «Եգիպտոս իր անդրպատմական սփինքսին խորհուրդին մէջ կը գտնէ իր փառքերուն աստուածացումը: Յունաստան իր երբեմնի շքեղ ոսկեդարուն վրան է. որ կը յամառի պահել իր գոյութեան արդարացումը: Լատին զօրութիւնը դեռ հինն Հռովմայ աւերակները կը յուզէ: Ամբողջ ազգութիւնները իրենց անցեալին մէջ կը գտնեն ապագային արտացոլումը: Ու միայն մենք ենք. աւաղ. քսան անգամ դարաւոր Հայերս, որ յոժարակամ կ'անգիտանանք մեր դեռ երեկի պատմութիւնը...»234:

Ռուբեն Սեւակը կարծես գուշակում էր եւ կարողացավ մտովի հեռու նայել, հասնել մինչեւ 20–րդ դարի վերջը եւ հայոց ապագա սերունդներին զգուշացնել այն վտանգի մասին, որն այսօր. դժբախտաբար. դարձել է իրողություն:

«Ինչո՞ւ,– տագնապով հարցնում է Ռուբեն Սեւակը,– մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ–քիչ կը բարակնայ»: Իրեն հուզող այս հարցին Ռուբեն Սեւակն ունի իր պատասխանը: Ահա այն. «Գլուխը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հեռու չէ գուցէ այն օրը. երբոր վիզը փրթելով մեր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը անգլուխ մարմին մը... ոչ. հօտին ու հովիւներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէ եղած»235:

Կարծում եմ. արժե հիմա տեղափոխվել մեր ժամանակաշրջան եւ այն դիտել Ռուբեն Սեւակին հուզող տագնապի տեսանկյունից:

Մեր ժողովրդի անցած պատմական ուղին վկայում է. որ մշակույթը ժողովրդի կենդանի ոգին է. որ վերջապես հասարակության նպատակների իրականացումն անցնում է մշակույթի միջոցով. առանց որի քաղաքականության եւ տնտեսության ասպարեզներում ոչ մի հաստատուն. կայուն առաջընթաց չի լինելու:

Վերլուծելով վերջին տարիներին մեր մշակույթի ճգնաժամի ընթացքը ուզում եմ առանձնացնել դրա միայն մի քանի պատճառ. որոնք. իմ համոզմամբ. հիմնականն են եւ պահանջում են հրատապ լուծում:

Առաջին. մշակույթի ճգնաժամը կապված է նախկին տարիների սոցիոմշակութային մոդելի ավերման. մարդկանց մի քանի սերունդների մոտ արմատացած արժեքային կողմնորոշիչների բեկման հետ: Այդ բեկումն այնքան վճռական ու ընդգրկուն եղավ. որ նրա հետեւանքների վերացումն արդեն դարձել է անհնարին:

Իհարկե. կարելի է սիրել կամ ատել «այն երկիրը». «այն մշակույթը». բայց եթե առաջնորդվենք հին ու փորձված սկզբունքով. որը թելադրում

է չանիծել, չծաղրել, այլ հասկանալ, իմաստավորել, ապա իշխանությունները պետք է գիտակցեն, թե ինչ փոփոխություններ են կատարվում մարդկանց հոգում եւ գիտակցության մեջ: 1918–20թթ. հետո հայ իրականության մեջ արդեն երկրորդ անգամ մեր մշակույթին ծանր հարված է հասցվում մեր օրերում: Երկրից հեռացան մշակույթի շատ գործիչներ: Ավելին, բազմաթիվ ուսուցիչներ, գրադարանների աշխատողներ, ինժեներներ, գիտնականներ եւ այլք օրվա հաց ճարելու համար ստիպված թողեցին իրենց մասնագիտությունը:

Մշակույթի ճգնաժամը մեծապես նպաստեց հայկական Սփյուռքի մասշտաբների ծավալմանը: Այս երեւույթի սոցիալական եւ հոգեւոր վնասների չափը, որքան ինձ հայտնի է, պետական մակարդակով դեռեւս չի չափվել ու չի իմաստավորվել: Չեմ սխալվի, եթե Սփյուռքի ընդլայնումը գնահատեմ որպես ազգային աղետ: Վերջապես, թե ում է ձեռնտու Սփյուռքի ընդլայնումը, արդեն վերեւում այդ մասին հանգամանորեն խոսվել է: Բայց գլխավոր հարցը մնում է հետեւյալը: Հայաստանի իշխանություններն ի վիճակի՞ են արդյոք կասեցնել Սփյուռքի ծավալումը, այն էլ Հայաստանից արտագաղթածների հաշվին, ըմբռնել դրա աղետալի հետեւանքները:

Երկրորդ, իմ համոզմամբ, մշակույթի խորացող ճգնաժամը կապված է հասարակության սոցիալական շեշտակի շերտավորման հետ: Երկրում, որտեղ ոչ վաղ անցյալում գործնականում կար բնակչության միատարր կազմ, տեղի է ունենում սոցիալական սրընթաց շերտավորում: Շատ կարճ ժամանակում երեւացին գերհարուստները: Աղքատացման պրոցեսն այլեւս անկարելի է կասեցնել:

Եվ մարդկանց հսկայական մասի ֆիզիոլոգիական մահացման վտանգի պայմաններում ավելի ռեալ է դարձել ամբողջ հասարակության ֆիզիկական ու մշակութային դեգրադացիայի հավանականությունը: Մարդու մեջ օրգանապես զուգորդվում են ինքն իրեն վերարտադրելու, մշակութային արժեքներ ստեղծելու կարեւորագույն ֆիզիոլոգիական ու սոցիալական որակներ: Մինչդեռ, լոկ գոյությունը պահպանելու հոգսով ապրող մարդը դառնում է միայն ֆիզիոլոգիապես ինքն իրեն արտադրող եւ մնացած ամեն ինչ ենթարկում է կենդանի մնալու պահանջին:

Ափսոս, որ իմ տրամադրության տակ չունեմ պաշտոնական տվյալներ, բայց ամեն ինչից երեւում է նաեւ, որ նկատելիորեն նվազում է երկրի բնակչության բնական աճը: Այսպիսի պայմաններում, բնականաբար, ավելի ու ավելի է դժվարանում խոսել մշակույթի որպես ժողովրդի կենդանի ոգու մասին:

Հասարակության շերտավորումը բերել է նաեւ մշակույթի շերտավորում: Արդեն գոյություն ունի երկու մշակույթ: Մեկը ամբողջ ժողովրդի մշակույթն է, մյուսը նոր առաջացող բուրժուազիայի կամ «նոր հայերի» մշակույթը: Այդ

երկուսի միջեւ սկսել ու ընթանում է անհաշտ պայքար: Ժողովրդին պատկանող մշակույթին պետությունը հատկացնում է չնչին միջոցներ. եւ այն խեղդվում է խեղճության ճիրաններում: Հատուկ եռանդով մոռացության են դատապարտվում Խորհրդային Հայաստանի գրականությունն ու արվեստը. մշակութային արժեքները. որոնք իրենց մարդասիրական էությամբ հակադրվում էին անմարդկայնությանը. ընչաքաղցությանը. շահադիտությանը:

«Նոր հայերը» եւ նրանց ծառայող մարգինալ. լումպենացված խավը. իրենց ձեռքը գցելով հսկայական հարստություն, այժմ ձգտում են լեգալացնել իրենց մշակույթը. ապահովել նրա գերակայությունը մշակույթի մյուս տիպերի նկատմամբ: Ցածր որակի արժեքների հզոր հորդումը մեր իրականության մեջ դրա կոնկրետ արտահայտություններից է: Հասարակության մեջ կատարվում է մշակութային հիմնարկությունների. ինչպես նաեւ մտավորականության զանգվածային վերակողմնորոշում դեպի խոշոր ունեւորների հոգեպես աղքատ. նորօրյա «երիտհայերի» կողմը:

Ասվածից կարելի է եզրակացնել. որ քանի մշակութային բեւեռացումը շարունակվում է. այդպիսի պայմաններում սոցիալական համաձայնության հասնելը դարձել է ավելի պրոբլեմատիկ:

Երրորդ. ներկա հայկական հասարակության մեջ ստեղծվում է այնպիսի սոցիոմշակութային միջավայր. որը հենց սկզբից թշնամաբար է տրամադրված մարդու էությանը: Մեր հասարակությունն արագ թռիչք կատարեց կոլեկտիվ, համընդհանուր արժեքներից դեպի անհատապաշտություն: Դրա արդյունքում ուժեղացել է մշակույթի նկատմամբ ուտիլիտար վերաբերմունքը. հասարակական կյանքի լայն պրոբլեմներից մարդու հեռանալը դեպի սպառողականություն: Եվ այստեղ. իմ համոզմամբ. ցավալին այն է. որ անհատապաշտությունը դառնում է պետության պաշտոնական գաղափարախոսությունը: Սոցիալական նշանակության այն զգացողությունը. որ ուներ Խորհրդային Հայաստանի քաղաքացին. փոխարինվել է ոչ լիարժեքության բարդույթով (չունես հարստություն. ուրեմն ոչինչ ես): Եվ մարդու համար սեւեռուն եւ գերագույն ու միակ նպատակ է դառնում հաղթահարել այն ինչ գնով էլ որ լինի:

Մարդու սոցիալապես անպաշտպանվածությունը. տարիներ շարունակ ապրած սթրեսային լարվածության մթնոլորտը. սովորական դարձած մշակութային միջավայրից օտարվելը. սոցիալական կապերի խզումը. անհատապաշտության եւ հարստություն կուտակելու գաղափարախոսության հաստատումը. նախորդ սերունդների ձեռքով ստեղծված արժեքների անգուսպ ծաղրը ծեւավորել են մարդու նոր գենոտիպ: Դա հոգեպես ու բարոյապես ամայացած. հայրենի հողի ու մշակույթի հետ կապը կտրած մարդն է: Ինձ այս տխուր եզրակացությանն է բերում նաեւ ԱՄՆ–ի դեսպանատան առջեւ օր օրի ավելացող հերթերի գոյությունը:

Մեր իրականության մեջ նոր երեւույթ է դարձել մտածողության աղետալի խեղվածքը: Պատմականորեն դատապարտվածի զգացումը («թող ինչ ուզում է լինի. միեւնույն է. ելք չկա») ընդգրկել է հասարակության բազմաթիվ շերտեր: Անվստահության. տագնապի ու վախի զգացումը համակել է հսկայական թվով մարդկանց: Ասվածին ավելացնեմ անտարբերության ժանգը. եւ ամբողջ պատկերը պարզ կլինի:

Որքան խորանում են շուկայական հարաբերությունները. որքան կապիտալիզմը ամրապնդվում է. այնքան ուժեղանում է մարդկանց մոտ վախի ֆենոմենը բնակարանն ու աշխատանքը կորցնելու. հիվանդանալու. գոյության միջոցներից զրկվելու. սպանվելու. խեղանդամ դառնալու. թալանվելու. բռնության ենթարկվելու վախը:

«Վախի հասարակության» նովացիաների ազդեցությամբ շարունակվում է զանգվածային մշակութային գործունեության վերակոշմնորոշումը հանրայինից դեպի տնային ծեւը: Շատերի համար բնակարանը դարձել է այն միակ կենսական տարածքը. որտեղ մարդը. մնալով միայնակ. ինք իր հետ. կարող է արտահայտել իր էությունը: Դա կատարվում է հատկապես քաղաքներում. որտեղ մարդն օտարացված է ոչ միայն բնությունից. այլեւ սեփականությունից. իշխանությունից. մշակույթից եւ այլն. այլ խոսքով մարդը օտարացել է իր սոցիալ–մշակութային էությունից:

Շուկայական հարաբերությունների հորձանուտի մեջ հայտնված ազգային մշակույթի քայքայումը տանում է դեպի անհատի կործանում: Սոցիալական արմատներից զրկված մարդը դառնում է այնպիսի հատկությունների կրող. ինչպես. օրինակ. ագրեսիվությունը. փառասիրությունը. ծայրահեղ եսամոլությունը: Այս միջավայրից էլ դուրս են եկել նրանք. ովքեր մերժում են հասարակական բարոյականությունը եւ գործում են զոոլոգիական սկզբունքով:

Չորրորդ. տեղի ունեցավ մշակութային զանգվածային կոմերցիալիզացիա: Սեփականության մասին ընդունված օրենքներով քաղաքների ու գյուղերի սոցիալ–մշակութային ոլորտը փաստորեն մնացել է առանց հոգատար տերերի: Դրա արդյունքում կրճատվել են մշակութային հիմնարկները. նրանց նյութական բազան օգտագործվում է կոմերցիայի նպատակներով:

Մշակույթի կոմերցիալիզացիան ոչ միայն կրճատել է մշակութային «դաշտը». այլեւ ստեղծել է մրցակցության մթնոլորտ. որտեղ. ինչպես հայտնի է. հաղթում է ուժեղը: Այսօր արդեն ակնհայտ է դարձել. որ ֆինանսատնտեսական տեսակետից անպաշտպան ազգային մշակույթն արագորեն իր տեղը զիջում է դրամական եւ տեխնիկական հզոր հիմք ունեցող ամերիկականին: Միայն ցավով պետք է ընդգծել. որ մեզանում իրական է դարձել մշակույթի ազգային ոգու կորստի եւ այն ամերիկանացնելու վտանգը:

Ամերիկական ասելով ես նկատի չունեմ այն մեծ արվեստը. որ ստեղծ-

վել է Արեւմուտքում: Խոսքը էժան. ընդօրինակման հեշտ «արվեստի» մասին է: Մի՞թե հնարավոր է առանց ցավի նայել այն հեռուստաշոուները. որտեղ մանկական բազմաթիվ պարախմբեր թռչկոտում են հառլեմյան թափառաշրջիկների արտասանություն–ռիթմերի տակ: Ամերիկացիները դրանք չեն լսում ու չեն դիտում որպես թաղամասային արվեստ: Տեսե՞լ կամ լսե՞լ եք. որ սեւամորթ կամ պուերտոռիկացի թափառաշրջիկ երգիչները երբեւէ հայկական երգ կամ պար կատարեն: Իսկ մեր երեխաներն այնպես են կապկում. ասես իրենք ու իրենց պարուսույցները Հառլեմից հենց նոր գաղթել են Հայաստան:

Այս ամենը տանում է դեպի մեր ազգային յուրահատկություններով օժտված. պատմականորեն ձեւավորված մշակույթի մարում. քանի որ մշակութային կյանքի հատկությունը ստեղծագործությունն է եւ ոչ թե օտարին. տվյալ դեպքում ամերիկականին. կրկնելն ու նմանակելը: Այս. մեղմ ասած. անշնորհակալ գործով ամենից շատ զբաղվում է հանրային հեռուստատեսությունը. որի գործունեությունն իսկապես համազգային հսկողության ենթարկելը վաղուց հրամայական պահանջ է դարձել:

Անդրադառնամ նաեւ մի հարցի եւս: Ուզում եմ հրապարակավ դիմել նրանց. ովքեր ինձ հետ չեն համաձայնում եւ հաճախ ինձ ասում են. թե իմ վախը շատ եմ թանձրացնում: Նրանք իմ ընդդիմախոսները. դեռ անկեղծ անմիջականությամբ մտածում են. թե Հայաստանի վրայով անցել են բազմաթիվ փոթորիկներ. եկել ու անցել են պարսիկներն ու թուրքերը. սելջուկներն ու թաթար–մոնղոլները. վերջապես եղել է Հայոց ցեղասպանությունը. բայց մենք դիմացել ենք. ապրել ենք: Եվ հիմա էլ կդիմանանք:

Այո. այդ բոլորը ճիշտ է: Բայց անցած դարերում այդ ամենը պարտադրվում էր. եւ մենք դիմակայում էինք: Այժմ մենք ընդօրինակում ու դրա առաջ բացում ենք մեր դռները: Մեր պատմությունն այս առումով ունի շատ փաստեր: Հիշեմ դրանցից մեկը: Մեր երկիր ներխուժած զավթիչները միշտ հանդիպել են ժողովրդի դիմադրությանը: Այդ նվաճողները հաճախ իրենց առջեւ փակ են տեսել Հայաստանի դարպասները: Բայց հենց որ այդ նույն նվաճողները Հայաստան եկան քրիստոնյայի հեզ դիմակի տակ ծպտված. իրենց առջեւ տեսան դարպասները բաց... ու սկսեցին մեզ թելադրել իրենց կամքը: Եվ մենք հնազանդվեցինք կորցնելով մեր հեթանոսական. այսինքն ազգային մշակույթը իր բոլոր գանձերով գիրը. գրականությունը. թատրոնը. ճարտարապետությունը եւ այլն: 1700 տարի առաջ կորցրածը այլեւս վերականգնել հնարավոր չէ: Բայց դրանից դաս առնելը ՊԱՐՏԱԴԻՐ է: Որովհետեւ արդի աշխարհը զարգանում է դեպի գլոբալ հասարակություն. որը կատարվում է ԱՄՆ–ի կամքով ու թելադրանքով: Դա տանում է քաղաքակրթությունների բախում: Այսպիսի պայմաններում մեզ համար շատ կարեւոր է. թե Հայաստանն ինչ տեղ կգրավի գլոբալ հասարակության մեջ:

Մինչդեռ մեզ պարտադրված կիսագաղութային դեմոկրատիայի պատճառով Հայաստանը կորցնում է ինքնուրույն պատմական էվոլյուցիայի հնարավորությունը: Մեզ հատկացված է երկրորդական դեր, որն արտահայտվում է ազգային մշակույթը շուկայական հորձանուտի մեջ նետելով: Եվ ստեղծված պայմաններում եթե մենք բոլորս միասնական ուժերով չպահպանենք մեր ազգային մշակույթը, ապա վաղը շատ ուշ կլինի: Վաղը ոչ թե Կոմիտասի, այլ հարյուրավոր Կոմիտասների կարիք կլինի մեր մշակույթը աղբից մաքրելու համար:

Ապագա սերունդները մեզ չեն ների, իրենց մատը քունքի վրա պտտեցնելով մեզ չեն ների, եթե չկարողանանք իրականացնել հայ ժողովրդի գոյատեւումն ապահովող գլխավոր միջոցներից մեկը մշակույթը պահպանելու եւ ազգային հոգեւոր արժեքները նրանց փոխանցելու մեր սրբազան պարտքը:

Ասվածից կարելի է եզրակացնել, թե որքան ճիշտ էր Ռուբեն Սեւակը կանխատեսում մեր օրերին կատարվող սոցիալ–քաղաքական տեղաշարժերը, որոնք ընդգրկել են կյանքի բոլոր ասպարեզները:

Շարունակելով մտորել Ռուբեն Սեւակի կանխատեսումների շուրջ ուզում եմ մի խնդիր եւս շոշափել: Խոսքը շուկայական հարաբերությունների պայմաններում բարոյական արժեքներին է վերաբերում:

Այսօր արդեն Հայաստանում շատերն են տեսնում, որ իրականացվող «ռեֆորմները» ավելի են վատացրել հասարակության հոգեւոր կյանքը: Քիչ չեն նաեւ նրանք, ովքեր խոսում են Հայաստանի հոգեւոր վերածննդի անհրաժեշտության մասին եւ շարունակում են հավատալ, թե դա հնարավոր է, եթե այդ «ռեֆորմները» դարձվեն քաղաքակիրթ, որի տակ հասկանում են արեւմտյան տիպի, ավելի շատ ամերիկյան սոցիալ–քաղաքական համակարգի սկզբունքներով: Այսպես դատելը, իհարկե, ինքնախաբեություն է, որովհետեւ շուկայական հարաբերությունների պայմաններում անմտություն է հասնել հասարակության բարոյական վերածննդին:

Շահույթ ստանալու ծգտում ահա կապիտալիստական համակարգի գլխավոր շարժիչ ուժը: Ժամանակակից ամերիկյան սոցիոլոգ Ռ.Միլսը կապիտալիստական քաղաքակիրթ աշխարհը գնահատել է հետեւյալ կերպ. «Մարդկային հասարակության բոլոր հնարավոր արժեքներից մեկը, միայն մեկն է ամենաբարձրը համարվում, դա փողն է»:

Հայաստանում «քաղաքակիրթ ռեֆորմների» կողմնակիցների համար շահույթ ստանալը, այսինքն ընչաքաղցությունը, նույնիսկ առաջադիմական է, քանի որ արդյունք է բերում: Բայց մարդկության ամբողջ պատմության ընթացքում ընչաքաղցությունը համարվել է մարդու հոգին կործանող ահավոր արատներից մեկը: Այստեղ ինչպես չհիշես հռոմեացի պատմիչ Պլուտարքոսին, որը Հայաստան արշաված Կրասոսի մասին թողել է հետեւ-

յալ վկայությունը. «Կրասոսի բազմաթիվ արատներ խամրում էին նրա մեկ արատի ընչաքաղցության առջեւ»: Հին Կտակարանն էլ է արծաթասիրությունը համարել մահացու մեղք:

Ընչաքաղցության նկատմամբ վերաբերմունքը չի փոխվել նաեւ նոր ժամանակներում: Հենց դա է փաստում ամբողջ արեւմտյան գեղարվեստական գրականության հակաբուրժուական. հակակապիտալիստական բնույթը: Եվ այդպիսի վերաբերմունքը լիակատար հիմնավորված է, որովհետեւ ընչաքաղցությունը. տիրապետելով մարդու ներքնաշխարհին. արատավոր կերպով ձեւախեղում է նրան բթացնելով հոգեւոր արժեքները գնահատելու ունակությունը:

Բուրժուական. կապիտալիստական սոցիալ–տնտեսական համակարգի սուրբ սրբոցը մասնավոր սեփականությունն է: Եվ Հայաստանի «բարեփոխիչները», հետեւելով արեւմտյան արժեքները պարտադրող ամերիկյան թելադրիչներին. եռանդով քարոզում են. թե սեփականություն ունենալը ազնվացնում է մարդուն, անհրաժեշտ պայմաններ ստեղծում անհատի զարգացման համար:

Պրուդոնը մասնավոր սեփականությունը համարում էր գողություն: Իսկապես. այսօրվա Հայաստանի ո՞ր հարուստին կարելի է ցույց տալ, որ իր սեփականությունն ստեղծած լինի սեփական աշխատանքով ու քրտինքով: Չկա այդպիսին: Նրանք կարողացան ճարպկորեն օգտվել ստեղծված պայմաններից եւ չնչին միջոցներ ծախսելով տիրացան Խորհրդային Հայաստանի 70 տարիներին բազմաթիվ սերունդների ջանքերով ստեղծած համաժողովրդական հսկայական ունեցվածքին: Եվ նրանք այդ նոր սեփականատերերը. առանց ամոթի իրենց գողացածը ներկայացնում են առանձնակի հպարտությամբ եւ իբրեւ շուք իրենց թալանի ցուցադրմանը հրավիրում են բարձրաստիճան իշխանավորներին կտրելու ժապավենը: Եվ նրանցից ո՞ւմ հոգեւոր ներաշխարհն է ազնվացել: Կարո՞ղ են «բարեփոխիչները» գոնե մեկին ցույց տալ:

Ընչաքաղցությունը. սեփականության տիրելու ծարավը. շուկայական համակարգը մարդկանց հարաբերությունների հիմքը դարձրել են մրցակցությունը դրանով ծնունդ տալով անհատապաշտությանը: Այդ անհատապաշտությունը տանում է դեպի անհատի ազատության ավերում: «Ունենալու» ծարավը մարդու մեջ խեղդում է «լինելու» ցանկությունը: Վերեւում արդեն խոսվել է այն մասին, թե ինչ է տեղի ունենում Հայաստանում: Եվ այդպիսի պայմաններում շարունակաբար ազատության մասին շաղակրատելով, դրա կրողները ունեն միայն մեկ նպատակ կոծկել իրական վիճակը: Որքան այլասերվում է հասարակությունը, այնքան անզուսպ թալանի նպաստավոր պայմաններ են ստեղծվում «նոր հայերի» համար:

Այսօր հաճախ կարելի է լսել զարմանքի խոսքեր. թե ինչպե՞ս պատահեց. ինչո՞ւ այսպես ամեն ինչ տակնուվրա եղավ: Ուզում եմ այդ հարցերին պատասխանել բելոռուս փիլիսոփա. Սովետական Միության անհաշտ թշնամի Իվան Սոլոնեւիչի հետեւյալ մտքով. որն արտահայտել է դեռեւս 1953թ. «ԽՍՀՄ–ից հետո մեզ շատ բան կառաջարկեն: Եվ բոլորը կստեն իրենց զանգակատնից: Կլինեն շատ թեկնածուներ եւ նախարարներ ու առաջնորդներ, կուսակցական առաջնորդներ ու ռազմական դիկտատորներ: Կլինեն բանկերի դրածոներ, բայց ոչ մերոնցից:

Կլինեն օտարերկրացիների դրածոներ: Եվ բոլորը ամենից առաջ կխոսեն ազատությունների մասին ստախոսության համար ամենախոստումնալից եւ ոչինչ չպարտադրող թեմայով: Եվ ամեն մի «իմաստունի» համար կգտնվեն շատ միամիտներ: Դրա հետ ոչինչ չես կարող անել. ոչխարներ կան աշխարհի բոլոր երկրներում ամենատոտալիտարից մինչեւ ամենադեմոկրատականը: Նրանց, ինչպես հայտնի է. ոչ ցանում են եւ ոչ էլ հնձում: Աշխատեք չհայտնվել նրանց թվում: Դա այնքան էլ դժվար չէ, ինչպես թվում է...»:

Բելոռուս վտարանդի փիլիսոփան իր խոսքն ուղղել է իր հայրենակիցներին...

Անշուշտ. Ռուբեն Սեւակը հասկանում էր. որ պատմությունը հարթ պողոտա չէ: Բայց եւ համոզված էր, որ պատմությունը ջունգլի չէ. որտեղ ամեն ինչ թույլատրելի է: Ռուբեն Սեւակը խնդիր էր դնում կարդալ. ուսումնասիրել մեր պատմությունը: «Հոն պիտի գտնենք.– գրում էր նա.– մեր ազգին երկու հազար տարիներու ճամբան, ու իր բոլոր զարտուղութիւնները. յետադարձութիւնները, անել ուղղութիւնները. վերելքներն ու զառիթափերը»236: Այսինքն հարկավոր է պատմությունից դասեր վերցնել. չսխալվել. որովհետեւ կյանքը. ժամանակը միշտ անկանխատեսելի իրողությունների առջեւ են կանգնեցնում նրան, ով այդ ամենը հաշվի չի առնում ու չի ուզում սովորել իր պատմությունը:

Եվ այսպիսիներին. որոնք չգիտեին իրենց պատմությունը. Ռուբեն Սեւակը տալիս էր դիպուկ գնահատական: «Ան.– գրել է նա.– որ իր պատմութիւնը չը գիտեր. այն. որ իր ազգութիւնը չի ճանչնար. այնպիսի վատ քաղաքացի մըն է ու յոռի օսմանցի մը»237:

Այսպիսով. իր պատմությունը չիմացողին Ռուբեն Սեւակը համարում էր «յոռի օսմանցի մը»: Սա դիպուկ ու սուր քաղաքական ակնարկ է: Վերոհիշյալ հոդվածը. ինչպես ասվեց. գրվել է 1908թ. հուլիսի 18–ին եւ տպագրվել է «Սուրհանդակի» 93–րդ համարում: Դա այն ժամանակն էր. երբ երիտթուրքերը հայ դաշնակցականների աջակցությամբ ու համագործակցությամբ հայտնվել էին թուրքական հեղափոխության ալիքների վրա եւ դրության տերն էին:

Հենց իրենց հեղափոխության նախօրյակին երիտթուրքերը ազդարարեցին. թե Թուրքիայում ապրող բոլոր ազգերը ստանում են հավասարություն.

եւ այսուհետեւ նրանք կոչվելու են «օսմանցի»: Արտաքուստ այն տպավորությունն էր ստեղծվել, որ բոլոր ազգությունները համարվում են մեկ երկրի իրավահավասար քաղաքացի եւ կրելու են «օսմանցի» խորհրդանշական անվանումը: Երիտթուրքերի այս խորամանկ քայլը բոլորը ընդունեցին հալած յուղի տեղ եւ միամտաբար հավատացին այդ հեքիաթին:

Իսկ ահա Ռուբեն Սեւակը այն եզակի գործիչներից էր, որ հասկացել էր, թե ինչ է նշանակում «լինել օսմանցի» եւ իր վերաբերմունքը արտահայտեց վերոհիշյալ եղանակով:

Ցանկացած երկիր ու ժողովուրդ կարիք ունի մաքուր, անաղարտ եւ միաժամանակ դաժան հայելու: Ամեն մարդ նույնպես զգում է այդպիսի հայելու կարիք: Բոլորին է անհրաժեշտ իր վրա նայել դրսից, ուրիշի հայացքով, ոչ իր աչքերով:

Այդ մաքուր ու անաղարտ հայելու, դրսից հայացքի անհրաժեշտությունը, ինձ թվում է, որ զգում էր Ռուբեն Սեւակը: «Կեանքին մէջ,– գրում էր նա,– օրինակ մը գոյութիւն ունի: Մարդ չի կրնար տեսնել այն վիճակը, որուն մէջ կը գտնուի, բայց մէկ ուրիշը կը տեսնէ: Չի կրնար տեսնել, թէ ինչ դէմք կ'առնէ, բայց մէկ ուրիշը կը տեսնէ (կ'ուղղէ զայն...): Ի վիճակի չէ գիտակցելու, թէ ինչ խենթութիւն կ'ընէ, բայց մէկ ուրիշը կը գիտակցէ (եւ կ'ըսէ անոր)»: Եվ իր միտքը հաստատելու համար Ռուբեն Սեւակը բերում է հետեւյալ օրինակը, գրելով. «Շոգեկառքի ուղեւորը չի զգար արագութիւնն ու չի կրնար տեսնել առջեւը, բայց ուրիշ մը, որ պատուհանէն դուրս կը նայի, կ'զգայ արագութիւնն ու կը տեսնէ առջեւի անդունդը: Անոր **գերագոյն պարտականութիւնն է** նախազգուշացնել, թէ անդունդ մը կայ ճամբուն վրայ»238:

Ռուբեն Սեւակը խորաթափանց կերպով տեսնում էր գալիք դաժան վիճակը եւ իր գերագույն պարտականությունն էր համարում ոչ միայն կանխատեսել, այլեւ զգուշացնել, որ եթե բարու եւ առաջընթացի ուժերը չհամախմբվեն, ապա ապագայում երկրի վրայից «կնոսրանա» հոգեւոր–բարոյական մթնոլորտը: Եվ թվում է, թե Ռուբեն Սեւակը կարողանում էր երկրին նայել «այնտեղից», ուրիշի հայացքով: Այդպես էին վարվում նաեւ մյուս մեծերը, ինչպես, օրինակ, Դանթեն: Եվ այն, ինչ տեսավ մեզնից 100 տարի առաջ ու կանխատեսեց Ռուբեն Սեւակը, մենք այսօր համոզվում ենք դրանում: Մենք դարձել ենք դրանց վկան: Սա, իհարկե, բավական չէ: Մեզ էլ է հարկավոր այդպիսի հայելի, այդպիսի հայացք դրսից:

Ամփոփելով խոսքս Ռուբեն Սեւակի պատմագիտական հայացքների վերաբերյալ ուզում եմ մի հարցի մասին եւս հիշել: Խոսքն այն մասին է, որ վերջին շրջանում մեր իրականության մեջ նկատվում է հանկարծակի հետաքրքրություն անցյալի նկատմամբ: Իմիջիայլոց, դա բնորոշ է նաեւ համարյա բոլոր երկրների մշակույթին ու գրականությանը:

Ինչո՞ւ հանկարծակի անվանեցի: Որովհետեւ դա. իմ կարծիքով. առաջին հերթին կապված է ամբողջ մարդկության կյանքի ու մահվան համար պատասխանատվության հետ: Մարդիկ այլեւս չեն կարող չզգալ. չգիտակցել. որ իրենց դարերով ու հազարամյակներով կուտակածը կարող են վերջնականապես կորցնել: Սա մեծ հաշվով. ամբողջ աշխարհի ու մարդկության գոյությանն է վերաբերում:

Իսկ մեր հայկական իրականության մե՞ջ: Մենք հայերս. նույնպես մարդկության մասն ենք եւ համամարդկային խնդիրները մեզ էլ են առնչվում եւ գուցե ավելի շատ ու խորը. քան ուրիշ ազգերի:

Սրա բացատրությունը տվել է Ռուբեն Սեւակը 1911թ.. գրելով հետեւյալը. «Այո. մեր ցեղը տարօրինակապես կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո. մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ. դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը. որ երեկուան նաւակները մեզ արդէն անցան. ու մենք ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ. անխորասուզելի. բայցեւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող»239:

Այո. վիճակն այսպիսին էր 20–րդ դարի սկզբին. եւ Ռուբեն Սեւակն ամենայն ճշգրտությամբ արձանագրել է փաստը: Այդ նույն վիճակն ավելի ծավալուն կերպով. դժբախտաբար. կրկնվում է 100 տարի անց. 21–րդ դարի սկզբին:

Վերջին տարիներին կրած կորուստները այնքան բազմաթիվ են ու այնքան մեծ. որ հարկադրեցին մարդկանց սթափվել: Այստեղից էլ հանկարծակի հետաքրքրությունն անցյալի նկատմամբ: Այսօր արդեն խոսքը վերաբերում է հոգեւոր գենոֆոնդի վերականգնմանը. որի պահանջը դրել են պատմական հիշողությունն ու խիղճը: Միտքս հաստատել եմ ուզում մի օրինակով: Սրանից 30–40 տարի առաջ նշանավոր բնախույզ ու ճանապարհորդ Կուստոյի շնորհիվ մենք հնարավորություն ունեցանք տեսնել օվկիանոսը ներսից: Դա աննկարագրելի զգացողություն էր. որ հասնում էր խորհրդավորության: Իմ կարծիքով. ճիշտ այդպիսի զգացողություն ենք ունենում թափանցելով մեր անցյալը: Հասկանում ենք. որ ամեն ինչ միահյուսված է բոլոր ժամանակների անցյալի. ներկայի ու ապագայի մեջ: Եվ կարեւորագույն պահանջ է առաջացել պարզել. թե որտե՞ղ. ե՞րբ եւ ի՞նչ պայմաններում խզվեց կամ էլ խաթարվեց այդ երեք ժամանակների միջեւ կապը եւ հատկապես ո՞վ է դրա համար մեղավոր ու պատասխանատու: Վերջին հաշվով. կարծում եմ. որ նոր սերնդին անպայման կհետաքրքրի. թե այդ ո՞ւմ եղքով. ի՞նչ հանգամանքների բերումով Ռուբեն Սեւակի պատկերավոր արտահայտությամբ «մեր ՆԱԻԻՑ առաջ անցան երեկուան ՆԱԻԱԿՆԵՐԸ»:

Նոր սերնդի հետաքրքրությունն անցյալի նկատմամբ հայեցողական չէ: Եվ դա առավելապես կապված է գենոֆոնդի պահպանման անհրաժեշտությունն ընկալելու հետ: Գենոֆոնդի տարրերի կորուստը նշանակում է

կենդանի մատերիայի հիշողությունից ջնջել այն կարեւորագույն ինֆորմացիան, որը կյանքի գոյության, հետեւաբար մարդու գոյության գլխավոր պամաններից մեկն է: Ասվածը մեծապես վերաբերում է հասարակական մշակույթի տարատեսակների պահպանմանը:

Յուրաքանչյուր մշակույթ, յուրաքանչյուր քաղաքակրթություն մարդկության այս կամ այն հատվածի խտացված փորձն է: Մշակութային ժառանգության կորուստը հետեւապես նշանակում է, որ մարդկությունը կորցնում է իր փորձի մի մասը: Մշակույթը առաջանում է մարդկանց օբյեկտիվ պահանջմունքի ուժով: Այս հանգամանքն արդեն փիլիսոփայական կատեգորիա չէ: Դա վերաբերում է արդարադատությանը: Եվ այն ամենը, ինչ ուղղված է մեր ազգային մշակույթի քայքայմանը, մեր պայմաններում դարձել է այդ արդարադատության օբյեկտիվ պահանջմունքը: Թող ասվածը խիստ չթվա, որովհետեւ այդպես շարունակել այլեւս անթույլատրելի է:

Հանրահայտ է, որ մշակույթը, մասնավորապես հումանիտար, հնարավորությունների համակարգի կարեւորագույն տարրերից է, որ ունի մարդը կյանքի փոփոխվող պայմաններին ընտելանալու համար: Ինչպես գենետիկան բիոլոգիայի մեջ, այնպես էլ մշակութային գենոֆոնդի պահպանումը մեր փրկության պայմաններից է: Եվ վերոհիշյալ արդարադատությունը պետք է իրագործվի նրանց նկատմամբ, ովքեր անտեսում են այդ կարեւորագույն պայմանը, որովհետեւ տվյալ դեպքում գործ չունենք սովորական զանցանքի կամ հանցանքի հետ:

***

Ռուբեն Սեւակի պոեզիան արդար ու լուսավոր կյանքի համար մղվող պայքարի հիմն է: Նրա պոեզիայում ամբողջ ծայնով հնչում է պարտքի զգացումը: Այնտեղ կա ըմբոստություն, հոգեւոր անհանգստության ոգի, ապագայի սուր զգացողություն:

Ռուբեն Սեւակը անքակտելիորեն կապված էր արեւմտահայության իրական կյանքին, որը նրա ստեղծագործության հենց սկզբից ներխուժեց բանաստեղծ–քաղաքացու սիրտը եւ նրան հասցրեց իր բարձունքին: Եվ կարծում եմ, որ այս հանգամանքն էլ կարեւոր դեր խաղաց, որպեսզի Ռուբեն Սեւակը հենց այդ բարձունքից տեսներ ու զգար արեւմտահայության հակասություններով լեցուն իրականությունը: Նա այդ բարձունքից տեսավ սովածների սովը, կուշտերի կուշտը, արեւմտահայության, իր ժողովրդի տառապյալ վիճակն ու ողբերգությունը: Այստեղից էլ, իմ պատկերացմամբ, Ռուբեն Սեւակի քաղաքացիական բարձրագույն խղճի ծայնը, որը հնչեց մինչեւ նրա ողբերգական կյանքի վերջին պահը:

Կարծում եմ, որ անժխտելի փաստ է դեպի աշխարհը, մարդկանց, դեպի հայրենիք միտված մեծ պոեզիայի լայն ասպարեզ դուրս գալը մեծապես

նպաստեց, որպեսզի Ռուբեն Սեւակն իր գործերում գլխավորը դարձներ արեւմտահայության ճակատագիրը: Նա դրան հասավ աշխարհում. Արեւմտյան Հայաստանում զարգացող իրադարձությունների վերլուծման ու քննարկման միջոցով: Ռուբեն Սեւակի համար հայրենիքը կենդանի էակ էր, որի տառապանքը նրան հանգիստ չէր տալիս:

Գրողի, բանաստեղծի, ամեն մի ստեղծագործողի համար ժամանակն ունի կարեւոր դերակատարություն: Ստեղծագործողին ժամանակը ոչ միայն թեմա, բովանդակություն եւ գաղափար է տալիս, այլեւ հաղորդում է իր ռիթմը: Եվ ստեղծագործողի խնդիրն է որսալ ժամանակի ռիթմը: Ռուբեն Սեւակն այն բանաստեղծն ու գործիչն էր, որի առջեւ ժամանակն ամբողջ սրությամբ դրել էր Հայաստանի, արեւմտահայության ճակատագրի թեման: Եվ Ռուբեն Սեւակը գտավ իր ժամանակի ռիթմը: Դա նրա Հայաստանն է տանջված, բայց չհուսահատված, մեռնող, բայց հարություն առնող հսկան է, որը պատրաստ է կատարել իր պատմական թռիչքը:

Բնությունից անփոփոխ համեստությամբ օժտված, բայց եւ իր նկատմամբ խստապահանջ Ռուբեն Սեւակն իր նամակներից մեկում (1907թ. փետրվարի 12–ին) գրում էր այն մասին, թե ինչպես է ուրախանում «ոտանաւորի մը աւարտումէն վերջ», եւ երազում էր, որ ապագա ընթերցողը իր ստեղծագործությունների մեջ կտեսնի բարություն, լույսի ու ազատության հաղթանակը:

Ռուբեն Սեւակը երազում էր նաեւ, որ ապագայում երգեր կհորինվեն իր սիրային բանաստեղծությունների խոսքերով: Ահա թե այդ մասին ինչ է գրել նա 1910թ. հունվարի 12–ին ժաննի Աբելին ուղարկած նամակում. «... Հիանալի կ'ըլլայ, եթէ օր մը արուեստագէտ բարեկամներ հրաւիրենք մեր ընտանեկան, գրական եւ երաժշտական երեկոյթին, եւ հոն դուն ալ կարենաս նուագել գործերդ, երգել իմ քերթուածներս...»240:

Բայց ափսոս, շատ ափսոս, որ մինչեւ օրս Ռուբեն Սեւակի այս երազանքն էլ է մնացել անկատար: Հիշելով այս մասին ուզում եմ հույս հայտնել, որ հայ կոմպոզիտորները ի վերջո ուշադրություն կդարձնեն Ռուբեն Սեւակի սիրո լիրիկային եւ իրականություն կդարձնեն մեծ բանաստեղծի երազանքը:

Ռուբեն Սեւակի ողբերգական մահից անցել են տասնամյակներ: Թռչում է ժամանակը, աշխարհը փոխում է իր կերպարանքը: Առաջ են եկել նոր հասկացություններ, նոր պահանջներ: Բայց համոզված ընդգծում եմ, որ Ռուբեն Սեւակի ստեղծագործության վրա ժամանակը տիրապետող ու իշխող չէ, որովհետեւ իսկական պոեզիան անմահ է: Իհարկե, կարող են հնանալ պոետի լեզուն, ոճը, բայց նրա գործը, նրա էությունը երբեք:

Եվ մենք, մեր ժամանակաշրջանի 21–րդ դարի արշալույսից, մեր պատմական օրվա բարձունքից ավելի պարզ ու հստակ ենք տեսնում էությունն

այն գործի, որին իր կյանքը նվիրեց Ռուբեն Սեւակը, ավելի ճիշտ ենք հասկանում այն հսկայական դերը, որ նա խաղաց 20–րդ դարի սկզբին հայ պոեզիայի մեջ, ավելի խորն ենք ներթափանցում նրա ստեղծագործության հարուստ ու բարդ աշխարհը:

Ռուս գրողներց մեկը Դոստոեւսկուն է ներկայացնում իր գրվածքը նրա կարծիքը ստանալու հույսով: Դոստոեւսկին կարդում է այդ գրվածքը ու ետ է վերադարձնում՝ ասելով. «Թույլ է, վատ է. ոչ մի բանի պետք չէ: Լավ գրելու համար հարկավոր է տառապել, տառապել»:

Ով ծանոթ է Ռուբեն Սեւակի կյանքին, նրա ստեղծագործությանը, անպայման նկատած կլինի, որ Ռուբեն Սեւակն անցել է անձնական ու հասարակական տառապանքի բովով: Եվ այդ տառապանքի գնով է ստեղծվել նրա պոեզիան: Այդ տառապանքի արդյունքով է, որ նրա պոեզիան միշտ հնչում է որպես արդիական ու հրատապ կանչ՝ ուղղված ապագա սերունդներին:

Ռուբեն Սեւակն ապրեց 30 տարի, ընդամենը 11.139 օր: Ինչո՞ւ կատարեցի Ռուբեն Սեւակի ապրած օրերի հաշվարկը: Շտապեմ միտքս պարզել ու նախեւառաջ ասել, որ դա բոլորովին էլ թվաբանական հաշվարկ չէ: Երբ կյանքը հաշվում ես տարիներով, թվում է, թե դա շատ երկար է, եւ ստեղծվում է այն տպավորությունը, թե մարդու կյանքը կառուցվում է ինչ–որ մեկի կողմից, անկախ տվյալ մարդու կամքից:

Բայց փորձենք կյանքը հաշվել օրերով, եւ այդ դեպքում կյանքը թվում է շատ կարճ: Ու այդ ժամանակ առանձնակի սրությամբ գիտակցում ես, որ կյանքիդ յուրաքանչյուր օր կառուցում ես ինքդ, որ կյանքի ամեն մի օրը մի քար է, որ ինքդ ես դնում պատին, որը հետո այլեւս չես փոխելու կամ էլ դուրս չես գցելու: Ասեմ նաեւ, որ ի վերջո, եթե տարվա հաշվարկով ես մոտենում կյանքին, ապա ինքնախաբեության համար կա ավելի շատ հնարավորություն, քան օրերի հաշվարկով:

Իհարկե, այստեղ ես նկատի չունեմ օրերի տառացի հաշվարկը, խոսքը դրան չի վերաբերում: Այլ խոսքը վերաբերում է այդ հաշվարկի սուր, մշտապես ներքին զգացողությանը, ապրած ամեն օրվա արժեքի զգացողությանը:

Այդպիսի զգացողություն ուներ նաեւ Ռուբեն Սեւակը, որն իր վերաբերմունքը արտահայտել է հետեւյալ խոսքերով. «...ամէն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը ճանչնամ ես. ապրուած, զգացուած կեանքը, եւ ոչ թէ երեւակայած կեանքը»241:

Մենք, առհասարակ, ընտելացել ենք հաճախ կրկնվող արտահայտությանը, թե Հոմերոսը, Դանթեն, Շեքսպիրը, Պուշկինը, Հովի, Թումանյանը, Կոմիտասը եւ ուրիշ շատ այլ մեծություններ մեռած չեն, այլ անցել են անմահ հավերժության, որ նրանք՝ այդ մեծերը, մեզ համար մեռած չեն, այլ միշտ եղել են ու կմնան, ինչպես երկինքն ու երկիրը: Այստեղ տեղին է հարցնել, թե

ինչո՞ւ այդպիսի տպավորություն ունենք: Գո՞ւցե նրա համար. որ այդ մեծերը ծնվել. ապրել ու մեռել են մեզնից շատ առաջ: Այդ մեծերից յուրաքանչյուրի մեռնելուց անմիջապես հետո նրանց ժամանակակիցները. օրինակ. Պուշկինի կամ էլ Հովի. Թումանյանի մահից հետո անպայման ասած կլինեն. «խավարեց արեւը»: Սակայն նրանք մեծերը. մեզ ու հաջորդ բոլոր սերունդների համար հավերժական են:

Իմ գնահատմամբ Ռուբեն Սեւակը նույնպես իր կյանքով ու գործով «դեպի հավերժություն» գնացած մեծերի շարքում իր արժանի տեղն զբաղեցնելու պատիվն ունի: Այստեղ, իհարկե. նկատի չունեմ Ռուբեն Սեւակի ողբերգական մահը:

Այո. մեծերը գնացել են դեպի անմահություն. դեպի հավերժություն: Այդ մեծերը միայն իրենց ծնած ժողովրդին չեն պատկանում: Նրանք ամբողջ մարդկությանն են. դարձել են մարդկության խիղճը: Սակայն այդ մեծերը իրենց հետ որքան մտքեր. գաղափարներ ու մտահղացումներ ընդմիշտ տարան. որ չհասցրին ստեղծել: Եվ ինչքա՜ն նրանք չեն ուզեցել իրենց կենդանի կյանքից գնալ դեպի այդ անմահությունը: Ահա. օրինակ. Ռուբեն Սեւակը գրում էր. որ «մեծերուն մէջ ալ շարք կայ. որ դեռ մեռնելը չեն հասկնար. ես ասոնցմէ եմ». որ «կեանքը կը սիրեմ»242:

Մեծերից ոչ մեկը չի ուզեցել կենդանի կյանքից գնալ հավերժություն ոչ թե նրա համար. որ կյանքից շատ բան չէին վերցրել. այլ նրա համար. որ կյանքին ու մարդկանց դեռ շատ քիչ բան էին տվել: Ու հիմա դժվար է պատկերացնել այդ կորստի անչափելիությունը: Թերեւս սրանով են մեծերը տարբերվում. առանձնանում սովորական մարդկանցից:

Հայտնի է. որ Գյոթեն 50 տարեկան էր. երբ սկսեց գրել իր գլուխգործոցը «Ֆաուստը». որի երկրորդ մասն ավարտեց 82 տարեկանում: 80–ամյա Լ.Տոլստոյը հաճախ էր կրկնում. թե իրեն ամենաքիչը հարկավոր է տասը կյանք. որպեսզի պատկերի այն ամենը. ինչ ամբարվել է իր մտքում: Իսկ հանճարեղ Միքելանջելոն 89 տարեկան հասակում հանկարծ հայտնագործեց. որ հազիվ հասցրել է սովորել կարդալ իր մասնագիտությունը: Իսկ ինչքան չիրականացած ծրագրեր թողեցին մյուս մեծերը:

Չեմ սխալվի. եթե ասեմ. որ նրանք բոլոր մեծերը. ապագա սերունդների համար կատարել են մի ընդհանուր հայտնագործություն. որը կարելի է բանաձեւել «նոր սկսել եմ» արտահայտությամբ: Սա համամարդկային զգացում է. որը միավորում է բոլորիս: Միավորում է բոլորին. բացի նրանցից. ովքեր ունեցել են եւ ունեն միայն մի ծգտում «մենք ամեն մի տաղանդ կխեղդենք օրորոցում»: Այդպես էին մտածում ու գործում միջնադարյան հավատաքննիչները. երբ ամեն մի լուսավոր միտք մատնում էին խարույկի:

Այդպես էին մտածում ու գործում երիտթուրքերը. երբ ոչնչացրին հայ ժողովրդի մշակութային արժեքներն արարող տաղանդավոր մտավորա-

կաններին:

Այդպես էին մտածում ու գործում գերմանական ֆաշիստները. երբ մարդկանց ոչնչացնելու համար ստեղծել էին համակենտրոնացման ճամբարներ ու դիակիզարաններ:

Ռուբեն Սեւակը. ինչպես բոլոր մեծերը. նույնպես չհասցրեց իրականացնել իր մտահղացումների գոնե մի չնչին մասը: Նրա գեղարվեստական երազանքները մնացին անավարտ:

Կարելի է միայն պատկերացնել. թե ինչ կստացվեր, եթե հնարավոր լիներ ի մի հավաքել բոլոր մեծերի չիրականացած ծրագրերը: Եթե հնարավոր լիներ. ապա դա կլիներ կանխատեսումների գիրք: Կիմանայինք նաեւ. թե մեզ հետ դեռ ինչեր կպատահեն: Այդ գրքում կերեւային նաեւ մեծերի սխալները. որոնք անչափ ուսանելի կլինեին: Իհարկե. այս ամենը երազանք է:

Միտքս ավարտելու համար ուզում եմ այստեղ հիշել մի կանխադրույթի մասին: Խոսքս «Սուրբ տեղը դատարկ չի մնում» արտահայտությանն է վերաբերում:

Ալեքսանդր Պուշկինի մահից անցել է 165 տարի: Բայց մինչեւ օրս ռուսական իրականությունը չի ծնել մեկի. որ զբաղեցներ նրա տեղը թեկուզ եւ ռուսաց գրավոր խոսքը զարգացնելու գործում: Կարելի է էլի օրինակներ բերել այլ ժողովուրդների մշակութային պատմությունից: Բայց բավարարվենք Պուշկինի օրինակով:

Այդ նույնը իմ պատկերացմամբ վերաբերում է նաեւ Ռուբեն Սեւակին: Նրա ողբերգական մահից անցել է 87 տարի. բայց նրա զբաղեցրած տեղը հայ մշակույթի. քաղաքական–ազգային մտածողության մեջ մնում է դատարկ: Նույնիսկ նրան չփոխարինեց մեկ այլ տաղանդավոր բանաստեղծ. որին կնքեցին Սեւակի անունով: Հայ իրականության մեջ անցած տասնամյակներում ասպարեզ են իջել շատ տաղանդավոր գրողներ ու բանաստեղծներ. բայց նրանցից ոչ մեկը այդպես էլ չփոխարինեց Ռուբեն Սեւակին. որովհետեւ հանճարները անկրկնելի են թե իրենց կյանքով եւ թե պատմության մեջ զբաղեցրած իրենց տեղով:

# Գլուխ 7

# ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Վրա հասավ Առաջին համաշխարհային պատերազմը: Իրականություն էին դառնում Ռուբեն Սեւակի կանխատեսումն ու զգուշացումը: Արեւմտահայության գլխին դամոկլյան սրի նման կախվել էր բնաջնջման վտանգը:

Իրավիճակն ընբռնելու համար համառոտ անդրադառնանք հայ ազգային–քաղաքական ուժերի գործելակերպին:

Գլխավոր դերակատարը դաշնակցությունն էր. որը. չնայած 1913թ. պաշտոնապես հայտարարել էր. թե հեռացել է երիտթուրքերից. բայց մինչեւ 1915թ. ձմռան վերջը մշտապես ցուցադրում էր երիտթուրքերի նկատմամբ անկեղծ համագործակցության պատրաստակամությունը հանուն օսմանյան հայրենիքի: Դաշնակցության նման կեցվածքը հարուցում էր հայկական շրջանների զայրույթը. որոնց մեջ էր. անշուշտ. Ռուբեն Սեւակը:

Դաշնակցության վարքագիծն ամբողջությամբ խտացված իր արտահայտությունը գտավ 1914թ. հուլիսին Կարինում գումարված 8–րդ համագումարում: Համագումարի ընդունած բանաձեւում կան նաեւ այսպիսի մտքեր. «Հաշվի առնելով պետական քաղաքականության նեղմտությունն ու էկլեկտիկությունը.... որի հետեւանքներն արտահայտվում են բոլոր ոչ թուրք ժողովուրդների տնտեսական. լուսավորչական. վարչական կյանքի նկատմամբ ճնշումներում. նկատի ունենալով բարենորոգումները տապալելու կառավարության վարած քաղաքականությունը. ընդհանուր ժողովը եկավ այն եզրակացության. որ կուսակցությունը հանդես կգա իթթիհադի նկատմամբ անկիրք դատավորի եւ անհաշտ ընդդիմության դերում. կպայքարի նրա վնասակար ազգայնամոլական եւ հակապետական քաղաքականության դեմ: Ժողովը չի բացառում համագործակցությունը համապետական խնդիրներում»243:

Ընթերցողին ծանոթացնեմ նաեւ Ս.Վրացյանի վկայությանը. «Այս ընդհանուր կացության հանդեպ. այլեւ աչքի առաջ ունենալով թուրք իշխանությունների կասկածոտ ու բծախնդիր վերաբերումը Հ.Հ.Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը եւ ցրվեց նախօրոք քննության առնելով Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հավանականությունը եւ այդ առթիվ որոշելով հրահանգել իր մարմիններին եւ ընկերներին մնալ օրինապահ իրենց ապրած երկրի վերաբերմամբ եւ կատարել իրենց բաժին հասած քաղաքա-

ցիական պարտականությունները»244:

8–րդ համագումարի ավարտին Կարին եկան երիտթուրքերի ներկայացուցիչներ Բեհաեդդին Շաքիրը եւ Նաջի բեյը: Նրանք դաշնակցությունից պահանջեցին Ռուսաստանի դեմ պատերազմում միանալ Թուրքիային. «աշխատելով ռուսների դեմ ապստամբեցնել կովկասահայերին»:

Այս պահանջին ի պատասխան դաշնակցությունը հայտարարեց. «Եթե... իրենց կամքի հակառակ. պատերազմը պայթի. դաշնակցության Թուրքիո հատվածի բոլոր անդամները լրիվ կերպով կկատարեն իրենց պարտքը հանդեպ պետության: Ինչ վերաբերում է կովկասահայերին. դաշնակցությունը չի կարող հանձնառություն ստանձնել նրանց ապստամբեցնելու, մանավանդ որ թուրքերը իրենց վերջին հինգ տարվա քաղաքականությամբ թուրքահայերի վերաբերմամբ այնպիսի վիճակ չստեղծեցին. որ կարողանային գրավել ռուսահայերի համակարանքը»:245:

Այսպիսի դիրքորոշումը թե հեղհեղուկ էր եւ թե արտահայտում էր դաշնակցության ետ նայելու միտումը: 8–րդ համագումարը որոշեց նաեւ, որ յուրաքանչյուր հայ պետք է մնա «օրինապահ իր ապրած երկրի վերաբերյալ». որ «արեւմտահայութիւնը չպետք է ապստամբուի. պատերազմի ընթացքին յստակ ազգային խնդիր չպետք է յարուցանէ. իր վրայ ընկնող բոլոր քաղաքացիական պարտականութիւնները պետք է կատարէ. բարեխիղճ, համբերող եւ պարտաճանաչ պետք է լինի Թուրքիոյ եւ թուրքերու հանդէպ»246:

Այո. հին սերը դաշնակցությունը դժվարությամբ էր մոռանում: Արժե այստեղ հիշել դաշնակցության ղեկավարներից մեկի Վռամյանի հետ ռուս լրագրող Ա.Տիրկովայի ունեցած զրույցը. որի ժամանակ Վռամյանն ասել է. «Երիտթուրքերի մեջ կան ազնիվ մարդիկ, որոնց կարելի է վստահել: Խորհրդարանի ներկայիս նախագահ Ահմեդ Ռիզան. Հուսեյին Ջավիդը: Վերջապես Թալեաթ բեյը: Նա կրթված մարդ չէ. բայց ոգեշունչ եւ ազնիվ հայրենասեր է: Նա հասկանում է. որ Թուրքիայի փրկությունը բարեփոխումների մեջ է»:

Ի պատասխան դրա Ա.Տիրկովան հարցնում է. «Իսկ ո՞րն է հայերի փրկությունը: Չէ՞ որ երիտթուրքերի օրոք տեղի ունեցավ Ադանայի կոտորածը: Դուք արդյո՞ք ապահովագրված եք. որ այն այլեւս չի կրկնվի»:

«Ոչ. ոչ: Դա կրկնվել չի կարող.– պատասխանում է Վռամյանը.– Ադանայի կոտորածը հին վարչակարգի մնացուկ էր: Իթթիհադն ինքն էր վրդովված...»:

Ա.Տիրկովայի այն հարցին. թե այժմ որն է դաշնակցության քաղաքական մարտավարությունը. Վռամյանը պատասխանում է. «Գլխավորը դաշինք իթթիհադի հետ: Մենք կորցրել ենք բոլոր հույսերը. որ բարենորոգումներ հնարավոր են քրիստոնյա տերությունների օգնությամբ... Մենք գործում

ենք հենվելով հիմնականում երիտթուրքերի ծախ թեւի վրա... Թալեաթ բեյ. Ջավիդ բեյ. Հալիլ բեյ. Ադիլ բեյ. Նազըմ բեյ»:

Հիշեցնեմ. որ վերոհիշյալ զրույցը տեղի է ունեցել 1911թ. դեկտեմբերին: Նույն Վռամյանն արդեն 1912թ. գարնանը Ա.Տիրկովային ասել է. «Թվում է. թե մենք սխալվել ենք: Մենք նրանց համարում էինք տգետ. բայց ազնիվ մարդիկ: Իսկ նրանք պարզապես ստախոս. քաղաքական սրիկաներ են... Ե-թե այս անգամ էլ նրանք խաբեն... մենք կգործենք այլ ձեւով»247: Բայց քանի՞ անգամ կարելի է խաբվել ու չհասկանալ. որ երիտթուրքերը հաստատապես հետամուտ են իրենց դիվային ծրագրի իրագործման մեջ: Վերջապես քանի՞ անգամ կարելի է խաբվել քաղաքական սրիկաներին:

Այդ օրերին տիրող իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար բավականաչափ կարեւորություն ունեն Գր. Զոհրապի գրառումները. որոնք աչքի են ընկնում անկեղծությամբ ու անմիջականությամբ:

Այստեղ կբերեմ միայն մեկ–երկու հատված այդ գրառումներից. որոնք իմ կարծիքով շատ խոսուն են: 1914թ. օգոստոսի 4–ին Գր. Զոհրապը գրում էր. որ թուրքական կառավարությունը «կը պատրաստուի կռուին մէջ մտնել»: Գտնվում ենք ամենամեծ դեպքերի նախօրյակին. ընդգծում էր նա. «որոնք ուզեն չուզեն մեր ազգին ճակատագրին վրայ ալ պիտի ազդեն»:

Վերեւում արդեն խոսք եղել է 1914թ. հուլիսին դաշնակցության Կարինի ընդհանուր ժողովի մասին: Գր. Զոհրապի գրառումներից երեւում է. որ նա տեղյակ չէր. թե դաշնակցությունն ինչ կեցվածք պետք է որդեգրեր մոտալուտ պատերազմի նկատմամբ: Այլապես նա չէր գրի. թե «Հայոց վիճակը մեծապէս մտահոգութեան պատճառներու հանգամանքը ունի. Թուրքիոյ եւ Ռուսիոյ մոտալուտ բախումին առթիւ. որ կողմը բռնել... պատասխանատուութիւններով լեցուն խնդիր եւ նոյնիսկ խիստ կարելի ըլլայ որոշում մը տալ...»:

Այնուհետեւ Գր. Զոհրապը վրդովվում է. թե «մարդ չը կայ պատրիարքարանի մէջ. դառնայ հետեւողական. կուսակցութիւնները զուրկ են նշանակութենէ. միմիայն դաշնակցութիւն կեցած է աչքի վրայ աւելի թերթերով. քան իւր ուժերով»:

Ով ով. բայց Գր. Զոհրապը. որը թեեւ դաշնակցության անդամ չէր ու սերտորեն կապված էր նրան. բոլորից լավ գիտեր. թե իրենից ինչ էր ներկայացնում դաշնակցությունը: Իսկապես. դա այն ուժը չէր. որն այնպես աղմկալից կերպով ներկայացվում էր թյուրիմացության մեջ գցելով արեւմտահայության այն հատվածին. որ դեռ հավատում էր դաշնակցությանը եւ նրա հետ շարունակում էր հույսեր կապել:

Իսկ դաշնակցության ղեկավարները շարունակում էին սնապարծության գերի մնալ ու իրենց թույլ ուժերի մասին ազդեցիկ տպավորություն ստեղծում թե արեւմտահայերի եւ թե... երիտթուրքերի մոտ:

Բայց հետեւենք Գր. Զոհրապի գրառումներին: Օգոստոսի 4–ին նա արդեն հստակ արտահայտում է իր վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ գրելով. որ «Ռուս պետութիւնը մեր միակ ապաւէնն է»248: Ափսոս. շատ ափսոս. որ Գր. Զոհրապի նման շրջահայաց գործիչը. հայրենասերը այդքան ուշացած հասկացավ այդ բացարձակ ճշմարտությունը:

Իմիջիայլոց. դեռեւս 1914թ. հունվարի 18–ին Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում Գր. Զոհրապը. հայտնելով, որ «հայկական բարեվորոգումներու պայմանագիրն ստորագրելու վրայ է Բ.Դռան եւ Ռուսիոյ դեսպանատան մէջ», գրում էր. «... բան մը ձեռք բերինք, կարեւոր բան մը անժխտելիօրէն, Եւրոպայի հսկողութեան մատեն (մանդատը – Վ.Պ.) ձեռք բերինք Հայաստանի մէջ»: Այնուհետեւ գրելով. թե նախկինում շատ դիմումներ են եղել մեծ պետությունն երին. Գր. Զոհրապը հայտնում էր. «Բայց հիմը եւ իրականը ռուսական պետութեան պաշտպանութիւնն էր եւ ատոր շնորհիվ ձեռք բերինք ամէն բան. ան է. որ այսօր ալ կը խոստանայ ապագային աւելի ընդարձակել եւ հաստատուն ձեւի մը վերածել այսօր առնուած statutն»:

Գր. Զոհրապը համոզված գրում էր. որ «մեր ողջամտութեան. Ռուսիոյ հանդէպ պահպանելիք մեր մտերմական յարաբերութեան շնորհիւ այդ խոստումին իրագործումը պէտք է ունենանք թերեւս շատ աւելի մօտիկ թուականի մը մէջ 10 տարուան լրանալէն առաջ»:

Լավատեսորեն տրամադրված Գր. Զոհրապը. այնուամենայնիվ. հարկ է համարում Արշակ Չոպանյանին տեղեկացնել իրեն անհանգստացնող մի երեւույթի մասին. «Միայն վախ մը ունիմ.– գրում էր Զոհրապը.– խիստ մեծ ցաւ մը շատ խորունկ. այդ վախը. այդ ցաւը սա է. որ Պոլսոյ հայոց մէջ անիշխանական եւ խուժանավարական հոսանք մը ստեղծուած է եւ այդ հոսանքը զսպել կարելի չէ: Եւ սակայն ասկէ վերջը մանաւանդ ազգին գործերը խոհեմութեամբ եւ հեռատեսութեամբ կառավարելու կարօտ են: Ո՞վ պէտք է կառավարէ զանոնք...»249:

Այսպիսով. Արշակ Չոպանյանին ուղարկած նամակից երեւում է. որ Գր. Զոհրապը սկսել էր գիտակցել դաշնակցության անօգուտ ուղղությունը եւ առանց անունը տալու հասկացնում է. թե հայության պառակտման մեջ ով է գլխավոր դերակատարը:

Ընթերցողին ծանոթացնեմ Գր. Զոհրապի մեկ այլ գրառմանը. որ նա արել է 1914թ. նոյեմբերի 5–ին. Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց մոտ մեկ շաբաթ հետո: «Այսօր.– գրում է նա.– Վարտկէսը. Ակնունին եկան մեզի ես հիւանդ անկողնիս մէջ ելայ նստայ: Խօսեցանք: Ակնունին Պոլիսէն հեռանալ կ՚ուզէ: Հրաման առնելու կաշխատի: Դիւրին չէ. Թալաթին դիմում պիտի ընեն վաղը»:

«Ի՜նչ հակապատկեր այն օրուան հետ.– խոր վշտով ու հիասթափությամբ շարունակում է Գր. Զոհրապը.– որ Ակնունին Պոլիս եկաւ օսմ. սահմա-

նադրութենէն անմիջապէս յետոյ. այդ միջոցին ինչ յաղթական մուտք. ի՜նչ խանդավառութիւն եւ հիմայ ի՜նչ խուճապ ու ինչ փախուստի պատրաստութիւն... Տաճկաստանի վերածնունդի հաւատացողներն ո՞ւր են...»250:

Փախուստի դիմողն այն Ակնունին էր, որ «գինովցել» էր թուրքական հեղափոխությունից եւ երիտթուրքերի հետ համագործակցելը ամեն ինչից վեր էր դասում: Ճիշտ է. Ակնունին էլ դարձավ թուրքական յաթաղանի զոհ. բայց թող դաժանություն չհամարվի. եթե ասեմ, որ նույնիսկ եղեռնական մահը նրա վրայից չի հանում պատասխանատվությունը. որովհետեւ Ակնունու եւ դաշնակցության մյուս պարագլուխների անմիտ ու անհեռատես քաղաքականության հետեւանքով զոհվեց մի ամբողջ ժողովուրդ:

Գալով Գր. Զոհրապին պետք է ասել, որ նրա ամբողջ օրագրությունը, որը հազիվ թե գրած լիներ ուրիշի համար, իր անձը մեծարելու նպատակով, աչքի է ընկնում ոչ միայն խոր հիասթափությամբ, այլ նաեւ թույլ տված սխալներն ընդունելու համոզմունքով: Բայց շատ ափսոս, որ Գր. Զոհրապը այդպիսի եզրակացության եկավ բավականաչափ ուշացած, երբ այլեւս ոչինչ անել հնարավոր չէր եւ նրա համար միակ ելքը մնաց նահատակվելու ճանապարհը:

«Հնչակ» կուսակցությունն ի սկզբանե մերժեց երիտթուրքերի հետ համագործակցության գաղափարը եւ գերադասեց կապվել իթթիհադականների հակառակորդ «Իթիլաֆի» («Համաձայնություն») կուսակցության հետ:

Տարօրինակ վիճակ էր ստեղծվել: Բավական չէր դաշնակցությունն ու «Հնչակը» ունեին լուրջ տարաձայնություններ, նրանք միացան իրար նկատմամբ թշնամանքով տրամադրված թուրքական երկու քաղաքական կուսակցություններին եւ դրանով ավելի խորացրին արեւմտահայության ուժերի ջլատումը: Մինչդեռ դաշնակցությանն ու «Հնչակին» հարկավոր էր մի կողմ թողնել տարաձայնությունները եւ համախմբվել, ի մի բերել ուժերը վերահաս վտանգի դեմ:

Սակայն, բոլոր դեպքերում Հնչակյան կուսակցությունն ավելի սթափ էր գնահատում ստեղծված իրավիճակը: Դեռ 1913թ. սեպտեմբերին հնչակյան կուսակցության 7–րդ համագումարը ընդունել էր հետեւյալ որոշումը. «Համոզուած ըլլալով, որ կուսակցութիւն մը, որպիսին է Ս.Դ.Հ.Կ.–ը, օսմանեան պետութեան տուած ներկայ պայմաններով չի կրնար այլեւս իր որդեգրած գաղափարներու իրականացումը հետապնդել եւ հայ ազգի գլխուն կախուած մահաբեր սուրը ետ մղել... Այսուհետեւ կանգնիլ միմիայն իր սկզբունքներէն բխող ոչ–օրինական գետնին վրայ... մինչեւ որ աւելի քաղաքական ու տնտեսական նպաստաւոր պայմաններ ստեղծուին»: Համագումարը եռանդով արգելում էր ոչ մի համագործակցություն իթթիհադի քաղաքականության հետ, այն գնահատելով վտանգավոր ու վնասակար251: Հնչակյանների համագումարը

վճռականորեն արտահայտվեց նաեւ Ինքնավար Հայաստանի հռչակման օգտին:

Հնչակյանները բարձրաձայն հայտարարում էին. որ «Իթթիհադը... աշխատում է հայկական մեծ կոտորած սարքել»252: Հանգամանորեն քննարկելով ստեղծված իրավիճակը հնչակյանները 1913թ. առաջ քաշեցին Արեւմտյան Հայաստանի անկախության համար պայքարի անհրաժեշտության հարցը այն դիտելով որպես հայությանը նոր կոտորածներից փրկելու միջոց:

Այսպիսով. երկու կուսակցություն. երկու դիրքորոշում: Հնչակյանները նոր կոտորածներից հայությանը փրկելու համար դնում էին Արեւմտյան Հայաստանի անկախության համար պայքարի անհրաժեշտությունը: Դաշնակցությունը հայությանը փրկելու համար որդեգրել էր երիտթուրքերի հետ համագործակցելու քաղաքականություն: Ընդ որում պետք է նկատի ունենալ. որ հայության նոր կոտորածի վտանգը գալիս էր երիտթուրքերից: Թե երկու կուսակցություններից ով էր ճիշտ եւ ով սխալ. թողնում եմ ընթերցողին դատելու:

Երիտթուրքերը անպայման տեսնում էին հնչակյան կուսակցության որդեգրած քաղաքականության վտանգը իրենց հրեշավոր ծրագրերի իրականացման գործում եւ վճռեցին հենց առաջին հարվածը հասցնել հնչակյաններին: 1914թ. հուլիսի 16–ին երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին հնչակյան կուսակցության ղեկավարներին:

Սահմանադրական ռամկավար կուսակցությունը Թուրքիայում թույլ օղակներ ուներ: Եվ. ըստ երեւույթին. այդ էր պատճառը. որ 1913թ. հունվարին Կ.Պոլսում ռամկավարները հայտարարեցին. թե իրենք ապստամբներ չեն եւ Հայկական հարցն անջատողական շարժում չէ: Ռամկավարները հայտարարում էին նաեւ. թե հայ ժողովուրդը դժգոհ է. բայց ապստամբ չէ253:

Այսպիսով. կարելի է փաստել. որ հայ ազգային քաղաքական կուսակցությունները յուրովի էին զգում հասունացող վտանգը. բայց նորից ու նորից ուզում եմ ընդգծել. որ ամբողջ դժբախտությունն էլ հենց այն էր. որ նրանք փորձ չարեցին համախմբվել. միասնական ճակատ ստեղծել ու այդ միջոցով միաձուլել արեւմտահայության ուժերն ու դիմադրության պատրաստակամությունը:

Ահա այսպիսի պայմաններում երիտթուրքական կառավարությունը 1914թ. հուլիսի 21–ին սկսեց զորահավաք. թեեւ աշխարհով մեկ հայտարարվում էր Թուրքիայի չեզոքության մասին: Չնայած գոյություն ունեցող օրենքին. ըստ որի զորակոչի ենթակա էին 20–30 տարեկան երիտասարդները. թուրքական իշխանությունները զորակոչի ենթարկեցին 18–48 տարեկան զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց: Զորահավաքը ընթանում

էր խիստ ու դաժան պայմաններում: Զորակոչված հայերի մեծ մասին նույնիսկ զինվորական համազգեստ չտրվեց. էլ չենք խոսում զենքի մասին:

Այն միջոցները. որոնցով իրականացվում էր զորահավաքը. ինչպես նաեւ գավառներից ստացված լուրերը վկայում էին թուրքական իշխանությունների մտադրությունների մասին: Բայց զարմանալին այն էր. որ որեւէ դիմադրություն ցույց չտրվեց զորահավաքի ժամանակ գործադրված բռնություններին:

Դրա փոխարեն հենց հայտնի դաշնակցական Ռուբենի վկայությամբ Վանում «դաշնակցության ղեկավար գործիչները. առանձնապես Արամը. տավուլ–զուռնան ետեւը ձգած. ոգեւորում ու հրահանգում էր ժողովրդին ճակատ մեկնելու»254: Այդպես էր համարյա բոլոր գավառներում: Նույն Ռուբենի վկայությամբ Տարոնում. Սասունում եւ այլ վայրերում դաշնակցությունն ամեն կերպ օգնում էր երիտթուրքական իշխանություններին զորահավաքի կազմակերպման գործում: Դաշնակցությունը նույնիսկ ստեղծել էր զորակոչի հանձնախումբ. որը շրջում էր հայկական գյուղերով. համոզում ու ոգեւորում երիտասարդներին: Այդ հանձնախումբը հայտնաբերում էր զորակոչից խուսափողներին. ձերբակալում նրանց եւ հանձնում իշխանություններին255: Ահա այսպես պրովոկատոր քաղաքական այծերը ժողովրդին տանում էին դեպի սպանդանոց:

Հայերին զանգվածաբար զորահավաքի ենթարկելով երիտթուրքերն սկսեցին իրականացնել Հայոց ցեղասպանության առաջին գործողությունը: Զորակոչի արդյունքում. որը տեւեց վեց ամիս. հայերից կազմվեց 120 աշխատանքային վաշտ: Ահա այսպես հավաքվեց 300 հազար հայ զինվոր: Այդ զինվորների մեծ մասը ոչնչացվեց տարբեր միջոցներով: Այս ոճրագործության մասին այժմ հրապարակի վրա են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր ու վկայություններ. որոնց հարկ չկա այստեղ անդրադառնալ:

Միայն ուզում եմ երկու փաստ հիշատակել դրանց մեկնաբանությունը թողնելով ընթերցողին: 1914թ. հոկտեմբերի 14–ին դաշնակցության Կ.Պոլսի կենտրոնը փաստեց. որ «ներքին գաւառներու վիճակն օրըստօրէ կը ծանրանայ: Ընդհանուր զօրակոչին պատճառով զինուորական պաշարումի վիճակ է յայտարարուած: Անկէ ի վեր հայերը դրական պատասխանեցին զօրակոչին: Ըրինք այն. ինչ որ կրնայինք. որպէսզի բոլոր հայերը. որպէս օսմանեան քաղաքացիներ. կատարէին իրենց պարտականութիւնները»:

Իսկ ահա «Հնչակ» թերթը 1914թ. դեկտեմբերին գրում էր. «Մեծագոյն պատուհասներից է նաեւ զօրահաւաքը... առանց տարիքին. դիրքին. առողջութեանն ուշադրութիւն դարձնելու. բոլոր հայերին. անգամ զինուորական հարկ վճարողներին. կոպտութեամբ. ծեծով քշում են իրենց ընտանիքներից... եւ հեռատես զգուշաւորութեամբ ուղարկում են կայսրութեան հեռաւոր մասերը Սիրիա. Արաբիա. Միջագետք: Կոմիտեն (երիտթուրքական

–Վ.Պ.) խնդիր է դրել հայ ամբողջ բնակչութեանը հայաշատ վայրերից տեղափոխել թրքաշատ տեղեր եւ թուրքական կառավարութիւնը սրի գործադրութիւնը փութկոտ առաջ է տանում»256:

Ահա այսպիսին էր դաշնակցություն կուսակցության քաղաքական կողմնորոշումը Թուրքիայի պայմաններում:

Իսկ ինչպիսի՞ն էր նրա դիրքորոշումը Ռուսաստանում: Այս հարցին նույնպես համառոտակի անդրադառնալով՝ ուզում եմ ընդգծել հետեւյալը:

Ինչպես հայտնի է. 1912թ. սկսվեց շարժում Հայկական հարցը նորից արծարծելու համար: Ահա այդ մասին Լեոյի վկայությունը. «1912թ. աշնանը Բալկանյան պատերազմը սկսվելուց հետո թուրքահայ ժողովրդի վիճակը նորից եւ բուռն կերպով հայ հասարակության զանազան խավերի մտահոգության առարկա դարձավ: Մի կողմից հնարավոր ջարդերի սպառնալիքը եւ մյուս կողմից Թուրքիայի գործերը վերջնականապես կարգավորելու համար հրավիրվելիք միջազգային կոնֆերանսի վրա դրած հույսերն առիթ տվին հայ մտավորականության զգայուն մասին համախմբել ջանքերը ըստ կարելվույն ավելի լավ օգտագործելու նպաստավոր պատմական պահը. մանավանդ որ հայտնի էր դարձել ռուս կառավարության շատ նպաստավոր տրամադրությունը դեպի թուրքահայերի դատը»257:

1912թ. հոկտեմբերի վերջին Թիֆլիսում գումարված հայ հասարակական խավերի ներկայացուցիչների ժողովն ընտրեց ժամանակավոր բյուրո. որի մեջ մտան Հովի. Թումանյանը. Ն.Աղբալյանը. Ալ. Խատիսյանը. Հ.Առաքելյանը եւ այլոք. թվով 7 մարդ:

Արեւմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման հույսը մեծապես կապվում էր Ռուսաստանի հետ: Բարենորոգումների նախագծի քննարկման ընթացքում դաշնակցությունն այնքան ոգեւորվեց. որ նույնիսկ արեւմտահայերին կոչ էր անում զինվել ընդդեմ թուրքերի: Դաշնակցությունն իր գործողություններն իրականացնում էր Ազգային բյուրոյի միջոցով եւ Լեոյի գնահատմամբ ձեռք էր բերել «ամբարտավան մեծամտություն». թե ներկայացնում է հայոց ազգը եւ «հետեւաբար չէր կարող թույլ տալ. որ Հայկական հարցը լուծում ստանար առանց իր եռանդուն մասնակցության»258:

Կ.Պոլսում էլ Ազգային ժողովը դաշնակցության հսկողության տակ էր: Սա առիթ տվեց նորից բորբոքելու միջկուսակցական վեճերը. որոնք լուծելու համար Գր. Զոհրապի առաջարկով ստեղծվեց եւս մի հանձնաժողով. Ազգային ժողովի կողմից ստեղծված «Անվտանգության հանձնաժողովի» կողքին. որի ղեկավարն էր պատրիարք Արշարունին:

Հանձնաժողովը Գր. Զոհրապի. Ե.Դուրյանի. Ակնունու եւ մյուսների մասնակցությամբ ձեռնամուխ եղավ բարենորոգումների նախագծի մշակմանը:

Չխորանալով այդ նախագծի եւ. առհասարակ. նաեւ Մանդելշտամի ներ-

կայացրած բարենորոգումների ռուսական նախագծի վերաբերյալ մեծ տերությունների դեսպանների բանակցությունների մեջ ասեմ, որ դաշնակցությունը ոգեւորված պահանջեց, թե ապագա բարենորոգումներով նշանակվող գլխավոր տեսուչները աշխատակիցների նշանակելը պետք է կատարեն իր գիտությամբ ու համաձայնությամբ: Դաշնակցությունը պատրիարքարանի միջոցով պահանջ ներկայացրեց թուրքական պառլամենտում իր ներկայացուցիչների թիվը հասցնել 20–ի:

Իհարկե, սրան ոչ մի կերպ չէր համաձայնվի երիտթուրքական կառավարությունը: Այս առիթով 1913թ. դեկտեմբերի 4–ին նոր պատրիարք դարձած Զավեն Եղիայանը այցելեց Թալեաթին եւ պահանջեց «մինչեւ քսան հայ երեսփոխան ընտրել տալ զանազան հայաբնակ տեղերէն»: Պատրիարքը հայտնեց նաեւ, որ «պատրիարքարանը իւր նախապէս մատուցած թագրիրին վրայ կը պնդէ եւ չուզեր ոեւէ զիջում ընել եւ, հետեւաբար, կը պահանջէ, որ հայ ազգին թոյլ համեմատութեամբ հայ երեսփոխաններ ընտրուին»259: Թալեաթը մերժեց այս պահանջը:

Վերոհիշյալը այն շատ փաստերից մեկն է, որ դաշնակցությունն ամեն կերպ նվաստացնում էր մյուս ազգային քաղաքական կուսակցություններին ծգտելով ազգի միակ ներկայացուցչի դերակատարության:

Վերջապես 1914թ. հունվարի 26–ին ստորագրվեց ռուս–թուրքական համաձայնագիրը հայկական բարենորոգումների վերաբերյալ:

1914թ. հունվարի 18–ին Գր. Զոհրապը Արշակ Չոպանյանին ուղարկած նամակում հայտնում էր համաձայնագրի ստորագրման մասին: Շարադրելով ռուս–թուրքական համաձայնագրի բովանդակությունը Գր. Զոհրապը գրում էր. «Հայկական հարցն իր գործնական շրջանին մէջ ոտք կոխեց: Ստացածնիս որոշ ժամանակամիջոցի մը համար է միայն եւ անիկա մեր մշտնջենական ճակատագիրը չի ճշդեր...»260:

Վերեւում արդեն անդրադարձել եմ Գր. Զոհրապի նամակի մանրամասն բովանդակությանը եւ միայն հիշեցնեմ, որ նա իր վախի ու ցավի մասին հայտնելով նաեւ նկատի ուներ Ռուսաստանի նկատմամբ համակրանքի դեմ ոտնձգությունները, որոնց հեղինակը, իհարկե, դաշնակցության ղեկավարության տակ գտնվող պոլսահայ վերնախավն էր, որը վախենում էր, թե ռուսական ուղղափառ եկեղեցին կռուսականացնի հայերին եւ այդ պատճառով էլ գերադասում էր մնալ Թուրքիայի կազմում:

Դաշնակցությունն իր ատելությունը տարածում էր այն ամենի վրա, ինչը ռուսական էր, բայց խորամանկում էր, կեղծում իրեն ներկայացնելով ռուսական կողմնորոշման ջատագով: Այդպիսի դիմակը նրա համար էր, որպեսզի իրենից չխրտնեցնի արեւմտահայությանը եւ աչքը միշտ երիտթուրքերի կողմն էր պահում:

Ավելորդ չեմ համարում այս կապակցությամբ մի քանի մեջբերում կա-

տարել դաշնակցության հայտնի գործիչ Ռ.Դարբինյանի «Ռուսական վտանգ» գրքից. որը վերահրատարակվել է 1991թ. Երեւանում, այդ ժամանակ սկիզբ առած թունդ հակառուսական դրսեւորումների պայմաններում:

«Հայ ազգը.– գրել է այդ կեղծարարը.– իր պատմութեան վերջին շրջանում եղել է երկու մեծ ժողովուրդների ռուսի եւ թուրքի լծի տակ եւ հզօրապէս ենթարկուել նաեւ նրանց մտաւոր ու բարոյական ազդեցութեանը»:

Հայերի ռուսական կողմնորոշումը համարելով «անհաղթելի հասարակական պսիխոզ» կեղծարարը առանց ամոթի գրել է. «Ներկայ պահի չկայ աւելի մեծ թշնամի. քան ռուսն է. եւ նրա դէմ պէտք է ուղղուած լինեն մեր բոլոր ուժերը թէ ֆիզիկական. թէ բարոյական. ներշնչուենք, որ մենք կարող ենք կռուել եւ պիտի կռուենք նրա դէմ էլ նոյնքան սեղմ շարքերով ու անվերապահութեամբ. որքան թուրքերի դէմ»:

Ռ.Դարբինյանը պահանջում էր. «Ռուսաստանը պէտք է մերժուի... ոչ միայն որպէս քաղաքական սիստեմ. այլեւ իբրեւ կուլտուրական ազդեցութիւն»: Ըստ նրա հարկավոր էր վերացնել ռուսական մեկդարյա տիրապետության բացասական հետեւանքները:260ա

Ռ.Դարբինյանից ետ չի մնում մեկ այլ ռուսատյաց Ս.Վրացյանը: «Թուրքա–հայկական խնդիրը.– գրել է նա.– լուծվում էր թուրքերի ձեռքով: Թուրքահայաստան առանց հայերի այս համապատասխանում էր եւ ռուսների հաշիվներին»261:

Այնուհետեւ. խոսելով 1916թ. Լոնդոնում եւ Պետրոգրադում տեղի ունեցած բանակցությունների մասին Ս.Վրացյանը գրել է. «Ֆրանսիան. Մեծ Բրիտանիան եւ Ռուսաստանը ստորագրել էին Թուրքիայի անդամահատման գաղտնի համաձայնությունը. ըստ որի հայերին խոստացված հողերը բաժանվում էին երկու մասի. Էրզրումի. Վանի. Բիթլիսի եւ Տրապիզոնի վիլայեթները ստանում էր Ռուսաստանը. Սիրիան ու Կիլիկիան մինչեւ Խարբերդ ստանում էր Ֆրանսիան: Այսպիսով իրագործվում էր Գալիցինների եւ Լոբանով–Ռոստովսկիների երազը Հայաստան առանց հայերի»262:

Իմ նպատակների մեջ չի մտնում խորանալ Սայքս–Պիքոյի պայմանագրի մեջ. որին միացավ Ռուսաստանը: Ճիշտ է. այդ պայմանագրում չէր հիշատակվում Հայաստան անունը. բայց չի կարելի անտեսել, որ դրանով Արեւմտյան Հայաստանի մեծ մասը անցնում էր Ռուսաստանին եւ փրկվում էր:

Իբրեւ դեպքերի ականատես ու մասնակից կարող եմ վկայել. թե 1991թ. ստեղծված հակառուսական մթնոլորտում ինչ հնչեղություն էին տալիս նորաթուխ դաշնակցականներն իրենց կեղծարար առաջնորդի խոսքերին «Ներկա պահին չկա ավելի մեծ թշնամի. քան ռուսն է»:

Միայն հայ ժողովրդի թշնամին կարող է Թուրքիայի ու Ռուսաստանի միջեւ հավասարության նշան դնել եւ կոչ անել պայքարել Ռուսաստանի մեկդարյա տիրապետության բոլոր բացասական հետքերը վերացնելու

համար: Պատմությունը. անցած ժամանակաշրջանը բոլորովին հակառակն են փաստում: Հենց Արեւմտյան Հայաստանի ողբերգական ճակատագիրը դրա պերճախոս վկայությունն է: Այսօր Արեւմտյան Հայաստանում ոչ մի հայ չի ապրում:

Ուրիշ կերպ դասավորվեց Արեւելյան Հայաստանի բնակչության ճակատագիրը: Արեւելահայությունը մտնելով Ռուսաստանի կազմի մեջ ուղղակի փրկվեց ֆիզիկական բնաջնջումից. եւ դրա շնորհիվ Արեւելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգային համախմբման կենտրոն:

Արեւելյան Հայաստանը 162 տարի գտնվելով Ռուսաստանի կազմում. փրկվեց պատերազմներից ու ավերածություններից: Մեր հազարամյակների պատմության մեջ եզակի երեւույթ էր. որ 162 տարի շարունակ Հայաստանի հողը ոչ մի ոսոխի չհաջողվեց պղծել. եւ հայ մարդը հնարավորություն ունեցավ խաղաղ ապրել ու շենացնել իր երկիրը: Առաջին անգամ Հայաստանում հայ բնակչության թիվը հասավ մոտ չորս միլիոնի:

Վերջապես. Ռուսաստանի կազմում գտնվելու շնորհիվ էր. որ 1918թ. մայիսին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Հարցնենք Ռ.Դարբինյանի. Ս.Վրացյանի մեծախոս հետնորդներին. եթե Արեւելյան Հայաստանը չգտնվեր Ռուսաստանի կազմում եւ դրա շնորհիվ չպահպանվեր հայ բնակչությունը. դաշնակցությունը 1918թ. այդ ո՞ր տարածքի վրա պետք է հայտարարեր Հայաստանի անկախությունը:

Հարցնենք նաեւ այդ մեծախոսներին. եթե Արեւելյան Հայաստանը հայտնվեր Արեւմտյան Հայաստանի վիճակում. այդ ինչպե՞ս եւ որտե՞ղ պետք է 1991թ. հռչակվեր Հայաստանի անկախությունը: Ո՞ւր պետք է վերադառնար հայ ժողովրդի «փրկիչ» դաշնակցությունը եւ սկսեր պայքար իշխանության համար. եթե Ռուսաստանի շնորհիվ Հայաստանը պահպանված չլիներ:

Բայց վերադառնանք Թիֆլիսում ստեղծված Ազգային բյուրոյին: 1914թ. սեպտեմբերին Ազգային բյուրոն Ռուսաստանի կառավարությունից իրավունք ստացավ կազմել կամավորական ջոկատներ: Հայոց մոտ մեծ հեղինակություն ունեցող Հովհաննես Թումանյանի. Առաքել Բաբախանյանի (Լեո). Ստեփան Լիսիցյանի մասնակցությամբ Ազգային բյուրոն ծեռք էր բերել որոշակի ազդեցություն:

Դաշնակցությունը շտապեց դրանից օգտվել եւ աստիճանաբար Ազգային բյուրոյի գործունեությունը ենթարկեց իրեն: Օգտվելով կամավորական շարժման համաժողովրդական ինքնաբուխ բնույթից դրա կազմակերումը նույնպես վերցրեց իր ծեռքը այստեղ էլ անտեսելով մյուս քաղաքական ուժերին:

Կովկասյան ռազմաճակատ մեկնող հայ կամավորները զինված էին: Ռազմաճակատ մեկնող հայ մարդը համոզված էր. որ կռվում է իր հայրենիքը ազատագրելու համար: Եվ չէր սխալվում:

Դաշնակցությունը. այսպիսով. եւ Թուրքիայում էր աջակցում երիտթուրքական իշխանություններին հայերի զորահավաք կազմակերպելու գործին. եւ Ռուսաստանում հայ կամավորական ջոկատների կազմակերպմամբ աջակցում էր Կովկասյան ռազմաճակատի ռուսական հրամանատարությանը:

Այս ի՞նչ երկդիմի քաղաքականություն էր: Ինչպես ասում են. դաշնակցության մի գլուխը (Արեւմտյան բյուրո) չգիտեր. թե ինչ է անում մյուս գլուխը (Արեւելյան բյուրո): Սա ի՞նչ քաղաքականություն էր. որ հիմա հետին թվով ուզում են ներկայացնել որպես շատ խելացի ու ազգօգուտ: Պատկերացնո՞ւմ եք. եթե երիտթուրքերը հայ զինվորներին զանգվածաբար զենք տային եւ ուղարկեին ռազմաճակատ. ուրեմն նրանք պետք է կռվեին ռազմաճակատի մյուս կողմում գտնվող իրենց եղբայրների դեմ: Եվ այդ կույր քաղաքականությունը. որը հանգեցնելու էր եղբայրասպան պատերազմի. կարելի՞ է անվանել «խելացի եւ օգտակար». ինչպես փորձում են ներկայացնել դաշնակցության գաղափարախոսները:

***

...Զորակոչի ենթարկվեց նաեւ Ռուբեն Սեւակը որպես բժիշկ: Դատելով հայ օրիորդաց ճեմարանի տնօրինուհու նամակից. որը թվագրված է 1915թ. հունվարի 23–ին. պետք է ենթադրել. որ Ռուբեն Սեւակը զորակոչվել է հունվարի 10–15–ից հետո, որովհետեւ 1915թ. մարտի 8–ին իր օրագրում նա նշում է. «գրեթե երկու ամիսէ ի վեր զինուորական եմ»263:

Այն զորամասը. որտեղ զորակոչվել էր Ռուբեն Սեւակը, գտնվում էր Կ.Պոլսում: Դա նրան հնարավորություն էր տալիս լինել տանը. հանդիպել ընկերներին. մասնակցել գիշերային հավաքներին եւ հանդես գալ ելույթներով:

Սակայն ամենուրեք վխտում էին լրտեսները թուրք եւ ընտանի. որոնք հետեւում էին Ռուբեն Սեւակի ամեն քայլին: Երիտթուրքական իշխանությունները. ի դեմս Ռուբեն Սեւակի. տեսնում էին մեկին. որին լռեցնելու միակ միջոցը միայն ֆիզիկական հաշվեհարդարն էր:

Եվ շուտով ստեղծվեց հարմար առիթը: 1915թ. ապրիլի կեսերից դաշնակիցների զորքերը ընդհուպ մոտեցան թուրքական մայրաքաղաքին սպառնալով գրավել: Կովկասյան ռազմաճակատում էլ ռուսական զորքերն էին հաղթանակներ տանում: Սկսվել էր խուճապ: Թուրքական իշխանությունները նույնիսկ պատրաստվում էին Կ.Պոլսից ապահով վայր տեղափոխել սուլթանին: Չնայած երիտթուրքերի ահաբեկվածությանը, այնուամենանիվ. դաշնակիցների զորքերին չհաջողվեց գրավել Կ.Պոլիսը:

1915թ. ապրիլի 24–ին. Դարդանելում տարած հաղթանակից հետո. թուրքական իշխանություններն սկսեցին Կ.Պոլսում գտնվող հայ մտավորականներին ձերբակալել եւ ուղարկել աքսոր: Արտաքուստ դա կատարվում էր

վտանգավոր ու կասկածելի հայերին մայրաքաղաքից հեռացնելու քողի տակ: Դավաճանների ու մատնիչների օգնությամբ նախապես կազմվել էին այդպիսի անձանց ցուցակները: Միայն մայրաքաղաքում ձերբակալվեց 336 բժիշկ. 176 ուսուցիչ. 160 իրավաբան. 196 գրող. 168 նկարիչ. 62 ճարտարապետ. 578 երաժիշտ, 64 դերասան եւ այլն:

1915թ. ապրիլի վերջերին Կ.Պոլսում սկսվեց Հնչակյան կուսակցության 20 գործիչների դատավարությունը: Մինչ այդ. ապրիլի 8–ին. Վանի բանտում ձերբակալված 120 հնչակյաններ գազանաբար հոշոտվեցին264: Հնչակյաններին երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին ու ոչնչացրին նաեւ այլ վայրերում:

Հնչակյան 20 գործիչները Թալեաթի հրամանով ձերբակալվել էին 1914թ. հուլիսի 16–ին. այն ժամանակ. երբ Կարինում ընթանում էր դաշնակցության ընդհանուր ժողովը: Ես այս հանգամանքը հատկապես եմ նշում. որովհետեւ դաշնակցությունը նույնիսկ կատարվածի համար ցավ չհայտնեց: Հնչակյան կուսակցությունը երիտթուրքերի նկատմամբ անզիջում դիրքորոշում ուներ եւ այդ առումով էլ նրանց համար մեծ վտանգ էր ներկայացնում:

Այն հանգամանքը. որ հնչակյան կուսակցության ղեկավարները ձերբակալվեցին հայերի զորահավաքի ընթացքում. շատ բանի մասին է վկայում: Երիտթուրքերը անչափ անհանգստացած էին հնչակյան կուսակցության գործունեությունից: Արժե հիշել. օրինակ. Փարամազի «Հայի պահանջը» հոդվածը: 1913թ. Փարիզում «Հնչակը» հրապարակեց եվրոպական կառավարություններին ու ժողովուրդներին ուղղված կոչ. որտեղ համոզմունք էր հայտնվում. թե նրանք կօգնեն բազմաչարչար հայ ազգին. որպեսզի նա իր ձեռքն առնի սեփական երկրի «քաղաքական կեանքի կառավարումը»265:

Այդ կոչում. մասնավորապես. ասվում էր նաեւ հետեւյալը. «Հարատեւ պատերազմ չէ արդեօք. իր աւերներով ու կոտորածներով. որ դարեր շարունակ հրահանգած ու գործադրած են թուրք կառավարութիւնները ընդդէմ անպաշտպան հայ ժողովուրդին: Հետեւաբար եւ բնական չէ՞ մեր աղաղակն այդ կարգերուն դէմ յանուն մարդկութեան եւ ժողովուրդներու ազատագրութեան: Արդար չէ՞ մեր բողոքը Հայաստանի մէջ մղուող դարաւոր սպանդին դէմ. որուն նպատակն է բնաջնջել աշխատասէր. կուլտուրական եւ կորովի ազգ մը... Մենք որեւէ թշնամութիւն ունինք ԹՈՒՐՔ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԴԷՄ. որ ինքն ալ մէկ զոհն է օսմանեան կառավարութեանց»266:

1913թ. սեպտեմբերին Կոնստանցայի համագումարում «Հնչակը». դատապարտելով «օսմանականության» գաղափարն ու քաղաքականությունը. ընդունեց որոշում. որով խնդիր էր դրվում հասնել Թուրքիայից անջատ Հայաստանի քաղաքական ինքնավարության267:

1913թ. 3–րդ համարում «Հնչակ» թերթը գրում էր. «Թուրք ագայնականութիւնը. որի ձեռքին է այսօր երկրի կառավարման գործը. առանց տատա-

նուելու. որպէս պատմական անհրաժեշտութիւն. անխնայ կերպով պիտի կոտորի հայերին: Եւ այս անգամ աւելի անողոք. քան 1895–1896–ին. աւելի սաստկութեամբ. քան Ադանայի եղեռնը»: «Թուրք նացիոնալիզմի հին ու նոր ներկայացուցիչները.– այնուհետեւ ընդգծում էր թերթը.– ոչ մի կերպ չեն ուզում հաշտուել հայ ժողովուրդի գոյութեան. բարգաւաճման. կենսունակութեան գաղափարի հետ»:

Երիտթուրքական իշխանութիւնները 1913թ. վերջերից արգելեցին «Հնչակ» թերթի մուտքը Թուրքիա: Թալեաթը բացարձակորեն հայտարարեց. որ «հնչակներն են մեր թշնամիները. նրանց վրա էլ ահաբեկչության սարսափով պետք է ազդել եւ նրանց մտադրություններն իրենց հետ մեռցնել»268:

1915թ. հունիսի 2/15–ին թուրքական դատարանի վճռով հնչակյան կուսակցության 20 անդամներ Կ.Պոլսում կախաղան հանվեցին: Իմ պարտքն եմ համարում այստեղ հիշել կախաղան հանվածներին անուն առ անուն. Փարամազ (Մ.Սարգսյան). Պենե Թորոսյան. Արամ Աչըքպաշյան. Գեղամ Վանիկյան. Երվանդ Թոփուզյան. Ռուբեն Կարապետյան. Հովհաննես Տեր–Ղազարյան. Թովմաս Թովմասյան. Հակոբ Պասմաջյան. Մուրադ Զաքարյան. Մկրտիչ Երիցյան. Գարեգին Պողոսյան. Արմենակ Համբարձուման. Երեմիա Մանուկյան. Աբրահամ Մուրադյան. Մինաս Քեշիշյան. Սմբատ Գելեջյան. Գառնիկ Պոլաջյան. Հրանտ Եկավյան. Պողոս Պողոսյան269:

1915թ. ապրիլի 24–ին Կ.Պոլսում ձերբակալվածների մեջ էին հնչակյաններից Մուրատը. դոկտոր Գրիգոր Ճելազը. Հակոբ Արծրունին. Ստեփան Դանիելյանը. Հակոբ Թերզյանը. Սամվել Թումաճյանը. Հովհաննես Գլճյանը. Հարություն Ճանկուլյանը. Երվանդ Չավուշյանը. Սմբատ Բյուրատը. Պետրոս Կալֆայանը. Կաթմոսը. Մելքոն Կյուրճյանը եւ ուրիշներ:

Ձերբակալվեցին դաշնակցականներ Ակնունին, Խաժակը. Սիամանթոն. Շահրիկյանը. Ռ.Զարդարյանը. Մարզպետը. Շավարշ Քրիսյանը. Բարսեղ Շահպազը. Արմենակ Բարսեղյանը. Դանիել Վարուժանը. Սարգիս Արենցը. դոկտոր Էմիրզե Քեթենճյանը. Միհրդատ Հայկազը եւ ուրիշներ:

Ձերբակալվեցին անկուսակցականներից Կոմիտասը. դոկտոր Տաղավարյանը. Ժագ Սայապազյանը. Միքայել Շամտանճյանը. Ռուբեն Սեւակը. Բյուզանդ Քեչյանը. դոկտոր Հակոբ Թոփչյանը. Գասպար Չերազը. Ենովք Արմենը եւ ուրիշներ270:

Օրինական հարց է առաջանում. ինչո՞ւ երիտթուրքերը ձերբակալեցին իրենց երբեմնի աջակից կուսակցության ղեկավարներին եւ նրանց մեծ մասին ոչնչացրին: Ընդհանրապես տիրապետող է այն կարծիքը. թե դրանով երիտթուրքերը գլխատեցին արեւմտահայ ազատագրական պայքարը. նրան զրկեցին կազմակերպող ուժից:

Իսկ երբ այդ խնդիրը քննարկում ես անկողմնակալ կերպով. ապա առա-

ջին պլան են մղվում մի շարք հարցեր. որոնց պատասխանը շատ բաների մասին է փաստում:

Վերեւում արդեն հիշատակել եմ. որ պատերազմի նախօրյակին դաշնակցությունը օգնում էր երիտթուրքական իշխանություններին հայերի զորահավաք անցկացնելու համար: Եվ դաշնակցության օգնությամբ. նրա ձեռքերով երիտթուրքերին հաջողվեց զորահավաքի անվան տակ հավաքել զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց: Զորակոչի ենթարկվածները տարբեր միջոցներով ոչնչացվեցին: Անզեն հայ զինվորների վրա բժշկական փորձեր էին արվում. որոնց ժամանակ անհաշիվ մարդիկ տանջամահ արվեցին սարսափելի տառապանքներից հետո: Այդ մասին բերեմ միայն մի փաստ: Թուրքական բանակի բժշկական ծառայողները գերմանացի մասնագետների գլխավորությամբ դարձան առաջին համակենտրոնացված ճամբարների փորձարար դահիճներ: Նրանք այդ մարդասպանները, փորձեր էին կատարում տիֆի հարուցիչը հայտնաբերելու եւ բուժելու նպատակով:

Ահա թե ինչ է ասվում մի փաստաթղթում, որը հրապարակվել է Կ.Պոլսում 1919թ. «Հայերին աքսորելու եւ նրանց ջարդի կազմակերպիչների մեջ աչքի են ընկել մեծ թվով թուրք բժիշկներ. որոնցից շատերն ուղղակի պատասխանատու են դաժան արարքների համար: Ոմանք դարձան իրենց գործընկերների սպանողներ. նրանց ունեցվածքի հափշտակիչներ եւ իսլամի մարգարեներ: Մյուսներին հետաքրքրում էին հետագա սերունդները նրանով. որ հայ զինվորներին ներարկում էին բծավոր տիֆի վիրուս... Թուրք բժիշկներն ու բակտերեոլոգները օգտագործում էին նպաստավոր դեպքերը. որպեսզի հիվանդների վրա փորձարկեին բծավոր տիֆի դեմ իրենց ֆանտաստիկ սիճուկը: Մահվան դատապարտվածների վրա այդ փորձերը կատարելու հրամանը տրվում էր սանիտարական վարչության կողմից: Որպես փորձարկման միջոց ընտրվում էին հայերը: Մինչեւ սպանելը կարելի էր նրանց օգտագործել:

Հիվանդանոցներում փորձերը ձեռնարկվեցին անհապաղ: Փորձարկվողների մեծ մասը մեռնում էր մի քանի օրվա ընթացքում: Ներարկումները կատարվում էին մեծ մասշտաբներով: Երիտասարդ. ամրակազմ հայ զինվորներին բռնությամբ կատարում էին ներարկում: Կ.Պոլսի թերթերը գրում էին հրաշքի ու գիտական մեծ հայտնագործության մասին: Շնորհավորական հեռագրերին վերջ չկար... Սակայն այդ էնտուզիազմը երկար չտեւեց. աստիճանաբար փոխարինվեց հիասթափությամբ ու բազմանշանակ լռությամբ: Եթե որոշ թուրք բժիշկներ. իսկապես. հետապնդում էին գիտական նպատակներ. ապա մյուսների համար դա ուղիղ եւ արագ միջոց էր «անցանկալիներին» ոչնչացնելու գործում: Փորձերին ենթակա էին ոչ թե ծովային խոզուկներն ու ճագարները. այլ երիտասարդ. գերազանց կազմված-

քով, ոչ մի հանցանք չկատարած հայերը»:271 Այդ միջոցով սպանվեց 52 հայ բժիշկ: Հայ բժիշկներին ոչնչացնելու հանցագործության ամբողջ պատմությունը շարադրված է Գասպար Կարոյանի «Մեծ եղեռնի նահատակ բժիշկները» գրքում (Բոստոն, 1957թ.):

1953թ. հուլիսի 5–ին Ստամբուլում հրատարակվող «Ռեսիմլի Թարիհ» թերթում տպագրվել է թուրք մարդասպան բժիշկներից մեկի Ռաշիդ բեյի հետ հարցազրույց: Թղթակցի այն հարցին, թե «Ինչպէ՞ս պատահեցաւ, որ առանց դոյզն խղճահարութեան դուք սպանեցիք ձեր հայ արուեստակիցները, երբ որպէս բժիշկ դուք Հիբոկրատի երդումով խոստացած էք ծառայել մարդկութեան անշահախնդրօրէն եւ նուիրումով», մարդասպանը ցինիկորեն պատասխանել է. «Բժիշկ ըլլալս չէր կրնար մոռցնել տալ ազգութիւնս: Ճիշդ է, որ բժիշկ եմ, բայց իբրեւ թուրք ծնած լինելով, թրքութիւնս յաղթահարեց բժշկական հանգամանքս, համոզուելով, որ ազգիս կը ծառայեմ»272:

Հայ զինվորների մեծ մասը օգտագործվում էր մերձճակատային տարածքներում պաշտպանական խրամատների եւ այլ կառույցների պատրաստման համար: Առանց տաք հագուստի, սովի, սառնամանիքի պայմաններում տասնյակ հազարավոր հայ զինվորներ մեռցվեցին իրենց փորած դիրքերում: Տասնյակ հազարավոր հայ զինվորներ օգտագործվում էին որպես բեռնակիրներ: Փաստորեն թուրքական բանակի համար անհրաժեշտ պաշարները տեղափոխվում էին նրանց միջոցով: Դժվար չէ պատկերացնել, որ ծանր բեռի տակ կքած հայ զինվորները քայլում էին տասնյակ կիլոմետրերով եւ ինչ տառապանք էին կրում: Նրանք, ովքեր ուժասպառ էին լինում եւ այլեւս անկարող էին շարունակել ճանապարհը, տեղն ու տեղը ոչնչացվում էին ուղեկցող զինվորների կողմից: Այս կերպ ոչնչացվեցին բեռնակրության տակ դրված տասնյակ հազարավոր առողջ, ամուր կազմվածքով հայ տղամարդիկ:

Այսպիսով, զորահավաքի ենթարկված 300 հազար հայ տղամարդկանց մեծ մասը ոչնչացվեց մինչեւ 1915թ. գարուն ընկած ժամանակաշրջանում: Մնում էին կանայք, երեխաները, ծերունիներն ու հիվանդները: Նրանց տեղահանելն ու աքսոր «ուղարկելը» արդեն տեխնիկայի խնդիր էր: Տիրում էր համատարած խուճապ: Տեղահանվածների մեծ մասը մեռավ կամ գազանաբար հոշոտվեց ճանապարհին: Նրանցից միայն քչերին հաջողվեց փրկվել:

Միայն մի քանի վայրերում, որտեղ հայ բնակիչները չէին լսել դաշնակցականների հորդորները եւ զենքը չէին հանձնել թուրքական իշխանություններին, հաջողվեց որոշ դիմադրություն կազմակերպել...

Այսպիսով, փաստորեն այլեւս չկար այն ուժը, որը կարողանար զենք վերցնել ու դիմադրել թուրք ջարդարարներին: Ուրեմն, նման պայմաննե-

րում ավելորդ է խոսել, թե երիտթուրքերը դաշնակցության ղեկավարներին ծերբակալեցին ու ոչնչացրին, որպեսզի դրանով գլխատեին արեւմտահայության դիմադրական շարժումը:

Ստեղծված պայմաններում, թե դաշնակցությունը ո՞ւմ պետք է ղեկավարեր, հայտնի չէր: Փաստորեն դաշնակցության ղեկավարները հայերի զորահավաքից հետո դարձել էին զորք չունեցող գեներալներ եւ այլեւս որեւէ վտանգ չէին ներկայացնում երիտթուրքերի համար:

Այդ դեպքում, ինչո՞ւ երիտթուրքերը ձեռնարկեցին դաշնակցության նշանավոր գործիչների ոչնչացումը: Այս հարցին պատասխանելու համար նախ նշեմ, որ դաշնակցությունը երիտթուրքերի հետ համագործակցությամբ կապեց իր ձեռքերը եւ զրկվեց ինքնուրույն գործելու հնարավորությունից: Հետազոտողներից շատերը, ինչպես նշել եմ, այս համագործակցությունը համարում էին հարկադրված քայլ, ոմանք էլ մեղմ գույներով դա ներկայացնում են որպես սխալ եւ այլն:

Բայց միանգամայն հստակ է, որ այդ համագործակցությամբ դաշնակցության ղեկավարությունը գիտակցորեն, թե անգիտակցորեն, դա արդեն կարեւոր չէ, դավաճանեց արեւմտահայության ազգային շահերին եւ դարձավ երիտթուրքերի հլու կամակատարը:

Ինչի՞ հասցրեց դա: Հարկավոր չէ մոռանալ, որ դավաճաններին չեն սիրում եւ չեն վստահում առաջին հերթին նրանց նոր տերերը: Սիա եւ ամբողջը: Հնարավոր եմ համարում, որ հատկապես դաշնակցականամետ շրջանակները կբարձրացնեն աղմուկ, տողերիս հեղինակի հասցեին զանազան պիտակներ կպցնեն, բայց փաստը մնում է փաստ թագավորը մերկ է: Իսկ իմ հնարավոր ընդդիմախոսներին ուզում եմ ասել, որ մեր համար արեւմտահայության բնաջնջումը, բռնի տեղահանումը, պատմական հայրենիքից զրկելը այնպիսի իրողություններ են, որոնց դիմաց դաշնակցության ղեկավարների վերաբերյալ վերոհիշյալ տեսակետը այլընտրանք չունի: Ի վերջո, հակառակը հո չի՞ կատարվել:

Իսկ ինչո՞ւ երիտթուրքերը ծերբակալեցին ու ոչնչացրին այն հայ մտավորականներին գրողներին, բժիշկներին, հոգեւորականներին եւ այլոց, որոնք ոչ մի կուսակցության, առավելապես դաշնակցությանը չէին պատկանում: Ձերբակալվեցին ու ոչնչացվեցին, որովհետեւ նրանք երբեք չէին համակերպվել երիտթուրքերի հետ համագործակցությանը եւ Աբդուլ Համիդի ու երիտթուրքերի հաստատած ռեժիմի միջեւ տարբերություն չէին տեսնում: Սիա, հենց նրանք էլ ներկայացնում էին այն վտանգը, որից երիտթուրքերը վախենում էին...

Ասում են, թե մահը հավասարեցնում է բոլորին: Դժվար է համաձայնվել այդ մտքի հետ տվյալ պարագայում: Երիտթուրքական հեղափոխությունից գինովցած Ակնունին աջ ու ձախ պախարակում էր նրանց, ովքեր դժգոհութ-

յուն. կասկածանք կամ էլ անհամաձայնություն էին հայտնում երիտթուրքերի հետ համագործակցության մասին: Իսկ Ակնունին գինովցած մնաց մինչեւ 1914թ. նոյեմբերի 5–ը. երբ բանը բանից անցել էր արդեն, երբ երիտթուրքերը իրենց քաղաքական նպատակները կենսագործելու գործնական քայլեր էին ձեռնարկել եւ նա միակ ելքը տեսավ փախուստի մեջ: Դժբախտաբար. դա նրան չհաջողվեց: Ակնունին իր ընկերների հետ միասին դարձավ իրենց ձեռքով հյուսած կախաղանի զոհը:

Իհարկե. յուրաքանչյուր հայ. անկախ նրա համոզմունքից. պատկերացումներից. դատապարտում է երիտթուրքական հանցագործներին, ողբում համազգային անանց վիշտը. բայց նաեւ պարտավոր ենք դրա հետ միասին հիշել. որ երբեմն մարդիկ զրկվում են կյանքից իրենց գործած սխալի պատճառով: Առավել եւս. երբ այդ սխալների պատճառով տուժում են ավելի մեծ թվով մարդիկ. տուժում է մի ամբողջ ժողովուրդ. ինչպես դա պատահեց տվյալ դեպքում արեւմտահայության հետ: Ահա այս առումով էլ Ակնունու եւ դաշնակցության մյուս առաջնորդների ողբերգական մահը նրանց չի ազատում պատասխանատվությունից: Եվ սրա գիտակցումը առավելապես անհրաժեշտ է մեզ ապրողներիս համար. նրանց համար. ովքեր ստանձնել են մեր ժողովրդի առաջնորդությունը...

Ինչպես վերեւում նշվեց. ձերբակալվածների մեջ էր նաեւ Ռուբեն Սեւակը. որին նույնպես աքսորեցին: Ռուբեն Սեւակի աքսորում գտնվելու. նրա կյանքի վերջին օրերի մասին իրենց հուշերում պատմել են մի շարք ականատեսներ: Այդ վկայությունները բավականաչափ կարեւոր են Ռուբեն Սեւակի մասին մեր ունեցած պատկերացումը լրացնելու, ամբողջացնելու համար:

Գրիգորիս ծ. վարդապետ Պալաքյանը գրել է «Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն» հուշերի գիրքը. որը լույս է տեսել 1920թ. եւ վերահրատարակվել Բեյրութում 1977թ.: Նա պատմում է. որ ձերբակալվածները գնացքով Պոլսից տարվեցին Էնկյուրի: Սենճան Քէօյի կայարանում ձերբակալվածներից առանձնացված 75 մարդու տարան այլ ուղղությամբ273:

Գ.Պալաքյանը բերում է իրեն հայտնի աքսորյալներից զոհվածների ցուցակը.

«1. Խաչատուր Մալումեան (Ակնունի) յայտնի գրագէտ եւ դաշնակցական պետ. նահատակուած Ուրֆայի ճամբուն վրայ:

2. Գարեգին Խաժակ. ուսուցիչ–գրագէտ եւ դաշնակցական գործիչ. նահատակուած Ուրֆայի ճամբուն վրայ:

3. Ռուբէն Զարդարեան. ուսուցիչ–գրագէտ. Ազգ. երեսփոխան. դաշնակցական գործիչ եւ խմբագրապետ դաշնակց. օրգան «Ազատամարտի». նահատակուած Ուրֆայի ճամբուն վրայ:

4. Սարգիս Մինասեան. «Դրօշակի» խմբագիր եւ ուսուցիչ. դաշնակ. գործիչ:

5. Յարութիւն Ճանկուլեան. հնչակեան պետ. Ազգ. երեսփոխան. նահատակուած Ուրֆայի ճամբուն վրայ:

6. Տոքթ. Նազարէթ Տաղաւարեան. հանրային եռանդուն գործիչ. Ազգ. երեսփոխան, բժշկական երկասիրութեանց հրատարակիչ. նահատակուած Ուրֆայի ճամբուն վրայ:

7. Համբարձում Պոյաճեան (Մուրատ). հնչակեան յայտնի պետ. Ազգ. երեսփոխան, նահատակուած Կեսարիոյ մէջ:

8. Յարութիւն Շահրիկեան, փաստաբան. հանրային գործիչ եւ յայտնի գործիչ. նահատակուած Էնկիւրի:

9. Ատոմ Եարճանեան (Սիամանթօ). բանաստեղծ. դաշնակցական. երեսփոխան, նահատակուած Էնկիւրի:

10. Հայկ Թիրաքեան (Հրաչ). դաշնակց. գործիչ. Ազգ. երեսփոխան. նահատակուած Էնկիւրի:

11. Ներսէս Զաքարեան. ուսուցիչ եւ հնչակեան գործիչ. Ազգ. երեսփոխան եւ կեդ. ազգ. վարչութեան անդամ. նահատակուած Էնկիւրի:

12. Բարսեղ Շահպազ. փաստաբան. դաշնակ. գործիչ. նահատակուած Խարբերդի եւ Մալաթիոյ ճամբուն վրայ:

13. Շաւարշ Քրիսեան. ուսուցիչ եւ դաշնակ. գործիչ. նահատակուած Էնկիւրի:

14. Ենովք Շահէն. դերասան. նահատակուած Էնկիւրի:

15. Ժագ Սայապալեան (Փայլակ). հանրային եռանդուն գործիչ. Ազգ. երեսփոխան. նահատակուած Էնկիւրի:

16. Տոքթ. Խաչիկ Պարտիզպանեան. հանրային գործիչ. նահատակուած Էնկիւրի:

17. Տոքթ. Կարապետ Փաշաեան. օսմ. պառլամենտի նախկին անդամ. Ազգ. երեսփոխան. դաշնակցական գործիչ. նահատակուած Էնկիւրի:

18. Արիստակէս Գասպարեան. փաստաբան. հանրային եռանդուն գործիչ եւ Ազգ. երեսփոխան. նահատակուած Էնկիւրի:

19. Ներսէս Փափազեան, դաշնակ. օրգան «Ազատամարտի» խմբագիր եւ դաշնակ գործիչ. նահատակուած Էնկիւրի:

20. Համբարձում Համբարձումեան. խմբագիր. նահատակուած Էնկիւրի:

21. Գրիգոր Թորոսեան (Կիկո). համանուն երգիծաթերթի հրատարակիչ եւ հանր. գործիչ. նահատակուած Էնկիւրի:

22. Ռոստոմ Ռոստոմեան. վաճառական եւ ազգային գործիչ. նահատակուած Էնկիւրի:

23. Սմբատ Բիւրատ. ազգ. վիպագիր եւ հանրային գործիչ. Ազգ. երեսփոխան. նահատակուած Էնկիւրի:

24. Մելքոն Կիւրճեան (Հրանդ գրական անունով ծանօթ). Ազգ. երեսփոխան. հայագէտ, դաշնակցական գործիչ. նահատակուած Էնկիւրի:

25. Թեոդոր Մեծիկեան. վաճառական. նահատակուած էնկիւրի:
26. Գէորգ Թերճիմանեան. վաճառական. նահատակուած էնկիւրի:
27. Խաչիկ Իտարէճեան. ուսուցիչ. նահատակուած էնկիւրի:
28. Մկրտիչ Յովհաննիսեան. ուսուցիչ. դաշնակ. գործիչ. նահատակուած էնկիւրի:
29. Սարգիս Աբօ. կովկասահայ. ուսուցիչ. դաշնակ. գործիչ. նահատակուած էնկիւրի:
30. Աբրահամ Հայրիկեան. տաճկագէտ եւ տնօրէն «Արդի» վարժարանի. Ազգ. երեսփոխան. նահատակուած էնկիւրի:
31. Գեղամ Բարսեղեան. խմբագիր–ուսուցիչ եւ դաշնակ. գործիչ. նահատակուած էնկիւրի:
32. Յովհաննէս Գըլըճեան. գրավաճառ. նահատակուած էնկիւրի:
33. Օննիկ Ժիրայր. ուսուցիչ. նահատակուած էնկիւրի:
34. Լեւոն Լարենց. վերակազմեալ հնչակեան պետ. գրագէտ. ուսուցիչ. նահատակուած էնկիւրի:
35. Տիգրան Չեօկիտեան. գրագէտ–ուսուցիչ. խմբագրապետ Պոլսոյ «Ոստան» պարբերաթերթի. հանրային գործիչ. նահատակուած էնկիւրի:
36. Յարութիւն Գոնեալեան. դերձակ. նահատակուած էնկիւրի:
37. Միհրդատ Հայկազն. հովանոցավաճառ. բազմաժամանակեա տարագիր. դաշնակ. գործիչ. Ազգ. երեսփոխան, նահատակուած էնկիւրի:
38. Պետրոս Գալֆաեան. նախագահ Մագըրգիւղի թաղապետութեան. դաշնակ. գործիչ. նահատակուած էնկիւրի:
39. Կարապետ Թաշչեան. նահատակուած էնկիւրի:
40. Յարութիւն Աստուրեան. նահատակուած էնկիւրի:
41. Կարապետ Սարաֆեան. նահատակուած էնկիւրի:
42. Վռամշապուհ Սամուէլօֆ. ռուսահայ սեղանավոր. հանրային եռանդուն գործիչ. նահատակուած էնկիւրի:
43. Սարգիս Արմտացի. նահատակուած էնկիւրի:
44. Միհրան Աղաճանեան. սեղանավոր. Պոլիս վերադարձած եւ կախուած:
45. Նշան կիտուածանկարիչ Գումգաբուէն. նահատակուած էնկիւրի:
46. Սերոբէ Նորատունկեան. Սանասարեան վարժարանի ուսուցիչ. դաշնակ. գործիչ եւ Ազգ. երեսփոխան. նահատակուած էնկիւրի:
47. Բարթող Զօրեան (Ժիրայր). հրատարակիչ. դաշնակ. գործիչ. նահատակուած էնկիւրի»274:

Աքսորյալների մի խումբ. ինչպես պատմում է Պալաքյանը. կառքերով էնկիւրիի կայարանից ուղարկվում է Գասթեմունի կողմը: Միեւնույն կառքի մեջ նրա կողքին նստած է եղել Կոմիտասը: Պատմելով այս մասին Պալաքյանը գրում է. «Հայ ժողովուրդի շինական երգերու վարպետն ու անզուգական վարդապետը Հայր Կոմիտաս. որ մեր կառքին մէջ կը

գտնուէր. արդէն մտքի տարօրինակ տրամադրութիւններ կը ցուցնէր եւ հաստարմատ ծառերը շարժուն եւ յարձակող աւազակներ կարծելով. միշտ իր գլուխը վերարկուի փէշերուս ներքեւ կը ջանար թաքցնել. որսորդի երկիւղէն աւազի տակ գլուխը թաղող կաքաւներու նման: Կը թախանձէր. որ պահպանիչ ըսեմ իր գլխուն վրայ. յուսալով վերագտնել իր խռովայոյզ հոգիին հանդարտութիւնը»275:

Սա. ըստ երեւոյթին. Մեծն Կոմիտասի խելագարության առաջին վկայությունն է: Նուրբ հոգու տեր մարդը չէր դիմացել ճանապարհին տեսած բռնություններին:

Աքսորյալների խումբը, թվով 150 մարդ. բերվում է Չանկըրի (Անկարա): «Մարդկային բեկորներ էինք.– հիշում է Պալաքյանը.– խլուած մեր ընտանեկան ծոցէն. մեր ընկերական դիրքերէն եւ նետուած էինք յանկարծ Փոքր Ասիոյ խորը. անշուք անկիւն մը: Զրկուած էինք կեանքի ամենաանհրաժեշտ տարրական պիտոյքներէ. պառկած չոր տախտակներու վրայ. գլուխ գլխի. ոտք ոտքի. սիրելիներու կարօտը մեր տանջուող սրտերու մէջ. վաղուան անորոշութեան սարսափը մեր հոգիներուն մէջ»276:

Գ.Պալաքյանն իր հուշերում բերում է Չանկըրի աքսորվածների ցուցակը. որոնց մեջ էր նաեւ Ռուբեն Սեւակը:

Չանկըրիի զորանոցում բանտարկված 150–ից ավելի հայ մտավորականների տառապանքի մասին պատմող Գ.Պալաքյանը գրում է. «Պոլսէն աքսորական մտաւորականներ եւ ընկերներ ի մի եկած. առանց խտրութեան կուսակցութիւններու եւ դասակարգի. հաւատացեալի թէ կրօնքի անտարբերի կամ թերահաւատի. մթնաշաղին մոմի տմոյն լոյսի մը մէջ. ժամերգութիւն կը կատարէինք: Երբ Կոմիտաս վարդապետ սկսաւ իր մելամաղձոտ եւ սրտառուչ «ՏԷՐ ՈՂՈՐՄԵԱՆ». ծայր առաւ հեկեկանք մը ամէն կողմէ. որը հնար չէր զսպել: Կու լայինք ամէնքս ալ. տղու պէս կու լայինք մեր ձգած սիրելիներուն վրայ. կու լայինք մեր ազգի անբախտութեան վրայ. առանց ենթադրելու. թէ արեան աշխարհաւեր աննախընթաց նոր փոթորիկներու արդէն նախօրեակին կը գտնուինք: Երբ ազգ ու հայրենիք ի մի հարուած պիտի փորձէին բնաջնջել մեր ցեղային դարաւոր թուրք թշնամիները»277:

Ահա այսպես. երբ բոլորը բանտարկված էին ու սպասում էին իրենց ճակատագրին. մոռացել էին կուսակցություն ու դասակարգ. միացել էին միասնաբար մահն ընդունելու համար: Բայց ինչքա՜ն շահեկան կլիներ. եթե նրանք այդ բոլորը. միանային հանուն կյանքի հաշվի չառնելով կուսակցություն ու դասակարգ: Սակայն նույնիսկ այդ ծանր պայմանների մեջ. ինչպես վկայում է Պալաքյանը. «մեր մէջ կային ոչ նուազ լաւատեսներ. որոնք կը կարծէին շնորհիւ Իթթիհադի օդափոխութիւն մը ըրած ըլլալ գարնան առթիւ...»278:

Անսպասելիորեն թուրքական իշխանությունները հնարավորություն տվեցին. որպեսզի աքսորյալները բնակություն հաստատեն քաղաքի մեջ:

Ազատ գործելու, ինչ որ վճռական քայլ կատարելու պայմաններ էին ստեղծված: Բայց ոչինչ չարվեց: Ու դրա փոխարեն «ոմանք փոքր խումբերով այգիներու եւ պարտէզներու մէջ կ'երթային կերուխումի. ուրիշներ իբր թէ մտաւորականներ, օրն ի բուն նստած խաղի սեղաններու շուրջ «Փոքեր» եւ «Ֆրափ» կը խաղային եւ կը հաւատային թէ օդափոխութեան եկած են, այնքան անտեղեակ էին ահաւոր կացութեան»279:

Այս զվարճություններն այնքան բուռն էին կատարվում, որ նույնիսկ թուրքերն են սկսում զգուշացնել ավագներին, ասելով, թե «չէք գիտեր, որ ժամանակը փափուկ է. ինչո՞ւ ձերինները իրենք զիրենք կերուխումի տուած են. հիմայ ասոնց ժամանակը չէ...»280:

Ասվածից պետք է եզրակացնել, որ նույնիսկ ստեղծված պայմաններում նրանք, ովքեր ժամանակին «գինովցել» էին, այժմ էլ շարունակում էին իրենց նույն կերպ պահել: Եվ դժվար չէ պատկերացնել Ռուբեն Սեւակի վիճակը. գտնվելով «գինովցածների» ու լալկանների միջավայրում: Իսկապես. մարդ արարածը անուղղելի է: Եվ դրա հետեւանքը, որպես կանոն, ավելի անկանխատեսելի է դառնում, երբ «գինովցածությունը» երկար ժամանակ իրեն զգացնել է տալիս:

Գ.Պալաքյանը հայտնում է նաեւ Ռուբեն Սեւակի սպանության մասին: Ռուբեն Սեւակը, Դանիել Վարուժանը եւ երեք այլ աքսորյալ, ոստիկանների ուղեկցությամբ կառքով Չանկըրիից տեղափոխվում են էնկիւրի: Ճանապարհին Թյունա կոչվող վայրում քուրդ հրոսակները Հալո անունով ավազակի գլխավորությամբ հարձակվում են աքսորյալների վրա: Ավազակները մերկացնում են նրանց զգեստները չվնասելու համար եւ «ապա դաշոյնները քաշած կը յարձակին իրենց անզէն եւ անպաշտպան զոհերուն վրայ, եւ անխնայ կը սկսին ծակծկել եւ բզկտել դաշոյններով տարաբախտ մեր ընկերներուն մարմինները, եւ դանակով անդամահատել ասոնց ոտքերն ու բազուկները եւ այլ զգայարանները»281:

Գ.Պալաքյանը պատմում է, որ Ռուբեն Սեւակի ու Դանիել Վարուժանի սպանության մասին իրեն հայտնել է թուրք կառապաններից մեկը:

1919թ. Կ.Պոլսում «Յուշարձան ապրիլ տասնըմէկն» սգահանդեսի հանձնախմբի կողմից տպագրված ժողովածուի էջերում տեղ է գտել Միքայել Շամտանճյանի «Չանղըրըէն վերյիշումներ» հուշագրությունը: Մ.Շամտանճյանը հայտնում է, որ սկսած 1915թ. հունիսի վերջերից. մեկ ու կես ամիս եղել է Ռուբեն Սեւակի հետ միասին աքսորում: Երբ աքսորյալներին որոշ ժամանակով արտոնվում է բնակվել քաղաքում, Ռուբեն Սեւակը սկսում է զբաղվել բժշկությամբ: Նա բուժում է նաեւ թուրք չէթէճի Արապաճը Իսմայիլի աղջկան. որին վիրահատել էր Պոլիս վերադարձած բժիշկ Տիճանյանը:

Մ.Շամտանճյանը պատմում է. թե ինչպես Ռուբեն Սեւակն իրեն տեղեկացրել է. որ Իսմայիլը առաջարկել է ընդունել մահմեդականություն, եթե

ուզում է կենդանի մնալ: Ռուբեն Սեւակը կտրականապես մերժում է այդ առաջարկությունը:

Ըստ Մ.Շամտանճյանի վկայության, շուտով ստացվում է 37 մարդու ցուցակ, որով արտոնվում էր նրանց վերադարձը ցանկացած բնակավայր, բացի Պոլիսից: Պարզվում է, որ այդ 37–ից հինգը արդեն մեկնել են այլ քարավանով: Ուստի հարկավոր էր ցուցակը լրացնել Ռուբեն Սեւակի, Դանիել Վարուժանի եւ երեք այլ աքսորյալների անուններով: Այդ ցուցակի մեջ մտնելու համար Ռուբեն Սեւակն ու Դանիել Վարուժանը հեռագիր են ուղարկում իրենց ընտանիքներին եւ ներքին գործերի նախարարություն:

Մինչ այդ Կ.Պոլսում գործի էր անցել Ռուբեն Սեւակի կինը Ժաննին: Նա հանդիպում է երիտթուրքերի միջավայրում մեծ հեղինակություն վայելող Հալիտե էդիպ խանումին եւ խնդրում միջամտել ամուսնուն աքսորից ազատելու եւ ետ վերադարձնելու համար: Հալիտե էդիպը սառնասրտորեն մերժում է ասելով, թե «տոքթոր Ռուբեն Սեւակը ուրիշ մեծ յանցանք մը ունի, այն ալ, շատ լաւ գրելու եւ խօսելու կարողութիւն ունենալն է: Ան մեծ ազդեցութիւն ունի հայ ժողովուրդին վրայ, իր խօսքերովը եւ իր գրութիւններովը կրնայ հայ ժողովուրդը ոտքի հանել: Այս է իր յանցանքը»282:

Պետք է ասել, որ Ռուբեն Սեւակի ողբերգական մահից հետո էլ թուրքական իշխանությունների վախը շարունակվում էր նաեւ հետագա տարիներին: Նրա հարազատները, որոնք դեռ բնակվում էին Կ.Պոլսում, գտնվում էին ոստիկանական հսկողության տակ283:

Տիկին Սեւակը մշտապես լինում էր նաեւ Կ.Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյի մոտ նրան խնդրելով, պահանջելով լուր հաղորդել իր ամուսնու գտնվելու վայրի մասին: Ոստիկանապետը խորամանկում էր եւ ամեն անգամ մի սուտ հորինում ասելով, թե Ռուբեն Սեւակին պետք է ուղարկեն Գերմանիա, կամ էլ շուտով նրան կազատեն: Բայց այս խաբեությունը երկար չէր կարող շարունակվել եւ, ի վերջո, տիկին Սեւակը ոստիկանապետի երեսին շպրտում է «կը խաբես զիս, կը խաբես զիս»284:

Ռուբեն Սեւակի կինը չէր հաշտվում դառն իրողության հետ եւ մեծ հույսեր փայփայելով դիմում է Գերմանիայի դեսպան Վանհենհայմին: Բայց խորամանկ ու հայատյաց դիվանագետը ամեն անգամ հրաժարվում էր ընդունել Ժաննիին իր շատ զբաղվածությունը պատճառաբանելով: Ի վերջո, դեսպանը նահանջեց տիկին Սեւակի համառության առջեւ ու օգոստոսի մեջ ընդունեց նրան: Օգնության փոխարեն Վանհենհայմը տիկին Սեւակի խնդրանքին պատասխանեց ասելով. «Դուն թշուառական գերմանուհի, լքեցիր ազգդ, ամուսնացար այս հայուն հետ եւ հիմա կուգաս խնդրելու, որ ազատես զինքը: Ան ետ պիտի չգայ մէյ մըն ալ: Անոնք մեռնելու գացին»285:

Տիկին Սեւակին մնում էր դեսպանին տալ արժանապատիվ պատասխան. «Մանչ զաւակ մը ունիմ: Անիկա պիտի մեծցնեմ այնպէս, որ օր մը պի-



Ժաննի Սեւակը (Աբել) իր զավակներ՝ Լեւոնի եւ Շամիրամի հետ: Փարիզ, 1922թ.:

տի գայ իր հօր վրէժը առնէ գերմանացիներէն»285:

Նորից վերադառնանք Մ.Շամտանճյանի հուշերին: Շուտով պարզվեց, որ արգելված էր հայ աքսորյալներին թողնել Չանկըրի, եւ պետք է նրանք տեղափոխվեին Այաշ: Ռուբեն Սեւակը հույս ուներ, որ Կ.Պոլսից կստանա պատասխան եւ կարողացավ իր մեկնումը դեպի Այաշ հետաձգել 2–3 օրով: Սակայն Կ.Պոլսից այդպես էլ պատասխան չստացվեց:

1915թ. օգոստոսի 26–ին Ռուբեն Սեւակը, Դանիել Վարուժանը երեք այլ աքսորյալների հետ միասին երկու կառքով, ոստիկանների ուղեկցությամբ ճանապարհվեցին Այաշի ուղղությամբ: Նրանց մեկնումից հետո հաջորդ օրը Կ.Պոլսից հաղորդված հեռագիրը արտոնում էր, որ Ռուբեն Սեւակը, Դանիել Վարուժանը եւ մյուսները մտցվեն վերոհիշյալ ցուցակի մեջ: Սակայն օգոստոսի 26–ին նրանք արդեն սպանվել էին Այաշի ճանապարհին287:

1920թ. իր հուշերն է հրապարակել բժիշկ Վահան Ալթունյանը: Նա պատմում է, որ Չանկըրըի աքսորում Վարուժանի շուրջ համախմբված «թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ունկնդրէինք», երբ ներս են մտցնում Ռուբեն Սեւակին: Ռուբենը ներկաների հարցումներին ի պատասխան «կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ծերբակալման պատճառը, մատնութեամբ միայն ծեռք անցուիլը... Ամենէն դէպքերն իսկ անփութօրէն եւ զուարթութեամբ կը նկարագրէր, ասիկա Չիլինկիրեանին բնատուր յատկութիւնն էր»:

«Սեւակի չէնշող եւ ընկերական ազնիւ բնավորութիւնը,– շարունակում է Վ.Ալթունյանը,– պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալքուենք, որով իր իսկ թելադրութեամբ գետեզերեայ պարտէզներու մէջ փոքր պտոյտներ կը կազմակերպէինք...»: Վ.Ալթունյանը հիշում է նաեւ, որ Ռուբեն Սեւակը չանկըրըցի թուրքերին այնպես էր բուժում, որ սկսել էին նրան աստվածացնել:

1915թ. օգոստոսի կեսերին աքսորյալներից առանձնացվում է 25 հոգանոց խումբ Պոլիս վերադառնալու համար: «Նոյն գիշեր,– պատմում է Վ.Ալթունյանը– Չիլինկիրեան զիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ, հետաքրքրութեամբ կ'ընդունիմ առաջարկը, ուստի դուրս կ'ելլենք բացօթեայ տեղ մը երթալու համար: – Լաւ մտիկ ըրէ, Վահան, կ'ըսէ ինծ թրթռուն ձայնով մը, ես մահուան դատապարտուած եմ, ասով հանդերձ կեանքս քու ճարպիկութենէդ կախում ունի, աշխատէ որպէսզի ժամ առաջ ազատուիմ...»:

Եվ Ռուբեն Սեւակը Վ.Ալթունյանին հայտնում է հետեւյալը, որը մեջբերում եմ ամբողջությամբ. «Հոս իթթիհադական Չէթէ Ռէիսի Արապաճը Պաշը ըսուած արարածին աղջիկը անյոյս վիճակի մէջ հիւանդ էր. խնամելու համար զիս կանչեցին, լաւ առիթ մըն էր, այդ կարգի գազան մը ծեռք ձգելու, ուստի ամէն ճիգ ու ջանք ի գործ դրի աղջիկը ստոյգ մահուընէ մը փրկելու, յաջողութիւնս կատարեալ եղաւ, աղջիկը բուժուած էր: Ժամա-

նակ մը վերջ այդ մարդակերպ անասունը զիս տուն հրաւիրեց. սենեակին մէջ առանձին էինք. սկսաւ շնորհակալ ըլլալ. եւ խօսքը շարունակելով «Աղջկանս կեանքը ինծ շնորհած ըլլալուդ յաւիտեան երախտապարտ եմ. ուստի կը փափագիմ որ ես ալ փոխարինեմ. ահա առիթը ներկայացած է. Պոլսոյ կեդրոնը մահուանդ վճիռը արձակած է եւ գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր. քանի որ դուն ալ աղջիկս ազատեցից. ես քեզ պիտի ազատեմ. միայն մէկ պայմանաւ. այսինքն պէտք է անմիջապէս իսլամանաս եւ աղջիկս կնութեան առնիս: Արդէն մեղք չէ՞ որ քեզի պէս գեղեցիկ եւ ֆիտան մէկը կեաւուր մնայ»: – Բայց պէյ. ըսի. ես արդէն ամուսնացած եմ. կինս գերմանուհի է. Ֆոն Տէր Կոլց փաշայի թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն է. երկու զաւկի ալ հայր եմ. այդ ինչպէ՞ս կարելի է: –Էհ. լաւ. պատասխանեց անայլայլօրէն. շատ մեղք պիտի ըլլայ երիտասարդութեանդ. որովհետեւ վստահ եղիր. եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել. քաղաքէն դուրս ելլելուդ անպայման պիտի սպաննուիս. ուրեմն 15 օր միջոց կուտամ. լաւ խորհէ»: Ալ պատասխանել անօգուտ էր. «շատ լաւ» ըսի ու մեկնեցայ»:

Ռուբեն Սեւակը ընկերոջը հանձնարարում է. որ Պոլիս հասնելիս նրա առաջին գործը լինի հանդիպել Կոմիտաս վարդապետին եւ նրա հետ գնալ իր տուն եւ տիկնոջը պատմել ամեն բան. քանի որ «նա գիտէ. թէ ուր պիտի դիմէ. ինծի ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու ճարը գտնելու...»288:

Իրերի բերումով Վ.Ալթունյանը տեղափոխվեց Էնկիւրի. որտեղ էլ մնաց ծերբակալված ու այդպես էլ չկարողացավ կատարել Ռուբեն Սեւակի խնդրանքը:

Հովհաննես Չիլինկիրյանը պատմում է. որ 1970թ. ծայնագրել է Ռուբեն Սեւակի քրոջ Հայկանուշ Չեւիկյան–Չիլինկիրյանի հուշերը. որտեղ նա հայտնում է որոշ փաստեր եղբոր մասին: Հայկանուշը հիշել է նաեւ. որ Ռուբեն Սեւակը մերժել է թուրքի պահանջը ասելով. թե «անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս թրքանալով»: Ինչպես վկայում է Հ.Չիլինկիրյանը. միայն 1990թ. նշանավոր պատմաբան Վահան Տատրյանը Նյու Յորքում հայտնաբերում է Պոլսում 1920թ. հրատարակված «Հայ բուժակ» թերթը. որտեղ էլ տպագրվել էին Վ.Ալթունյանի վերոհիշյալ հուշերը. որոնք հաստատում էին Հայկանուշի պատմածը289:

1922թ. «Հայաստանի կոչնակ» հանդեսում հրապարակվել են Հովհան վարդապետ Կարապետյանի հուշերը: Նա նույնպես որպես աքսորյալ գտնվում էր Չանկըրի քաղաքում. Ռուբեն Սեւակի հետ միասին:

Վարդապետի հուշերը տարբերվում են մյուսներից: Նրա հաղորդած տեղեկություններն ունեն միտումնավոր ուղղվածություն: Նախ. թուրք աղջկա բուժման հետ կապված խնդիրը Ռուբեն Սեւակը հայտնել էր միայն Վահան

Ալթունյանին, որն էլ այդ մասին հրապարակել էր 1920թ.: Վարդապետը իր հուշերը հրապարակել է 1922թ. եւ ամենայն հավանականությամբ կրկնելով Վ.Ալթունյանին, իրեն եւս մասնակից է դարձնում Ռուբեն Սեւակի պատմածին: Բայց վարդապետը այդպես է վարվել որոշակի նպատակով, որը երեւում է նրա հետեւյալ խոսքերից: Իբր թե Ռուբեն Սեւակը վարդապետի հետ խորհրդակցել է Իսմայիլի պահանջից խուսափելու միջոցների մասին: «Անդրադարձանք,– գրում է վարդապետը,– նաեւ Չանկըրըյէ փոխուստ տալու կարելիութեանց. բայց չի յաջողեցանք եզրակացութեան մը հանգիլ: Կար կէտ մը սակայն, որու շուրջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր եւ այդ ալ վեր բռնել էր ամէն գնով դրօշը քրիստոնեական հաւատքին»290:

Վարդապետը Ռուբեն Սեւակին ներկայացնում է աստվածավախ ու հավատացյալ: Գույներ չի խնայում նկարագրելու Սեւակին սուրբ հաղորդությունը ճաշակելիս: Իսկ երբ օգոստոսի 26–ին ճանապարհում էին Ռուբեն Սեւակին ու Դանիել Վարուժանին, Վահան Քեհյանին, Օննիկ Մաղազաճյանին եւ Հարություն անունով հացագործին, Ռուբեն Սեւակը իբր թե վարդապետին խնդրում է «Աստուածաշունչ Մատեան մը հայթայթել իրեն համար: Անմահութեան ծարաւի իր հոգին կը փափաքէր աստուածային ճշմարտութեանց լոյսին մէջ թեւածել: Միակ նմոյշը որ քովս ունէի, յանձնեցի իրեն: Յայտնեց թէ ծայրէ ծայր պիտի կարդար զայն»:

Վարդապետի ակնարկը շատ է թափանցիկ: Միայն հասկանալի չէ, թե ինչու պետք է Ռուբեն Սեւակը նրանից Աստվածաշունչը խնդրեր, իսկ վարդապետն էլ նրան հանձներ իր միակ օրինակը: Իհարկե, վարդապետին շատ ձեռնտու էր Ռուբեն Սեւակի նման գաղափարներ ունեցող մարդուն ներկայացնել որպես կրոնապաշտ ու երկյուղով լցված:

Վարդապետի պատմությունն այնքանով համոզիչ չէ նաեւ նրա համար, որ Ռուբեն Սեւակը դեռեւս Պերպերյան վարժարանում սովորելու ժամանակ կարդացել էր Աստվածաշունչը եւ դրա հիման վրա գրել «Հիսուսի կեանքը« ծավալուն ուսումնասիրությունը:

Կարծում եմ արժե ծանոթանալ Ռուբեն Սեւակի որոշ մտքերի, որ նա արտահայտել է այդ ուսումնասիրության մեջ: «Մարդ այնչափ կը սիրէ այդ կրօնքը,– գրել է Պերպերյան վարժարանի ավարտական դասարանի սովորող Ռուբենը,– որ կամաւ կը կուրանայ չտեսնելու համար տգեղութիւններն անոր, սեւ պարիսպ մը կը բարձրացնէ իր մտքին հետաքրքիր կոյտերուն առաջ չճանչնալու համար զայն որ այդ կրօնքը տաշեց, ծեւեց ու իր բազկաց մէջ նետեց»:

«Վայ անոր,– բացականչում էր Ռուբեն Սեւակը,– որ կրօնքին հիմեր պրպտել ուզեց, վայ անոր, որ սեւ վարագոյրին ճեղքէն անդին դիտեց ու ճշմարտութիւնը պոռաց»:

Ռուբեն Սեւակը գրում էր, որ ինքը գիտե միայն «Ռընաններու, Թոլսթոյնե-

րու առջեւ պատկառիլ. խոնարհիլ»: Նա համոզված ազդարարում էր. «Հեռի կրօնքի կոյր նախապաշարումներուն գերին ըլլալէ: Հիսուսի կեանքը գծած եմ այնպէս որպէս կ'ընբռնիմ եւ որպէս համոզուած եմ որ ըլլայ մարգարէներու. աւետարանիչներու եւ Ընծանի291 ընթերցումէն վերջ»292:

Այստեղ ամբողջապես արտահայտված է Ռուբեն Սեւակի աթեիզմը, որն ավելի հասուն տարիքում ձեւավորվեց որպես հաստատուն աշխարհայացք:

Ռուբեն Սեւակի արխիվում պահպանվել է նրա ուսանողական տարիներից մնացած մշակումների տետրը: Այդ տետրի 146–րդ էջում ինչ–որ մի լրագրից կտրված ու փակցված է մի կտոր, որտեղ գրված է հետեւյալը. «Չունենալով հայը զուտ ազգային կազմակերպութիւն՝ ոչ կուլտուրական եւ ոչ քաղաքական. կրթութիւնն իսկ խառնուած ըլլալով եկեղեցիի ու եկեղեցականի հետ. իբրեւ ազգ միակ ապաստանարան ունենալով եկեղեցին ու եկեղեցականը՝ դէպի այդ ըմբռնումը, դէպի այդ ապաստանարան ուղղուած իւրաքանչիւր հարուած անխուսափելիօրէն եւ իբրեւ բնական հետեւութիւն, պիտի հարուածէր ազգային կառուցուածքին ու տարտամ վիճակի մէջ գտնուող ազգային գաղափարը»293:

Ռուբեն Սեւակը լրագրից պոկված այդ կտորը մատիտով վերցրել է շրջանակի մեջ՝ դրանով ընդգծելով նրանում արտահայտված մտքի հետ իր համաձայնությունը:

Արժե այստեղ հիշել Ռուբեն Սեւակի «Գիւղական եկեղեցիին մէջ» 1909թ. գրած բանաստեղծության հետեւյալ տողերը.

«Անցեալ տարի էր. յոգնած ապաքէն,
Շատ քաղաքակիրթ այս Արեւմուտքէն.
Ուր խիղճը բառ մ'է. մարդը մեքենայ.
Աշխարհը գործարան մը անխոնջ. անխնայ.
Սէրը հաշիւ մ'է. կրօնքը դրամ»294:

Այս մի քանի տողի մեջ Ռուբեն Սեւակը խտացված արտահայտել է իր վերաբերմունքը քաղաքակիրթ Արեւմուտքի նկատմամբ, որտեղ մարդկային ոչ մի առաքինություն հարգի չէ. իսկ սերը միայն հաշիվ է, կրոնը՝ դրամ:

Ռուբեն Սեւակը մատնացույց է այնում այն հանգամանքը, թե ինչու, ում մեղքով է կրոնը վերածվել դրամի: Ո՞ւմ մեղքով հասկանալի էր եւ այն ժամանակ. եւ նաեւ հիմա:

Ի՞նչ է այսօր հայ եկեղեցու վիճակը: Նրա պառակտումը գնալով խորանում է. թեեւ հնչում են մեղրածոր խոսքեր ու երդումներ: Մի՞թե դրամի զորությունը չէ, որ խորացնում է եկեղեցու պառակտումը: Այս պառակտումը հստակապես ակնառու եղավ 1999թ. կաթողիկոսական ընտրությունների

նախօրյակին: Դրան յուրօրինակ բացատրություն է տալիս Հովհաննես Չիլինկիրյանը հիշատակելով հետեյալ թեկնածուներին.

1. Երուսաղեմի պատրիարք Թորգոմ Մանուկյան
2. Ամերիկայի Արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ Պարսամյան
3. Կ.Պոլսի պատրիարք Մեսրոպ Մութաֆյան
4. Կաթողիկոսական տեղապահ Ներսես Պոզապալյան:

Հովհաննես Չիլինկիրյանը հանգամանորեն գնահատում է բոլոր թեկնածուներին. նշում. որ վերջին երեքը Պոլսում են ծնվել, եղել են Երուսաղեմի միաբան. որոնք «Հայաստանի այսօրուան ճակատագրական օրերուն, հայկական եկեղեցիին մէջ փոթորիկ ստեղծողներն են» նաեւ:

Հ.Չիլինկիրյանը վկայակոչում է գերմանական «Ռեյնիշեր Մերկուր» թերթը. որը 1999թ. սեպտեմբերի 24–ին անդրադառնալով էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի թեկնածուների հարցին, նշում է. որ «Վատիկանն ու Ամերիկան անուղղակի կերպով կը փափաքին միջամուխ ըլլալ ընտրութիւններուն եւ կը հովանաւորեն Խաժակ Պարսամեանին»295:

Կարծում եմ. ավելորդ է հիշել. թե ինչու է Հռոմի եկեղեցին շահագրգռված. որպեսզի հայոց կաթողիկոսի աթոռին նստեր իր ցանկացած թեկնածուն:

Եթե եկեղեցու սպասավորների մեջ (այն էլ աչքի ընկնող) կան այսպիսի հոգեւորականներ. ապա զարմանալի կլիներ. որ կրոնը չդառնար առուծախի առարկա: Ես այս տխուր իրողությունը հարկ համարեցի հիշել. քանի որ թվում էր. թե Հայոց ցեղասպանությունից հետո. Արեւմտյան Հայաստանի կորստից հետո պետք է միաբանվեին հայոց բոլոր ուժերը: Դժբախտաբար այս միաբանությունը. ուժերի համախմբումը այդպես էլ մնաց լոկ բարի ցանկություն: Եվ այդ անմիաբանության մեջ կարեւոր պատասխանատվություն է կրում հայ եկեղեցու հոգեւոր դասի վերնախավի այն մասը. որը կրոնը դարձրել է շղարշ եւ պայքարում է միայն ու միայն ելնելով իր եսասիրական շահերից:

Բայց վերադառնանք վարդապետ Կարապետյանի հուշերին: Նա հիշատակում է նաեւ Ռուբեն Սեւակի հետեյալ խոսքերը. «Կը լսեմ թէ Ղալատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Չեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջեւ, ուստի կը թելադրեմ որ դուն իբր հոգեւորական կանչես հոս գտնուողները եւ երդում առնես իրաքանչիւրէն թէ հաստատ պիտի պահեն քրիստոնեական հաւատքը»296:

Վարդապետը պատմում է նաեւ թուրք աղջկան բուժելու. իբրեւ վարձահատույց կրոնափոխ լինելու միջոցով նրա հետ ամուսնանալու առաջարկության մասին եւ ընդգծում. որ Ռուբեն Սեւակը «հաւատարիմ իր առջի օ-

րուան ուխտին արիաբար դիմադրեր էր տրամաբանութեան ուժով»:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ նշել հետեւյալը: Ռուբեն Սեւակը մերժել էր կրոնափոխ լինելու առաջարկը ոչ թե նրա համար, որ ուզում էր հաստատ պահել «քրիստոնեական հաւատքը»: Այլ մերժման համար կար այլ, ավելի մեծ պատճառ: Ռուբեն Սեւակը լավ էր հասկանում, թե ինչ ազդեցություն կունենար իրենց իսլամացումը գավառներում ապրող անօգնական հայության վրա եւ համոզված էր, որ այդ փաստն, անկասկած, նրանց մոտ մեռցնելու էր պայքարի ոգին, կոտրելու էր դիմադրելու կամքը, վերջնականապես նետելու էր հուսահատության մեջ:

«Եթե,– ասել է Ռուբեն Սեւակը,– մենք իսլամանանք կամ ընդունինք թուրքին ըսածները, մենք մեր դատին դաւաճանած կ'ըլլանք: Մենք առաջնորդներ ենք հայ ժողովուրդին: Թրքանալը նուաստանալ է: Եթէ մենք դաւաճանենք մեր դատին, ժողովուրդը պիտի կորսնցնէ իր հաւատքը պայքարի: Մենք օրինակ պիտի ըլլանք անոնց: Մենք պիտի մեռնինք, որ Հայ ազգը ապրի»297:

Սա էր Ռուբեն Սեւակի համար կարեւորը:

Վարդապետը պատմում է նաեւ, որ Ռուբեն Սեւակի ու Դանիել Վարուժանի նահատակվելուց երկու եւ կես ամիս անց եղել է սպանության վայրում, տեսել է նրանց կիսաթաղ ոսկորները: Այստեղ եւս վարդապետը մեղանչում է ճշմարտության դեմ: Եվ ահա թե ինչու:

Գ.Պալաքյանը, որին արդեն հիշատակել եմ, հայտնում է, որ օգոստոսի 26–ի հաջորդ օրը, երբ հայտնի է դառնում կատարված ոճրագործությունը, Գասթեմունիի կուսակալության ոստիկանապետը հարցաքննիչ դատավորների եւ ոստիկանների ուղեկցությամբ շտապում է Թյունա: «Հոն– գրում է Գ.Պալաքյանը,– կը գտնեն հինգ թշուառ զոհերը անճանաչելի վիճակի մէջ՝ ջուրի մէջ նետուած... Ասոնց մարմինները թաղել տալէ եւ ոճրագործները ձեռք անցնելէ վերջ, ոստիկանին ու ոստիկան զինուորին հետ էնկիւրի բանտը կը նետուին պատերազմական ատեանի առջեւ դատուելու համար: Դատարանին մէջ 4 քիւրտերը բացայայտ կերպով յայտարարեցին, թէ իրենք գործած են Չանկըրըի իթթիհադի կոմիտեի հրամանով եւ յանձնարարութեամբ... հետեւապէս իրենց հետ անոնք ալ հարկ էր դատարան քաշել»298:

1919թ. հունիսի 17–ին «Նոր կեանք» լրագիրը հրապարակեց էնկիւրիի պատերազմական ատյանի առջեւ կառապան Հասանի տված վկայությունը: Կառապանը պատմել է, որ իր կառքն են նստել ոստիկանի եւ ոստիկան–զինվորի ուղեկցությամբ Պոլսից Չանկըրը աքսորվածները: Նրանցից մեկը սեւամորուք էր, խիստ երիտասարդ ու շատ վառվռուն աչքերով... «Շատ մտահոգ էին եւ ընկճուված երեւոյթ մը ունէին: Ձեռքերնին կապուած էին»: Ոստիկանը հինգ աքսորյալներին նստեցնում է իր կառքի մեջ, իսկ մյուսում տեղավորվում են ոստիկանները:

Կառքերը ուղղություն են վերցնում դեպի Թյունա գյուղ, որը Չանկըրը-ից վեց ժամվա հեռավորության վրա է գտնվում: «Թիւնէյէն կէս ժամ ասդին էինք– պատմում է կառապանը,– երբ յանկարծ գիշերուան տեսած հեծեալ զինուորականը ուղղակի ուղղուեցաւ իմ կառքիս եւ ձիէն իջնելով բռնեց իր ձիուն սանձը եւ ուզեց տանիլ կառքը ճամբէն դուրս այն խորունկ ձորին մէջ, որ կը բացուէր բլուրին ստորոտը: Գետին ցատկեցի, ոստիկան–զինուորն ալ նոյնը ըրաւ: Կը կարծէինք, թէ աւազակներու կողմէն յարձակում կը կրէինք եւ կը պաշտպանէինք ինքզինքս, բայց ոստիկանը միջամտելով հրամայեց քաշուիլ»: Կառքին մոտեցած չորս զինված անձինք կապում են կառապանների ձեռքերը եւ հետո կառքից իջեցնում հինգ աքսորյալներին: Ոստիկանն ու ոստիկան–զինվորը անծանոթ հեծյալ զինվորականի հրամանով խուզարկում են աքսորյալներին ու կողոպտում նրանց մոտ եղած իրերը: Չորս ավազակները աքսորյալներին հրամայում են հետեւել իրենց:

Այնուհետեւ կառապան Հասանը վկայում է. «Զինեալ անձերը... մտան պզտիկ անտառի մը մէջ: Հոն աւազակները խոյացան էֆէնտիներուն վրայ, մերկացուցին զանոնք իրենց զգեստներէն եւ բոլորովին մերկ վիճակի մէջ դրին: Չեմ կրնար նկարագրել այն տեսարանը, որուն ներկայ գտնուեցայ: Այս խեղճ զոհերը մէկիկ մէկիկ կապուեցան ծառերուն: Չէին կրնար յիրենք զիրենք պաշտպանել, ձեռքերնին կապուած էր»:

«Յետոյ,– շարունակում է կառապանը,– մեծ ու պզտիկ աւազակները հանեցին իրենց դաշոյնները եւ սկսան հարուածներով ծակծկել, յամրաբար եւ զօրաւոր կերպով: Դատապարտեալներուն աղաղակները եւ իրենց անկարող կատաղութիւնը կը յուզէին սիրտս... Հինգն ալ հաւասար խողխողումներու կ'ենթարկուին, կ'անարգուին եւ ի վերջո մարդկային ըմբռնումի կարողութենէն շատ վեր, անլուր վայրագութիւններով կը սպաննուին»:

Ահա այսպիսի վայրագությամբ սպանվեցին Ռուբեն Սեւակը, Դանիել Վարուժանը եւ մյուսները:

1924թ. բժիշկ Ս.Զարեւանդը Նյու Յորքում տպագրում է «Անցորդի տպաւորութիւններ – Դանիէլ Վարուժանի եւ տոքթ. Ռ.Չիլինկիրեանի (Սեւակ) գերեզմանները» գիրքը, որտեղ պատմում է նաեւ կառապան Հասանի հետ իր հանդիպման մասին: Հասանը վկայում է, որ «բռնի մերկացնելու փորձի մը դէմ Սեւակ կ'ընբոստանայ, իսկ Վարուժան ստոիկեան իմաստունի մը պէս համակերպող ոգիով մը կը հնազանդի»299:

Կառապան Հասանի ուղեկցությամբ Ս.Զարեւանդը ողբերգությունից չորս տարի անց այցելում է Ռուբեն Սեւակի, Դանիել Վարուժանի եւ մյուսների սպանության վայր: Նա գրել է. «Չորս տարուան տեղատարափ անձրեւն ու ձիւնը բոլորովին աննշմար դարձուցած էին անոնց գերեզմանափոսը եւ շատ բնական կը գտնէի որ նոյն իսկ Հասանի ճշգրիտ ցուցմունքին վրայ եւ

առաջնորդ Հօր ընդարձակ պեղումներով անոնց ոսկորներէն որեւէ հետք գտնելը անկարելի եղած էր»:

Հարկ համարեցի այսպես հանգամանորեն անդրադառնալ Ռուբեն Սեւակի վերջին օրերին եւ նրա նահատակման մասին վկայություններին հետեւյալ պատճառով: Հուշագիրներից ոմանք Ռուբեն Սեւակի սպանությունը վերագրում են այն թուրք աղջկա հորը. որն իբր թե դրանով վրեժ էր լուծում Ռուբեն Սեւակից իր առաջարկությունը մերժելու համար: Ինձ թվում է. որ այդ միջոցով հուշագիրները ձգտել են իրողությունը գունազարդել. գուցեեւ դրան գեղարվեստական շունչ տալ: Նրանց ցանկության դեմ ոչինչ չունեմ. բայց կա մեկ եւ. իմ համոզմամբ, ավելի կարեւոր հանգամանք:

Ռուբեն Սեւակի սպանությունը պետական մակարդակով նախապատրաստված հանցագործություն էր, որին տեղյակ էին Կ.Պոլսում գտնվող գերմանական դիվանագետները: Այդ հանցագործությունն իրականացրին «Թեշքիլաթի մախսուսա» հատուկ կազմակերպության ավազակները:

Այդ կազմակերպությունը, ինչպես վկայում են փաստերը. ձեւավորվեց 1914թ. օգոստոսին: Դրա մեջ ընդգրկվեցին հատուկ այդ նպատակի համար բանտերից ազատ արձակված մարդասպաններն ու ծանր հանցագործություն կատարածները: «Թեշքիլաթը» ստեղծելիս երիտթուրքական հանցագործ պարագլուխները նորից կենդանություն տվեցին Աբդուլ Համիդ սուլթանի ստեղծած «Համիդիե» ավազակախմբերին. այն ավելի կատարելագործելով...

«Թեշքիլաթ մախսուսա» կազմակերպության ղեկավարն ու ոգեշնչողը ոչ անհայտ Բեհաէդդին Շաքիրն էր: Այդ նա էր, որ շրջում էր երկրով մեկ ու բանտերից հավաքագրում մարդասպաններին: «Ես կարծում եմ.– ասում էր այդ սադիստը.– մեզ համար հարմար մարդիկ գտել եմ. ես նրանց բանտերի մեջ գտա: Դրանք ոճիր գործած. մարդասպանության եւ զինվորական ծառայությունից խուսափելու պատճառով բանտ ընկած մարդիկ են: Եթե նրանց ազատ արձակենք եւ խմբերի բաժանենք. կարծում են. որ մի շատ լավ հատուկ կազմակերպություն կստեղծենք»300:

«Թեշքիլաթ մախսուսա»–ի վրա էր դրվել հայ բնակչության տեղահանման մասին օրենքի կատարումը: Թե մարդասպանները ինչպես պետք է իրագործեին այդ օրենքը, նախապես հայտնի էր:

Ավազակային այդ կազմակերպության ղեկավարության մեջ էին մտնում նաեւ դոկտոր Նազըմը եւ Ալի Շուքրին301: Այս եռյակի կոմիտեն հաստատեց հայերին ոչնչացնելու մեթոդներն ու միջոցները: Կոմիտեի հանձնարարականի մեջ կար նաեւ այսպիսի հրահանգ. «Ոստիկան պաշտոնյաները. համաձայն այս հրամանի, հայերին կհանձնեն նրանց սպասող հատուկ կազմակերպությանը չեթեներին եւ կվերադառնան. իսկ չեթեներն այդ հայերին մինչեւ վերջին մարդը կսպանեն եւ որպեսզի հանրային առողջությա-

նը չվնասեն. դիակները նախապես պատրաստված փոսերը կգցեն ու կթաղեն: Եվ այս ծեւով հաջորդաբար կիրականացնեն բնաջնջումը»:

Ինչպես հայտնի է. 1920թ. հունվարի 13–ին թուրքական ռազմական դատարանը Բեհաէդդին Շաքիրին դատապարտեց մահապատժի: Արծակված դատավճռում, մասնավորապես, ընդգծվում էր. «...Բ.Շաքիր բեյը, որպես «հատուկ կազմակերպության» նախագահ, Ստամբուլից դուրս գալով, շրջագայել է Տրապիզոնի, Էրզրումի եւ այլ վիլայեթներում: Միաժամանակ բանտերից դուրս բերված ոճրագործներից եւ այլ հանցագործներից կազմված հրոսակախմբերի գլուխն անցնելով տարբեր ժամանակներում, տարբեր վայրերում կոտորել է տեղահանված հայերին եւ կողոպտել նրանց ունեցվածքը: 3–րդ բանակի տեղակայման շրջանում (այդտեղ էր գտնվում նաեւ Չանկըրը քաղաքը-այժմ Անկարա – Վ.Պ.) Բ.Շաքիր բեյը կազմակերպեց եւ գործի դրեց մարդու մսագործների: Բոլոր խժդժությունները, մարդկային չարիքները, ոճիրներն ու անկարգությունները Բ.Շաքիրի ձեռքերով կազմակերպված դեպքեր են: Հրոսակներից ոմանք ազատված էին կախաղանից ու ցցից, մյուսներն էլ արյունարբու ռազմիկներ էին եւ ոստիկաններ կազմակերպված ոճիրներ գործելու համար: Պետությունը նրանց թիկունք էր կանգնած»302:

Ասվածը նկատի ունենալով որոշակիորեն կարելի է ասել, որ վերեւում նշված հուշագիրներն էլ վկայում են, որ Ռուբեն Սեւակին, Դանիել Վարուժանին ու մյուս երեք աքսորյալներին ուղեկցող ոստիկանները վարվել են վերոհիշյալ հրահանգին ճիշտ համապատասխան եւ նրանց հանձնել թեշքիլաթի ոճրագործ ավազակներին:

Այսպիսով լիարժեք հիմք կա ասելու. որ Ռուբեն Սեւակի սպանությունը պատահականության հետեւանք չէ: Նրա սպանությունն իրագործվել է թուրքական պետության ուղղակի հանձնարարությամբ:

Այժմ. կարծում եմ, շատ կարեւոր է պարզել այն հարցը. թե ինչու էր գերմանական դեսպանը հրաժարվում ընդունել Ռուբեն Սեւակի տիկնոջը եւ ինչու այդ դեսպանությունը չօգնեց Ռուբեն Սեւակին ազատելու եւ վերադարձնելու համար:

«Թեշքիլաթի» կազմակերպմանն ու գործունեությանն ակտիվ մասնակցում էին գերմանացի շատ սպաներ, որոնք, ըստ էության, գործնական ու կարեւոր դեր էին խաղում: Գերմանիայի դեսպան Վանհենհայմը, որը հայտնի էր իր հայատյացությամբ, անպայման տեղյակ էր թեշքիլաթի ծրագրերին ու գործողություններին:

Ռուբեն Սեւակի նկատմամբ ֆիզիկական հաշվեհարդարի հարցը որոշված էր թեշքիլաթի, ավելի ճիշտ թուրքական պետության մակարդակով: Այդ մասին գիտեր գերմանական դեսպանը եւ դրա համար էլ տեւական ժամանակ խուսափում էր ընդունել Ռուբեն Սեւակի տիկնոջը:

Հետագայում էլ գերմանական դեսպանատունը խուսափողական պատասխաններ էր տալիս Ժաննի Սեւակի ու նրա ծնողների դիմումներին կեղծելով իրականությունը: Այդ մասին է վկայում գերմանական դեսպանատան պատասխանը ուղղված Ֆրանց Աբելին: Ահա այն.

«Գերման կայսերական դեսպանատուն. Բերա. 15 սեպտեմբերի 1915.

Յարգարժան պարոն Ֆրանց Աբել.

...Ինչ կը վերաբերի ձեր բժիշկ Չիլինկիրեան կոչուող փեսին հարցին. անպայման տիկին Աբելի ճամբով տեղեակ եղած էք, թէ վերը անունը նշուող անձը օգոստոսի վերջաւորութեան. Չանղըրըէն Անկորա գացող ճամբուն վրայ ոճրագործներու ձեռքով սպաննուած է:

Գերման կայսերական դեսպանատունը այս հարցին այս տեսակ տխուր վերջաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար իր վշտակցութիւնը կը յայտնէ եւ կայսերական հիւպատոսարանին հետ գործակցաբար, տիկին Աբելին, իր աղջկան եւ իր թոռնիկներուն հետ անվտանգ Գերմանիա վերադարձնին ապահոված է:

Կ'ուզեմ նաեւ աւելցնել, թէ Բարձրագոյն դռնէն ստացուած տեղեկութեան համեմատ ոճրագործներուն չորսը, որոնց զոհը եղած է ձեր փեսան, ձերբակալուած են եւ միւսներուն հետապնդումը կը շարունակուի»303:

Անշուշտ. այսպիսի պատասխանը չէր կարող բավարարել Ժաննի Սեւակին ու նրա ծնողներին, որոնք էլ դիմեցին գերմանական կառավարությանը: Այս անգամ դեսպանատունը ավելի ընդգծված ցինիզմով լեցուն գրություն է ուղարկում իր կառավարությանը կեղծելով ամբողջ իրականությունը:

Ժամանակին Լեփսիուսը հրապարակել է գերմանական դեսպանատան պատասխան գրության միայն առաջին մասը. հասկանալի պատճառով խուսափելով դրա վերջին հատվածը հանրությանը հայտնի դարձնելուց: Ավելի ուշ սփյուռքահայ անվանի պատմաբան. Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ մեծ վաստակ ունեցող Վահագն Տատրյանը գերմանական արխիվներից հայտնաբերել է այդ գրության ամբողջական տեքստը, որին ծանոթանալը շատ հարցերի պատասխան է տալիս: Հենց դա էլ նկատի ունենալով ստորեւ այդ փաստաթուղթը մեջբերում եմ ամբողջությամբ. Վ.Տատրյանի թարգմանությամբ.

«Առ կայսերական վարչապետ

Գերմանական կայսերական դեսպանատուն. Բերա, 5 հոկտեմբերի 1915.

Բժիշկ Ռուբէն Չիլինկիրեան, որ հայ շրջանակներու մէջ ծանօթ անձնաւորութիւն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ ապրիլ 24–ին ձերբակալուեցաւ Անատօլու աքսորուելու նպատակաւ: Նախապէս որոշուած էր, որ ան Անքարայի մօտ Այաշ աքսորուի, տեղ մը, ուր կը պահուին եւ մասամբ ոստիկանական հսկողութեան տակ կը գտնուին աւելի ծանր կերպով մեղադրուողները: Դեսպանատան միջամտութեան շնորհիւ, ան Չանկըրըի (Անքա-

րա) մէջ արգելակուեցաւ, ուր արգելակեալները կրնան ազատ կերպով մանգալ եւ իրենց արհեստները կիրարկել:

Տիկին Տոքթ. Չիլինկիրեան եւ մայրը Տիկ. Աբէլ այնուհետեւ աշխատեցան ենթակայի վերադարձը եւ ապա իր Գերմանիա հաստատուիլը ապահովել: Թուրք կառավարական պաշտօնեաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկութեամբ, որ, ինչպէս կը հետեւի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն – Տոքթ. Չիլինկիրեան կը նկատուի իբրեւ մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի: Տիկ. Աբել դեսպանատան մէջ պնդեց, որ ոստիկանական ընդհանուր տնօրէն Պետրի պէյ ըսած էր, որ ապահով պայմաններու տակ Գերմանիա ճամբորդելու արտօնութիւն կրնար տրուիլ Տոքթէօրին: Երբ կայսերական դեսպանատունէն պաշտօնեայ մը Պետրիի հարցուց սակայն թէ իրա՞ւ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտայայտութիւն մը ունեցած ըլլալը:

Վերջապէս երկու տիկիները փորձ մըն ալ ըրին Տոքթ. Չիլինկիրեանի Անքարա մնալու արտօնութիւն ձեռք ձգելու ուղղութեամբ այն պահուն, երբ իրմէ օգոստոս 26–ին, հեռագիր մը ստացան որ կը ծանուցանէր թէ զինքը նոյն օրը Այաշ պիտի փոխադրէին:

Դեսպանատան գրաւոր դիմումին վրայ ներքին գործոց նախարարութիւնը հեռագրով հրահանգ տուաւ, որ վերոյիշեալը Չանկըրըի մէջ թողուն եւ եթէ ճամբայ հանուած է, զինքը հոդ վերադարձնեն:

Այս հեռագիրին ի պատասխան օգոստոս 30–ին Չանկըրըի կառավարիչը կը ծանուցանէր, թէ Տ.Չիլինկիրեանը ամսոյն 26–ին Չանկըրէն մեկնած, Գալէճիքի մօտերը ասպատակներու կողմէ յարձակումի ենթարկուած եւ սպաննուած էր եւ թէ 12 ասպատակներէն 4–ը իշխանութիւններու կողմէ ձերբակալուած էին304: Ասոր վրայ, կայսերական դեսպանատան ընծայած օգնութեամբ, որուն համար կայսերական դեսպանատունը ընդհանուր հիւպատոսարանի հետ շփման մէջ մտած էր, Տիկին Չիլինկիրեանը իր մօրը Տիկ. Աբելի եւ երկու զաւակներուն հետ նախորդ ամսու 16–ին առանց թուրք իշխանութիւններէն նեղութիւն կրելու Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան դիմումին վրայ ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռեալի մօտ գտնուած արժէքաւոր իրերը եւ առարկաները, եւ այրիին վերադարձնելու նպատակաւ «հոս ղրկելու» ինչ որ կարելի կ'ըլլար տակաւ ձեռք բերել:

Երբ Տիկ. Աբել իր ամուսնոյն ղրկած տեղեկութիւններուն մէջ կ'ակնարկէ որ դեսպանատունը «որոշ չափով», որով, ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնութիւն ընծայած է իրեն եւ դստեր, ան աննկատ կը թողու այն պարագան, որ դեսպանատունը իր դստեր եւ փեսային համար միայն անպաշտօն սահմանափակումներով կրնար դիմումներ ընել թուրք կառա-

վարութեան մօտ. քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղութեամբ դեսպանատունը ոչ մէկ բան զանց առած է եւ մինչեւ իրենց մեկնումը, Տիկ. Աբել եւ իր դստերը, իրենց բոլոր գործառնութեան մէջ թէ խորհուրդով եւ թէ գործով օգնութիւն ստացած են:

Փոխանորդաբար՝ Ֆրայհեր ֆոն Նեյրաթ»:

Սակայն Ժաննի Սեւակը չի հաշտվում կատարվածի հետ եւ շարունակում էր դիմել գերմանական կառավարությանն ու դեսպանատանը՝ պահանջելով հայտնել ճշմարտությունն իր ամուսնու սպանության մասին եւ պատժել ոճրագործներին:

Ի պատասխան Ժաննի Սեւակի հերթական դիմումին, 1915թ. դեկտեմբերի 8–ին դեսպանությունը գրում էր.

«Գերման կայսերական դեսպանատուն, թիւ 10860, Բերա, 8 դեկտեմբերի 1915, տիկ. Հելեն (Ժաննի) Չիլինկիրեան, Լոզան.

(Թրքական) ներքին նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն, ձեր հանգուցեալ ամուսինին գողցուած իրեղէններէն մէկ մասը վերագտնուած է եւ դատական իշխանութեան յանձնուած:

Այս իրեղէններուն մէջ կը գտնուին երկու մատանիներ եւ կոճակ մը:

Այս իրեղէնները հոս Պոլիս բնակող եւ ձեր փոխանորդագիրը ունեցող անձնաւորութեան մը միջոցաւ, ձեզի պիտի յանձնուին:

Այս փոխանորդագիրը դուք կրնաք հայթայթել ձեր բնակած տեղւոյն հիւպատոսարանէն, վաւերացնելով նաեւ նոյն հիւպատոսարանէն, որ հանգուցեալին ժառանգորդները դուք եւ ձեր երկու զաւակներն են:

Այս պատեհութեամբ (թրքական) ներքին գ. նախարարութիւնը կը տեղեկացնէ. թէ ձեր ամուսինին եւ իր ճամբու ընկերներուն վրայ յարձակումը կատարուած է 15 (28) օգոստոս 1915 թուականին:

Եւ ձեր ամուսինին մահը՝ փամփուշտի վէրքի հետեւանքով յառաջ եկած է:

Կայսերական դեսպան (ստորագրութիւն)»305:

Ժաննի Սեւակին հստակ պատասխանելու փոխարեն դեսպանությունը թաքցնում է Ռուբեն Սեւակին մորթոտելով սպանելու հանգամանքը եւ շեշտը դնում նրանից գողացած իրերը գտնելու վրա:

Ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում գերմանական դեսպանատան ցինիզմով լեցուն վերոհիշյալ գրությունները ստորագրողի ազգանվանը, որի տերը փոխարինել էր արդեն մեռած դեսպան Վանհենհայմին: Ենթադրում եմ, որ այսօրվա ընթերցողներից շատերին հավանաբար հայտնի չէ այդ ոճրագործը, ուստի փորձեմ համառոտ ներկայացնել նրան:

Ինչպես վերեւում նշվել է, Թեշքիլաթի կազմակերպմանն ու գործունեությանն ակտիվ մասնակցում էին գերմանական սպաներն ու դիվանագետները: Նեյրաթը մեկն էր այն գերմանական դիվանագետներից, որը ոչ միայն ուղղակի տեղյակ էր ամեն ինչից, այլեւ ուղղություն էր տալիս երիտթուրքա-



Ռուբեն Սեւակի մայրը՝ Արմավենի Չիլինկիրյան (1854-1934թթ.),
գրկին՝ Հովհաննես Չիլինկիրյանը: Կ.Պոլիս, 1925թ.:

կան հանցագործներին...

Անցան տարիներ: Եվ Նեյրաթն ու Թուրքիայում գործող գերմանական շատ սպաներ ու դիվանագետներ հայտնվեցին Հիտլերի կողքին, դարձան նրա դիվային ծրագրերի մոլի իրագործողներ: Այդ նրանք էին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ավելի կատարելագործեցին մարդկանց մասսայական ոչնչացման միջոցները: Այդ ծիվաղների մեջ առանձնապես աչքի ընկավ ֆոն Նեյրաթը:

Պետերազմից հետո ֆաշիստական պարագլուխների թվում ֆոն Նեյրաթը նույնպես կանգնեց Նյուրնբերգյան դատարանի առջեւ որպես պատերազմի հանցագործ ու Հիտլերի մերձավորագույն զինակից:

Նեյրաթը 1932–1945թթ. նացիստական կուսակցության անդամ էր, ՍՍ զորքերի գեներալ: 1932–1938թթ. նա ֆաշիստական Գերմանիայի արտաքին գործերի նախարարն էր: Մինչեւ պատերազմի ավարտը Նեյրաթը ղեկավարում էր Հիտլերին կից գաղտնի խորհուրդը:

1939թ., Չեխոսլովակիան նվաճելուց հետո, Հիտլերի հրամանով Նեյրաթը նշանակվեց այդ երկրի պրոտեկտոր: Մինչեւ 1943թ. նա Չեխոսլովակիայից բռնությամբ տեղահանեց երկու միլիոն մարդ, որոնց մեծ մասը ոչնչացվեց: Նեյրաթը այդ երկրից գողացավ 23 հազար կգ ոսկի: Նեյրաթը պատմության մեջ մտել է որպես չեխոսլովակյան ժողովուրդների դահիճ:

Նեյրաթին ներկայացված մեղադրանքների մեջ կարեւորվում էր նաեւ այն, որ նա մեծապես աջակցել էր հիտլերյան կուսակցությանն իշխանության գալու գործում306:

Դատավարության ընթացքում ֆոն Նեյրաթը խորամանկում էր, դրսեւորում ցինիզմ, ձգտելով իր վրայից գցել պատասխանատվությունը: Սակայն նրա բոլոր փորձերը ձախողվեցին հանդիպելով մեղադրող կողմի անառարկելի փաստերին: Նեյրաթը պատերազմի գլխավոր հանցագործների թվում ստացավ իր արժանի պատիժը:

Կարծում եմ, ընթերցողին անպայման կհետաքրքրի Ռուբեն Սեւակի այրու եւ նրա զավակների ճակատագիրը:

Նեյրաթի վերոհիշյալ գրությունից երեւաց, որ Ռուբեն Սեւակի այրին երկու զավակների ու մոր հետ Կ.Պոլսից Շվեյցարիա է մեկնել 1915թ. սեպտեմբերի 16–ին: Պատերազմի ավարտից հետո ժաննին զավակների հետ վերջնականապես հաստատվեց Ֆրանսիայում: Նա վճռականորեն մերժեց ու չընդունեց գերմանական հպատակություն եւ մինչեւ կյանքի վերջը ապրեց Նանսենյան անձնագրով:

Ժամանակակիցները Ռուբեն Սեւակի կնոջը ժաննիին բնորոշում էին որպես «գեղեցիկ հոգիով ու գեղեցիկ դէմքով յարաժպիտ տիկին»306ա: Ամուսնուն կորցնելուց հետո մերժեց բոլորին, ովքեր խնդրում էին նրա ձեռքը: Մերժեց ու մինչեւ կյանքի վերջը հավատարիմ մնաց այն մարդուն, որը

նրա առաջին ու միակ սերն էր եղել: Մերժեց. որովհետեւ երդվել էր իր ու Ռուբեն Սեւակի զավակներին պահել ու մեծացնել որպես հայ...

Ռուբեն Սեւակի ավագ զավակը Լեւոնը, ծնվել է 1914թ.: Մեկ տարեկան էլ դեռ չկար, երբ զոհվեց հայրը: Դուստրը Շամիրամը. ծնվեց Կ.Պոլսում 1915թ.: Հետաքրքիր է. որ աքսոր տարվելուց մի քանի օր առաջ Ռուբեն Սեւակի հրավերով Կոմիտասը, որի հետ ուներ ջերմագին մտերմություն. կատարում է Շամիրամի կնունքի արարողությունը:

Ռուբեն Սեւակի մահից հետո ժաննին երդվեց իր ամբողջ կյանքը նվիրել հորից որբացած զավակներին Լեւոնին ու Շամիրամին: Նույնիսկ դժվար է պատկերացնել, թե այդ անվեհեր կինը, զրկված արյունակից հարազատների ուշադրությունից, կորցրած սիրելի ամուսնու հարազատներին. ինչպիսի ծանր զրկանքների ու տառապանքի գնով փրկեց իր երկու մանկահասակ զավակներին:

1939թ. սեպտեմբերի 1–ին սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այս անգամ էլ դարձյալ Գերմանիան էր նախահարձակը: Հիտլերյան ֆաշիզմը մոլեգնում էր Եվրոպայում: Ֆրանսիան նույնպես պարտվեց: Ֆաշիստական զորքերը մտան Փարիզ: Ֆրանսիայում կազմակերպվեց հզոր դիմադրական շարժում: Ռուբեն Սեւակի այրին ալեզարդ ժաննին. իհարկե. չէր մոռացել իր երդումը. որ 1915թ. մղձավանջային օրերին շպրտել էր գերմանական դեսպան Վանհենհայմի երեսին. «Մանչ զաւակ մը ունիմ: Անիկա պիտի մեծցնեմ, այնպէս, որ օր մը պիտի գայ իր հօր վրէժը պիտի առնէ գերմանացիներէն«:

Ահա եւ հասել էր վրեժի պահը: Եվ ալեզարդ մայրը իր միակ որդուն Լեւոնին ճանապարհեց մարտադաշտ: Լեւոնը մտավ ֆրանսիական դիմադրական շարժման մեջ: Աչքի էր ընկնում համարձակությամբ, մարտական ընկերների նկատմամբ արտակարգ հոգատարությամբ:

Պատերազմն ավարտվեց ֆաշիստական Գերմանիայի պարտությամբ: Ֆրանսիայի ազատագրմանը իր որդու Լեւոնի մասնակցությունը տիկին ժաննին հպարտորեն համարում էր որպես հատուցում, որպես վրեժ գերմանացիներից իր սիրելի ամուսնու Ռուբեն Սեւակի ողբերգական մահվան համար:

Ժաննի Սեւակը մահացել է 1967թ. դեկտեմբերի 28–ին եւ իր վերջին կամքի համաձայն հողին է հանձնվել հայ եկեղեցական ծեսով. Ֆրանսիայի Նիս քաղաքում: Հուղարկավորության օրը Նիս քաղաքի Հայ Առաքելական Սուրբ Աստվածածին եկեղեցին մարդաշատ էր: Եկել էին բազմաթիվ հայեր Ֆրանսիայի տարբեր վայրերից ու Մերձավոր Արեւելքի երկրներից:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որը մինչեւ իր կյանքի վերջը դրսեւորել էր մեծագույն հավատարմություն իր առաջին ու միակ սիրուն:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որն ամբողջ կյանքի ընթացքում բարձր էր պահել իր ամուսնու Ռուբեն Սեւակի անունն ու պատիվը:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու. որը հանուն այդ հավատարմության. իր երկու զավակներին դաստիարակել էր Ռուբեն Սեւակի գաղափարներով ու ոգով:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու. որը մինչեւ կյանքի վերջը չներեց իր սիրելի ամուսնու ողբերգական մահվան մեջ մեղսակցության բաժին ունեցած գերմանական իշխանություններին:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու. որն այդ պատճառով մինչեւ կյանքի վերջը գերմաներեն ոչ մի բառ չարտասանեց եւ իր զավակներին էլ գերմաներեն չսովորեցրեց:

Ժաննի Սեւակը գրում էր բանաստեղծություններ: Ֆրանսերեն լեզվով տպագրվել է նրա բանաստեղծությունների չորս գիրք:

Ինչո՞ւ այսպես հանգամանալի կերպով անդրադարձա Ժաննի Սեւակի կյանքին: Այս հարցին պատասխանելու համար նախ ուզում եմ հիշել ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինին: Եվ ահա թե ինչ առումով: Պուշկինը Ռուսաստանի պարծանքն է: Ռուսաստանի խորհրդանիշն է: Պուշկինն այդպիսին էր թե իր կենդանության ժամանակ եւ թե հետո. անցած ամբողջ ժամանակաշրջանում: Եվ այդպիսին էլ կմնա. քանի գոյություն կունենան ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը:

Ասում են, թե անփոխարինելի մարդ չկա: Պուշկինի կյանքի թելը ողբերգականորեն կտրվեց 1837թ. հունվարի 29–ին. մենամարտում ծանր վիրավորվելու հետեւանքով: Նրա մահից անցել է 165 տարի, բայց մինչեւ օրս նրա տեղը ոչ մեկի չի հաջողվել զբաղեցնել:

Պուշկինին չէր ընդունում ու ատում էր նրան պաշտոնական Ռուսաստանը: Նրանից այնպես էին սարսափում. որ նույնիսկ Նիկոլայ Առաջին ցարը ստանձնել էր մեծ բանաստեղծի գրաքննիչի դերը:

Բայց Պուշկինը մնաց ռուս ժողովրդի սրտում. եւ ինչպես ռուս հանճարեղ գրող Ֆ.Դոստոեւսկին էր ասում, Ռուսաստանում ամեն ինչ սկսվում է Պուշկինից. նկատի ունենալով ռուսական մշակույթի ու ռուսական ոգու բարեսրտությունն ու հումանիզմը:

Սակայն Պուշկինը անձնական կյանքում դժբախտ էր. որի «կերտման» մեջ. երեւի թե, գլխավոր դերը պատկանում էր կնոջը Նատալյա Գոնչարովային (Պուշկինա): Կալվածատիրոջ այս շփացած աղջիկը չէր հոգնում պարահանդեսներից. սեթեւեթում էր երկրպագուների հետ եւ բոլորովին չէր հետաքրքրվում ամուսնու կյանքով ու շատ վատ էր կատարում իր պարտականությունները: Միայն պահանջում էր ճոխություն. որպեսզի ետ չնմար ցարական պալատի մշտական այցելուհիներից: Նա հաճախ էր իր թեթեւամտությամբ վիրավորում ամուսնու ինքնասիրությունը նրան ներքաշելով անվայելուչ բանսարկությունների մեջ. որոնց գագաթնակետն էլ եղավ ողբերգական ավարտով մենամարտը:

Պուշկինի զոհվելուց կարճ ժամանակ անց Նատալյա Նիկոլաեւնա Գոնչարովա–Պուշկինան, թեեւ ուներ Պուշկինից չորս երեխա, ամուսնացավ գեներալ Պյոտր Լանսկու հետ: Նա անմիջապես փոխեց ազգանունը, մոռացավ ամեն ինչ, բացի Պուշկինի գրական ժառանգությունը թանկ գնով վաճառելու զբաղմունքից...

Ռուբեն Սեւակի կինը գերմանուհի Ժաննին, հանուն ամուսնու թողեց Շվեյցարիայում ունեցած բարեկեցիկ ու ապահով կյանքը եւ նրա հետ եկավ Կ.Պոլիս: Այստեղ, թուրքական մայրաքաղաքում, Ժաննին հանուն ամուսնու արագորեն հաշտվեց նոր պայմաններին, հասկանում ու գնահատում էր Ռուբեն Սեւակին եւ ամեն ինչով դարձավ նրա հավատարիմ ներուկն ու հենարանը:

Ժաննին անհուն սիրով կապված էր Ռուբեն Սեւակին եւ ամուսնու գործը համարում էր իր գործը: Ռուբեն Սեւակի ողբերգական մահից հետո Ժաննին դրսեւորեց արտասովոր կամք ու վճռականություն: Նա մինչեւ կյանքի վերջը հավատարիմ մնաց իր ամուսնական երդումին եւ անդավաճան նվիրվեց երեխաներին:

Ռուբեն Սեւակն անձնական կյանքում երջանիկ էր, եւ այդ հանգամանքը մեծ դեր էր խաղում նրա գրական–հասարակական գործունեության համար: Պուշկինի դեպքում հակառակն էր: Նրան կինը չերջանկացրեց, բայց դրա փոխարեն Պուշկինը դարձավ Պուշկին:

Երկու բանաստեղծ, երկու տարբեր ճակատագիր: Պուշկինը գրավեց իր արժանի տեղը եւ մինչեւ օրս ռուս գրականության, ռուսական հասարակական մտքի պատմության մեջ նրան ոչ ոք չի փոխարինել:

Ռուբեն Սեւակի դեպքում այդպես չեղավ: Ռուբեն Սեւակը աչքի ընկնող հասարակական–ազգային գործիչ էր: Միաժամանակ նա ոչ մի քաղաքական կուսակցության անդամ չէր, դրանցից ոչ մեկին չէր հարում ու համակրում, բայց եւ անաչառ դիրքերից հանդես էր գալիս թույլ տրված սխալների դեմ:

Հանգամանքների բերումով Ռուբեն Սեւակի ստեղծագործական կարճատեւ կյանքի ընթացքում (1905–1915թթ.) հայ իրականության մեջ ղեկավար դերը ստանձնել էր դաշնակցությունը, որն իր գործունեությունը սխալներից տանում էր դեպի առավել կոպիտ սխալների, ենթարկվում էր Ռուբեն Սեւակի սուր եւ արդարացի քննադատության:

Այս հանգամանքը, իմ խոր համոզմամբ, ունեցավ անչափ բացասական դեր Ռուբեն Սեւակի գործունեությունը հետագայում պատշաճ գնահատելու համար: Հասկանալի պատճառներով մոռացության էին տրվում Ռուբեն Սեւակի քաղաքական հայացքները, նրա գաղափարները: Լավագույն դեպքում նա ներկայացվում էր որպես լիրիկ բանաստեղծ, որը միայն սեր ու թիթեռ է երգել: Ստեղծված այսպիսի վերաբերմունքի պայմաններում, թերեւս, բանասիրության դոկտոր Վլադիմիր Կիրակոսյանին վիճակվեց բացահայ-

տել Ռուբեն Սեւակի կյանքն ու ստեղծագործությունն իր բոլոր կողմերով:

Չնայած այսպիսի պայմաններին, բարեբախտաբար կար մեկը, որը տարիներ շարունակ միայնակ, հաղթահարելով բազում դժվարություններ, կարողացավ ոչ միայն մեկիկ–մեկիկ հավաքել տարբեր մարդկանց մոտ պահպանված Ռուբեն Սեւակի ձամակները, հոդվածները, գրառումները, անձնական իրերը, ստեղծել «Ռուբեն Սեւակ մշակութային հիմնարկ» եւ «Ռուբեն Սեւակի անվան հիշատակի տուն», միաժամանակ լայն գործունեություն ծավալել Ռուբեն Սեւակի գաղափարները պաշտպանելու եւ տարածելու համար:

Այդ անձնազոհ մարդը «Մերօրեայ ներհուն հրապարակագիր»307 Հովհաննես Չիլինկիրյանն է. Ռուբեն Սեւակի եղբոր որդին, որը իրավացիորեն գտնում է, թե հայ գրականագիտական միտքը մեղավոր է Ռուբեն Սեւակին բացառապես ներկայացնելով որպես միայն քնարերգակ բանաստեղծ: Մինչդեռ Ռուբեն Սեւակը նաեւ հեղափոխական էր, հայկական հարցին ծառայած գրող մտավորական:

«Ռուբէն Սեւակի դիմագծին այս երեսը,– ընդգծում է Հովհաննես Չիլինկիրյանը,– որ մութին մէջ մնացած էր, լուսաւորող մեր աշխատանքները այպանուեցան: Յայտնուեցաւ այն միտքը, որ Ռուբէն Սեւակը խեղաթիւրուած է»308:

Իր այս անհանգստությունն ու անհամաձայնությունը Հովհաննես Չիլինկիրյանը հայտնել է «Մասիս» թերթում տպագրված պատասխանում: Սակայն հարձակումները չէին դադարում: Դրանց տոն տվողը «Հորիզոն» թերթն էր, որն իր էջերը բացել էր կեղծարարների եւ լույսից վախեցող խավարասերների առջեւ:

Հովհաննես Չիլինկիրյանն իբր պատասխան հիշեցնում է թուրքական արխիվներից հայտնաբերած մի փաստաթուղթ, որտեղ Ռուբեն Սեւակը դիտվել է «վտանգաւոր դէմք մը իր խօսքի եւ գրչի կարողութիւններով»: Պատմելով այս մասին Հ.Չիլինկիրյանը եզրակացնում էր. «Թուրքը հասկցած էր Ռուբէն Սեւակին ով ըլլալը, բայց այս գրականագէտը ոչ»309:

Ինձ թույլ եմ տալիս չհամաձայնել Հ.Չիլինկիրյանի հետ, որ կարծում է, թե «Հորիզոնի» «գրականագետ» հեղինակը չի հասկացել Ռուբեն Սեւակին: Հենց հասկանալով էլ այդպես է վարվել, որովհետեւ դաշնակցության գաղափարախոսներին բոլորովին էլ ձեռնտու չէ, երբ անկուսակցական Ռուբեն Սեւակը ներկայացվում է որպես հեղափոխական ու ազգային գործիչ: Ըստ դաշնակցության գաղափարախոսների, եթե որեւէ մեկը դաշնակցության անդամ չէ, ապա նա չի կարող հեղափոխական լինել, առավելապես ազգային գործիչ, ավելի առավելապես հայ:

# Գլուխ 8

# ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Այս գրքի համար նախատեսված ծավալն ինձ հնարավորություն չի տալիս լիարժեք չափով անդրադառնալ Հովհաննես Չիլինկիրյանի գրական–հրապարակախոսական եւ գիտական գործունեությանը. ուստի փորձեմ միայն ընդհանուր գծերով ներկայացնել ընթերցողին:

Հանրահայտ է, որ Սփյուռքում գործող հայ մտավորականության բազմաթիվ սերունդներ չթուլացող հետաքրքրությամբ են վերաբերում Մայր Հայաստանում կատարվող իրադարձություններին, դրանց զարգացման ընթացքին:

Ոմանք դա արել են չարախնդորեն, չտեսնելու տալով Հայաստանի հաջողությունները, աշխատելով վարկաբեկել այն ամեն լավը, ինչ որ ստեղծվում էր Հայաստանում: Այդ կարգի մտավորականները Հայաստանին վերաբերվում էին ելնելով նրանում տիրող քաղաքական կառուցվածքից եւ իրենց ստահոդ հրապարակումներով ձգտում թունավորել սփյուռքահայության գիտակցությունը, նպատակ հետապնդելով նրան հեռու պահել Հայաստանից: Այսպիսի վերաբերմունքը շարունակվեց Խորհրդային Հայաստանի գոյության ամբողջ ընթացքում:

Բայց, բարեբախտաբար, Սփյուռքում եղել են ու կան այնպիսի մտավորականներ, որոնց համար որեւէ նշանակություն չունի Հայաստանում տիրող քաղաքական կարգը: Նրանք անկեղծորեն ուրախանում էին Խորհրդային Հայաստանի նվաճումներով, լցվում արժանապատիվ հպարտությամբ եւ հարազատ որդու նման վշտանում ամեն մի անհաջողության կամ թերության դեպքում:

Այդ հայրենասեր մտավորականների առաջին շարքերում է Հովհաննես Չիլինկիրյանը: Ահա քանի տարի շարունակաբար նա հանդես է գալիս Ժիրայր Նայիրիի խմբագրությամբ Բեյրութում լույս տեսնող «Նայիրի» շաբաթաթերթում: Նրա աշխատությունները, հոդվածների շարքը նվիրված են հայ ժողովրդի պատմության առավել կնճռոտ պրոբլեմներին, Հայաստանում տիրող ներկա իրավիճակին:

Իր աշխատություններում եւ հրապարակախոսական հոդվածներում Հ.Չիլինկիրյանը պաշտպանում ու զարգացնում է հետեւյալ գաղափարները.

«1. Մայր Հայրենիքը Հայաստանը, ամէն բանէ վեր:

2. Վարդանանցի հերոսներուն անձնազոհութեան ոգին ուղեցոյց է մեզի.

Հայրենիքը, հայութիւնը պաշտպանելու համար:

3. Ռուբէն Սեւակի գաղափարները եւ հերոսական նահատակութիւնը օրինակ են բոլոր հայ «հոգի»ներուն, վերջին դարուն մէջ ապրած, իբր իսկական սուրբ մարգարէներ:

4. Ապագային սխալներ չգործելու համար, անցեալի մէջ գործուած սխալները լաւ գիտնալ եւ ընդունիլ:

5. Միայն խելքի եւ տրամաբանութեան ճամբան ընտրել:

6. Միացեալ ուժերով պայքար մեր իրաւունքներուն տիրանալու համար:

7. Ճանչնալ բարեկամը եւ թշնամին:

8. Մեր թշնամիին թշնամին մեր բարեկամն է:

9. Փորձուածը կրկին չփորձել:

10. Թուրքին ո՞վ ըլլալը. ի՞նչ ըլլալը եւ ի՞նչ ըրած ըլլալը լաւ գիտնալ»310:

Հ.Չիլինկիրյանը իր գաղափարները շարադրում է հարցադրումների ինքնատիպությամբ, նոր փաստերի բացահայտմամբ, եզրահանգումների կուռ տրամաբանությամբ ու համոզվածությամբ:

Նրա ուշադրությունից չի վրիպում անցյալում եւ այժմ կատարվող ոչ մի սխալ, դրանց մասին խոսում է սրտի ցավով: Հ.Չիլինկիրյանը Սփյուռքում ճանաչված այն պատմաբանն է, գրական–հասարակական գործիչը, որն աչքի է ընկնում պատմական իրադարձությունների լրջմիտ հետազոտությամբ: Նա անկաշառ ու անկեղծ գիտնական է:

Հ.Չիլինկիրյանն իր աշխատություններով ու հրապարակախոսությամբ արժանի տեղ է զբաղեցնում միջազգային մասշտաբով այն հազվադեպ հեղինակների շարքում, որոնք չեն քծնում սեփական ժողովրդին, չեն սիրաշահում նրան, չեն գովերգում, այլ որդիական սթափությամբ ու անաչառ անողոքությամբ վիրաբույժի նման ոչ միայն մատնացույց են անում հենց իրենց ծնած ժողովրդի սխալները, դրանց տխուր հետեւանքները, այլեւ ցույց են տալիս այդ սխալներից խուսափելու, դրանք վերացնելու ուղիներն ու միջոցները:

«Այո,– գրում է Հ.Չիլինկիրյանը,– իսկական հայրենասէր հայու մը համար Հայաստանի ներկայ վիճակը տեսնելով չընդվզիլն ու չզայրանալը անկարելի է: Թոյլատրելի է խօսիլ շինիչ ոգով»: Որովհետեւ «անվերջ քննադատութիւններով մեր նստած ծառին ճիւղը կը կտրենք եւ կը խորտակենք մեր վերջին յոյսը եղող այսօրուան Հայաստանը»311:

1990թ. Հայաստանի անկախությունը դարձավ իրողություն: Թվում էր, որ իրականություն է դառնում հայ ժողովրդի դարավոր երազանքը: Այդ անկախության հռչակումը գինովցրել էր շատ ու շատերի: Նրանք չէին գիտակցում, թե ինչ է կատարվում: Սպասումներին հակառակ տեղի ունեցավ անսպասելին: Իհարկե, մեղավորը դրանում անկախությունը չէր, այլ նրա սխալ

ըմբռնումը, սխալ ու արատավոր ընթացքը: Մեղավոր են այդ սխալների ու արատավոր ընթացքի կրողները:

Հայաստանի անկախության հռչակման առաջ բերած աղմկալի փառաբանումների պայմաններում Հ.Չիլինկիրյանը հստակությամբ մատնացույց արեց այդ ոգեւորության ցավալի արդյունքները: «1991–ին. գրել է նա,– «Ղարաբաղ» կոմիտեն ազատութեան երազային խոստումներով խաբեց խելագարած ամբոխները... Խելագարած եւ խաբուած հայ ժողովուրդը այսօր ինքնագիտակցութեան գալու նշաններ ցոյց կու տայ...

Բայց ի՞նչ օգուտ:

Աւերը գործուած է:

Այսօր Հայաստանի բնակչութեան գրեթէ կէսը, անգործութեան ու թշուառութեան պատճառաւ, լքած է իր հայրենիքը:

Եւ մնացեալ հայութիւնն ալ, չենք գիտեր, թէ մինչեւ երբ պիտի կարենայ դիմանալ անօթութեան եւ անապահովութեան:

Եւ մեզի համար ամենէն ցաւալին Հայաստանը լքողներուն մէկ մասը, հայուն ջարդարարներու երկիրը Թուրքիա, Պոլիս գացած է:

Եւ Պոլսոյ մէջ Հայաստանէն եկող, մեծ մասը համալսարանական կամ երկրորդական ուսումի տէր հայեր, իրենց ապրուստը ապահովել կը ջանան աշխատելով իբր սպասուհի, իբր գործաւոր եւ կամ իբր մուրացկան:

Բայց ամենէն ամօթալին վիճակն է հայուհիներուն, որոնք Պոլսոյ մայթերուն վրայ կամ հանրատուներուն մէջ պոռնկութիւն կ'ընեն:

Ահա այս է «Ղարաբաղ» կոմիտեին ստեղծած «ազատ եւ անկախ Հայաստանին» այսօրուան վիճակին մէկ երեսը»312:

Հ.Չիլինկիրյանը, անդրադառնալով Հայաստանի ներկա կացությանը, անց է կացնում հետեւյալ զուգահեռը, նշելով, որ այն 1918–1920թթ. Հայաստանի պատմության կրկնությունն է: «1918–ին խորտակուեցաւ Ռուսաստանը, եւ մենք 1918–ին ազատ, անկախ Հայաստան մը ունեցանք:

1991–ին խորտակուեցաւ Սովետական Միութիւնը, եւ մենք, 1991–ին ազատ, անկախ Հայաստան մը ունեցանք:

1918–ին Հայաստանը թշուառութեան մէջ էր:

1991–ին Հայաստանը թշուառութեան մէջ է:

1918–ի Հայաստանը թուրքերուն հետ բարի դրացութեան կապեր հաստատել կ'ուզէր: 1918–ի Հայաստանի վարիչները Պոլիս գացեր էին, սուլթանին, Թալաթին ու Էնվերին հետ բարեկամանալու:

1991–ի Հայաստանի վարիչները Պոլիս գացին, Գորշ գայլերու կուսակցութեան փոխնախագահ Թողրուլ Թիւրքէշին եւ հրեա մեծահարուստ, թրքական ազգային ժողովի երեսփոխան Ջ.Քամհիի հետ բարեկամանալու»313:

Ահա այսպիսի ցավով ու վրդովմունքով է խոսում «Ղարաբաղ» կոմիտեի գործած ավերածությունների մասին, «կոմիտե», որը, ինչպես անառակ

որդի, խարդախորեն խաբեց իր ժողովրդին:

Բայց Հ.Չիլինկիրյանը չի սահմանափակվում «Ղարաբաղ կոմիտեի» գործած խարդախությունները մերկացնելով, այլ դնում է նրա պատասխանատվության պահանջը: «Ինչո՞ւ այսքան ժողովուրդ տառապեցաւ: Հայաստանի հիմերը քանդուեցան: Ինչո՞ւ: Հայ ազգը իր ճակատագրին հետ խաղացողներուն հանդէպ, այսքա՞ն անտարբեր է, այսքա՞ն անզգայ է»314:

Հ.Չիլինկիրյանն այսպես է մատնացույց անում ժողովրդի կատարած սխալի արդյունքը: Եվ նկատի ունենալով «Ղարաբաղ կոմիտեի» ղեկավարին Հ.Չիլինկիրյանը, նրան համարելով «արեւմտեան պետութիւններուն գործակատարը», գրում է. «Բուն յանցաւորը հայ ժողովուրդն է, որ քեզի ու քու նման «արկածախնդիր»ներու ետեւէն գնաց: Բուն յանցաւորը հայ ժողովուրդն է, որ իր հայրենիքը քանդողները մինչեւ հիմա չէ պատժած»315:

Հ.Չիլինկիրյանն իրավացի ու անխնա քննադատում է Հայաստանի այն մտավորականներին, որոնք չկարողացան հասկանալ «Սովետ. Հայաստանի շրջանին ապրած բարօր կեանքին արժէքը» եւ պատասխանատու են Հայաստանը «դժոխային վիճակին մատնելու» համար: Այսպիսի մտավորականներին նկատի ունենալով Հ.Չիլինկիրյանը գրում է. «Ռուբէն Սեւակին ըսածին պէս «Փրցնել նետել պէտք է ձեզ պէս անպէտ մտաւորականներուն ուղեղները»316:

Համաձայնելով Հ.Չիլինկիրյանի գնահատականին ավելորդ չեմ համարում միաժամանակ ընթերցողին հիշեցնել այն հեղինակների մասին, որոնք Հայաստանում եւ Սփյուռքում շարունակում են քծնել, սիրաշահել ժողովրդին, որը նշանակում է խաբել նրան փորձելով համոզել, որ այդպես էլ պետք է լիներ, որովհետեւ անկախությունը զոհեր ու զրկանքներ է պահանջում, որ դժվարությունները ժամանակավոր բնույթ են կրում, որ անցումային շրջան է եւ այլն:

Իհարկե, այդ հեղինակները ստում են: Շատ օրինակներից բերեմ միայն մեկ–երկուսը: Անցեք Հայաստանի բոլոր գյուղերով: Հանրային ոչ մի շինություն կանգուն չի մնացել: Ամեն ինչ ավերվել է: Մի՞թե դրանց ավերումը անկախության պահանջն էր: Ավերվել է Հայաստանի հզոր արդյունաբերությունը: Մի՞թե դրա ավերումը անկախության պահանջն էր: Երկրի ընդերքը. եկամուտ բերող ձեռնարկությունները հանձնվեցին օտարներին: Մի՞թե դա անկախության պահանջն էր: Երկրի ունեցվածքը անգուսպ թալանվում է, «նոր հայերը» ինքնամոռաց խրախճանքի մեջ են, ժողովրդի մեծամասնությունը հայտնվել է աղքատության մեջ: Մի՞թե դա անկախության պահանջն էր...

Ժողովրդին ասելով դառն ճշմարտությունը Հ.Չիլինկիրյանը, ինչպես ժամանակին Ռուբեն Սեւակն էր զգուշացնում թուրքական հեղափոխությունից գինովցածներին, նույնպես զգուշացնում է անկախությունից գինովցածներին:



**Իրմա եւ Հովհաննես Չիլինկիրյանները Լեւոն Չիլինկիրյանի (Սեւակ) հետ: Լիոն, սեպտեմբեր 2002թ.:**

Իհարկե, Հ.Չիլինկիրյանը Հայաստանի անկախության ջերմ կողմնակիցն է, ինչպես ամեն մի ազնիվ հայ: Բայց նա վրդովվում է արդարացիորեն, որովհետեւ այսպիսի անկախությունը հայ ժողովրդի երազածը չէր: Հ.Չիլինկիրյանը կողմնակից է այն անկախությանը, որը բարձրացնում է ժողովրդի ազգային գիտակցությունը, նրան փրկում է աղքատության ու անապահովության ճիրաններից եւ ստեղծում է արժանապատիվ ապրելու պայմաններ:

Հ.Չիլինկիրյանը հայ–ռուսական բարեկամության հավատավոր կողմնակիցն է: Նա բազմաթիվ հոդվածներ է նվիրել այդ բարեկամությանը վճռականորեն շեշտելով դրա ամրապնդման կարեւորությունը Հայաստանի ու հայ ժողովրդի ապահովության գործում:

Վերհիշելով Խաչատուր Աբովյանի անմոռաց խոսքերը Հ.Չիլինկիրյանը գրում է. «Մօտիկ անցեալի հայրենի մտաւորականութիւնը հայ ժողովուրդին չի հասկցուցին այս պատգամին կարեւորութիւնը: Հայ ժողովուրդը չի հասկցաւ, որ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական ներկայ պայմաններու մէջ, երեկ, այսօր եւ վաղը, մեր միակ նեցուկը եւ փրկարարը ռուս ժողովուրդը կրնար ըլլալ»:

Հ.Չիլինկիրյանը մատնանշում է, որ արեւմտյան պետությունների միջոցներով գործող անձինք հասան նրան, որ «հայ ժողովուրդին մէջ ստեղծուեցաւ ռուսերուն դէմ թշնամութիւն», ասելով. թե ռուսը տանում է Հայաստանի ունեցվածքը:

«Տեղին չէ ըսելը,– գրում է Հ.Չիլինկիրյանը,– եղբայր, քու «քարերու երկիրդ» ինչ ուներ, որ ռուսերը զայն պիտի գողնային: Որքան ալ շինարար ու տաղանդաւոր եղած ըլլաս դուն»:

Իսկ ովքե՞ր են Հայաստանում ռուսների նկատմամբ ատելություն սերմանում: «Անոնք,– պատասխանում է Հ.Չիլինկիրյանը,– որ տարիներով Հայաստանի մէջ անպարկեշտ միջոցներով հարստութիւն դիզեցին, ամենէն շատ ռուսներուն դէմ լեզու երկարողները եղան»: Հակառուսական տրամադրություններ բորբոքողների մեջ նա հիշատակում է Մյունխենի «Ազատություն» ռադիոկայանը, որը «թոյն էր ժայթեցնում հայկական պետութեան վրայ»: «Հայ ժողովուրդէն,– փաստում է Հ.Չիլինկիրյանը,– զանգուածներ հաւատացին Միւնիխի վարձկաններուն ռուսատեաց վերագրումին, որովհետեւ ժողովուրդը իր ուղեղին մէջ չունէր ճշմարիտը սուտէն, գողը պարկեշտէն. բարեկամը թշնամիէն զանազանելու կարողութիւնը»317:

Հ.Չիլինկիրյանն անարգանքի սյունին է գամում բոլոր նրանց, ովքեր հանդես են գալիս Ռուսաստանի դեմ, «այն ռուս ազգին դէմ,– ինչպես նշում է նա,– որ ազատագրել էր Արեւելեան Հայաստանը»: Նա համոզված ընդգծում է, որ «այն բոլոր հայերը, որոնք կ'ապրին այսօր Հայաստանի հողերուն վրայ, իրենց կեանքը ռուսներուն կը պարտին»318: «Մենք խորապէս համոզուած ենք,– գրում է Հ.Չիլինկիրյանը,– որ Կովկասի եւ Հայաստանի մէջ ռուսերուն ներկայութիւնը Հայաստանի գոյութեան համար ամենամեծ երաշխիքն է», որ նաեւ «հայկական պետութեան գոյութիւնը, ռուսերուն համար Կովկասի մէջ, մեծագոյն պատնեշն է թուրքերուն յառաջացման դէմ»319:

Իր բոլոր աշխատությունների մեջ Հ.Չիլինկիրյանը Ռուսաստանին վերաբերվում է համակրանքով, անկախ նրանում եղած քաղաքական կարգերից, անկախ Ռուսաստանի գույնից: Նրա համար Ռուսաստանն այն երկիրն է, որը կկարողանա ի վերջո ոտքի կանգնել եւ վերականգնել աշխարհում խախտված ուժերի հավասարակշռությունը, որից անպայման կշահի նաեւ Հայաստանը: Նա համակ ուշադրությամբ հետեւում է Չեչնիայի պրոբլեմին եւ համոզմունք է հայտնում, որ «Չէչնիոյ մէջ, ռուսերու դէմ կատարուած խժդժութիւններուն բուն պատասխանատուները ամերիկացիներն են»: Ռուսաստանի դեմ դավեր նյութելը համարելով սիոնիստների կողմից ղեկավարվող Ամերիկայի գործը Հ.Չիլինկիրյանը գրում է. «Աստուած ռուս ազգը պաշտպանէ սիոնիստական նորանոր սադրանքներէն: Որովհետեւ, Ամերիկային ենթակայ Դաշնակ (մանաւանդ մօտիկ անցեալի) որոշ ղեկավարնե-

րէն զատ, ամէն հայ գիտէ, թէ առանց Ռուսիոյ, փրկութիւն չկայ հայ ազգին»320:

Ցանկացած միջազգային պրոբլեմ Հ.Չիլինկիրյանը քննարկում է Հայաստանի տեսանկյունից, այն առումով, թե որքանով են այդ պրոբլեմները շոշափում Հայկական հարցը, որքանով են մեզ համար օգտակար եւ որքանով վնասաբեր:

Իմ կարծիքով, այսպիսի մոտեցումը արդարացված է պատմականորեն, որովհետեւ գլոբալիզացիայի պայմաններում ոչ մի երկիր չի կարող չեզոք մնալ, իրեն հեռու պահել դրա բերած վտանգներից:

Սրանից էլ ելնելով Հ.Չիլինկիրյանը չթուլացող ուշադրությամբ հետեւում է ԱՄՆ–ի գործողություններին, որոնք նա ծավալել է աշխարհի բոլոր կողմերում: Հ.Չիլինկիրյանը դատապարտում է ամերիկյան ռազմամոլներին, որոնք անխնա ռմբակոծումներով ավերեցին Հարավսլավիան սերբ ժողովրդին պատճառելով մեծաթիվ զոհեր: Նա քննադատում է ԱՄՆ–ին միջազգային տեռորիզմը հովանավորելու եւ պաշտպանելու համար եւ որպես դրա արդյունք համարում 2001թ. սեպտեմբերի 11–ի ողբերգությունը: «Մենք համոզուած ենք,– գրում է Հ.Չիլինկիրյանը,– որ այս ողբերգութիւններուն ամենէն մեծ պատասխանատուներէն մէկն է Քլինթընը, որ իր ութ տարուան իշխանութեան շրջանին, հակառակ մոլեռանդներուն կողմէ Ամերիկայի դէմ կատարուած ահաբեկչութիւններուն, շարունակեց Չէչնիոյ եւ Եուկոսլաւիոյ մէջ, թիկունք կանգնել արմատական ահաբեկիչներուն»: «Եւ ամերիկացիները,– եզրակացնում է նա,– շատ ծանր ձեւով ենթարկուեցան Քլինթընի գործած սխալներուն հետեւանքով պատահած ողբերգութիւններուն»321:

Յովհաննես Չիլինկիրյանի հրապարակախոսության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում Ամերիկան իր պատմությամբ, ռազմաստրատեգիական քաղաքականությամբ ու գաղափարախոսությամբ: Ամերիկայի նկատմամբ Հ.Չիլինկիրյանի վերաբերմունքը պատճառաբանված է: Նախ, նա ԱՄՆ–ին քննադատում է, նկատի ունենալով, որ այդ երկիրը աննահանջ կերպով պաշտպանում է Հայոց ցեղասպանությունն իրականացրած Թուրքիային: Եվ երկրորդ, որ ԱՄՆ–ը իր ռազմաստրատեգիական ու ագրեսիվ քաղաքականությունն ուղղել է իրենց ազգային անկախությունը պաշտպանող ժողովուրդների ու երկրների դեմ:

Հ.Չիլինկիրյանը վճռականորեն հանդես է գալիս աշխարհի այն ժողովուրդների պաշտպանությամբ, որոնք հայտնվել են ԱՄՆ–ի շահերի ոլորտում եւ ենթարկվում ամեն տեսակի ճնշման: «Ինչպէ՞ս կարելի է մեկնաբանել սիոնիստ ամերիկացիներուն, Եուկոսլավիոյ մէջ կատարած թրքավայել բարբարոսութիւնները»,– վրդովմունքով հարցնում է Հ.Չիլինկիրյանը:

«Ո՞վ է ամերիկացին» հարցին Հ.Չիլինկիրյանը տալիս է հետեւյալ պատասխանը. «Կարմրամորթներուն ցեղասպաններուն ու նաեւ Ափրիկէէն

յափշտակուած միլիոնաւոր սեւամորթներու գերեվարներուն գեները ժառանգող, գանգստերներու շառաւիղ, խառնածին զանգուած մըն է «ամերիկացի» ըսուածը»322:

Հ.Չիլինկիրյանը հենց առաջին օրից վճռականորեն հանդես եկավ սերբ ժողովրդի արդար իրավունքները պաշտպանելու դիրքերում եւ դատապարտեց ԱՄՆ–ի ագրեսիվ գործողությունները: «Մէկ ամսէ ի վեր,– գրել է նա 1999թ. մայիսի 4–ին,– անգթօրէն Եուկոսլաւիան ռմբակոծող ամերիկացի կանկսթերները եւ անոնց խամաճիկները, առաջին օրէն ու ծրագրուած ձեւով, արեւմտեան ժողովուրդներուն ուշադրութիւնը, այս ռմբակոծումներուն հետեւանքով սկսած Քոսովոյի ալպանացի դաւանափոխներուն արտագաղթին վրայ կեդրոնացուցած են»:

Բողոքելով այն բանի դեմ, որ Քլինթոնը Հարավսլավիայի առաջնորդ Միլոշեւիչին նմանեցնում է Հիտլերին, Հ.Չիլինկիրյանը պատմական էքսկուրս կատարելով, իրավացիորեն գրում է, որ «այսօր Հիթլերի դերին մէջ գտնուողը ինքն է նոյնինքն Ամերիկայի նախագահ Քլինթընն է»: Իսկ Միլոշեւիչը «իր հայրենիքը Քոսովօ Քլինթընի յարձակումներուն դէմ պաշտպանող մեծ հայրենասէր մըն է»323:

Հ.Չիլինկիրյանը, հետազոտելով Հարավսլավիայի շուրջ ծավալվող գործողությունների խորքը, փաստերով մերկացնում է այդ գործում Հռոմի Հովհան–Պողոս 2–րդ պապի պրովոկացիոն դերը, մեջբերելով նրա հետեւյալ խոսքերը. «Սերպերուն դէմ պատերազմը արդար պատերազմ է, սերպերուն դէմ պատերազմը սաստկացնել պէտք է»324:

Հ.Չիլինկիրյանը կրքոտությամբ պաշտպանում է Հաագայի միջազգային դատարանի առջեւ կանգնած Ս.Միլոշեւիչին, համոզված ընդգծելով, որ նրա փոխարեն պետք է դատվեն ԱՄՆ–ն նախագահ Քլինթոնը, Հռոմի գահակալը, Անգլիայի վարչապետ Բլեերը, Գերմանիայի նախկին վարչապետ Հելմուտ Քոլն ու նրանց համախոհները:

Հ.Չիլինկիրյանը համոզված է, որ Հարավսլավիան ռմբակոծող ԱՄՆ–ն ու ՆԱՏՕ–ի նրա դաշնակիցները չունեն ոչ բարոյական եւ ոչ էլ իրավական արդարացում:

Վերլուծելով ԱՄՆ–ի ու նրա դաշնակիցների զավթողական քաղաքականությունը Հ.Չիլինկիրյանը փաստում է. «1991–ին սիոնիստ արեւմտեան պետութիւնները իրենց հրամանին չենթարկուող Իրաքը պատժեցին եւ ռմբակոծեցին եւ քանդեցին Իրաքը եւ մինչեւ այսօր ալ կը շարունակեն պատժել, պատճառ ըլլալով միլիոնավոր իրաքցիներու վատառողջութեան ու մահուան»325:

Այսօր Քլինթոնը չկա: Բայց «չարության կայսրությունը» շարունակում է իր ագրեսիվ գործողությունները, այս անգամ արկածախնդիր Բուշի գլխավորությամբ: Անգլո–ամերիկյան միացյալ գորքերը սկսել են նոր պատե-

րազմ Իրաքի ժողովրդի դեմ, այս անգամ իրենց ագրեսիան արդարացնելով, թե Իրաքի ժողովրդին բերում են ազատություն ու դեմոկրատիա: Ավերվում են բնակավայրերը, ոչնչացվում են հազարամյա պատմական հուշարձանները, զոհվում են ու վիրավորվում հարյուր–հազարավոր խաղաղ բնակիչներ.– ահա Իրաքի ժողովրդին «շնորհվող» ազատության գինը, որն այնպես ցինիկաբար հայտարարում է Բուշը արդարացնելով իր արկածախնդիր քաղաքականությունը:

Հարկ եմ համարում ասվածի կապակցությամբ հիշել կապիտալիստական հարաբերությունների, «դեմոկրատիայի ու ազատության պատվար», աշխարհում սեփականատիրական կրքերի ամենամեծ ասպարեզ Ամերիկայի Միացյալ Նահանգների մասին Մարկ Տվենի գնահատականը: 1906թ. սեպտեմբերի 7–ին, իր ինքնակենսագրական նոթերում Մ.Տվենը գրել է, թե ահա 125 տարի շարունակ ամերիկացիները շարունակում են սովորեցնել Եվրոպային: «Մեզ ոչ ոք չի հրավիրել, մենք ինքներս ենք մեր կարծիքը նրան աներեսաբար պարտադրում»:

«Մենք,– շարունակում է Մ.Տվենը,– անգլոսաքս ենք: Անցյալ ծմռանը «Աշխարհի հեռավոր ծայրերում» կոչվող ակումբի ճաշկերույթի ժամանակ նախագահող բարձրաստիճան պաշտոնաթող սպան մեծ ոգեւորությամբ ու բարձրածայն հռչակեց. «Մենք անգլոսաքս ենք, իսկ երբ անգլոսաքսին ինչ–որ բան հարկավոր է, նա գնում եւ վերցնում է»: Նախագահի հայտարարությունն առաջ բերեց բուռն ծափահարություններ: ...Եթե այս հռչակագիրը (եւ նրանում արտահայտված զգացմունքները) թարգմանենք պարզ անգլերեն լեզվով, ապա դա կհնչի այսպես. «Մենք անգլիացիներս ու ամերիկացիներս, գող ենք, ավազակներ ու ծովահեններ, ինչով էլ հպարտանում ենք»:

«Ներկա գտնվող ամերիկացիներից ու անգլիացիներից,– շարունակում է Մ.Տվենը,– ոչ մեկը քաղաքացիական արիություն չունեցավ վեր կենալ ու ասել, որ իր համար ամոթ է լինել անգլոսաքս, որ ամոթ է քաղաքակիրթ հասարակության համար, քանի որ նա իր շարքերում հանդուրժում է անգլոսաքսերին, մարդկության այդ խայտառակությանը»326:

Մարկ Տվենի գնահատականից անցել է մոտ 100 տարի: Փոխվե՞լ է ԱՄՆ–ը այդ ժամանակաշրջանում: Այո, փոխվել է, բայց, դժբախտաբար, ոչ դեպի լավը: Նրա քաղաքականությունը դարձել է ավելի լկտի, ավելի սանձարձակ ու ավելի ավանտյուրիստական:

Այսօր ԱՄՆ–ը, քարոզելով վերացական «գլոբալ մրցակցության ազատություն», իրականում ոչ մի տեղ չի ուզում ունենալ ոչ հակառակորդներ, ոչ մրցակիցներ, ոչ ընդդիմախոսներ, ոչ ուժեղ ու ջլապինդ հարեւաններ: Հենց այս ընչաքաղցությամբ ու միահեծան թելադրանքով ԱՄՆ–ը նույնիսկ շատ է տարբերվում միջնադարի ու նոր ժամանակների զավթիչ կայսրութ-



**Յովհաննես Չիլինկիրյանը եւ Լեւոն Չիլինկիրյանը (Սեւակ):**
**Լիոն, սեպտեմբեր 2002թ.:**

յուններից: Ժամանակակից Ամերիկային այլեւս չի բավարարում ոչ 16–րդ դարի իսպանական գաղութային կայսրության, ոչ էլ 19–րդ դարի բրիտանական կայսրության փորձը, քանի որ իսպանացիները, թեեւ զավթեցին աշխարհի կեսը, բայց մրցակցում էին իրենց հավասար Բուրբոնյան Ֆրանսիայի հետ, իսկ Վիկտորիա թագուհու ժամանակներում անգլիացիները մրցակցում էին կայսերական Գերմանիայի հետ:

Ամերիկան այսօր ձգտում է հաստատել գերմոնոպլիստական կայսրություն: Պատմությունից հայտնի է այս առումով Հռոմեական կայսրության ճակատագիրը, որը նույնպես ձգտում էր հասնել համաշխարհային տիրակալության: Հիշենք Օգոստոս կայսրի տիրապետության ժամանակաշրջանը, երբ մինչեւ ատամները զինված Հռոմին թվում էր, թե ոչ ոք չի կարող մարտահրավեր նետել: Բայց կայսր Օգոստոսի շրջահայացությունն էլ այն էր, որ նա աստիճանաբար հասկացավ, որ տարածքներն ընդլայնելու անմտությունը կարող է կործանել Հռոմը: Սակայն արդեն դրվել էր կործանման սկիզբը, եւ «բարբարոսների» տեւական գրոհները հանուն անկախության, Օգոստոս կայսրին հիշեցրին ճակատագրի անհաստատ լինելը:

Այժմ ԱՄՆ–ը կանգնած է Հռոմի ճակատագրին արժանանալու բախտի

ճանապարհին: Դա առավելապես զգացվում է 2001թ. սեպտեմբերի 11–ից հետո աշխարհում ԱՄՆ–ի ձեռնարկած գործողությունների անզուսպ ընթացքից: Հիմա, երբ գրվում են այս տողերը, ԱՄՆ–ը իր դաշնակից Անգլիայի հետ, անտեսելով ՄԱԿ–ի անդամ պետությունների մեծամասնության կարծիքը, աշխարհի ժողովուրդների բողոքը, պատերազմ է սանձազերծել Իրաքի դեմ: Իրադարձությունների ամբողջ ընթացքը թույլ է տալիս փաստել, որ այդ ամենով սկսվել են «ամերիկյան դարի» վերջը, ԱՄՆ–ի ինտելեկտուալ անկումը եւ մշակութային դեգրադացիան:

Կայսերական Ամերիկան համաշխարհային արբիտրի եւ ժանդարմի դերում արդեն դատապարտված է:

Հ.Չիլինկիրյանը սկզբունքային դիրքերից մերկացնում է սիոնիզմն ու դրա կրողներին: Բացահայտելով սիոնիզմի էությունը նա ցույց է տալիս, թե այդ հակամարդկային տեսությունն ինչ սկզբունքներով է ղեկավարվում. երբ մերժում է Հայոց ցեղասպանության իրողությունը:

Իր աշխատություններում Հ.Չիլինկիրյանն անդրադառնում է Հայոց ցեղասպանության եւ հրեաների ողջակիզման (հոլոքոստ) առնչություններին: Նրա հարցադրումները, իմ կարծիքով, ունեն սկզբունքային նշանակություն եւ, առհասարակ, կարող են ծառայել իբրեւ ելակետ:

Համեմատելով այդ երկու իրողությունները Հ.Չիլինկիրյանը նախ հանգամանորեն բացատրում է ցեղասպանության իմաստը, կատարում պատմական էքսկուրս, բերում է ցեղասպանության զոհ դարձած ամերիկյան հնդիկների օրինակը եւ փաստում, որ ցեղասպանության արդյունքում «ցեղասպան ցեղին կողմէ կը յափշտակուի անոր հայրենիքը եւ ցեղասպանութեան ենթարկուող ցեղին իր հայրենի հողերուն վրայ վերապրելու կարելիութեան բոլորովին վերջ կու տրուի»: Իսկ ինչ վերաբերում է գերմանացիներին, ապա նրանց կողմից կատարվածը Հ.Չիլինկիրյանը համարում է հրեաների սպանդ եւ ոչ թե ցեղասպանություն:

Հ.Չիլինկիրյանն իրավացիորեն հարցնում է. «Ինչպէ՞ս նացիներուն հրեաներու դէմ գործած խժդժութիւնները «ցեղասպանութիւն» անուանել, երբ այս նախճիրը ոչ թէ Հրէաստանի, այլ Գերմանիոյ ու Լեհաստանի մէջ կատարուեցաւ»: Իսկապես, այդ ինչ ցեղասպանություն էր, որ 1945թ. հետո «հրէա ցեղը աշխարհի բոլոր մասերուն մէջ ինքզինք բացայայտեց իբրեւ մեծաթիւ ու զօրացած ցեղ»: Այդ ինչ ցեղասպանութիւն էր, երբ երկրորդ աշխարհամարտից հետո «հրէա ցեղը ամբողջ աշխարհին (կամ գրեթէ) տէրը դարձաւ»327:

Դատապարտելով հրեա ժողովրդի նկատմամբ գերմանական ֆաշիստների կազմակերպած սպանդը Հ.Չիլինկիրյանը ընդգծում է, որ դա ու Հայոց ցեղասպանությունը ոչ միայն «նմանութեան եզրեր չունին, այլ կը կազմեն երկու հակապատկերներ»:

Հարկ եմ համարում այստեղ մեջբերել ամբողջությամբ Հ.Չիլինկիրյանի հայտնած տեսակետը. «Ինչպէ՞ս կրնանք. 1915–ի Հայկական ցեղասպանութիւնը եւ 1941–ի հրէական «ցեղասպանութիւնը» իրար նմանեցնել. երբ առաջինով հայ ցեղը բնաջնջուեցաւ. մինչդեռ երկրորդով աշխարհակալ հրէական նոր ցեղը ստեղծուեցաւ:

Ինչպէ՞ս կրնանք 1915–ի Հայկական ցեղասպանութիւնը եւ 1941–ի հրէական «ցեղասպանութիւնը» իրար նմանեցնել. երբ Հայկական ցեղասպանութիւնը հայերուն 3000 տարուան հայրենիքը թուրքերուն կողմէ բռնագրաւուեցաւ: Մինչդեռ 1941–ի շնորհիւ հրէաները 3000 տարի առաջ. իրենց Սուրբ գիրքին մէջ որպէս թէ նախատեսուած. իրենց կարծուող հողերուն վրայ հայրենիք եւ պետութիւն մը ստեղծեցին. ջարդելով ու աքսորելով այդ հողերուն տէրերը եղող պաղեստինցիները:

Նացի գերմաններուն կողմէ հրէաներուն դէմ կատարուած «ցեղասպանութեան» դահիճները եղան ՍՍ կոչուած ոստիկանական կազմակերպութեան անդամները. որոնք գործեցին Հիթլերի կառավարութեան հրահանգով եւ գործադրութեան դաշտ ունեցան «քեմբ»երը:

ՍՍ–ներուն հրէաներուն դէմ կատարած խժդժութիւններուն. գերման ազգը որեւէ ձեւով չմասնակցեցաւ: Գերման ազգին մեծ մասը այս խժդժութիւններէն անտեղեակ էր նոյնիսկ:

Մինչդեռ. Հայկական ցեղասպանութիւնը գործուեցաւ «ժեօն թիւրք»կոչուած **«հրէածին»** «Իթթիհատ եւ Թերաքքի» կուսակցութեան կազմած օսմանեան կառավարութեան հրամանով եւ կարգադրութեամբ: Եւ այս ցեղասպանութեան մասնակցեցաւ քիչ բացառութիւններով. թուրք յորջորջուածներուն գրեթէ ամբողջութիւնը:

Հայ ազգը ցեղասպանութեան ենթարկուեցաւ. ընդհանուր առմամբ. իր գիւղին կամ իր քաղաքին մէջ ապրող. թուրք յորջորջուած իր դրացիներուն կողմէ: Անոնց հաւատացուցեր էին. որ եթէ չորս հայ սպաննեն. իրենց առջեւ դրախտին դռները կը բացուին»328:

Հ.Չիլինկիրյանի աշխատություններում կարեւոր տեղ է զբաղեցնում հայ–թուրքական առնչություններին վերաբերող հարցերի խումբը: Հայ գրականության. մասամբ նաեւ պատմագրության մեջ քիչ չեն այն հեղինակները. որոնք կարծում են. թե ինչքան շատ հայհոյեն Թուրքիային. այնքան ընդունելի կլինի իրենց ասելիքը: Թուրքիայի նկատմամբ կույր ատելությունը միշտ էլ վատ խորհրդատու է եղել եւ հաճախ էլ ունեցել է անցանկալի հետեւանքներ:

Անպայման ուզում եմ ընդգծել, որ այս հարցում էլ է Հ.Չիլինկիրյանը առանձնանում: Նրա աշխատություններում չկա մերկապարանոց ու կույր ատելություն: Դրա փոխարեն նա հայ–թուրքական առնչություններին վերաբերվում է արտակարգ զուսպ սթափությամբ: Նոր փաստերի հրապարակ-

մամբ ու վերլուծությամբ. անցյալի դասերի վրա հենված կուռ տրամաբանությամբ Հ.Չիլինկիրյանը շարադրում է իր տեսակետները՝ նշանաբան ունենալով «լաւ ճանչնալ թշնամուն» հանրահայտ ճշմարտությունը:

Հ.Չիլինկիրյանի ուշադրությունից ոչ մի հարց չի վրիպում: Նրա համար հայ–թուրքական առնչությունների մեջ փոքր կամ երկրորդական նշանակության խնդիրներ չկան: Այստեղ ամեն ինչ կարեւոր է: Ամեն ինչ այժմեական է: Նա սուր քննադատության է ենթարկում Հայաստանի Հանրապետության հին ու նոր ղեկավարներին. որոնք մակերեսային պատկերացում ունեն հայ ժողովրդի նկատմամբ թուրքական քաղաքականության մասին թե՛ անցյալում եւ թե՛ մեր ժամանակներում: Այս է պատճառը. որ Թուրքիայի ներկայացուցիչների հետ (պետական գործիչներ. քաղաքագլուխներ. ժուռնալիստներ. բիզնեսմեններ. կանանց եւ այլ հասարակական կազմակերպություններ) բանակցություններ են վարում այնպես. ինչպես. ասենք. Ավստրալիայի կամ էլ Աֆրիկայի մեկ այլ երկրի հետ:

Այլապես. եթե դա քաղաքական տգիտության արդյունք չէ. ապա ուրիշ ի՞նչ կերպ անվանես. երբ Հայաստանի Հանրապետության բարձր ղեկավարությունը Թուրքիայի նախկին նախագահ Դեմիրելի հետ հանդիպման ժամանակ կարող է ասել. թե «հայերը կարող են թուրքերի հետ դաշնակից լինել»329:

Անդրադառնալով 1877–1878թթ. ռուս–թուրքական պատերազմի նախօրյակին ծավալված իրադարձություններին Հ.Չիլինկիրյանը գրում է. «Ներսէս Վարժապետեան եւ իր գործակիցները նախընտրեցին. որ Արեւմտեան Հայաստանը օսմանեան տիրապետութեան տակ մնայ. քան թէ ազատագրուի ռուսներուն կողմէ»: Ն.Վարժապետյանին իրավացիորեն նա գնահատում է որպես «Արեւմտեան Հայաստանի ազատագրման արգելք եղող ամենամեծ պատասխանատու»330:

Ն.Վարժապետյանը վերեւում արդեն հիշատակված շրջաբերական կոնդակում իրավիճակն այնպես էր ներկայացնում. որ կարծես թե հայությանը սպասում էր մի նոր Ավարայր: «Ուստի,– ասում էր նա իր դավաճանական կոնդակում,– նուիրական պարտք կը համարեմ այսու շրջաբերական կոնդակով յորդոր կարդալ բոլոր հայ ժողովրդեան. որ ամէն ոք իր կարողութեան սահմանին մէջ. հայրենեաց պաշտպանութեան համար. պէտք եղած օգտակարութիւններն ընել փութայ նաեւ աղօթելով... այն ամէն ազգէ կամաւորելոց համար. որոնք հայրենասիրական եռանդով վառուած զէնք կ'առնեն հայրենեաց թշնամիներուն դէմ: Երկրորդ. ըստ կարողութեան իւրաքանչիւր ուրուք եւ ըստ յօժարութեան կամաց օգնելով թէ նիւթական. թէ անձնական ծառայութեամբ»331:

«Երբ հայ պատրիարք մը.– գրում է Հ.Չիլինկիրյանը.– «օսմանեան երկիրը պաշտպանել՝ Հայաստան պաշտպանել է» կ'ըսէ. ալ ուրիշ պատճառ

չփնտռենք մեր քայքայման»: Հենց այս պատճառով էր. որ մենք չկարողացանք օգտվել նպաստավոր առիթից. եւ Հ.Չիլինկիրյանի գնահատմամբ «մենք հնազանդ. հաւատարիմ մնացինք թուրքին. շահեցանք «Միլլէթի սատըգայը էրմինիյէ» մակդիրը»:

Ն.Վարժապետյանի որդեգրած ստրկամիտ քաղաքականությունն ունեցավ իր եռանդուն հետեւորդին: Եթե պատրիարքը դարձել էր սուլթանի հլու կամակատարը եւ իր խնդիրը տեսնում էր արեւմտահայության ըմբոստությունը կոտրելու մեջ. ապա նրա հետեւորդները. ի դեմս դաշնակցության կուսակցության ղեկավարների. սիրահոժար դարձան երիտթուրքերի հլու կամակատարը: Փոխվել էին տերն ու ժամանակը: Նույնն էր մնացել ստրկամտությունը:

Ասվածի կապակցությամբ ուզում եմ կատարել մի քանի դիտարկում եւ լայն հասարակայնությանը քիչ հայտնի փաստեր ներկայացնել:

Ինչպես արդեն նշվել է. հայ ժողովրդի. մասնավորապես արեւմտահայության ճակատագրի տնօրինումը իր ծեռքը վերցրած դաշնակցությունը որեւէ հետեւություն չարեց 1909թ. Ադանայի հայ բնակչության կոտորածից հետո եւ շարունակեց համագործակցել երիտթուրքերի հետ: Թվում էր. որ այդ կուսակցության առաջնորդները գոնե անհրաժեշտ հետեւություն կանեին Հայոց ցեղասպանությունից եւ Արեւմտյան Հայաստանի կորստից հետո ու կփոխեին իրենց քաղաքականությունը. կեեռանային երիտթուրքերից: Բայց դա տեղի չունեցավ: 1918թ. հունիսի 4–ի Բաթումի խայտառակ պայմանագրով ոչնչի հավասարեցնելով ժողովրդի տարած հաղթանակը թուրքական զավթիչների դեմ դաշնակցությունն ավելի խորացրեց իր կախվածությունը երիտթուրքերից: Այս առումով բացահայտ խայտառակություն էր Հայաստանի Հանրապետության պատվիրակության մեկնումը Կ.Պոլիս 1918թ. ամռանը:

Ի՞նչ էին կորցրել Ա.Ահարոնյանը. Ա.Խատիսյանը եւ մյուսները Կ.Պոլսում եւ ի՞նչ էին այնտեղ ուզում գտնել: Ինչպես Անդրանիկն է նշում. գնացել էին Պոլիս «ոճրագործ էնվերներու եւ Թալեաթներու. սուլթան Ռեշաթներու ոտքերուն տակ սողալու»332:

Նախ. արժե ծանոթանալ 1918թ. Կ.Պոլսում լույս տեսնող «Վերջին լուր» թերթի հաղորդագրությանը եւ նրա աշխատակցի հետ Ա.Ահարոնյանի ու Ա.Խատիսյանի զրույցներին:

Ավետիս Ահարոնյանն ասել է. «Հայկական պատուիրակութեան իմ մասնակցութիւնը մանաւանդ նրա համար է. որ ես Թուրքիան ու թիւրքերին աւելի մօտէն կը ճանչնամ: Ես միշտ թիւրք եւ հայ անկեղծ բարեկամութեան մը կողմնակից եղած եմ: Վերջերս Թիֆլիսի մէջ տեղի ունեցած իմ մէկ բանախօսութիւնն այդ սկզբունքի վրայ էր. կրնամ ըսել. թէ բոլոր ներկաներն ալ համակարծիք գտնուած են ինծ: Իմ այդ զգացումը խիստ անկեղծ է եւ իմ

պատուիրակ ընկերներս նոյն այդ զգացումով է. որ այսօր հոս կը գտնուին:

Մի՞թէ Կովկասի իսլամ ժողովուրդներուն եւ հայերուն միջեւ գտնուած յարաբերութիւնները դարերէ ի վեր խիստ մտերմական եւ աւելի քան չեն եղած: Կարեւորութիւն չունեն այդ մէկ քանի անհասկացութիւնները, որոնք տեղի ունեցած են ցարիզմի եւ Կոլիցինի կեղտոտ քաղաքականութեան դրդումով: Այսօր իսկ ամբողջ Կովկասի մէջ. Երեւանի. Շուշիի եւ Գարաբաղի մէջ, հայ, թուրք եւ թաթար իբրեւ եղբայրներ եւ անկեղծ բարեկամներ կ՛ապրին: Հետեւաբար. անկասկած եմ թէ նոյնը պիտի ըլլայ նաեւ նորակազմ հայկական կառավարութեան ու Թուրքիոյ իրենց ժողովուրդներուն վերաբերումը մէկզմէկու հանդէպ:

Ժամանակն է, որ զանազան ժողովուրդներ հասկնան գիրար, ինչ որ ալ ըլլայ անցեալը»333:

Ալեքսանդր Խատիսյանն ասել է. «Թուրքիոյ հետ. սխալ կամ ճիշտ. կռւի մէջ եղող հայութեան խնդրոյն մէջ. այսինքն այսօր աշխարհիս մէջ հայկական խնդիր ըսւած խնդրոյն մէջ անօգուտ է հարստահարող եւ հարստահարուող փնտռել: Վեհանձն կերպով պէտք է խոստովանիլ թէ այս կռիւը մեր հայերուս կողմէ նպատակի մը սիրոյն հետապնդած կռիւէ մը կը բաղկանայ: Ոչ մէկ կռիւ միմիայն մէկ կողմով կ՛ըլլայ: Ամէն կռւի մէջ միշտ երկու կողմ կայ: Հայկական խնդրոյն մէջ կռիւին մէկ կողմը մենք կը կազմէինք եւ մենք էինք շարունակ սկսողն ու գրգռողը: Անկախութեան նպատակին հասնելու համար տարիներով եւ տարիներով աշխատեցանք: Մեր միջոցներով աշխատեցանք: Մէկ խօսքով Թուրքիան տկարացնելու համար մեր ձեռքէն ինչ որ կու գար. ամէնքն ալ ըրինք: Մասնաւորաբար վերջին պատերազմը խաղալիք վերջին խաղն էր: Անոր մէջ մտանք մեր բոլոր ջանքերով: Եթէ մենք Թիւրքիոյ կեանքին կը սպառնայինք. բնական էր, թէ անիկա ալ ձեռքերը ծալած անտարբեր չպիտի գտնւէր: Այն. որուն դէմ յարձակում կը գործւէր. բնական է. թէ ինքզինքը պիտի պաշտպաներ. եւ ամէն մարդի առաջ մենք գիտէինք եւ կը սպասէինք. որ Թուրքիա ալ փոխադարձաբար ինքզինքը պաշտպանելու համար յարմար տեսնելիք եւ նոյն իսկ բուռն միջոցներու պիտի դիմէ: Ահաւասիկ հայկական կռիւն ու հայկական խօսքն այս է: Հիմա այս ամէն ինչ անցաւ գնաց. իբրեւ պատւաւոր մարդ պէտք է խոստովանիլ, թէ մենք այս վերջին խաղն ալ կորսնցուցինք այն կռւին մէջ, ուր մտանք մեր բոլոր ջանքերով: Մեր դիրքը քիչ շատ տարբերութեամբ, ոեւէ պարտեալի մը դիրքն է: Տարբերութիւնը անոր մէջ է, որ մենք արդէն ազգային եւ քաղաքական գոյութիւն մը չունէինք: Մենք կը վազէինք երեւակայութեան ետեւէ: Այժմ այս երազի Թիւրքիոյ վերաբերեալ մասը առյաւէտ լուծւած է: Այլեւս թրքական հողերուն մէջ չը կրնար խօսւիլ հայութեան վրայ մեր ըմբռնած նշանակութեամբ եւ նպատակով: Թրքական հողերը կը պատկանին թիւրքերուն: Մեզի համար այդ կողմէն յատուկ խաղը բացարձակապէս եւ առյաւէտ կորսւած է»334:

Վերոհիշյալ թերթը Ա.Խատիսյանի մասին գրել է հետեւյալը. «Խատիսոֆ, որ Կովկասի հաշտութեան մէջ հայկական պատւիրակն էր, երախտագիտութեամբ խոստովանած է, թէ հայութիւնը Կովկասի մէջ իր գոյութեան տէր ըլլալը օսմանեան տէրութեան շնորհին կը պարտի եւ բաց ու անկեղծ լեզուով մը յայտարարած է, թէ կեանքի մէջ դեռ նոր խառնուող փոքր կառավարութիւնը Թուրքիան կը ճանչնայ իբրեւ վեհանձն բարերար մը»335:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Կ.Պոլսում մնաց մի քանի ամիս: Բանակցություններ էր վարում, ընդունելություններ կազմակերպում, ճաշկերույթներ տալիս եւ մոռացած ամեն ինչ՝ քծնանքի անզուսպ ցույցեր դրսեւորում երիտթուրքական պարագլուխների առջեւ: Բերեմ մի քանի փաստ առանց մեկնաբանության: Բանակցությունների ժամանակ Ա.Ահարոնյանը Թալեաթին հայտարարեց. «Ձեզ կը վստահեցնեմ, որ Թուրքիայի հայերի վիճակը մեզ երբեք չի շահագրգռել: Մենք եկանք միայն խորհրդակցելու համար կովկասեան հայերի հանրապետութեան մասին եւ որոշելու համար մեր սահմաններն ու դիրքը, մեր զօրավոր դրացին եւ պաշտպան եղող օսմանեան պետութեան հետ, որի բարեկամ հակումները մենք տեսանք Բաթումում տեղի ունեցած բանակցութիւնների ժամանակ... Նախ եւ առաջ մենք ուզում ենք համաձայնութեան գալ մեր զօրեղ դրացի օսմանեան պետութեան հետ, որի հետ սահմանակից ենք, որից շատ օգնութիւն կը սպասենք»336:

Թալեաթը, պատասխանելով Ա.Ահարոնյանին, ասում է նաեւ հետեւյալը. «Դուք միշտ հաւատարիմ էք եղել Թուրքիային եւ միայն վերջին ժամանակներս, շնորհիվ եւրոպական պետութիւնների գրգռումների, անցաք Թուրքիայի թշնամիների կողմը: ...Բայց այժմ հանգամանքները բոլորովին փոխւել են եւ ձեռնարկւելիք միջոցներն էլ ըստ որում պիտի փոխւեն»337:

Էնվեր փաշայի մոտ ընդունելության ժամանակ Ա.Ահարոնյանը խնդրում է, որ «Թուրքիան յանձն առնի ապահովել դաշնակիցների միջոցով, որպէսզի Ռուսաստանը չառարկի մեր անկախութեան դէմ»: Իսկ այդ անկախությունն ապահովելու նպատակով Ա.Խատիսյանը իր կողմից առաջարկում է. «Թուրքիայի սահմանները ապահովելու համար Ռուսաստանի կողմից, պիտի Թուրքիայի հետ կապւի եւ նրա մէջ մտնի ֆեդերատիվ կապերով ամբողջական ավտոնոմ Հայաստանը»338:

Էնվերը Խատիսյանի առաջարկի կապակցությամբ ասում է. «Ես ձեր կողմից սպասում էի դրան: Ձեզ ճշմարտութիւն ասած լինելու համար, պէտք է ասեմ, որ դուք ձեր յոյսը դրել էիք Ռուսաստանի վրայ, կամ աւելի Եւրոպայի վրայ: Թուրքիան այժմ ձեզ անկախութիւն տւեց եւ այն տւեց ձեր դրութեան մասին երկար մտածելուց յետոյ: Իմ ստորագրութիւնը կա եւ այն երբեք չի ջնջւի: Դուք ոչ միայն կարող էք մեզ հետ լաւ դրացիներ լինել, այլ նաեւ մեր դաշնակիցներ»339:

Պատվիրակության անդամները վերջապես բախտ ունեցան արժանանալ սուլթանի մոտ ընդունելության: Նրանք ծնկի եկան սուլթանի առջեւ, համբուրեցին աջը եւ շնորհավորեցին բայրամը: Սուլթանը դիմելով Հայաստանի Հանրապետության պատվիրակներին, ասաց «Հայաստանի անկախութիւնը թանկ է ինձ համար. ես Հայաստանի կառավարութիւնը համարում եմ իմ հարազատ զաւակը»: Ա.Ահարոնյանը սուլթանի այս խոսքերին ի պատասխան, ասաց հետեւյալը. «Եթէ չլիներ սուլթանը, չէր լինի նաեւ ազատ, անկախ Հայաստանը»

Սա այն Ավետիս Ահարոնյանն է, որ ինչ–որ մի ժամանակ գրել էր, նկատի ունենալով թուրքական բռնությունները. «Այսքան չարիք թէ մոռնան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարդայ նախատինք»:

Ամբողջ իրողությունը հասկանալու համար բերեմ Լեոյի վկայությունը: Ահա թե ինչ է գրել նա. «Եվ ստացվում էր ցավալի ու հեգնական հակադրություն: Այստեղ հայ ժողովուրդը փչանում էր արագորեն եւ գնում էր դեպի մի սոված ու ավելի անողոք ջարդարար ծմեռ, իսկ այնտեղ, Բոսֆորի ափում, Թոքաթլիյանի առաջնակարգ հյուրանոցում բնակություն էին հաստատել այդ նույն ջարդվող ու ոչնչացվող ժողովրդի ներկայացուցիչները, որը մազի չափ օգնություն չէր հասցնում, բայց դիպլոմատիկա էր ներկայացնում, այսինքն ընդունում էր եւ տալիս էր այցելություններ, զանազան դատարկ հայտարարություններ էր անում: Դիպլոմատիկական տակտը պահանջում էր, որ Հայաստանի պատվիրակության նախագահը ներկայանա սուլթանին: Եվ Ավետիս Ահարոնյանը ներկայացավ, հաճոյական խոսքեր ասաց սուլթանին, արժանացավ նրա համակրական ակնարկին... Դուք երեւակայո՞ւմ եք... հայդուկային գաղափարախոսությամբ անուն ստեղծած Ահարոնյանը թուրք սուլթանի առաջ գլուխ խոնարհեցրած: Ահա այս հանգամանքն է, որ ես երբեք չեմ հասկացել... Տարիների ընթացքում ֆիդայական հմայքներ արծարծել գեղարվեստական գրականության միջոցով, տարիների ընթացքում սուլթանական զուլումի ամբողջ սարսափն ու զարհուրանքը ներկայացնել մի աննախընթաց լալկանությամբ եւ հետո գնալ նույն այդ զուլումի աղբյուր սուլթանին երկրպագելու... Ես այս չէի հասկանում: ...Ուստի սարսափի օրերում, սարսափներով խոշտանգված, ավելի մեծ սարսափի–սոված ծմռվա առջեւ կանգնած, ես մի հոդված գրեցի, որի մեջ պահանջում էի ամեն ինչ թողնել, ամեն ուրիշ հոգս ու ցավ մոռանալ, ծախել մեր ազգային բոլոր սեփականությունները մի նպատակի, միմիայն մեկի– հայ ժողովուրդն ապրեցնելու համար: Եվ պահանջներիս մեջ էր, իմիջիայլոց, եւ այն, որ Կ.Պոլսից ետ կանչվի այնքան թանկ նստող եւ դիվանագիտական երեխաներից բաղկացած մեր պատվիրակությունը: Ավետիս Ահարոնյանը վերադարձավ Կ.Պոլսից, բայց այլեւս ինձ հետ չէր խոսում: Այնքան բարձր համարում ուներ նա իր նոր, գրականագետին սպանող, բայց արտաքին զիզի–պիզիներով հրապուրիչ արհեստի վրա»340:

Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Կ.Պոլսում կատարեց մի քստմնելի արարք եւս: Դրա մասին խոսելուց առաջ նախ հիշեցնեմ, թե ինչ էր ասվում 1918թ. հունիսի 4–ին Բաթումում կնքված «բարեկամության պայմանագրի» 5–րդ հոդվածում. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է գործուն կերպով հակազդել, որպեսզի ոչ մի բանդա չկազմավորվի եւ չգինվի իր տարածքի սահմաններում, ինչպես եւ զինաթափել ու ցրել բոլոր բանդաները, որոնք կփորձեն թաքնվել այնտեղ»341:

Ո՞ւմ նկատի ունեին պայմանագիրը ստորագրողները «բանդա» ասելով: Իհարկե, հայկական կամավորական ջոկատներին, որոնց ուժն ու արժեքը Թուրքիան շատ լավ գիտեր Սարդարապատի, Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերում խայտառակ պարտությունից հետո: Այս հոդվածի պահանջով էր, որ գեներալ Նազարբեկյանը հրաման արձակեց Անդրանիկի կամավորական գունդը ցրելու մասին: Այս հոդվածի պահանջով էր, որ մի քանի ամիս անց, Կ.Պոլիս մեկնած Ա.Ահարոնյանն ու Ա.Խատիսյանը հեռագրեցին Երեւան. «Անդրանիկի եւ իր հետեւորդների կողմից օսմանյան կառավարությանը նեղություն պատճառելու առթիվ օսմանյան կառավարությունը բողոք հայտնեց, խնդրում է այդ առթիվ քննություն նշանակել եւ եթե այդ կարգի դեպքեր պատահեն, խիստ միջոցներ պետք է ձեռնարկել եւ նրանց վերջ տալ»342:

Այսպիսով, Անդրանիկի (որը վճռականորեն մերժել էր Բաթումի պայմանագիրը, որի բովանդակությանը ծանոթանալուց հետո հայկական զորաբանակի հրամանատարությանը հեռագրել էր, ընդգծելով, թե «Վեց հարիւր տարուան ստրկութեան շղթան դարձեալ ձեր վիզն ու ոտքը կ'անցնէք ձեր ձեռքով»)343 ներկայությունն էր խանգարում երիտթուրքերին ու նրանց... դաշնակից Հայկական հանրապետության ղեկավարներին:

Կ.Պոլսում հայկական պատվիրակությունն Անդրանիկին Հայաստանից հեռացնելու պատրաստակամությունը ստանձնելուց բացի, պարտավորվեց նաեւ Թուրքիային օգնել ընդդեմ Անտանտի երկրների344:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության Կ.Պոլիս մեկնելը, վարած բանակցությունները, ստանձնած պարտավորությունները Բաթումի դավաճանության ուղղակի շարունակությունն էին: Եվ սա կոծկելու նպատակով այսօր դաշնակցության գաղափարախոսներն աշխատում են դրա մասին չխոսել կամ էլ գունազարդել իրականությունը: Այդպես է վարվել, օրինակ, 2000թ. Հայաստանի դպրոցների համար «Հայկական հարցի պատմություն» դասագրքի հեղինակ Ռ.Փիրումյանը, գրելով, թե «Հայաստանը շատ բան չուներ խնդրելիք իթթիհադական կառավարությունից, որն արդեն կրած պարտությունների, երկրի տնտեսական իրավիճակի ու մանավանդ հայերի դեմ գործադրած բնաջնջման իր վայրագ փորձի հետեւանքով վար-

կաբեկված էր թե Թուրքիայի ներսում եւ թե Գերմանիայում»345:

Բայց, ինչպես տեսանք, փաստերն այլ բանի մասին են վկայում: Միայն ասեմ, որ Մուդրոսի զինադադարի կնքումը պարզապես փրկեց Հայաստանը, այլապես, դատելով կատարված անցուդարձից, դժվար չէ պատկերացնել, թե ինչ ծանր հետեւանքներ կունենար հայկական պատվիրակության ամիսներ շարունակ Կ.Պոլսում ծավալած գործունեությունը:

Կ.Պոլսից վերադառնալուց հետո Ա.Խատիսյանը, հիշելով իր հանդիպումները Թալեաթի, էնվերի եւ երիտթուրքական մյուս պարագլուխների հետ, ասել է. «Թուրքերը տեսայ, շաքարի պես մարդիկ են եւ ինտելիկենտ ու զարգացած մարդիկ: Ես զարմանում եմ, որ թրքահայերը չեն կարողացել համաձայն գնալ այդ մարդկանց հետ եւ այսպիսի վիհ են բացել իրանց եւ թուրքերու միջեւ»346:

Այս քստմնելի վերաբերմունքից զայրացած Անդրանիկը գրել է, որ Պոլիսից վերադարձած Ա.Խատիսյանը հայտարարել է, թե «թուրքերը զարգացած ու ճենթըլմէն մարդիկ են, Թուրքիոյ հայերը չեն կրցած անոնց հետ վարուելակերպ ունենալ»347:

Սա ոչ թե խելագարություն է, այլ, Հ.Չիլինկիրյանի գնահատմամբ, իսկապես դավաճանություն է: Եվ դաշնակցության ղեկավարները մոռացան Հայոց ցեղասպանությունը կազմակերպած երիտթուրքական հրեշներին, նրանց «ինտելիկենտ եւ զարգացած» մարդիկ համարելով, մեղադրում էին արեւմտահայությանը եւ ընդունում այնպիսի կեցվածք, որ կարծես թե իրենք ոչ մի մեղք չունեն:

...Սեւրի դաշնագրով ոգեւորված դաշնակցությունը չնկատեց Թուրքիայում սկսված քեմալական շարժումը եւ չհասկացավ դրանից եկող վտանգը: Դաշնակցության ղեկավարած Հայաստանի կառավարությունը դարձավ գեներալ Ստոքսի կամակատարը եւ նրա թելադրանքով հրաժարվեց Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնություն կնքել: Փաստորեն դաշնակիցները մի կողմից Հայաստանի Հանրապետությունը թողեցին մենակ քեմալական շարժումից եկող վտանգի առջեւ եւ ոչ մի օգնություն չկազմակերպեցին, մյուս կողմից էլ արգելեցին դաշինք կնքել Խորհրդային Ռուսաստանի հետ:

Քեմալական զորքերը, օգտվելով ստեղծված վիճակից, արագորեն հասան Ալեքսանդրապոլ եւ թելադրեցին իրենց կամքը: Դաշնակցության ղեկավարությունը շուտ մոռացավ, թե դրանից երկու ամիս առաջ իր պաշտոնաթերթ «Յառաջի» էջերում հայ ժողովրդին ինչպես էր կոչում վերջին գոտեմարտի Հայաստան ներխուժած թուրք զավթիչներին դիմադրելու համար եւ սկսեց երգել հին երգը:

Կարծես թե չէր եղել Ադանան: Մոռացվեցին Հայոց ցեղասպանությունն ու Արեւմտյան Հայաստանի կորուստը: Եվ հիշողությունից զրկվածները

«Յառաջ» պաշտոնաթերթի միջոցով ազդարարեցին. «Եթէ Հայաստանը կամենում է ապրել իբրեւ պետութիւն. ամէն կերպ նա պիտի խուսափի լինել իր մեծ հիւսիսային հարեւանի Ռուսաստանի խաղալիքը: Միւս կողմից մեր դարաւոր թշնամին. Տաճկաստանը, կարող է. ի վերջոյ, հաշտուել մեր պետական գոյութեան հետ միայն այն ժամանակ. երբ մենք մի անգամ ընդմիշտ կը հրաժարուենք ռուսական օրիենտացիայից»348:

Եվ «Յառաջը» իմաստունի կեցվածք ընդունելով ցույց էր տալիս Հայաստանի փրկության ճանապարհը, առաջարկելով «գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարեւանի. թիւրքի հետ: Եթէ հայ ժողովուրդը կամենում է ապրել եւ ապահովել իր պետական ու ֆիզիքական գոյութիւնը յարատեւօրէն. նա պէտք է ունենայ ոչ թէ ռուսական. այլ թրքական օրիենտացիա»:

Պատասխանատվությունից խուսափելու նպատակով դաշնակցությունն իր պաշտոնաթերթի միջոցով հայտարարում էր. «Եւ եթէ հայ ժողովուրդը վերջին համաեւրոպական պատերազմի ժամանակ չունենար ռուսական օրիենտացիա. այլ լինէր թիւրքերի հետ առանց վերապահութեան. ամէնայն հաւանականութեամբ նա խուսափած կը լինէր կոտորածներից եւ նրա դրութիւնը վրացիներից էլ լաւ կը լինէր»349:

Կարծում եմ, ընթերցողի համբերությունը շատ չեմ չարաշահի, եթե եւս մեկ–երկու մեջբերում կատարեմ 1920թ. նոյեմբերին տպագրված «Յառաջ» պաշտոնաթերթից:

Նկատի ունենալով Ռուսաստանին «Յառաջը» գրում էր. «Միանգամայն ընդմիշտ մենք պիտի ըմբռնենք. որ օտարի վրայ յենուելով չէ, որ մենք կարող ենք իրապէս խաղաղութիւն ձեռք բերել մեր ժողովրդի համար, այլ միայն իր սեփական ուժերին ապաւինելով պիտի որոշենք մեր բախտը մեր ուժեղ հարեւանների թիւրքերի հետ: Ամէն մի օտար միջամտութիւն. մանաւանդ ռուսների միջամտութիւնը. կարող է միայն վնասակար լինել հայ եւ թիւրք ժողովուրդների յարատեւ խաղաղացման համար. որովհետեւ օտարը նախ պիտի խտացնէ այն փոխադարձ անվստահութեան մթնոլորտը. որ գոյութիւն ունի երկու դարաւոր հարեւանների մէջ...»:

Ահա այս կերպ հայ քաղաքական մտքի պատմության մեջ մտցվեց մի կործանարար տեսություն, որն ունի հետեւյալ բանաձեւումը. «երրորդ ուժի բացառման օրենքը»: Սա նշանակում էր հրաժարվել ռուսական կողմնորոշումից եւ հարցերը լուծել միայն Թուրքիայի հետ: 1920թ. դեկտեմբերի 2–ին Ալեքսանդրապոլում կնքված պայմանագիրը հենց այդ էր նշանակում:

«Երրորդ ուժի բացառման օրենքը» որդեգրեց նաեւ ՀՀՇ–ն. որը 300 տարի շարունակ հայ ժողորվդի որդեգրած ռուսական կողմնորոշումը համարում էր ճակատագրական սխալ: Սա այնպիսի քաղաքական կուրություն էր. որը, եթե խորանար. ապա Հայաստանին զրկելու էր հզոր դաշնակից Ռուսաստանի աջակցությունից: Այս իրողությունը նկատի ունենալով Հ.Չիլին-

կիրյանը խստորեն քննադատում էր նաեւ դրա հետ առնչվող այն թեզը. որով ՀՀՇ-ն հռչակում էր. թե «չկան մշտական բարեկամներ ու թշնամիներ. ու մենք ենք մեր պայմաններից ելնելով ընտրում բարեկամ ու թշնամի»:

Հ.Չիլինկիրյանը խորապես զգում էր. թե ուր է տանում ՀՀՇ-ի որդեգրած քաղաքականությունը եւ գրում էր. «... 1915-ի ցեղասպանութեան հարցին մէջ. ամենէն աններելի դաւաճանական կեցուածքը Լ.Տէր-Պետրոսեանը ցուցուցած է: Ամերիկեան թելադրութեամբ գործողը. իր ճակտին Սովետական Հայաստանի քանդումին մուրը կրելէն զատ. իր ամենէն զգուելի արարքներէն մէկուն թուրքին հետ բարեկամութիւն հաստատելու համար կատարած աշխատանքներուն մեղքը ունի իր ճիտին»:

«Ամերիկացիներուն ծրագիրները գործադրողը.- ընդգծում է Հ.Չիլինկիրյանը.- Հայկական ցեղասպանութիւնը եւ Արեւմտեան Հայաստանի կորուստը հայոց մոռցնելու համար ամէն ջանք թափեց»350: «Եւ մենք էլ կը հաւատանք.- եզրակացնում է նա.- որ եթէ Ռուսաստանի ներկայութիւնը չըլլար Հայաստանի մէջ. թուրքերը միշտ ըրածնուն պէս. այս պատրուակէն օգտուելով կը յարձակէին Հայաստանի վրայ»351:

1920թ. նոյեմբերին «Յառաջը» գրում էր. «Պէտք է որ գէթ այժմ ունենանք մեր համեստ. շատ համեստ սեփական ուժի եւ կարողութեան դառն գիտակցութիւնը: Պէտք է որ վերջապէս հասկնանք. թէ մեր ուժի եւ կարողութեան չափով միայն մենք կարող ենք քաղաքական նպատակներ եւ պահանջներ առաջադրել: Այլապէս մենք ինքներս կը նպաստենք մեր կործանման եւ երբեք չպիտի կարողանանք յարատեւօրէն հաշտուել մեր հարեւան թիւրքերի հետ: Մեր ազգային քաղաքականութիւնը. որ եղել է մինչեւ այժմ անուղղելիօրէն ռոմանտիկական. պէտք է հիմնովին ջրէ իր ղեկավարող սկզբունքները: Ռեալ քաղաքականութեան գլխաւոր սկզբունքն է – **պահանջներիդ սահմանը սեփական ուժիդ չափն է**»352

Եվ այնուհետեւ «Ժամանակն է. որ մենք բոլորս սթափուենք եւ հիմնովին փոխենք մեր այժմեան քաղաքական ընթացքը: Ամենից առաջ եւ ամենից աւելի մենք պէտք է հաշտ լինենք մեր հարեւանների հետ: Եւ որքան աւելի ուժեղ են մեզանից մեր հարեւանները. այնքան աւելի խաղաղասէր մենք պիտի դառնանք նրանց հանդէպ: Մենք պէտք է ծգտենք. որ այն հաշտութիւնը որ կնքուելու է Ալեքսանդրապոլում. լինի սկիզբը պատմական մի նոր դարաշրջանի եւ նոր հայկական քաղաքականութեան: Մենք պէտք է ծգտենք ամենայն անկեղծութեամբ եւ վճռականութեամբ վերացնել այն բոլոր խոչընդոտները. որոնք անկարելի են դարձրել մինչեւ այժմ **հայ-թրքական բարեկամութիւնը**: ...Ահա այն ճանապարհը. որ պիտի բանան մեզ համար Ալեքսանդրապոլի բանակցութիւնները»353:

Այսպիսով. դաշնակցությունը. մոռացած ամեն ինչ. իր «ազգափրկիչ» դերը. «ծովից ծով Հայաստանի». «Ազատ. անկախ եւ միացյալ Հայաստա-

նի» մասին ամպագոռգոռ խոսքերը, այժմ հրաժարվելով դրանցից, իր գլխավոր սկզբունքն էր համարում հորջորջել «պահանջներիդ սահմանը սեփական ուժիդ չափն է»:

Ովքեր գիտեն դաշնակցության պատմությունը, նրանց համար վաղուց է պարզ, որ այդ կուսակցությունն իր գոյության ամբողջ ընթացքում չափից ավելի գերագնահատել է իր ուժն ու կարողությունը տրվելով արկածախնդրությանը: Սա հայտնի էր նաեւ դաշնակցության ղեկավարներին: Գիտեին, բայց շարունակաբար իրենց անմիտ ու անհեռատես գործելակերպով ահավոր վնասներ ու դժբախտություններ պատճառեցին ժողովրդին:

Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը ոչ թե «պատմական մի նոր դարաշրջանի սկիզբը» եղավ, այլեւ դրանով կատարվեց մի նոր դավաճանություն: Բանը միայն այդ պայմանագրի ստրկական բնույթը չէր:

Պատմաբան Լեոն ժամանակին բացահայտել է Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրմանն առնչվող կարեւորագույն իրողություններ, որոնց մասին այսօրվա ընթերցողներից շատերը տեղյակ չեն: Լեոն պարզել է, որ Ալեքսանդրապոլում ստորագրված պայմանագրի հայերեն եւ թուրքերեն տեքստերը միատեսակ բնագիր չունեն: Նա նշում է, որ «բաց թողնված տեղերը վկայում են, թե ինչու է կատարվել կեղծիքը»:

«Նրանք,– ընդգծում է Լեոն,– այնքան ամոթալի են նույնիսկ Ալեքսանդրապոլի դաշնագրի պես մի խայտառակ թղթի մեջ, որ թուրք պատվիրակներն, իբրեւ շնորհ, համաձայնել են ստորագրել Հայաստանի բաժին դաշնագրի օրինակն առանց այդ տեղերի»354:

Պայմանագրի հայերեն բնագրի մեջ բաց է թողնված ամբողջ երրորդ հոդվածը, որի թուրքական բնագրում ասված է. «Ինչպես որ թիւրք, ռուս եւ բոլոր աշխարհի վիճակագրութիւնները եւ հաստատեալ ընկերային կացութիւնը ցոյց կուտան, այս առթիւ ալ կը վաւերացուի թէ օսմ. սահմանին վրայ հայ մեծամասնութիւն ունեցող որեւէ հողամաս չկայ»:

Պայմանագրի 5–րդ հոդվածի թուրքական բնագիրը այսպես է սկսվում. «Չորրորդ յօդուածին յիշած Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանագծէն մինչեւ օսմանեան հին սահմանը գտնուող հողամասը այս դաշնագրով Թուրքիոյ կը մնայ եւ որուն վրայ Թուրքիա պատմական, ցեղական եւ իրաւական անուրանալի իրաւունքներ ունի»: Լեոն համեմատել ու ճշտել է, որ այս ամբողջ հոդվածը չկա հայերեն բնագրի մեջ:

Ալեքսանդրապոլի պայմանագրով դաշնակցությունը, որը շատ էր հպարտանում Սեւրի պայանագիրը ստորագրելու համար, առաջինը հրաժարվեց դրանից, որով, Անդրանիկի գնահատմամբ, «Խատիսյանը ցեխերը կը թաթխէ» այն գրիչը, որ Ահարոնյանը ստորագրել էր Սեւրի դաշնագիրը355:

Ահա այս ամենն էլ նկատի ունենալով Լեոն դեկտեմբերի 2–ի պայմանագրի կապակցությամբ գրել է, որ դա «պիտի մնա դաշնակցության հա-

վերժական ամոթն ու խայտառակությունը»: «Իրանք, դաշնակցականները,– շարունակում է Լեոն,– այնքան խորն էին զգում իրանց այդ գործի նողկալի տգեղությունը, որ չհամարձակվեցին հրատարակել Ալեքսանդրապոլի դաշնագիրը»356:

Ինչո՞ւ կատարվեց այս դավաճանությունը եւ ինչո՞ւ ստորագրվեց դեկտեմբերի 2–ի պայմանագիրը, երբ արդեն Հայաստանում հաստատվել էր խորհրդային իշխանություն: Դաշնակցության նորօրյա գաղափարախոսները դա արդարացնում են գրելով. «Դեկտեմբերի 2–ի երեկոյան Հայաստանը բոլշեւիկներին պիտի հանձնվեր. կարելի էր թուրքերի հետ հաշտության համաձայնագրի ստորգրությունն էլ նրանց թողնել: Բայց ինչպե՞ս վստահել բոլշեւիկներին: Եթե հանկարծ, թուրքերը, օգտվելով շփոթ վիճակից, սկսեին ջարդել Ալեքսանդրապոլի հայերին եւ արագ թափով Երեւանի վրա հարձակվեին: Մյուս կողմից, եթե պատվիրակությունը թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար պայմանագիրը ստորագրեր, Հայաստանի խորհրդային իշխանությունը միշտ կարող էր չեղյալ համարել այն, որ ստորագրել էր հրաժարական տված կառավարության պատվիրակությունը»357:

Դեկտեմբերի 2–ի պայմանագրի բովանդակությունը ապացուցում է վերոհիշյալի բացատրության ամբողջ անհեթեթությունը: Իսկապես, ի՞նչ կլիներ, եթե Հայաստանում չհաստատվեր սովետական իշխանություն, եւ դաշնակցությունը շարունակեր Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրի ստորագրումից հետո ղեկավարել Հայաստանը: Այդ դեպքում նա պարտավոր էր բոլոր միջոցներով ապահովել այդ պայմանագրի կատարումը, որովհետեւ չկատարելու ոչ ուժ ուներ եւ ոչ էլ հնարավորություն: Ի՞նչ էր մնալու այդպիսի վիճակի մեջ հայտնված Հայաստանից: Այդ խայտառակ պայմանագիրը երաշխիք տալի՞ս էր Հայաստանի պետականության եւ, ընդհանրապես, հայ ժողովրդի հետագա գոյության համար:

Դառն ճշմարտությունը պարտադրում է ընդգծել, որ իշխանությունից հեռացած դաշնակցությունը իր վրա էր վերցրել Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրի պահանջները կատարելու պարտականությունը 1921թ. փետրվարի 18–ին Սիմոն Վրացյանի գլխավորությամբ կազմակերպելով խռովություն:

Հրապարակի վրա եղած նյութերը, փաստաթղթերն ու վկայությունները լիարժեք հիմք են տալիս հաստատելու, որ 1921թ. փետրվարին տեղի է ունեցել հայ ժողովրդի շահերի ուղղակի դավաճանություն, որը կոծկելու համար ներկայացվում է որպես ժողովրդի ազատությունը վերականգնելու ապստամբություն: Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրելուց հետո այդ ի՞նչ ազատության մասին է խոսքը, որ մինչեւ օրս շարունակաբար պարծենում են դաշնակցության հին ու նոր գաղափարախոսները:

Ի՞նչ հիմքեր ունեմ այսպիսի գնահատականի համար: Չմտնելով մանրամասների մեջ ուզում եմ առանձնապես ընդգծել. որ փետրվարյան խռովության կազմակերպման գործում մեծապես շահագրգռված էր Թուրքիան. որն այս անգամ էլ իր նպատակին հասնելու համար օգտագործեց դաշնակցության թուրքասիրությունն ու հակառուսական կեցվածքը:

Իսկ ինչո՞ւ էր Թուրքիան շահագրգռված Հայաստանում հակասովետական խռովություն կազմակերպելու մեջ: Այս հարցը անպայման կհետաքրքրի ընթերցողին. որովհետեւ չէ՞ որ նա այդ ժամանակ Մոսկվայում բանակցություններ էր վարում Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական պայմանագիր կնքելու համար:

Այո. այդպես էր իրավիճակը: Թուրքիան մի ձեռքով Ռուսաստանի հետ բանակցություններ էր վարում. մյուս կողմից էլ. հենց այդ բանակցություններում իր նպատակին հասնելու համար շահագրգռված էր Հայաստանում իր կամքը կատարող իշխանության ստեղծմամբ:

Այս կապակցությամբ հիշեցնեմ երկու կարեւոր իրողություն:

Առաջին. 1921թ. փետրվարի 21–ին սկսվելու էր Լոնդոնի կոնֆերանսը. որը պետք է ավարտվեր մարտի 2–ին:

Երկրորդ. 1921թ. փետրվարի 26–ին Մոսկվայում սկսվելու էին ռուս–թուրքական բանակցությունները. որոնք պետք է ավարտվեին մարտի 16–ին:

Դրանցում ոչ միայն լուծվելու էին Թուրքիայի ապագային վերաբերող խնդիրները. այլ նաեւ Հայաստանի սահմանների հարցը: Թուրքիայի համար առանձնակի վտանգ էին ներկայացնում Մոսկվայի բանակցությունները. քանի որ դրանց մասնակցելու էր Ռուսաստանի դաշնակից Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը: Թուրքիային հարկավոր էր փրկել 1920թ. դեկտեմբերի 2–ի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ուրեմն հարկավոր էր արագացնել գործողությունները. որոնց արդյունքում Հայաստանում իշխանության պետք է գային Ալեքսանդրապոլի պայմանագիրը պաշտպանող ուժերը:

Այդ ուժերը կային Հայաստանում հանձին Ս.Վրացյանի գլխավորած «Հայաստանի փրկության կոմիտեի». որը. օգտվելով ստեղծված նպաստավոր պայմաններից. փետրվարի 18–ին տապալեց սովետական իշխանությունը: 1921թ. փետրվարի 24–ին Թուրքիան շտապեց իր ներկայացուցչի միջոցով «Փրկության կոմիտեին» ճանաչել որպես միակ ազգային իշխանությունը Հայաստանում: Թուրքիայի ներկայացուցիչ Բեհաէդդին բեյը իր կառավարության անունից հայտարարեց. «Եվ այն չափով. որչափով Հայաստանի եւ Տաճկաստանի սահմանների ու հարակից խնդիրները ստացել են իրանց իրավական լուծումը Ալեքսանդրապոլի դաշնագրով. պարզ է. որ հայկական կառավարությունը եւս չի հանդուրժի. որպեսզի Մոսկվայի խորհրդաժողովում այդ հարցերը քննության առնվեն»358:

Սա ուղղակի հանճնարարություն էր, եւ կամակատար Ս.Վրացյանը անմիջապես ձեռնամուխ եղավ քեմալական Թուրքիայի ցանկության իրականացմանը: Մոսկվա ուղարկած հեռագրով նա հայտնում էր, որ Հայաստանում ստեղծվել է նոր իշխանություն եւ պահանջում էր. «Մոսկվայի կոնֆերանսը իրավասու չէ քննության առնել Հայաստանի խնդիրները»: Լոնդոն ուղարկած հեռագրում Ս.Վրացյանը նույնպես հայտնում էր նոր իշխանության ստեղծման մասին եւ գրում էր. «Հայաստանն ուզում է ապրել հաշտ ու բարեկամաբար հարեւան Թուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնդոնի կոնֆերանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահության կամ դժգոհությունների Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ»:

Մոսկվայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչը Ս.Վրացյանի հեռագրի հիման վրա, թուրքերի պահանջով զրկվեց բանակցություններին մասնակցելու իրավունքից: Լոնդոն ուղարկած հեռագրով էլ Ս.Վրացյանը խաղից դուրս թողեց Ա.Ահարոնյանին ու Պողոս Նուբար փաշային, որոնք փորձում էին Լոնդոնի կոնֆերանսում կենդանություն տալ Սեւրի դաշնագրին:

1921թ. մարտի 15–ին Ս.Վրացյանը կատարեց իր հաջորդ քստմնելի քայլը: Անկարա, Թուրքիայի ղեկավար, հայ ժողովրդի դահիճ Մուստաֆա Քեմալին ուղարկած հեռագրով հայտնում էր. «Իմ կառավարությունը Տաճկաստանի եւ Հայաստանի միջազգային նորմալ ու բարեկամական հարաբերություններ սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձեւակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2–ին Ալեքսանդրապոլում կնքված հայ–տաճկական դաշնագրի մեջ եւ հետագային ստեղծված իրական պայմանները»:

Հենվելով այդ դավաճանական պայմանագրի 5–րդ հոդվածի վրա Ս.Վրացյանը Հայաստանի զգալի մասը զավթած թուրքական զորքերի հրամանատար դահիճ Կարաբեքիր փաշայի միջոցով խնդրում էր թուրքական կառավարությանը հաղորդել. «թե արդյո՞ք Ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն եւ եթե կարող է, ի՞նչ չափով եւ եղանակով, ի՞նչ ժամանակամիջոցով»359:

Զավթած իշխանության գլխին մնալու ձգտումը Ս.Վրացյանի հիշողությունից «ջնջել» էր բոլորը, եւ նա թուրքական զորքին էր հրավիրում... գրավելու նաեւ Հայաստանի մնացած մասն էլ: Եվ դժվար չէ պատկերացնել, որ եթե իրադարձություններն այլ ընթացք ունենային, դաշնակցության առաջնորդների հրավերով առաջ շարժվող թուրքական զորքերը ինչի կվերածեին երկիրը:

Ի դեմս Ս.Վրացյանի ու մյուսների, դաշնակցության ղեկավարությունը դրսեւորեց այնպիսի քաղաքական տհասություն, որ նույնիսկ հաշվի չառավ, որ այդ օրերին Մոսկվայում ընթանում էին ռուս–թուրքական բա-

նակցություններ. որոնց հաջող ելքի համար շահագրգռված էին երկու կողմն էլ: Խորհրդային Ռուսաստանին հարկավոր էր, որ Թուրքիան Անտանտի երկրների ռազմանավերի առջեւ փակեր սեւծովյան նեղուցները եւ դրանով ապահովել իր հարավային սահմանների անվտանգությունը: Թուրքիան էլ շահագրգռված էր. որ պայմանագրով Ռուսաստանից ձեռք բերեր անհրաժեշտ քանակության ռազմամթերք Անտանտի երկրներից պաշտպանվելու համար:

Այսպիսով. Հայաստանում իր դրածո իշխանությունը ստեղծելով, որը չգիտես ինչու իրեն կոչում էր «Հայաստանի փրկության կոմիտե», Թուրքիան հասավ իր նպատակին: Դրանից հետո նա մոռացավ Ս.Վրացյանին տված խոստումները, որովհետեւ Մուստաֆա Քեմալը նրա նման այնքան հիմար չէր. որ դիվանագիտությամբ ձեռք բերած հաջողությունը մի կողմ դներ եւ ռազմական օգնություն ցույց տար շատ խախուտ ու հեռանկար չունեցող Ս.Վրացյանի «կառավարությանը» եւ պատերազմի մեջ մտներ հզոր Ռուսաստանի դեմ:

Այստեղ հարկ եմ համարում հիշել Լեոյի գնահատականը: «Բանից դուրս եկավ.– գրել է Լեոն.– որ փետրվարյան ապստամբությունը դաշնակցության ինքնասպանության վերջին գործողությունն էր եղել: Դեռ նոր սարսափելի կերպով ջարդ ու փշուր եղած Քյազիմ Կարաբեքիր փաշայից. դաշնակցական անխելք տղաները ծեռնարկել էին պատերազմելու արդեն Կարաբեքիրից շատ հզոր Ռուսաստանի դեմ: Կապովի գժի մի գործ... Վատ թղթամոլի նման ամեն ինչ. նույնիսկ պատիվ տանուլ տված դաշնակցականները փոխանակ Ալեքսանդրապոլի խայտառակ դաշնագրից հետո գետինը մտնելու եւ անհայտանալու հույսները հիմա դրել էին Կարաբեքիրի վրա եւ ուզում էին նրա հետ միանալ ու նրա հետ միասին կռվել Ռուսաստանի դեմ: Այս եղանակով պիտի կատարվեր Հայաստանի ազատությունը...»360:

Թե ինչ քաղաքականություն էր որդեգրել «Հայաստանի փրկության կոմիտեն». ցայտուն կերպով երեւում է նրա պաշտոնաթերթ «Ազատ Հայաստանի» հրապարակումներից: Ահա մի քանի մեջբերում:

«Հայ ժողովուրդը վերջին ամիսների ընթացքում ունեցաւ մի շարք այնպիսի ցնցող քաղաքական անյաջողութիւններ. որոնք չէին կարող իրենց հերթին չյեղաշրջել նրա քաղաքական գիտակցութիւնը. չէին կարող աւելի զգաստ եւ աւելի իրատես չդարձնել նրան. չէին կարող վերջապես չբուժել նրան քաղաքական այն կործանարար հիւանդութիւններից. որոնք միշտ նրա կրած դժբախտութեանց եւ աղետների գլխաւոր պատճառն են եղել:

Այսպես. Օլթիի. Սարիղամիշի. Ղարսի եւ Ալեքսանդրապոլի տակ մեր ունեցած պարտութիւնները մեզ ազատեցին քաղաքական այն ախտաւոր մեծամոլութիւնից. որ լսել անգամ չէր ուզում փոքրիկ ու համեստ Հայաստա-

նի մասին եւ որ. հակառակ առողջ տրամաբանութեան բոլոր թելադրանքներին, երազում էր ծովից ծով ծաւալւող Հայաստանի մասին: Քաղաքական այդ կոյր մեծամոլութիւնն էր հայ եւ թիւրք անհաշտութեան. թշնամութեան գլխաւոր պատճառներից մէկը:

Բնական է, որ այս հիւանդութիւնից ազատւելով, հայ ժողովուրդն աւելի հեշտութեամբ պիտի կարողանայ գտնել ընդհանուր լեզու իր հարեւան թիւրք ժողովրդի հետ»361:

Ընթերցողիս ասեմ, որ վերոհիշյալ մեջբերումը «Հայ եւ թիւրք բարեկամութեան խնդիրը» մեծադողորդ հոդվածից է: Տեսնո՞ւմ եք, այս անգամ էլ ինչպիսի վարպետությամբ է դաշնակցությունն իր վրայից գցում մեղքի պատասխանատվությունը եւ ամեն ինչ բարդում ժողովրդի վրա:Իսկ ո՞վ էր այդ կործանարար ու քաղաքական ախտավոր մեծամոլական հիվանդության կրողը, ո՞վ էր ժողովրդի գլխին փորձանքներ ու դժբախտություններ լցնում: Դաշնակցությունը, իհարկե, լռում է եւ անազնվաբար դրանց համար մեղադրում ժողովրդին...

«Ազատ Հայաստանը» շարունակում է. «Հայ եւ թիւրք անհաշտութեան ու թշնամութեան մէկ ուրիշ. թերեւս աւելի խոշոր պատճառն է նաեւ հայ ժողովրդի անուղղելի ռուսասիրութիւնը, որը հասնում էր ինքնասպան մոլութեան աստիճանին, սկսած հայ ինտելիգենցիայից մինչեւ վերջին հայ գիւղացին ու բանւորը հայ ժողովուրդը բռնւած էր ռուսամոլութեան աղետաբեր ցաւով: Իր ազատութիւնն ու անկախութիւնն անգամ պատրաստ էր յաճախ զոհել Ռուսաստանի հանդէպ ունեցած իր կոյր սիրուն: Այդ հոգեբանութիւնն էր պատճառը, որ հայ ժողովուրդն այնքան կրաւորական դիրք բռնեց ռուսական բոլշեւիզմի ներխուժման հանդէպ դեկտեմբերին»362:

Պատմական իրողությունն այսպես կեղծելով «Ազատ Հայաստանը» մոռացության է տալիս իր կուսակցության որդեգրած թուրքասիրությունը, որը Ադանայի հայ բնակչության կոտորածից հասցրեց մինչեւ Հայոց ցեղասպանություն եւ Արեւմտյան Հայաստանի բռնի հայաթափում: Եվ սրա փոխարեն ժողովրդին մեղադրում է ռուսասիրության մեջ ու քծնանքի հայացք ուղղում դեպի հայ ժողովրդի դահիճ Թուրքիան:

«Իրերի պատմական բերումով,– շարունակում է դաշնակցության խոսափող «Ազատ Հայաստանը»,– Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատութեան իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը, այն միակ իրական մերձաւորագոյն քաղաքական ուժը, որ անմիջապէս եւ կենսապէս շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարեալ ազատագրութեամբ բոլշեւիկեան Ռուսաստանի խեղդող լուծից եւ որ ի վիճակի է այս պահին իրական օգնութիւն հասցնել իրենց ազատագրութեան համար հերոսաբար կռւող Անդրկովկասի ժողովուրդներին»:

Բայց սա բոլորը չէ: Ավելի քստմնելի ու զայրացուցիչ է վերոհիշյալ հոդ-

վածի վերջաբանը. որտեղ դաշնակցությունն ուղղակի հանձնարարում է. «Իր ազատագրական պայքարի այս տաժանելի օրերին հայ ժողովուրդը քաղաքական իմաստութիւն պիտի ունենայ թոթափելու իրեն անցեալի դառն յուշերը եւ աւանդութիւնները եւ ոչինչ չխնայելու հայ եւ թիւրք ժողովուրդների. Հայաստանի եւ Տաճկաստանի բարեկամութիւնը հաստատելու համար: Թիւրք ժողովրդի. Տաճկաստանի գործօն բարեկամութեամբ է միայն. որ հայ ժողովուրդը պիտի դուրս գայ իր ներկա ծանր տագնապից եւ թիւրք ժողովրդի հետ միասին է. որ հայ ժողովուրդը պիտի կարողանայ վերջապէս ձեռք բերել տեւական ապահովութիւն: Ուրիշ ճանապարհ չկայ»:

Դաշնակցությունը, այսպիսով, պահանջում էր մոռանալ Հայոց ցեղասպանությունը, Արեւմտյան Հայաստանի կորուստը, թուրքական իշխանությունների գործադրած բազում բռնություններն ու հալածանքները եւ փարվել Տաճկաստանի բարեկամությանը: Եվ այդ զոհողությունը ժողովուրդը պետք է կատարեր հանուն նրա, որ թուրքական սվինների օգնությամբ դաշնակցությունը շարունակեր իր գոյությունը որպես մի փոքր հողակտորի վերածված Հայաստանի կառավարիչ:

1921թ. մարտի 20–ին «Ազատ Հայաստանը» գրում էր. «Հայ ժողովուրդը գէթ այս անգամ չպետք է գործի 1914–ի եւ 1918–ի ճակատագրական սխալը եւ պետք է իր բախտը կապի ոչ թե Ռուսաստանի, այլ իր հարեւան ազգերի, այսինքն թուրքերի եւ վրացիների հետ: Իսկ թուրքերի ու վրացիների հետ լինելով հայ ժողովուրդը կլինի նաեւ Տաճկաստանի հետ: Անդրկովկասի բոլոր ժողովուրդները պետք է լինեն տաճիկների եւ ոչ թե բոլշեւիկների (այսինքն Ռուսաստանի – Վ.Պ.) հետ, որովհետեւ միայն տաճիկների հետ գործելով նրանք կարող են ապահովել իրենց ազատությունն ու անկախությունը»:

«Փրկության կոմիտեի» հիշողությունը կորցած գործիչները Ս.Վրացյանի գլխավորությամբ իրենց պաշտոնաթերթում իրողությունն այնպես էին ներկայացնում, որ կարծես թե դրանից առաջ այդ նույն Թուրքիան չի եղել Հայոց ցեղասպանության կազմակերպիչը: Ավելին, որ Հայոց ցեղասպանությունը ոչ թե Թուրքիայում, այլ Ռուսաստանում է կատարվել: 1914թ. հիշողությունից զրկվածները «շահեցին Տաճկաստանի բարեկամությունը» եւ արդյունքում կորստի տվեցին Արեւմտյան Հայաստանն ու նրա բնակչությունը: Այժմ էլ 1921թ. փետրվարյան դավաճանության կազմակերպիչները Ռուսաստանի նկատմամբ ատելությունից կուրացած եւ հիշողությունից զրկվածները նորից բռնել են «Տաճկաստանի բարեկամությունը շահելու» աղետաբեր ուղին, որը հայ ժողովրդին պատճառեց անասելի կորուստներ:

Եվ որպեսզի իրեն ոչ ոք չխանգարեր. ոչ ոք չհամարձակվեր հիշեցնել Հայոց ցեղասպանության ու Արեւմտյան Հայաստանի կորստի մասին. ոչ ոք չհամարձակվեր պահանջել վերականգնել պատմական արդարությունը.

դաշնակցության «Ազատ Հայաստանը» հարձակվեց աշխարհով մեկ սփռված Մեծ եղեռնից փրկված արեւմտահայության բեկորների վրա:

«Հայ գաղութների վնասակար քաղաքական դերը» հոդվածում դաշնակցության խոսափողը ուղղակի հոխորտում էր. «... Դժբախտաբար. սակայն. արտասահմանում գտնվող հայերն ու իրենց կազմակերպությունները. լինելով բոլորովին կտրված Մայր Հայաստանից. անտեղեակ մեր վիճակին եւ յաճախ ենթակայ օտար ազդեցութիւնների. շարունակում են իրենց նախկին կործանարար եւ անպատրաստ ազգային քաղաքականութիւնը: Արտասահմանի հայ գաղութները միշտ ի վիճակի են եղել Հայաստանի նահատակ ժողովրդի վզին փաթաթելու իրենց քաղաքական մեծամիտ ցանկութիւններն ու տրամադրութիւնները: Նրանք գրեթէ միշտ կարողացել են թելադրել մեզ իրենց կամքը. մղել մեզ այնպիսի ճանապարհներով. որոնք միայն նորանոր դժբախտութիւնների պատճառ են դարձել մեր ժողովրդի համար»:

Այսպես. ուրեմն. Հայաստանի նահատակ ժողովրդի դժբախտության մեջ դարձյալ դաշնակցությունը մեղք չունի. այլ մեղավոր են հայ գաղութները. որովհետեւ չեն մոռանում իրենց մեծ վիշտը եւ փայփայում են պապենական հայրենիք վերադառնալու հույսը: Այսինքն ստիպում են դաշնակցությանը չմոռանալ այդ ամենը. իսկ դաշնակցությունն էլ վաղուց էր դրանից հրաժարվել:

Եվ «Ազատ Հայաստանը» պահանջում էր. «Այդ դրութեանը պէտք է վերջ տրւի ընդմիշտ եւ ամենավճռական կերպով: Հայաստանի ժողովուրդը չպիտի թոյլ տայ այլեւս, որ իրեն խաղալիք ծառայեցնեն իրենցից կտրւած հեռաւոր հայ գաղութները եւ նրանց միջոցով գործող օտար պետութիւնները»:

Դաշնակցության խոսափողը. ի վերջո. ազդարարում էր. «Այսուհետեւ Հայաստանի ժողովուրդը կամենում է միանգամայն ազատ լինել օտար. այլեւ հայ ինքնակոչ խնամակալներից. որոնք հեռաւոր ապահով վայրերում նստած, ցանկանում են տնօրինել նրա բախտը. աւելի ճիշտը. խաղալ նրա բախտի հետ:

Այսուհետեւ Հայաստանի ժողովուրդը պիտի հասկացնի բոլորին. բոլորին. բոլորին. որ ինքն է միայն իր բախտի տէրը եւ որ ինքը պատասխանատու չէ օտար երկրներում ապաստանած զանազան հայ մարդկանց կամ խմբակների արկածախնդրական քայլերի եւ խաղերի համար:

Այսուհետեւ Հայաստանի ժողովուրդը չի կարող այլեւս հանդուրժել. որ հեռաւոր երկրներում ապրող հայերն իրենց անմիտ եւ մեծամոլ քաղաքականութեամբ նորանոր արգելքներ ստեղծեն մեր ժողովրդի եւ իր հարեւանների, մանաւանդ եւ թիւրք հարեւանների մերձեցման համար»363:

Չեմ ուզում մեկնաբանել այս մեջբերումը, միայն ասեմ, որ «Ազատ Հայաստանը» խմբագրում էր դաշնակցության երեւելի գործիչ. փետրվարյան

եղբայրասպան պատերազմը հրահրող Ս.Վրացյանը: Ուզում եմ նաեւ հարցնել. թե այսպիսի քաղաքականություն որդեգրած կուսակցության ղեկավարները ի՞նչ երեսով անցան արտասահման եւ ի՞նչ խարդավանքների ու խաբեության միջոցով դարձան իրենց կողմից մերժված հայկական գաղութների գործերը տնօրինող ու ինչպե՞ս հաջողեցրին ներկայանալ որպես հայոց պահանջատիրության կրողներ: Այս ամբողջը կոծկելու, իրականությունը կեղծելու նպատակով վերոհիշյալ դասագրքի հեղինակը գրում է, թե «Հայ դատի պայքարը տեղափոխվեց սփյուռք»364:

Ահա շատ համառոտ 1921թ. փետրվարյան դավաճանության մասին: Եվ այս դավաճանությունը կոծկելու նպատակով այդ կուսակցության գաղափարախոսները շարունակաբար աղմկում են, թե այդ ապստամբությամբ վերականգնվեց Հայաստանի անկախությունը եւ ափսոսանքով նշում. թե «Հայաստանի անկախության այս երկրորդ ժամանակաշրջանը կարճատեւ էր. ընդամենը 44 օր միայն»365:

«Փրկության կոմիտեի» բերած Հայաստանի «ազատության երկրորդ ժամանակաշրջանի» մասին Հովհաննես Թումանյանը գրել է. «Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Երեւանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի ու նրա դատի դեմ եւ որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով, էսպիսով, մի նոր աղետ է գալիս հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից»366:

Ընթերցողին հրավիրում եմ խորհել այս հարցերի շուրջ եւ ընդծգել, որ հետագա ամբողջ ժամանակաշրջանում դաշնակցությունն այդպես էլ չհրաժարվեց թրքասիրությունից. որովհետեւ նրա համար իսկապես «ուրիշ ճանապարհ չկա...»:

Ասվածը փաստելու համար բերեմ միայն մեկ–երկու օրինակ:

Դաշնակցության ոչ անհայտ առաջնորդներից Ռ.Դարբինյանը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հռչակեց իր կուսակցության գլխավոր նպատակը. «Մեր առջեւ դրուած հարցը Սովետական կոչուածՀայաստանի ազատագրումն է սովետական լուծէն եւ ազատ ու անկախ Հայաստանի ստեղծումը»: Եթե ինչ–որ կերպ կարելի է հանդուրժել այս պահանջը, բայց ամեն մի օրինավոր հայի համար անչափ վիրավորական են հնչում Ռ.Դարբինյանի հետեւյալ խոսքերը. «...Միջազգային ներկայ կացութեան մէջ Թուրքիոյ ազատ աշխարհին հետ ըլլալը ոչ թէ չարիք մը. այլ բարիք մըն է ազատատենչ հայութեան համար»: Հիշեցնեմ. որ այս խոսքերն ասվել են 1955թ. Ստամբուլի հայ բնակչության նկատմամբ բռնություններ գործադրելուց անմիջապես հետո: Թուրքիայի նկատմամբ դաշնակցությունն այդպես է վարվել Ադանայի կոտորածից ի վեր:

1964թ. դաշնակցությունը հայտարարեց. «Թուրքը տիրել է մեր հողերին, սակայն այդ հողերն այժմ զուրկ են հայկական բնակչությունից». ուստի հարկավոր է «ամէնից առաջ լուծել հողային հարցերը եւ նիւթական ու բարոյական վնասաց հատուցում ստանալ այն երկրից, որի տիրապետութեան տակ դեռեւս ապրում է հայ ժողովուրդը եւ պահում ու պաշտպանում է իր գոյութիւնը»:

Ըստ դաշնակցության, պարզվում էր. որ քանի հայկական հողերին տիրում է Թուրքիան, իսկ այնտեղ հայ բնաչկություն չկա. ապա ավելորդ է թուրքերին պահանջներ ներկայացնել: Բայց այն երկրից. այսինքն Սովետական Միությունից, որի շնորհիվ եւ որի կազմում գտնվող Սովետական Հայաստանում դեռեւս ապրում ու իր գոյությունն է պաշտպանում հայ ժողովուրդը. դաշնակցությունը պահանջում է նյութական ու բարոյական հատուցում:

Դաշնակցության նոր ժամանակների ղեկավարներից է.Հովհաննիսյանն այն միտքն է հայտնել. թե «Մենք այնքան ենք սիրահարված Սովետական Հայաստանին, որ ներում ենք նրան շատ աններելի բաներ»: Եվ այս «անմեղ» դատողությանը հետեւում է նրա հարցը. թե «ինչո՞ւ այս նույն մոտեցումը չունենանք Թուրքիայի նկատմամբ»: Այս ի՞նչ կույր ատելություն է Հայաստան երկրի նկատմամբ, որին դաշնակցության լիդերը հավասարեցնում է Թուրքիային: Դա դեռ ոչինչ: Ավելի ահավոր է է.Հովհաննիսյանի պնդումը. թե «այսօրուայ Թուրքիան շատ աւելի ժողովրդական է. քան Սովետական Միութիւնը»: Ի՞նչ անուն կարելի է տալ «դեմոկրատական» Թուրքիային պաշտպանելու դերը ստանձնած դաշնակցությանը:

Անդրադառնալով Սովետական Հայաստանի նկատմամբ դաշնակցության բռնած թշնամական դիրքորոշմանը «Նայիրի» թերթը ուշագրավ համեմատություն է կատարում սոցիալիստական դաշնակցության ու կապիտալիստ Պողոս Նուբար փաշայի միջեւ: Առաջինը. իրեն հռչակելով սոցիալիստական, պայքարում է սոցիալիստական Հայաստանը խորտակելու համար: Երկրորդը կապիտալիստ է, բայց աշխատում է սոցիալիստական Հայաստանի ամրապնդման համար:

Այս իրողությանն անդրադառնում է նաեւ Հ.Չիլինկիրյանը: Հիշելով դաշնակցության գլխավոր կարգախոսը «դաշնակցական չեղողը հայ չէ», որը նշանակում է նախ դաշնակցական, հետո հայ. նա ընդգծում է. որ «ամբողջ իրականութիւնը այս նախադասութեան մէջ է», որովհետեւ դրա հետեւանքով աղանդի վերածվելով դաշնակցությունը հակադրվում է «ազգի ընդհանրական շահերուն»367: Այս առումով տեղին եմ համարում հիշել Ավետիք Իսահակյանի շատ կարեւոր ու տարողունակ գնահատականը: Դաշնակցությամբ հրապուրված Ավ. Իսահակյանը. ի վերջո, հասկացավ վերոհիշյալ կարգախոսի անհեթեթությունն ու վնասակարությունը եւ փաստեց հետեւյալը. «էլ դաշնակ չենք: Հիմա ի՞նչ եղանք–դարձանք հայ»368:

Սկզբունքային դիրքերից քննադատելով դաշնակցությանը Հ.Չիլինկիրյանը գրում է. «1908թ.–էն սկսեալ յաճախ օտարներին ծառայութեան մտած կամ անոնց հետ գործակցած այս կուսակցութիւնը, հայ ազգին կրած ծախողութեան մէջ ծանր պատասխանատուութիւն ունի»369:

Դատապարտելով դաշնակցության հակասովետական կեցվածքը Հ.Չիլինկիրյանը գրում է, որ նրա գործունեության հետեւանքով «Սփիւռքի հայութեան կարեւոր մէկ հատուածը չկրցաւ գնահատել Սովետական Հայաստանին արժէքը»: «Բայց,– փաստում է Հ.Չիլինկիրյանը,– ինչ ըսենք այս կուսակցութեան Սփիւռքի շրջանակին մաս կազմող ժողովուրդին, որ Սովետ. Հայաստանի դէմ թշնամական արտայայտութիւններ կը կատարէր: Շատ ծանօթ եւ ցաւալի իրականութիւն մըն է այն, որ դաշնակցականամիտներ 1960թ.–ներուն Ս.Հայաստան այցի գացող իրենց բարեկամներուն սապէս կ՛արտայայտուէին. «Ծօ, Յակոբ, դո՞ւն ալ կարմիր եղար»370:

Անշուշտ, վերոհիշյալը եւ նաեւ Ֆաշիստական Գերմանիայի հետ դաշնակցության համագործակցությունը նկատի ունենալով է, որ Հ.Չիլինկիրյանը հիշում է Հովի. Քաջազնունու պատգամը «Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս»:

Հանրահայտ է, թե ինչը նկատի ուներ դաշնակցության երեւելի գործիչներից մեկը այդպիսի եզրակացության համար: Սակայն բոլորովին վերջերս (կարծեմ 2002թ. հունիս–հուլիսին) Հայաստանի հանրային հեռուստատեսության «Կեսգիշերային ճեպընթաց» հաղորդաշարի ժամանակ դաշնակցության նորօրյա գաղափարախոս պրոֆեսորը հայտարարեց, թե Հ.Քաջազնունին այդ միտքը արտահայտել է ոչ թե նրա համար, որ դաշնակցությունն ընդհանրապես անելիք չունի եւ պետք է հեռանա ասպարեզից ու ինքնալուծարվի, այլ նկատի է ունեցել, թե Հայաստանում իշխանության եկած բոլշեւիկները իրագործում են դաշնակցության ծրագիրը եւ ուստի այդ առումով էլ նա Հայաստանում այն ժամանակ անելիք չուներ...

Բազմաթիվ զավեշտական փաստերից բերեցի միայն մեկը, որն էլ բավական է ասելու, որ այդպես էլ դաշնակցությունը չի հասկացել ու չի իմաստավորել իր գործած սխալները եւ դրանցից անհրաժեշտ հետեւություններ անելու փոխարեն ձեռքը մեկնում է... փրփուրին:

Անդրադառնալով Սովետական Հայաստանի նկատմամբ դաշնակցության որդեգրած քաղաքականությանը Հ.Չիլինկիրյանը գրում է. «Մեր պատմութեան վերջին շրջաններուն, այս հայ կազմակերպութիւնները գործակցեցան թուրքին հետ, գործակցեցան մեր թշնամիին բարեկամներու հետ, եւ մեր հայրենիքին մեծ մասը կորսնցնելու պատճառ եղան»: Հ.Չիլինկիրյանը նշում է, որ հայրենիքի մեծ մասի կորուստը դաս չեղավ դաշնակցության համար, որն արեւմտյան տերությունների ձեռքի գործիքը դառնալով «ազգասիրութեան կեղծ դիմակին տակ կը շարունակէ Հայատանին եւ անոր

կառավարութեան դէմ իր թոյնը թափել»:

Ընթերցողին հրավիրում եմ խորհել նաեւ Հ.Չիլինկիրյանի արտահայտած հետեւյալ մտքի վրա. «Սփիւռքի հրէաներուն մէջ,– հարցնում է նա,– հրէա տեսա՞ծ էք, որ Իսրայէլի դէմ խօսի եւ անոր դէմ պայքարի» եւ շարունակում է. «այս հայ կազմակերպութիւնները միութեան խօսքեր կ'ընեն: Բայց իրենց համար **«միութիւն»** ըսելը, ամէն հայուն կուրօրէն իրենց հպատակիլ ըսել է: Այսինքն միանալ Մայր Հայրենիքի թշնամիներուն հետ»371:

Պատմությունը շարժվում է իր ընթացքով: Ժամանակը նոր խնդիրներ է առաջադրում: Փոխվում են մարդկանց պատկերացումները: Այս ամենը վերաբերում է նաեւ քաղաքական ուժերին: Մարդկանց այլեւս հնարավոր չէ շփոթության մեջ գցել սուտ առասպելներով ու հեքիաթներով: Ամեն ինչ փոխվել է: Միայն չի փոխվել միջազգային խոշոր կազմակերպության Սոցիալիստական ինտերնացիոնալի անդամ դաշնակցությունը: Չի փոխվել ոչ թե այն պատճառով, որ կանգնած է «ազգային ճշմարիտ ուղու» վրա, այլ այն պատճառով, որ կորցրել է իր շուրջը կատարվող փոփոխությունն զգալու ունակությունը:

Հենց այս էլ նկատի ունենալով Հ.Չիլինկիրյանը գրում է. «Մեզի ցաւ կը պատճառէ կեցուածքը այն հաւատաւոր դաշնակցականներուն, որոնք մաքրամաքուր, ազգասէր հայեր են եւ ոչ մէկ նիւթական շահ կ'ակնկալեն կուսակցութենէն: Անոնք կապուած են կուսակցութեան խոր հաւատքով, աղանդաւորներուն նման, ուղեղալուածքի ենթարկուածի պէս կը հպատակին ղեկավարներուն հրահանգներուն»: Այս ամենի համար ցավ արտահայտելով Հ.Չիլինկիրյանը դիմում է «ազգասէր դաշնակցականներին» նրանց կոչ անելով «ինքնագիտակցութեան գան եւ հասկնան, որ դաշնակցութիւնը այն չէ այսօր, ինչ որ էր նահատակ հերոս Քրիստափոր Միքայէլեանին եւ իր ընկերներուն շրջանին, որոնց միակ իդեալը հայրենիքը ազատել էր թրքական լուծէն»372:

Հ.Չիլինկիրյանն անդուլ կերպով հանդես է գալիս Մայր Հայաստանի հետ Սփյուռքի կապերի ամրապնդման օգտին: Նա Սփյուռքի իդեալը համարում է «Ամէն բան Մայր Հայաստանի համար» սկզբունքը:

Այդ իդեալը ընդունող բոլոր հայկական կազմակերպությունները եւ Հայաստանյաց Առաքելական եկեղեցին պետք է միանան, շեշտում է Հ.Չիլինկիրյանը: «Հայաստան եւ Սփիւռք,– գրում է նա,– փոխադարձաբար իրարու զօրաւիգ ըլլալով պիտի կրնանք լուծել մեր բոլոր խնդիրները: Մեր ապրած երկիրներուն օրէնքներուն կարելիութեան սահմաններուն մէջ մնալով, ոչ մէկը արգելք չի կրնար ըլլալ, որ մենք մեր պարտականութիւնը կատարենք մեր Մայր Հայրենիքին հանդէպ»:

Եվ որպեսզի դա իրականանա, Հ.Չիլինկիրյանը դիմում է հայրենասեր մտավորականներին, գրողներին եւ կրոնական քարոզիչներին նրանց կոչ

անելով. «Վար առէք դիմակները կեղծ ազգասէր տօնքիշոտներու. որ մեզի 100 տարի երազներով օրօրեցին. եւ դեռ կը շարունակեն թունաւորել հայ պատանիներու մատղաշ ուղեղները, կեղծ ազգասիրական լոզունգներով. նման այն աղանդներուն. որոնք իրենց հաւատացողներուն մտային կարողութիւնը կը մեռցնեն»373:

Հ.Չիլինկիրյանը սրտի խոր ցավով է խոսում Հայաստանից չքուլացող արտագաղթի մասին: Նա. դրա հետեւանքները նկատի ունենալով. դիմում է Հայաստանի իշխանություններին կոչ անելով մտահոգվել ժողովրդի դրությունը լավացնելու միջոցով կասեցնել արտագաղթը եւ ոչ թե բարձրացնել «ճամբորդութեան տուրքը 120 դոլարի չափով»: Հակառակ դեպքում. ինչպես գրում է Հ.Չիլինկիրյանը. «Հայաստանի ամերիկասէր իշխանաւորներ. ձեզի բան մը կը մնայ ընելիք թուրքերուն նամակ մը կը գրէք եւ կ՚ըսէք. թէ «թուրքեր հայերը ջարդելու պէտք չունիք այլեւս: Հայաստանը պարպած է հայերէն: Եկէք եւ գրաւեցէք Հայաստանը»374:

Ահա շատ ընդհանուր գծերով ու համառոտ խոհերն ու մտքերը այն մարդու. որն իր առջեւ նպատակ էր դրել ոչ միայն պահպանել Ռուբեն Սեւակի հիշատակը. այլեւ զարգացնել ու տարածել մեծ բանաստեղծ–մտածողի գաղափարները:

Բայց դա բոլորը չէ: Յովհաննես Չիլինկիրյանն ստեղծել է «Ռուբէն Սեւակ մշակութային հիմնարկը». որն իր կարեւոր գործն է համարում բանաստեղծի գրական–հասարակական ու հեղափոխական գործունեության լուսաբանումն ու նրա գաղափարների տարածումը: Հիմնարկի նախաձեռնությամբ ու նրա միջոցներով ստեղծման օրից մինչեւ 2001թ. հրատարակվել է 14 արժեքավոր աշխատություն. որոնք նվիրված են հայագիտության. հայ ժողովրդի պատմության կարեւոր պրոբլեմներին:

Գրքերի հրատարակությունից բացի. հիմնարկը ստեղծել է մրցանակային ֆոնդ. որով յուրաքանչյուր տարի պարգեւատրվում են Ռուբեն Սեւակի գաղափարները ներկայացնող լավագույն գործերը:

1994թ. ապրիլի 23–ին Բեյրութի Սահակյան–Լեւոն Մկրտչյան քոլեջում բացվեց Ռուբեն Սեւակի անվան մատենադարանը. որն ստեղծվել է Յովհաննես Չիլինկիրյանի նախաձեռնությամբ: Հանդիսավոր բացմանը ջերմ ու հուզիչ ելույթ է ունեցել Ռուբեն Սեւակի դուստր Շամիրամը: Իրենց ելույթներում քոլեջի վաստակաշատ տնօրեն Պեպօ Սիմոնյանը. նշանավոր հասարակական–ազգային գործիչ. գրող–հրապարակախոս. «Նայիրի» թերթի խմբագիր Ժիրայր Նայիրին. Գարեգին Ա կաթողիկոսը բարձր են գնահատել Յովհաննես Չիլինկիրյանի գործունեությունը Ռուբեն Սեւակի գաղափարները պաշտպանելու եւ տարածելու գործում:

Մատենադարանի բացման առիթով «Արարատ» թերթը տպագրել է հարցազրույց Յովհաննես Չիլինկիրյանի հետ: Թղթակցի այն հարցին. թե

«ինչ պայմաններու մէջ, նպատակով եւ ակնկալութեամբ այս ծրագիրը իրականացաւ», Հ.Չիլինկիրյանը հիշեցրել է Կիպրոսի թուրքական հատվածի ղեկավար Ռաուֆ Թենքթաշի հետեւյալ խոսքերը. «Լիբանանի մէջ շարունակուող եղբայրասպան պատերազմը հայերուն ողնաշարը փշրեց» եւ ավելացրել, որ Թենքթաշի հույսը չարդարացավ: Նշելով, որ այդ պատերազմը մեծ տառապանքներ պատճառեց նաեւ հայերին, Հ.Չիլինկիրյանը ընդգծում է, որ Լիբանանի հայությունը «իր խելացի կեցուածքովը կրցաւ վերապրիլ», վերգտնել իր խաղաղությունը եւ «վերականգնումի ճամբուն մէջ է»: «Եւ,– շարունակում է Հ.Չիլինկիրյանը.– Ռուբէն Սեւակի հարազատները ուզեցին այս վերածնունդին իրենք ալ մասնակից դառնալ, եւ Սահակեան–Լ.Մկրտչեան գոլէճին մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարանի մը ստեղծման նպաստել:... Ռուբէն Սեւակի անուան մատենադարանը պիտի ծառայէ Պէյրութի մէջ, եւ Պէյրութէն ալ անդին, ամէն կողմ, Ռուբէն Սեւակի գաղափարականի եւ հայ մշակոյթի տարածման, ի շահ հայկական բարձր իտեալներուն»:

Հետաքրքիր եւ շատ ուսանելի պատասխան է տվել Հ.Չիլինկիրյանը նաեւ հետեւյալ հարցին. «Ի՞նչ է Ձեր Ռուբէն Սեւակեան պատգամը ուղղուած ներկայ հայ նոր սերունդին»: «Ամէն բանէ առաջ,– ասել է Հ.Չիլինկիրյանը.– մենք պիտի ուզենք հայ երիտասարդներուն յանձնարարել «Արդար» ըլլալ: Հայ ազգը, գրեթէ մէկ դարէ ի վեր, արդարութեան կը սպասէ:

Արդարութեան սպասողը նախ ինքը արդար ըլլալու է:

Երիտասարդ մը նախ ինքզինքին հանդէպ պարտի արդար ըլլալ:

Արդար ըլլալու համար տրամաբանութեամբ շարժիլը պէտք է:

Պէտք է տրամաբանութեամբ զանազանէ

Արդարը եւ Անիրաւը.

Բարին եւ Չարը.

Բարեկամը եւ Թշնամին.

Ազգին բարեկամը եւ Ազգին թշնամին.

Անձնական շահը եւ անձնական վնասը.

Ազգային շահը եւ Ազգային վնասը»375:

Կարծում եմ, ասվածն էլ բավական է պատկերացում ունենալու համար, թե ինչպիսի ազգանվեր գործ է կատարում «Ռուբեն Սեւակ մշակութային հիմնարկը» Հովհաննես Չիլինկիրյանի գլխավորությամբ:

Դեռեւս 1885թ. Հովհաննես Չիլինկիրյանն իր միջոցների հաշվին ստեղծել է Ռուբեն Սեւակի անվան հիշատակի տուն–թանգարան, որտեղ ամփոփված են բանաստեղծի ձեռագրերը, նամակները, անձնական իրերը, այն ամենը, ինչ հաջողվել է փրկել թուրքական ջարդարարներից: Այդ թանգարանում ստեղծվել է նաեւ մի հոյակապ պատկերասրահ, որտեղ պահվում են բացառապես հայ ծովանկարիչների գործերը, թվով 200

կտավ: Պատկերասրահում ցուցադրվում են նաեւ Հ.Այվազովսկու կտավներից երեքը:

Հովհաննես Չիլինկիրյանը մի քանի անգամ դիմել է Սփյուռքի հետ կապերի կոմիտեին առաջարկելով իր միջոցներով Երեւանում ստեղծել «Ռուբեն Սեւակի անվան հիշատակի տուն» եւ այնտեղ տեղափոխել վերեւում հիշատակված բոլոր նյութերն ու կտավները:

Դժբախտաբար. Հովհաննես Չիլինկիրյանի առաջարկությունը մնացել է անհետեւանք:

Չնայած մի երկու տարի առաջ «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրված հոդվածի հեղինակի պոռոտախոսությանը, թե «Չմոռանանք նաեւ Ֆրանսիայի հարավի Նիս քաղաքում Ռուբեն Սեւակի հուշատուն–թանգարանի մասին, որ այսօր այլոց համար... եղած թե չեղած», այդ հիշատակի տունը վերածվել է Սփյուռքի պայմաններում հայ մշակույթի պրոպագանդման լավագույն օջախի:

Հիմա էլ Հ.Չիլինկիրյանի երազանքն է իր մտադրությունն իրականացած տեսնել: Մնում է. որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն այդ գործի իրականացումը վերցնի իր ձեռքը:

Ռուբեն Սեւակը պատկանում է հայ ժողովրդին եւ իր անվան տուն–թանգարանի հետ միասին պետք է վերադառնա մայր ժողովրդի գիրկը:

Սա Հայաստանի Հանրապետության բարձրագույն իշխանության պարտքն է:

«Ռուբէն Սեւակ մշակութային հիմնարկը» իր ուշադրության կենտրոնում է պահում Երեւան քաղաքում գտնվող Ռուբեն Սեւակի անվան դպրոցը նրան ցույց տալով զգալի նյութական ու ֆինանսական օգնություն: Հիմնարկը դպրոցում ստեղծել է Ռուբեն Սեւակի թանգարան: Յուրաքանչյուր տարվա ապրիլ ամսվա վերջին դպրոցը տնօրեն Զուլյա Ղազարյանի ղեկավարությամբ կազմակերպում է Ռուբեն Սեւակին նվիրված օրեր, որոնց ակտիվ մասնակցում են նաեւ մյուս դպրոցների աշակերտները: Այդ օրերին առանձնակի հանդիսություն է հաղորդում իր ներկայությամբ մեծ բանաստեղծի դուստր Շամիրամ Սեւակը, որը, չնայած բազում դժվարություններին, ամեն տարի հեռավոր Ֆրանսիայից պարտադիր այցելում է Երեւան:

2002թ. ապրիլի 22–ին Ռուբեն Սեւակի անվան դպրոցում կազմակերպված հանդիսության ժամանակ բախտ ունեցա ծանոթանալ Շամիրամ Սեւակի հետ: Շատ էր ուզում. ինչպես ինքն էր ասում. մոտիկից տեսնել իր հայրիկի երազած Արարատ լեռը: Եվ Խորվիրապի բարձունքից նա երկար. շատ երկար նայեց ճերմակափառ Արարատին... Շամիրամ Սեւակի աչքերից հոսող արցունքները շատ բան էին խոսում...

Շամիրամ Սեւակի հետ հուզիչ հանդիպում ունեցան նաեւ Երեւանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանի ուսանողները: Նրան ջերմորեն

ողջունեցին համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ավագ Խաչատրյանը, դասախոսներ, ուսանողներ: Ռեկտորը պատվարժան հյուրին նվեր հանձնեց համալսարանի միջոցներով տպագրված Հ.Աճառյանի «Հայ գաղթավայրերի պատմություն» արժեքավոր աշխատությունը:

Ընդունելով գիրքը Շամիրամ Սեւակն ասաց. «Յանկանում եմ, որ այս հատորի տեղը լինի միայն թանգարանը: Թող բոլոր հայերը վերադառնան Հայրենիք, որպեսզի ամեն մի գաղթավայր մնա որպես պատմություն»:

88-ամյա Շամիրամ Սեւակը տիրապետում է խոսքի վարպետությանը, իր խոսքը համեմում է հետաքրքիր փաստերով, բայց հենց սկսում է խոսել իր հոր Ռուբեն Սեւակի մասին, այդ արիասիրտ կնոջ աչքերում արցունքներ են երեւում: Իր առաջացած տարիքում էլ նա զգում է որբացած մանկության թողած ծանր հետեւանքները:

«Հայրս կյանքից հեռացավ շատ երիտասարդ տարիքում,- ասում էր նա հուզված,- ճակատագիրը ինձ է հանձնել հորս չապրած տարիները»:

«Հորս չապրած տարիներ...»: Ինչքա՜ն խորիմաստ ու շատ բան ասող են այս խոսքերը:

Ժանրի Սեւակն իր զավակներին այնպես է դաստիարակել ու կրթել, որ միշտ պատասխանատու զգան իրենց սիրելի հոր չապրած տարիների համար: Եվ զավակները իրենց կյանքով, հայրենիքի նկատմամբ անհուն սիրո նվիրվածությամբ ու հպարտորեն են կրում Սեւակ անունը:

Այս զգացումները Շամիրամ Սեւակն արտահայտել է նաեւ բանաստեղծական խոսքով: Ի դեպ, նա հեղինակ է բանաստեղծությունների մի շարք ժողովածուների, որոնք հրատարակվել են ֆրանսերեն լեզվով

Ահա, օրինակ, Շամիրամ Սեւակի «Պատգամ աշխարհի հայությանը» բանաստեղծությունը: Սա խոսք է ուղղված ցեղասպանությունից փրկվածներին, որոնք հարկադրված սփռվել են աշխարհով մեկ: «Հայեր,- դիմում է նա աշխարհով մեկ սփռված իր արյունակից եղբայրներին ու քույրերին,- չմոռանաք անցյալը, ձեր հայկական արյունը, պահեք ձեր նախնիների հիշատակը եւ հպարտորեն ասացեք՝ ես հայ եմ»:

Շամիրամ Սեւակի «Ասա ինձ, հայորդի, տեսե՞լ ես դու Արարատը» բանաստեղծությունն ուզում եմ ամբողջությամբ մեջբերել.

«Փարիզում էյֆելյան աշտարակը,
Նյու Յորքում երկնաքերերը,
Կանադայում Նիագարայի ջրվեժը,
Քոնը՝ հայ, Արարատ լեռն է:
Իտալիայում կա Վենետիկ,
Իսրայելը օրհնած երկիր,
Թաջ Մահալն է շլացնում,



**Շամիրամ Սեւակը Ռուբեն Սեւակի անվան դպրոցի աշակերտների հետ: Երեւան, ապրիլ, 2002թ.:**

Բայց դու. հայորդի. Արարատ լեռն ունես:
Հունաստանն ունի իր Ակրոպոլը.
Ամեն երկիր ունի իր խորհրդանիշը.
Բայց ոչ մի գեղեցկություն չի հավասարվի
Այս կախարդական լեռան հետ. որն է Արարատ:
Որպես կուրծք դեպի երկինք հառած.
Հավերժական ծյունե առագաստի ներքո.
Այս հսկա լեռը. որ դու տեսնում ես.
Դա քոնն է. քո Արարատը»:

Շամիրամ Սեւակն անհուն սիրով է լցված հայրենի Հայաստանի նկատմամբ: Նա երգում է հայրենի հողը. Հայաստանի լուսե երկինքը եւ հպարտանում. որ

«Դուռ ու պատուհան
Բաց են ամենքի առջեւ.
Ձեզ չճանաչելով անգամ.
Ձեզ կընդունեն սիրով»:

Շամիրամ Սեւակը Հայաստանից հեռու, օտարության մեջ ապրող հայերին անվանում է «արմատազուրկ, պոկված մեր հողից», որոնք դարեր ու տարիներ չեն ուզում լռել ու պահանջում են արդարություն:

Առանց հուզմունքի հնարավոր չէ կարդալ Շամիրամ Սեւակի «Արի» բանաստեղծությունը նվիրված հորը.

«Արի, հայր իմ, արի,
Ցույց տուր քո դեմքը,
Քեզնից ոչինչ չունեմ,
Բացի քո պատկերից:
Քո սիրուն երկրում,
Հենց ես ծնվեցի,
Քեզ դավաճանողները
Ինձ արմատախիլ արին:
Մանուկ ուղիս կորցրած,
Մանուկ–ծնողազուրկ,
Անհայտ, ո՞վ եմ ես,
Առանց իմ արյունակցական ուժի:
Ունեմ քո մաշկը, քո արյունը,
Քո մահը իմ հպարտությունն է,
Ես միշտ զգում եմ իմ մեջ
Իմ հայությունը:
Առանց վախի ու ատելության,
Դու զոհաբերեցիր քո կյանքը,
Քո սիրտն ու հոգին
Մեր Հայաստանին:
Այժմ դու Այստեղ ես,
Այնքան երիտասարդ եւ ուժեղ,
Ժամանակը չի ընդունում
Ոչ մահը, ոչ մոռացումը:
Ես մենակ եմ, հայր իմ,
Տուր ինձ քո ձեռքը,
Քեզ հետ միասին
Շարունակենք քո ուղին:
Անցյալը մեզ գոտեպնդում է,
Որ ամեն ինչ նորից կառուցենք,
Հպարտ ենք մեր հայ լինելով,
Հպարտ մեր զոհերով»:

Շամիրամ Սեւակն իր բանաստեղծությունների մեջ հավատարմորեն հետեւում է Ռուբեն Սեւակի հումանիստական գաղափարներին: Նա էլ. ինչպես Ռուբեն Սեւակը. մարդու. Իսկական Մարդու հետ է կապում լավագույն հույսերն ու իղձերը: Ահա թե ինչպես է նա արտահայտում իր վերաբերմունքը.

«Բաց քո ուղին
Ազատության համար.
Բաց քո ափը
Գթության համար.
Բաց քո սիրտը
Մարդկության համար,
Նվիրիր դափնեպսակը
Խաղաղության համար»376:

Ինքը Շամիրամ Սեւակը. իր հոր նման կյանքով ու գործով հենց այդպիսին է. նվիրված ազատության. գթության. մարդկայնության. խաղաղության վեհ գաղափարներին:

***

Երբ ավարտել էի սույն գրքի շարադրանքը. մեր նշանավոր գրականագետներից մեկի հետ մտքեր փոխանակելիս հայտնեցի. որ նրանում տեղ եմ հատկացրել Ռուբեն Սեւակի հարազատներին: Զրուցակիցս մտահոգություն հայտնեց. թե կարող է պատահել. որ դրանով աշխատությունը ոչ միայն կծանրաբեռնվի. այլ նաեւ ընթերցողի ուշադրությունը կշեղվի հիմնական թեմայի ընթացքից:

Մենք երկար զրուցեցինք այդ ամենի շուրջ. եւ ներկայացրի իմ պատճառաբանությունը: Չեմ բացառում. որ ընթերցողներից ոմանց մոտ էլ կարող է այդպիսի տպավորություն ստեղծվել. ուստի կամենում եմ համառոտակի նրա ուշադրությանը ներկայացնել իմ բացատրությունը:

Վերջին մեկ–երկու տարիներին «Արմենիա» հեռուստաընկերությունը եթեր է արձակում «Հայրեր եւ որդիներ» հաղորդաշարը. որը նաեւ. իմ կարծիքով. բավականաչափ հաջողված է: Այդ հաղորդումներին. որոք նվիրված են նշանավոր հասարակական. մշակութային. պետական գործիչներին. մասնակցում են նաեւ նրանց զավակներն ու հարազատները: Բոլորին է հետաքրքրում այս կամ այն նշանավոր գործչի ժառանգների զբաղմունքը. նաեւ այն. թե ինչպես են նրանք գտել իրենց տեղը կյանքում եւ ինչպիսի արժանապատվությամբ ու պատասխանատվությամբ են վերաբերվում իրենց ստացած հոգեւոր ժառանգությանը: Հիրավի անչափ հետաքրքիր է. թե մեծ մարդկանց ժառանգները ովքեր են: Այս հետաքրք-

րությունը քաղքենու զբաղմունք չէ: Այլ դա իր մեջ պարունակում է մի թաքնված ուրախություն, երբ իմանում ես, որ այս կամ այն մեծ մարդու զավակները, հարազատները զբաղվում են հայրենանվեր գործերով, շրջապատում հայտնի են իրենց անբիծ վարքագծով ու բարձր են պահում իրենց հոր, պապի, ազգականի թանկագին անունն ու գործը: Մեծ է նաեւ այս իրողության դաստիարակչական նշանակությունը:

Ահա այս նկատառումներից էլ ելնելով ես հարկ համարեցի ծանոթանալ Ռուբեն Սեւակի ժառանգների կյանքին ու գործին եւ դրանք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը: Չեմ թաքցնում, ես դա արել եմ ստանալով մեծագույն հոգեկան բավարարվածություն: Բավարարվածություն այն բանի համար, որ Ռուբեն Սեւակի զավակները, հարազատները ապրում են, պատվով ու պատասխանատվությամբ են վերաբերվում ճակատագրի կամքով իրենց բաժին հասած մեծ պարտականությանը, իսկական հայրենասերներ են ու հավատարիմ են մնացել Ռուբեն Սեւակ մարդու, բանաստեղծի, փիլիսոփայի, հեղափոխականի, ազգային գործչի ու մեծ հայրենասերի գաղափարներին:

***

Հանրահայտ արտահայտություն է «Նա ընկավ մարտական դիրքում»: Հենց Ռուբեն Սեւակն էլ ընկավ մարտական դիրքում չդավաճանելով իր ժողովրդին, հավատարիմ մնալով իր պատվին ու անվանը:

Ուզում եմ գիրքս ավարտել սփյուռքահայ նշանավոր գրող, հասարակական գործիչ Անդրանիկ Ծառուկյանի ցանկությունը հիշելով: 1985թ. հոկտեմբերի 13–ին Ֆրանսիայի Նիս քաղաքում տեղի ունեցած Ռուբեն Սեւակի հիշատակին նվիրված հանդեսի ժամանակ նա ասել է. «Եթէ ինծի վիճակուէր, որ մեր նահատակ գրագէտներէն մէկուն յիշատակին (բոլորն ալ յարգելի են, բոլորն ալ հաւասար են) արձան մը կանգնենք, ինչպէս անծանօթ զինուորի արձանները կան, մենք ալ մէկ արձան մը ընտրենք հայ նահատակ մտաւորականները, հայ նահատակ գրագէտները խորհրդանշող ես պիտի ուզէի Ռուբէն Սեւակին արձանը բարձրացնել, իբրեւ ամբողջական մարդ, իբրեւ ամբողջական գրագէտ եւ ամբողջական ազգային գործիչ»377: Նույնպիսի ցանկություն է հայտնել սփյուռքահայ նշանավոր գործիչներից նաեւ Սիմոն Սիմոնյանը378:

Թող իմ այս գիրքն էլ դառնա Ռուբեն Սեւակի արձանի պատվանդանի քարերից մեկը: Ահա այս ցանկությամբ էլ ավարտում եմ գիրքս եւ հանձնում ընթերցողի դատին:

# ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Վ.Բելինսկի, Երկերի լիակատար ժողովածու, հ.8, Մոսկվա, 1955, էջ 123 (ռուս.):
2. Գյոթե Ի.Վ., Փիլիսոփայական ժողովածու, էջ 115 (ռուս.:)
3. Ռուբէն Սեւակ, Երկեր, Անթիլիաս, 1986. էջ 562:
4. «Նայիրի», 16 մայիսի 2000:
5. «Նայիրի», թիւ 70, 28 փետրվարի 1998: Հայկական կուսակցությունների ստեղծման կապակցությամբ արեւմտահայության միջավայրում ժամանակին տարածվել էր հետեւյալ պատմությունը. «Տխրահռչակ «Ելտըզի» պալատին մէջ օր մը, լրտեսները Ապտիւլ Համիտին կը տեղեկացնեն, թէ՝ «հայերը կուսակցութիւն մը հիմնած են»: Այս լուրը առնող Ապտիւլ Համիտ ահռելի կը տխրի եւ, յուսալքուած, անկիւն մը կը քաշուի. ընկճուած ու նսեմացած:

Միջոց մը յետոյ, լրտեսները կրկին կը ներկայանան Ապտիւլ Համիտին եւ աւնոր հետեւեալ լուրը կու տան՝ «Հայերը երկրորդ կուսակցութիւն մը հիմնեցին»: Այս լուրը առնող Ապտիւլ Համիտ կը վերակենդանանայ, ոտքի կը կանգնի եւ ուրախութեան ճիչեր արձակելով, կը սկսի պարել եւ ցատկել:

Սուլթանին շուրջինները կը նային իրեն, եւ չեն հասկնար Ապտիւլ Համիտին այս անհաւատալի փոփոխութեան պատճառը: Եւ սուլթանը անոնց կ'ըսէ՝ «Հայերուն կուսակցութիւն մը հիմնած օրը, մեր վերջը եկած էր... Բայց հիմա, որ հայերը երկրորդ կուսակցութիւն մը հիմնեցին, ալ մենք հայերէն վախնալիք բան մը չունինք: ...Ասկէ վերջ, հայերը մեզ կը մոռնան, իրարու դէմ կը պայքարին եւ իրար կը մեռցնեն» («Նայիրի», նույն տեղը):

6. Միքայել Վարանդեան, Յ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն. Եր., 1992, էջ 145:
7. «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 1-2, 1994, էջ 10:
8. Ա.Կիրակոսյան, Մեծ Բրիտանիան եւ Հայկական հարցը 19-րդ դարի 90-ական թթ., Եր. 1990, էջ 135 (ռուս.):
9. «Ազդակ», 25 հուլիսի 1981:
10. Բիւզանդ Քեչեան, Պատմութիւն Ս.Փրկիչ հիւանդանոցին հայոց ի Պոլիս. Կ.Պոլիս, 1888, էջ 26:
11. «Արեւելեան մամուլ», 1876, էջ 5:
12. «Ծաղիկ», թիւ 128:
13. Ա.Ալպոյաճեան, Պատմութիւն հայ Կեսարիո, հ.Բ. Գահիրէ, 1937, էջ 1430:
14. Կ.Էզով (Եզյան), Պյոտր Մեծի առնչությունները հայ ժողովրդի հետ. Ս.Պետերբուրգ, 1898, էջ 549 (ռուս.):
15. «Բիրժային տեղեկագիր», թիվ 115. Մոսկվա, 1869, էջ 67 (ռուս.):
16. Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ.Ա. Բեյրութ, 1973, էջ 272:
17. Նույն տեղը. էջ 273:
18. Նույն տեղը. էջ 259:
19. Ե.Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարան (ԳԱԹ), Թ. Ազատյանի ֆոնդ. գ. գ. 1157-11526:
20. Նույն տեղը, Արշակ Չոպանյանի ֆոնդ. գ. 851.1:
21. Չորմիսեան Լ., Նույն տեղը. էջ 264-265:
22. Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Եր., 1972, էջ 92:
23. Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Շ.Ռ, Հայ ժողովրդի պատմություն (1801-1978). Եր., էջ 227:
24. «Մուրճ», թիվ 2. 1907, էջ 61-62:
25. Գաբրիէլ Լազեան. Հայաստան եւ Հայ դատ. Եր., 1991, էջ 34:
26. Նույն տեղը, էջ 49:

27. Նույն տեղը. էջ 41-42:
28. Հայաստանը միջազգային դիվանագիտության.... էջ 128:
29. Հայերի դրությունը Թուրքիայում մինչեւ 1895թ. տերությունների միջամտությունը, Մոսկվա, 1896, էջ 57 (ռուս.):
30. Մ.Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850-1870-ական թթ.), Եր., 1955, էջ 313:
31. Լլոյդ Ջորջ, Ճշմարտությունը հաշտության բանակցությունների մասին, հ. 2, Մոսկվա, 1957, էջ 390 (ռուս.):
32. Ստեփան Պողոսյան, Կարո Պողոսյան, Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության պատմություն, հ. Առաջին, Եր., 2001, էջ 128-129:
33. Չորմիսեան Լ., նույն տեղը, էջ 342:
34. Գաբրիէլ Լազեան, նույն տեղը, էջ 51-52:
35. Ա.Թոխմախեան, Մասիս լեռան հարաւային ստորոտներ, Թիֆլիս, էջ 24-25:
36. Մ.Խրիմեան, Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929, էջ 275:
37. «Արեւմուտք», 1859, թիվ 7:
38. Արփիարյան Ա., Երկեր, Եր., 1987, էջ 495-496:
39. Ստ. Պողոսյան, նույն տեղը, էջ 546:
40. «Բիւզանդիոն», 27 հոկտեմբերի 1901:
41. ԳԱԹ, Սմբատ Շահազիզի ֆոնդ, գ. 98, 2:
42. Նույն տեղը:
43. «Բիւզանդիոն», 29 հոկտեմբերի 1901:
44. «Նայիրի», թիվ 11-12, 15 փետրվարի 1982:
45. Ռուբէն Սեւակ, նույն տեղը, էջ 630:
46. «Հայրենիք», ապրիլ 1930, էջ 44:
47. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 167-168:
48. «Բիւզանդիոն», 16 հոկտեմբերի 1901:
49. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 519-520:
50. «Բիւզանդիոն», 23 հոկտեմբերի 1901:
51. Նույն տեղը, 16 հոկտեմբերի 1901:
52. Նույն տեղը, 24 հոկտեմբերի 1901:
53. Նույն տեղը, 16 հոկտեմբերի 1901:
54. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 519-520:
55. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 17, թ. 15:
56. Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, Եր., 2001, էջ 259:
57. Ռուբեն Սեւակ, Երկեր, հ.2, Եր. 1996, էջ 9:
58. Նույն տեղը:
59. Նույն տեղը:
60. Սկիտալեց Ա., Թուրքական սահմանադրության երկու տարին, «Մոսկովյան շաբաթաթերթ», թիվ 33, 1910, էջ 38 (ռուս.):
61. Կ.Մարքս, Ֆ,էնգելս, Երկեր, հ. 21, էջ 274 (ռուս.):
62. Նույն տեղը, հ. 7, էջ 8 (ռուս.):
63. Ս.Սապահ-Գուլեան, Ինքնաւար Հայաստան, Կահիրէ (անթվակիր), էջ 85-86:
64. «Անահիտ», Փարիզ, թիվ 1-4, 1908, էջ 44:
65. Մ.Վարանդեան, նույն տեղը, էջ 424:
66. Նույն տեղը, էջ 429:
67. Նույն տեղը, էջ 427:
68. Նույն տեղը:
69. Նիւթեր ՀՅԴ պատմութեան համար, հ. Ա, էջ 176:
70. Հայ յեղափոխական կուսակցութիւններ, 1916, էջ 45:
71. «Հայրենիք», թիվ 12, 1964, էջ 74-79:
72. Սապահ-Գուլեան, Պատասխանատուները. Պրովիտենս, 1916, էջ 17:
73. Սասունի Կ., Քուրդ ազգային շարժումները եւ հայ-քրդական յարաբերութիւնները, Բեյրութ, 1969, էջ 194:

74. Հաճեան Յովհաննէս, Հայոց տաժանքի ճանապարհով, հ.Ա, Թեհրան, 1965, էջ 326:
75. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 767:
76. Հովակիմեան Հովակիմ (Արշակունի), Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Բեյրութ, 1967, էջ 186:
77. Սերոբեան Մ., Հայկական մղձավանջ, Բոստոն, 1916, էջ 42:
78. Ջեմալ փաշա, Հայկական հարց, Եր., 1927, էջ 49:
79. Ժամկոչեան Ա., Անդրանիկ կը պատասխանի իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 24:
80. «Նայիրի», թիվ 91, 9 հունվարի 1999:
81. Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, Կոստանդնուպոլսի դեսպանության ֆոնդ, գ.2677, թ. 16-17:
82. Մ.Վարանդեան, նույն տեղը, էջ 427:
83. ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 2171. 1:
84. Ջ.Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք առաջին, Եր., 1982, էջ 337:
85. Արամեանց Հմայակ, Վերածնունդի երկունքը. Պատմութիւն հնչակեան կուսակցութեան, հ. Ա, Կ.Պոլիս, 1918, էջ 42:
86. Սապահ-Գուլեան Ս., Արմենակ եւ Աբրահամ, Չիկագո, 1917, էջ 6:
87. ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 2173. 1:
88. Վարանդեան Մ., նույն տեղը, էջ 401-402:
89. Լեո, Անցյալից, 1925, էջ 197:
90. Վարանդեան Մ., նույն տեղը, էջ 412:
91. Նույն տեղը:
92. Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության գործը, Եկատերինոսլավ, 1911, հ. 1, էջ 100-154 (ռուս.):
93. Մրավեան, Դաշնակցութեան կրիզիսը, Վիեննա, 1907, էջ 12:
94. Վարանդեան Մ., նույն տեղը, էջ 397:
95. ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 345. 1:
96. Նույն տեղը, գ. 3113. 1:
97. Նույն տեղը, գ. 3412. 1:
98. «Նպատակ», 12 մայիսի 1994:
99. Նույն տեղը:
100. Նույն տեղը:
101. Նույն տեղը:
102. Նույն տեղը:
103. Նույն տեղը:
104. «Կայծ», թիվ 71, 1906:
105. Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Եր. 1981, էջ 817:
106. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 151:
107. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 91:
108. «Նայիրի», թիվ 147, 8մայիսի 2001:
109. Նույն տեղը, էջ 172:
110. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 220:
111. Նույն տեղը, էջ 219-221:
112. Նույն տեղը, էջ 221:
113. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 207:
114. Նույն տեղը, էջ 233:
115. «Նայիրի», 9 հունվարի 2001:
116. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 215-216:
117. Նույն տեղը, էջ 195-196:
118. «Նայիրի», 9 հունվարի 2001:
119. «Ուրբաթ», 13 նոյեմբերի 1992:

120. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ.115:
121. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 17, թ. 22-24:
122. «Արծիւ», 21 ապրիլի 1994, թիվ 4: Ռուբեն Սեւակի անտիպները տպագրության է պատրաստել գրականագետ Ալեքսանդր Թոփչյանը:
123. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 17, թ. 12:
124. Նույն տեղը, թ. 36:
125. Նույն տեղը, թ. 28:
126. Ա.Երուսալիմսկի, Գերմանական իմպերիալիզմի արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը 19-րդ դարի վերջին, Մոսկվա-Լենինգրադ, 1948, էջ 138 (ռուս.):
127. Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ ու ժողովուրդներ, գիրք 12, Թուրքիա, Եր. 1985, էջ 118:
128. Մ.Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Եր. 1989, էջ 217:
129. «Հայրենիք», թիվ 97, 1930, էջ 46:
130. Հ.Չիլինկիրեան, Ռուբէն Սեւակի գաղափարականը, 1989, էջ 16:
131. ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 153. 13: Սալոնիկում գրքի հրատարակությունը ձեռնարկել էին նրա երախտագետ աշակերտները: Գրքի առաջաբանում մասնավորապես ընդգծվել է հետեւյալը. «Չինադադարէն ասդին, շատ մը սպառած ու հոս-հոն ցրուած երկեր հրատարակութեան արժանացան, բայց ոչ մէկ հրատարակիչ մտքէն անցուց, հատորի մը մէջ ամփոփել այս թանկարժէք էջերը, որոնք այլապէս կորսուելու պիտի դատապարտուէին:
Այժմ ձեռնարկելով այս գրքի հրատարակութեան, կ'ուզենք նախ կորուստէ փրկել հանճարեղ բժշկին ու գրագէտին գրչի այս արտադրութիւնները, եւ յետոյ, կը կարծենք թէ այսօրուան ու վաղուան մեր պատանի ու երիտասարդ սերունդը աւելի քան պէտք ունի այս գրքին, իբր լաւագոյն խորհրդատու մը, շողշողուն խայծերով ու փորձութիւններով լեցուն այս կեանքին մէջ» («Նայիրի», թիվ 177, 13 օգոստոս 2002):
132. «Նայիրի», 30 հունիսի 1978:
133. «Երջանիկ տարեգիրք», 1961, էջ 46:
134. Նույն տեղը:
135. Նույն տեղը:
136. ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 135. 13, թ. 1:
137. «Նայիրի», 30 հունիսի 1978:
138. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ. գ. 17, թ. 12:
139. ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 10. 13:
140. «Նայիրի», թիվ 11-12, 15 փետրվարի 1982:
141. «Նոր կեանք» թիվ 10, 22 փետրվարի 1990, էջ 17:
142. ԳԱԹ. Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 170. 13:
143. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 550-551:
144. Նույն տեղը, էջ 548:
145. «Նայիրի», թիվ 93, 6 փետրվարի 1999:
146. ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 11507-11526. 12:
147. Նույն տեղը, գ. 11767.12:
148. Նույն տեղը:
149. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 555:
150. Օրմանեան Մ., Խոհք եւ խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 28-29:
151. Հովհաննիսյան Ռ.Փ., Արեւմտահայ ազգային-ազատագրական շարժումները եւ Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը (19-րդ դարի 70-80-ական թթ.), Եր. 1955, էջ 82:
152. Ավ. Իսահակյան, հ. 6, էջ 172: ԳԱԹ, Ա.Չոպանյանի ֆոնդ, գ. 2763.1:
153. ԳԱԹ. Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 108:
154. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 177:
155. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 84, թ. 1-3:

156. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 8:
157. Նույն տեղը, գ. 105, թ. 2:
158. Նույն տեղը:
159. Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, քաղաքական Ֆոնդ, գ. 3456, թ. 206:
160. Ա.Ադոսիդեսի գրքից բերված այս հատվածը ամբողջությամբ տպագրված է «Հայերի գենոցիդը օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի ժողովածուի մեջ, Եր., 1982, էջ 204-220:
161. Գիբոնս Հերբերտ Ադամս, Վերջին կոտորածները Հայաստանում. փաստեր եւ պատասխանատվություն, Պետրոգրադ, 1916, էջ 26 (ռուս.):
162. Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, Կ.Պոլսի դեսպանության Ֆոնդ, գ. 3459, թ. 127:
163. Վարանդեան Մ., նույն տեղը, հ. 2, էջ 19:
164. Ատօմ, Մեր հաւատամքը, Կ.Պոլիս, 1910, էջ 16:
165. Վարանդեան Մ., նույն տեղը, էջ 19:
166. Նույն տեղը, էջ 21:
167. Սապահ-Գուլեան Ս., Պատասխանատուները, էջ 108:
168. Մինախորեան Վ., 1915 թւականը. Արհաւիրքի օրեր, Վենետիկ, 1949, էջ 89:
169. Նույն տեղը, էջ 51-52:
170. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 553-554:
171. «Նայիրի», թիվ 147, 8 մայիսի 2001:
172. Նույն տեղը:
173. Ռուսաստանի ռազմապատմական կենտրոնական արխիվ, ֆոնդ, 2000, գ. 991, թ. 24:
174. Նույն տեղը, ֆոնդ 403, գ. 4192, թ. 33-34:
175. «Ռուսական միտք», թիվ 8, 1910, էջ 194-195 (ռուս.):
176. «Ժամանակակից աշխարհը», թիվ 3, 1912, էջ 272-274 (ռուս.):
177. Դանիել Վարուժան, Նամականի, Եր., 1965, էջ 32:
178. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 210-211:
179. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 6:
180. «Ասիայի եւ Աֆրիկայի ժողովուրդները», թիվ 6, 1970, էջ 8 (ռուս.):
181. «Նայիրի», թիվ 153, 31 հունիսի 2001:
182. Հ.Չիլինկիրեան, Ռուբէն Սեւակ եւ «Փրցուելիք ուղեղներ», 1985, էջ 20-24:
183. Նույն տեղը, էջ 15:
184. Նույն տեղը:
185. Բ.Յասենսկի, Անտարբերների դավադրությունը, Մոսկվա, 1986, էջ 217 (ռուս.):
186. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 348:
186[ա]. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 5:
187. «Հայաստանի Հանրապետություն», 10 հուլիսի 2002:
188. Լամարկ Ժան-Բատիստ, Հատընտիր, հ. 2, Մոսկվա, 1959, էջ 439 (ռուս.):
189. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 351:
190. Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմություն (1939-1945), Մոսկվա, 1982, հ. 12, էջ 149-150 (ռուս.):
191. «Ռուսաստանը եւ աշխարհը», թիվ 16 (488), Մոսկվա, 2002, էջ 67 (ռուս.):
192. Գրովե Լ., Այժմ կարելի է այդ մասին պատմել, Մոսկվա, 1964, էջ 248 (ռուս.):
193. «Ռուսաստանը եւ աշխարհը», թիվ 16, էջ 68:
194. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 351:
195. Նույն տեղը, էջ 488:
196. Նույն տեղը, էջ 499:
197. Նույն տեղը, էջ 349:
198. «Աշխատավորական Ռուսաստան», թիվ 14, 1994 (ռուս.):

199. Վ.Ժուխրայ, Ստալին, ճշմարտութիւնը եւ սուտը, Մոսկվա, 1996, էջ 246-250 (ռուս.):
200. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 349:
201. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 350:
202. Նույն տեղը, էջ 350-351:
203. Նույն տեղը, էջ 349:
204. Նույն տեղը:
205. «Ռուսաստանը եւ աշխարհը», թիվ 14 (486), 2002, էջ 11 (ռուս.):
206. «Միտք», թիվ 15, 1999 (ռուս.):
207. Ռ.Սեւակ, Անտիպ էջեր, Երեւան, 1992, էջ 54:
208. Նույն տեղը, էջ 17:
209. Նույն տեղը, էջ 19:
210. Նույն տեղը, էջ 21:
211. Նույն տեղը, էջ 21-22:
212. Նույն տեղը, էջ 22:
213. Նույն տեղը:
214. Նույն տեղը, էջ 24:
215. Նույն տեղը:
216. Նույն տեղը, էջ 25:
217. Նույն տեղը:
218. Նույն տեղը:
219. Նույն տեղը:
220. Նույն տեղը:
221. Նույն տեղը:
222. Նույն տեղը:
223. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 51:
224. Նույն տեղը:
225. Նույն տեղը:
226. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 349:
227. Կ.Մարքս, Ֆ. Էնգելս, հ. 1, էջ 65 (ռուս.):
228. Ռուբեն Սեւակի բանաստեղծությունը հայտնաբերվել է 1980-ական թթ. վերջերին եւ առաջին անգամ հրապարակել է Հ.Չիլինկիրյանը «Նայիրի» թերթի 2001թ. հոկտեմբերի 23-ի համարում:
229. «Վասն հայութեան», թիվ 5 (23), 11 փետրվարի 2002:
230. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 278:
231. Նույն տեղը, էջ 546:
232. Նույն տեղը, էջ 564:
233. Նույն տեղը, էջ 546:
234. Նույն տեղը, էջ 544-546:
235. Նույն տեղը, էջ 550:
236. Նույն տեղը, էջ 546:
237. Նույն տեղը:
238. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 183:
239. Ռ.Սեւակ, էջ 351:
240. Ռ.Սեւակ, հ. 2, էջ 196:
241. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 17, բ. 24:
242. Նույն տեղը, գ. 151:
243. Լեո, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. 2, 1935, էջ 76:
244. Սիմոն Վրացեան, Հայաստանի Հանրապետութիւն, Եր., 1995, էջ 8:
245. Նույն տեղը, էջ 9-10:
246. Տերտերեան Ի., Հայկական գոյամարտը, 1957, էջ 202:
247. Ս.Պողոսյան, նույն տեղը, էջ 63-69:
248. ԳԱԹ, Գրիգոր Զոհրապի ֆոնդ, գ. 18:

249. ԳԱԹ. Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 2178ա. 2:
250. ԳԱԹ. Գրիգոր Զոհրապի ֆոնդ, գ. 17:
251. Ս.Կիտուր, Պատմութիւն ս.դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. 1, Բեյրութ, 1962, էջ 350-368:
252. Հ.Գանգրունի, Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Բեյրութ, 1973, էջ 389:
253. «Վան-Տոսպ», 1913, թիվ 1:
254. Ռուբէն, Հայ-թրքական կնճիռը, Կահիրե, 1924, էջ 89:
255. Նույն տեղը, էջ 94-101:
256. Ս.Պողոսյան, նույն տեղը, էջ 422-423:
257. Լեո, Անցյալից, էջ 244-245:
258. Նույն տեղը, էջ 266:
259. ԳԱԹ, Թ.Ազատյանի ֆոնդ, գ. 66. 3, թ. 5-6:
260. ԳԱԹ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, գ. 2178ա:
260ա. Դարբինեան Ռ., Ռուսական վտանգ, Եր., 1991, էջ 9-14:
261. Ս.Վրացյան, նույն տեղը, էջ 13:
262. Նույն տեղը, էջ 15:
263. Ռ.Սեւակ, նույն տեղը, էջ 555:
264. Քսան կախաղաններ, Պրովիտենս, 1916. էջ 162-163:
265. Արամեանց Հմայակ, Անկախ Հայաստան, Կ.Պոլիս, 1919, էջ 5:
266. Նույն տեղը, էջ 4:
267. Կախաղան հանուած քսան ս.դ. հնչակեան ընկերներու յիշատակին. Պրովիտենս, 1916, էջ 14-15:
268. Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը, Եր., 1965, էջ 346:
269. «Արարատ», 18 հունիսի 1963:
270. Ս.Կիտուր, նույն տեղը, էջ 452-453:
271. Հայերի գենոցիդը օսմանյան կայսրությունում, Եր., 1982, էջ 437-441 (ռուս.):
272. «Արարատ», 26 ապրիլի 2002:
273. Գ.Պալաքեան, էջ 120:
274. Նույն տեղը, էջ 120-128:
275. Նույն տեղը, էջ 134-135:
276. Նույն տեղը, էջ 139:
277. Նույն տեղը, էջ 140-145:
278. Նույն տեղը, էջ 149:
279. Նույն տեղը, էջ 150:
280. Նույն տեղը, էջ 151:
281. Նույն տեղը:
282. «Նայիրի», թիվ 11-12, 15 փետրվարի 1982:

Հալիտէ էդիպ խանումը իսլամացած հրեայի խորամանկ ու ճարպիկ աղջիկ էր: Լինելով Թալեաթի սիրուհին՝ նա մեծ ազդեցություն ուներ երիտթուրքերի միջավայրում: Հայտնի էր որպես բանաստեղծուհի եւ հրապարակախոս: Ղեկավարում էր որբացած հազարավոր հայ երեխաներին իսլամացնելու գործը: Պատերազմից հետո դարձավ Մուստաֆա Քեմալի սիրուհին եւ հանդես էր գալիս երիտթուրքերի դատապարտմամբ:

283. «Նայիրի», թիվ 46, 8 մարտի 1997:
284. «Արարատ», 14 հունվարի 1993:
285. Նույն տեղը:
286. Նույն տեղը:
287. Յուշարձան ապրիլ տասնըմէկի, Կ.Պոլիս, 1919. էջ 113-121:
288. «Հայ բուժակ», Կ.Պոլիս, թիվ 3-4, 1920:
289. «Նայիրի, 2 մայիսի 2000:

290. «Կոչնակ Հայաստանի» թիվ 1, էջ 9-12, թիվ 3, էջ 75-77, 1922:
291. Նկատի ունի էռնստ Ռընանի «Հիսուսի կյանքը» գիրքը:
292. «Կանչ», 15 հուլիսի 1992: Տեքստը վերծանել ու հրատարակության համար պատրաստել է գրականագետ Ալեքսանդր Թոփչյանը:
293. ԳԱԹ, Ռ.Սեւակի ֆոնդ, գ. 151, թ. 146:
294. «Նայիրի», 19 հոկտեմբերի 1999:
295. Նույն տեղը:
296. «Հայաստանի կոչնակ», թիվ 1, 1922, էջ 11:
297. Հ.Չիլինկիրյան, Ռուբէն Սեւակի գաղափարականը, էջ 17:
298. Հայ Գողգոթան, Վիեննա, 1922, էջ 150-151:
299. «Նայիրի», 25 մարտի 2003:
300. Ս.Պողոսյան, նույն տեղը, էջ 461:
301. Դոկտոր Բեհաէդդին Շաքիրը ավարտել էր Սորբոնի համալսարանը, կրթությամբ բժիշկ էր, երիտթուրքական կառավարության ղեկավարներից մեկը: 1918թ. փախավ Բեռլին: Այստեղ էլ 1922թ. ապրիլի 17-ին Արամ Երկանյանն ու Արշավիր Շիրակյանը վերջ տվին նրա ոճիրներով ծանրացած կյանքին: Դոկտոր Նազըմը կրթության նախարար էր եւ երիտթուրքական կուսակցության ղեկավարներից: 1918թ. փախավ Բեռլին: Հետո վերադարձավ Թուրքիա եւ 1926թ. Քեմալ Աթաթուրքի դեմ մահափորձ կազմակերպելու համար կախաղան հանվեց Անկարայում: Ալի Շուքրին նույնպես վարել է կրթության նախարարի պաշտոնը, երիտթուրքական կուսակցության ղեկավարներից էր: Նազըմի հետ միասին նույն մեղադրանքով կախաղան հանվեց Իզմիրում:
302. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1985, էջ 168:
303. «Նայիրի», 15 ապրիլ 2003:
304. Լեփսիուսը հրատարակել է մինչեւ այս հատվածը:
305. «Նայիրի», 15 ապրիլ 2003:
306. Նյուրնբերգյան դատավարություն, հ. 1, 2, Մոսկվա, 1958 (ռուս.):
306ա. «Երջանիկ տարեգիրք», 1961, էջ 46:
307. «Նայիրի», 16 մայիսի 2000:
308. «Արարատ», 14 հունվարի 1993:
309. Նույն տեղը:
310. «Նայիրի», թիվ 108, 24 օգոստոսի 1999:
311. Նույնը, թիվ 63, 25 հոկտեմբերի 1997:
312. Նույնը, թիվ 73, 4 ապրիլի 1997:
313. Նույնը, թիվ 43, 25 հունվարի 1997:
314. Նույնը, թիվ 82, 8 օգոստոսի 1998:
315. Նույնը, թիվ 145, 3 ապրիլի 2001:
316. Նույնը, թիվ 119, 7 մարտի 2000:
317. «Արարատ», 3 ապրիլի 1994:
318. «Նայիրի», թիվ 145, 3 ապրիլի 2001:
319. Նույնը, թիվ 125, 30 մայիսի 2000:
320. Նույնը, թիվ 164, 12 փետրվարի 2002:
321. Նույնը, թիվ 158, 9 հոկտեմբերի 2001:
322. Նույն տեղը, թիվ 104, 29 հունիսի 1999:
323. Նույն տեղը:
324. Նույն տեղը, 12 հուլիսի 1997:
325. Նույն տեղը, 22 փետրվարի 2000:
326. Մարկ Տվեն, Երկերի ժողովածու, հ. 8, Մոսկվա, 1980, էջ 288 (ռուս.):
327. «Նայիրի», թիվ 35, 7 սեպտեմբերի 1996:
328. Նույն տեղը:
329. «Նայիրի», բացառիկ, 2001, էջ 31:

330. Հ.Չիլինկիրյան, Ռուբէն Սեւակ.... էջ 17-18:
331. Նույն տեղը:
332. Զօրավար Անդրանիկ կը խօսի, Պոստոն, 1994, էջ 17:
333. Լեո, Թուրքահայ յեղափոխութեան... էջ 201-202:
334. Նույն տեղը:
335. Նույն տեղը:
336. Նույն տեղը:
337. ՀՀ կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 222:
338. Նույն տեղը:
339. «Լրաբեր», 22 փետրվարի 1954:
34. Լեո, Անցյալից, էջ 410-411:
341. Հայաստանը միջազգային... էջ 534:
342. ՀՀ կենտ. պատմ. արխիվ, ֆոնդ 222:
343. Զօրավար Անդրանիկ կը խօսի, Պոստոն, 1994, էջ 48:
344. Գերսամ Ահարոնեան, Մեծ երազուն ճամբուն վրայ, Բեյրութ, 1964, էջ 111-112:
345. Ռ.Փիրումյան, էջ 148:
346. «Նայիրի», թիվ 137, 14 նոյեմբերի 2000:
347. Զօրավար Անդրանիկ կը խօսի, էջ 55:
348. «Յառաջ», թիվ 255, 1920:
349. Նույն տեղը:
350. «Նայիրի», թիվ 134, 3 հոկտեմբերի 2000:
351. Նույն տեղը:
352. «Յառաջ», թիվ 256, 1920:
353. Նույն տեղը:
354. Լեո, թուրքահայ յեղափոխութեան... էջ 245:
355. Զօրավար Անդրանիկ կը խօսի, էջ 18:
356. Լեո, Անցյալից, էջ 455-456:
357. Ռ.Փիրումյան, էջ 160:
358. Ա.Եսայան, Հայաստանի միջազգային-իրավական դրությունը (1920-1922), Եր., 1967, էջ 183-184:
359. «Կարմիր աստղ», թիվ 79, 1921:
360. Լեո, Անցյալից, էջ 465-466:
361. «Ազատ Հայաստան», թիվ 35, 15 մարտի 1921:
362. Նույն տեղը:
363. Նույն տեղը:
364. Ռ.Փիրումյան, էջ 166:
365. Նույն տեղը:
366. Հովհաննես Թումանյան, ԵԼԺ, հ. 7, 1995, էջ 408:
367. «Նայիրի», թիվ 42, 11 հունվարի 1997:
368. Ավետիք Իսահակյան, Աֆորիզմներ, էջ 52:
369. «Նայիրի», թիվ 42, 11 հունվարի 1997:
370. «Նայիրի», թիվ 178, 22 օգոստոսի 2002:
371. Հ.Չիլինկիրյան, նույն տեղը, էջ 54-55:
372. «Նայիրի», թիվ 57, 9 օգոստոսի 1997:
373. Հ.Չիլինկիրյան, նույն տեղը, էջ 54-55:
374. «Նայիրի», թիվ 126, 13 հունիսի 2000:
375. «Արարատ», 20-21 ապրիլի 1994:
376. Ֆրանսերենից տողացի թարգմանել է Ռուբեն Սեւակի անվան դպրոցի ուսուցչուհի Գոհար Բալոյանը, որին էլ խորին շնորհակալություն եմ հայտնում:
377. «Նայիրի», թիվ 92, 23 հունվարի 1999:
378. «Նայիրի», 9 հունվարի 2001:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Գլուխ 1*
ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ ՃԱՌԱԳՈՂ ԼՈՒՅՍԸ.....28

*Գլուխ 2*
ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ.....53

*Գլուխ 3*
ԱՇԽԱՐՀԸՆԿԱԼՄԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ.....75

*Գլուխ 4*
«ՍԱՐԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼՈՒ» ԵՐԱԳԻՐԸ.....110

*Գլուխ 5*
ԱՅԼԱՍԵՐՈՒՄԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....138

*Գլուխ 6*
ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ.....169

*Գլուխ 7*
ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ.....210

*Գլուխ 8*
ՈՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ.....252

# ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «ՀԱՒԱՔԱԾՈՅ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ» - չորս հատոր,
ՎԵՐԺԻՆ ՏԷՕՇԷՄԷճԵԱՆ - Պոլիս, 1971:

2. «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԸ ԵՒ ԽՐԱԽՈՒՍԻՉ ՆԵՐԿԱՆ»
ԿԱՐՕ ՄԵՀԵԱՆ - Ս. Ղազար, Վենետիկ, 1982:

3. «ՈՐՊԷՍ ԵՐԱՉ ԱՆԿՐԿՆԵԼԻ» - Բ. Հատոր՝ «Պատմուածքներ»
ԿՈՐՕ ՄԵՀԵԱՆ - Անթիլիաս, 1984:

4. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԵՒ ՓՐՑՈՒԵԼԻՔ ՈՒՂԵՂՆԵՐ»
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ - Փարիզ, 1986:

5. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ» - Թատերախաղ 5 պատկերներով:
ԳԷՈՐԳ ԳԱՊԱՌԱՃԵԱՆ - Պէյրութ, 1986:

6. Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԸ
-ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ - Պէյրութ, 1987:

7. «ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՏԱՌ ՕՏԱՐ ԼԵՋՈՒՈՎ ՏՊԱԳԻՐ ԳԻՐՔԵՐՈՒ»
-ԱՐՏԱՇԷՍ Հ. ԳԱՐՏԱՇԵԱՆ - Փարիզ, 1987:

8. «ՈՎՔԵ՞Ր ԵՆ Ի ՎԵՐՋՈՅ ԱՐԻԱՑԻՆԵՐԸ»
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՐՊԵՏԵԱՆ - Մարսէյլ, 1988:

9. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՈՒՆ»
«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ»
«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ - Փարիզ, 1989:

10. «ԹՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԹՈՒՐԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԱԳՈՅՐՈՎ ՉԻ ՃԱՃԿՈՒԻ»
-ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ - Պէյրութ, 1990:

11. «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ» - երկեր, Հատոր երկրորդ,
ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹՈՓՉՅԱՆ - Երեւան,1996:

12. «ԷՆՎԵՐ ՓԱՇԱՅԻ ՎԵՐՋԸ»
ՎԼԱՏԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ - Պէյրութ, 1996:

13. «ԱՐԱՐԱՏԸ ՊԷՏՔ Է ՄՆԱՅ ԵՐԵՒԱՆԻ ԿՈՂՄԸ»
ՎԼԱՏԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ - Պէյրութ, 2001:

14. «ՌՈՒԲԷՆ ՍԵՎԱԿԸ ԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ»
ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ - Երեւան, 2003:

ՎԼԱԴԻՄԻՐ
ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԸ ԵՎ ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԵՐԵՎԱՆ
2003

*Խմբագիր՝*
ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ

*Հրատարակչության խմբագիր՝*
ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Տեխնիկական խմբագիր եւ համակարգչային ձեւավորող՝*
ԱՐՄԵՆ ԲԱՐԻՇՅԱՆ

*Սրբագրիչ՝*
ՆԱԻՐԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՏՊԱԳՐՎԵԼ Է ՄԵՇ ԵՂԵՌՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ
«ՈՒԽՏԱՏՈՒՆ» ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ:
ՀԱՍՑԵ՝ ԵՐԵՎԱՆ 1, ԱԲՈՎՅԱՆ 15, ՍԵՆՅԱԿ 9:

ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ 500: ԹՈՒՂԹ՝ ՕՖՍԵԹ: ՇԱՎԱԼԸ՝ 19 ՏՊ. ՄԱՄՈՒԼ: